


ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԸՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հեռախոսիցման Ձեռնարկ



ՀԵՌԱՌՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

**ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ԲՈՆՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԵՐԵՎԱՆ
2020



Սույն հեռաուսուցման դասընթացը մշակվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Արտահայտված տեսակետերը պատկանում են Աշխատանքային խմբին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետերը և քաղաքականությունը:

Երեխաների նկատմամբ բռնության քննության առանձնահատկությունները: Հեռաուսուցման ձեռնարկ - Եր., 2020.- 534 էջ

Աշխատանքային խմբի ղեկավար, հեռաուսուցման մեթոդաբանության հեղինակ՝ Ա. Խուրշուդյան

Բովանդակության մշակողներ՝ Ս. Մարաբյան, Դ. Գևորգյան

Հեռաուսուցման և ՏՏ դեպարտամենտ

© Արդարադատության ակադեմիա, 2020

© ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, (ՅՈՒՆԻՍԵՖ), 2020

© Աշխատանքային խումբ, 2020

Բովանդակություն

Հեռառուստեման ձեռնարկում օգտագործված նշանների բացատրություն	5
Նախաբան	6
Ներածություն	9
Դաս 1. Երեխաների նկատմամբ բռնության հասկացությունը և տեսակները	17
Դաս 2. Երեխաների նկատմամբ բռնության հոգեբանական հետևանքները և հակազդման առանձնահատկությունները	48
Դաս 3. Երեխաների նկատմամբ բռնության հանցավոր դրսևորումների քրեաիրավական բնութագիրը	85
Դաս 4. Բռնության ենթարկված երեխային տուժող ճանաչելու հիմքերը, պայմանները և դատավարական կարգը	173
Դաս 5. Երեխաների իրավունքների ապահովման հարցերը քրեական գործ հարուցելու փուլում	207
Դաս 6. Երեխայի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով քննության սկզբնական փուլում իրականացվող քննչական և դատավարական այլ գործողությունների կատարման տակտիկական առանձնահատկությունները և դրանց կատարման համատեքստում երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարցերը	276

Դաս 7. Բռնության ենթարկված երեխաների հարցաքննության առանձնահատկությունները	335
Դաս 8. Անչափահաս տուժողի իրավունքների և օրինական շահերի ապահովման երաշխիքները քրեական դատավարությունում	372
Դաս 9. Երեխայի իրավունքների ապահովման առանձնահատկությունները՝ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելիս	425
Դաս 10. Երեխայի իրավունքների ապահովման առանձնահատկությունները դատական քննության փուլում	483

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՇԱՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ



Դասի տեքստի, տեսանյութերի, բառարանի յուրացման, և ինքնաստուգիչ հարցերին պատասխանելու համար հատկացվող ժամանակ



Մոտիվացնող ներածական տեսանյութ (յուրաքանչյուր դասի համար կա այդպիսի տեսանյութ. խորհուրդ է տրվում դասի տեքստը կարդալուց առաջ դիտել մոտիվացնող տեսանյութը)



Բառարան



Լրացուցիչ մեդիա-նյութեր



Ինքնաստուգիչ հարցեր

BOLD
Italic

Կարևոր հասկացություններ

Underline

Հղում

Այս դասի (մոտիվացնող
ներածական տեսանյութ+դասի
տեքստ+բառարան+ինքնաստուգիչ հարցեր)
յուրացման համար անհրաժեշտ է
240 րոպե / 4 ժամ:

Նախաբան

Առաջարկվող դասընթացը նախատեսված է դատավորների, դատախազների, ինչպես նաև արդարադատության համակարգի այլ աշխատակիցների համար: Այն նվիրված է ներկայումս առավել արդիականություն վայելող հիմնախնդրի՝ երեխաների նկատմամբ բռնության սահմանմանը և բռնության դեպքերի քննության ընթացքում երեխաների իրավունքների ու օրինական շահերի ապահովման առանցքային հարցերի լուսաբանմանը:

Դասընթացի բովանդակության ընդգրկուն շրջանակը հնարավորություն կտա ծանոթանալու բռնության հասկացությանը և դրսևորումներին, դրանց համար նախատեսված քրեական պատասխանատվության առանձնահատկություններին, ինչպես նաև ՀՀ-ում անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանության համակարգին, դրանում իրենց ակտիվ մասնակցությունն ունեցող դերակատարներին ու նրանց գործառույթներին, անչափահաս տուժողների մասնակցությամբ վարույթի իրականացման ինչպես ներպետական օրենսդրությամբ ամրագրված, այնպես էլ միջազգային փաստաթղթերում նախատեսված հիմնարար սկզբունքներին, պահանջներին, հիմնախնդիրներին, ՀՀ քրեական




Մինչև 15 րոպե

դատավարության օրենսդրությամբ նախատեսված անչափահաս տուժողների իրավունքների ապահովման կառուցակարգերին քրեական գործի բնության տարբեր փուլերում և քննչական կամ դատավարական գործողություններ կատարելիս և որոշումներ ընդունելիս:

Մասնակցելով դասընթացին, պատասխանելով ինքնաստուգիչ հարցերին և կատարելով առաջադրանքը՝ Դուք կկարողանաք՝


- ներկայացնել ՀՀ-ում երեխա տուժողների իրավունքների պաշտպանության օրենսդրական հիմքը և համակարգը,
- բացահայտել «երեխայի նկատմամբ բռնության» դրսևորումները և դրանց բովանդակությունը,
- քննարկել երեխաների նկատմամբ բռնության հոգեբանական հետևանքները և հակազդման առանձնահատկությունները,
- ճիշտ քրեաիրավական գնահատական տալ երեխայի նկատմամբ կիրառված բռնության դեպքերին,
- սահմանել «երեխայի լավագույն շահեր» հասկացությունը տուժողի տեսանկյունից և կիրառել «երեխայի լավագույն շահերը» գնահատելու ընթացակարգերը և գործիքակազմը,
- վեր հանել ՀՀ օրենսդրությամբ անչափահասին տուժող ճանաչելու դատավարական հիմքերը, անչափահաս տուժող հասկացությունը և հատկանիշները, մասնավորապես տարիքային նվազագույն և առավելագույն շեմը, որ պահից պետք է հաշվել տուժողի տարիքը և այլ հարցեր,
- գտնել անչափահաս տուժողների իրավունքների



և օրինական շահերի ապահովման հարցերը կանոնակարգող միջազգային առանցքային փաստաթղթերը և կողմնորոշվել, թե առանձին հիմնախնդիրների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվության համար ինչ միջազգային իրավական աղբյուրներից կարող եք օգտվել,

- բացահայտել քրեական գործով վարույթի տարբեր փուլերում երեխաների իրավունքների ապահովման քրեադատավարական և միջազգային-իրավական երաշխիքները և կիրառել գործնականում,
- բացահայտել բռնության ենթարկված երեխաների հարցաքննության հոգեբանական և դատավարական առանձնահատկությունները,
- բացահայտել երեխաների մասնակցությամբ առանձին քննչական և դատավարական գործողությունների կատարման տակտիկական առանձնահատկությունները և երեխաների իրավունքների և օրինական շահերի ապահովման կառուցակարգերը,
- բացահայտել երեխաների մասնակցությամբ դատական վարույթի միջազգային-իրավական երաշխիքները և ապահովել դրանց գործնական կիրառությունը,
- գնահատել հանցագործությունից տուժած անչափահասի սոցիալական վերականգնման գործում սոցիալական աշխատողների ներգրավման կարևորությունը և հնարավորությունները:

Դասերի յուրացման համար անհրաժեշտ են իրավագիտության ոլորտի, հատկապես՝ քրեական իրավունքի և քրեական դատավարության ուղղվածությամբ հիմնարար գիտելիքներ:



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաները բոլոր ժամանակաշրջաններում և հասարակարգերում մշտապես հանդիսացել են հասարակության ամենաանպաշտպան և խոցելի խավը: Հայտնի է նաև, որ երեխաները ցանկացած պետության և հասարակության ապագան են: Եվ կախված նրանից, թե որքանով են պաշտպանված երեխաների իրավունքները, կանխորոշվում է նաև տվյալ պետության և հասարակության ապագան: Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունն ու ապահովումը հանդիսանում են յուրաքանչյուր պետության կարևորագույն և առաջնային խնդիրներից:

Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) 2015թ. առաջին անգամ սահմանադրական մակարդակով առանձնացվեցին և ամրագրվեցին երեխայի իրավունքների պաշտպանության երաշխիքները: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածում սահմանվեց, որ երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում, որ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:


Երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ ընդունվել են բազմաթիվ միջազգային փաստաթղթեր, որոնք կարևորագույն դրույթներ են պարունակում երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ, որոնց շարքում



Մինչև 20 րոպե

առաջնայինն ու կարևորագույնը 1989 թվականի նոյեմբերի 20-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան էր, որով հստակ ամրագրվեց երեխայի՝ որպես հատուկ սուբյեկտի կարգավիճակը: Ըստ Եռթյան, հիշյալ կոնվենցիան ստեղծեց երեխայի նկատմամբ վերաբերմունքի նոր մոդել, որը ելակետ հանդիսացավ ընտանիքում և հասարակության մեջ երեխայի կարգավիճակի փոփոխության համար: Միջազգային իրավական բազմաթիվ այլ ակտերով ևս ամրագրվեցին երեխաների իրավունքների պաշտպանության սկզբունքները և չափորոշիչները, որոնց շարքում առանցքային նշանակություն ունի ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի 2005/20 բանաձևով ընդունված «Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշները», քանի որ այն իրենում համապարփակ ձևով ներառում է հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների արդարադատությանը մասնակցելու հիմնարար սկզբունքները և երաշխիքները, որոնք ուղղորդող նշանակություն ունեն սույն դասընթացի համար:

Երեխաների իրավունքների պաշտպանությունը ՀՀ-ում ևս համարվում է առաջնահերթ լուծման ենթակա խնդիր, որն իրականացվում է տարբեր իրավական միջոցներով, որոնց շարքում, սակայն, առանձնահատուկ դեր ու նշանակություն ունեն քրեաիրավական և քրեադատավարական պաշտպանության միջոցները:




Ներկայացվող հեռաուսուցման դասընթացի նպատակն է համապատասխան գիտելիքների և տեղեկատվության տրամադրման միջոցով օգնել Ձեզ լուծում գտնել անչափահաս տուժողների ներգրավմամբ գործերի քննության ժամանակ ծագող տարաբնույթ հարցերի վերաբերյալ:

Հեռաուսուցման դասընթացը բաղկացած է 10 դասից:

Առաջին և երկրորդ դասերի շրջանակներում քննարկման առարկա են դարձվում երեխայի նկատմամբ բռնության հասկացության և տեսակների հարցերը, ցույց են տրվում այն հատկանիշները, որոնք բնութագրական են բացառապես երեխաների նկատմամբ դրսևորվող բռնության դեպքերին, ներկայացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված բռնության տարբեր բնորոշումների փոխհարաբերակցության հարցերը, որից հետո անդրադարձ է կատարվում բռնության հակազդման հիմնահարցերին, մասնավորապես, ներկայացվում են տարբեր տեսակի բռնության ենթարկված երեխայի հոգեվիճակի, տիպական հոգեբանական և վարքային հակազդման ձևերի, հոգեբանական սթրեսի և տրավմայի առանձնահատկությունները, երեխայի զոհականացման մեխանիզմների և վերատրավմատիզացիայի ցուցանիշները:


Երրորդ դասի շրջանակներում քննարկման առարկա են դարձվում երեխաների նկատմամբ տարբեր տեսակի բռնության հանցավոր դրսևորումները, որոնք նախատեսված են ՀՀ քր. օր.-ով: Մասնավորապես, տարբերակված ներկայացվում են այն հանցավոր



դրսևորումները, որոնք վերաբերում են միայն երեխաներին, այնուհետև՝ այն հանցագործությունները, որտեղ արարքն անչափահասի նկատմամբ կատարելը համարվում է հանցագործության ծանրացնող հանգամանք և վերջում՝ այն հանցագործությունները, որտեղ երեխաների առնչությամբ որևէ առանձնահատկություն նախատեսված չէ:


Հեռաուսուցման դասընթացի չորրորդ դասի շրջանակներում քննարկման առարկա են դարձվում հանցագործությունից տուժած երեխային տուժող ճանաչելու դատավարական կարգի հիմնահարցերը, մասնավորապես, այն հարցերը, թե ո՞րն է անչափահաս տուժողի տարիքային նվազագույն և առավելագույն շեմը, ո՞ր պահից պետք է հաշվել տուժողի տարիքը, անդրադարձ է կատարվում նաև տուժող ճանաչելու դատավարական հիմքերին և ցույց է տրվում, որ դրանք թերի են, ոչ լրիվ և հակասության մեջ են գտնվում ինչպես քրեական օրենսգրքի, այնպես էլ միջազգային փաստաթղթերի կարգավորումների հետ, որոնք սահմանում են երեխային տուժող ճանաչելու առավել լայն հիմքեր, քան քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածում է սահմանված: Դասում արվում են անհրաժեշտ առաջարկություններ երեխայի լավագույն շահերից բխող իրավակիրառական պրակտիկա ձևավորելու համար:

Հինգերորդ դասը նվիրված է քրեական գործ հարուցելու փուլում երեխայի իրավունքների և օրինական շահերի ապահովման հարցերի պարզաբանմանը, մասնավորապես, քննարկման առարկա են դարձվում




Երեխայի կողմից հաղորդում ներկայացնելու և այն քրեական գործ հարուցելու առիթ դիտարկելու, ինչպես նաև նյութերի նախապատրաստման ընթացքում իրականացվող ստուգողական գործողություններ կատարելիս երեխաների իրավունքների և օրինական շահերի ապահովման հարցերը: Այստեղ քննարկման առարկա են դարձվում մասնավոր մեղադրանքի գործերով քրեական գործ հարուցելու ձևավորված պրակտիկան և միջազգային չափանիշների և ՀՀ վճռաբեկ և սահմանադրական դատարանների կողմից ձևավորված նախադեպային իրավունքի հիման վրա առաջարկություններ են արվում այն հիմնովին փոխելու մասին: Այստեղ քննարկման առարկա են դարձվում նաև «Երեխայի լավագույն շահեր» հասկացությունը տուժողի տեսանկյունից, մեկնաբանվում են այն գործոնները, որոնք թույլ են տալիս բացահայտել երեխայի կարիքներն ու լավագույն շահերը, դրանց վերհանման համար օգտագործվող մեթոդներն ու գործիքները:

Դաս վեցի շրջանակներում անդրադարձ է կատարվում երեխայի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով քննության սկզբնական փուլում իրականացվող քննչական և դատավարական գործողությունների կատարման տակտիկական առանձնահատկություններին և դրանց կատարման համատեքստում երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարցերին, մասնավորապես՝ դեպքի վայրի զննության, փորձաքննությունների նշանակման, քննման, առերսման, ճանաչման ներկայացնելու և այլ քննչական և



դատավարական գործողությունների կատարման առանձնահատկություններին:


Դաս յոթի շրջանակներում անդրադարձ է կատարվում երեխայի հարցաքննության հոգեբանական առանձնահատկություններին: Քանի որ տարբեր տարիքի երեխաների իմացական և հուզական առանձնահատկությունները տարբեր են և կարող են էականորեն խորընդոտել անհրաժեշտ տեղեկությունների բացահայտմանը, դասում մանրամասնորեն ներկայացվում են երեխաների և դեռահասների իմացական և հուզական հիմնական տարիքային առանձնահատկությունները, սահմանափակումները և հարցաքննության վարմանն ուղղված գործնական խորհուրդները: Հանգամանալիորեն քննարկվում են հարցազրույցում կիրառելի հարցերի տեսակները, դրանց կիրառման պայմաններն ու սահմանափակումները, հարցերի հերթականության որոշակի ալգորիթմը: Ուշադրություն է դարձվում առավելապես վնասող և նույնիսկ՝ վտանգավոր համարվող հարցերին, դրանցից խուսափելու անհրաժեշտությանը: Որպես հարցազրույցի կառուցվածք ներկայացվում է եռափուլ տարբերակը (կոնտակտի հաստատում, տեղեկությունների հավաքում, հարցազրույցի փակում), որում մանրակրկիտորեն քննարկվում են բոլոր փուլերի առանձնահատկությունները, հարցազրույցավարին ներկայացվող պահանջները, հարցազրույցի իրականացման պայմաններն ու սահմանափակումները: Հստակորեն առանձնացվում են երեխայի լավագույն շահերից չբխող և նրա



վերատրավմատիզացիայի ռիսկը բարձրացնող վարվելաձևերն ու վերաբերմունքը, դրանցից խուսափելու տարբերակները:


Ութերորդ դասը նվիրված է անչափահաս տուժողի իրավունքների և օրինական շահերի ապահովման երաշխիքներին քրեական դատավարությունում՝ մասնավորապես շեշտադրումը անելով տուժողի օրինական ներկայացուցչի ինստիտուտի քննարկմանը, որի համատեքստում մանրամասն անդրադարձ է կատարվում «անչափահաս տուժող», «անգործունակ» և «սահմանափակ գործունակ տուժող» հասկացությունների մեկնաբանությանը, դրանց սահմանազատմանը և դրանով պայմանավորված օրինական ներկայացուցչի իրավունքների և նրա կողմից ներկայացվող անձի իրավունքների ծավալի տարբերություններին ու փոխհարաբերակցության հարցերին, այնուհետև՝ տուժողի հարցաքննությանը մանկավարժի և հոգեբանի մասնակցության հարցերին, որից հետո ներկայացվում են երեխայի իրավունքների ծավալի տարբերությունները միջազգային և ներպետական օրենսդրությամբ և առաջարկվում են գործնական քայլեր իրավակիրառական պրակտիկան միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար:

Չաջորդ՝ իններորդ դասի շրջանակներում քննարկվում են երեխայի իրավունքների ապահովման առանձնահատկությունները քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելու համատեքստում՝ նկատի



ունենալով, որ թե՛ միջազգային չափանիշները, թե՛ ներպետական օրենսդրությունը սահմանում են մի շարք առանձնահատկություններ այն դեպքերի համար, երբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում պետք է կայացվի այն գործերով, որտեղ հանցագործությունից տուժել է երեխան: Հիմք ընդունելով միջազգային չափանիշները, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի և սահմանադրական դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները՝ առաջարկություններ են արվում քննչական և դատական պրակտիկան փոխելու մասին:

Եզրափակիչ՝ տասներորդ դասի շրջանակներում քննարկվում են դատական քննության փուլում երեխաների մասնակցության առանձնահատկություններն ու սկզբունքները՝ մասնավորապես առանձնացնելով երեք հիմնական խնդիր, որոնք արդիական ու հրատապ են անչափահաս տուժողների և վկաների մասնակցությամբ իրականացվող դատական քննության առանձնահատկությունների տեսանկյունից: Դրանք վերաբերում են՝ 1)դատական քննության արագացման սկզբունքին, 2)դատական քննությունը դռնփակ անցկացնելուն և 3)երեխայի հարցաքննության առանձնահատկություններին:



ԴԱՍ 1

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի
կայքի հեռաուսուցման բաժնում):

«Երեխայի նկատմամբ բռնություն» եզրույթի համապարփակ և միատեսակ բնորոշում գոյություն չունի: Տարբեր միջազգային փաստաթղթերում, տարբեր պետությունների օրենսդրությունում և մասնագիտական գրականությունում այն ունի տարաբնույթ մեկնաբանություններ, դրսևորումներ և կարգավորումներ:

Բռնությունը գոյություն է ունեցել և ունի մարդկության գոյության ամբողջ ընթացքում:

Ս. Վ. Առաքելյանի կարծիքով՝ «բռնությունը բխում է հասարակության, ավելի ճիշտ՝ մարդու սոցիալական բնույթից, նրա անձը բնութագրող այնպիսի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններից, որոնց ազդեցության տակ նա միշտ ընդունակ է և գերադասում է լուծել իր առջև ծառացած խնդիրներն արգելված (այդ թվում՝ բռնության կիրառման) եղանակներով ու միջոցներով»¹:

¹Տե՛ս Առաքելյան Ս.Վ. Կանանց իրավական պաշտպանությունը բռնությունից: Երևան, 2001, էջ 8:



Մինչև 10 րոպե

Ուշադրությամբ
կարդացե՛ք
տեքստը (օգտվելով
բառարանից) և
այն յուրացնելուց
հետո միայն անցե՛ք
ինքնաստուգիչ
հարցերին:




Մինչև 140 րոպե

ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներում նկարագրված են բռնության տարբեր դրսևորումներ, որոնց թվին են դասվում ծեծը, խոշտանգումը և ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներում որպես ինքնուրույն հանցակազմ կամ հանցակազմի որակյալ հատկանիշ կամ հանցանքի կատարման եղանակ նախատեսված բռնի այլ գործողությունները, որոնք նկարագրված են որպես բռնության կիրառում, բռնության սպառնալիք, այլ բռնություն, կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն կամ դրանց կիրառման սպառնալիք, կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն կամ դրանց կիրառման սպառնալիք, ֆիզիկական ցավ, ուժեղ ցավ, հոգեբանական բռնություն և այլն: Հիմք ընդունելով վերոգրյալը, ՀՀ վճռաբեկ դատարանը, բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, բնութագրել է որպես՝ դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք²:

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից սահմանված բռնության վերոգրյալ բնորոշումը, ընդհանուր առմամբ, համահունչ է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) կողմից տրված բռնության սահմանմանը, որի համաձայն՝ բռնությունը ֆիզիկական ուժի կամ իշխանության (լիազորության, դիրքի) նպատակադրված կիրառումն է կամ դրա սպառնալիքը մեկ այլ անձի, խմբի կամ համայնքի նկատմամբ, որը մեծ հավանականությամբ հանգեցնում է

²Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշումը:




կամ կարող է հանգեցնել վնասվածքի, զրկանքի, մահվան, հոգեբանական վնասի կամ զարգացման խանգարումների:

Երեխայի նկատմամբ բռնությունը ոչ միշտ է, որ նույնանում է մեծահասակների նկատմամբ բռնության դրսևորումների և հատկանիշների հետ, ուստի անհրաժեշտություն կա սահմանելու և հստակեցնելու հենց երեխայի նկատմամբ բռնության հիմնական դրսևորումներն ու հատկանիշները, որպեսզի հստակեցվի և սահմանազատվի երեխայի նկատմամբ բռնությունը մեծահասակների նկատմամբ բռնությունից, որն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական մեծ նշանակություն:

ՀՀ քրեական օրենսգրքում նկարագրված բռնության դրսևորումները, ընդհանուր առմամբ, վերաբերում են նաև երեխաների նկատմամբ բռնությանը, իսկ մի շարք հանցակազմերում նկարագրված բռնության դրսևորումները չեն տարբերվում (այս հարցերին մանրամասն անդրադարձ կարվի հաջորդ դասի շրջանակներում), սակայն երեխայի նկատմամբ բռնությունն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք վերաբերելի չեն մեծահասակներին:

Երեխաների նկատմամբ բռնության հասկացությունը տրվել է դեռևս 1999թ. ԱՀԿ Երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման խորհրդի կողմից (այսուհետ՝ ԵՆԲԿԽ), որի համաձայն՝ «Երեխաների նկատմամբ բռնությունը՝ նշանակում է երեխայի առողջության, կյանքի, զարգացման, ինքնության իրական կամ պոտենցիալ վտանգման հանգեցնող ֆիզիկական և/կամ էմոցիոնալ դաժանության, սեռական բնույթի գործողություններ կամ անտեսման կամ բարձիթողության արարքներ՝ օգտվելով կարգավիճակից կամ պաշտոնից բխող լիազորություններից և չարաշահելով երեխայի վստահությունը»:



Թեև քննարկվող բնորոշման մեջ ուղղակի նշում չկա բռնության դիտավորյալ բնույթի մասին, որը բռնության պարտադիր պայմաններից մեկն է³, սակայն Էականն այն է, որ քննարկվող բնորոշումը հնարավորինս ամբողջական ներկայացնում է բռնության այն հատկանիշներն ու դրսևորումները, որոնք վերաբերելի են հենց երեխաներին:

Անդրադառնալով ՀՀ օրենսդրությանը՝ նշենք, որ ԱՀԿ ԵՆԲԿԻ-ի կողմից տրված երեխայի նկատմամբ բռնության առանձին դրսևորումներն ու հատկանիշները, բացի ՀՀ քրեական օրենսգրքից, իրենց արտացոլումն են գտել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» 2017թ. դեկտեմբերի 13-ի ՀՀ օրենքում (այսուհետև՝ Նաև Օրենք), իհարկե ոչ թե հատուկ երեխաների նկատմամբ բռնության դրսևորումներ, այլ որպես ընտանեկան բռնության առանձին տեսակներ:

Այսպես, ըստ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի տարբերակվում են ընտանեկան բռնության հետևյալ տեսակները՝

- ֆիզիկական բռնությունը,

³Այս համատեքստում ըստ բռնության գործադրման կանխամտածվածության աստիճանի՝ առանձնացնում են կանխամտածված և պատահական բռնարարքներ: Կանխամտածված բռնությունը ֆիզիկական ուժի կամ իշխանության (դիրքի չարաշահման) նպատակադրված ՝գործածումն է ինչ-որ մեկի, այլ անձի կամ որևէ խմբի ու համայնքի նկատմամբ, ինչն արդյունքում հանգեցնում է վերոնշյալների վնասման, մահվան, հոգեբանական վնասման, զարգացման խանգարման կամ դեպրիվացիայի (զրկանքի): Պատահական բռնարարք ասելով՝ նկատի ունենք, որ մի կողմից անձի կողմից կիրառվող բռնությունը չի ընկալվում որպես բռնարարք, մյուս կողմից՝ բռնություն գործադրողն ի սկզբանե չի ունենում տուժողին վնասելու մտադրություն: World report on violence and health/ Edited by Etienne G. Krug, WHO, 2002, էջեր 5-6, https://www.who.int/violence_injury_prevention/violence/world_report/en/introduction.pdf?ua=1

- սեռական բռնությունը,
- հոգեբանական բռնությունը,
- տնտեսական բռնությունը,
- անտեսումը:

Երեխայի նկատմամբ բռնության հատուկ սահմանում է տրված ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման Հավելված (այսուհետ՝ Կառավարության որոշման Հավելված) N 1-ի 5-րդ կետում, ընդ որում՝ դրանում տրված է ինչպես երեխայի նկատմամբ բռնության սեռային հասկացությունը, այնպես էլ դրա առանձին դրսևորումները:


Այսպես, ըստ Կառավարության որոշման Հավելվածի՝ երեխաների նկատմամբ բռնությունն ասելով հասկացվում է նրա իրավունքների և ազատությունների սահմանափակում, անվտանգության խախտում և անձի արժանապատվության ոտնահարում, ցանկացած վարքագիծ, որի կիրառումը կարող է վնաս հասցնել երեխայի ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը և զարգացմանը⁴, իսկ որպես երեխայի հանդեպ բռնության դրսևորումներ թվարկված են հետևյալները՝

- ֆիզիկական բռնություն,
- սեռական բռնություն,
- հոգեբանական բռնություն,
- անտեսում⁵:

Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ կառավարության որոշման Հավելվածում տրված երեխայի նկատմամբ բռնության ընդհանուր բնորոշումը ծավալային առումով չի համապատասխանում ԵՆԲԿԻ-ի

⁴ Տե՛ս https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voro-shum/2104/12/51-2_1ardz.pdf:

⁵ Տե՛ս https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voro-shum/2104/12/51-2_1ardz.pdf:




կողմից տրված բնորոշմանը, որն առավել ամբողջական է բացահայտում երեխայի նկատմամբ բռնության հնարավոր դրսևորումները և դրանով պայմանավորված չափորոշիչները, սակայն այդ «բացը» լրացվում է Կառավարության որոշման Հավելվածում տրված երեխաների նկատմամբ բռնության առանձին տեսակների բնորոշումներով:

Այլ կերպ ասած, Կառավարության որոշման Հավելվածի վերլուծությունից հետևում է, որ դրանում տրված է ինչպես երեխայի նկատմամբ բռնության ընդհանուր բնորոշումը, այնպես էլ թվարկված են երեխայի նկատմամբ բռնության առանձին տեսակները և տրված են դրանց հասկացությունները, որոնք համընկնում են միջազգային չափանիշներին:

Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ Կառավարության որոշման Հավելվածում բացակայում է տնտեսական բռնությունը, որպես երեխայի նկատմամբ բռնության տեսակ, մինչդեռ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում այն առանձին տեսակ է, որը մասամբ վերաբերելի է նաև երեխային՝ հիմք ընդունելով հիշյալ օրենքի կարգավորման առարկան:


Մինչ բռնության հիշյալ տեսակների էությանն անդրադառնալը և քննարկելը պետք է նկատել, որ տեսության մեջ բռնության տեսակների մասին հաճախ խոսվում է ըստ այն միջավայրի, որտեղ դրանք տեղի են ունենում՝ ընտանեկան բռնություն, բռնություն դպրոցում կամ կրթական այլ հաստատությունում և այլն, որը հիմք է ընդունվել նաև ՀՀ օրենսդրությամբ և մասնավորապես՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում



բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում: Նման դասակարգումները կարևոր են կրիմինալոգիական տեսանկյունից և էական նշանակություն ունեն բռնության կանխարգելման ուղղությամբ քաղաքականություն մշակելիս և իրագործելիս, իսկ քրեաիրավական տեսանկյունից այն էական նշանակություն չունի, բացառությամբ առանձին դեպքերի, երբ այն քրեական օրենսգրքի համապատասխան հանցակազմի հատկանիշ է⁶ : Ասվածը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ թե՛ Օրենքով, թե՛ Կառավարության որոշման Ջավելվածով տրված բռնության տեսակների բնորոշումները ամբողջական չեն քրեաիրավական առումով և միայն դրանցով ղեկավարվելու դեպքում հնարավոր չի լինի արդյունավետ քրեաիրավական պաշտպանություն իրականացնել երեխաների նկատմամբ բռնության տարբեր դրսևորումներից, հետևաբար այդ բնորոշումները կարող են ունենալ ուղղորդող նշանակություն:

Ֆիզիկական բռնությունը դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարքն է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական տառապանք և կատարվել է ուրիշի նկատմամբ իշխանություն և վերահսկողություն հաստատելու նպատակով: Ընտանեկան բռնության համատեքստում՝ ֆիզիկական բռնությունը բնորոշվում է՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված

⁶Վյո հարցերին կանդիդատնանք հաջորդ դասի շրջանակներում:




ծեծը և այլ բռնի գործողությունները, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը, իսկ Կառավարության որոշման Զավելվածի տեսանկյունից՝ երեխայի հանդեպ ֆիզիկական բռնությունը՝ երեխային ծեծելը, կամ այլ բռնի գործողություններ կատարելը, խոշտանգելը, մարմնական վնասվածք հասցնելը կամ մարմնական պատժի ենթարկելն է:

Հասկանալի է, որ վերոնշյալ բնորոշումները քրեաիրավական առումով թերի են, քանի որ իրենցում չեն ներառում բռնության բազմաթիվ դրսևորումներ, օրինակ, սպանությունը, սակայն դրանք ունեն սկզբունքային նշանակություն բռնության էությունը բացահայտելու և առանձին դեպքերում կատարված արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու հարցում:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ ֆիզիկական բռնության ներգործության օբյեկտն երեխայի օրգանիզմն է, նրա ֆիզիկական ազատությունն ու անձեռնմխելիությունը, որի հիմնական դրսևորումներն են՝ հրելը, քաշքշելը, մազերից քաշելը, ձեռքով, բռունցքով, այլ առարկաներով հարվածելը, ապտակը, խեղդելը, ձեռքը ոլորելը, կսմթելը, այրելը, զենքով հարվածելը, սպանությունը և այլն:

Հոգեբանական բռնության վերաբերյալ գոյություն ունեցող հետազոտություններում հոգեբանական բռնության հիմնական հատկանիշն է համարվում սպառնալիքը⁷: Զրեական իրավունքում սպառնալիքը

⁷Гаухман Л.Д. Насилие при грабеже, разбое и вымогательстве// Советская юстиция, 1969, №2, էջ 22; Костров Г.К. Психическое насилие при разбое и грабеже// Советская юстиция, 1970, №11, էջ 9:



հանդես է գալիս տարբեր բովանդակություններով: Որոշ հեղինակների կարծիքով սպառնալիքը հարկադրանք է⁸, ոմանց կարծիքով՝ ահաբեկում⁹: Բնորոշելով հոգեբանական բռնությունը (ֆիզիկական ուժի կիրառման սպառնալիքը) որպես հակաիրավական ներգործություն, ներկայացվում է, որ այն ուղղված է ուրիշի հոգեկանին՝ վերջինիս դիմադրությունը ճնշելու և հանցավորին ենթարկեցնելու նպատակով՝ ֆիզիկական ուժի գործադրումով վախեցնելու միջոցով¹⁰: Շրջանառվում է նաև այն տեսակետը, որ սպառնալիքը մարդու մոտ տագնապի զգացում արթնացնելն է¹¹ կամ հոգեկան ներգործությունն է¹²:

Սպառնալիքը, որպես հոգեբանական բռնության հիմնական բնութագրիչ հատկանիշ, իր արտացոլումն է գտել նաև Օրենքում և Կառավարության որոշման Հավելվածում տրված հոգեբանական բռնություն բնորոշման մեջ: Այսպես, ըստ Օրենքի՝ հոգեբանական բռնություն է համարվում դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի հետ կապված, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը,

⁸Гришко А.Я., Гришко Е.А., Упоров И.В. Уголовное право. Общая часть: Учебное пособие/ Под ред. Н.И. Ветрова. М., 2001, էջ 155:

⁹Гаухман Л.Д. Борьба с насильственными посягательствами. М., Юридическая литература, 1969, էջ 31:

¹⁰Симонов В.И., Шумихин В.Г. Квалификация насильственных посягательств на собственность. Учебное пособие. М., 1993, էջ 23:


¹¹Научный комментарий УК РСФСР. Свердловск, 1964, էջ 402:

¹²Сердюк Л.В. Психическое насилие как предмет уголовно-правовой оценки. Дис. канд. юрид. наук. М., 1979, էջ 9:

հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը: Իսկ ըստ Կառավարության որոշման Հավելվածի՝ երեխայի հանդեպ հոգեբանական բռնությունը՝ երեխայի հանդեպ հուզական և հոգեբանական դիտավորյալ ներգործությունն է, իր զարգացման համար անհրաժեշտ կապվածությունից և հուզական կապերից զրկելը, որը կարող է խոչընդոտել կամ խաթարել երեխայի հոգեկան, մտավոր և վարքային զարգացմանը:

Անկախ այն հանգամանքից, թե սպառնալիքի ինչ դրսևորումների մասին է խոսքը, ընդհանուր առմամբ, սպառնալիքի ներքո հասկացվում է ազդեցություն ուրիշի հոգեկանի վրա, և սպառնալիքի էությունը կայանում է կամ՝ նրա հարազատների նկատմամբ անմիջապես կամ՝ ապագայում անցանկալի գործողություններ կատարելու մասին տեղեկություններ հայտնելու միջոցով տուժողի հոգեկան գործունեության վրա ազդելու, նրա մոտ վախի զգացում արթնացնելու և նրան որևէ գործողություն կատարելուն կամ չկատարելուն հարկադրելու մեջ: Երեխայի ներկայությամբ ծնողին սպառնալիք երեխայի համար հոգեբանական բռնության դրսևորումներից է, որը տևական բնույթ ունենալու դեպքում կարող է նաև հանգեցնել ծանր հետևանքների՝ ելնելով երեխայի առանձնահատկություններից:


Սպառնալիք են ֆիզիկական ուժի գործադրման սպառնալիքը (սպանություն, առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից զրկելը, ծեծելը, բռնաբարությունը և այլն), գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը կամ արատավորող տեղեկություններ տարածելու սպառնալիքը, որոնք կարող են տուժողի իրավունքներին և օրինական շահերին էական վնաս պատճառել: Սպառնալիքն առհասարակ գնահատվում է իրական լինելու համատեքստում:



Սպառնալիքն իրական է համարվում այն դեպքում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունեցել՝ վախենալու դրա իրականացումից: Այլ կերպ ասած՝ տուժողը պետք է կարծի, որ սպառնալիքի իրականացումը հնարավոր է. թեև սպառնալիքի իրական լինելը հավաստելու համար տուժողի սուբյեկտիվ ընկալման գնահատումը կարևոր է, սակայն արարքի որակման համար այն ածանցյալ նշանակություն ունի, առաջնայինը օբյեկտիվ իրադրության գնահատումն է: Հնարավոր են դեպքեր, երբ օբյեկտիվ իրադրությունը հիմք չի տալիս սպառնալիքն իրական գնահատելու համար, սակայն անձն իր հոգեկան լարված վիճակի, հոգեկան առանձնահատկությունների կամ այլ պատճառներով իրականությունը խեղաթյուրված է ընկալում՝ կարծելով, թե սպառնալիքն իրական է: Օբյեկտիվ իրադրության գնահատումն ենթադրում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են սպառնալիքի բովանդակությունը, եղանակը, դեպքի վայրը, ժամանակը, հանցավորի և տուժողի միջև հարաբերությունների բնույթը, հանցավորի անձը և այլն: Հետևաբար, սպառնալիքի իրական լինելու հարցը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է լուծվի՝ գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ տուժողի սուբյեկտիվ ընկալումը հաշվի առնելով¹³:

Այս պնդումը վերաբերելի չէ երեխաների պարագայում, քանի որ վերջիններս, իրենց տարիքային, հոգեբանական և զարգացման առանձնահատկություններից ելնելով, կարող են ճիշտ չգնահատել օբյեկտիվ իրադրությունը, և սպառնալիքն երեխայի դեպքում պետք է գնահատվի՝ հաշվի առնելով նրա կարծիքը:

¹³ԿԴ1/0025/01/11 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. հունիսի 8-ի որոշում:




Կրկնվող հոգեբանական բռնությունը հանգեցնում է նշանակալի հոգեկան տառապանքների, հետտրավմատիկ սթրեսի, դեպրեսիայի, որը վերափոխվում է վախի զգացման, հաճախ նաև ավելի լուրջ հետևանքների, որոնցից է ինքնասպանությունը¹⁴:

Այսպիսով՝ հոգեբանական բռնությունը վնաս պատճառելու սպառնալիքի միջոցով ուրիշի հոգեկանի վրա ազդեցությունն է՝ տուժողի կամքը ճնշելու նպատակով, և կատարվում է հանցավոր արդյունքի հասնելու համար:

Սեռական բռնությունը ցանկացած դիտավորյալ արարք է՝ ուրիշին նրա կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու սեռական հարաբերության կամ սեռական բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելու նպատակով, որը ոտնձգություն է անձի սեռական ազատության կամ սեռական անձեռնմխելիության դեմ:

Կառավարության որոշման Հավելվածում և Օրենքում՝ սեռական բռնությունը բնութագրվում է, որպես սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություն, ինչը նշանակում է, որ այն վկայակոչող կարգավորում է, և դրա էությունը պարզաբանելու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ քրեական

¹⁴Այն երեխաները, ովքեր ներկա են լինում ընտանեկան բռնությանը, ենթակա են այնպիսի վարքային ու հուզական խնդիրներ ձեռք բերելու ռիսկի, ինչպիսիք են տագնապայմանությունը, դեպրեսիան, վատ առաջադիմությունը դպրոցում, ցածր ինքնագնահատականը, գիշերային մղձավանջները, ֆիզիկական թուլությունը: Այդպիսի երեխաները մանկության և դեռահասության տարիքում հակված են ագրեսիայի: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ծնողական հարաբերություններում բռնության ականատես երեխաները հաճախ նույն հոգեբանական խնդիրներն են ունենում, ինչ բռնության ենթարկված երեխաները:




օրենսդրությամբ ամրագրված համապատասխան հանցակազմերի վերլուծությանը:

Սեռական բռնությունը, որպես կանոն, իրականացվում է տուժողի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն կիրառելու միջոցով, իսկ առանձին դեպքերում՝ օգտվելով տուժողի խոցելի վիճակից: Բռնարարն իր նպատակին հասնում է հիմնականում հոգեբանական բռնություն կիրառելու կամ համոզելու, գայթակղելու միջոցով: Հոգեբանական բռնությունը կարող է արտահայտվել այնպիսի սպառնալիքներով, ինչպիսիք են՝ ֆիզիկական ուժի կիրառումը, բակում խաղալու արգելքը, սննդից և ջրից զրկելը և այլն: Ֆիզիկական ուժ կիրառելուց խուսափելը շատ դեպքերում պայմանավորված է բռնարարի՝ երեխայի մարմնի վրա հետքեր թողնելու հետևանքով բացահայտվելու մտավախությամբ: Երեխաների նկատմամբ սեռական բռնություն կիրառելու դեպքում արարքը ոչ միշտ է կատարվում տուժողի կամքին հակառակ՝ ելնելով երեխայի տարիքային և հասունության աստիճանի առանձնահատկություններից: Հաճախ մանկահասակ երեխաները սեռական բռնությունն ընկալում են որպես խաղ կամ զվարճանք՝ չգիտակցելով դրանց բնույթը և հետևանքները:

Տնտեսական բռնությունն անձի տնտեսական, ներառյալ՝ ֆինանսական, միջոցները կառավարելն ու վերահսկելն է:

Օրենքում տնտեսական բռնությունը բնութագրվում է այնպիսի գործողություններով, ինչպիսիք են՝ անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելը, սեփականության կամ




ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքներն ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կրթությունն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը:

Կառավարության որոշման Հավելվածում, որպես երեխայի նկատմամբ բռնության ինքնուրույն տեսակ, սահմանված չէ տնտեսական բռնությունը, ինչը մեր կարծիքով՝ սխալ է: Եթե մանկահասակների դեպքում տնտեսական բռնության առանձին դրսևորումներ կլանվում են անտեսում հասկացության կողմից, ապա որոշակի տարիքից սկսած՝ այն գնահատվում է որպես տնտեսական բռնություն, ուստի, երեխայի նկատմամբ տնտեսական բռնության հարցերը քննարկելիս, պետք է ելակետ ընդունել ինչպես Օրենքում տրված տնտեսական բռնության հասկացությունը, այնպես էլ անտեսման հասկացությունը: Երեխայի դեպքում տնտեսական բռնության մասին խոսելիս պետք է հիմնավորվի, օրինակ, կոնկրետ գույքի, ֆինանսական միջոցների կամ առարկաների նկատմամբ սեփականության իրավունքի առկայության հանգամանքը, որոնց նկատմամբ իրավունքների իրականացմանը հանցավորը ոչ իրավաչափ միջամտում է, զրկում և այլն:

Տնտեսական բռնության օրինակներ են՝ ֆինանսական միջոցները խլելը, բանկային քարտերը պահելը, գնումները քննադատելը, բացարձակ կախվածության վիճակի ստեղծումը և այլն:

Անտեսումն երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի ամենատարածված ձևերից մեկն է, որը դրսևորվում է երեխայի կարիքները չհոգալով, թերի խնամք կազմակերպելով, երեխայի կարիքներն անտեսելով և պահանջմունքները չբավարարելով, ընդ որում, ինչպես



նյութական, այնպես էլ հոգեբանական և հոգևոր¹⁵:


Օրենքում սահմանված է, որ անտեսում է հանդիսանում ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:

Կառավարության որոշման Հավելվածի համաձայն՝ երեխայի անտեսումը նրա կենսապահովման համար հիմնական պահանջմունքներից դիտավորությամբ կամ անփութությամբ զրկելն է, որի հետևանքով երեխան հայտնվում է կյանքի և զարգացման համար վտանգավոր ու անպաշտպան իրավիճակում:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ օրենսդրությամբ անտեսում հասկացությունն ունի տարբեր բովանդակություն, ինչն ունի սկզբունքային նշանակություն երեխայի անտեսման հարցի քննարկման համատեքստում:

Ի տարբերություն Կառավարության որոշման Հավելվածում տրված բնորոշման, որում անտեսումը կարող է կատարվել ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անփութությամբ, Օրենքում տրված անտեսման բնորոշումից պարզ է դառնում, որ այն կարող է կատարվել բացառապես դիտավորությամբ,


¹⁵Պատմականորեն անտեսումը ոչ միշտ է դիտարկվել որպես բռնություն, սակայն այն հանդիսանում է այնպիսի բռնություն, որն իր անցնշելի հետքն է թողում երեխայի թե՛ ֆիզիկական, թե՛ մտավոր զարգացման վրա:



ինչը իրավաչափ չէ և չի բխում երեխայի լավագույն շահերից, ուստի կարծում ենք՝ երեխայի անտեսում հնարավոր է ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անփութությամբ:

Բացի այդ, թեև Օրենքում տրված անտեսման բնորոշումն առավել ամբողջական է և որոշակի, քանի որ դրանում նկարագրված են ոչ միայն անտեսմանը հանգեցնող գործողությունները (երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն) դիտավորությամբ չբավարարելը), այլև այն պայմանները, որոնք պարտադիր պետք է առկա լինեն անձի արարքն անտեսում որակելու համար (ծնողը կամ օրինական ներկայացուցիչը պետք է տիրապետեն պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են), սակայն այն նկարագրված է առանց հետևանքի, մինչդեռ Կառավարության որոշման Հավելվածում տրված բնորոշումից պարզ է դառնում, որ անտեսման առկայության համար պարտադիր է հետևանքը, այն է՝ երեխան պետք է հայտնվի կյանքի և զարգացման համար վտանգավոր ու անպաշտպան իրավիճակում:

Երկու մոտեցումներն էլ, ըստ էության, ընդունելի են կախված այն հանգամանքից, թե ինչ նպատակով են սահմանված, քանի որ դրանք կիրառելի են նաև վարչաիրավական, քաղաքացիաիրավական և ընտանեկան օրենսդրությամբ սահմանված հարաբերությունների նկատմամբ, որոնց պարագայում, ելնելով իրավահարաբերությունների բնույթից, մի դեպքում՝ անձի գործողություններում անտեսման փաստի հաստատման համար կարևորություն չի տրվում հետևանքին, այլ ինքնին անտեսման հանգեցնող գործողություններից




կանխավարկածվում է հետևանքը, իսկ մյուս դեպքում՝ հետևանքի շեշտադրումը կարևոր է ձևական մոտեցումները բացառելու համար:

Քրեաիրավական առումով անտեսման հարցը քննարկելիս՝ ելակետ են ընդունվում հենց ՀՀ քրեական օրենսգրքում սահմանված համապատասխան հանցակազմերի հատկանիշները, որոնցից դուրս այլ հատկանիշներ էական չեն կարող լինել:

Բռնությունը կարող է լինել նաև համակցված, երբ երեխայի նկատմամբ կիրառվում է վերը նշված ոչ թե մեկ, այլ բռնության մի քանի տեսակ: Օրինակ, երեխայի առևանգման դեպքում երեխայի նկատմամբ կիրառվում է թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական բռնություն, իսկ երեխայի շահագործման դեպքում, կախված շահագործման ձևից, կիրառվում է թե՛ ֆիզիկական, թե՛ սեռական, թե՛ հոգեբանական, թե՛ տնտեսական բռնություն, ինչպես նաև անտեսում:

Երեխաների նկատմամբ բռնության ոչ բոլոր ձևերն են որպես հանցագործություն սահմանված ՀՀ քրեական օրենսգրքով: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ, նախևառաջ, քրեական օրենսդրությամբ պետք է տարբերակված մոտեցում դրսևորվի երեխայի և մեծահասակի նկատմամբ կիրառված բռնության հատկանիշների և պարտադիր պայմանների առնչությամբ, ինչպես նաև երեխան պետք է պաշտպանվի նաև իրավունքի այլ ճյուղերով, օրինակ՝ վարչական, քաղաքացիական, ընտանեկան, միջազգային և այլն:


Ելնելով ՀՀ օրենսդրության առանձնահատկություններից, երեխաների նկատմամբ բռնության դրսևորումների մի մասը դուրս է մնացել իրավական




կարգավորման տիրույթից, օրինակ՝ գրումինգը, մանկական պոռնոգրաֆիա դիտելը և այլն: Այս դեպքերի համար անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ՝ ՀՀ քր. օր.-ում նշված արարքները քրեականացնելով, քանի որ դրանք երեխայի նկատմամբ բռնության դրսևորման ակնհայտ հանցավոր ձևեր են: Սակայն, երեխայի նկատմամբ բռնության որոշ դեպքեր իրականացվում են ընտանիքում, հաճախ ոչ կանխամտածված, պայմանավորված սոցիալական, տնտեսական, իմացական և այլ հանգամանքներով, երբեմն՝ մեկ այլ երեխայի կողմից, և այս դեպքերում պատժիչ քաղաքականությունն այդքան էլ արդյունավետ չէ և հաճախ չի բխում երեխայի լավագույն շահերից:

Ներկայումս Հայաստանում արդեն իսկ ձևավորվել է երեխաների նկատմամբ բռնության տարբեր ձևերի դեմ ոչ քրեական մեթոդներով պայքարի համապատասխան պրակտիկա:

2007 թվականի հունիսի 1-ից Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել «Երեխայի Միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» Հաագայի կոնվենցիան: Առևանգում տերմինն ունի երկու իմաստ. առաջինը վերաբերելի է միայն երեխայի ծնողների խնամակալության իրավունքի սահմանափակմանը կամ ոտնահարմանը, երբ մի ծնողն առանց մյուսի տեղեկացման տեղափոխում է երեխային Հայաստանի Հանրապետությունից՝ կամ հակառակը, իսկ երկրորդը, երբ երեխան անօրինական կերպով պահվում է օտար երկրում: 2018 թ. երեխաների միջազգային առևանգման վարույթները, ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի փոփոխությունների, քննարկվում են բացառապես դատարանի կողմից:



Օրինակ, երեխայի միջազգային առևանգման դեպքում ՀՀ արդարադատության նախարարության պատասխանատու ստորաբաժանումն ապահովում է ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան երեխայի իրավունքների պաշտպանությունը՝ առանց քրեաիրավական մեթոդների կիրառման՝ հիմք ընդունելով, որ միջազգային առևանգում կատարողը երեխայի ծնողներից մեկն է: Կամ, երեխայի՝ ծնողի հետ պարբերաբար հանդիպումներ ունենալու և տեսակցվելու իրավունքի խախտումը կարող է ունենալ ինչպես հանցավոր, այնպես էլ ոչ հանցավոր դրսևորումներ, որոնցից առաջինը կարգավորվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների կամ դատարանի միջոցով, և միայն դատական կարգով տեսակցության սահմանված լինելու դեպքում այն չկատարելը կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության, այն էլ՝ ՀՀ քր. օր.-ի 167.1 հոդվածով նախատեսված պայմանների առկայության դեպքում:




1. Առաքելյան Ս.Վ. Կանանց իրավական պաշտպանությունը բռնությունից: Երևան, 2001,
2. ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշումը // datalex.am,
3. ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. հունիսի 8-ի թիվ ԿԴ1/0025/01/11 որոշումը // datalex.am,
4. World report on violence and health/ Edited by Etienne G. Krug, WHO, 2002, https://www.who.int/violence_injury_prevention/violence/world_report/en/introduction.pdf?ua=1,
5. Костров Г.К. Психическое насилие при разбое и грабеже // Советская юстиция, 1970, №11// <http://lawlibrary.ru/article1036523.html>,
6. Гришко А.Я., Гришко Е.А., Упоров И.В. Уголовное право. Общая часть: Учебное пособие/ Под ред. Н.И. Ветрова. М., 2001// <http://lawlibrary.ru/izdanie39153.html>,
7. Гаухман Л.Д. Борьба с насильственными посягательствами. М., Юридическая литература, 1969 // <https://www.twirpx.com/file/1451590/>,
8. Симонов В.И., Шумихин В.Г. Квалификация насильственных посягательств на собственность. Учебное пособие. М., 1993 // <http://lawlibrary.ru/izdanie37956.html>,
9. Научный комментарий УК РСФСР. Свердловск, 1964,
10. Сердюк Л.В. Психическое насилие как предмет уголовно-правовой оценки. Дис. канд. юрид. наук. М., 1979 // <http://lawlibrary.ru/disser2007479.html>,



Լրացուցիչ մեդիա-նյութերը
նախատեսված են Ձեզ
հետաքրքրող նյութի մասին
հավելյալ գիտելիքներ
ստանալու համար:

11. Гаухман Л.Д. Насилие при грабеже, разбое и вымогательстве // Советская юстиция, 1969, №2,
12. «Երեխայի Միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» Հաագայի կոնվենցիա // <https://www.arlis.am/DocumentView.aspx?-docid=48025>,
13. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը // <https://www.arlis.am/documentView.aspx?docID=118672>,
14. ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման Հավելված N 1 // https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/12/51-2_1ardz.pdf:



Երեխաների նկատմամբ բռնություն

Երեխայի առողջության, կյանքի, զարգացման, ինքնության իրական կամ պոտենցիալ վտանգմանը հանգեցնող ֆիզիկական և/կամ հուզական դաժանության, սեռական բնույթի գործողություններ կամ անտեսման կամ բարձիթողության արարքների իրականացումն է՝ օգտվելով կարգավիճակից կամ պաշտոնից բխող լիազորություններից և չարաշահելով երեխայի վստահությունը:

Ֆիզիկական բռնություն

Դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարքն է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական տառապանք և կատարվել է ուրիշի նկատմամբ իշխանություն և վերահսկողություն հաստատելու նպատակով:

Հոգեբանական բռնություն

Վնաս պատճառելու սպառնալիքի միջոցով ուրիշի հոգեկանի վրա ազդեցությունն է՝ տուժողի կամքը ճնշելու նպատակով, և կատարվում է հանցավոր արդյունքի հասնելու համար:

Սեռական բռնություն

Ցանկացած դիտավորյալ արարքն է՝ ուրիշին նրա կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու



Ուշադրությամբ ծանոթացե՛ք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձե՛ք դրանց:



Մինչև 15 րոպե


սեռական հարաբերության կամ սեռական բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելու նպատակով, որը ոտնձգում է անձի սեռական ազատության և/կամ սեռական անձեռնմխելիության դեմ:

Տնտեսական բռնություն

Անձի տնտեսական, ներառյալ՝ ֆինանսական, միջոցները կառավարելն ու վերահսկելն է:

Անտեսում

Երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի ամենատարածված ձևերից մեկն է, որը դրսևորվում է երեխայի կարիքները չհոգալով, թերի խնամք կազմակերպելով, երեխայի կարիքներն անտեսելով և պահանջմունքները չբավարարելով, ընդ որում՝ ինչպես նյութական, այնպես էլ հոգեբանական և հոգևոր:



Հարց 1.

ՀՀ օրենսդրությունը ընտանեկան բռնության ինչպիսի՞ տեսակներ է սահմանել.

- ա. ֆիզիկական բռնությունը, սեռական բռնությունը, հոգեբանական բռնությունը, տնտեսական բռնությունը, անտեսումը:
- բ. Ֆիզիկական բռնությունը, սեռական բռնությունը, տնտեսական բռնությունը, գրումինգը, առևանգումը:
- գ. Ֆիզիկական բռնությունը, սեռական բռնությունը, հոգեբանական բռնությունը, տնտեսական բռնությունը, սոցիալական բռնությունը:
- դ. Ֆիզիկական բռնությունը, սեռական բռնությունը, հոգեբանական բռնությունը, առևանգումը, սոցիալական բռնությունը:

Հարց 2.

Երեխաների նկատմամբ բռնության ո՞ր տեսակներն են, որ ամրագրված չեն ՀՀ օրենսդրությամբ և չեն պաշտպանվում քրեական օրենսդրությամբ.

- ա. Գրումինգը, մանկական պոռնոգրաֆիա դիտելը, առևանգումը:
- բ. Սոցիալական բռնությունը, ընտանեկան բռնությունը, դպրոցական բռնությունը, մանկատան բռնությունը, կրթական այլ հաստատությունում բռնությունը:
- գ. Ֆիզիկական բռնությունը, սեռական բռնությունը, հոգեբանական բռնությունը:
- դ. Տնտեսական բռնությունը, անտեսումը:

?

Ընտրել ճիշտ տարբերակը:
Ընտրությունը կատարվում է համապատասխան հարցերի համար նախատեսված պատասխանների ճիշտ տարբերակի տառը նշելու միջոցով:



Մինչև 40 թոպե

Հարց 3.

ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշման մեջ ձևավորած իրավական դիրքորոշման համաձայն բռնությունը.

ա. Դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի հետևանքով անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք:

բ. Ֆիզիկական ուժի կամ իշխանության (լիազորության, դիրքի) նպատակադրված կիրառումն է կամ դրա սպառնալիքը մեկ այլ անձի, խմբի կամ համայնքի նկատմամբ, որը մեծ հավանականությամբ հանգեցնում է կամ կարող է հանգեցնել վնասվածքի, զրկանքի, մահվան, հոգեբանական վնասի կամ զարգացման խանգարումների:

գ. Դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական տառապանք և կատարվել է ուրիշի նկատմամբ իշխանություն և վերահսկողություն հաստատելու նպատակով:

դ. Դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի նպատակն է վնաս պատճառելու սպառնալիքի միջոցով տուժողի կամքը ճնշելը հանցավոր արդյունքի հասնելու համար:

Հարց 4.

Ա-ն ամուսնության խոստում տալով սեռական հարաբերության մեջ է մտնում 16 տարեկան Գ-ի հետ, որից հետո հրաժարվում է իր կողմից տրված խոստումից: Գ-ի այն պնդմանը, որ հայտնելու է ծնողներին իրեն խաբելու և սեռական հարաբերություն ունենալու մասին, Ա-ն սպառնում է, որ այդ դեպքում ինքը կոչնչացնի Գ-ին պատկանող 200.000 ՀՀ դրամ արժողությամբ Apple 7S մոդելի հեռախոսը:

Բռնության ո՞ր եղանակն է առկա Ա-ի արարքում.

ա. Հոգեբանական:

բ. Սեռական:

գ. Հոգեբանական և սեռական:

դ. Զրեախրավական նշանակության բռնությունն առկա չէ նրա արարքում:

Հարց 5.

17 տարեկան Ա-ն աշխատում է «ՄԻԳ» ՍՊԸ-ում որպես տնօրեն՝ Բ-ի գործավար, որի կողմից պարբերաբար արժանանում է թանկարժեք նվերների և ծաղիկների: Հերթական օձանելիքը և ծաղիկները նվիրելուց Բ-ն Ա-ից պահանջում է, որպեսզի նա անցնի իր առանձնասենյակ՝ հասկացնելով, որ ցանկանում է նրա հետ սեռական հարաբերություն ունենալ: Ա-ն հայտնում է, որ ինքը չի ցանկանում մտնել առանձնասենյակ և խնդրում է Բ-ին պարզաբանել, թե ինչու է նման վարքագիծ դրսևորում, որին ի պատասխան Բ-ն, զայրացած այն հանգամանքից, որ Ա-ն չի ցանկանում իր առանձնասենյակ մտնել և իր հետ սեռական հարաբերություն ունենալ, նույնիսկ դեռ պարզաբանում է պահանջում, նշում է հետևյալը.

«Նվերները և ծաղիկները, որ ստանում էիր՝ լավ էր, սակայն հենց պետք է պիտանի լինես գոնե մեկ անգամ, հրաժարվում ես ու քեզ թանկացնում»։ Ելնելով ամոթի զգացումից ու պարտավորված զգալով տնօրենի առջև՝ Ա-ն համաձայնվում է ոչ բնական ճանապարհով սեռական հարաբերություն ունենալ նրա հետ։

Բռնության ո՞ր եղանակն է առկա Բ-ի արարքում.

- ա. Սեռական:
- բ. Հոգեբանական և սեռական:
- գ. Առկա չէ բռնություն:
- դ. Տնտեսական և սեռական:

Հարց 6.


Ա-ն սպառնալով, որ ծեծի կենթարկի Կ-ի փոքր եղբորը, իսկ իրեն կփակի սենյակում, եթե իր ասածները չանի, այդ կերպ սեքսուալ բնույթի գործողություններ է կատարում 9 տարեկան Կ-ի հետ:

Նկարագրված դեպքում առկա է.

- ա. Ֆիզիկական և սեռական բռնություն:
- բ. Հոգեբանական և ֆիզիկական բռնություն:
- գ. Սեռական և ֆիզիկական բռնություն:
- դ. Սեռական և հոգեբանական բռնություն:

Հարց 7.

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության



վերականգնման մասին» օրենքին համաձայն՝ ֆիզիկական բռնությունը.

ա. Վնաս պատճառելու սպառնալիքի միջոցով ուրիշի հոգեկանի վրա ազդեցությունն է՝ տուժողի կամքը ճնշելու նպատակով, և կատարվում է հանցավոր արդյունքի հասնելու համար:


բ. Ցանկացած դիտավորյալ արարքն է՝ ուրիշին նրա կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու սեռական հարաբերության կամ սեռական բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելու նպատակով, որը ոտնձգում է անձի սեռական ազատության և/կամ սեռական անձեռնմխելիության դեմ:

գ. Երեխայի առողջության, կյանքի, զարգացման, ինքնության իրական կամ պոտենցիալ վտանգմանը հանգեցնող ֆիզիկական և/կամ հոլզական դաժանության, սեռական բնույթի գործողություններ կամ անտեսման կամ բարձիթողության արարքների իրականացումն է՝ օգտվելով կարգավիճակից կամ պաշտոնից բխող լիազորություններից և չարաշահելով երեխայի վստահությունը:

դ. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծեծն է և այլ բռնի գործողությունները, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելն է, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը:

Հարց 8.

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքին համաձայն




հոգեբանական բռնությունը.

ա. Ֆիզիկական ուժի կամ իշխանության (լիազորության, դիրքի) նպատակադրված կիրառումն է կամ դրա սպառնալիքը մեկ այլ անձի, խմբի կամ համայնքի նկատմամբ, որը մեծ հավանականությամբ հանգեցնում է կամ կարող է հանգեցնել վնասվածքի, զրկանքի, մահվան, հոգեբանական վնասի կամ զարգացման խանգարումների:

բ. Դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելն է, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի հանդեպ, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը:

գ. Ցանկացած դիտավորյալ արարքն է՝ ուրիշին նրա կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու սեռական հարաբերության կամ սեռական բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելու նպատակով, որը ոտնձգում է անձի սեռական ազատության և/կամ սեռական անձեռնմխելիության դեմ:

դ. Երեխայի առողջության, կյանքի, զարգացման, ինքնության իրական կամ պոտենցիալ վտանգմանը հանգեցնող ֆիզիկական և/կամ հոլգական դաժանության, սեռական բնույթի գործողություններ կամ անտեսման կամ բարձիթողության արարքների իրականացումն է՝ օգտվելով կարգավիճակից կամ պաշտոնից բխող լիազորություններից և չարաշահելով երեխայի վստահությունը:



Հարց 9.

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքին համաձայն երեխաների նկատմամբ անտեսումը.

- ա. Ցանկացած դիտավորյալ արարքն է՝ ուրիշին նրա կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու սեռական հարաբերության կամ սեռական բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելու նպատակով, որը ոտնձգում է անձի սեռական ազատության և/կամ սեռական անձեռնմխելիության դեմ:
- բ. Երեխայի առողջության, կյանքի, զարգացման, ինքնության իրական կամ պոտենցիալ վտանգմանը հանգեցնող ֆիզիկական և/կամ հոգական դաժանության, սեռական բնույթի գործողություններ կամ անտեսման կամ բարձիթողության արարքների իրականացումն է՝ օգտվելով կարգավիճակից կամ պաշտոնից բխող լիազորություններից և չարաշահելով երեխայի վստահությունը:
- գ. Վնաս պատճառելու սպառնալիքի միջոցով ուրիշի հոգեկանի վրա ազդեցությունն է՝ տուժողի կամքը ճնշելու նպատակով, և կատարվում է հանցավոր արդյունքի հասնելու համար:
- դ. Ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն) դիտավորությամբ չբավարարելն է, եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:

Հարց 10.

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքին համաձայն սեռական բռնությունը.

- ա. Ֆիզիկական ուժի կամ իշխանության (լիազորության, դիրքի) նպատակադրված կիրառումն է կամ դրա սպառնալիքը մեկ այլ անձի, խմբի կամ համայնքի նկատմամբ, որը մեծ հավանականությամբ հանգեցնում է կամ կարող է հանգեցնել վնասվածքի, զրկանքի, մահվան, հոգեբանական վնասի կամ զարգացման խանգարումների:
- բ. Վնաս պատճառելու սպառնալիքի միջոցով ուրիշի հոգեկանի վրա ազդեցությունն է՝ տուժողի կամքը ճնշելու նպատակով, և կատարվում է հանցավոր արդյունքի հասնելու համար:
- գ. Երեխայի առողջության, կյանքի, զարգացման, ինքնության իրական կամ պոտենցիալ վտանգմանը հանգեցնող ֆիզիկական և/կամ հոլզական դաժանության, սեռական բնույթի գործողություններ կամ անտեսման կամ բարձիթողության արարքների իրականացումն է՝ օգտվելով կարգավիճակից կամ պաշտոնից բխող լիազորություններից և չարաշահելով երեխայի վստահությունը:
- դ. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն են:

ԴԱՍ 2

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս դասի (մոտիվացնող
ներածական տեսանյութ+դասի
տեքստ+բառարան+ինքնաստուգիչ հարցեր)
յուրացման համար անհրաժեշտ է
240 րոպե / 4 ժամ:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի
կայքի հեռաուսուցման բաժնում):

Երեխայի նկատմամբ բռնությունն իրենից
ներկայացնում է ֆիզիկական և/կամ հուզական
դաժան վերաբերմունքի, սեռական ոտնձգության,
անտեսման, կոմերցիոն և այլ շահագործման
բոլոր տեսակները, ինչը հանգեցնում է երեխայի
առողջության, գոյատևման, զարգացման կամ
արժանապատվության ակնհայտ կամ հնարավոր
վնասի [1]: Բռնության տարբեր տեսակները, ըստ
Էության, հանդիսանալով հոգետրավմատիկ իրողություն,
այնուամենայնիվ, տարբեր ազդեցություն են ունենում
երեխայի հոգեբանության և զարգացման վրա և
առաջացնում են տարբեր հետևանքներ և ունեն
տարբեր նշաններ:

Այսպես, ֆիզիկական բռնությունը երեխային
ֆիզիկական վնաս պատճառելն է, ինչը կարող է
ներառել այրվածքներ, հարվածներ, ցնցումներ, ծեծ
և այլ տիպի մարմնական վնաս, և որի հետևանքով
առավել հաճախ հանդիպում են՝

- մարմնի վրա այրվածքներ, կտրվածքներ, կծելու



Մինչև 10 րոպե

Ուշադրությամբ
կարդացե՛ք
տեքստը (օգտվելով
բառարանից) և
այն յուրացնելուց
հետո միայն անցե՛ք
ինքնաստուգիչ
հարցերին:




Մինչև 175 րոպե

հետքեր, արնագեղումներ, կապտուկներ կամ աչքի տակ՝ սևություն,

- երեխայի վախեցած հոգեվիճակ և տուն գնալու դիմադրություն,
- անսովոր ներհակվածություն, ինքնամփոփություն կամ չափազանց ագրեսիվություն,
- կոնկրետ անձից վախ,
- ցածր ինքնավստահություն և ինքնագնահատական,
- սոցիալական հարաբերություններում բարդություններ, ինքնամփոփություն և այլն [1, 2, 3]:

Սեռական բռնությունը երեխայի հետ սեքսուալ վարքի իրականացումն է, երբ երեխային ստիպում կամ համոզում են ներգրավվել սեռական ակտի կամ իրավիճակի մեջ կամ կատարում են սեռական կիրքը բավարարելուն ուղղված այլ գործողություններ: Սա երեխայի նկատմամբ սեքսուալ բնույթ ունեցող ցանկացած գործողության կամ տարիքին անհամապատասխան սեռական ստիմուլյացիայի իրականացումն է և ներառում է երեխայի սեռական օրգանների շոյում, երեխային պարտադրում կամ համոզում՝ շոյելու կամ դիպչելու մեծահասակի սեռական օրգաններին, սեռական հարաբերություն, էքսհիբիցիոնիզմ, սեռական շահագործում և այլն: Միևնույն ժամանակ, երեխայի նկատմամբ սեռական բռնությունը պարտադիր չէ, որ ներառի բռնարարի կողմից ֆիզիկական կոնտակտ: Այն կարող է դրսևորվել երեխայի ներկայությամբ ձեռնաշարժությամբ կամ նրան դա անել ստիպելով, անպարկեշտ հեռախոսազանգերով, տեքստային հաղորդագրություններով կամ վիրտուալ շփումով, երեխային պոռնոգրաֆիկ նկարների կամ ֆիլմերի ցուցադրությամբ և այլն:

Երեխայի նկատմամբ սեռական բռնության նշանները միշտ չէ, որ հեշտ նկատելի են՝




պայմանավորված մի շարք գործոններով: Բռնարարները տուժած երեխային լռեցնելու համար նրա նկատմամբ կիրառում են մի շարք մանիպուլյատիվ մարտավարություններ: Հաճախ բռնարարներն օգտագործում են երեխայի նկատմամբ իրենց իշխանությունը՝ երեխային ստիպելու կամ վախեցնելու համար: Նրանք կարող են համոզել երեխային, որ կատարված գործողությունները բնականոն են, և որ երեխան դրանցից հաճույք է ստացել, որ դրանք սիրո դրսևորում են և բռնարարի համար երեխայի «յուրահատուկ» լինելու ապացույցը: Բռնարարները հաճախ սպառնում են հետագա բարդություններով կամ պատժով, երբ երեխան հրաժարվում է մասնակցել գործողություններին կամ պլանավորում է պատմել կատարվածի մասին այլ անձանց: Հետևաբար, երեխայի նկատմամբ սեռական բռնությունը միայն ֆիզիկական վնասում չէ. այն վստահության վնասում է:

Երեխայի նկատմամբ սեռական բռնության ֆիզիկական նշաններն են՝

- քայլելու կամ նստելու դժվարություններ,
- սեռական օրգանների կամ հետանցքի շրջանի գրգռվածություն, արնահոսություն կամ այտուցվածություն,
- սեռական օրգանների շրջանում ցավ, քոր կամ այրոցի զգացում,
- արյունոտ, պատռված կամ հետքերով ներքնաշոր,
- միզասեռական վարակներ:

Երեխայի սեռական բռնության վարքային և հուզական նշաններն են՝

- սեքսուալ գիտելիքների և սեռական վարքի անսովոր ցուցաբերում,




- հիգիենայի փոփոխություններ (հրաժարում լողանալուց կամ հաճախակի լողանք),
- կաշուն վախեր՝ ֆոբիաներ,
- դեպրեսիայի և հետտրավմատիկ սթրեսային խանգարման ախտանիշներ,
- ինքնասպանության մտքերի արտահայտում (հատկապես՝ դեռահասների դեպքում),
- դպրոցական խնդիրներ՝ բացակայություններ, առաջադիմության անկում,
- մղձավանջներ և/կամ գիշերամիզություն,
- քույրերի և եղբայրների նկատմամբ չափազանց հոգատարություն և պաշտպանություն, խնամողի դերի ստանձնում,
- ռեգրեսիվ վարքի դրսևորում (բուլթ մատը ծծելը, եղունգները կրծելը),
- տնից կամ դպրոցից փախուստներ,
- ինքնավնասումներ,
- ֆիզիկական կոնտակտի դեպքում կծկվածություն կամ վախեցած տեսք [1, 3, 4]:

Երեխայի նկատմամբ **հոգեբանական** կամ **հուզական** բռնությունը ներառում է երեխայի նկատմամբ շարունակական բացասական հուզական վերաբերմունք: Այն ներառում է երեխային վախեցնելու, նսեմացնելու, մեկուսացնելու կամ մեղադրելու դիտավորյալ փորձերը:

Հոգեբանական բռնությունը հաճախ բռնության այլ տեսակների մաս է կազմում, ինչը նշանակում է, որ այն նույնականացնելը և տարանջատելը հեշտ չէ, չնայած, որ երբեմն այն կարող է լինել անջատ մյուս տեսակներից:

Հոգեբանական բռնության ձևեր են.


- երեխային նսեմացնելը կամ մշտապես քննադատելը,



- սպառնալը, երեխայի վրա գոռալը կամ մականուններով անվանելը,
- երեխային ծաղրելը կամ խոցելու նպատակով սարկազմ օգտագործելը,
- մեղադրելը կամ «քավության նոխազ» կարգելը,
- նվաստացուցիչ գործողությունների կատարումն ստիպելը,
- երեխայի անհատականության չընդունումը կամ նրա կյանքը տոտալ վերահսկելու փորձերը,
- երեխային չափազանց առաջ «մղելը» կամ նրա սահմանափակումները չընդունելը,
- ընկերներ ունենալ թույլ չտալը,
- երեխային մանիպուլյացիայի ենթարկելը,
- դրական հույզերի կամ երեխայի հաջողությունների դեպքում գովասանքի բացակայությունը,
- հուզական մերժումը. երեխայի հետ փոխազդեցության մեջ հույզերի նվազագույն արտահայտումը և այլն [1, 3, 5]:

Հոգեբանական բռնության ֆիզիկական ցուցիչներ գրեթե չեն լինում, իսկ երեխան հաճախ չի պատմում իր մոտ առկա հուզական բարդությունների մասին: Այդ պատճառով էլ առանձնահատուկ կարևոր է նկատել երեխայի վարքային դրսևորումները: Տարիքին զուգահեռ փոխվում են նաև երեխայի հուզական հակազդումները: Սա նշանակում է, որ հոգեբանական բռնության ենթարկված երեխային հայտնաբերելը կարող է չափազանց բարդ լինել: Սակայն, նման երեխաները հաճախ.

- երևում են կաշկանդված և անվստահ,
- պայքարում են սեփական հույզերը վերահսկելու համար,
- ունենում են հարաբերություններ կառուցելու կամ պահպանելու բարդություններ,
- դրսևորում են տարիքին անհամապատասխան վարք,




- կարող են դրսևորել դեպրեսիայի կամ ագրեսիայի նշաններ,
- ունենում են հակասական և ծայրահեղական վարք,
- կարող են դրսևորել ինքնասպանության մտքեր կամ վարք (դեռահասների դեպքում) [5]:

Երեխայի **անտեսումը** ներառում է ծնողի կամ խնամակալի ցանկացած գործողություն կամ անգործություն, որը հանգեցրել է երեխայի մահվան, լուրջ ֆիզիկական կամ հոլզական վնասման, սեռական բռնության կամ չարաշահման, ինչպես նաև ծնողի կամ խնամակալի ցանկացած գործողություն կամ անգործություն, որը ենթադրում է լուրջ վնասի անխուսափելի ռիսկ [1, 3, 6]:

Անտեսումը հաճախ սահմանվում է, որպես ծնողի/խնամողի կողմից երեխայի նվազագույն խնամքի (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական խնամք, վերահսկողություն) այն աստիճանի ձախողում, որն էականորեն վտանգում է երեխայի առողջությունը, անվտանգությունը և բարօրությունը:

Անտեսումը տարանջատում է մի քանի տեսակների.

- ֆիզիկական անտեսում՝ ֆիզիկական խնամքի թերացումներ (սննդի, հիգիենայի, համապատասխան հագուստի խիստ պակաս կամ բացակայություն),
- բժշկական անտեսում՝ երեխային անհրաժեշտ բժշկական խնամքի մերժում կամ հետաձգում,
- անհամապատասխան վերահսկողություն՝ երեխայի նկատմամբ վերահսկողության թերացում, անվտանգ պայմանների ապահովման թերացում, ներգրավում վնասող վարքի մեջ և այլն,
- հոլզական անտեսում՝ երեխայի մեկուսացում, հոլզական աջակցության բացակայություն,




- կրթական անտեսում՝ երեխային դպրոցական կրթությունից զրկում, հատուկ կրթական կարիքները հոգալու թերացում, դպրոցից քրոնիկ բացակայելու թույլտվություն և այլն:

Անտեսումը կարող է ունենալ երեխայի վրա բացասական ազդեցություն հետևյալ ոլորտներում՝

- առողջություն և ֆիզիկական զարգացում՝ թերսնվածություն, ուղեղի զարգացման վնասվածություն, աճի դանդաղում,
- ինտելեկտուալ և մտածական զարգացում՝ ցածր ակադեմիական առաջադիմություն, լեզվի զարգացման խանգարումներ,
- հուզական և հոգեբանական զարգացում՝ ինքնագնահատականի, կապվածությունների, վստահության պակաս,
- սոցիալական և վարքային զարգացում՝ միջանձնային հարաբերությունների խնդիրներ, սոցիալական մեկուսացում, հակումների դժվար վերահսկողություն [6]:

Երեխայի նկատմամբ բռնության ցանկացած դրսևորում հանգեցնում է սթրեսային կամ հոգետրավմատիկ արձագանքի: Հոգեբանական տեսանկյունից *սթրեսը* մարդու դժվար, ոչ սովորական, արտակարգ իրադրություններում առաջացող ընդհանուր գրգռվածության, հոգեբանական լարվածության վիճակ է: Այն գործոնները, որոնք մարդու մոտ խթանում են սթրեսային արձագանքը, կոչվում են *սթրեսորներ*: Առօրյա կյանքում մարդը բախվում է բազմաթիվ սթրեսորների, որոնք առաջ են բերում բազմատեսակ սթրեսային ռեակցիաներ՝ ծայրահեղ դրականից մինչև չափազանց բացասական և կործանիչ: Այսինքն, սթրեսը որպես այդպիսին




կարող է լինել թե՛ դրական, թե՛ բացասական: Բացասական սթրեսը կոչվում է *դիսթրես* (կոնֆլիկտ, կորուստ, կարևոր վերջնաժամկետի մոտեցում), դրականը՝ *էվսթրես* (մեծ գումարի շահում, կորած մտերիմի անսպասելի վերադարձ, մրցանակի ստացում) [7, 12]:

Սթրեսի վերապրման տեսանկյունից գործնականում նշանակություն չունի՝ դրակա՞ն, թե՛ բացասական, հաճելի՞, թե՛ տհաճ է իրավիճակը, որին բախվել է անձը: Կարևոր չափանիշը, որը տարբերում է սթրեսն այլ հուզական վիճակներից, դրա *ուժգնությունն* ու *անսպասելիությունն* է:

Աննշան սթրեսներն անխուսափելի են և անվնաս: Մարդու հոգեկանն ու օրգանիզմը հաջողությամբ հաղթահարում են դրանք հարմարման միջոցով: Այս մեխանիզմը թույլ է տալիս պահպանել օրգանիզմի և հոգեկանի ներքին կայունությունը՝ *հոմեոսթազը* (այդ պատճառով Յ.Սելյեն սթրեսն անվանում էր ընդհանուր հարմարողական համախտանիշ, որն ուղղված է ապահովելու օրգանիզմի հարմարումը փոփոխված միջավայրին): Սակայն, երբեմն սթրեսների, հատկապես՝ դիսթրեսների հաճախականությունը կամ մեծ ինտենսիվությունը կարող է հանգեցնել *ապահարմարման*՝ օրգանիզմի և հոգեկանի դիմադրողականության անկման, երբ մարդը սկսում է դրսևորել մի շարք բացասական ցուցանիշներ ինչպես ֆիզիոլոգիական, այնպես էլ՝ հոգեբանական մակարդակներում:


Սթրեսն ընթանում է երեք հիմնական փուլով: Առաջինն ահազանգի փուլն է, որն սկսվում է, երբ որևէ սթրեսոր սկսում է ազդել մարդու վրա, և մարդու օրգանիզմն ու հոգեկանը մոբիլիզացվում



են, որպեսզի դիմակայեն այդ իրավիճակին. անձը, կարծես, հավաքում է իր բոլոր ուժերը: Այս փուլը համեմատաբար կարճատև է և նախապատրաստում է մարդուն դիմակայելու դժվարություններին: Մարդը, ասես, «գերուժեղանում» է, մտովի և ֆիզիկապես ուղղվում է դեպի խնդիրը և պատրաստվում է «կռիվ տալ»:

Երկրորդ փուլը *դիմադրության* կամ *պայքարի* փուլն է, որի ընթացքում մարդն ակտիվորեն առերեսվում է սթրեսային իրավիճակին, իրագործում է որոշակի քայլեր թուլացնելու կամ անհետացնելու այդ իրավիճակը, հաղթահարելու այն: Այս փուլը կարող է ունենալ տարբեր տևողություն, մի քանի րոպեից մինչև ամիսներ, կամ նույնիսկ՝ տարիներ: Այս ընթացքում մարդը նախորդ փուլում կուտակած ուժերն ակտիվորեն ծախսում է խնդրին դիմակայելու կամ լուծելու նպատակով: Եվ, եթե դա ստացվում է, ապա մարդը թևակոխում է սթրեսի երրորդ՝ *հաղթահարման* փուլ [7]:

Սակայն միշտ չէ, որ դիմադրության փուլը հաջողությամբ է ավարտվում: Ակնհայտ է, որ եթե մարդու հոգեկան և ֆիզիկական ուժերը քիչ լինեն, իսկ սթրեսային իրավիճակը՝ երկարատև և ինտենսիվ, ապա ինչ-որ ժամանակ անց այդ ուժերը կսկսեն սպառվել: Եվ այս դեպքում երրորդ փուլը կկոչվի *սպառման* փուլ, որի ժամանակ դիտվում են մի շարք բացասական փոփոխություններ և ախտանիշներ թե՛ ֆիզիկական (հյուճվածություն, հիվանդություններ, անքնություն, մինչև անգամ՝ մահ), թե՛ հոգեբանական (դեպրեսիվություն, կյանքի իմաստի կորուստ, հուսահատություն, անտարբերություն և այլն) մակարդակներում:




Հոգեբանական տրավման կյանքի բացառիկ սթրեսային և արտասովոր փորձ է, որն առաջ է բերում ֆիզիկական և հոգեբանական խորը դրսևորումների լայն շրջանակ: Ի տարբերություն սթրեսի՝ հոգետրավման միշտ ունի ուժեղ *բացասական իմաստ*:

Հոգետրավմատիկ իրողությունն իր կործանիչ ինտենսիվությամբ շարքից հանում է մարդու հոգեկան պաշտպանական մեխանիզմները և նշանակալից վնասներ է հասցնում նրա կենսագործունեությանը:

Սովորաբար, հոգեբանական տրավմայի հանգեցնող իրադարձություններն իրենց էությամբ այնչափ անսպասելի և անկանխատեսելի են, որ մարդու մինչ այդ արդյունավետ գործող հոգեբանական մեխանիզմները բավարար չեն մշակելու տվյալ փորձը: Մարդը չի կարողանում բավարար չափով հասկանալ և իմաստավորել տեղի ունեցածը, այն, ասես, «չի տեղավորվում նրա ուղեղում»: Հաճախ մարդը դժվարանում է իր ապրումները բառերի վերածել և համարում է, որ այն, ինչ տեղի է ունենում, երազ է:

Նման ապակողմնորոշվածության պատճառն այն է, որ մարդու՝ փոքրուց ձևավորված հիմնարար համոզմունքները կարճ ժամանակում փլուզվում են: Որպես կանոն, հոգետրավմատիկ իրողությունը հիմնովին խաթարում է մարդու հավատն աշխարհի և մարդկանց բարյացակամության նկատմամբ, արժեզրկում է աշխարհի և կյանքի իմաստավորվածության, ինչպես նաև՝ մարդկային էակի անգնահատելիության գաղափարը: Այլևս կյանքը կանխատեսելի և վերահսկելի չէ, իսկ «ճիշտն» ու «սխալը» դադարում են լինել մարդու համար հասկանալի և տարբերակելի: Արդյունքում, մարդը կորցնում է վստահությունն այլոց,




ապագայի և ինքն իր նկատմամբ:

Որպես հոգետրավմայի դրսևորումներ կարելի է առանձնացնել՝

- հոգեբանական հաղթահարման մեխանիզմների ապագործարկումը,
- հույզերն անվանելու և արտահայտելու, դրանք իմացական սխեմաների մեջ տեղավորելու անընդունակությունը,
- հիմնարար համոզմունքները պահպանելու համար տրավմատիկ փորձի արտամղումը գիտակցությունից (մոռացում),
- «ես»-ի բացասական վերակառուցումը. մարդն ընկալում է ինքն իրեն որպես անօգնական, անարդյունավետ և անպետք,
- զայրույթի ուղղումը դեպի ներս՝ մեղքի զգացումների ձևավորումը [8, 12]:

Տրավմատիկ իրադարձությունները մեծամասամբ անկանխատեսելի և անխուսափելի են, իսկ մարդը հաճախ ոչինչ անել չի կարողանում՝ դադարեցնելու հուժկու սպառնալիքն իր անվտանգությանը, վերահսկելու իրեն պատճառվող տառապանքը և ցավը:


Հոգետրավմատիկ ազդեցության ենթարկվելիս հաճախ խախտվում է մարդու՝ սեփական կոմպետենտության և ինքնավերահսկողության զգացողությունը. նրա մոտ կարող է ձևավորվել *սովորած կամ վարժված անօգնականություն (learned helplessness)*, երբ ճնշվածության և հոգեկան կոտրվածության արդյունքում մարդն այլևս դադարում է պայքարել և «հաշտվում» է իրողության հետ՝ նույնիսկ անտեսելով հնարավոր ելքերը և լուծումները: Սա անձի *գոհականացման* երևույթն է, որը հանգեցնում



Ե կայուն և բարդ անձնային փոփոխությունների՝ պասիվություն, դեպրեսիվություն, թերարժեքության բարդույթ, ինքնամեղադրանք, սուիցիդալ վարք և այլն: Որպես նշված վիճակի գերփոխհատուցման միջոց՝ անձը կարող է նաև ստանձնել ագրեսորի դեր՝ հաղթահարելու տագնապը և անօգնականությունը:


Կապվածության զգացողությունը պահպանելու համար զոհերը հաճախ շրջվում են դեպի հույսի ամենամոտիկ աղբյուրը՝ բռնարարը: Չգայական և հուզական մեկուսացումը, անօգնականության մշտական զգացումը կարող են հանգեցնել բռնարարի հետ երեխայի պարադոքսալ կապվածության ձևավորման, մանավանդ, եթե վերջինս նրա ծնողն է կամ խնամակալը: Հոգեբանության մեջ այս երևույթը վաղուց հայտնի է որպես «ստոկիոլմյան համախտանիշ»։ Նման տրավմատիկ կապը ծառայում է գոյատևման նպատակին: Այն թուլության կամ հոգեկան խանգարման ցուցիչ չէ, այլ կանխատեսելի և օգտակար պաշտպանություն է: Սակայն, նման կապվածությունը երկարաժամկետ կտրվածքով միայն խորացնում է զոհայնացման գործընթացը և անօգնականությունը, և հանգեցնում է հասուն տարիքում հարաբերություններ հաստատելու հետ կապված լուրջ խնդիրների:

Որպես կանոն, սթրեսի ժամանակ կտրուկ ուժեղանում է կապվածություններ ձևավորելու պահանջմունքը, իսկ հետտրավմատիկ վնասման աստիճանն էականորեն կապվում է կապվածությունների և միջանձնային աջակցության կորստի հետ: Երեխաների պարագայում կապվածությունների պահանջմունքն էլ ավելի սուր է, քանի որ նրանց հոգեհուզական զարգացման տեսանկյունից կարևոր մեծահասակի հետ



կայուն կապը ներդաշնակ ու ապահով կյանքի երաշխիքն է: Հոգետրավմայի ենթարկված մարդը հաճախ ունենում է դժվարություններ հետագա հարաբերությունների կառուցման մեջ, ինչին նպաստում են ինչպես վերափոխված հիմնարար համոզմունքները («մարդիկ վստահելի չեն»), այնպես էլ անձնային բարդությունները՝ մեկուսացվածություն, ներամփոփություն և այլն [8]: Երեխաների պարագայում հոգետրավման անխտիր անդրադարձ է ունենում նրանց հետագա հարաբերությունների կառուցման, ինչպես նաև բազային համոզմունքների ձևավորման վրա: Բազմաթիվ են երեխաները, ովքեր մանկության տարիքում ենթարկվելով բռնության՝ հետագայում՝ հասուն տարիքում, կառուցում են կոնֆլիկտային կամ զոհայնացնող հարաբերություններ: Ընդ որում, հետազոտությունները փաստում են, որ մանկական տարիքում բռնության արդյունքում.

- տղաները մեծամասամբ արձագանքում են ագրեսիայով և հակասոցիալականությամբ (արձագանք «դեպի դուրս»),
- աղջիկները մեծամասամբ արձագանքում են օտարվածությամբ և ճնշվածությամբ (արձագանք «դեպի ներս»),
- գրեթե բոլոր երեխաների մոտ նկատվում է ուրիշների հույզերը ճանաչելու և ապրումակցելու ունակության նվազում,
- ձևավորվում է սոցիալական կոմպետենտության ցածր աստիճան, հասակակիցների հետ ոչ բարվոք հարաբերություններ կառուցելու միտում,
- նկատվում են խոսքի և հաշվելու (մաթեմատիկական) ավելի ցածր հմտություններ,
- ձևավորվում է սեփական բռնարար վարքն արդարացնող վերաբերմունք:




Բացի այդ, բռնության ենթարկված երեխաներն ունեն ավելի բարձր ռիսկ՝ հետագայում բռնանալու երեխայի նկատմամբ, բռնության ենթարկված տղաները բռնանալու զուգընկերուհու/կնոջ/ նկատմամբ, իսկ աղջիկները՝ բռնության ենթարկվելու զուգընկերոջ/ ամուսնու կողմից: Բռնության ենթարկված երեխաների համար բարձր է նաև հետագայում որևէ բռնության զոհ դառնալու, հոգեկան առողջության խնդիրներ, սրտանոթային համակարգի խնդիրներ, այլ հիվանդությունների ձեռք բերելու ռիսկը:

Առկա է նաև հարաբերակցություն բռնության ենթարկված լինելու և հետագայում հանցավոր վարք դրսևորելու միջև, ինչը նույնպես տրավմատիզացիայի անբարենպաստ ազդեցության հետևանք է: Պարզվել է, որ բռնարար ընտանիքներում մեծացող երեխաներն ունեն հանցագործություն զործելու՝ 74%-ով բարձր հավանականություն, իսկ բռնարար կամ ագրեսիվ երեխաների 79%-ը ծնողների կողմից ենթարկվել է այս կամ այն տիպի բռնության կամ եղել են նրանց միջև բռնության ականատես [9]:

Հարվարդի համալսարանի Չարզացող երեխայի կենտրոնի կողմից առանձնացվել է երեխայի կյանքում սթրեսային և տրավմատիկ իրողության երեք տեսակ.

- *Դրական.* երեխաները հանդիպում են դրական սթրեսային իրավիճակների գրեթե ամեն օր: Դա կարող են լինել առօրյա, կենցաղային իրադարձությունները, որոնց հետ երեխան սովորում է կյանքում գործ ունենալ և առողջ կերպով արձագանքել:
- *Բացասական, բայց տանելի.* լինում են իրավիճակներ, երբ երեխան ստիպված է լինում բախվել տհաճ, ծանր, դժվար հաղթահարվող իրավիճակների: Դա




կարող է լինել մտերիմի մահը, կորուստը, միջավայրի փոփոխությունը, աղետը և այլ: Եթե երեխայի կողքին առկա են աջակցող մարդիկ, ապա նա կարողանում է որոշակի ժամանակ անց հաղթահարել իրավիճակի հետևանքները: Սակայն, եթե նման աջակցությունը բացակայում է, կամ երեխան ստանում է ոչ համապատասխան աջակցություն, երեխայի ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական բարեկեցությանը մեծ վտանգ է սպառնում:

- «Թունավոր» կամ «տոքսիկ». երբ երեխան ապրում է տևական, անընդմեջ, պարբերաբար վերարտադրվող տրավմատիկ իրավիճակում, նա հետզհետե սպառում է իր ներուժը, պայքարելու մեխանիզմները և հայտնվում է «թունավոր» տրավմատիկ իրավիճակում: Նման իրավիճակների օրինակներ են ընտանեկան բռնությունը կամ խնամքի ծայրահեղ պայմանները: Այս դեպքում իրադրությունը կարող է մեծ խոչընդոտ դառնալ երեխայի զարգացման համար և բացասաբար ազդել հետագա կյանքի վրա [10]:

Երեխաների արձագանքները տրավմատիկ իրողությանը մեծապես կախված են մի քանի կարևոր գործոններից՝

- տրավմատիկ ազդեցության ուժգնությունից,
- երեխայի տարիքից և իրավիճակի հասկացման կարողությունից,
- սեռից ու անձնային առանձնահատկություններից,
- տրավմային նախորդող կենսագործունեության և զարգացման առանձնահատկություններից,
- տրավմատիկ ազդեցությունից հետո տեղի ունեցած նշանակալից փոփոխություններից (ապրելավայրի, դերերի, գործառույթների փոփոխություններ),
- աջակցության առանձնահատկություններից,
- հոգեբանական տրավմաների հետ առնչության




նախկին փորձից և այլն:

Սովորաբար *հետտրավմատիկ սթրեսային* խանգարումները հազվադեպ են հանդիպում երեխաների մոտ, սակայն ցանկացած երեխա, այսպես, թե այնպես, որոշակի հակազդում է դրսևորում: Որոշ հակազդումներ կարող են կարճատև լինել և ինքնըստինքյան անցնել, մինչդեռ մյուսները կարող են տևել ամիսներ և տարիներ: Կան որոշակի հակազդումներ և ախտանիշներ, որոնք բնորոշ են գրեթե բոլոր երեխաներին:

- **Մերժում.** երեխաները կարող են մերժել տրավմատիկ իրողության հետ կապված մտքերը և զգացողությունները, խուսափել ակտիվությունից, ընկերական և սոցիալական կապերից, ունենալ տրավմատիկ իրողության մանրամասների վերաբերյալ հիշողության «կորուստ», հուզականորեն կաղապարվել և չկարողանալ արտահայտել հույզերի մեծ մասը:
- **Վերապրում.** երբեմն երեխաները կրկին ու կրկին վերհիշում և վերապրում են իրավիճակը, խաղարկում են այն իրենց վարքում, կարծես տրավման կրկնվում է, ունե-նում են գիշերային մղձավանջներ, ուժգին հակազդում ցանկացած իրավիճակի, որը հիշեցնում է տրավմատիկ փորձը:
- **Գերզգոնություն.** այն դրսևորվում է տարբեր ազդակների հանդեպ չափազանց զգայունությամբ, գերզգոնվողականությամբ, քնի, սնման, ուշադրության կենտրոնացման խանգարումներով, ապակառուցողական վարքային դրսևորումներով և այլն [8]:

Ստորև բերված աղյուսակում հակիրճ ներկայացվում են երեխայի՝ տրավմատիկ իրողությանը տրվող հիմնական հակազդումները՝ ըստ դրանց տարբեր դրսևորումների [11]:



Մարմին	• սթրեսին տրվող ֆիզիկական հակազդումների կառավարման անկարողություն, • քրոնիկ հիվանդությունների և ախտանիշների արտահայտում և սրացում.
Միտք	• մտածելու, կենտրոնանալու, սովորելու դժվարություններ, • հիշողության վատթարացում, • մեկ գործունեությունից կամ մտքից մեկ ուրիշին անցնելու դժվարություն.
Հույզեր և ապրումներ	• ցածր ինքնագնահատական, • հուզական վիճակի կառավարման դժվարություններ, • անապահովության զգացում, • դժվարություններ ընկերների հետ, • վստահելու անկարողություն, • մտերիմների հետ կապվածություն ստեղծելու դժվարություն, • տագնապներ, դեպրեսիվ տրամադրություն.
Վարք	• իմպուլսիվություն, ինքնավերահսկողության պակաս, • ագրեսիվություն, կամակորություն, հակաճառում, նեգատիվիզմ, • կախվածությունների առաջացում (թմրանյութ, ալկոհոլ, ծխախոտ), • ինքնասպանության մտքեր կամ գործողություններ.

Տրավմատիկ իրավիճակը, ընդհանուր առմամբ, նույնատիպ ազդեցություն է թողնում երեխաների վրա, սակայն, կախված տարիքից, երեխաների արձագանքները կարող են տարբերվել: Ուստի, չափազանց կարևոր է հստակ տարանջատել տարբեր տարիքային խմբերի երեխաների տրավմատիկ դրսևորումները՝ նրանց արդյունավետ աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նաև գիտակցել, որ տարիքային առանձնահատկություններից բացի,

տրավմատիկ ազդեցության չափն ու ինտենսիվությունը կախված են մի շարք այլ գործոններից, որոնցից են.


- *Հաճախականությունը.* Հաճախակի տեղի ունեցող տրավմաները կամ սթրեսները, կամ դրանց ձևերի բազմազանությունը նպաստում են երեխաների հակազդումների ինտենսիվությանը:
- *Փոխհարաբերությունները.* Երեխաները, ովքեր ունեն դրական, վստահելի հարաբերություններ մեծահասակների հետ, ավելի շուտ են վերականգնվում սթրեսային իրավիճակներից հետո:
- *Պաշտպանական մեխանիզմները.* Վերլուծական միտքը, ֆիզիկական պատրաստվածությունը, բարձր ինքնագնահատականն օգնում են տրավմաների շուտ հաղթահարմանը:
- *Ընկալումը.* Որքան ավելի վախեցնող և վտանգավոր է երեխան ընկալում իրավիճակը, այնքան ավելի դժվար է հաղթահարում այն:
- *Զգայունությունը:* Երեխաները շատ տարբեր են, ոմանք ավելի զգայուն են, հուզական, և դա կարող է նպաստել հակազդումների ավելի ինտենսիվ արտահայտմանը [11,12]:

Երեխայի տարիքը և վերոնշյալ գործոնների յուրահատուկ համադրությունները, ըստ էության, պայմանավորում են նրա արձագանքման յուրահատկությունները, ինչի մասին խոսվում է հաջորդիվ:

Տրավմատիկ իրավիճակը և նախադպրոցական տարիքի երեխաները: Այս տարիքում տրավման երեխաների մոտ արթնացնում է ուժեղ վախեր, տազնապներ, անապահովության զգացում: Եթե անգամ երեխան չի ցուցաբերում ակնհայտ ախտանիշներ, միևնույն

Է, նա ապրում է որոշակի հուզական դիսթրես, որը կարող է բավական երկար ժամանակ տևել: Երեխան կարող է ցուցաբերել առօրյա կենսագործունեության խնդիրներ՝ չունենալով արտահայտված այլ խանգարումներ: Այս տարիքում երեխայի բառապաշարը և խոսքն այնքան զարգացած չեն, որպեսզի նա հստակ կարողանա նկարագրել իր հետ տեղի ունեցածը և արտահայտել ապրումները: Ուստի, շատ կարևոր է՝ ուշադիր լինել երեխայի վարքին, որը կարող է մեծահասակներին հուշել երեխայի դժվարությունների մասին: Առավել հաճախ այս տարիքում երեխաները՝

- ցուցաբերում են անջատման, հեռացման վախ և չափազանց կախված են դառնում իրենց դաստիարակներից կամ խնամողներից,
- ունենում են ռեգրեսիվ, հետընթացային վարք (խոսում են փոքրիկի նման, ծծում են մատը և այլն),
- ունենում են զարգացման կանգ, հետ են ընկնում հասակակիցներից,
- վերարտադրում են տրավմատիկ իրողությունը (անընդհատ խաղարկում, կրկնում են դրվագները),
- դժվարությամբ են արթնանում կամ քուն մտնում, մերժում են քնելու պահանջմունքը,
- դրսևորում են ֆիզիկական ախտանիշներ (գլխացավեր, փորացավեր, չափազանց ուժեղ են արձագանքում ցանկացած ձայնի և այլն),
- ունենում են վարքային փոփոխություններ (սնվելու դժվարություններ, մեկուսացվածություն, ագրեսիվություն, ուշադրության ցրվածություն, կամակորություն և այլն),
- ցուցաբերում են տրամադրության տատանումներ,
- չափազանց սուր կամ թույլ են արձագանքում տարբեր ազդակներին (ձայն, լույս, երաժշտություն և այլն),



- անհանգստանում են և նույնիսկ՝ տագնապում սեփական անձի կամ ուրիշների համար,
- վախենում են տրավմատիկ իրողության կրկնությունից,
- կարող են ցուցաբերել նոր վախեր, որ մինչ այդ չեն ունեցել,
- կարող են մահվան մասին հարցեր բարձրացնել [12, 3]:


Կրտսեր դպրոցահասակ երեխան և տրավման.

Տրավմատիկ իրողությանը երեխայի արձագանքը մեծապես կախված է նախկինում նրա փորձից, զարգացման և անձնային առանձնահատկություններից: Կրտսեր դպրոցականների համար տրավմատիկ կարող են լինել հետևյալ գործոնները՝

- ֆիզիկական կամ սեռական բռնությունը,
- մտերիմի կորուստը կամ մահը,
- մտերիմի հիվանդությունը,
- ընտանեկան բռնության տեսարանների ականատես լինելը,
- ավտովթարը կամ այլ վտանգավոր միջադեպերը,
- դպրոցական ճնշումները, հետապնդումը հասակակիցների կողմից,
- կյանքին սպառնացող իրավիճակները (բնական աղետներ, պատերազմ, ահաբեկչություն և այլն):

Կրտսեր դպրոցական տարիքում երեխաները սովորաբար ցուցաբերում են հետևյալ հակազդումները՝


- տագնապ, անհանգստություն, վախ սեփական անձի, մտերիմի համար (հաճախ ուժեղ կապվածություն, կաշունդություն դասվարին կամ խնամողին),
- վախ իրավիճակի կրկնման հանդեպ,
- տագնապային խանգարումներ,
- վարքային փոփոխություններ (ուշադրության



ցրվածություն, գերակտիվություն կամ պասիվություն, ագրեսիվություն և այլն),


- անվատահոգություն ուրիշների հանդեպ,
- սոցիալական իրադարձություններին համապատասխան հակազդման դժվարություն, հարմարման դժվարություններ,
- փոփոխություններ դպրոցական վարքում,
- մարմնական ախտանիշներ (զլխացավեր, փորացավեր, գերզգայնություն և այլն),
- տրամադրության տատանումներ,
- չափազանց սուր կամ թույլ արձագանք տարբեր ազդակներին (ձայն, լույս, երաժշտություն և այլն),
- տրավմատիկ իրողության վերապրում (դրվագների անընդհատ խաղարկում, կրկնում, վերապատմում),
- հակասոցիալական վարք, հեղինակությունների և կարգուկանոնի մերժում,
- մահվան վերաբերյալ հարցեր,
- մերժողական, խուսափողական վարք (հյուր չգնալ, չծանոթանալ նոր մարդկանց հետ և այլն),
- գերգրգռվածության նշաններ,
- հուզական կաղապարվածություն:

Տրավման միջին և ավագ դպրոցի երեխաների մոտ. Որքան տարիքով մեծ է երեխան, այնքան ավելի է հասկանում իր հետ կատարվող իրադարձությունները, պատկերացումներ է ունենում մահվան, կորստի, կյանքի լուրջ փոփոխությունների վերաբերյալ: Այս տարիքում ևս երեխան կարող է տրավմատիկ ապրումներ ունենալ դպրոցական, ընտանեկան բռնություններից, բնական և մարդածին աղետներից և այլն: Հիմնականում, միջին դպրոցի սաները տրավմատիկ իրողությունից հետո դրսևորում են հետևյալ ախտանիշները՝



- անհանգստություն, վախ, տագնապ սեփական անձի կամ մտերիմների համար,
- վախ, որ տրավմատիկ իրողությունը կամ դրա հետևանքները կրկին կվերադառնան,
- վարքային փոփոխություններ (ուշադրության ցրվածություն, մեկուսացվածություն, ագրեսիվություն, կենտրոնացման և սովորելու դժվարություններ, լարվածություն ընկերների, ուսուցիչների հետ շփվելիս և այլն),
- մարմնական տարաբնույթ դրսևորումներ (գլխացավեր, փորացավեր, սրտխառնոց և այլն),
- անհանգստացնող հույզեր և զգացմունքներ, հուզական խառնաշփոթ (օրինակ՝ տագնապեցնող մտքեր կամ վրեժխնդրության ձգտում),
- տրավմատիկ իրողության մասին պատմության պարբերական վերարտադրում կամ մանրամասների վերհիշում, դրանց վրա կենտրոնացում,
- չափազանց սուր կամ թույլ արձագանք տարբեր ազդակներին (ձայն, լույս, երաժշտություն և այլն),
- մերժողական, խուսափողական վարք (հյուր չգնալ, չծանոթանալ նոր մարդկանց հետ և այլն),
- գերգրգռվածության նշաններ,
- հուզական կաղապարվածություն,
- ինքնառջնացման մտքեր, գործողություններ,
- չափազանց հետաքրքրվածություն մահվան թեմայով,
- անվստահություն դիմացինի հանդեպ, շփման խնդիրներ [12, 3]:


Այսպիսով, չնայած, որ իրենց հոգեբանական և վարքային դրսևորումներում տրավմատիկ վերապրումները բավականաչափ աչքի ընկնող են, այնուամենայնիվ, կարևոր է հիշել, որ դիսթրես



ու տառապանքն ինքնին ախտաբանությունն չէն, իսկ ախտանիշները երբեմն համարվում են *նորմալ արձագանք ոչ նորմալ իրավիճակին*, այսինքն՝ կարող են լինել հարմարողական:


Բռնությունը երեխայի կյանքում միշտ հանդիսանում է սթրեսածին կամ հոգետրավմատիկ գործոն, որի հետևանքով երեխան, կախված իր տարիքային առանձնահատկություններից, դրսևորում է մի շարք հոլզական և վարքային ախտանիշներ և մտերիմների և մասնագետների աջակցության կարիք ունի: Ելնելով նշվածից, ակնհայտ է, որ բռնությունից հետո ներգրավվելով քննչական կամ դատական գործողությունների մեջ, երեխան կարիք ունի հոգատար և հետագա տրավմատիզացիան բացառող վերաբերմունքի և երեխայի խոցելի հոգեվիճակը հաշվի առնող պայմանների:

Հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա երեխայի հարցաքննության ընթացքում առանձնակի կարևոր է ժամանակին նկատել երեխայի մոտ տրավմատիկ արձագանքման ցուցանիշները, ինչը, հնարավոր է, վկայի նրա *վերատրավմատիզացիայի* մասին: Վերատրավմատիզացիան տրավմատիկ փորձի հոլզական վերապրման խիստ անցանկալի երևույթն է, որի նշաններն անհրաժեշտ է պատեհաժամ նույնականացնել: Բախվելով նման անցանկալի արձագանքների հետ՝ քննիչը կամ դատավորը պետք է իրենց որոշումներում ելնեն չվնասելու սկզբունքից և փոխեն հարցաքննության մարտավարությունը, իսկ որոշ դեպքերում՝ դադարեցնեն այն: Մասնավորապես, ուժեղ հոլզական




դրսևորորմների դեպքում՝ լաց, դող, հեռանալու փորձ, ձեռքերով դեմքը ծածկելու ցանկություն, կակազում, ձայնի տոնի տատանումներ, գոռոցներ, հիսթերիկ նոպա, ցնցումներ և այլն, հարցաքննությունը պետք է նվազագույնը ժամանակավորապես դադարեցնել, երեխային տալ անվտանգության զգացում, ցույց տալ, որ նրա զգացմունքները և հոգեվիճակը հասկանում են և ընդունում, որ իր առաջին իսկ պահանջով զրույցը կդադարեցվի: Այնուհետև կարևոր է երեխայից ճշտել տվյալ պահի կարիքները՝ գնալ զուգարան, ջուր խմել, ծնողի մոտ գնալ, ուղղակի նստել և հանգստանալ և այլն: Սա հետագա արդյունավետ հաղորդակցման համար առաջնային պայման է, քանի որ եթե երեխան չվերագտնի ապահովության և անվտանգության զգացումը, ապա հետագա զրույցն ամենայն հավանականությամբ չի ստացվի:

Ելնելով հոգեվիճակների բնականոն տրամաբանությունից, ակնհայտ է, որ վերոնշյալ հուզական վիճակները մեծամասամբ առաջանում են աստիճանական ինտենսիվացման սկզբունքով. սկզբում երեխան գուցե փոքր-ինչ հուզված է կամ լարված, սակայն զրույցին զուգահեռ հոգեվիճակն աստիճանաբար կարող է սրվել, ինչի ֆիզիոլոգիական նշանները դժվար չէ նկատել՝ դիմախաղի փոփոխություն, աչքերի կոնտակտից խուսափում, ձայնի հուզված ինտոնացիա, դեմքի գունատում կամ կարմրում, վերջույթների թերթև դող, մտքերը շարադրելու բարդություններ, նույն միտքը անընդհատ կրկնելու հակում, հարցերը չհասկանալու կամ չափազանց արագ դրանց արձագանքելու միտում, հայացքով մտերիմի որոնում և այլն: Այս նախանշանները ժամանակին նկատելով՝ ուշադիր



և ապրումակցող դատավորը կամ քննիչը կարող է արագ վերահաստատել հուզական կայունությունը՝ կանգնեցնելով հարցաքննությունը և կարճ անդրադարձ անելով երեխայի հուզական վիճակին (օրինակ՝ “Տեսնում եմ, որ հիմա հուզվում ես: Կուզե՞ս մի փոքր ընդմիջում անենք”, “Դու լավ աշխատանք արեցիր, ու հիմա մի փոքր հանգստանալու հնարավորություն տանք մեզ”, “Գիտեմ, որ քեզ դժվար է խոսել այդ ամենի մասին ու դու շփոթված ես: Իմացիր, որ հենց այլևս չուզենաս շարունակել, կարող ես ինձ դա ասել և մենք կանգ կառնենք”): Կարելի է նաև երեխայի ուշադրությունը ցրել որևէ կողմնակի թեմայի, օրինակ՝ հարցնել նրան ինչ սպորտ կամ կենդանի է սիրում և տալ այդ թեմային մի քանի րոպե (օրինակ, կիսվել սեփական նախասիրությամբ կամ փորձով): Հարցաքննությունը վերսկսելուց առաջ անհրաժեշտ է ապրումակցող ոճով հարցնել՝ պատրաստ է, արդյոք, նա շարունակել զրույցը և ուրիշ ինչի կարիք նա ունի մինչ վերսկսելը:


Բացառիկ կարևոր է ոչ մի դեպքում չարժեզրկել երեխայի դժվար ապրումները և չարգելել դրանք ունենալ (“Լաց մի եղիր”, “Հանգստացիր”, “Մի քիչ էլ դիմացիր ու վերջ”), ինչպես նաև ծավալել երեխայի վարքի վերաբերյալ “դաստիարակչական” ելույթներ, քանի որ նման “հորդորները” համապատասխան չեն երեխայի հուզական վիճակին և չեն կարող նպաստել ներքին ապահովության զգացմանը. ուղիղ հակառակը՝ սովորաբար դրանք ավելի շատ են բևեռացնում երեխային, հուզականորեն հեռվացնում են հարցաքննողից, վերջինիս կերպարն առավել շատ է զուգորդվում խիստ և ոչ հոգատար մեծահասակի



հետ, ով ունի ուժ և իշխանություն: Ինչ-որ առումով, ենթագիտակցական հոգեբանական մեխանիզմների արդյունքում, երեխան նույնիսկ կարող է հարցաքննողին և հարցաքննության իրավիճակը զուգորդել իր հետ տեղի ունեցած բռնության դեպքի և բռնարարի հետ: Սա արդեն վերատրավմատիզացիան է, որն անմիջապես պետք է կանխել՝ երեխային դուրս բերելով հարցաքննությունից և ուղղորդելով դեպի ապահով մեծահասակը:


Սակայն, հոգետրավմա ապրած երեխայի սուր հուզական արձագանքը միշտ չէ, որ ձևավորվում է աստիճանաբար՝ վերոնշյալ մեխանիզմով: Երբեմն, հետտրավմատիկ սթրեսային խանգարման պարագայում, հուզական ժայթքումը հնարավոր է ամենաանմեղ թվացող կամ չնչին ազդակից, որը, սակայն, երեխայի ենթագիտակցության մեջ “գողված” է տրավմատիկ փորձի հուզական հիշողությունների հետ և ակնթարթորեն գործարկում է տրավմատիկ ապրումների ինտենսիվ հոսքը: Օրինակ, հարցաքննություն իրականացնողի քայլերի ձայնը կամ ակնոց դնելը կամ ձայնի որոշակի տոնայնությունը կամ հագած վերնաշապիկի գույնը կամ սենյակի ժամացույցի ձայնը և այլն կարող են հանդիսանալ նման խթանիչներ՝ թրիգերներ, որոնք “դոմինոյի” էֆեկտի սկզբունքով գիտակցություն բերեն անտանելի հիշողություններ և ապրումներ: Նման դեպքում հարցաքննությունն անհրաժեշտ է անհապաղ կանգնեցնել և երեխային ուղղորդել իր հարազատների մոտ:

Որոշակի բացառիկ դեպքերում հնարավոր է, որ երեխան հարցաքննության ընթացքում վերապրի իր



տրավմատիկ փորձը, ասես այն տեղի է ունենում հենց այդ պահին: Սա գիտակցության յուրահատուկ վիճակ է, որն արդյունք է ուժեղ տրավմայի և կոչվում է ֆլեշբեք (flashback). տրավմատիկ փորձի ոչ կամաձին և անկանխատեսելի կենդանացում անսովոր վառ հիշողությունների միջոցով, որը կարող է տևել մի քանի վայրկյանից մինչև նույնիսկ ժամեր, երբ երեխային թվում է, որ անցյալի վախեցնող իրականությունը ներխուժում է նրանց ներկայիս կյանք: Նման դեպքում նույնպես հարցաքննությունը պետք է դադարեցնել, իսկ երեխային անհրաժեշտ է ցուցաբերել մարդկային և մասնագիտական աջակցության:

Ընդհանուր առմամբ, երեխայի հարցաքննության ընթացքում քննիչը կամ դատավորը պետք է հնարավորինս զերծ մնան ագրեսիվ կամ քննադատական խոսելաոճից, նյարդային արձագանքներից, անտեղի հումորից կամ հեգնական արտահայտություններից: Չի կարելի մոռանալ, որ մեծամասամբ երեխան իր կամքով չէ գտնվում այդտեղ, և որ այդ իրավիճակն իրեն պարտադրված է. այսինքն, ինքնին հարցաքննության գործընթացը, ինչ-որ իմաստով “բռնություն” է, ինչը կարող է խթանել նրա բացասակա հույզերը:




1. Report of the Consultation on Child Abuse Prevention, 29–31 March 1999, WHO, Geneva. Geneva, World Health Organization, 1999 (document WHO/HSC/PVI/99.1). https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/65900/WHO_HSC_PVI_99.1.pdf?sequence=1&isAllowed=y
2. Calam R. Child abuse and its consequences: observational approaches. Cambridge University Press, 1987, էջ 226: <https://www.abebooks.co.uk/9780521316149/Child-Abuse-Consequences-Observational-Approaches-0521316146/plp>
3. Алексеева И.А., Новосельский И.Г. Жестокое обращение с ребенком. Причины. Последствия. Помощь. — М.: Гене зис, 2006. — 256 с. <https://shelter-tranzit.ru/wp-content/uploads/2018/06/Алексеева-И.А.-Новосельский-И.Г..pdf>
4. Fergusson D.M., Lynskey M.T., Horwood L.J. Childhood sexual abuse and psychiatric disorder in young adulthood. I: Prevalence of sexual abuse and factors associated with sexual abuse. Journal of the American Academy of Child and Adolescent Psychiatry, 1996, N35, էջեր 1355–1364: <https://pubmed.ncbi.nlm.nih.gov/8885591/>
5. Tracy N. Emotional Abuse: Definitions, Signs, Symptoms, Examples, HealthyPlace. <https://www.healthyplace.com/abuse/emotional-psychological-abuse/emotional-abuse-definitions-signs-symptoms-examples>
6. Acts of Omission: An Overview of Child Neglect, Bulletin for Professionals, July 2018. <https://www.childwelfare.gov/pubs/focus/acts/>



Լրացուցիչ մեդիա-նյութերը
նախատեսված են Ձեզ
հետաքրքրող նյութի մասին
հավելյալ գիտելիքներ
ստանալու համար:

7. Селье Г. Стресс без дистресса. М., Прогресс, 1982, էջ 128: <http://psyberia.ru/book/distress.pdf>
8. Wastell C. Understanding Trauma and Emotion: Dealing with Trauma Using an Emotion Focused Approach Allen & Unwin, 2005: <https://pdfs.semanticscholar.org/9a00/b880700a865f44bb5b72675dbe0c70d5a521.pdf>
9. Milaniak I., Widom C.S. Does Child Abuse and Neglect Increase Risk for Perpetration of Violence Inside and Outside the Home? Psychol Violence. 2015 Jul 1; 5(3): 246–255. <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC4504697/>
10. <http://developingchild.harvard.edu/science/key-concepts/toxic-stress/>
11. Parenting a Child Who Has Experienced Trauma. <https://www.childwelfare.gov/pubs/factsheets/child-trauma/>
12. Խանամիրյան Ի.Ռ., Գևորգյան Դ.Է. Երեխան և հոգետրավման. ձեռնարկ աջակցող մեծահասակների համար. Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 70: http://publishing.y-su.am/files/Yerekhan_ev_hogetravman.pdf



Էքսհիբիցիոնիզմ

Սեռական շեղվող վարքի ձև է, երբ անձը հասնում է սեքսուալ բավարարվածության սեռական օրգաններն անձանոթ մարդկանց (սովորաբար՝ հակառակ սեռի) ցուցադրելու միջոցով՝ հաճախ հանրային վայրերում: Սեռական օրգանների ցուցադրումը հաճախ զուգակցվում է սեռական գրգռվածության և մաստուրբացիայի հետ:

Դեպրեսիա

Տարածված հոգեկան խանգարում է, որը բացասաբար է ներազդում անձի ինքնազգացողության (հույզերի), մտածողության ձևի և վարքի վրա: Որպես կանոն, դեպրեսիան առաջացնում է ուժեղ տխրության զգացում, հետաքրքրության կամ հաճույք ստանալու ունակության կորուստ, հանգեցնում է հուզական և ֆիզիկական մի շարք խնդիրների և էականորեն իջեցնում է մարդու գործառնականությունը և արդյունավետությունը:

Սթրես

Սթրես բառն անգլերենից թարգմանաբար նշանակում է ճնշում, լարվածություն: Առաջինը սթրեսի սահմանումը 1936թ. տվել է կանադացի ֆիզիոլոգ Հանս Սելյեն: Ըստ նրա՝ սթրեսն այն ամենն է, ինչը հանգեցնում է օրգանիզմի արագ ծերացման կամ հիվանդությունների առաջացման: Ցանկացած սթրես իրենից հետո օրգանիզմում թողնում է անդառնալի քիմիական փոփոխություններ, որոնց կուտակումը հյուսվածքներում պայմանավորում է ծերացման հատկանիշները: Հոգեբանական տեսանկյունից սթրեսը մարդու դժվար, ոչ սովորական, արտակարգ իրադրություններում առաջացող ընդհանուր



Ուշադրությամբ ծանոթացե՛ք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձե՛ք դրանց:



Մինչև 15 րոպե


գրգռվածության, հոգեբանական լարվածության վիճակ է: Այն մարդու օրգանիզմի և հոգեկանի պատասխանն է միջավայրի պայմանների կտրուկ փոփոխություններին: Այսինքն, խոշոր հաշվով, սթրեսն առաջացած դժվարության հանդեպ մարդու հարմարման ռեակցիան է և կախված է նրա նյարդային համակարգի յուրահատկություններից:

Հոգեբանական տրավմա կամ հոգետրավմա

Սուր և բացասական տևական հոգեվիճակ է, որն առաջ է գալիս սթրեսի ճնշող մեծ ինտենսիվությունից, որը գերազանցում է անձի հոգեբանական պաշտպանական ունակությունը հաղթահարելու կարողությունները: Հոգետրավման կարող է լինել մեկ տրավմատիկ իրադարձության արդյունք, կամ ձևավորվել երկարատև և կրկնվող տրավմատիկ փորձի հետևանքով. այն սպառում է անձի՝ սթրեսին դիմակայելու ներուժը և ի վերջո հանգեցնում է լուրջ, երկարաժամկետ բացասական հետևանքների: Որպես հոգետրավմատիկ իրողություններ առանձնացվում են բնածին և մարդածին աղետները՝ երկրաշարժ, ջրհեղեղ, ռադիացիա, ահաբեկչություն, պատերազմ և ռազմական գործողություններ, ինչպես նաև անհատական մակարդակով դժբախտ պատահարները և ուժեղ սթրեսային իրավիճակները՝ տրանսպորտային վթարներ, կորուստներ, մտերիմի մահ, բռնություն, բռնաբարություն և այլն:

Սովորած կամ վարժված անօգնականություն

Հոգեվիճակ է, որը ձևավորվում է, երբ անձը բազմիցս ենթարկվում է սթրեսային կամ հոգետրավմատիկ իրավիճակների: Նման դեպքերում նա սկսում է հավատալ, որ ի գործը չէ վերահսկել կամ փոփոխել իրավիճակը, ինչի արդյունքում դադարում է փորձել դրանից դուրս գալ կամ պայքարել՝ նույնիսկ այն ժամանակ, երբ ինչ-որ բան փոխելու հնարավորություններն ի հայտ են գալիս:



Չոհականացում կամ զոհայնացում


Անձի՝ մեկ ուրիշի կողմից զոհ դառնալու գործընթացն է, որը կրում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական բնույթ և էականորեն վնասում է անձի հոգեկան առողջությանը:

«Ստոկիոլմյան համախտանիշ»

Չոհի և ագրեսորի միջև ենթագիտակցական պաշտպանական «տրավմատիկ կապն» է, որն առաջ է գալիս բռնության կիրառման կամ դրա սպառնալիքի ընթացքում: Ուժեղ շոկի ազդեցության տակ զոհն սկսում է կարեկցել ագրեսորին, արդարացնել նրա գործողությունները, և, ի վերջո, նույնանալ նրա հետ՝ ընդունելով նրա գաղափարները և համարելով իր զոհողությունը անհրաժեշտ «ընդհանուր» նպատակին հասնելու կամ «լավը» լինելու համար:

Չետտրավմատիկ սթրեսային խանգարում (ՉՏՍԽ)

Չոգեկան խանգարում է, որն առաջ է գալիս այն մարդկանց մոտ, ովքեր ենթարկվել են սուր տրավմատիկ իրողության ազդեցությանը կամ դրա ականատեսն են դարձել: ՉՏՍԽ-ով մարդիկ տրավմատիկ փորձի ավարտից հետո դեռևս երկար ժամանակ ունենում են այդ փորձի հետ կապված ինտենսիվ, խանգարող մտքեր և զգացմունքներ: Նրանք ունենում են փորձի վերապրումներ, մղձավանջներ, տխրության, վախի կամ բարկության ուժեղ ապրումներ, այլ մարդկանցից օտարվածության զգացում: Որպես կանոն, նրանք խուսափում են տրավմատիկ իրադրությունը հիշեցնող իրավիճակներից ու մարդկանցից և կարող են ցուցաբերել ուժեղ բացասական արձագանք սովորական ազդակների հանդեպ (բարձր ձայն, պատահական հպում և այլն):




Վերատրավմատիզացիա

Նախկին հոգեւորավճարային փորձի գիտակցական կամ ենթագիտակցական վերապրում, ինչը կարող է խթանվել տրավմատիկ իրադրությունը հիշեցնող ցանկացած ազդակից և հանգեցնել տրավմատիկ ապրումների և հոգեվիճակի ամբողջական վերակենդանացմանը:

Ֆլեշբեք կամ ոչ կամաձին կրկնվող հիշողություն

Հոգեբանական տրավմային և ՀՏՄԽ-ին բնորոշ երևույթ է, որի ժամանակ անձն ունենում է նախկին փորձի կամ դրա տարրերի հանկարծակի ինտենսիվ վերապրում, առկա իրավիճակից կտրվածության զգացում (դեռեալիզացիա) և անցած փորձի իրավիճակի «այստեղ-և-հիմա» վերապրում:



Հարց 1.

Երեխայի նկատմամբ բռնության 4 տեսակներից ո՞րն է գրեթե միշտ մյուս երեք տեսակների հետ զուգահեռաբար տեղի ունենում.

- ա. Ֆիզիկական բռնությունը:
- բ. Հոգեբանական բռնությունը:
- գ. Սեռական բռնությունը:
- դ. Անտեսումը:

Հարց 2.

Հոգեբանական դիսթրեսը.

- ա. Դժվար և արտասովոր իրավիճակներում առաջ եկող հոգեհուզական և ֆիզիոլոգիական լարվածության վիճակ է:
- բ. Հոգեկան խանգարվածության վիճակ է՝ ի պատասխան ինտենսիվ բացասական իրավիճակի կամ ազդակների:
- գ. Վախի, տագնապի և դեպրեսիայի դրսևորում է:
- դ. Ճիշտ են ա) և բ) պատասխանները:

Հարց 3.

Սթրեսի երկրորդ փուլը բնութագրվում է.

- ա. Մի շարք բացասական ֆիզիկական ու հուզական նշաններով՝ հյուժվածություն, հիվանդություններ,



Ընտրել ճիշտ տարբերակը:
Ընտրությունը կատարվում է համապատասխան հարցերի համար նախատեսված պատասխանների ճիշտ տարբերակի տառը նշելու միջոցով:



Մինչև 40 րոպե

անտարբերություն, հուսահատություն:

- բ. Սթրեսորի հաղթահարմամբ կամ ուժերի սպառմամբ:
- գ. Օրգանիզմի և հոգեկանի մոբիլիզացիայով:
- դ. Սթրեսային իրադրության հետ ակտիվ առերեսմամբ:

Հարց 4.


Հոգեբանական տրավման, ի տարբերություն սթրեսի.

- ա. Կարող է լինել օգտակար և անձին ուժեղացնել:
- բ. Ընթանում է 3 փուլով (տագնապ, դիմադրություն, սպառում):
- գ. Ստեղծում է երկարատև խնդիրներ և հիմնովին խարխլում է անձի կայունությունը:
- դ. Առաջացած դժվարության հանդեպ մարդու հարմարման ռեակցիան է:

Հարց 5.

Սովորած անօգնականությունը գոհի հոգեվիճակ է, երբ.

- ա. Նա համոզվում է , որ արտաքին իրադարձությունները իրենից կախված չեն և նա ոչինչ անել չի կարող, որպեսզի դրանք կանխարգելի կամ փոփոխի:
- բ. Նա սկսում է կարեկցել բռնարարին, արդարացնել նրա գործողությունները:
- գ. Նա մշտապես ցանկանում է գտնվել ագրեսորի վերահսկողության ներքո:
- դ. Ճիշտ են բոլոր պատասխանները:



Հարց 6.

«Ստոկհոլմյան համախտանիշը».

- ա. Չոհի մոտ սկսվող հոգեկան խանգարման ցուցանիշներից է:
- բ. Երեխայի հոգեկան կայունությանը ծառայող տրավմատիկ կապվածությունն է:
- գ. Դիտվում է զոհի վերատրավմատիզացիայի ժամանակ
- դ. Բոլոր պատասխանները սխալ են


Հարց 7.

Տևական ժամանակահատվածում տրավմատիկ իրողության մանրամասների վերաբերյալ հիշողության «կորուստը», դրա կրկնվող վերապրումները մղձավանջներում կամ իրականության մեջ, գերզգոնությունը և ապակառուցողական վարքն առավելապես հուշում են երեխայի մոտ առկա.

- ա. Հետտրավմատիկ սթրեսային խանգարման մասին:
- բ. Հուզական անկայունության և դեպրեսիայի մասին:
- գ. Սթրեսի երրորդ փուլի մասին:
- դ. Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կազմալուծման մասին:

Հարց 8.

Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ առավելապես կարևոր է ուշադրություն դարձնել վարքին և խաղին, քանի որ այս տարիքում.



- ա. Երեխաներն առավելապես կամակոր են և չեն ուզում համագործակցել մեծահասակի հետ:
- բ. Երեխայի բառապաշարը և խոսքն այնքան զարգացած չեն, որպեսզի նա հստակ կարողանա նկարագրել իր հետ տեղի ունեցածը և արտահայտել ապրումները:
- գ. Միայն այս եղանակով հնարավոր է երեխային համոզել խոսել:
- դ. Ճիշտ են բոլոր պատասխանները:

Չարց 9.


Չարցագրույցի (հարցաքննության) ժամանակ երեխայի մոտ վերատրավմատիզացիայի նշանները տեսնելով, անհրաժեշտ է.

- ա. Արագորեն շեղել երեխային թեմայից և առաջարկել նրա հետ խաղալ:
- բ. Չանգիստ և հավասարակշռված կերպով շարունակել գրույցը՝ տեղ չտալով հույզերի արտահայտմանը:
- գ. Չարժեզրկել երեխայի դժվար ապրումները և չարգելել դրանք ունենալ:
- դ. Ապրումակցել երեխային, սակայն հստակորեն հասկացնել նրան, որ նա պետք է հավաքվի և շարունակի պատասխանել հարցերին:

Չարց 10.

Չարցաքննության ընթացքում տրավմատիկ փորձի վերապրումը, ասես այն տեղի է ունենում հենց այդ պահին, կոչվում է.

- ա. «Դոմինոյի» էֆեկտ:
- բ. Վերատրավմատիզացիա:
- գ. Սովորած անօգնականություն:
- դ. Ֆլեշբեք:



ԴԱՍ 3

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱՎՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԶՐԵԱԽՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Այս դասի (մոտիվացնող
ներածական տեսանյութ+դասի
տեքստ+բառարան+ինքնաստուգիչ հարցեր)
յուրացման համար անհրաժեշտ է
240 րոպե / 4 ժամ:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի
կայքի հեռաուսուցման բաժնում):

Երեխայի նկատմամբ բռնության հանցավոր դրսևորումները նախատեսված են ՀՀ քր. օր.-ով: Մարդու դեմ ուղղված հանցագործությունների բաժնում առանձնացված է ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների գլուխը, սակայն երեխաների իրավունքների քրեաիրավական պաշտպանությունն իրականացվում է ՀՀ քր. օր.-ի նաև այլ գլուխներում նախատեսված հոդվածներով: Երեխայի՝ բռնությունից պաշտպանությունը, օրինակ, նախատեսված է ՀՀ քր. օր.-ի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի, ինչպես նաև առևանգված կամ որպես պատանդ վերցված անձի նկատմամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), 124-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելը, որը կատարվել է անչափահասի նկատմամբ) և այլն:

Երեխայի նկատմամբ բռնության հանցավոր դրսևորումները պայմանականորեն կարելի է բաժանել



Մինչև 10 րոպե

Ուշադրությամբ
կարդացե՛ք
տեքստը (օգտվելով
բառարանից) և
այն յուրացնելուց
հետո միայն անցե՛ք
ինքնաստուգիչ
հարցերին:



Մինչև 175 րոպե

հետևյալ խմբերի՝


1. միայն երեխաներին վերաբերող հանցագործություններ, օրինակ՝ ՀՀ քր. օր. 106-րդ, 132.2-րդ, 141-րդ, 142-րդ, 166-րդ, 166.1-րդ, 168-րդ և այլ հոդվածներ,
2. հանցագործություններ, որտեղ արարքն անչափահասի նկատմամբ կատարելը համարվում է հանցագործության ծանրացնող հանգամանք, օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 119-րդ, 124-րդ, 138-րդ, 139-րդ և այլ հոդվածներ,
3. հանցագործություններ, որտեղ երեխաների առնչությամբ որևէ առանձնահատկություն նախատեսված չէ, օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 104-րդ, 112-րդ և այլ հոդվածներ:

Երեխայի կյանքի և առողջության պաշտպանությունը:

Պետությունն ունի պոզիտիվ պարտականություն՝ պաշտպանելու յուրաքանչյուր մարդու կյանքի իրավունքը: Այդ պարտականությունն առավել կարևորվում է, երբ տվյալ անձը գտնվում է խոցելի վիճակում, իսկ երեխաները համարվում են այդ խմբի ներկայացուցիչ:

Ռեկուրս ընդդեմ Ֆրանսիայի գործով (2008թ.-ի հոկտեմբերի 16-ի վճիռ, *Renold v. France*, application no. 5608/05) ՄԻԵԴ-ը դիրքորոշում է հայտնել, որ ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածից կարող է բխել նաև պահանջ, որ իշխանությունները պոզիտիվ պարտավորության շրջանակում կանխարգելիչ հրատապ միջոցներ ձեռնարկելով պաշտպանեն անձին մեկ այլ անձից, իսկ որոշ հանգամանքներում՝ հենց իրենից¹:

¹<https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22%3A%22001-88972%22%7D>



ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սպանությունն ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելն է: Երեխայի սպանությունը որակվում է այս հոդվածով, բացառությամբ այն դեպքերի, երբ սպանվում է նորածին երեխա, այն էլ՝ միայն մոր կողմից:

Մոր կողմից նորածին երեխայի սպանությունը նախատեսված է ՀՀ քր. օր.-ի 106-րդ հոդվածով, որի համաձայն՝ մոր կողմից ծննդաբերության ժամանակ կամ դրանից անմիջապես հետո, ինչպես նաև հոգեճնշող կամ մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման վիճակում նորածին երեխայի սպանությունը համարվում է մեղմացուցիչ հանգամանքներում կատարված: Քննարկվող հանցակազմի արտոնյալ լինելը դրսևորվում է նրանում, որ ծննդաբերության հետ կապված կնոջ որոշակի հոգեկան վիճակն օրենսդիրը դիտում է որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք, ինչն էլ դրսևորվում է մոր կողմից նորածին երեխային սպանելու համար նախատեսված պատժում²:

Մասնագիտական գրականության մեջ «նորածին» հասկացությունն ունի տարբեր չափանիշներ՝

²Հղիությունը (հատկապես անցանկալի) և ծննդաբերությունն ինքնին, և դրա հետ կապված հոգեկան, ֆիզիկական և ֆիզիոլոգիական գործընթացները կարող են անբարենպաստ ազդեցություն թողնել կնոջ հոգեվիճակի վրա: Այսպես, հղիների մոտ կարող են ի հայտ գալ դեպրեսիա, մելանխոլիկ գաղափարներ, դյուրագրգռություն, տագնապայնություն, սևեռուն վիճակներ, սրտանոթային համակարգի խանգարումներ, որոնք ուղեկցվում են հոգեվիճակի վատթարացմամբ և այլն: Ծննդաբերությունից հետո կնոջ օրգանիզմում տեղի են ունենում արմատական փոփոխություններ, անգամ կարող է առաջանալ հետծննդաբերական սթրեսային համախտանիշ: Ծննդաբերության ընթացքում կինը կրում է խիստ ցավագին տառապանքներ, ինչը կարող է տարբեր հետևանքների հանգեցնել:

մանկաբուժական, մանկաբարձական և դատաբժշկական: Մասնավորապես, մանկաբուժությունում նորածին է համարվում մանկիկը՝ կենդանաձևության փաստի արձանագրման պահից մինչև մեկ ամսական տարիքը: Մանկաբարձության տեսանկյունից նորածնության ընթացքը սահմանվում է մեկ շաբաթ, որը հաշվարկվում է երեխայի կենդանի ծնվելու պահից: Դատական բժշկությունում երեխան նորածին է համարվում կենդանաձևության պահից մեկ օրվա ընթացքում: Իրավագիտությունն առաջնորդվում է մանկաբուժական չափանիշով:


ՀՀ քր. օր.-ի 106-րդ հոդվածով նախատեսված են մոր կողմից նորածին երեխայի սպանության հետևյալ 3 տեսակները՝

1. ծննդաբերության ժամանակ կամ դրանից անմիջապես հետո³.
2. հոգեճնշող վիճակում⁴.
3. մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման վիճակում⁵:

³Այս հանցակազմի պարագայում կարևոր է կենդանաձևության փաստը: Տվյալ դեպքում խոսքը ոչ միայն պտղի՝ մոր արգանդից անջատվելուց հետո կատարված սպանության, այլ նաև ինքնուրույն արտաարգանդային կյանք չսկսած նորածնին կյանքից զրկելու մասին է:

⁴Խոսքը տվյալ դեպքում երեխային սպանող մոր հոգեկանի վրա բացասական ներգործության այնպիսի փաստերի մասին է, ինչպիսիք են, ասենք, սպասվող երեխայի հոր հրաժարումն ամուսնական հարաբերություններ գրանցելուց, հայրություն ճանաչելուց կամ որևէ աջակցություն ցուցաբերելուց, ազգականների կողմից կնոջ նկատմամբ գործադրվող հալածանքն ու պարսավանքը և այլն: Այս ամենի արդյունքում տեղի է ունենում բացասական հոլզերի կուտակում, որն էլ նպաստում է կնոջ գրգռված վարքագծին և հանգեցնում է նորածնի սպանության:

⁵Մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարումները կարող են դրսևորվել ինչպես ծննդաբերության ժամանակ, այնպես էլ դրանից որոշակի ժամանակ անց (բժիշկների հավաստմամբ՝ 6-8 շաբաթ): Ուստի, քանի որ տվյալ դեպքում ևս խոսքը նորածին երեխայի սպանության մասին է, ապա պետք է հաշվի առնվի նորածնության տևողության մանկաբուժական չափանիշը (կենդանի ծնվելու պահից մինչև մեկ ամսական տարիքը):




Քննարկվող հանցագործության սուբյեկտը նորածին՝ 14 տարին լրացած մեղսունակ մայրն է: Այլ անձինք, ովքեր նման սպանության համակատարողներ են, պատասխանատվության են ենթակա ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածով, քանի որ այն հանգամանքները, որոնց հիման վրա մեղմացվում է մոր պատասխանատվությունը, նրանց վրա չեն տարածվում⁶:

Մեկ ամսականից բարձր երեխայի սպանությունը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի տարբեր մասերով՝ կախված ծանրացնող հանգամանքների առկայությունից:

Քրեական իրավունքը մարդու սպանության համատեքստում ժխտում է չճնված երեխայի՝ որպես իրավական առումով անկախ անձնավորության փաստը և, հետևաբար՝ սաղմնային փուլում նրա պաշտպանությունը: Համաձայն ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, ակնհայտ հղի կնոջ սպանությունը դիտվում է որպես հանցագործության որակյալ հատկանիշ: Սակայն օրենսդիրն այս արարքի հանրային վտանգավորությունը պայմանավորում է նրանով, որ հանցավորը ոտնձգում է երկու արժեքի դեմ՝ կնոջ կյանքի և նրա պտղի⁷՝ դրանով իսկ բացառելով վերջինիս հետագա զարգացումն ու մարդկային նոր կյանքի ձևավորումը: Չնայած պատժատեսակի և պատժաչափի խստությանը, այնուամենայնիվ, պատասխանատվությունը նախատեսվում է ոչ թե երկու անձանց, այլ մեկ անձի սպանության համար, քանզի օրենսդիրը և դատական պրակտիկան մոր օրգանիզմում

⁶ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս (չորրորդ հրատարակություն)/ Գ. Ղազինյանի խմբագրությամբ. Եր.: ԵՊՀ հրատ., 2009, էջեր 111-116:

⁷Որոշ հեղինակների համաձայն՝ կնոջ մայրանալու իրավունքի:



գտնվող երեխային չեն դիտարկում որպես իրավունքի առանձին «կենդանի» սուբյեկտ⁸:


Երեխայի սպանության այլ դրսևորումները որակման առանձնահատկություններ չունեն:

Երեխայի առողջությունը նույնպես գտնվում է քրեաիրավական պաշտպանության տակ (ՀՀ քր. օր.-ի 112-130-րդ հոդվածներ), սակայն ՀՀ քր. օր.-ը չի մատնանշում քրեաիրավական պաշտպանության առանձնահատկություններ, բացառությամբ մի քանի հոդվածների, որտեղ նախատեսված է անչափահասի նկատմամբ այդ հանցանքը կատարելը՝ որպես ծանրացնող հանգամանք: Ինչպես նշվել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից, բռնությունը որպես քրեորեն հետապնդելի արարք դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք⁹:

Առողջությանը պատճառվող վնասը բաղկացած է և՛ մարմնական վնասվածքներից (մարդու անատոմիական ամբողջականության կամ ֆիզիոլոգիական գործառույթների խախտումը), և՛ այն հիվանդություններից կամ ախտաբանական վիճակներից, որոնք առաջացել են արտաքին միջավայրի տարբեր

⁸Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք /հատուկ մաս/Գ. Ղազիսյանի խմբագրությամբ: ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2009, էջ 64:

⁹ ԱՐԴ/0176/01/11 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ.-ի նոյեմբերի 1-ի որոշում.



գործոնների (մեխանիկական, ֆիզիկական, քիմիական, կենսաբանական, հոգեկան) ազդեցության տակ:


Առողջությունն օրգանիզմի նորմալ ֆիզիոլոգիական վիճակն է, որի ժամանակ բոլոր օրգան-համակարգերն աշխատում են նորմալ ֆիզիոլոգիայով¹⁰, կամ օրգանիզմի նորմալ բնականոն վիճակն է՝ առանց ախտաբանական փոփոխությունների¹¹:

Առողջությանը պատճառված վնասն ըստ ծանրության լինում է երեք տեսակի՝ ծանր, միջին և ոչ մեծ ծանրության: 2014թ. օգոստոսի 14-ի N860-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է առողջությանը պատճառված վնասի ծանրությունը պարզելու նպատակով նշանակված դատաբժշկական փորձաքննության իրականացման կարգը և տարբեր վնասվածքների հետևանքով առաջացած ընդհանուր աշխատունակության կայուն կորստի տոկոսները: Այդ որոշման 1-ին հավելվածի 20-րդ կետի համաձայն, երեխաների ընդհանուր աշխատունակության կորուստը որոշվում է այդ որոշմամբ սահմանված ընդհանուր դրույթներով:

Առողջությանը պատճառվող ծանր վնասի հասկացությունը բնութագրվում է մի շարք հատկանիշներով, որոնք նշված են ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում: Մասնավորապես, այդպիսին են մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը, որը վտանգավոր է կյանքի համար կամ

¹⁰ Наумов А.В. Российское уголовное право: курс лекций. Т.2. Особенная часть. М., 2007, էջ 110:

¹¹ Уголовный закон в практике мировой судьи: научно-практическое пособие/ Под ред. А.В. Галаховой. М., 2007, էջ 12:




առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաև կյանքի համար վտանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով, կամ առաջացրել է հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում:

Առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը բնութագրվում է որպես մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանը որևէ այլ վնաս պատճառելը, որը վտանգավոր չէ կյանքի համար և չի առաջացրել ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ, բայց առաջացրել է առողջության տևական քայքայում կամ ընդհանուր աշխատունակության մեկ երրորդից պակաս զգալի կայուն կորուստ:

Ոչ մեծ ծանրության վնասը բնութագրվում է որպես դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելը, որն առաջացրել է առողջության կարճատև քայքայում կամ ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ:

ՀՀ քր. օր.-ի 112-րդ, 113-րդ և 117-րդ հոդվածներով նախատեսված վնասների մեկնաբանությունը չի տարբերվում, երբ վնասը պատճառվել է երեխային: Ավելին, այդ հոդվածներն անչափահասի նկատմամբ դա կատարելը չեն դիտարկում որպես ծանրացնող



հանգամանք, հետևաբար, այս հանցագործությունների որակման պարագայում որևէ առանձնահատկություն՝ պայմանավորված երեխայի նկատմամբ արարքը կատարելու հիմքով, առկա չէ: Այլ հարց է, որ նշանակված դատաբժշկական փորձաքննությունն իրականացնելիս տուժողի տարիքը կարող է ազդել պատճառված վնասի աստիճանը որոշելու գործընթացի վրա, քանի որ նույն ուժգնությամբ հարվածը տարբեր տարիքի երեխաների մոտ առաջացնում է տարբեր բնույթի և ծանրության վնասվածքներ: Ավելին, երեխայի չճանաչված կմախքն ու հենաշարժական համակարգի փխրուն լինելը մեծացնում են տրավմատիզմի ռիսկը:


Առողջության դեմ ուղղված հանցագործություններից անչափահասի նկատմամբ ծանրացնող հանգամանք նախատեսում են՝

1. հողված 119-ը՝ Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը¹²,
2. հողված 123-ը՝ Մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելը¹³,
3. հողված 124-ը՝ Վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելը¹⁴,

¹²Այս հողվածի համաձայն, քրեորեն պատժելի է անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, եթե դա չի առաջացրել ՀՀ քր. օր.-ի 112-րդ և 113-րդ հոդվածներով նախատեսված հետևանքները, և եթե բացակայում են ՀՀ քր. օր.-ի 309.1-ին հոդվածով նախատեսված հանցագործության՝ խոշտանգման հատկանիշները:

¹³ Այս հողվածի համաձայն, քրեորեն պատժելի է այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելու ակնհայտ վտանգի ենթարկելը, ինչպես նաև այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով դիտավորությամբ կամ ինքնավստահությամբ վարակելն այն անձի կողմից, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին:

¹⁴ Այս հողվածի համաձայն, քրեորեն պատժելի է այլ անձին վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելն այն անձի կողմից, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին:



4. հողված 127-ը՝ Անձին առանց իր համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելը¹⁵:

Բոլոր այս դեպքերում երեխայի իրավունքներն ու շահերը պաշտպանող հասարակական հարաբերությունները հանդիսանում են որպես հանցագործության լրացուցիչ օբյեկտ: Մասնավորապես, վերը նշված բոլոր դեպքերում խախտվում է երեխայի նորմալ ֆիզիկական և հոգեկան զարգացումը, ինչն օրենսդրին հնարավորություն է ընձեռել անչափահասի նկատմամբ կատարելը դիտել որպես ծանրացնող հանգամանք:

Երեխայի ազատության պաշտպանությունը:

Երեխան օժտված է անձնական ազատությամբ, սակայն այդ ազատությունը հարաբերական է և սահմանափակված՝ ելնելով երեխայի տարիքային, հոգեբանական, մտային առանձնահատկություններից և երեխայի դաստիարակության ու խնամքի հանգամանքներից: Երեխայի ազատության բաղկացուցիչներից են նաև սեռական ազատությունն ու սեռական անձեռնմխելիությունը: Անձի ազատության միասնական հասկացություն գոյություն չունի, սակայն մասնագիտական գրականության մեջ հանդիպում են ազատության հետևյալ սահմանումները.

- ազատությունը կայանում է նրանում, որ անձը կարող է գործել կամ չգործել իր ցանկությունների և ընտրությունների համաձայն¹⁶,

¹⁵ Այս հոդվածի համաձայն, քրեորեն պատժելի է անձին՝ առանց իր ազատ կամարտահայտության և իրազեկված ու պատշաճ ձևակերպված համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելը:

¹⁶ Локк Дж. Избранные философские произведения в 2 т. Т. 1. М., 1960, էջ 259

- ազատությունն իր կամքով ինչ-որ տեղ մնալու ընտրության իրավունքն է¹⁷,
- ազատությունն իրենից ներկայացնում է անձի կամքը, իր ձևով գործելու հնարավորությունների շրջանակը, ամոթի և անազատության զգացումի բացակայությունը, ուրիշի կամքին չենթարկվելը, մարդու հնարավորությունը՝ գործելու իր հետաքրքրություններին ու նպատակներին համապատասխան, ընտրելու իրավունքի իրականացումը¹⁸,
- անձի ընտրությունը ոչ բոլոր դեպքերում է համարվում ազատ: Անձը կարող է իրականացնել անցանկալի, հարկադրված ընտրություն (այլընտրանքի բացակայության դեպքում): Դրա համար էլ անձի ազատության բովանդակությունն ամենից առաջ բնութագրվում է ցանկալի ընտրությամբ և իր կողմից դա իրականացնելու հնարավորությամբ¹⁹:

Լիարժեք և բացարձակ ազատություն չկա: Ամենից առաջ մարդը սահմանափակված է օբյեկտիվ սահմաններով (ֆիզիկական, կենսաբանական, աշխարհագրական, կլիմայական, տարածքային գործոններով, հասարակական կյանքի նյութական պայմաններով և այլն): Հարկադրված ընտրությունը կատարվում է այնպիսի ճնշման կամ ազդեցության տակ, որը վտանգում է մարդու կյանքը կամ, ավելի կոնկրետ, առավել բարձր կենսական հետաքրքրությունները և շահերը²⁰:

¹⁷Бойко Н.В. Ответственность за незаконное лишение свободы по советскому уголовному праву. Харьков, 1989, էջ 13:

¹⁸Адельханян Р.А. Расследование похищения человека. М., 2000, էջ 18:

¹⁹Логанов И.И. Свобода личности. М., 1972, էջ 286:


²⁰Рассказов Л., Упоров И. Категория “свобода” в уголовном праве России// Уголовное право, 2000, N2, էջ 34:

Երեխայի ազատության դեմ ուղղված հատուկ հողված ՀՀ քր. օր.-ի 17-րդ գլխում առանձնացվել է «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2011թ. մարտի 1-ի ՀՀ օրենքով, որով ՀՀ քր. օր.-ը լրացվել է 132.2-րդ հոդվածով, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգի կամ շահագործման համար:

Ազատության դեմ ուղղված հանցագործություններն այն հանցագործություններն են, որոնք ոտնձգում են անձի ազատ կամարտահայտվելու, տեղաշարժվելու և ինքնուրույն որոշումներ կայացնելու դեմ, սակայն այնքանով, որքանով նա կարող է այդ գործողությունները կատարել՝ գիտակցելով դրանց բնույթն ու հնարավոր հետևանքները:

Միանշանակ է, որ երեխան օժտված է ազատությամբ և կարող է կամարտահայտվել, սակայն, երեխայի լավագույն շահերը պահանջում է պարզել թե՛ ազատության, թե՛ կամարտահայտման սահմանափակման համաչափությունն ու նպատակները: Օրինակ, 4 տարեկան երեխային միայնակ փողոց դուրս գալն արգելվել չի կարող համարվել երեխային ազատությունից զրկում կամ ազատության սահմանափակում, կամ դպրոցական տարիքի երեխային հանրակրթական հաստատություն հաճախելուն պարտավորեցնելը չի կարող համարվել երեխայի ազատության դեմ ուղղված ոտնձգություն:

ՀՀ քր. օր.-ի 131-րդ հոդվածի համաձայն, մարդու առևանգում է համարվում խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու




սպառնալիքի միջոցով մարդուն գաղտնի կամ բացահայտ առևանգելը, եթե բացակայում են նույն օրենսգրքի 218-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները: Այդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը նախատեսում է ծանրացնող հանգամանք, այն է՝ «կատարվել է անչափահասի նկատմամբ»:

Մարդուն առևանգելը զրկում է նրան ինքնուրույն և ազատ տեղաշարժվելու և իր գտնվելու վայրն ինքնուրույն որոշելու հնարավորությունից: Կամքին հակառակ՝ նշանակում է, որ տուժողի կամքն ակնհայտ ճնշվում է, իսկ նրա ցուցաբերած դիմադրությունը հաղթահարվում է բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով: Տուժողի կամքը հաշվի չառնելու դեպքում նրա կամքն ուղղակի անտեսվում է, և նա տեղափոխվում է իր միկրոսոցիալական միջավայրից՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով:

Երեխաների առևանգման դեպքում հնարավոր են երկու իրավիճակներն էլ, սակայն, եթե արարքը կատարվում է այնպիսի տարիքի երեխաների նկատմամբ, ովքեր դեռ չեն կարող գիտակցել իրենց հանդեպ կատարվող արարքի բնույթն ու նշանակությունը և առհասարակ չեն գիտակցում ազատությունը, ապա ստացվում է, որ առևանգումն իրականացվում է տուժողի անօգնական վիճակն օգտագործելով, ինչը որպես մարդու առևանգման կատարման եղանակ նախատեսված չէ:

Մարդուն առևանգելը կարող է կատարվել ինչպես գաղտնի, այնպես էլ բացահայտ: Գաղտնի առևանգումը բնութագրվում է նրանով, որ հանցավորն ամեն կերպ ձգտում է խուսափել երրորդ անձանց հետ որևէ շփումից՝ նրանց կողմից ստեղծվելիք հնարավոր խոչընդոտներից խուսափելու նպատակով: Առևանգումը գաղտնի է համարվում ոչ միայն այն դեպքում, երբ ականատես




չկա, այլև այն ժամանակ, երբ նրանք տեսնում, բայց չեն գիտակցում հանցավորի գործողությունների հակաիրավական բնույթը, իսկ հանցավորը գիտակցում է դա:

Բացահայտ է համարվում մարդուն առևանգելը, որը տեղի է ունեցել երրորդ անձանց ներկայությամբ, երբ հանցավորը գիտակցում է, որ ներկաները հասկանում են իր գործողությունների բնույթը, բայց անտեսում է այդ հանգամանքը²¹:

Եթե երեխային տեղափոխում («առևանգում») է ծնողներից կամ նրանց փոխարինող անձանցից մեկը, ապա արարքը ՀՀ քր. օր.-ի 131-րդ հոդվածով որակելու համար կարևոր նշանակություն ունի այդ ծնողի կամ նրան փոխարինող անձի և երեխայի միջև առկա իրավահարաբերությունները պարզելը: Եթե ծնողը զրկվել է ծնողական իրավունքներից կամ ծնողին փոխարինող անձը, օրինակ՝ խնամակալը կամ խնամատար ծնողը, դադարել է այդպիսին լինելուց, ապա արարքը պետք է որակվի որպես առևանգում:

Եթե արարքը կատարվում է այն ծնողի կողմից, ով զրկված չէ ծնողական իրավունքներից, ապա այդ արարքները չեն որակվում որպես երեխայի առևանգում, սակայն փաստացի խախտվում են և՛ երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված մի շարք միջազգային փաստաթղթեր (Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին կոնվենցիա և այլն), և՛

²¹ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս/ Գ. Ղազինյանի խմբագրությամբ: Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, էջեր 197-199:



Երեխայի լավագույն շահերն ու ծնողների հետ շփվելու և նրանց ճանաչելու իրավունքը, ինչպես նաև մյուս ծնողի իրավունքները:


ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածի համաձայն, երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգ կամ շահագործում է համարվում շահագործման նպատակով երեխային, հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը²²:

Երեխայի շահագործման ձևերն են՝

- սեռական շահագործումը,
- երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը,
- երեխայի ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը, առքը կամ վաճառքը,
- երեխայի օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:

Երեխայի թրաֆիքինգի դեպքում այլընտրանքային գործողություններն են՝ հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը:

²²ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:



Հավաքագրելը տուժողի կամավոր համաձայնությունը ստանալուն ուղղված գործողություն կամ գործունեություն է, այսինքն՝ որոշակի հատկանիշների հիման վրա անձին հասարակությունից առանձնացնելը և/կամ ցուցակագրելը, որի նպատակը տուժողի շահագործումն է:


Տեղափոխելն ենթադրում է տուժողին մեկ վայրից այլ վայր տեղափոխելն երկրի ներսում (ներքին թրաֆիքինգ կամ շահագործում) կամ երկրից դուրս (անդրազգային թրաֆիքինգ կամ շահագործում) և/կամ աջակցությունը սահմանն անօրինական հատելու հարցում:

Փոխանցելը նշանակում է տուժողին թողնել այլ անձանց տրամադրության տակ՝ նրան վաճառելուց կամ այլ եղանակով օտարելուց հետո (նվիրատվություն, պարտքի մարում, վնասի փոխհատուցում, վարձակալություն, փոխանակություն և այլն): Փոխանցելը կարող է լինել հատուցելի կամ անհատույց, որոշակի ժամկետով կամ անժամկետ, որոշակի պայմաններով կամ առանց դրանց:

Ստանալն ենթադրում է առուվաճառքի, նվիրատվության, փոխանակության, փոխառության կամ այլ գործարքի արդյունքում թրաֆիքինգի ենթարկված անձի ձեռք բերում: Ստանալը նույնպես կարող է լինել հատուցելի կամ անհատույց, որոշակի ժամկետով կամ անժամկետ, որոշակի պայմաններով կամ առանց դրանց:

Թաքցնելն ուղղված է թրաֆիքինգի ենթարկված անձին հանրությունից առանձնացված պահելուն:

Բռն շահագործման դեպքում այլընտրանքային գործողություններն են անձին շահագործելը, շահագործման մեջ դնելը կամ շահագործման մեջ պահելը:



Շահագործելը բուն շահագործման գործողություններին մասնակից դարձնելն է:


Երեխային շահագործման մեջ դնելն արտահայտվում է նրանում, որ երեխան դրվում է այնպիսի վիճակի (դրության) մեջ, որ չշահագործվելու այլընտրանք չունի:

Շահագործման մեջ պահելն արդեն շահագործվող երեխային այդ վիճակից դուրս գալու արգելքն է:

Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն, երեխաների մարմնավաճառությունն նշանակում է՝ երեխայի օգտագործումը սեռական բնույթի գործունեության մեջ՝ վարձատրության կամ ցանկացած այլ տեսակի հատուցման դիմաց: Երեխայի սեռական շահագործման համար հանցագործության միջոցների կիրառումը պարտադիր չէ: Սեռական այլ շահագործումը նշանակում է, որ շահ ստանալու նպատակով երեխային ստիպում են սեռական բնույթի, բայց մարմնավաճառությունն չհանդիսացող այլ գործողություններ կատարել:

Ելնելով երեխաների աշխատանքի որոշակի առանձնահատկություններից՝ Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ILO կամ ԱՄԿ) ընդունել է նաև «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» կոնվենցիան²³, որը պահանջում է անհապաղ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը վերացնելու և 18 տարեկանից ցածր տղաներին և աղջիկներին

²³ՀՀ-ն այս կոնվենցիան ստորագրել է 17.06.1999 թվականին, որը ուժի մեջ է մտել 02.01.2006 թվականին // <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=29926>




հարկադիր աշխատանքներում չներգրավելու համար: Այդ կոնվենցիայի համաձայն՝ երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը ներառում են՝

- ստրկության բոլոր ձևերը կամ ստրկությանը համանման աշխատանքը, ինչպիսիք են երեխաների վաճառքը և առևտուրը, պարտքային ստրկացումը կամ ճորտային կախվածությունը, ինչպես նաև հարկադիր կամ պարտադիր աշխատանքը, այդ թվում՝ երեխաների հավաքագրումը զինված ընդհարումներում օգտագործելու համար,
- երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը՝ մարմնավաճառությամբ զբաղվելու, պոռնոգրաֆիկ արտադրանքի արտադրության կամ պոռնոգրաֆիկ ներկայացումների համար,
- երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը հակաիրավական գործունեությամբ զբաղվելու համար,
- աշխատանքը, որն իր բնույթով կամ իր կատարման պայմաններով կարող է վնասել երեխաների առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը:

«Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ավանդույթների վերացման մասին» ՄԱԿ-ի 1956թ. լրացուցիչ կոնվենցիայում²⁴ ներառված են ոչ միայն ստրկության, այլ նաև դրան հավասարազոր և այլ կախյալ վիճակների հասկացությունները: Դրանցից են՝

1. պարտապանի ստրկացումը, այսինքն՝ այնպիսի վիճակը կամ դրությունը, երբ պարտապանը որպես պարտքի ապահովման միջոց գրավ է դնում կամ իր աշխատանքը, կամ իրենից կախյալ վիճակում գտնվող անձի աշխատանքը, եթե կատարվող աշխատանքի արժեքը չի

²⁴ՀՀ-ն այս Կոնվենցիան չի վավերացվել:



հաշվակցվում տվյալ պարտքի մարմանը, կամ եթե այդ աշխատանքի տևողությունը չի սահմանափակվում և դրա բնույթը չի կոնկրետացվում,

2. ճորտական վիճակը, այսինքն՝ հողի այնպիսի օգտագործումը, որի դեպքում օրենքով, ավանդույթի ուժով կամ փոխադարձ համաձայնության հիման վրա օգտագործողը պարտավոր է ապրել և աշխատել ուրիշին պատկանող հողատարածքի վրա և վարձատրությամբ կամ առանց դրա որոշակի աշխատանք կատարել այդ սեփականատիրոջ օգտին ու չի կարող փոփոխել իր նման վիճակը,

3. ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, որի ուժով.

ա. կնոջ ծնողները, խնամակալը, ընտանիքը կամ յուրաքանչյուր այլ անձ կամ անձանց խումբ դրամով կամ բնեղենով վարձատրելու դիմաց խոստանում են ամուսնացնել կամ ամուսնացնում են այդ կնոջը, առանց նրան մերժելու իրավունք վերապահելու,

բ. կնոջ ամուսինը, վերջինիս ընտանիքը կամ տոհմն իրավունք ունեն վարձատրությամբ կամ այլ պայմանով փոխանցելու տվյալ կնոջն այլ անձի,

գ. ամուսնու մահից հետո կինը ժառանգաբար փոխանցվում է մեկ այլ անձի,

4. ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, որի ուժով երեխան (մինչև 18 տարեկան անձը) ծնողների կամ նրանցից մեկի կամ խնամակալի կողմից վարձատրությամբ կամ առանց դրա փոխանցվում է մեկ այլ անձի՝ այդ երեխայի կամ նրա աշխատանքի շահագործման նպատակով:


Օրգանները կամ հյուսվածքները վերցնելու նպատակով թրաֆիքինգի կամ շահագործման դեպքում օրգանները կամ հյուսվածքները կարող են օգտագործվել ցանկացած նպատակով՝ փոխապատվաստման, առուվաճառքի, մարդակերության և այլն:

Արարքն երեխայի թրաֆիքինգ կամ շահագործում որակվում է անկախ երեխայի նկատմամբ բռնություն, դրա սպառնալիք, խաբեություն կամ այլ միջոցներ (եղանակներ) կիրառելուց, քանի որ ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածի համաձայն՝ դրանք պարտադիր չեն (ի տարբերություն չափահաս անձանց թրաֆիքինգի կամ շահագործման):

ՀՀ քր. օր.-ի 132.3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, քրեորեն պատժելի է շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը, եթե այդ անձի շահագործման վիճակի մեջ լինելն ակնհայտ է ծառայությունից օգտվողի համար, և եթե հանցագործություն կատարած անձի արարքում բացակայում են ՀՀ քր. օր.-ի 132-րդ կամ 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նախատեսված է ծանրացնող հանգամանք՝ «կատարվել է ակնհայտ անչափահասի նկատմամբ»:

Անձը պատասխանատվության է ենթարկվում, եթե ծառայություններից օգտվելուց առաջ իմացել է ծառայություն մատուցողի շահագործման վիճակում գտնվելու փաստը: Դրա մասին նա կարող է իմանալ տուժողից, շահագործողից, այլ անձանցից, կամ դա կարող է ակնհայտ լինել օբյեկտիվ իրադրությունից՝ կապված լինելը, փակի տակ պահվելը և այլն:

Ուշագրավ է, որ այս հոդվածի 3-րդ մասով նախատեսված է խրախուսական նորմ, որի համաձայն ՀՀ իրավապահ մարմիններին տուժողի մասին կամովին տեղեկություններ հայտնած անձն ազատվում է այս հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:




Երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման դեպքում այս խրախուսական նորմի կիրառման պարագայում պարտադիր պետք է քննարկել ՀՀ քր. օր.-ի 18-րդ գլխով նախատեսված հանցագործությունների բացակայությունը, եթե տեղի է ունեցել երեխայի սեռական թրաֆիքինգ կամ շահագործում:

ՀՀ քր. օր.-ի 133-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, քրեորեն պատժելի է մարդուն ազատությունից ապօրինի զրկելը, որն առևանգելու հետ կապված չէ: Նույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում նախատեսված է ծանրացնող հանգամանք, այն է՝ «կատարվել է ակնհայտ անչափահասի նկատմամբ»: Այս հանցագործությունը դրսևորվում է մարդուն տեղափոխելով, գտնվելու վայրն այլ անձի կողմից ընտրելով, այլ մարդկանց հետ շփվելու ազատությունից ապօրինաբար զրկելով: Այն կարող է իրականացվել ֆիզիկական, հոգեկան բռնություն գործադրելով կամ խաբեությամբ: ՀՀ քր. օր.-ի 133-րդ հոդվածից բխում է, որ արարքը որպես մարդուն ազատությունից զրկել որակելու համար պետք է լինի երկու պայմանների միաժամանակյա առկայություն՝ ապօրինությունը և անձի կամքին հակառակ կատարելը:

Հետևաբար, եթե ազատությունից զրկումն իրականացվել է օրենքով նախատեսված դեպքերում և սահմաններում, այս հանցակազմը բացակայում է: Օրինակ, կալանավորման, ազատազրկման, անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով և այլն:

Եթե երեխային ազատությունից զրկում են ծնողները կամ նրանց փոխարինող անձինք, ապա արարքը ՀՀ քր. օր.-ի 133-րդ հոդվածով որակելու համար կարևոր նշանակություն ունի ազատությունից զրկելու նպատակը:



Երեխային ազատությունից զրկելն այնպիսի վայրում, որտեղ նա գտնվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու հետևանքով «հրավիրված» լինելով, չի կարող որակվել ՀՀ քր. օր.-ի 131-րդ հոդվածով, քանի որ այն պարունակում է երեխային առևանգելու հատկանիշներ: Օրինակ, ծնողների զբաղված լինելու պատճառաբանությամբ երեխային դպրոցից տուն տանելու եկած հարևանը երեխային տեղափոխում է այլ վայր և պահում այնտեղ:

Երեխայի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության պաշտպանությունը:

Սեռական ազատության²⁵ և սեռական անձեռնմխելիության²⁶ դեմ ուղղված հանցագործությունները համարվում են սեռական հանցագործություններ:


Սեռական հանցագործությունները լինում են բռնի և ոչ բռնի:

Բռնաբարության օբյեկտիվ կողմը բարդ է և ձևավորվում է հետևյալ երկու գործողությունների կատարմամբ, որոնց երկուսի միաժամանակյա առկայությունը պարտադիր է.

1. սեռական հարաբերություն (բռնաբարության հանցակազմում խոսքը միայն բնական սեռական հարաբերության մասին է, այսինքն՝ այն սեռական

²⁵Սեռական ազատությունը 16 տարին լրացած հոգեպես առողջ մարդու իրավունքն է՝ ինքնուրույն, առանց որևէ հարկադրանքի որոշելու՝ ում հետ և ինչ ձևով բավարարել իր սեռական պահանջները:

²⁶ Սեռական ազատությունը 16 տարին լրացած հոգեպես առողջ մարդու իրավունքն է՝ ինքնուրույն, առանց որևէ հարկադրանքի որոշելու՝ ում հետ և ինչ ձևով բավարարել իր սեռական պահանջները:



հարաբերության մասին, որի արդյունքում կինը կարող է հղիանալ՝ հեշտոցային սեռական հարաբերություն, coitus per vagine),

2. ֆիզիկական բռնության²⁷ գործադրում կամ դա գործադրելու սպառնալիք կամ կնոջ անօգնական վիճակի օգտագործում:

Ֆիզիկական բռնությունը հանցավորի հետ սեռական կապի մեջ մտնելուց խուսափելու նպատակով կնոջ ցուցաբերած դիմադրությունը ճնշելու, հաղթահարելու, ինչպես նաև նրան օգնություն կանչելու հնարավորությունից զրկելու նպատակով տուժողի կամ այլ անձանց նկատմամբ ֆիզիկական ուժ գործադրելն է՝ նրան ծեծելը, մարմնական վնասվածքներ հասցնելը և այլն: Գործադրվող բռնությունը պետք է հանդիսանա կնոջ՝ առկա կամ սպասվելիք դիմադրությունը հաղթահարելու և կամքը ճնշելու անհրաժեշտ միջոց²⁸:

Սպառնալիքի մասին արդեն խոսվել է նախորդիվ:

Քանի որ ֆիզիկական բռնության սպառնալիքը կիրառվում է իբրև տուժողի կամքը ճնշելու միջոց՝ նրան


²⁷Բռնությունը որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի հետևանքով անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք:// Տես՝ ԱՐԴ-/0176/01/11 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. նոյեմբերի 1-ի որոշման 18-րդ կետ:

²⁸ Բռնաբարությունն չի համարվի, այսպես կոչված, հրապուրանքը՝ տարաբնույթ խաբեբայական գործողություններով կնոջը սեռական հարաբերությանը հակելը, նրան գայթակղելը և նմանատիպ այլ գործողությունները: Այս դեպքերը հատուկ ուշադրության պետք է արժանանան, եթե դա իրականացվել է երեխայի նկատմամբ՝ հաշվի առնելով նրա գիտակցական մակարդակն ու զարգացվածության աստիճանը, ինչն անդրադառնում է ընկալման և վարքի վրա:

բռնաբարելու նպատակով, հետևաբար ՀՀ քր. օր.-ի 138 հոդվածով նախատեսված պատասխանատվությունը վրա է հասնում՝ անկախ նրանից՝ հանցավորն իրական հնարավորություն ունեցե՞լ է իրագործելու իր հնչեցրած սպառնալիքը, թե՞ ուղղակի նպատակ է հետապնդել հոգեբանական ճնշում գործադրելու տուժողի նկատմամբ: Բավարար է այն, որ հանցավորն ահաբեկել է տուժողին, և վերջինս համարել է սպառնալիքն իրական և իրագործելի:

2013թ. դեկտեմբերի 21-ից օրինական ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունների համաձայն, ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածի 4-րդ մասում ներառվել է անօգնական վիճակի սահմանումը, որի համաձայն՝ ՀՀ քր. օր.-ի 138-րդ և 139-րդ հոդվածների իմաստով անօգնական վիճակում գտնվող է համարվում այն անձը, որը որոշակի հանգամանքների ուժով մշտապես կամ ժամանակավորապես զրկված է եղել հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու կամ հասկանալու հնարավորությունից, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը: Այս փոփոխությամբ օրենսդրորեն ամրագրվել է, որ 12 տարեկանը չլրացած անձանց հետ սեռական հարաբերություն ունենալն այսուհետ համարվելու է որպես բռնի սեռական հարաբերություն, և անօգնական վիճակի հաստատումը դատահոգեբանական փորձաքննությամբ հիմնավորելու անհրաժեշտությունը հետայսու բացակայում է:

Բռնաբարությունը տուժողի անօգնական վիճակի օգտագործմամբ կատարված որակելու համար նշանակություն չունի՝ տուժողին նման վիճակի հասցրել է ինքը՝ հանցավորը, թե՞ նա արդեն իսկ անօգնական վիճակում է գտնվել, և հանցավորն օգտվել է նրա անօգնական վիճակից՝ վերջինիս հետ սեռական




հարաբերությունն ունենալու նպատակով:

ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածում բռնաբարության եղանակները սպառիչ թվարկված են, հետևաբար, այլ եղանակներով (ամուսնանալու կեղծ խոստում տալը, գույքը ոչնչացնելու սպառնալիքը, կախյալ վիճակի օգտագործումը) սեռական հարաբերությունը բռնաբարության հանցակազմ չի առաջացնում: Կախյալ վիճակի առկայության դեպքում պետք է քննարկել արարքը ՀՀ քր. օր.-ի 140-րդ հոդվածով որակելու հարցը, իսկ եթե այն կրել է պարբերական բնույթ, ապա ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով որակելու հարցը:

Ինչպես երևում է ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի բովանդակությունից, սույն ձեռնարկի իմաստով հետաքրքրությունն են ներկայացնում 2-րդ մասի 3-րդ կետը և 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը:

ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով անչափահաս ասելով հասկանում ենք 14-18 տարեկան իգական սեռի ներկայացուցիչ, ում նկատմամբ իրականացվել է բռնաբարությունը: Ընդ որում, հաշվի առնելով ՀՀ քր. օր.-ի 29-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն դիտավորյալ հանցագործության ծանրացնող հանգամանքների համար անձն ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա գիտակցել է այդ հանգամանքները, պետք է փաստել, որ տուժողի անչափահաս լինելը պետք է գիտակցվի հանցագործի կողմից, այսինքն՝ հանցավորը մինչև հանցագործություն կատարելը պետք է հաստատապես իմացած լինի տուժողի՝ անչափահաս լինելու հանգամանքը:

Պրակտիկայում երբեմն դժվարություններ են առաջանում չափահաս տղամարդու և անչափահաս աղջկա «կամավոր» սեռական հարաբերությանը




գնահատական տալու հարցում: Անչափահաս աղջկա բռնաբարության համար բնութագրական է ոչ այնքան սեռական, որքան սոցիալական և ընդհանուր հասունության բացակայությունը: Նման դեպքում անօգնական վիճակը որոշվում է հենց սեռական հարաբերության նշանակությունը չգիտակցելով և դրա հետևանքները չհասկանալով:

Սակայն, աղջկա անչափահաս լինելը՝ սեռական հարաբերության մեջ մտնելու աղջկա համաձայնությամբ պայմանավորված, ինքնին չի կարող հիմք հանդիսանալ, որպեսզի նրա անօգնական վիճակն օգտագործվի՝ նրա հետ սեռական հարաբերությունը բռնաբարություն որակելու համար²⁹:

Հատուկ ուշադրության է արժանի 16 տարին լրացած աղջկա հետ սեռական հարաբերության դեպքերի քննությունը, քանի որ նշված տարիքից անձը ձեռք է բերում սեռական ազատություն և ինքնուրույն կարող է որոշել իր զուգընկերներին, հետևաբար, բռնության կամ դրա սպառնալիքի առկայությունը կամ տարիքով չպայմանավորված անօգնական վիճակի առկայությունը որպես բռնաբարության կատարման եղանակ այս դեպքերում դառնում է պարտադիր պայման:

ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում ամրագրվում է հետևյալ ծանրացնող հանգամանքը՝ տասնութ տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի


²⁹Այսինքն, 14-18 տարեկան լինելը չի կարող հանդիսանալ միակ չափանիշը: Հայտնի են դեպքեր, երբ սեռական հասունության չհասած 13-14 տարեկան աղջկա հետ սեռական ակտը բռնաբարություն չի համարվել, իսկ սեռական հասունության հասած՝ 15 տարեկան աղջկա հետ սեռական հարաբերություն ունենալը որակվել է որպես բռնաբարություն:



կամ այլ անձի կողմից, որի վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն, որի դեպքում հստակեցվում է ոչ միայն տուժողի տարիքը, այլ նաև հանցագործության հատուկ սուբյեկտ լինելը: Դրանք են՝ ծնողը, մանկավարժը, ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակիցը, այլ անձինք, ում վրա դրված է տասնութ տարին չլրացած անձի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը:


Փաստացի, այս կետում ներկայացված են ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, ինչպես նաև ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքները միայն հատուկ կատեգորիայի անձանց կողմից կատարելու դեպքում: Այսինքն, եթե 14-18 տարեկան աղջկա բռնաբարությունը կատարել է ծնողը կամ մանկավարժը կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակիցը կամ արական սեռի այլ անձ, ում վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն, ապա արարքը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, քանի որ լրացուցիչ որակում ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով չի պահանջվում: Բայց եթե բռնաբարությունն իրականացվում է մինչև 14 տարեկան աղջկա նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ արական սեռի այլ անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն, ապա արարքը որակվում է ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի իմաստով մանկահասակ է համարվում 14 տարին



չլրացած ցանկացած անձ: Ընդ որում, այս կետով արարքը որակելիս պետք է հիշել, որ եթե 12 տարին չլրացած անձանց դեպքում նրանց անօգնական լինելու հանգամանքն այլևս չի վիճարկվում (օրենսդրական փոփոխությունների արդյունքում), և նրանց հետ սեռական հարաբերությունը միանշանակ որակվում է որպես բռնաբարություն, ապա 12-14 տարեկանների դեպքում պետք է նշանակվի դատահոգեբանական փորձաքննություն՝ նրանց անօգնական վիճակը պարզելու, և դրանից հետո կքննարկվի արարքը բռնաբարություն որակելու կամ չորակելու հարցը, բացառությամբ այն դեպքերի, երբ բռնաբարությունը կատարվել է բռնությամբ կամ դրա սպառնալիքով:

Ուսումնասիրելով բռնաբարության քրեաիրավական բնութագիրը՝ առանձնակի ուշադրության է արժանանում բռնաբարության փորձը, որն ընդունված է համարել իբրև տուժողի կամքին հակառակ նրա հետ սեռական հարաբերություն ունենալու նպատակով կիրառված բռնությունը կամ դա գործադրելու սպառնալիքը (օրինակ, բռնաբարելու նպատակով տուժողին մերկացնելը, հարվածներ հասցնելը, ծեծելը և այլն): Բռնաբարության փորձի փաստերը գնահատելիս պետք է պարզել՝ հանցավորի գործողություններն ուղղվա՞ծ են եղել սեռական հարաբերություն ունենալուն, և նրա կողմից գործադրված բռնությունն այդ նպատակին հասնելու միջոց հանդիսացե՞լ է, թե՞ ոչ: Միայն այն դեպքում, երբ առկա են ապացույցներ հանցավորի գործողությունների վերաբերյալ, որոնք ավարտին չեն հասցվել հանցավորից անկախ հանգամանքներով (տուժողի դիմադրությունը, կողմնակի անձանց միջամտելը, կենդանիների հարձակումը, ֆիզիոլոգիական անկարողությունը և այլն), կարելի է նման գործողությունը որակել որպես բռնաբարության փորձ: Նախնական սեքսուալ գործողությունները նույնպես կարող են որակվել որպես




բռնաբարության փորձ, եթե պարզվի, որ դրանք եղել են սեռական հարաբերությանը նախորդող գործողություններ, որը հանցավորը չի կարողացել սկսել:

ՀՀ քր. օր.-ի 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քրեորեն պատժելի է սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողությունները տուժողի կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով: Ի տարբերություն բռնաբարության, սեքսուալ բնույթի բռնի գործողություններից տուժող կարող է լինել ցանկացած սեռի ներկայացուցիչ: Քննարկվող հանցագործության եղանակները նույնանում են բռնաբարության եղանակների հետ: Այս հանցագործության և բռնաբարության տարբերությունն օբյեկտիվ կողմի մյուս դրսևորման մեջ է. բռնաբարության դեպքում առկա է հեշտոցային սեռական հարաբերություն, իսկ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների դեպքում՝ համասեռություն կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ (հետանցքային կամ բերանային սեռական հարաբերություն), սեռական հարաբերության նմանեցում, կնոջ կողմից տղամարդու նկատմամբ բռնի ցանկացած սեռական հարաբերություն և այլն:

Համասեռությունը սեռական վարքագծի ձև է, որը դրսևորվում է միևնույն սեռի ներկայացուցչի նկատմամբ սեռական հակումներ ունենալով: Համասեռության դրսևորման ձևերն են՝ տղամարդու սեռական հարաբերությունը տղամարդու հետ և կնոջ սեռական հարաբերությունը կնոջ հետ:


Սեքսուալ բնույթի բռնի գործողությունների ծանրացնող և առանձնապես ծանրացնող հանգամանքները նույնն են, ինչ բռնաբարության դեպքում, հետևաբար,



այստեղ լրացուցիչ չեն քննարկվում:

Ինչպես նշել ենք, ՀՀ քր. օր.-ի 138 և 139-րդ հոդվածներով նախատեսված հանցագործության հիմնական տարբերիչ հատկանիշը սեռական հարաբերության ձևն է, բայց գործնականում հանդիպում են դեպքեր, երբ ՀՀ քր. օր.-ի 139-րդ հոդվածով նախատեսված արարքն անհրաժեշտ է տարբերակել ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածով նախատեսված հանցագործության փորձից: Մասնավորապես, պետք է հաշվի առնել հանցավորի նպատակը: Եթե հանցավորը ցանկանում էր սեռական կարիքը բավարարել առանց հեշտոցային սեռական հարաբերությունն ունենալու՝ իրականացնելով սեռական հարաբերության նմանակում կամ միջազդրային/միջկոնքային հարաբերություն, ապա արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 139-րդ հոդվածով, իսկ եթե նա ցանկանում էր սեռական կիրքը բավարարել՝ ունենալով հեշտոցային սեռական հարաբերություն, բայց իր կամքից անկախ հանգամանքներում կատարվել է սեռական հարաբերության նմանակում կամ միջազդրային/միջկոնքային հարաբերություն, ապա արարքը պետք է որակվի որպես ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածով նախատեսված հանցագործության փորձ:

ՀՀ քր. օր.-ի 140-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն անձին սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողություններ կատարելուն հարկադրելը շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով, եթե բացակայում են նույն օրենսգրքի 132-րդ և 132.2-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները, համարվում է միջին ծանրության հանցագործություն: Բայց եթե այդ արարքը կատարվել է ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ,




այն համարվում է առանձնապես ծանր հանցագործություն և պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասներկու տարի ժամկետով:

Հանցագործությունը դրսևորվում է շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով՝ անձին սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողություններ կատարելուն հարկադրելու մեջ: Սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելն արտահայտվում է նրանում, որ անձն իր ապօրինի գործողություններով տուժողի հոգեկանի վրա ներգործելով, ստիպում է նրան նահանջել իր սեռական ազատության իրավունքից և հանցավորի կամ երրորդ անձի հետ սեռական հարաբերություն ունենալ կամ սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողություններ կատարել:

Նյութական կախվածության տակ հասկացվում է իրավիճակ, երբ տուժողը գտնվում է հանցավորից լրիվ կամ մասնակի նյութական կախվածության մեջ. ստիպված է ապրել հանցավորի հետ նույն բնակելի տարածքում՝ չունենալով իր սեփականը, կամ հանցավորը հնարավորություն ունի և կարող է էապես վատթարացնել տուժողի նյութական վիճակը:

Այլ կախվածության տակ հասկացվում է աշխատանքային կախվածությունը, պետական կամ մասնավոր հիմնարկներում և կազմակերպություններում տուժողի ենթակայությունը հանցավորին, իշխանության ներկայացուցչից (ոստիկան, հետաքննիչ, քննիչ, դատավոր և այլն) կամ այլ անձից (հիվանդը՝ բժշկից, ուսանողը՝ դասախոսից, աշակերտը՝ ուսուցչից և այլն) կախվածությունը:




Նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի հետ սեռական հարաբերություն ունենալու կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելու փաստն ինքնին չի կարող վկայել ՀՀ քր. օր.-ի 140-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարման մասին: Հարկավոր է, որ այդ կախվածությունն օգտագործված լինի որպես տուժողի համար անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիք:

Բոլոր դեպքերում կարևոր է այդ կախվածությունն օգտագործելը սեռական հարաբերություն ունենալու համար:

Որպես կանոն, հանցավորի նպատակն է՝ տուժողի հետ անձամբ ունենալ սեռական հարաբերություն կամ հարկադրաբար նրա հետ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարել, սակայն, ինչպես արդեն նշվել է, նա կարող է նաև գործել երրորդ անձանց շահերից ելնելով:


Հանցագործությունն ավարտված է համարվում հոգեբանական ազդեցություն գործադրելու պահից (օրինակ՝ տուժողի հետ սեռական հարաբերություն ունեցած երրորդ անձի գործողությունները տվյալ հանցակազմի սահմաններից դուրս են և այդ երրորդ անձը, եթե նա չի հանդիսանում կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող, քրեական պատասխանատվության չի ենթարկվի), անկախ նրանից՝ սեռական հարաբերություն կամ գործողություններ կատարվե՞լ են, թե՞ ոչ:

ՀՀ քր. օր.-ի 140-րդ հոդվածի համատեքստում կարևորվում է այդ հանցագործության տարբերակումը սեռական շահագործումից: Այսպես, պոռնկությունը ենթադրում է պարբերականություն և սեռական ծառայությունների հատուցելիություն, ինչը ՀՀ քր. օր.-ի



140-րդ հոդվածի պարագայում բացակայում է: Խնդիրը բարդանում է նյութական կախվածության դեպքում, երբ ՀՀ քր. օր.-ի 140-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունն իրականացվում է պարտքի մարման, պարտքով գումար տրամադրելու, նյութական օգուտ իրականացնելու և համանման այլ հանգամանքներում: Այս դեպքում պետք է ուշադրություն դարձնել սեռական հարաբերությունների պարբերականության վրա, մասնավորապես, եթե հարկադրանքը կիրառվում է երրորդ անձանց հետ սեռական հարաբերություն ունենալու նպատակով: Քննարկվող հանցակազմերը տարբերակելու հարցում կարևորվում է նաև հանցավորի նպատակը՝ երեխայի շահագործում, թե՞ սեփական սեռական կարիքների բավարարում, ինչպես նաև դիտավորության ուղղվածությունը՝ ոտնձգություն ազատության դեմ առհասարակ, թե՞ միայն սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ:

Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ հանցավորի գործողությունները որակելիս, ՀՀ քր. օր.-ի 140-րդ հոդվածի հետ մեկտեղ, անհրաժեշտություն է առաջանում կիրառելու նաև այլ հոդվածներ՝ համակցությամբ: Այսպես, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի կիրառման դեպքում, որն էական վնաս է պատճառել տուժողին, արարքը չպետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 137-րդ և 140-րդ հոդվածների համակցությամբ, քանի որ գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը հանդիսանում է ՀՀ քր. օր.-ի 140-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարման եղանակ: Բայց պաշտոնատար անձի գործողությունները, որոնք ուղղված են ՀՀ քր. օր.-ի 140-րդ հոդվածով նախատեսված նպատակին հասնելու համար՝ տուժողի «այլ կախվածությունն» օգտագործելով, նշված հոդվածով որակելուց բացի, պետք է որակվեն նաև ՀՀ քր. օր.-ի 309-րդ հոդվածով՝ համակցությամբ:




ՀՀ քր. օր.-ի 141-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, քրեորեն պատժելի է տասնութ տարին լրացած անձի կողմից սեռական հարաբերությունն ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելն ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ նույն օրենսգրքի 138-րդ կամ 139-րդ հոդվածներով կամ 140-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքների հատկանիշների բացակայության դեպքում³⁰:

Տուժող է հանդիսանում 16 տարին չլրացած անձը՝ անկախ սեռից: Հանցագործությունը դրսևորվում է 16 տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերություն կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելով, եթե բացակայում են բռնաբարության, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների և սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու հատկանիշները: Սակայն, եթե սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, թեկուզ առանց բռնության և դրա սպառնալիքի, տեղի են ունեցել այնպիսի անչափահասի հետ, ով չի գիտակցել իր հետ տեղի ունեցող գործողությունների բնույթն ու նշանակությունը, իսկ հանցավորը գիտակցել է դա և օգտվել դրանից, մասնավորապես՝ 12 տարին չլրացած անձի հետ, կամ դատահոգեբանական փորձաքննությամբ անօգնական ճանաչված 12-ից 16 տարեկան անձի հետ, ապա արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 138-րդ կամ 139-րդ հոդվածի համապատասխան մասով:

³⁰ՀՀ քր. օր.-ի 141-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված են հետևյալ ծանրացնող հանգամանքները՝

1. քսանմեկ տարին լրացած անձի կողմից,
2. մի խումբ անձանց կողմից,
3. միևնույն անձի նկատմամբ՝ պարբերաբար:




ՀՀ քր. օր.-ի 141-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ 18 տարին լրացած անձը (ինչպես տղամարդը, այնպես էլ կինը):

ՀՀ քր. օր.-ի 141-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված ծանրացնող հանգամանքը վերաբերում է հատուկ սուբյեկտին՝ 21 տարին լրացած անձին: Այս հանգամանքը որպես ծանրացնող ամրագրելիս օրենսդիրն առաջնորդվել է տուժողի և հանցագործի տարիքային տարբերությամբ, որը 5 տարի և ավելի է: Տուժողի և հանցագործի տարիքային տարբերությունը տարբեր երկրների օրենսդրությամբ ամրագրված է որպես սեռական հարաբերություններ ունենալու արգելք: Օրինակ, Շվեյցարիայի, Գերմանիայի և այլ պետությունների քրեական օրենսգրքերով նախատեսված արգելքը մատնանշում է տուժողի և հանցագործի տարիքային տարբերությունը՝ որպես նրանց միջև շփումը բացառող կամ էապես նվազեցնող նախապայման:

Միևնույն՝ 16 տարին չլրացած անձի նկատմամբ պարբերաբար սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը կամ սեռական հարաբերություններ ունենալը ծանրացնող հանգամանք հանդիսանում է ոչ թե ելնելով կրկնակիությունից, այլ ելնելով այն հանգամանքից, որ դա շարունակվող հանցագործություն է, որն իրականացվում է սեռական կարիքները բավարարելու նպատակով՝ անընդհատ նույն երեխային օգտագործելով³¹:

³¹Որոշ պետություններում, օրինակ՝ Մոլդովայի Հանրապետությունում, այս երևույթը երեխայի ոչ առևտրային սեռական շահագործում է համարվում, երբ երեխային պարբերաբար օգտագործում են անձնական սեռական կարիքները բավարարելու համար՝ չստանալով և չհետապնդելով որևէ եկամուտ:



ՀՀ քր. օր.-ի 141-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված են առանձնապես ծանրացնող հանգամանքներ՝

1. տասնութ տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, որի վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն,
2. տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ:


ՀՀ քր. օր.-ի 142-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, քրեորեն պատժելի է տասնութ տարին լրացած անձի կողմից ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ կամ տասնվեց տարին լրացած անձի կողմից տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելը³²: Այսինքն, անառակաբարո գործողություններ ասելով պետք է հասկանալ վերը նշվածին հասնելուն ուղղված գործողությունները:

Հանցագործությունը դրսևորվում է անառակաբարո, այսինքն այնպիսի գործողություններ կատարելու մեջ, որոնք ուղղված են 16/14 տարին չլրացած երեխայի սեռական բնագիծը գրգռելուն, նրա մոտ անառողջ սեռական հետաքրքրություններ առաջացնելուն:

Անառակաբարո գործողությունները կարող են լինել երկու տեսակի՝

- ֆիզիկական բնույթի,
- ինտելեկտուալ բնույթի:

³²«Անառակաբարո» նշանակում է անառակի վարքուբարք ունեցող, իսկ «անառակ» նշանակում է՝ անբարոյական, շվայտ, զեխ, մոլությունների անձնատուր եղած, խառնազնաց: Աղայան Է.Բ. Արդի հայերենի բացատրական բառարան: Երևան, Հայաստան, 1976, էջ 46:



Ֆիզիկական բնույթի անառակաբարո գործողությունների օրինակ են 16/14 տարին չլրացած երեխայի ներկայությամբ ուրիշի հետ կենակցելը, երեխային անպարկեշտ ձևով հպվելը, նրա ներկայությամբ մերկանալն ու սեռական օրգանները ցուցադրելը:


Ինտելեկտուալ բնույթի անառակաբարո գործողություններ են համարվում սեռական կյանքին վերաբերող հարցերի շուրջ երեխայի հետ լստի զրույց տանելը, պոռնկագրական առարկաներ, նկարներ կամ տեսաֆիլմեր ցուցադրելը, պոռնկագրական բովանդակությամբ գրականությանը ծանոթացնելը և այլն:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Ընդ որում, հանցավորը պետք է գիտակցի, որ անառակաբարո գործողություններ է կատարում 16/14 տարին չլրացած անձի նկատմամբ:

Անառակաբարո գործողությունների սուբյեկտիվ պարտադիր հատկանիշ են՝

- նպատակը, որն ուղղված է սեռական կարիքների բավարարմանը և
- սեռական շարժառիթը, լիբիդոն:

Անառակաբարո գործողությունների օբյեկտիվ հատկանիշներ պարունակող վարքը, վերը նշված սուբյեկտիվ հատկանիշների բացակայության պայմաններում, անառակաբարո գործողությունների հանցակազմ չի հանդիսանում: Օրինակ՝ սեռական օրգաններին հպվելը բժշկական նպատակներով կամ բնական կարիքները հոգալու համար մերկանալն անառակաբարո գործողությունների հանցակազմ չեն



կազմում³³:

ՀՀ քր. օր.-ի 142-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված է ծանրացնող հանգամանք՝ Էլեկտրոնային հաղորդակցության ցանցի կիրառմամբ անառակաբարո գործողություններ կատարելը: «Էլեկտրոնային հաղորդակցության ցանց» հասկացությունն ամրագրված է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում, որի 2-րդ հոդվածի համաձայն՝ Էլեկտրոնային հաղորդակցության ցանցը հաղորդման համակարգ է, իսկ համապատասխան դեպքերում՝ նաև միացնող-անջատող կամ ուղղորդող սարքավորումներ և այլ ռեսուրսներ, որոնք թույլ են տալիս հաղորդել ազդակներ (սիգնալներ) մալուխով, ռադիոյով, օպտիկական կամ այլ էլեկտրամագնիսական միջոցներով, այդ թվում՝ արբանյակային ցանցով, ամրակցված ցանցով և շարժական կապի երկրային ցանցով, Էլեկտրական Էներգիայի գծային համակարգերով այնպես, որ դրանք օգտագործվեն ազդակների հաղորդման համար՝ անկախ հաղորդվող տեղեկատվության տեսակից³⁴:

Այս կետի նախատեսումը պայմանավորված է համացանցի կիրառման տարածման միտումներով, ինչն օգտագործվում է նաև հանցագործների կողմից: Մասնավորապես, սոցիալական ցանցերն ու հաղորդակցման ծրագրերը հատուկ հետաքրքրություն են ներկայացնում մանկապիղծների համար, ովքեր կարող են դրանք օգտագործել երեխաներին մերկացնելու, մերկ կամ կիսամերկ լուսանկարներ ուղարկելու և այլ անառակաբարո գործողություններ կատարելու

³³Оберемченко А.Д. Развратные действия: уголовно-правовая характеристика и проблемы квалификации. Автореферат диссертации на канд. юрид. наук. Краснодар, 2014, Стр 11:

³⁴ Մանրամասն տե՛ս՝ Ղամբարյան Ա., Թումասյան Դ. Երեխաների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները (ձեռնարկ քննիչների համար): Երևան, 2015:

համար: Չնայած այս դեպքում բացակայում է տուժողի և հանցավորի անմիջական կապը, սակայն հանցագործությունն իրականացվում է ինտելեկտուալ անառակաբարո գործողության տեսքով:

Երեխայի այլ իրավունքների և շահերի պաշտպանությունը:

ՀՀ քր. օր.-ի 20-րդ գլխում նախատեսված են ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները: Այդ գլխի հանցակազմերն ըստ ոտնձգության օբյեկտի կարելի է բաժանել 2 խմբի՝

1. ընտանիքի շահերի դեմ ուղղված հանցագործություններ³⁵,
2. երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ³⁶:

³⁵Այս խմբին են դասվում ծնողներից երեխային ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը (հոդված 167), որդեգրման գաղտնիքը հրապարակելը կամ որդեգրման համաձայնություն տալուն հակելը կամ հարկադրելը (հոդված 169), քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին սուտ տեղեկություններ հաղորդելը (հոդված 169.1), զավակի կողմից անաշխատունակ ծնողին պահելուց չարամտորեն խուսափելը (հոդված 174):

³⁶Այս խմբին են դասվում անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը (հոդված 165), երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը (հոդված 166), երեխային ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջիկությանը ներգրավելը կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը (հոդված 166.1), ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելը (հոդված 167.1), խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը (հոդված 168), երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը (հոդված 170), երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (հոդված 171), խնամակալի կամ հոգաբարձուի իրավունքները չարաշահելը (հոդված 172), ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելը (հոդված 173):

ՀՀ քր. օր.-ի 167-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, քրեորեն պատժելի է երեխային առանց ծնողների համաձայնության նրանցից բաժանելը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կամ երեխային փոխելը, եթե բացակայում են ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները:

Երեխային առանց ծնողների համաձայնության նրանցից բաժանել ասելով հասկացվում է ծնողների համաձայնության բացակայության պարագայում երեխային այլ վայր տեղափոխելը, այլ վայրում պահելը, ուրիշի խնամքին հանձնելը, ծնողներին երեխայի հետ համատեղ գտնվելու հնարավորությունից զրկելը³⁷: ՀՀ քր. օր.-ի 167 հոդվածից բխում է, որ քրեական պատասխանատվության ենթակա է միայն այն անձը, ով ապօրինի բաժանում է երեխային ծնողից, հետևաբար՝ երեխայի օրինական բաժանումը ծնողից հանցակազմ չի կարող պարունակել: Օրինակ, երեխան կարող է բաժանվել ծնողներից վերջիններիս ծնողական իրավունքներից զրկելու³⁸ դեպքում:

³⁷ ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս/ Գ. Ղազինյանի խմբագրությամբ: Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 332:


³⁸ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն իրականացվում է, եթե նրանք՝

- ա. չարամտորեն խուսափում են ծնողական պարտականությունները կատարելուց, ընդ որում՝ ալիմենտ վճարելուց,
- բ. առանց հարգելի պատճառների հրաժարվում են վերցնել իրենց երեխային ծննդատնից կամ բժշկական այլ կազմակերպությունից, ինչպես նաև դաստիարակչական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ սմանատիպ այլ կազմակերպություններից,
- գ. չարաշահում են իրենց ծնողական իրավունքները, ընդ որում՝ իրենց հակաբարոյական վարքագծով վնասակար ազդեցություն են գործում երեխաների վրա,
- դ. դաժանաբար են վարվում երեխաների հետ, ընդ որում՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն են գործադրում նրանց նկատմամբ, ոտնձգում են նրանց սեռական անձեռնմխելիությունը,
- ե. տառապում են քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ,
- զ. կատարել են իրենց երեխաների դեմ դիտավորյալ հանցագործություն:

Երեխային փոխելու Էությունն երեխային վերցնելն ու մեկ այլ երեխայով փոխարինելն է: Երեխային փոխելու դեպքում կատարված արարքի հետևանքով վերջինս չի գիտակցում իր իրական ծագումն ու չի ճանաչում իր ծնողներին:

Այս հանցագործությունն անհրաժեշտ է տարանջատել երեխայի առևանգումից՝ հաշվի առնելով կատարման եղանակն ու գործողությունների բնույթը: Առևանգումն իրականացվում է և՛ գաղտնի, և՛ բացահայտ եղանակով, իսկ այս հանցագործությունը՝ միայն գաղտնի: Բացի այդ, առևանգման դեպքում երեխային չեն փոխում մեկ այլ երեխայով, այլ ընդամենը տեղափոխում են մեկ այլ վայր: Որպեսզի երեխայի առևանգումը տարանջատվի ծնողներից երեխային ապօրինի բաժանելուց, անհրաժեշտ է հաշվի առնել հանցագործության նպատակն ու գործողությունները: Ծնողներից երեխային ապօրինի բաժանելու դեպքում հանցագործը գիտակցում է, որ խոչընդոտում է երեխային ծնողների հետ կամ նրանցից մեկի հետ շփվելուց և, որպես կանոն, երեխայի տեղափոխում ՝ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, չի իրականացվում: Այն դեպքում, երբ իրականացվում է նաև երեխայի տեղափոխումը, արարքը որակելու համար պետք է հաշվի առնել նաև հանցագործությունը կատարած անձի ով լինելը: Օրինակ, եթե տեղափոխումն իրականացվել է ծնողներից մեկի կողմից, ապա վերջինիս կողմից մյուս ծնողի հետ երեխայի հանդիպումներին կամ տեսակցելուն խոչընդոտելը պետք է կազմի ՀՀ քր. օր.-ի 167.1-րդ հոդվածի հանցակազմը:


Կախված նրանից, թե ինչ նպատակով են երեխային բաժանում ծնողից, պետք է քննարկել



այս հանցագործության տարանջատումը երեխայի թրաֆիքինգից կամ շահագործումից: Երեխայի թրաֆիքինգն իրականացվում է շահագործման նպատակով, հետևաբար՝ ծնողներից երեխային ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը, որն իրականացվում է առանց շահագործման նպատակի, կորակվի ՀՀ քր. օր.-ի 167-րդ հոդվածով: Այսինքն, երբ հանցավորը չի հետապնդում պոռնկության շահագործման կամ սեքսուալ շահագործման այլ ձևերի, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելու, առքի կամ վաճառքի, օրգանները կամ հյուսվածքները վերցնելու նպատակ, արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի 167-րդ հոդվածով: Եվ հակառակը, եթե երեխային ծնողներից ապօրինի բաժանում են շահագործման նպատակով, ապա արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 132.2 հոդվածով, այդ դեպքում բաժանելը հանդիսանում է թրաֆիքինգի կատարման եղանակ: Իսկ եթե երեխային փոխում են նրան շահագործելու նպատակով, ապա արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ՝ ՀՀ քր. օր.-ի 132.2 և 167 հոդվածներով³⁹:

Ծնողներից երեխային ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը վերջինիս այլ պետությունն ապօրինի տեղափոխելով իրականացվում է ՀՀ պետական սահմանն երեխայի հատելն ապօրինի կազմակերպելով: Այլ պետությունն ապօրինի տեղափոխելը կարող է իրականացվել սահմանային կետերը շրջանցելով երեխային պետական սահմանով տեղափոխելով

³⁹Տոնոյան Ն. Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ /ուսումնական ձեռնարկ/: Երևան, Լիմուշ, 2014, էջեր 22-23:




(կածաններով, չբնակեցված և չվերահսկվող տարածքներով և այլն), ինչպես նաև երեխային սահմանային կետերով տեղափոխելը գաղտնի եղանակներով (թաքստոցների մեջ) կամ օգտագործելով կեղծ փաստաթղթեր (անձնագիր, ծննդյան վկայական, ճամփորդական այլ փաստաթղթեր):

Եթե ծնողներից երեխային ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը կատարվում է փաստաթղթերը կեղծելով, ապա այս դեպքում արարքի որակումն իրականացվում է հանցագործությունների համակցությանը՝ ՀՀ քր. օր.-ի 167-րդ և 325-րդ (փաստաթղթեր կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը) հոդվածներով:

ՀՀ քր. օր.-ի 169-րդ հոդվածի համաձայն հանցագործություն է համարվում որդեգրման գաղտնիքն որդեգրողի կամքին հակառակ հրապարակելն այն անձի կողմից, ով որդեգրման փաստը պարտավոր էր պահպանել որպես ծառայողական կամ մասնագիտական գաղտնիք, կամ այդ գաղտնիքն այլ անձի կողմից շահադիտական կամ այլ ստոր դրդումներով հրապարակելը, ինչպես նաև որդեգրման նպատակով որդեգրվողի օրինական ներկայացուցչի կամքին հակառակ նրան որդեգրման համաձայնություն տալուն շահադիտական կամ այլ ստոր դրդումներով հակելը կամ հարկադրելը:

ՀՀ-ում ընդունված՝ երեխայի խնամքի և դաստիարակության ձևերից մեկը երեխայի որդեգրումն



Է⁴⁰: Երեխայի որդեգրման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2010թ. մարտի 10-ի թիվ 269-Ն որոշմամբ: Այդ որոշմամբ սահմանվում է նաև, որ պետությունը և դրա համապատասխան մարմիններն երեխայի կենսապայմանների, առողջական վիճակի գնահատումը կատարում են գաղտնի՝ ելնելով երեխայի, նրա օրինական ներկայացուցիչների շահերից: Որդեգրման գաղտնիքի հրապարակում ասելով պետք է հասկանալ բանավոր կամ գրավոր ձևով ինչպես ցանկացած անձի որևէ մեկի որդեգրման փաստի մասին տեղեկացնելը, այնպես էլ որդեգրվածին այնպիսի տեղեկություններ հաղորդելը, որոնցից հայտնի կդառնա, որ որդեգրողները նրա հարազատ ծնողները չեն⁴¹: Որդեգրման

⁴⁰ՀՀ ընտանեկան օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն, որդեգրումն իրավաբանական այն ակտն է, որի համաձայն որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ: Որդեգրումը համարվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորման նախապատվելի ձևը: Որդեգրում թույլատրվում է միայն երեխաների նկատմամբ և ելնելով նրանց շահերից՝ հաշվի առնելով երեխաների լիարժեք ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացումն ապահովելու հնարավորությունները:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 113-րդ հոդվածի համաձայն, որդեգրումը կատարում է դատարանը՝ երեխային որդեգրել ցանկացող անձի (անձանց) դիմումով: Երեխայի որդեգրումը հաստատելու մասին գործի քննությունը դատարանը կատարում է հատուկ վարույթի՝ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով: Երեխաների որդեգրումը հաստատելու մասին գործերը դատարանը քննում է խնամակալության և հոգաբարձության մարմնի և որդեգրել ցանկացող անձի պարտադիր մասնակցությամբ: Իսկ օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն, երեխայի որդեգրման գաղտնիքը պահպանվում է օրենքով: Երեխայի որդեգրման մասին վճիռ կայացրած դատավորները կամ որդեգրման պետական գրանցում իրականացնող քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմնի ղեկավարը և աշխատողները, ինչպես նաև որդեգրման մասին տեղյակ այլ անձինք պարտավոր են պահպանել երեխայի որդեգրման գաղտնիքը:


⁴¹ ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս/ Գ. Ղազինյանի խմբագրությամբ: Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 338:

համաձայնություն⁴² տալուն հարկադրել ասելով հասկանում ենք ցանկացած հարկադրանքի կիրառում, որն ուղղված է որդեգրվողի օրինական ներկայացուցչի կամքը ճնշելուն, փոխելուն կամ աղավաղելուն: Դա կարող է դրսևորվել ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն գործադրելով, գույքը ոչնչացնելով կամ վնասելով, խոցելի կամ կախյալ վիճակն օգտագործելով և այլ եղանակներով: Որդեգրման համաձայնություն տալուն հակելը նշանակում է դիտավորյալ այնպիսի գործողության կատարում, որն ուղղված է որդեգրվողի օրինական ներկայացուցչի մոտ իր կամքին հակառակ համաձայնություն տալու վճռականություն հարուցելուն, որը կարող է տեղի ունենալ խաբեությամբ, համոզելով, հորդորելով, ներշնչելով և այլ եղանակներով:

Հանցագործության սուբյեկտ է հանդիսանում և՛ այն անձը, ով որդեգրման գաղտնիքը պարտավոր էր պահպանել որպես ծառայողական կամ մասնագիտական գաղտնիք (օրինակ՝ դատավորը, խնամակալության կամ հոգաբարձության մարմնի կամ քաղաքացիական կացության ակտերի գրանցման⁴³ աշխատակիցը), և՛ 16 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ, ով գործել է շահադիտական կամ այլ ստոր դրդումներով:

⁴²ՀՀ ընտանեկան օրենսգրքով նախատեսված է որդեգրվողի օրինական ներկայացուցչի՝ որդեգրման համաձայնության անհրաժեշտությունը: Մասնավորապես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 118-րդ հոդվածի համաձայն, երեխային որդեգրելու համար անհրաժեշտ է նրա ծնողների գրավոր համաձայնությունը: Անչափահաս ծնողների երեխային որդեգրելիս անհրաժեշտ է նաև նրանց ծնողների կամ խնամակալների (հոգաբարձուների) համաձայնությունը, իսկ ծնողների կամ խնամակալի (հոգաբարձուի) բացակայության դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությունը: Որդեգրման նպատակով վերը նշված անձանց կամքին հակառակ նրանց որդեգրման համաձայնություն տալուն շահադիտական կամ այլ ստոր դրդումներով հակելը կամ հարկադրելը պատասխանատվություն է առաջացնում ՀՀ քր. օր.-ի 169 հոդվածով:

⁴³ Այսուհետ՝ ԶԿԱԳ:



Այս հոդվածը տարածվում է նաև միջազգային որդեգրման դեպքերի վրա: Այս հանգամանքն առավել արդիական է, քանի որ Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին կոնվենցիան ԶԶ-ն արդեն վավերացրել է⁴⁴:

ԶԶ քր. օր.-ի 165-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, տասնութ տարին լրացած անձի կողմից տվյալ հանցագործության համար ԶԶ քր. օր.-ով քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասին խոստումներ տալու, խաբեության կամ այլ եղանակով հանցանքի կատարմանը ներգրավելը որպես հանցագործություն նախատեսված է:

Հանցագործության տուժող կարող է լինել տվյալ հանցագործության համար քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասը (16-18, իսկ ԶԶ քր. օր.-ի 24-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում՝ 14-18 տարեկան անձը):

Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը կարող է իրականացվել հետևյալ եղանակներով՝

1. խոստումներ տալով, օրինակ՝ վարձատրելու, նվերներ տալու, զվարճանքներով ապահովելու վերաբերյալ,
2. խաբեությամբ, երբ հանցավորի քողարկված խնդրանքը կամ հանձնարարությունը կատարելով՝ անչափահասը հայտնվում է մոլորության մեջ և չի գիտակցում իր արարքի հանցավոր բնույթը,
3. այլ եղանակով, որն ենթադրում է բռնության հետ չկապված տարբեր տեսակի սպառնալիքներ, օրինակ՝ նյութական վնաս պատճառելը, ընկերների ներկայությամբ նվաստացնելը, համոզելը, որոշակի

⁴⁴ Տոնոյան Ն. Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ /ուսումնական ձեռնարկ/: Երևան, Լիմուշ, 2014, էջ 32:

անձանց նկատմամբ ատելություն, թշնամանք հարուցելը, շահադիտական ձգտումներ առաջացնելը և այլն⁴⁵:

Խոստումը չափահաս անձի պարտավորությունն է՝ անչափահասին տրամադրել որոշակի բարիքներ կամ օգուտներ հանցագործության մեջ մասնակցելու համար, օրինակ՝ պարգևել կամ տրամադրել որևէ ծառայություն նրան կամ նրա ընտանիքին, մարել պարտքը, օգնել լուծելու ցանկացած հարց կամ խնդիր, ապահովել հովանավորչություն կամ պաշտպանություն և այլն⁴⁶:

Հանցագործությունն ավարտված է համարվում անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու պահից՝ անկախ այն հանգամանքից՝ անչափահասը կատարե՞լ է տվյալ հանցանքը, թե՞ ոչ:

ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել, որ քննարկվող հանցագործությունը կարող է իրականացվել՝ «ա. խոստումներ տալով (օրինակ՝ վարձատրելու, նվերներ տալու, զվարճանքներով ապահովելու և այլն).

բ. խաբեությամբ, երբ ներգրավվողի քողարկված խնդրանքը կամ հանձնարարությունը կատարելով՝ անչափահասը հայտնվում է մոլորության մեջ և չի գիտակցում կատարվելիք արարքի հանցավոր բնույթը.

գ. այլ եղանակով, որը ենթադրում է բռնության հետ չկապված տարաբնույթ դիտավորյալ հոգեբանական ազդեցություն՝ ուղղված անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելուն, այդ թվում՝ նյութական վնաս պատճառելը, հասակակիցների կամ ընկերների ներկայությամբ նվաստացնելը և նման այլ սպառնալիքներ, համոզումը, կաշառումը,

⁴⁵ ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս/ Գ. Ղազինյանի խմբագրությամբ: Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 314:


⁴⁶ Уголовное право Российской Федерации. Особенная часть/ Под ред. Б.В. Здравомыслова. М., 1996, էջ 281:

հանցագործության կատարման մասին անչափահասի հետ նպատակաուղղված զրույցների վարումը, որոշակի անձանց նկատմամբ թշնամանքի, ատելության, նախանձի ձևավորումը, դաժանության սերմանումը, շահադիտական ձգտումների առաջացումը, շողոքորթումը և այլն:

Վերը նշված գործողությունների նկատմամբ ներգրավվողը պետք է դրսևորի ուղղակի դիտավորություն: Այսինքն, պետք է գիտակցի խոստումներ տալով, խաբեությամբ կամ այլ եղանակով անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանրային վտանգավորությունը և, այդուհանդերձ, ցանկանա վերը նշված միջոցներից որևէ մեկով անչափահասին ներգրավել հանցանքի կատարմանը:

Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմի հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գործի կոնկրետ հանգամանքները, մասնավորապես՝

- ա. այն, թե ինչ նպատակներ է հետապնդում անձն անչափահասին հանցանքի կատարման մեջ ենթադրաբար ներգրավելով,
- բ. ներգրավող չափահասի և ներգրավված անչափահասի անձի առանձնահատկությունները,
- գ. ներգրավող չափահասի և ներգրավված անչափահասի փոխհարաբերությունների բնույթը,
- դ. ներգրավող անձի կողմից անչափահասի նկատմամբ ակտիվ ֆիզիկական կամ հոգեկան ներգործության առկայությունը կամ բացակայությունը և այդ ներգործության կոնկրետ դրսևորումը,
- ե. անչափահասի մոտ տվյալ հանցագործության կապակցությամբ սեփական շահի առկայությունը կամ



Քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասին հանցանքի կատարմանը դրդելու դեպքում հանցավորն ենթակա է պատասխանատվության ինչպես ՀՀ քր. օր.-ի 165-րդ հոդվածով, այնպես էլ կոնկրետ հանցագործությանը հանցակցելու համար:

Եթե հանցանքի կատարմանը ներգրավված անչափահասը դա իրականացնում է հարկադրանքի ներքո՝ շահագործման վիճակի մեջ գտնվելով, ապա արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով (Երեխայի թրաֆիքինգը կամ շահագործումը): Նման դիրքորոշումը պայմանավորված է նրանով, որ ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը: Իսկ Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին ԱՄԿ կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն, «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերից» է նաև երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը ցանկացած հակաիրավական գործունեության մեջ, իսկ հանցագործության հակաիրավական լինելն անհերքելի է, հետևաբար, այս դեպքում իրավակիրառողը պետք է արարքը որակի որպես Երեխայի թրաֆիքինգ կամ շահագործում⁴⁸:

⁴⁷ԵՄԴ/0086/01/10 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. դեկտեմբերի 23-ի որոշում:

⁴⁸Տոնոյան Ն. Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ /ուսումնական ձեռնարկ/: Երևան, Լիմու2, 2014, էջեր 47-48:

ՀՀ քր. օր.-ի 165-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է ծանրացնող հանգամանք, այն է՝ նույն արարքը, որը կատարվել է ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է անչափահասի դաստիարակության պարտականություն:

ՀՀ քր. օր.-ի 166-րդ հոդվածի համաձայն, քրեորեն պատժելի է տասնութ տարին լրացած անձի կողմից երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը, եթե բացակայում են ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները⁴⁹:

Պոռնկությունը⁵⁰ պարբերաբար սեքսուալ ծառայությունների մատուցումն է անձանց անորոշ շրջանակին՝ վճար կամ այլ նյութական բարիք ստանալու նպատակով, որի շրջանակում անձը մարմինը վերածում է առուվաճառքի, առևտրի առարկայի⁵¹: Երևույթը պոռնկություն համարելու համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝

- սեռական ծառայությունների մատուցում (պարտադիր չէ, որ մատուցվի սեռական հարաբերություն),
- պարբերականություն,

⁴⁹ՀՀ քր. օր.-ի 166-րդ հոդվածի 2-րդ մասը որպես ծանրացնող հանգամանք նախատեսում է նույն արարքը ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից կատարելը, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն: Իսկ 3-րդ մասը, որպես ծանրացնող հանգամանք, նախատեսում է առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք՝

1. կատարվել են երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
2. զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով:

⁵⁰Պոռնկություն բառը ռուսերենով թարգմանվում է “проститутция” (проститутция - от лат. prostituo - позорю, бесчеаю): Անգլերենով՝ “prostitution”: Հենց այդ բառն է օգտագործվում միջազգային իրավական ակտերում:


⁵¹Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ. Պայքար մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ: Մոդուլ 2: Երևան, 2011, էջ 39:

- հատուցելիություն,
- անձանց անորոշ շրջանակին ուղղված առաջարկ (պարտադիր չէ, որ սեռական ծառայությունները մատուցված լինեն անձանց անորոշ շրջանակին):

Ինչպես արդեն նշվել է, Երեխայի պարագայում պոռնկության սահմանումն ունի մի փոքր այլ բովանդակություն: Այսպես, Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն, երեխաների մարմնավաճառությունն նշանակում է երեխայի օգտագործումը սեռական բնույթի գործունեության մեջ՝ վարձատրության կամ ցանկացած այլ տեսակի հատուցման դիմաց:

Պոռնկագրական բնույթի նյութերը կամ առարկաները կարելի է բնութագրել որպես ոչ Էրոտիկ և ոչ գիտահանրամատչելի սեռական ուղղվածություն ունեցող տեղեկատվություն՝

- ա. որը պարունակում է ոչ գեղարվեստական՝ բնական և անպատկառ (ցինիկ) սեռական հարաբերության պատկեր կամ մանրամասն նկարագիր,
- բ. որն ինքնանպատակ կամ անպատկառ (ցինիկ) նպատակներով խոշոր պլանով պարունակում է մարդու կամ կենդանու սեռական օրգան կամ դրա նկարագիր,
- գ. որը խոշոր պլանով պարունակում կամ մանրամասն նկարագրում է մարդու կամ կենդանու սեռական օրգաններ կամ մարդակազմության կամ ֆիզիոլոգիական մանրամասների վերաբերյալ տեղեկատվություն՝ սեռական հարաբերության ժամանակ,
- դ. որը պարունակում է մարդկանց կամ կենդանիների միջև իրական սեռական հարաբերության՝ խոշոր պլանով պատկեր կամ մանրամասն նկարագիր,




- ե. որը պարունակում է սեռական բռնության կամ անձը նվաստացնող սեռական գործողությունների վերաբերյալ պատկեր կամ մանրամասն նկարագիր,
- զ. որը պարունակում է անչափահասների մասնակցությամբ սեռական գործողության վերաբերյալ պատկեր կամ մանրամասն նկարագիր,
- է. որը պարունակում է սեռահոգեբանական շեղումներով կամ մարդու կողմից դիակների կամ կենդանիների նկատմամբ սեռական հարաբերության պատկեր կամ մանրամասն նկարագիր⁵²:

Երեխային պոռնկության հետ կապված գործողություններ կատարելուն կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը կարող է դրսևորվել չափահասի կողմից երեխային համոզելով, խոստումներ տալով, խաբեությամբ, բռնությամբ և այլ եղանակներով:

ՀՀ քր. օր.-ի 166-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածի հանցակազմից կարելի է տարբերակել հանցագործության օբյեկտով և սուբյեկտիվ կողմերով: Եթե երեխան ներգրավվել է պոռնկության և պոռնկագրական բնույթի նյութերի պատրաստման հետ կապված գործողությունների մեջ, որն իրականացվում է շահագործման նպատակով, ապա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով: Ընդ որում, արարքը ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով որակելու համար որևէ նշանակություն չունի հակաիրավական արարքի կատարման եղանակը: Իսկ եթե պոռնկության հետ կապված գործողություններ կամ պոռնկագրական բնույթի նյութեր պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելու մեջ երեխան ներգրավվել

⁵²Նույն տեղում, էջ 126:



Է առանց շահագործման նպատակի⁵³, ապա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի 166-րդ հոդվածով: Այդպես կարող է որակվել, օրինակ, այն դեպքը, երբ չափահասը, ընտանիքի նյութական վիճակը բարելավելու նպատակով, չհետապնդելով շահագործման նպատակ, երեխային կոնկրետ խորհուրդներ է տալիս զբաղվելու պոռնկությամբ կամ մասնակցելու պոռնկագրական բնույթի նյութերի պատրաստմանը (ամսագիր, լուսանկարներ և այլն)⁵⁴:

Բացի այդ, կարևորվում է այն, թե ինչ գործողություններ է կատարում պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելու մեջ ներգրավված անչափահասը: Եթե նա նկարահանվում է պոռնկագրական ֆիլմում որպես դերասան, ապա այս դեպքում արարքը կորակվի որպես ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն, իսկ եթե նա պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելու մեջ ներգրավված է որպես նկարահանող, օպերատոր, օգնական կամ այլ նման գործողություններ է կատարում, ապա հանցագործն ենթակա է պատասխանատվության ՀՀ քր. օր.-ի 166-րդ հոդվածով:

ՀՀ քր. օր.-ի 166-րդ հոդվածում թվարկված գործողությունները սպառնիչ են: Այդ հիմքով երեխային այլ բնույթի հակահասարակական գործողություններ կատարելու մեջ ներգրավելը, օրինակ՝ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ տարածելու հետ կապված գործողությունների մեջ ներգրավելը, չի կարող որակվել ՀՀ քր. օր.-ի 166-րդ հոդվածով: Այդ դեպքում պետք

⁵³Այստեղ «շահագործում» ասելով պետք է հասկանալ ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված շահագործումը:

⁵⁴Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ. Հայաստանի Հանրապետությունում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները: Երևան, 2013, էջ 127:

Է հաշվի առնել նախ այն, որ ՀՀ քր. օր.-ի 263-րդ հոդվածի համաձայն, պոռնկագրական նյութերի կամ առարկաների տարածումն ինքնին հանցավոր արարք է, ինչպես նաև այն, որ ՀՀ քր. օր.-ի 165-րդ հոդվածի համաձայն, անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը նույնպես հանցագործություն է: Հետևաբար, որակումը պետք է իրականացվի ընդհանուր հիմունքներով՝ հաշվի առնելով նաև արարքի որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ⁵⁵:

Անձը ՀՀ քր. օր.-ի 166-րդ հոդվածով ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե չի գիտակցել, որ իր գործողություններով վերը նշված գործունեության մեջ ներգրավում է անչափահասին կամ չի գիտակցել, որ անձն անչափահաս է՝ ելնելով օբյեկտիվ պայմաններից:


ՀՀ քր. օր.-ի 166.1-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում տասնութ տարին լրացած անձի կողմից երեխային պարբերաբար ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջիկությանը ներգրավելու կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու համար, եթե բացակայում են ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները⁵⁶:

⁵⁵Տոնոյան Ն. Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ /ուսումնական ձեռնարկ/: Երևան, Լիմուշ, 2014, էջեր 55-56:

⁵⁶ՀՀ քր. օր.-ի 166.1-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է քննարկվող հանցագործության ծանրացնող հանգամանք, այն է՝ նույն արարքը, որը կատարվել է ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն:

Իսկ նույն հոդվածի 3-րդ մասը նախատեսում է առավել ծանրացնող հանգամանքներ՝ սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք՝

1. կատարվել են երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
2. զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով:




Ոգելից խմիչքների կամ ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործման մեջ ներգրավելը կոհիտվի որպես այս հոդվածով նախատեսված արարք միայն պարբերաբար⁵⁷ իրականացվելու դեպքում: Որպես ոգելից խմիչք ճանաչվում են ցանկացած ակոհոլային խմիչքները, ինչպես նաև դրանց հիման վրա պատրաստված կոկտեյլները կամ խառնուրդները:

Թափառաշրջիկությունն անապահով անձի վիճակն է, որը թափառում է վայրից վայր՝ չունենալով մշտական բնակության վայր, աշխատանք կամ օրինական եկամտի այլ աղբյուր (ապրուստի միջոց): Երբեմն դա դիտվում է որպես անձի պարբերական տեղաշարժ՝ ապրուստի միջոց գտնելու նպատակով, երբ բացակայում են օրինական եկամուտները:

Մուրացկանությունն ասելով պետք է հասկանալ այլ անձանցից դրամ կամ նյութական այլ արժեքներ խնդրելը, մուրալը, որն իրականացվում է խղճահարություն կամ կարեկցանք առաջացնելով:

Այս հանցագործությունը դրսևորվում է ակտիվ գործողություններով, որոնք ուղղված են տասնութ տարին լրացած անձի կողմից երեխային ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջիկությանը կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելուն, եթե բացակայում են ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները: Այն դրսևորվում է չափահասի կողմից երեխային համոզելով, խոստումներ տալով, խաբեությամբ, բռնությամբ (և՛ ֆիզիկական, և՛ հոգեբանական):

⁵⁷Պարբերաբար նշանակում է, որ երեխան ոգելից խմիչքների օգտագործմանը ներգրավել է երեք և ավելի անգամ:



ՀՀ քր. օր.-ի 166.1-րդ հոդվածով նախատեսված հանցակազմն իր բնույթով մոտ է ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածին: Նշված հանցակազմերը միմյանցից կարելի է տարբերակել հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերով: Եթե երեխան ներգրավվել է մուրացկանության հետ կապված գործողությունների մեջ, որն իրականացվում է շահագործման նպատակով, ապա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով: Ընդ որում, արարքը ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով որակելու համար որևէ նշանակություն չունի հակաիրավական արարքի կատարման եղանակը⁵⁸:

Երեխայի կողմից ոչ արժեքավոր առարկաներ (նկարներ, կախազարդ վաճառելը) վաճառելու եղանակով գումար խնդրելը չի համարվում մուրացկանություն: Եթե ծնողն անչափահաս երեխայի մասնակցությամբ (երեխային կողքը նստեցնելով, գրկելով) անձամբ է զբաղվում մուրացկանությամբ, ապա նրա արարքում բացակայում է մուրացկանության մեջ ներգրավելու հանցակազմը: Այսպես, եթե երեխային մուրացկանության մեջ ներգրավելու նպատակը մուրացկանության արդյունքում ձեռք բերված գումարները ստանալն է, ապա նման դեպքում առկա են ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ⁵⁹:


⁵⁸ՀՀ դատական պրակտիկայում մուրացկանության մեջ ներգրավվելու և երեխաների թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ առկա է հստակ դիրքորոշում: Այսպես ՀՀ քր. օր.-ի 132.1 հոդվածով (ներկա դրությամբ այն չի գործում և բովանդակային առումով ներառված է ՀՀ քր. օր.-ի 132 և 132.2-րդ հոդվածների դիսպոզիցիայում) հարուցված գործ թիվ ԵՔԴ/0054/01/2008–ով 2009թ.-ի ապրիլի 2-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում կայացվեց մեղադրական դատավճիռ, որտեղ մեջբերում կա ԱՄԿ-ի Երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերի մասին N182 կոնվենցիայից, որով երեխաների մուրացկանությունը համարվել է շահագործման ձևերից մեկը:

⁵⁹Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ. Հայաստանի Հանրապետությունում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները: Երևան, 2013, էջ 132-133:

Անձը ՀՀ քր. օր.-ի 166.1-րդ հոդվածով ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե չի գիտակցել, որ իր գործողություններով վերը նշված գործողությունների մեջ ներգրավում է անչափահասին կամ չի գիտակցել, որ անձն անչափահաս է:

ՀՀ քր. օր.-ի 167.1-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելու համար: Այս հոդվածի համաձայն, երեխայի հետ բնակվող ծնողի կողմից երեխայի հետ չբնակվող ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև դատական կարգով սահմանված տեսակցության իրականացմանը մեկ ամսվա ընթացքում երեք կամ ավելի անգամ, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում հինգ կամ ավելի անգամ խոչընդոտելը կամ տեսակցություն իրականացնելուց առանց հարգելի պատճառների խուսափելը պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով մինչև երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Հոդվածը ոչ միայն սահմանում է տեսակցություններին խոչընդոտելու կամ դրանցից խուսափելու պայմանը որպես քրեական պատասխանատվության հիմք, այլև ներկայացնում է դրանց քանակը՝ անհիմն պատժիչ քաղաքականություն չիրականացնելու համար՝ հավասարակշռված պաշտպանության առնելով ծնողներին որպես հավասար իրավունքներ կրող սուբյեկտների: Այս արարքի քրեականացման հիմք է հանդիսացել և՛ միջազգային, և՛ ազգային օրենսդրությամբ ամրագրված՝



Երեխայի՝ իր ծնողներին և մերձավոր ազգականներին, ընտանիքին ճանաչելու և նրանց հետ կանոնավոր շփվելու իրավունքը, ինչպես նաև իր երեխային դաստիարակելու և խնամելու՝ ծնողի իրավունքն ու պարտականությունը:


Այս հոդվածի՝ ՀՀ քր. օր.-ի 353-րդ հոդվածով նախատեսված՝ դատական ակտը դիտավորությամբ չկատարելու հանցագործությունից տարանջատելու պատճառը հանցագործության օբյեկտն է (ՀՀ քր. օր.-ի 167.1-րդ հոդվածով դա երեխայի շահերն ու իրավունքներն ապահովող հասարակական հարաբերություններն են), այնպես էլ օբյեկտիվ կողմը՝ գործողությունների/ անգործության շրջանակը:

Այս հանցագործությունն առկա է, եթե՝

- այն կատարվել է երեխայի հետ բնակվող ծնողի կողմից,
- երեխայի հետ չբնակվող ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև առկա է դատական կարգով սահմանված տեսակցության կարգ,
- կատարվել է տեսակցության խոչընդոտում կամ տեսակցություն իրականացնելուց առանց հարգելի պատճառների խուսափում,
- խոչընդոտելը կամ խուսափելը կատարվել է մեկ ամսվա ընթացքում երեք կամ ավելի անգամ, կամ մեկ տարվա ընթացքում հինգ կամ ավելի անգամ:

Վերը նշված 4 պայմանների միաժամանակյա առկայությունը պարտադիր է այս հանցագործությունն ավարտված ճանաչելու համար:

ՀՀ քր. օր.-ի 168-րդ հոդվածի համաձայն, քրեորեն պատժելի է խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով




Երեխայի վաճառքը⁶⁰: Այս արարքը հանդիսանում է Երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման դրսևորման ձևերից մեկը, որն իրականացվում է հատուկ նպատակով, այն է՝ Երեխայի խնամքը ստանձնելու կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով: Այս հոդվածի դիսպոզիցիան կառուցված է այնպես, որ հանցավոր է ինչպես Երեխայի գնորդի, այնպես էլ Երեխային վաճառողի վարքագիծը: Տուժող կարող է լինել հանցագործության պահին 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձ, որին խնամքը ստանձնելու նպատակով գնել կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով վաճառել են:

Հանցագործությունը դրսևորվում է գործողություններով, որոնք կատարվում են մի կողմից՝ Երեխայի գնորդի, իսկ մյուս կողմից՝ Երեխային վաճառողի միջև: Երեխայի գնորդն իր ակտիվ գործողություններով վճարի (սյուլթական հատուցման) դիմաց «ձեռք է բերում» Երեխա: Երեխային վաճառողն իր ակտիվ գործողություններով վճարի (սյուլթական հատուցման) դիմաց Երեխային հանձնում է գնորդին:

«Այս գործարքի» կողմերից յուրաքանչյուրը պատասխանատու է իր գործողությունների համար: Այդպիսի գործարքում Երեխայի նկատմամբ իրականացվում են գույքային շրջանառությանը բնորոշ գործողություններ, երբ Երեխայի առքին ու վաճառքին կարող են նախորդել գնելու կամ վաճառելու առաջարկը, պայմանների քննարկումները և բանակցությունները, տարաձայնությունների հարթումը, համաձայնությունների

⁶⁰Հոդվածի 2-րդ մասում սահմանված են արարքը ծանրացնող հետևյալ հանգամանքները՝

1. պաշտոնական դիրքն օգտագործելով կատարելը,
2. երկու կամ ավելի երեխաների նկատմամբ կատարելը,
3. ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով կատարելը,
4. կեղծ որդեգրում կատարելու միջոցով կատարելը:




ձեռք բերումը: Արդյունքում ձևավորվում, հստակեցվում և որոշվում են գործարքի առարկան, պայմանները, կատարման ժամանակը (իսկ տարաժամկետ վճարման (հատուցման) դեպքում՝ ժամկետները) և այլ մանրամասներ (օրինակ, երեխայի հանձնման և ընդունման ձևը և այլն): «Գործարքը» հատուցելի է: Հատուցման եղանակը չի ազդում արարքի որակման վրա: Այն կարող է արտահայտվել նյութական հատուցման ցանկացած եղանակով՝ դրամական միջոցներ, բնափրային պաշարներ, զարդեր և այլն: Պարտքի մարումն երեխայի դիմաց նույնպես հատուցելի գործարք է⁶¹:

Հնարավոր է, որ «գործարքի» հատուցելիությունը քողարկված լինի գնորդի կողմից մատուցված ծառայություններով, բարեգործությամբ, օժանդակությամբ կամ այլ եղանակով նյութական օգնություն ցուցաբերելով, ինչը նույնպես պետք է հանգեցնի արարքի որակման՝ քննարկվող հոդվածով:

Սուբյեկտիվ կողմից հանցագործությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Երեխային վաճառող անձը գիտակցում է իր գործողությունների հանրային վտանգավորությունը, մասնավորապես այն, որ իր երեխային վաճառելով ոտնձգություն է կատարում երեխայի ազատության և անձնական իրավունքների դեմ: Պետք է, սակայն, հաշվի առնել, որ փոխհատուցման պայմանով ընդմիջտ հանձնելով իր երեխային այլ անձի խնամքին, վաճառողը, իր կարծիքով, դա կատարում է՝ ելնելով երեխայի լավագույն շահերից՝ նրա համար իր տրամադրածից ավելի բարվոք պայմաններ ապահովելու նպատակով: Գնորդն իր հերթին գիտակցում է, որ

⁶¹Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ. Պայքար մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ: Մոդուլ 3: Երևան, 2011, էջ 48:




փոխհատուցում տալով ընդմիշտ ստանձնում է երեխայի խնամքը և ստանում նրան խնամելու, դաստիարակելու հնարավորություն և իրավունք:

Արարքը ճիշտ որակելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր քրեական գործով առանձին-առանձին պարզել վաճառողի և խնամքը ստանձնողի իրական շարժառիթներն ու նպատակները:

Երեխային գնելու համար տվյալ հանցագործության տեսանկյունից խնամքը ստանձնողի պարագայում շարժառիթ կարող է հանդիսանալ, օրինակ, երեխա ունենալու ցանկությունը կամ անբարենպաստ պայմաններում ապրող կամ վատ ծնողների խնամքի տակ գտնվող երեխային փրկելու ձգտումը կամ երեխայի շահերից բխող այլ նպատակները: Եթե երեխան գնվում է հետագայում վերավաճառելու կամ գնորդի շահադիտական այլ նպատակներով (օրինակ՝ պետությունից կամ այլ կառույցներից օգնություն ստանալու, երեխային մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու կամ ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով շահագործման նպատակով), ապա նրա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով:

Իր երեխային վաճառող ծնողի արարքի նկատմամբ պետք է ցուցաբերել նույն մոտեցումը: Շարժառիթները նույնպես կարող են լինել «ի շահ երեխայի»՝ նրան ավելի բարենպաստ պայմաններ տրամադրելու նպատակով: Իսկ երբ հղիության ընթացքում ծնողի հետ ձեռք է բերվում համաձայնություն «ի շահ երեխայի» ապագա երեխային վաճառելու վերաբերյալ, ապա որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների բացակայության դեպքում արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի 35-168-րդ հոդվածներով՝ որպես հանցագործության



Նախապատրաստություն: Սակայն, եթե ծնողը օգտվում է երեխայի նկատմամբ իր իրավունքներից կամ հնարավորություններից և շահ ստանալու, այլ ոչ՝ երեխայի բարօրությունն ապահովելու համար է վաճառում նրան, ապա պետք է քննարկել այդ արարքը ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով որակելու հարցը: Երեխայի թրաֆիքինգ կամ շահագործում պետք է որակել նաև այն դեպքերը, երբ ծնողն ի սկզբանե, կանխամտածված հղիանում և երեխա է ծննդաբերում վաճառելու նպատակով:


Եթե երեխան վաճառվում է ծնողի նկատմամբ կիրառված հարկադրանքի որևէ եղանակի ազդեցության ներքո, ապա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով: Այս դեպքում ծնողը նույնպես հանդիսանում է հանցագործությունից տուժող⁶²:

Այս հանցագործության սուբյեկտը կարող է լինել և՛ ընդհանուր, և՛ հատուկ:

Որդեգրման՝ որպես երեխայի խնամքի տեղավորման ձևի, մասին արդեն խոսվել է: ՀՀ քր. օր.-ի 168-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի իմաստով խոսվում է կեղծ որդեգրման մասին, երբ խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը քողարկվում է որդեգրմամբ: Այս պարագայում հնարավոր է, որ անգամ առկա լինեն անհրաժեշտ փաստաթղթերը: Դրանք կարող են լինել և՛ իրական, և՛ կեղծ:

ՀՀ քր. օր.-ի 170-րդ հոդվածի համաձայն, ծնողի կամ այն անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն, կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ

⁶²Նույն տեղում, էջ 50:



դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, համարվում է հանցագործություն⁶³:

Երեխային դաստիարակելու ծնողների պարտականություններն ամրագրված են ՀՀ ընտանեկան օրենսգրքի 11-րդ գլխում⁶⁴ և Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում, որի համաձայն, յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք: Ընդ որում, երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները:

Որքան էլ երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացվում է ընտանիքում, միևնույն է այդ ապահովելու նպատակով պետությունը

⁶³ ՀՀ քր. օր.-ի 170-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է սահմանում նույն արարքի համար, որը զուգորդվել է անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքով: Տվյալ դեպքում դաժանությունը կարող է արտահայտվել երեխային սննդից զրկելու, նրան երկար ժամանակ փակի տակ միայնակ պահելու, նրա արժանապատվությունը պարբերաբար ստորացնելու, նրան ծեծի, ծաղրուծանակի ենթարկելու և այլ եղանակներով:


⁶⁴ Այդ օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ): Ծնողական իրավունքները դադարում են երեխաների տասնութ տարեկանը լրանալով, ինչպես նաև սահմանված կարգով երեխաների ամուսնանալու, օրենքով նախատեսված կարգով մինչև չափահաս դառնալը երեխաների կողմից լրիվ գործունակություն ձեռք բերելու դեպքերում:

Նույն օրենսգրքի 51-րդ հոդվածը սահմանում է երեխաներին դաստիարակելու և կրթություն տալու՝ ծնողների իրավունքներն ու պարտականությունները: Հոդվածի համաձայն, ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակել իրենց երեխաներին: Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին: Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք:

և նրա համապատասխան մարմիններն օգնություն են ցույց տալիս ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին երեխայի բարեկեցությունն ապահովելու համար, խրախուսում են ընտանիքին աջակցող հոգեբանական, մանկավարժական խորհրդատվական ծառայությունների գործունեությունը: Այսինքն, բոլոր դեպքերում պետությունը չի կարող զերծ մնալ երեխայի դաստիարակության գործընթացից անկախ այն հանգամանքից՝ երեխան գտնվում է ընտանիքում, թե ոչ:

Հանցագործությունը դրսևորվում է անգործությամբ երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով: Նշված պարտականությունների չկատարումն առկա է այն դեպքում, երբ ծնողը կամ այն անձը, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն, կամ մանկավարժը կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողներն ունենում են դրանք կատարելու իրական հնարավորություն, սակայն դրսևորելով անգործություն՝ չեն կատարում դրանք:

Երեխային դաստիարակելու պարտականությունները պատշաճ կատարելը հարաբերական և գնահատողական կատեգորիա է, որը կարող է խնդիրներ առաջացնել պրակտիկայում, քանի որ դաստիարակելու պարտականությունը պատշաճ կամ ոչ պատշաճ կատարելը պետք է որոշվի՝ հաշվի առնելով բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ: Օրինակ, ընտանիքի սոցիալ-կուլթական վիճակը, ընտանիքի կազմը, ազգային կամ ընտանեկան սովորույթներն ու առանձնահատկությունները, ընտանիքի բնակության վայրը և այլն: Երեխային դաստիարակելու պարտականությունները պատշաճ չկատարելն արտահայտվում է դրանց



նկատմամբ անբարեխիղճ, որոշակի պահանջներին, կանոններին չհամապատասխանող, թերի վերաբերմունքով (օրինակ, դաստիարակչական մանկական հաստատությունում ներքին կարգապահական կանոնները չպահպանելը և այլն):


Հանցագործությունը կարող է կատարել ծնողը կամ այն անձը, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն (խորթ ծնողը⁶⁵, խնամակալը, հոգաբարձուն), կամ մանկավարժը կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողը⁶⁶:

ՀՀ քր. օր. 171-րդ հոդվածի համաձայն, հանցագործություն է երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն այն անձի կողմից, ում վրա այդ պարտականությունները դրված են ըստ ծառայության, կամ այն անձի կողմից, ով այդ պարտականությունը կատարում է հատուկ հանձնարարությամբ կամ ստանձնել է կամավոր, եթե դրա հետևանքով երեխայի առողջությանն անզգուշությամբ պատճառվել է միջին ծանրության վնաս:

Հանցագործությունը ոտնձգություն է երեխայի նորմալ ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման դեմ:

⁶⁵ՀՀ ընտանեկան օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն, խորթ ծնողները պարտավոր են դաստիարակել և խնամել իրենց ամուսնու՝ նախկին ամուսնությունից ծնված և իրենց հետ համատեղ ապրող երեխաներին (խորթ երեխաներին):

⁶⁶ Տոնոյան Ն. Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ /ուսումնական ձեռնարկ/: Երևան, Լիմուշ, 2014, էջեր 67-68:




Քննարկվող հանցագործության հանցակազմը նյութական է, քանի որ հետևանքների առաջացումը համարվում է պարտադիր պայման հանցանքն ավարտված ճանաչելու համար: Հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներ են՝

1. հանրորեն վտանգավոր արարքը (երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը),
2. հանրորեն վտանգավոր հետևանքը (երեխայի առողջությանը պատճառված միջին ծանրության վնասը),
3. պատճառական կապն արարքի և հետևանքի միջև:

Եթե վերոնշյալ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով երեխայի առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր վնաս, ապա արարքը պետք է որակել միայն որպես անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառել (ՀՀ քր. օր.-ի 120-րդ հոդված), իսկ եթե անզգուշությամբ վրա է հասել երեխայի մահ՝ միայն որպես անզգուշությամբ մահ պատճառել (ՀՀ քր. օր.-ի 109-րդ հոդված): Համակցությունը նման դեպքերում բացակայում է, և արարքը լրացուցիչ չի որակվում ՀՀ քր. օր.-ի 171-րդ հոդվածով:

Եթե երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարող կամ ոչ պատշաճ կատարող անձն իրականացրել է նաև երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու ձևով հանցանք, ապա արարքը որակվում է հանցագործությունների համակցությամբ՝ ՀՀ քր. օր.-ի 170-րդ և 171-րդ հոդվածով: Իսկ եթե ծնողի մոտ առկա է եղել անուղղակի դիտավորություն



այն հետևանքների նկատմամբ, որոնք առաջացել են երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով, ապա արարքը նույնպես պետք է որակվի համակցությամբ, բայց այս անգամ՝ ՀՀ քր. օր.-ի 170-րդ հոդվածով և այն հոդվածով, որով նախատեսված է առողջությանը պատճառված փաստացի վնասը:


Քննարկվող հանցագործությունը բնութագրվում է անզգուշության երկու ձևով՝ և՛ ինքնավստահությամբ, և՛ անփութությամբ⁶⁷:

ՀՀ քր. օր.-ի 172-րդ հոդվածով քրեորեն պատժելի է խնամակալությունը կամ հոգաբարձությունը շահադիտական կամ այլ անձնական դրդումներով օգտագործելը կամ խնամարկյալին դիտավորությամբ առանց հսկողության կամ անհրաժեշտ օգնության թողնելը, որն առաջացրել է խնամարկյալի իրավունքների և օրինական շահերի էական սահմանափակում:

Խնամակալության և հոգաբարձության հարցերը կարգավորված են ՀՀ ընտանեկան օրենսգրքով, որի 134-րդ հոդվածի համաձայն, խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանվում է այն երեխաների նկատմամբ⁶⁸, որոնք մնացել են առանց ծնողական խնամքի՝ նրանց պահելու, դաստիարակելու և կրթություն տալու, ինչպես նաև նրանց իրավունքները և շահերը պաշտպանելու նպատակներով: Իսկ նույն օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն, երեխաների խնամակալներ (հոգաբարձուներ) կարող են նշանակվել միայն չափահաս գործունակ անձինք՝ իրենց համաձայնությամբ: Երեխայի

⁶⁷Նույն տեղում, էջ 70:

⁶⁸Խնամակալություն սահմանվում է 14 տարին չլրացած անչափահասների, իսկ հոգաբարձություն նշանակվում է 14-ից 18 տարեկան անչափահասների նկատմամբ:



խնամակալ (հոգաբարձու) նշանակելիս հաշվի են առնվում խնամակալի (հոգաբարձուի) բարոյական և անձնական այլ հատկանիշներ, խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունները կատարելու նրա ունակությունները, խնամակալի (հոգաբարձուի) և երեխայի փոխհարաբերությունները, երեխայի նկատմամբ խնամակալի (հոգաբարձուի) ընտանիքի անդամների վերաբերմունքը, ինչպես նաև երեխայի ցանկությունը, եթե դա հնարավոր է⁶⁹:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 136-րդ հոդվածը սահմանում է, որ դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում պետության լրիվ խնամքի տակ գտնվող երեխաների նկատմամբ խնամակալ (հոգաբարձու) չի նշանակվում: Նրանց պարտականությունների կատարումը դրվում է այդ կազմակերպությունների վրա: Խնամակալների (հոգաբարձուների) կողմից երեխաներին նշված կազմակերպություններում ժամանակավորապես տեղավորելը չի դադարեցնում այդ երեխաների նկատմամբ խնամակալի (հոգաբարձուի) իրավունքներն ու պարտականությունները: Խնամակալը (հոգաբարձուն) իրավունք չունի խոչընդոտելու ծնողների և մերձավոր այլ ազգականների հետ երեխայի շփվելուն, բացառությամբ, երբ նման շփումը չի համապատասխանում երեխայի շահերին: Խնամակալն ու հոգաբարձուն խնամակալության (հոգաբարձության) տակ գտնվող երեխայի


⁶⁹Խնամակալ (հոգաբարձու) չեն նշանակվում քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ հիվանդ անձինք, կյանքի և առողջության նկատմամբ դիտավորյալ հանցագործություններ կատարած անձինք, խնամակալների (հոգաբարձուների) պարտականություններից հեռացված անձինք, ծնողական իրավունքներից զրկված անձինք, ծնողական սահմանափակ իրավունքներով անձինք, նախկին որդեգրողները, եթե որդեգրումը վերացվել է նրանց մեղքով, ինչպես նաև այն անձինք, ովքեր առողջական վիճակով չեն կարող իրականացնել երեխայի դաստիարակության պարտականությունը:

նկատմամբ խնամակալության և հոգաբարձության պարտականությունները կատարում են անհատույց:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի նշված դրույթներից բխում է, որ անչափահասի նկատմամբ նշանակված խնամակալներն ու հոգաբարձուները պարտավոր են դաստիարակել խնամարկյալներին, հոգ տանել նրանց ֆիզիկական զարգացման և ուսման մասին, պաշտպանել նրանց իրավունքներն ու շահերը: Եթե խնամակալը կամ հոգաբարձուն պատշաճ չի կատարում իր վրա դրված պարտականությունները, ապա խնամակալության և հոգաբարձության մարմինը նրան հեռացնում է այդ պարտականությունների կատարումից: Սակայն խնամակալի կամ հոգաբարձուի կողմից իրենց իրավունքները չարաշահելու դեպքում առաջ է գալիս նրա քրեական պատասխանատվության հարցը:

Հանցագործությունն արտահայտվում է և՛ գործողությամբ (խնամակալությունը կամ հոգաբարձությունը շահադիտական կամ այլ անձնական դրդումներով օգտագործելու դեպքում), և՛ անգործությամբ (խնամարկյալին դիտավորությամբ առանց հսկողության կամ անհրաժեշտ օգնության թողնելու դեպքում): Այն կարող է իրագործվել խնամակալությունը կամ հոգաբարձությունը շահադիտական կամ այլ անձնական դրդումներով օգտագործելու կամ խնամարկյալին դիտավորությամբ առանց հսկողության կամ անհրաժեշտ օգնության թողնելու մեջ:

Քննարկվող հանցակազմը նյութական է, քանի որ հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հետևանքը՝ խնամարկյալի իրավունքների և օրինական շահերի էական սահմանափակումը:



Խնամարկյալի իրավունքների և օրինական շահերի
Էական սահմանափակումն արժեքավորվող հասկացություն
Է, որի գնահատման հարցը թողնված Է իրավակիրառողի
լուծմանը (օրինակ՝ նյութական օգնությունից զրկելը,
կրթական ծրագրերին չմասնակցելը և այլն)⁷⁰:

ՀՀ քր. օր.-ի 173-րդ հոդվածի համաձայն, քրեորեն
պատժելի Է ծնողի կողմից երեխային կամ տասնութ
տարին լրացած անաշխատունակ զավակին դատարանի
վճռով ապրուստի միջոցներ վճարելուց երեք ամսից ավելի
չարամտորեն խուսափելը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 68-րդ հոդվածի
համաձայն, ծնողները պարտավոր են պահել իրենց
երեխաներին: Երեխաներին ապրուստի միջոց
տրամադրելու կարգն ու պայմանները ծնողները որոշում
են ինքնուրույն: Ծնողները կարող են համաձայնություն
կնքել իրենց երեխաներին պահելու մասին (ալիմենտ
վճարելու վերաբերյալ համաձայնություն)՝ ՀՀ ընտանեկան
օրենսգրքի 15-րդ գլխին համապատասխան⁷¹:

⁷⁰ ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս/ Գ. Ղազիսյանի
խմբագրությամբ: Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 328:

⁷¹ Եթե ծնողներն ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց
երեխաներին, ապա վերջիններիս պահելու համար միջոցները
(ալիմենտը) ծնողներից բռնագանձվում են դատական կարգով, որը
նախատեսված Է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածով, որի
համաձայն երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ
նրա ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում
ծնողներից ալիմենտի բռնագանձումը կատարվում Է դատական
կարգով՝ հետևյալ չափերով ամենամսյա վճարումներ կատարելու
միջոցով՝

ա) մեկ երեխայի համար ծնողների վաստակի և (կամ) այլ եկամտի
մեկ քառորդը:

բ) երկու երեխաների համար՝ մեկ երրորդը:

գ) երեք և ավելի երեխաների համար՝ կեսը:

Նախատեսված ամենամսյա վճարումների չափը յուրաքանչյուր
երեխայի համար չպետք Է պակաս լինի սահմանված նվազագույն
աշխատավարձի տասնապատիկի չափից, իսկ գործազրկության
նպաստ ստացող ծնողներից ալիմենտ բռնագանձելիս՝ գործազրկության
նպաստի 20 տոկոսից:


Վերը նախատեսված բաժինների չափերը կարող են դատարանով
նվազեցվել կամ ավելացվել՝ հաշվի առնելով կողմերի գույքային ու
ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը:

Հանցագործությունից տուժող կարող են հանդիսանալ ինչպես անչափահաս, այնպես էլ անաշխատունակ չափահաս երեխաները, որոնց ծնողները չարամտորեն խուսափում են ապրուստի միջոցներ վճարելուց:

Հանցագործությունն արտահայտվում է ծնողի կողմից երեխային կամ տասնութ տարին լրացած անաշխատունակ զավակին դատարանի վճռով ապրուստի միջոցներ վճարելուց երեք ամսից ավելի չարամտորեն խուսափելու մեջ: Ապրուստի միջոցներ վճարելուց խուսափելը կարող է չարամիտ համարվել, եթե ծնողը պարբերաբար, տևականորեն (3 ամսից ավելի ժամկետով), առանց հարգելի պատճառների հրաժարվում է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճիռը կատարելուց: Խուսափելու չարամտության հատկանիշի համար բնութագրական է նաև դատարանի անունից պաշտոնական նախագգուշացման առկայությունը կամ դատական ակտերի հարկադիր կատարման մարմիններ ներկայանալուց խուսափելը կամ այլ նմանատիպ գործողություններով վճռի կատարումից խուսափելը⁷²:

Ապրուստի միջոցներ վճարելուց խուսափելու եղանակներ կարող են լինել բնակության, աշխատանքի վայրը հաճախակի և առանց հարգելի պատճառների փոխելը, եկամտի իրական աղբյուրները թաքցնելը և այլն:

⁷² Տոնոյան Ն. Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ /ուսումնական ձեռնարկ/: Երևան, Լիմուշ, 2014, էջ 75:




Խնամակալները, հոգաբարձուները, ինչպես նաև այն անձինք, ում վրա դատարանի վճռով երեխային դաստիարակելու պարտականություն է դրվել (օրինակ՝ հեռավոր ազգականներ), չեն կարող ենթարկվել քրեական պատասխանատվության քննարկվող հանցագործության համար: Նրանք կենթարկվեն պատասխանատվության ՀՀ քր. օր.-ի 170-րդ հոդվածով, քանի որ երեխային ապրուստի միջոցներ չվճարելով, վերջիններս չեն կատարում կամ ոչ պատշաճ են կատարում երեխայի դաստիարակելու պարտականությունը:

Երեխաների իրավունքներն ու շահերը պաշտպանվում են ՀՀ քր. օր.-ի նաև այլ գլուխներում նախատեսված հոդվածներով: Մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի 262-րդ հոդվածով քրեորեն պատժելի է պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելը, դեկավարելը կամ պահելը կամ որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելը կամ այլ անձի պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելը կամ գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելը, եթե բացակայում են նույն օրենսգրքի 132-րդ կամ 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները: Այդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը նախատեսում է ծանրացնող հանգամանք, այն է՝ անչափահասին օգտագործելով կատարելը:

Հանցագործությունը դրսևորվում է այլընտրանքային ակտիվ գործողություններով.

- գործողություններ, որոնք ուղղված են պոռնկությամբ



զբաղվելու համար հաստատություն ստեղծելուն, ղեկավարելուն կամ պահելուն⁷³,

- գործողություններ, որոնք ուղղված են որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելուն⁷⁴,
- գործողություններ, որոնք ուղղված են այլ անձի՝

⁷³ Պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելը դրսևորվում է այնպիսի գործողություններով, որոնց արդյունքում ծագում է պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելու կառույց: Դա կարող է լինել, օրինակ, օրենքով սահմանված կարգով համապատասխան մարմիններում գրանցված կազմակերպություն (ՍՊԸ, ՓԲԸ կամ այլ), որն ունի այդ կազմակերպության գործունեության տեսակներին համապատասխան արտոնագրեր, ինչպես նաև տարածք և գույք: Դրանք, սակայն, կարող են հանդիսանալ հաստատության ստեղծման իրական նպատակների (պոռնկությամբ զբաղվելու համար) քողարկման ձև:

Պոռնկությամբ զբաղվելու համար ստեղծված կառույցը կարող է լինել նաև ամբողջությամբ անօրինական և ընդհատակյա, երբ այն որևէ կերպ չի գրանցվել որպես գործող հաստատություն:

Պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ղեկավարելը դրսևորվում է արդեն ստեղծված հաստատության վարչարարական գործառույթների իրականացմամբ, բնականոն գործունեության ապահովման համար որոշումներ կայացնելով և դրանց կատարմանն ուղղված միջոցառումներ իրականացնելով (դերերի բաշխում, նյութատեխնիկական մասի համակարգում, տարբեր միջոցառումների կազմակերպում, պոռնիկների հավաքագրում, ընտրություն կամ նրանց հետ համապատասխան պայմանավորվածությունների ձեռքբերում, գործունեության կառուցակարգերի ընտրություն, գովազդների տեղադրում, հաճախորդներով ապահովելուն ուղղված միջոցառումների իրականացում և այլն): Պոռնկությամբ զբաղվելու համար հաստատությունը, որպես կանոն, ղեկավարվում է տնօրենի կողմից:

Պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն պահելը դրսևորվում է հաստատության առօրյա բնականոն գործունեությունն ապահովելով (սնունդ, խմիչք, պահպանակներ, անհրաժեշտ գույք և ծառայություններ, ծագող տարբեր խնդիրների լուծում, պոռնիկների հավաքագրում կամ նրանց հետ համապատասխան պայմանավորվածությունների ձեռքբերում):

Պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն պահողը հաստատության բնականոն ամենօրյա գործունեության աշխատանքները փաստացի կանոնակարգողն է և դրանց նկատմամբ հսկողություն իրականացնողը:

⁷⁴ Որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելը դրսևորվում է արդեն իսկ գոյություն ունեցող օրինական հաստատությունը (հյուրանոցը, գիշերային ակումբը, սրճարանը, բաղնիքը և այլն) պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելով: Հաստատության առանձին աշխատակիցներ ինքնուրույն կարող են կիրառել իրենց գործառույթներն այլ անձանց պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու համար:

պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելուն⁷⁵,

- գործողություններ, որոնք ուղղված են գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելուն⁷⁶:

Պետք է հաշվի առնել, որ շահույթ ստանալու օրինական նպատակ հետապնդող ծառայություններ մատուցող հաստատությունները (օրինակ՝ հասարակական սննդի, զվարճանքի հաստատությունները և այլն) իրենց գործունեությունն իրականացնում են հրապարակային օֆերտայի սկզբունքով: Դա նշանակում է, որ այդ կազմակերպությունների ծառայություններից իրավունք ունի օգտվելու ցանկացած անձ, եթե օրենքով նախատեսված չեն արգելքներ կամ սահմանափակումներ: Եվ եթե, օրինակ, այդ վայրն երրորդ անձանց կողմից օգտագործվել է որպես պոռնկությամբ զբաղվելու համար պայմանավորվածություններ ձեռք բերելու հավաքատեղի, որտեղ վճարվել է նաև պատվիրված սննդամթերքի համար, ապա դա ինքնին չի կարող որակվել որպես արարք,

⁷⁵ Այլ անձի պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելը դրսևորվում է բնակարանը կամ որևէ այլ կացարան, որոնք նախատեսված չեն հանրային օգտագործման համար, պոռնկությամբ զբաղվելու նպատակով այլ անձի պարբերաբար տրամադրելու ձևով: Նման կացարան կարող է հանդիսանալ նաև ավտոմեքենան: Պոռնկությամբ զբաղվող անձի հետ սեռական հարաբերություն ունենալու համար կացարանը միանվագ տրամադրելը հանցակազմ չի պարունակում:

⁷⁶ Գույքային օգուտ ստանալով պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելը դրսևորվում է հիմնականում կավատության ձևով՝ որպես գույքային օգուտի դիմաց սեռական հարաբերության համար միջնորդություն: Այդպիսի միջնորդություն պետք է գնահատել նաև պոռնկությամբ զբաղվողների տվյալներով կայքէջերի ստեղծումը կամ հայտարարությունների տեղադրումը: Գույքային օգուտ ստանալով պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստել ասելով՝ պետք է հասկանալ նաև այն դեպքերը, երբ հանցավորը գույքային օգուտի դիմաց իր գործողություններով բարենպաստ պայմաններ է ստեղծում այլ անձի՝ պոռնկությամբ զբաղվելու համար: Այդ գործողությունները կարող են դրսևորվել անձի՝ պոռնկությամբ զբաղվելուն խոչընդոտող տարբեր միջադեպերից, հանցավոր տարրերի ոտնձգություններից պաշտպանելով, իրավապահ մարմինների հետապնդումներից թաքցնելով, պոռնկությամբ զբաղվելու «թույլտվություն ստանալու» համաձայնություն ձեռք բերելով և այլն:

որը կազմում է հաստատության սեփականատերերի, տիրապետողների կամ օգտագործողների կողմից գույքային օգուտ ստանալով պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելու հանցակազմ⁷⁷:


Արարքը ՀՀ քր. օր.-ի 262-րդ հոդվածով կարող է որակվել, եթե բացակայում են երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման հատկանիշները:

ՀՀ քր. օր.-ի 263-րդ հոդվածի 2-րդ մասը որպես առանձին քրեորեն պատժելի արարք նախատեսում է համակարգչային համակարգի միջոցով մանկական պոռնոգրաֆիայի ներկայացնելը կամ համակարգչային համակարգում կամ համակարգչային տվյալների պահպանման համակարգում մանկական պոռնոգրաֆիայի պահպանելը:

Մանկական պոռնոգրաֆիա ասելով պետք է հասկանալ պոռնկագրական նյութերը, որոնք տեսապատկերում են բացահայտ սեռական գործողություններին երեխայի մասնակցությունը կամ այդպիսի գործողություններին մասնակցող երեխայի իրական պատկերները: ՀՀ քր. օր.-ի 263-րդ հոդվածի 2-րդ մասում նկարագրված է երկու արարք, որոնցից յուրաքանչյուրն ինքնին առանձին հանցակազմ է պարունակում՝

- համակարգչային համակարգի միջոցով մանկական պոռնոգրաֆիա ներկայացնելը,
- համակարգչային համակարգում կամ համակարգչային տվյալների պահպանման համակարգում մանկական պոռնոգրաֆիա պահպանելը:

⁷⁷ Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Ս. Հայաստանի Հանրապետությունում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները: Երևան, 2013, էջեր 114-117:



Համակարգչային համակարգի միջոցով մանկական պոռնոգրաֆիա ներկայացնելը կարող է դրսևորվել այդ բովանդակության նյութը համակարգչային համակարգով այլ անձանց հասանելի դարձնելով: Այսպես, մանկական պոռնոգրաֆիա տարածելը կամ փոխանցելն այդ նյութի ներկայացման եղանակներից են⁷⁸:

Համակարգչային համակարգում կամ համակարգչային տվյալների պահպանման համակարգում մանկական պոռնոգրաֆիա պահպանելը նշանակում է այդպիսի նյութի պահպանումը համակարգչային համակարգի հիշողության մեջ⁷⁹:

⁷⁸ ՀՀ քր. օր.-ի 263-րդ հոդվածի 2-րդ մասում նկարագրված արարքն ամբողջովին չի նկարագրում «Համակարգչային հանցագործությունների մասին» Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածում տրված սահմանումները: Մասնավորապես, անհրաժեշտ է քրեականացնել նաև համակարգչային համակարգի միջոցով տարածելու նպատակով մանկական պոռնկագրական արտադրանք թողարկելը, համակարգչային համակարգի միջոցով մանկական պոռնկագրական նյութեր առաջարկելը կամ գովազդելը կամ այլ կերպ հասանելի դարձնելը կամ տարածելը կամ փոխանցելը կամ իր կամ այլ անձի համար ձեռք բերելը:


⁷⁹ Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ. Հայաստանի Հանրապետությունում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները: Երևան, 2013, էջեր 121-122:

1. Ռենոլդն ընդդեմ Ֆրանսիայի գործով (2008թ.-ի հոկտեմբերի 16-ի վճիռ, Renold v. France, application no. 5608/05) [https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:\[%22001-88972%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-88972%22]})
2. ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս (չորրորդ հրատարակություն)/ Գ. Ղազինյանի խմբագրությամբ. Եր.: ԵՊՀ հրատ., 2009, 2012, 2013 թթ.,
3. Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ. Հայաստանի Հանրապետությունում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները: Երևան, 2013,
4. Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ. Պայքար մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ: Մոդուլ 2: Երևան, 2011,
5. Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ. Պայքար մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ: Մոդուլ 3: Երևան, 2011,
6. Ղամբարյան Ա., Թումասյան Դ. Երեխաների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները (ձեռնարկ քննիչների համար): Երևան, 2015,
7. Տոնոյան Ն. Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ /ուսումնական ձեռնարկ/: Երևան, Լիմուշ, 2014,
8. «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» կոնվենցիա // <https://www.arlis.am/Document-View.aspx?docID=29926>,



Լրացուցիչ մեդիա-նյութերը
նախատեսված են Ձեզ
հետաքրքրող նյութի մասին
հավելյալ գիտելիքներ
ստանալու համար:

9. ՀՀ վճարելի դատարանի 2010թ. դեկտեմբերի 23-ի թիվ ԵՄԴ/0086/01/10 որոշումը // datalex.am,
10. Наумов А.В. Российское уголовное право: курс лекций. Т.2. Особенная часть. М., 2007 // <https://www.twirpx.com/file/587656/>,
11. Уголовный закон в практике мировой судьи: научно-практическое пособие/ Под ред. А.В. Галаховой. М., 2007 // <http://lawlibrary.ru/izdanie2055588.html>,
12. Бойко Н.В. Ответственность за незаконное лишение свободы по советскому уголовному праву. Харьков, 1989 // <http://www.law.edu.ru/book/book.asp?book-ID=122281>,
13. Адельханян Р.А. Расследование похищения человека. М., 2000 // <http://www.combook.ru/product/1837061/>,
14. Логанов И.И. Свобода личности. М., 1972,
15. Рассказов Л., Упоров И. Категория “свобода” в уголовном праве России// Уголовное право, 2000, N2 // <https://www.twirpx.com/file/561232/>,
16. Уголовное право Российской Федерации. Особенная часть/ Под ред. Б.В. Здравомыслова. М., 1996 // <https://www.twirpx.com/file/34812/>,
17. Оберемченко А.Д. Развратные действия: уголовно-правовая характеристика и проблемы квалификации. Автореферат диссертации на канд. юрид. наук. Краснодар, 2014 // <https://www.dissercat.com/content/razvratnye-deistviya-ugolovno-pravovaya-kharakteristika-i-problemy-kvalifikatsii>.



Հավաքագրել

Տուժողի կամավոր համաձայնությունը ստանալուն ուղղված գործողություն կամ գործունեություն է, այսինքն՝ որոշակի հատկանիշների հիման վրա անձին հասարակությունից առանձնացնելը և/կամ ցուցակագրելը, որի նպատակը տուժողի շահագործումն է:

Տեղափոխել

Տուժողին մեկ վայրից այլ վայր տանելն երկրի ներսում (ներքին թրաֆիքինգ կամ շահագործում) կամ երկրից դուրս (անդրազգային թրաֆիքինգ կամ շահագործում) և/կամ աջակցությունը սահմանն անօրինական հատելու հարցում:

Փոխանցել

Տուժողին թողնել այլ անձանց տրամադրության տակ նրան վաճառելուց կամ այլ եղանակով օտարելուց հետո (նվիրատվություն, պարտքի մարում, վնասի փոխհատուցում, վարձակալություն, փոխանակություն և այլն), որը կարող է լինել հատուցելի կամ անհատույց, որոշակի ժամկետով կամ անժամկետ, որոշակի պայմաններով կամ առանց դրանց:

Ստանալ

Առուվաճառքի, նվիրատվության, փոխանակության, փոխառության կամ այլ գործարքի արդյունքում



Ուշադրությամբ ծանոթացե՛ք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձե՛ք դրանց:



Մինչև 15 րոպե

թափիքինգի ենթարկված անձի ձեռք բերում, որը կարող է լինել հատուցելի կամ անհատույց, որոշակի ժամկետով կամ անժամկետ, որոշակի պայմաններով կամ առանց դրանց:

Պարտապանի ստրկացում


Այնպիսի վիճակը կամ դրությունը, երբ պարտապանը որպես պարտքի ապահովման միջոց գրավ է դնում կամ իր աշխատանքը, կամ իրենից կախյալ վիճակում գտնվող անձի աշխատանքը, եթե կատարվող աշխատանքի արժեքը չի հաշվակցվում տվյալ պարտքի մարմանը, կամ եթե այդ աշխատանքի տևողությունը չի սահմանափակվում և դրա բնույթը չի կոնկրետացվում:

Ճորտական վիճակ

Հողի այնպիսի օգտագործումը, որի դեպքում օրենքով, ավանդույթի ուժով կամ փոխադարձ համաձայնության հիման վրա օգտագործողը պարտավոր է ապրել և աշխատել ուրիշին պատկանող հողատարածքի վրա և վարձատրությամբ կամ առանց դրա որոշակի աշխատանք կատարել այդ սեփականատիրոջ օգտին ու չի կարող փոփոխել իր նման վիճակը:

Երեխաների մարմնավաճառություն

Երեխայի օգտագործումը սեռական բնույթի գործունեության մեջ վարձատրության կամ ցանկացած այլ տեսակի հատուցման դիմաց:



Հարց 1.

Ինչպե՞ս կարող է որակվել երեխային առանց ծնողների համաձայնության գաղտնի այլ վայր տեղափոխելը և պահելը, որը չի գիտակցում իր նկատմամբ կատարվող արարքի բնույթն ու նշանակությունը՝

- ա. Երեխային ապօրինի ազատությունից զրկելը, որը կատարվել է նրա անօգնական վիճակն օգտագործելով:
- բ. Երեխայի առևանգումը, որը կատարվել է նրա անօգնական վիճակն օգտագործելով:
- գ. Չի հանգեցնում առևանգման համար քրեական պատասխանատվության, քանի որ այն երեխայի առևանգումը, որը չի գիտակցում իր նկատմամբ կատարվող արարքի բնույթն ու նշանակությունը և առհասարակ չի գիտակցում ազատությունը, նախատեսված չէ, որպես հանցակազմի ինքնուրույն հատկանիշ:
- դ. Երեխային ծնողներից բաժանելը:

Հարց 2.

4 տարեկան Ա-ի ծնողը, ով ապրում է երեխայից առանձին, որոշում է երեխային մանկապարտեզից վերցնել առանց մյուս ծնողի գիտության և տեղափոխել այլ երկիր:

Ի՞նչպես պետք է որակել երեխային այլ երկիր տեղափոխած ծնողի գործողությունները՝



Ընտրել ճիշտ տարբերակը:
Ընտրությունը կատարվում է համապատասխան հարցերի համար նախատեսված պատասխանների ճիշտ տարբերակի տառը նշելու միջոցով:




Մինչև 40 րոպե

- ա. Ենթակա չէ քրեական պատասխանատվության, քանի որ նրա արարքում առկա չէ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցակազմ:
- բ. Ենթակա է քրեական պատասխանատվության երեխային առևանգելու համար, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում:
- գ. Ենթակա է քրեական պատասխանատվության երեխային ազատությունից զրկելու համար, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում:
- դ. Ենթակա է քրեական պատասխանատվության երեխային ծնողից բաժանելու համար, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում:

Հարց 3.

Երեխայի շահագործման ձևերն են՝

- ա. Սեռական շահագործումը, երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը, երեխայի ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը, առքը կամ վաճառքը, երեխայի օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:
- բ. Երեխայի ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը, առքը կամ վաճառքը, երեխային շահագործելը, շահագործման մեջ դնելը կամ շահագործման մեջ պահելը:
- գ. Երեխայի օրգանները կամ հյուսվածքները վերցնելը, երեխային շահագործելը, շահագործման մեջ դնելը կամ շահագործման մեջ պահելը:
- դ. Ճիշտ պատասխանը բացակայում է:



Հարց 4.

**Երեխայի թրաֆիքինգի դեպքում
այլընտրանքային գործողություններն են՝**

- ա. Հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը:
- բ. Շահագործելը, շահագործման մեջ դնելը կամ շահագործման մեջ պահելը:
- գ. Հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, շահագործելը, շահագործման մեջ դնելը կամ շահագործման մեջ պահելը:
- դ. Հավաքագրելը, փոխանցելը, թաքցնելը, ստանալը, շահագործելը, շահագործման մեջ դնելը կամ շահագործման մեջ պահելը:

Հարց 5.

«Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» կոնվենցիայի համաձայն, երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը ներառում են՝

- ա. Ստրկության բոլոր ձևերը կամ ստրկությանը համանման աշխատանքը, ինչպիսիք են երեխաների վաճառքը և առևտուրը, պարտքային ստրկացումը կամ ճորտային կախվածությունը, ինչպես նաև հարկադիր կամ պարտադիր աշխատանքը, այդ թվում՝ երեխաների հավաքագրումը զինված ընդհարումներում օգտագործելու համար:
- բ. Երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը՝ մարմնավաճառությամբ զբաղվելու, պոռնոգրաֆիկ արտադրանքի արտադրության կամ պոռնոգրաֆիկ ներկայացումների համար:
- գ. Երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը հակաիրավական գործունեությամբ

զբաղվելու համար, աշխատանքը, որն իր բնույթով կամ իր կատարման պայմաններով կարող է վնասել երեխաների առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը:

դ. Բոլորը տարբերակները միասին վերցրած:

Հարց 6.


Ա-ն ամուսնության խոստում տալով սեռական հարաբերության մեջ է մտնում 17 տարեկան Գ-ի հետ, որից հետո հրաժարվում է իր կողմից տրված խոստումից: Գ-ի այն պնդմանը, որ հայտնելու է ծնողներին իրեն խաբելու և սեռական հարաբերություն ունենալու մասին, Ա-ն սպառնում է, որ այդ դեպքում ինքը կոչնչացնի Գ-ին պատկանող 200.000 ՀՀ դրամ արժողությամբ Apple 7S մոդելի հեռախոսը:

Ինչի՞ համար է ենթակա պատասխանատվության Ա-ն՝

- ա. Բռնաբարության, որը կատարվել է անչափահասի նկատմամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ):
- բ. Արարքում բացակայում է հանցակազմը:
- գ. Սեռական հարաբերությանը հարկադրելու (ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդված):
- դ. Գույքը ոչնչացնելու սպառնալիք տալու (ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մաս):

Հարց 7.

16 տարեկան Ա-ն հաճախում է կանանց վոլեյբոլի խմբակ մարզումների, որտեղ մարզիչը՝ 30 ամյա Դ-ն, ցանկանալով սեռական հարաբերություն ունենալ Ա-ի հետ, նրան խնդրում է սպասել հերթական մարզումից հետո, քանի որ նրա հետ ցանկանում է խոսել



մրցումներին մասնակցելու հարցի շուրջ: Երեկոյան, երբ Ա-ն և մարզիչ Դ-ն հանդիպում են, վերջինը սկսում է համբուրել Ա-ին, շոյել նրան, ցանկանում է հանել Ա-ի շորերը, սակայն Ա-ն չի թողնում, հրում է և խնդրում դադարեցնել այդ գործողությունները, քանի որ նա չի ցանկանում, որից հետո Դ-ն դադարեցնում է իր գործողությունները:


Ինչի՞ համար է ենթակա պատասխանատվության Դ-ն՝

ա. Բռնաբարության փորձի, որը կատարվել է տասնութ տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, որի վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն (ՀՀ քրեական օրենսգրքի 34-138-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ):

բ. Բռնաբարության փորձի, որը կատարվել է անչափահասի նկատմամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 34-138-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ):

գ. Անառակաբարո գործողությունների, որը կատարվել է տասնութ տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, որի վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն (ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ):

դ. Ենթակա չէ քրեական պատասխանատվության, քանի որ նրա արարքում բացակայում է հանցակազմը:



Յափց 8.

17 տարեկան Ա-ն աշխատում է «ՄԻԳ» ՍՊԸ-ում, որպես տնօրեն՝ Բ-ի գործավար, որի կողմից պարբերաբար արժանանում է թանկարժեք նվերների և ծաղիկների: Յերթական օժանելիքը և ծաղիկները նվիրելուց Բ-ն Ա-ից պահանջում է, որպեսզի նա անցնի իր առանձնասենյակ՝ հասկացնելով, որ ցանկանում է նրա հետ սեռական հարաբերություն ունենալ: Ա-ն հայտնում է, որ ինքը չի ցանկանում մտնել առանձնասենյակ և խնդրում է Բ-ին պարզաբանել, թե ինչու է նման վարքագիծ դրսևորում, որին ի պատասխան Բ-ն, զայրացած այն հանգամանքից, որ Ա-ն չի ցանկանում իր առանձնասենյակ մտնել և իր հետ սեռական հարաբերություն ունենալ ու դեռ պարզաբանում է պահանջում, նշում է հետևյալը. «նվերները և ծաղիկները, որ ստանում էիր լավ էր, սակայն հենց պետք է պիտանի լինես գոնե մեկ անգամ, հրաժարվում ես ու քեզ թանկացնում»: Ելնելով ամոթի զգացումից ու պարտավորված զգալով տնօրենի առջև՝ Ա-ն համաձայնվում է ոչ բնական ճանապարհով սեռական հարաբերություն ունենալ նրա հետ:


Ենթակա է արդյո՞ք Բ-ն քրեական պատասխանատվության՝

ա. Այո, նրա արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներին:

բ. Այո, նրա արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներին:

գ. Ոչ, քանի որ նրա արարքում բացակայում է հանցակազմը:

դ. Այո, նրա արարքը համապատասխանում է ՀՀ



քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներին:


Հարց 9.

ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածով նախատեսված անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմի հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը որոշելու համար հաշվի առնվող հանգամանքներն են՝

- ա. ինչ նպատակներ է հետապնդում անձն անչափահասին հանցանքի կատարման մեջ ենթադրաբար ներգրավելով, ինչպես նաև ներգրավող անձի կողմից անչափահասի նկատմամբ ակտիվ ֆիզիկական կամ հոգեկան ներգործության առկայությունը կամ բացակայությունը և այդ ներգործության կոնկրետ դրսևորումը:
- բ. Ներգրավող չափահասի և ներգրավված անչափահասի անձի առանձնահատկությունները, նրանց փոխհարաբերությունների բնույթը, անչափահասի մոտ տվյալ հանցագործության կապակցությամբ սեփական շահի առկայությունը կամ բացակայությունը:
- գ. ա) և բ) կետերում նշված հանգամանքները միասին վերցված:
- դ. ճիշտ պատասխանը բացակայում է:

Հարց 10.


ՀՀ ֆուտբոլի 2018-2019թթ. մինչև 14 տ. մանկապատանեկան առաջնության ժամանակ, որը



տեղի էր ունենում Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում, ուժեղ հարվածից գնդակը դուրս է գալիս խաղաղաշտի սահմաններից: Մարզիչ Բ-ն 10 տարեկան Ա-ին հանձնանարում է գնդակը վերադարձնել խաղաղաշտ, որը վազելով գնդակի հետևից ընկնում է քարերի վրա և առողջությանը պատճառում ծանր վնաս:

Արդյո՞ք մարզիչ Բ-ն ենթակա է քրեական պատասխանատվության Ա-ի առողջությանը պատճառված վնասի համար՝

- ա. Ոչ, քանի որ նրա արարքում բացակայում է հանցակազմը:
- բ. Այո, քանի որ նրա արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածով նախատեսված հատկանիշները:
- գ. Այո, քանի որ նրա արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները:
- դ. Այո, քանի որ նրա արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները:



ԴԱՍ 4

ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵՒԱՅԻՆ ՏՈՒԺՈՂ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Այս դասի (մոտիվացնող
ներածական տեսանյութ+դասի
տեքստ+բառարան+ինքնաստուգիչ հարցեր)
յուրացման համար անհրաժեշտ է
240 րոպե / 4 ժամ:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի
կայքի հեռաուսուցման բաժնում):

Քրեական դատավարությունն իրականացվում է ոչ միայն հանցագործությունը բացահայտելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու, այլև հանցագործության արդյունքում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով: Ժամանակակից քրեական արդարադատության համակարգում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը հանդիսանում է քրեական դատավարության կարևորագույն և առանցքային խնդիրներից մեկը:

Տուժողը քրեական դատավարությանը մասնակցում է որպես մեղադրանքի կողմի սուբյեկտ և գործով օժտված է սեփական շահերով, որոնց ապահովման համար օրենսդիրը նրան օժտել է մի շարք դատավարական իրավունքներով ու պարտականություններով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդված): *Տ.Քամայյանի* վերաբերյալ 2010 թվականի մարտի 26-ի



Մինչև 10 րոպե


Ուշադրությամբ
կարդացե՛ք
տեքստը (օգտվելով
բառարանից) և
այն յուրացնելուց
հետո միայն անցե՛ք
ինքնաստուգիչ
հարցերին:



Մինչև 175 րոպե

թիվ ԵՇԴ/0097/01/09 որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ «(...) «իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար» սահմանադրական ձևակերպումը որոշակիորեն վերաբերելի է նաև քրեական գործով տուժողին (նաև տուժողի իրավահաջորդին), քանի որ տուժողն այն անձն է, որի իրավունքները հանցագործությամբ խախտվում են: Ընդ որում, տուժողի իրավաչափ շահերի շրջանակում է իրեն հասցված վնասի վերականգնումը, իրեն վնաս պատճառած արարքի հանգամանքների լրիվ բացահայտումը ու դրա ճիշտ քրեաիրավական որակումը, իր նկատմամբ հանցանք կատարած անձի դատապարտումը և արդարացի պատժի նշանակումը: Այդ շահերի ապահովման երաշխիքներից է տուժողի իրավունքը, որպեսզի իր գործով դատական քննությունն ընթանա «արդարության բոլոր պահանջների պահպանմամբ» (...) (կետ 18)»: Հետևաբար, քրեական դատավարության ընթացքին տուժողի մասնակցությունը մի կողմից անհրաժեշտ նախապայման է վերջինիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար, մյուս կողմից՝ նպաստում է քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի համաձայն՝ «1. Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:



2. Տուժող ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը»:

Օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 5. Տուժողը կարող է ճանաչվել իրավաբանական անձը, որին հանցագործությամբ պատճառվել է բարոյական կամ նյութական վնաս: Տվյալ դեպքում տուժողի իրավունքները և պարտականություններն իրականացնում է իրավաբանական անձի ներկայացուցիչը»:

Անչափահաս տուժողի իրավական վիճակի առանձնահատկություններին դեռ կանոնադաշտնաչափ ախտի նշանք, որ «տուժող» հասկացությունը, որպես իրավաբանական կատեգորիա, բնութագրվում է ինչպես իրավական, այնպես էլ դատավարական հատկանիշներով: Որպես իրավական հասկացություն, այն արտացոլում է ֆիզիկական կամ իրավաբանական անձին անմիջականորեն հանցագործությամբ վնաս պատճառելու օբյեկտիվ փաստը: Դատավարական իմաստով այն սահմանում է, թե ինչպիսի պայմաններում և կարգով է հանցագործությունից վնաս կրած անձը դառնում քրեական դատավարության մասնակից՝ ձեռք բերելով որոշակի դատավարական իրավունքներ և պարտականություններ¹:


ՌԴ սահմանադրական դատարանը, անդրադառնալով տուժող ճանաչելու հիմնախնդրին, 2005թ. հունվարի 18-ի իր թիվ 131- Օ որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ Սահմանադրությամբ ամրագրված անձի իրավունքների

¹ՏԵՍ ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. փետրվարի 15-ի իր թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշումը:

և օրինական շահերի պաշտպանությունը քրեական դատավարությունում իրականացվում է ոչ թե նրան ձևական առումով այս կամ այն դատավարական կարգավիճակ տալով, մասնավորապես՝ տուժող ճանաչելով, այլ որոշակի էական հատկանիշների առկայության դեպքում, որոնք բնութագրում են այդ անձի փաստացի կարգավիճակը որպես համապատասխան իրավունքների պաշտպանության կարիք ունեցողի: Դատարանի գնահատմամբ, անձի՝ որպես տուժողի իրավական վիճակը դատավարությունում հաստատվում է ըստ նրա փաստացի կարգավիճակի. նա միայն դատավարական առումով ձևակերպվում է տուժող ճանաչելու որոշմամբ, այլ ոչ թե տուժող է դառնում կամ ձևակերպվում վարույթն իրականացնող մարմնի կողմից²:

Տուժող կարող են ճանաչվել բացառապես ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, դրանցից զատ իրավունքի որևէ այլ սուբյեկտ քրեական դատավարությունում տուժող չի կարող ճանաչվել, իսկ յուրաքանչյուր կոնկրետ դեպքով տուժող ճանաչման ենթակա սուբյեկտների (ֆիզիկական և իրավաբանական անձի) որոշման համար միայն քրեական դատավարության օրենսգիրքը բավարար չէ, որը սահմանում է տուժող հասկացության միայն դատավարական հատկանիշը: Տուժող հասկացության իրավական հատկանիշը պարզաբանելու համար անհրաժեշտ է նաև վերլուծել այլ իրավական ակտեր, որոնց շարքում առանցքային է, մասնավորապես, քրեական օրենսդրությունը, իսկ կոնկրետ հանցագործության առանձնահատկություններից

²Տե՛ս ՌԴ սահմանադրական դատարանի 2005 թվականի հունվարի 18-ի թիվ 131-Օ որոշումը, <http://www.rg.ru/2005/06/15/opredelenie-ks-dok.html>




ելնելով՝ նաև քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը:

Այս հետևությունը պայմանավորված է մասնավորապես այն հանգամանքով, որ **«հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային, ֆիզիկական և բարոյական վնաս»** հասկացությունների պարզաբանումը հնարավոր չէ միայն քրեական դատավարության օրենսդրությամբ. դա հնարավոր է նախևառաջ քրեական օրենսգրքի Հատուկ մասի կոնկրետ հանցակազմերի վերլուծության միջոցով, առանձին դեպքերում նաև քաղաքացիական օրենսդրության և այլ իրավական ակտերի վերլուծության միջոցով, որոնք ունեն սկզբունքային նշանակություն քրեական դատավարությունում տուժող (նաև քաղաքացիական հայցվոր) ճանաչելու հարցերի լուծման համար:

Այլ կերպ ասած, տուժողը միայն քրեադատավարական հասկացություն չէ, այն միջճյուղային, նախևառաջ՝ քրեաիրավական հասկացություն է³: Հետևաբար, քրեական դատավարությունում տուժող ճանաչելու հարցի ճիշտ լուծման համար մեթոդաբանական նշանակություն ունի քրեական, քրեադատավարական և կոնկրետ հանցագործության բնույթից և առանձնահատկություններից ելնելով՝ նաև այլ օրենսդրության պահանջների համակարգային վերլուծությունը:

³Այս մասին տե՛ս նաև Красиков А.Н., *Сущность и значение согласия потерпевшего в советском уголовном праве* // под ред. проф. И.С. Ноя, Саратов, 1976, Божьев В. *Предпосылки обеспечения интересов потерпевшего в уголовном процессе* // Законность, 2005, N 11 // <https://www.lawmix.ru/comm/240>

Այս տեսանկյունից մենք համակարծիք ենք Վ. Բոժևի այն մատեցումներին, որ քրեաիրավական և դատավարական խառը հարցեր հետազոտելիս պետք է նկատի ունենալ, որ քրեական դատավարության գոյությունը դետերմինացված (պայմանավորված) է քրեական իրավունքով, այն (քրեական դատավարությունը) համարվում է քրեական օրենքի նորմերի կիրառման եզակի մղանքը, խողովակ և քրեաիրավական հարաբերությունների սուբյեկտների կողմից իրենց նյութաիրավական պահանջներն իրականացնելու եզակի եղանակ: Քրեական իրավունքն ազդում է քրեական դատավարության մի շարք նորմերի, նույնիսկ՝ ինստիտուտների ձևավորման վրա, իսկ քրեական դատավարությունն, իր հերթին, ստեղծում է նախադրյալներ և որոշում է քրեական օրենսգրքի նորմերի կիրառման կառուցակարգերը: Դրա հետ կապված մի շարք նյութաիրավական և դատավարական հասկացություններ և կառուցակարգեր փոխգործակցում են (օրինակ՝ հանցակազմ և ապացուցման առարկա, հանցագործության սուբյեկտ և մեղադրյալ), **որոնց շարքում է նաև տուժողի քրեադատավարական հասկացությունը:** Հեղինակը շարունակելով նշում է, որ ցավոք այնպես է ստացվել, որ քրեական օրենսգրքում հանցագործությունից տուժող անձի բնորոշումը բացակայում է, դրա համար քրեական դատավարության օրենսգրքում օրենսդիրը ստիպված է եղել տալու տուժողի ոչ միայն քրեադատավարական, այլև քրեաիրավական հասկացությունը: Մասնավորապես նշելով, որ անձը համարվում է տուժող, եթե դրա համար առկա են նյութաիրավական նախադրյալներ, այսինքն՝ քրեորեն պատժելի վնաս, որը պատճառվել է հանցագործությամբ, օրենսդիրը դրանով իսկ տալիս է տուժողի քրեաիրավական հասկացությունը: Անձին քրեական գործով տուժող ճանաչելու հարցը կարող է լուծվել միայն պայմանով, որ անձին հանցագործությամբ




պատճառվել է վնաս, որը նախատեսված է քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերով⁴:

Այսինքն, քրեաիրավական հարաբերության որևէ սուբյեկտի քրեական գործով տուժող ճանաչելու համար նախնառաջ անհրաժեշտ է, որ այն լինի ֆիզիկական կամ իրավաբանական անձ, այնուհետև պարզել՝ նրան հանցագործությամբ պատճառվել է, արդյոք, այնպիսի գույքային, ֆիզիկական կամ բարոյական վնաս (իրավաբանական անձի դեպքում՝ բարոյական և նյութական վնաս), որը նախատեսված է հենց քրեական օրենսգրքի համապատասխան հանցակազմում, որպես դրա պարտադիր հատկանիշ, և որի պատճառման համար նախատեսված է քրեական պատիժ (անմիջական պատճառական կապը), և որը հիմք է ՀՀ քր. դատ. օր.-ի 58-րդ հոդվածի և 59-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով նրան քրեական դատավարությունում տուժող ճանաչելու համար: Այլ կերպ ասած, տուժող ճանաչելու որոշում կայացնելիս իրավասու սուբյեկտի տրամադրության տակ պետք է լինեն բավարար հիմքեր առ այն, որ հանցագործությունից վնաս է կրել հենց ֆիզիկական կամ իրավաբանական անձը, և որ այդ վնասը հանցակազմի հատկանիշ հանդիսացող այն վնասն է (վնասները), որը (որոնք) պատճառվել է (են) անմիջականորեն հանցագործությամբ և սահմանված է (են) ՀՀ քր. դատ. օր.-ի 58-րդ հոդվածով և 59-րդ հոդվածի 5-րդ մասով, և որի (որոնց) առաջացման համար անձն ենթակա է քրեական պատժի:

Այս գաղափարախոսությունը համապատասխանում է հանցագործության օբյեկտի, օբյեկտիվ կողմի և հանցագործության հետևանքների վերաբերյալ քրեական

⁴Божьев В., Предпосылки обеспечения интересов потерпевшего в уголовном процессе // Законность, 2005, N 11 // <https://www.lawmix.ru/comm/240>




իրավունքի դրույթներին:

ՀՀ քր. օր.-ի 18-րդ հոդվածը սահմանում է, որ հանցագործությունն է համարվում հանրորեն վտանգավոր, մեղավորությանը կատարված այն արարքը, որը նախատեսված է քրեական օրենսգրքով: ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասում սահմանված են քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվող շահերին վնաս պատճառող արարքները: Հանցագործությունը կարող է առաջացնել բազմաթիվ հետևանքներ, որոնք կարող են լինել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական բնույթի, իրավունքների խախտման տեսքով և այլն: Եվ որպեսզի որոշվի, թե տվյալ դեպքում ով կարող է լինել տուժող, անհրաժեշտ է վերլուծել կոնկրետ հանցակազմը և, նախևառաջ, այդ հանցագործության օբյեկտը և օբյեկտիվ կողմը, մասնավորապես՝ այն, թե որ շահի պաշտպանության համար է քրեականացվել տվյալ արարքի կատարումը, և որ շահի խախտման և վնաս պատճառելու համար է առաջանում քրեական պատասխանատվությունը: Այս հանգամանքի հաշվառմամբ է, որ տուժող սուբյեկտի հասկացությունը սահմանելիս օրենսդիրը քրեական դատավարության օրենսգրքում պարտադիր պայման է նախատեսել հանցագործության և տուժողի կրած գույքային, բարոյական կամ ֆիզիկական վնասի (իրավաբանական անձի դեպքում՝ բարոյական և նյութական վնասի) միջև անմիջական պատճառական կապը⁵: Այս չափանիշների գործնական կիրառման արդյունքում

⁵Այս հարցերի մասին մանրամասն տե՛ս Մարաբյան Ս. Քրեական դատավարությունում հայց հարուցելու և հայցվոր ճանաչելու հիմնահարցերն ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի // ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2014, էջեր 374-401:

Է, որ հնարավոր է դառնում բացառել այնպիսի անձանց տուժող ճանաչելու հնարավորությունը, ովքեր հանցագործության կատարման արդյունքում թեև կրում են որոշակի գույքային վնասներ, սակայն տուժողի դատավարական կարգավիճակ չեն կարող ձեռք բերել, քանի որ կոնկրետ հանցակազմի կողմից քրեաիրավական պաշտպանության տակ չեն վերցված այդ անձանց կողմից կրած գույքային վնասները, օրինակ, ապահովագրական ընկերությունները, ովքեր հատուցում են տուժողներին պատճառված վնասները, չեն կարող տուժող և հայցվոր ճանաչվել և հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական վարույթում գույքային և այլ պահանջներ ներկայացնել: Նույն կերպ տուժող չեն կարող ճանաչվել այն անձինք, ովքեր կրել են որոշակի հոգեկան ապրումներ, բարոյական զրկանքներ իրենց հարազատի նկատմամբ իրականացված հանցագործության արդյունքում, կամ կատարել են տուժողի բուժման կամ հուղարկավորության ծախսերը և այլն. նրանք, կապված կոնկրետ իրավիճակից, կարող են ճանաչվել տուժողի իրավահաջորդ, օրինական ներկայացուցիչ, իսկ որոշ դեպքերում՝ զուտ քաղաքացիական հայցվոր և այլն:


ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանում «անչափահաս տուժող» առանձին հասկացություն կամ նրա իրավական վիճակի հատուկ կարգավորումներ առկա չեն, ինչը նշանակում է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 58-րդ, 59-րդ հոդվածներում տեղ գտած կարգավորումները հավասարապես վերաբերում են նաև անչափահաս տուժողին, իսկ թե որոնք են անչափահասին տուժող ճանաչելու չափանիշները, հատկապես՝ տարիքային ցենզը և դրա հաշվարկման հիմքերը, օրենքում հատուկ սահմանված չէ.



ընդամենը 59-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված է, որ անչափահաս կամ անգործունակ տուժողի իրավունքները սույն օրենսգրքով սահմանված կարգով նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը:

Անչափահասին տուժող ճանաչելու չափանիշների, մասնավորապես՝ տարիքային ցենզի և դրա հաշվարկման հիմքերի պարզաբանումը, անչափահաս տուժողների քրեադատավարական իրավունքների և պարտականությունների իրացման հարցում ունի սկզբունքային նշանակություն, քանի որ քրեադատավարական օրենսդրության տարբեր նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ անչափահաս տուժողների իրավունքների ու պարտականությունների ծավալը և բովանդակությունը հաճախ կախվածության մեջ է գտնվում նրա տարիքից: Օրինակ, ՀՀ քր. դատ. օր-ի 207-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ մինչև 16 տարեկան երեխաների հարցաքննությանը պարտադիր է մանկավարժի մասնակցությունը կամ 207-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ տասնվեց տարին չլրացած տուժողին բացատրվում է գործին վերաբերող ամեն ինչի մասին ճշմարտացիորեն պատմելու նրա պարտականությունը, բայց նա չի նախազգուշացվում ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին և այլն:

Համընդհանուր իրավական առումով անչափահասն այն անձն է, ով չի հասել որոշակի տարիքի, որի հետ օրենքը կապում է նրա լիարժեք քաղաքացիաիրավական գործունակությունը, այսինքն՝ լրիվ ծավալով Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով իրեն տրված սուբյեկտիվ իրավունքները, ազատությունները




և այլ իրավաբանական պարտականություններն իրականացնելու հնարավորությունը⁶:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածը սահմանում է, որ քաղաքացու գործունակությունը (իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից:

Նույն օրենսգրքի 29-րդ հոդվածը կարգավորում է մինչև տասնչորս տարեկան անաչափահասների (փոքրահասակների) գործունակության հետ կապված հարցերը, իսկ 30-րդ հոդվածը՝ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների գործունակության հետ կապված հարցերը: Թեև քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է նաև քաղաքացու գործունակություն ձեռք բերելու այլ տարիքային չափանիշներ և պայմաններ ևս, սակայն դրանք էական չեն սույն հետազոտության համատեքստում, ուստի դրանց չենք անդրադառնում, քանի որ մեր խնդիրն էր պարզել այն, թե ՀՀ իրավական համակարգում անչափահաս ասելով մինչև որ տարիքային խումբը պետք է հասկանալ:

Այսպիսով, անչափահաս տուժող ասելով պետք է հասկանալ մինչև 18 տարեկան երեխաներին, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով

⁶Տե՛ս Мельникова Э.Б., Ювенальная юстиция: проблемы уголовного права, уголовного процесса и криминологии. М., 2000, с. 10-11.




անմիջականորեն պատճառվել է ֆիզիկական, բարոյական կամ գույքային վնաս կամ կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

Տարիքի համատեքստում անչափահաս տուժող հասկացության նման մեկնաբանությունը համահունչ է նաև ՀՀ քրեական օրենսգրքին, որում թեև նույնպես տրված չէ «անչափահաս տուժող» հասկացությունը, իսկ տարբեր հանցակազմերում օգտագործվում են տարբեր հասկացությունների անչափահաս տուժողին բնորոշելիս (օրինակ, նորածին երեխա (*հոդվածներ 106-րդ, 166, 166.1, 167 և այլն*), *ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձ* (*հոդվածներ 140-րդ, 141-րդ, 142-րդ և այլն*), *տասնչորս տարին չլրացած անձ* (*հոդված 141-րդ*), *տասներկու տարին չլրացած անձ* (*հոդված 142-րդ*) և այլն), սակայն տարիքային չափանիշի համատեքստում խոսքը մինչև 18 տարեկան երեխաների մասին է:

Անչափահաս տուժող հասկացության նման մեկնաբանությունը համահունչ է նաև միջազգային չափանիշներին:

Այսպես, «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի նոյեմբերի 20-ի ՄԱԿ-ի կոնվենցիայի⁷ (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 1-ին հոդվածում ևս սահմանվում է, որ երեխա է համարվում տասնութ տարին չլրացած յուրաքանչյուր անձ, եթե նրա նկատմամբ կիրառվող օրենքով նա չափահասության

⁷Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հուլիսի 22-ից:



չի հասնում ավելի վաղ⁸, իսկ Կոնվենցիայի համալիր վերլուծությունից հետևում է, որ այն հավասարապես վերաբերելի է նաև հանցագործության զոհ երեխաներին, ինչը նշանակում է, որ այդ հասկացությունը վերաբերելի է նաև քրեադատավարական հարաբերությունների տիրույթում հայտնված երեխա տուժողներին:

ՄԱԿ-ի ուղեկիշների 9-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ «հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխա» արտահայտությունը վերաբերում է 18 տարին չլրացած երեխաներին ու դեռահասներին, ովքեր տուժել են հանցագործությունից կամ ականատես են եղել հանցագործությանը՝ անկախ կատարված իրավախախտման մեջ նրանց ունեցած դերից կամ ենթադրյալ իրավախախտների կամ իրավախախտների խմբերի՝ քրեական հետապնդման ընթացքում ունեցած կարգավիճակից:


Գործնական մեծ նշանակություն ունի նաև այն հարցի պարզաբանումը, թե ինչպիսի իրավաբանական փաստ պետք է հիմք ընդունել մինչև 18 տարեկան երեխային տուժող ճանաչելու և օրենքով նախատեսված անչափահաս տուժողի իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիքներով ապահովելու համար, մասնավորապես՝ հանցանքը կատարելու պահին

⁸«Երեխա» հասկացության նման մեկնաբանությունն ամրագրված է նաև Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին 2005թ. ԵԽ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածի «դ» կետում, ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիան լրացնող՝ 2000թ. Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման և խափանման և դրա համար պատժի մասին արձանագրության 3-րդ հոդվածի «դ» կետում, Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին 1999թ. կոնվենցիայի 2-րդ հոդվածում, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասում, «Երեխայի իրավունքների մասին» 1996թ. մայիսի 29-ի ՀՀ օրենքի 1-ին հոդվածում և այլ միջազգային և ազգային ակտերում:

անչափահաս լինելով, թե՞ քննչական կամ դատավարական այս կամ այն գործողությունը կատարելու կամ որոշումը կայացնելու փաստը: Այս հարցադրման եռությունն այն է, որ օրինակ, հանցանք կատարած անչափահասների նկատմամբ հատուկ վարույթի (ՀՀ քր. դատ. օր.-ի 50-րդ գլուխ) կարգ կիրառելու համար, ըստ ՀՀ քր. դատ. օր.-ի 439-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք է ընդունվում ոչ թե այն փաստը, որ վարույթի իրականացման պահին հանցանքի կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող անձն անչափահաս է, այլ այն, որ նա հանցանքը կատարել է մինչև 18 տարին լրանալը՝ անկախ վարույթի պահին նրա փաստացի տարիքից: Այսինքն, հիշյալ նորմի իմաստով անչափահաս կասկածյալ կամ մեղադրյալ ասելով հասկացվում է մինչև 18 տարեկանը հանցանք կատարած երեխան՝ անկախ նրանից, թե երբ է կայացվում քրեական գործ հարուցելու մասին որոշումը, երբ է նա ներգրավվում որպես մեղադրյալ, երբ է կազմվում մեղադրական եզրակացությունը և այլն:

Կարծում ենք՝ տուժողների վերաբերյալ նման մոտեցումը չի կարող կիրառելի լինել, քանի որ տուժողների հանցանք կատարելու պահին անչափահաս լինելու փաստին օրենքում հատուկ դատավարական նշանակություն չի տրվել, այն առավելապես քրեաիրավական նշանակություն ունի, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքում առկա են մի շարք հանցակազմեր, որոնցում՝ անչափահասի նկատմամբ հանցանքի կատարումը նկարագրված է որպես հիմնական հանցակազմի պարտադիր հատկանիշ կամ արարքը որակյալ դարձնող հատկանիշ և այլն:

Դատավարական իրավունքների և պարտականությունների ձեռք բերման և իրացման տեսանկյունից կարևոր է, որպեսզի կոնկրետ քննչական




կամ դատավարական գործողությունը կատարելու կամ որոշումը կայացնելու պահին տուժողը լինի անչափահաս, ընդ որում՝ կոնկրետ գործողությամբ կամ որոշմամբ պայմանավորված օրենքում հատուկ սահմանված տարիքի հասած անչափահաս, այլ ոչ թե հանցանքի կատարման պահին անչափահաս⁹: Հնարավոր է, որ հանցանքի կատարման պահին տուժողը լինի անչափահաս, սակայն քննության փուլում արդեն լինի չափահաս կամ այն տարիքի, որի հետ օրենսդիրը որևէ հատուկ կանոն կիրառելու վերաբերյալ կարգավորում չի սահմանել, ինչը նշանակում է, որ նա չի կարող օգտվել անչափահաս տուժողի համար երաշխավորված հատուկ կանոններից (օրենսդրական կարգավորումներից պարզ է դառնում, որ հիմնական առանձնահատկությունները վերաբերում են մինչև 16 տարեկան երեխաների իրավունքների ապահովմանը): Այս հետևության համար հիմք է հանդիսանում, մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի կարգավորումներն առ այն, որ քրեական գործերով վարույթը կարգավորվում է քրեական դատավարական այն օրենքով, որը գործում է համապատասխանաբար հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ (այլ ոչ թե այն օրենքով, որը գործել է հանցանքը կատարելու ժամանակ):

Անչափահաս տուժողի իրավունքների և օրինական շահերի ապահովման համատեքստում

⁹Եթե հանցանքի կատարման պահի և դրա առթիվ իրականացվող վարույթի միջև ժամանակային խզում չկա կամ քիչ է, որի ընթացքում երեխայի տարիքի փոփոխություն տեղի չի ունենում, ապա այն կարող է էական նշանակություն չունենալ. այն կարևոր է, եթե ժամանակային խզման արդյունքում տուժողը հասնում է այնպիսի տարիքի, որի դեպքում օրենքի հատուկ կանոնները դառնում նրա համար ոչ կիրառելի:

կարևոր նշանակություն ունի նաև հանցագործությունից վնաս կրած երեխային տուժող ճանաչելու հիմքերի պարզաբանման հարցը, քանի որ երեխային տուժող ճանաչելու հարցում առկա է որոշակի բարդություն, որը պայմանավորված է քրեաիրավական և քրեադատավարական հասկացությունների անհամապատասխանությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածից հետևում է, որ ֆիզիկական անձին տուժող ճանաչելու հիմքերն են հանցագործությամբ նրան անմիջականորեն պատճառված գույքային, ֆիզիկական կամ բարոյական վնասի առկայության փաստը, իսկ չավարտված հանցագործության դեպքում՝ այդպիսի վնասների պատճառման վտանգը, մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքում սահմանված մի շարք հանցակազմերի վերլուծությունից հետևում է, որ երեխաների դեմ ուղղված հանցագործությունների հետևանքով հնարավոր են այնպիսի վնասների պատճառում, որոնք դուրս են գույքային, բարոյական կամ ֆիզիկական վնաս հասկացություններից: Օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ և 172-րդ հոդվածներում խոսվում է այդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների կատարման հետևանքով երեխայի իրավունքների և օրինական շահերի էական խախտման մասին, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 166.1-րդ և 173-րդ հոդվածներում օրենսդիրը հանցագործության որևէ հետևանք (վնասի տեսքով) չի նկարագրել, քանի որ հանցակազմը ձևական է, սակայն այդ երկու դեպքում էլ երեխաների նկատմամբ տեղի է ունենում բռնություն և խախտվում են նրանց իրավունքներն ու օրինական շահերը: Դրանք երեխաների նկատմամբ իրականացվող ոտնձգության այնպիսի հետևանքներ են, որոնք ուղղակի չեն տեղավորվում քրեական



դատավարության օրենսգրքով սահմանված տուժող ճանաչելու հիմք հանդիսացող երեք տեսակի վնասների բովանդակության մեջ:


Քննարկվող համատեքստում քրեադատավարական օրենսգրքի կարգավորումները հակասում են նաև միջազգային չափանիշներին, որոնք ևս տուժող ճանաչելու համար նախատեսում են առավել լայն հիմքեր, քան գույքային, բարոյական և ֆիզիկական վնասն է:

Ինչպես արդեն նշել ենք 1-ին թեմայում, ԱՀԿ Երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման խորհրդի կողմից տրված բնորոշման համաձայն՝ «Երեխաների նկատմամբ բռնությունը նշանակում է երեխայի առողջության, կյանքի, զարգացման, ինքնության իրական կամ պոտենցիալ վտանգման հանգեցնող ֆիզիկական և/կամ հոլզական դաժանության, սեռական բնույթի գործողություններ կամ անտեսման կամ բարձիթողության արարքներ՝ օգտվելով կարգավիճակից կամ պաշտոնից բխող լիազորություններից և չարաշահելով երեխայի վստահությունը»:

ԵԽՆԿ «Տուժողի դերը քրեական իրավունքում և դատավարությունում» թիվ (85)11 հանձնարարականում¹⁰ սահմանված են վնասների հետևյալ տեսակները՝ ֆիզիկական, հոգեբանական, նյութական և սոցիալական, իսկ 1985 թվականի նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած «Իշխանության չարաշահման և հանցագործության զոհերի համար արդարադատության հիմնական ակզբունքների» Հռչակագրում¹¹ «հանցագործության զոհ» եզրույթի տակ հասկացվում են այն անձինք, որոնց կոլեկտիվ

¹⁰<http://docs.cntd.ru/document/90199464>


¹¹<http://docs.cntd.ru/document/901739105>



կամ անհատական պատճառով Է վնաս, ներառյալ մարմնական վնասվածք կամ բարոյական վնաս, Էմոցիոնալ տանջանքներ, նյութական վնաս կամ հիմնական իրավունքների Էական սահմանափակում (...) (1-ին կետ):

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով այն մոտեցումը, որ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը քրեական դատավարությունում պետք է իրականացվի ոչ թե նրան ձևական առումով այս կամ այն դատավարական կարգավիճակ տալով, մասնավորապես՝ տուժող ճանաչելով, այլ որոշակի Էական հատկանիշների առկայության դեպքում, որոնք բնութագրում են այդ անձի փաստացի կարգավիճակը՝ որպես համապատասխան իրավունքների պաշտպանության կարիք ունեցողի, գտնում ենք, որ Երեխային տուժող ճանաչելիս պետք է ՀՀ քր. դատ. օր.-ի 58-րդ հոդվածում սահմանված տուժող ճանաչելու դատավարական հիմքերը լայն մեկնաբանել և արհեստական խոչընդոտ չստեղծել Երեխային տուժողի դատավարական կարգավիճակ տալու հարցը լուծելիս:

Հիմք ընդունելով ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշման մեջ ձևավորած այն դիրքորոշումը, որ «քրեական վարույթում անհնար է իրականացնել դատավարական իրավունքներ և պարտականություններ՝ առանց դատավարության մասնակից լինելու, իսկ հանցագործության հետևանքով վնաս կրած անձի դեպքում արդյունավետ մասնակցությունը հնարավոր է միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից վերջինիս տուժող ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո», կարծում ենք՝ անհրաժեշտ է նախևառաջ անդրադառնալ տուժող ճանաչելու և




դրանով պայմանավորված այդ կարգավիճակից բխող իրավունքներից ու պարտականություններից օգտվելու պահը որոշելու հարցին:

ՀՀ քր. դատ. օր.-ի վերլուծությունը ցույց է տալիս, որ տուժող ճանաչելու հարցում օրենսդիրը սահմանել է տարբերակված մոտեցում:


Նախևառաջ, տուժող ճանաչելու հարցը պարտավոր է լուծել վարույթն իրականացնող մարմինը ex officio, ընդ որում՝ քրեական գործ հարուցելու հետ մեկտեղ: Այս հետևությունն ուղղակիորեն բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասից, որի համաձայն, եթե քրեական գործ հարուցելու պահին հայտնի է հանցագործությունից տուժած անձը, քրեական գործ հարուցելու հետ միաժամանակ այդ անձը ճանաչվում է տուժող, իսկ եթե հանցագործության մասին հաղորդման հետ միաժամանակ ներկայացված է քաղաքացիական հայց, ապա այդ անձը նույն որոշմամբ ճանաչվում է նաև քաղաքացիական հայցվոր:

Օրենսդիրը չի սահմանափակվել միայն վերոնշյալ կարգավորմամբ և սահմանել է տուժող սուբյեկտի քրեադատավական հարաբերություններում հանդես գալու այլ կառուցակարգ ևս: Խոսքը, մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր.-ի 100-րդ հոդվածում սահմանված այն կարգավորման մասին է, որի համաձայն դատավարության մասնակից չհանդիսացող ցանկացած անձ, քր. դատ. օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, իրավունք ունի պահանջելու իրեն ճանաչել տուժող, նրա օրինական ներկայացուցիչ կամ ներկայացուցիչ և այլն (մաս 1-ին):



Այս կարգավորումը հանդիսանում է տուժողի իրավունքների և օրինական շահերի ապահովման լրացուցիչ երաշխիք, քանի որ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործնականում տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով հաճախ հանցագործությունից փաստացի տուժած անձին վարույթն իրականացնող մարմինը տուժող չի ճանաչում և դրանով իսկ նրան զրկում է տուժողի դատավարական կարգավիճակից բխող իրավունքներից:

Երեխային ժամանակին տուժող ճանաչելու հարցի լուծումը Էական նշանակություն ունի նրա իրավունքների պաշտպանության հարցում, այն առումով, որ ըստ ՀՀ քր. դատ. օր.-ի 59-րդ հոդվածի 4-րդ մասի, Երեխայի իրավունքները նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը, իսկ նա քրեական վարույթում ներգրավվում է տուժող ճանաչվելուց հետո:






Լրացուցիչ մեդիա-սյուրթերը
նախատեսված են Ձեզ
հետաքրքրող սյուրթի մասին
հավելյալ գիտելիքներ
ստանալու համար:

1. Մարաբյան Ս. Քրեական դատավարությունում հայց հարուցելու և հայցվոր ճանաչելու հիմնահարցերն ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի // ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2014, էջեր 374-401 // <http://www.ysu.am/files/Book-gr-dat-metodakan.pdf>
2. Мельникова Э.Б., Ювенальная юстиция: проблемы уголовного права, уголовного процесса и криминологии. М., 2000 // <http://lawlibrary.ru/izdanie25850.html>
3. Красиков А.Н., Сущность и значение согласия потерпевшего в советском уголовном праве // под ред. проф. И.С. Ноя, Саратов, 1976 // <https://search.rsl.ru/ru/record/01006990484>
4. Божьев В. Предпосылки обеспечения интересов потерпевшего в уголовном процессе// Законность, 2005, N 11 // <https://www.lawmix.ru/comm/240>
5. ՌԴ սահմանադրական դատարանի 2005 թվականի հունվարի 18-ի թիվ 131-Օ որոշումը, <http://www.rg.ru/2005/06/15/opredelenie-ks-dok.html>
6. «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի նոյեմբերի 20-ի ՄԱԿ-ի կոնվենցիա // arlis.am
7. «Տուժողի դերը քրեական իրավունքում և դատավարությունում» թիվ (85)11 հանձնարարականում // <http://docs.cntd.ru/document/90199464>

8. 1985 թվականի նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած «Իշխանության չարաշահման և հանցագործության զոհերի համար արդարադատության հիմնական ակգբունքների» Հռչակագիր // <http://docs.cntd.ru/document/901739105>
9. ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշում // datalex.am,
10. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵՇԴ/0097/01/09 որոշում // datalex.am



Երեխա

Տասնութ տարին չլրացած յուրաքանչյուր անձն է, եթե նրա նկատմամբ կիրառվող օրենքով նա չափահասության չի հասնում ավելի վաղ¹ («Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի նոյեմբերի 20-ի ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 1-ին):

Տուժող

Ֆիզիկական անձն է, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, կամ կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

Անչափահաս տուժող

Մինչև 18 տարեկան երեխան է, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է ֆիզիկական, բարոյական կամ գույքային վնաս, կամ կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

¹Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հուլիսի 22-ից:



Ուշադրությամբ ծանոթացե՛ք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձե՛ք դրանց:



Մինչև 15 րոպե

Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխա


Տասնութ տարին չլրացած երեխաներն ու դեռահասներն են, ովքեր տուժել են հանցագործությունից կամ ականատես են եղել հանցագործությանը՝ անկախ կատարված իրավախախտման մեջ նրանց ունեցած դերից կամ ենթադրյալ իրավախախտների կամ իրավախախտների խմբերի՝ քրեական հետապնդման ընթացքում ունեցած կարգավիճակից (ՄԱԿ-ի ուղենիշների 9-րդ կետի «ա» ենթակետ):

1985 թվականի նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած «Իշխանության չարաշահման և հանցագործության զոհերի համար արդարադատության հիմնական ակզբունքների» Հռչակագրում սահմանված «զոհ» արտահայտությունը ներառում է

անձինք՝ որոնց կոլեկտիվ կամ անհատական պատճառվել է վնաս, ներառյալ մարմնական վնասվածք կամ բարոյական վնաս, էմոցիոնալ տանջանքներ, նյութական վնաս կամ հիմնական իրավունքների էական սահմանափակում:

Տուժողի իրավաչափ շահերը ներառում է

իրեն հասցված վնասի վերականգնումը, իրեն վնաս պատճառած արարքի հանգամանքների լրիվ բացահայտումը ու դրա ճիշտ քրեաիրավական որակումը, իր նկատմամբ հանցանք կատարած անձի դատապարտումը և արդարացի պատժի նշանակումը:



Հարց 1.

15 տարեկան երեխան դառնում է սեռական բռնության զոհ, ինչի վերաբերյալ հարուցվում է քրեական գործ և նա ճանաչվում է տուժող: Հարցաքննության ընթացքում արդեն լրացած է լինում տուժողի 16 տարին, որի հետ կապված քննիչը նրան նախազգուշացնում է ցուցմունք տալուց հրաժարվելու և սուտ ցուցմունք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, իսկ նրա օրինական ներկայացուցիչը, ով ներկա է գտնվում հարցաքննությանը, առարկում է քննիչի գործողությունների դեմ՝ նշելով, որ երեխան հանցագործությունից տուժել է 15 տարեկան հասակում, որի դեպքում նա չի կարող նախազգուշացվել ցուցմունք տալուց հրաժարվելու կամ սուտ ցուցմունք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, ուստի հենց հանցանք կատարելու պահին նրա տարիքի չափանիշը պետք է հիմք ընդունել և երեխային չնախազգուշացնել, որը նրա իրավունքների խախտում է:

Ի՞նչ որոշում պետք է կայացնի քննիչը ներկայացված առարկության վերաբերյալ՝

ա. Քննիչը պետք է մերժի առարկությունները, քանի որ հարցաքննության պահին ունեցած տարիքը հաշվի առնելով պետք է հարցաքննվողի նախազգուշացման հարցը քննարկվի և լուծվի, անկախ նրանից, թե որ տարիքում է անձը տուժել հանցագործությունից:

բ. Քննիչը պետք է ընդունի առարկությունը, քանի որ



Ընտրել ճիշտ տարբերակը:
Ընտրությունը կատարվում է համապատասխան հարցերի համար նախատեսված պատասխանների ճիշտ տարբերակի տառը նշելու միջոցով:



Մինչև 40 րոպե


հանցագործությունից տուժած երեխայի նկատմամբ կիրառելի են բոլոր այն կանոնները, որոնք առկա են եղել նրա նկատմամբ հանցագործություն կատարելու պահին, այսինքն՝ մինչև 16 տարեկանը լրանալը, այլ ոչ թե՝ կոնկրետ քննչական կամ դատավարական գործողությունը կատարելու պահին:

- գ. Քննիչը պետք է հաշվի առնի ոչ թե երեխայի տարիքը հարցաքննության փուլում, այլ այն, թե որքանով է դա բխում երեխայի լավագույն շահերից և ըստ այդմ որոշի՝ մերժել կամ ընդունել առարկությունը:
- դ. Քննիչը պետք է մերժի առարկությունը, քանի որ տուժողի օրինական ներկայացուցիչը նման իրավունք չունի:

Չափ 2.

Ո՞վ կարող է ճանաչվել տուժող ՀՀ քրեական դատավարությունում՝

- ա. Մեղսունակ ֆիզիկական անձը, որը հասել է չափահասության տարիքի:
- բ. Ցանկացած ֆիզիկական անձ, ում հանցագործությամբ անմիջականորեն պատճառվել է գույքային, բարոյական կամ ֆիզիկական վնաս, ինչպես նաև իրավաբանական անձը, եթե նրան պատճառվել է բարոյական կամ գույքային վնաս:
- գ. Մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած երեխայի մերձավոր ազգականներից մեկը կամ խնամակալության կամ հոգաբարձության մարմինը:
- դ. Ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքներն ու պետությունը, եթե



հանցագործությամբ անմիջականորեն նրանց պատճառվել է ֆիզիկական, գույքային կամ բարոյական վնաս:

Հարց 3.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն անչափահաս տուժող կարող է ճանաչվել այն երեխան, որին քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է՝

ա. Բարոյական, ֆիզիկական, գույքային վնաս կամ իրավունքների և օրինական շահերի էական խախտում:

բ. Բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս:

գ. Մարմնական վնասվածք կամ բարոյական վնաս, հուզական տանջանքներ, նյութական վնաս կամ հիմնական իրավունքների էական սահմանափակում:

դ. Ֆիզիկական, հոգեբանական, նյութական և սոցիալական վնաս:

Հարց 4.

1985 թվականի նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած «Իշխանության չարաշահման և հանցագործության զոհերի համար արդարադատության հիմնական ակզբունքների» Հռչակագրում սահմանված է, որ «զոհ» եզրույթի տակ հասկացվում են այն անձինք՝

ա. Որոնց կոլեկտիվ կամ անհատական պատճառվել է վնաս, ներառյալ՝ մարմնական վնասվածք կամ

բարոյական վնաս, հուզական տանջանքներ, նյութական վնաս կամ հիմնական իրավունքների էական սահմանափակում:

- բ. Որոնց պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, ինչպես նաև այն անձինք, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:
- գ. Որոնց պատճառվել է ֆիզիկական, հոգեբանական կամ նյութական վնաս, ինչպես նաև հիմնական իրավունքների էական սահմանափակում:
- դ. Որոնց պատճառվել է ֆիզիկական, հոգեբանական կամ նյութական վնաս, ինչպես նաև բարոյական վնաս կամ հուզական տանջանքներ:


Հարց 5.

ՀՀ քրեական դատավարությունում տուժող ճանաչելու մասին որոշում կայացնելու իրավասություն ունեն՝

- ա. Հետաքննության մարմինը և քննիչը:
- բ. Քննիչը, դատախազը կամ դատարանը:
- գ. Հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը:
- դ. Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը:

Հարց 6.

Ո՞ր պահից է հանցագործությունից տուժած անձը ճանաչվում տուժող՝



- ա. Հարուցված քրեական գործը հետաքննություն կատարելու համար վարույթ ընդունելու հետ միաժամանակ, եթե այդ պահին հայտնի է հանցագործությունից տուժած անձը:
- բ. Հարուցված քրեական գործը նախաքննություն կատարելու համար վարույթ ընդունելու հետ միաժամանակ, եթե այդ պահին հայտնի է հանցագործությունից տուժած անձը:
- գ. Հանցագործության վերաբերյալ հաղորդումների կապակցությամբ նյութերի նախապատրաստման ընթացքում, եթե այդ պահին հայտնի է հանցագործությունից տուժած անձը:
- դ. Քրեական գործ հարուցելու հետ միաժամանակ, եթե այդ պահին հայտնի է հանցագործությունից տուժած անձը:


Հարց 7.

Տուժողի իրավաչափ շահերի շրջանակում է՝

- ա. Իրեն հասցված վնասի վերականգնումը:
- բ. Իրեն վնաս պատճառած արարքի հանգամանքների լրիվ բացահայտումը ու դրա ճիշտ քրեաիրավական որակումը:
- գ. Իր նկատմամբ հանցանք կատարած անձի դատապարտումը և արդարացի պատժի նշանակումը:
- դ. Բոլոր պատասխանները միասին:

Հարց 8.

5 տարեկան Ա-ին մանկապարտեզում դաստիարակը լուսամուտի ապակին կոտրելու



պատճառով մի քանի ապտակ է տալիս և որպես պատիժ նրան տեղավորում է առանձին սենյակում և նրա վրա բանալիով փակում դուռը: Դեպքի առթիվ հարուցվում է քրեական գործ և իրականացվում է նախաքննություն: Նախաքննության փուլում երեխայի ծնողը միջնորդություն է ներկայացնում քննիչին՝ երեխային տուժող ճանաչելու մասին: Քննիչը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածի կարգավորումները¹, որոշում է կայացնում երեխայի անգործունակ լինելու հիմքով նրան տուժող ճանաչելը մերժելու մասին:

Իրավաչափ են արդյոք քննիչի պատճառաբանությունները՝

ա. Այո, քանի որ մինչև 6 տարեկան երեխաները համարվում են փոքրահասակ, որոնց փոխարեն գործարքները կնքում են նրանց ծնողները, ինչը

¹«1. Տասնչորս տարեկան չդարձած անչափահասների (փոքրահասակների) փոխարեն գործարքները, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետում նշվածների, նրանց անունից կարող են կնքել միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները: 2. Վեցից մինչև տասնչորս տարեկան փոքրահասակներն իրավունք ունեն ինքնուրույն կնքել՝ 1) մանր կենցաղային գործարքներ. 2) նոտարական վավերացում կամ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում չպահանջող՝ անհատույց օգուտներ ստանալուն ուղղված գործարքներ. 3) օրինական ներկայացուցչի կամ վերջինիս համաձայնությամբ երրորդ անձանց կողմից որոշակի նպատակով կամ ազատորեն տնօրինելու համար տրամադրված միջոցները տնօրինելու գործարքներ: 3. Փոքրահասակի գործարքներով՝ ներառյալ նրա կողմից ինքնուրույն կնքված գործարքները, գույքային պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չապացուցեն, որ պարտավորությունն իրենց մեղքով չի խախտվել: Այդ անձինք, օրենքին համապատասխան, պատասխանատվություն են կրում նաև փոքրահասակի պատճառած վնասի համար»:

նշանակում է, որ նրանք չեն կարող դատավարության ինքնուրույն մասնակցի կարգավիճակ ունենալ և իրականացնել այդ կարգավիճակից բխող իրավունքներն ու պարտականությունները:


բ. Այո, քանի որ մինչև 6 տարեկան փոքրահասակները համարվում են անգործունակ, ուստի նրանք չեն կարող դատավարության ինքնուրույն մասնակցի կարգավիճակ ունենալ և իրականացնել այդ կարգավիճակից բխող իրավունքներն ու պարտականությունները:

գ. Ոչ, քանի որ երեխային տուժող ճանաչելու համար նշանակություն չունի, թե քաղաքացիական օրենսգրքով ինչ կանոններ են սահմանված երեխայի գործունակության վերաբերյալ. եթե առկա են բավարար հիմքեր երեխային տուժող ճանաչելու համար, ապա վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է նրան ճանաչել տուժող:

դ. Ճիշտ պատասխանը բացակայում է:

Հարց 9.

15 տարեկան Ա-ի հեռախոսը հափշտակելու նպատակով Բ-ն հարձակվում է նրա վրա, գցում գետնին և վերցնելով հեռախոսը՝ դիմում փախուստի: Դեպքի առթիվ հարուցվում է քրեական գործ և Ա-ն ճանաչվում է տուժող: Տուժողի լրացուցիչ հարցաքննության ժամանակ, երբ արդեն լրացած է եղել նրա 16 տարին, հարցաքննությանը ներկա օրինական ներկայացուցիչը քննիչից պահանջում է, որպեսզի նա ապահովի մանկավարժի մասնակցությունն երեխայի հարցաքննությանը, քանի



որ նախորդ հարցաքննությունները կատարվել են մանկավարժի մասնակցությամբ: Քննիչը մերժում է օրինական ներկայացուցչի միջնորդությունը՝ նշելով, որ տուժողի 16 տարին լրացել է, ուստի մանկավարժի մասնակցությունը պարտադիր չէ:


Իրավաչափ են արդյոք քննիչի պատճառաբանությունները.

ա. Այո, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում խոսվում է կոնկրետ հարցաքննության պահին մինչև 16 տարեկան երեխայի հարցաքննությանը մանկավարժի մասնակցության պարտադիր լինելու մասին՝ անկախ նրանից, թե որ տարիքում է անձը տուժել հանցագործությունից:

բ. Ոչ, քանի որ երեխան հանցագործությունից տուժել է մինչև 16 տարեկանը, հետևաբար նրա նկատմամբ պետք է կիրառվեն այն քրեադատավարական նորմերը, որոնք գործել են հանցանքը կատարելու պահին, այսինքն՝ մինչև 16 տարեկանը լրանալը, այլ ոչ թե՝ կոնկրետ քննչական կամ դատավարական գործողությունը կատարելու պահին:

գ. Այո, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում իմպերատիվ չէ մանկավարժի մասնակցությունը անչափահասի հարցաքննությանը, եթե դրան ներկա է օրինական ներկայացուցիչը:

դ. Քննիչը պետք է հաշվի առնի ոչ թե երեխայի տարիքը հարցաքննության փուլում, այլ այն, թե որքանով է դա բխում երեխայի լավագույն շահերից:



Յարց 10.

Ա-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 173-րդ հոդվածով (Ճնողի կողմից երեխային կամ տասնութ տարին լրացած անաշխատունակ զավակին դատարանի վճռով ապրուստի միջոցներ վճարելուց երեք ամսից ավելի չարամտորեն խուսափելը) այն բանի համար, որ դատարանի վճռով սահմանված՝ իր 14 տարեկան երեխայի համար անհրաժեշտ ապրուստի միջոցները վճարելուց չորս ամիս չարամտորեն խուսափել է:

Երեխայի մյուս ծնողը միջնորդություն է ներկայացնում քննիչին երեխային տուժող ճանաչելու մասին:

Քննիչը մերժում է միջնորդությունը՝ նշելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 173-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարման հետևանքով երեխային գույքային, ֆիզիկական կամ բարոյական վնաս չի պատճառվել, քանի որ այն ձևական հանցակազմ է, որի ավարտման համար օրենսդիրը հետևանքի վրա հասնելը պարտադիր չի համարել, միևնույն տուժող ճանաչելու համար պետք է առկա լինի ֆիզիկական, գույքային կամ բարոյական վնաս:

Իրավաչափ են արդյոք քննիչի պատճառաբանությունները.


ա. Այո, քանի որ ձևական հանցակազմերով նկարագրված հանցագործությունների վերաբերյալ գործերով տուժող չի ճանաչվում:

բ. Ոչ, քանի որ տուժող ճանաչվում է նաև այն դեպքերում, երբ հանցագործությունը չի ավարտվում

և հետևանք չի առաջանում, ուստի ձևական հանցակազմերի դեպքում ևս պետք է որոշում կայացվի տուժող ճանաչելու մասին:

գ. Ոչ, քանի որ երեխան քրեաիրավական առումով տուժող է, ուստի քրեական դատավարությունում պետք է հիմք ընդունվի երեխայի փաստացի կարգավիճակը և որոշում կայացի երեխայի տուժող ճանաչելու մասին:

դ. Ճիշտ պատասխանը բացակայում է:



ԴԱՍ 5

ԵՐԵԱՆԸՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԶԵՆԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՓՈԼՈՒՄ

Այս դասի (մոտիվացնող
ներածական տեսանյութ+դասի
տեքստ+բառարան+ինքնաստուգիչ հարցեր)
յուրացման համար անհրաժեշտ է
240 րոպե / 4 ժամ:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի
կայքի հեռաուսուցման բաժնում):

Քրեական գործ հարուցելը հանցակազմի
հատկանիշներ պարունակող հակաիրավական
արարքներին պետության ադեկվատ արձագանքի
դրսևորումներից մեկն է:

Անդրադառնալով քրեական գործ հարուցելու
փուլի դերին, նշանակությանը և այդ փուլում
ծագող այլ հարցերի, ՀՀ վճռաբեկ դատարանն իր
նախադեպային իրավունքում դիրքորոշում է ձևավորել
այն մասին, որ քրեական գործի հարուցման փուլը
քրեադատավարական ընթացակարգի ինքնուրույն մաս
է, որն ունի իր սկիզբն ու ավարտը, խնդիրները,
սուբյեկտները և այլն¹: Դատարանի կարծիքով,
քրեական գործ հարուցելու փուլում վարույթն
իրականացնող մարմինը հաղորդման նախնական
ստուգման միջոցով հանցագործության հատկանիշներ
մատնանշող բավարար փաստական տվյալներ ձեռք
բերելու դեպքում, ինչպես նաև քրեական գործի



Մինչև 10 րոպե

Ուշադրությամբ
կարդացե՛ք
տեքստը (օգտվելով
բառարանից) և
այն յուրացնելուց
հետո միայն անցե՛ք
ինքնաստուգիչ
հարցերին:




Մինչև 175 րոպե

¹ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. հոկտեմբերի 18-ի թիվ
ԵԿԴ/0044/11/13 որոշում // <http://www.datalex.am/>:

վարույթը բացառող դատավարական արգելքների բացակայության պայմաններում պարտավոր է հարուցել քրեական գործ, որից հետո միայն իրականացնել քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված բազմակողմանի և լրիվ քննություն: Հակառակ դրան, եթե նյութերի նախապատրաստման ընթացքում այնպիսի փաստական տվյալներ են ձեռք բերվել, որոնք հերքում են հանցագործության հատկանիշների առկայությունը, վկայում են քաղաքացիական, վարչական կամ այլ իրավահարաբերություններից բխող գործողությունների առկայության մասին, ինչպես նաև առկա են գործի վարույթը բացառող դատավարական արգելքներ, ապա վարույթն իրականացնող մարմինը պետք է որոշում կայացնի քրեական գործի հարուցումը մերժելու մասին²: Դատարանը նաև փաստում է, որ քրեական գործ հարուցելու մասին օրինական, հիմնավորված և ժամանակին կայացված որոշումն անհրաժեշտ նախապայման է հանցագործությունների արագ և ամբողջական բացահայտման, ինչպես նաև կանխարգելման համար, միևնույն ժամանակ ընդգծելով, որ քրեական գործի չհիմնավորված հարուցմամբ սահմանափակվում են անձանց իրավունքներն ու ազատությունները, նրանց վնաս է պատճառվում: Այլ խոսքով, ինչպես քրեական գործի անհիմն հարուցումը, այնպես էլ՝ հարուցման անհիմն մերժումն օրինականության կոպիտ խախտումներ են և զգալի վնաս են պատճառում անձին, հասարակությանն ու պետությանը: Վերոգրյալով պայմանավորված՝ քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է քրեական գործի հարուցման հարցը լուծելու համար անհրաժեշտ միասնական և պարտադիր կարգ, որի շրջանակներում վարույթն իրականացնող մարմինը պետք է պարզի գուտ քրեական գործ

²<http://www.datalex.am>:




հարուցելու առիթների և հիմքերի առկայության կամ բացակայության փաստը, այլ ոչ թե բացահայտի հանցագործությունը կամ հաստատի անձի մեղավորությունը կամ անմեղությունը³:

ՀՀ քր. դատ. օր.-ի՝ քրեական գործ հարուցելու կարգը սահմանող նորմերի վերլուծությունից և ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած դիրքորոշումներից ուղղակի հետևում է, որ օրինական և հիմնավորված քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ են օրենքով նախատեսված առիթ և բավարար հիմքեր, որոնք, եթե առերևույթ առկա չեն, ապա պարզվում են քրեական գործի հարուցման փուլում՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 180-րդ հոդվածով նախատեսված կարգով իրավասու մարմինների իրականացրած քննության կամ նյութերի նախապատրաստման արդյունքում:

Քրեական գործ հարուցելու առիթները հստակ և սպառիչ թվարկված են ՀՀ քր. դատ. օր.-ի 176-րդ հոդվածում և կոնկրետացված՝ 177-179-րդ հոդվածներում: Ըստ այդ հոդվածների՝ քրեական գործ հարուցելու առիթներն են՝

1. հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.
2. հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները.
3. հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:

³<http://www.datalex.am>:




Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Է.Կարապետյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «(...) Հանցագործության մասին հաղորդումը՝ որպես քրեական գործ հարուցելու առիթ, իրենից ներկայացնում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի գրավոր կամ բանավոր դիմումը քրեական հետապնդում իրականացնող մարմնին՝ կոնկրետ հանցագործության տարրեր պարունակող նախապատրաստվող կամ կատարված հանցագործության մասին տեղեկատվությամբ:

Առիթը պայման է, որի առկայության դեպքում օրենքը լիազորում է իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց մտնել իրավահարաբերությունների մեջ, կատարել գործողություններ, որոնք իրենց միասնությամբ ներկայացնում են քրեական դատավարության սկզբնական փուլի գործունեություն:


Քրեական գործի հարուցման առիթները պետք է բովանդակեն տեղեկություն հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին: Միայն այս դեպքում դրանք կարող են հիմք հանդիսանալ ստուգելու և քրեական գործ հարուցելու կամ հարուցումը մերժելու որոշում ընդունելու համար: Այսինքն՝ քրեական գործ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ ոչ թե ցանկացած, այլ միայն հանցագործության մասին արված հաղորդումը: (...)» (տե՛ս Էմմա Կարապետյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 որոշումը):

Վերահաստատելով Է.Կարապետյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը Ռ.Նիզալյանի գործով արձանագրել



Է, որ. «Քրեական գործ հարուցելու առիթ ասելով՝ պետք է հասկանալ օրենքով սահմանված այն աղբյուրը, որտեղից իրավասու պաշտոնատար անձը տեղեկություններ է ստանում նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործությունների մասին: Հանցագործության մասին ֆիզիկական անձի հաղորդումը՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին կամ դատախազին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի իմաստով քրեական գործ հարուցելու առիթ է, հետևաբար այդպիսի հաղորդման առկայությունն ինքնին առաջ է բերում քրեադատավարական իրավահարաբերություններ՝ կապված գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության հետ:

Միևնույն ժամանակ հանցագործության մասին հաղորդումը, այդ թվում՝ ֆիզիկական անձի կողմից տրված, չի կարող լինել վերացական կամ ընդհանուր բնույթի: Որպեսզի հաղորդումը հիմք հանդիսանա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը կայացնելու համար, այն պետք է բովանդակի տվյալներ կոնկրետ հանցագործության մասին: Վերոգրյալը, սակայն, չի նշանակում, որ անձն իր հաղորդման մեջ պետք է ներկայացնի այնպիսի փաստական տվյալներ, որոնք իրենց բնույթով բավարար լինեն հանցագործության հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար: Գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու պարտականությունը քրեական գործի հարուցման փուլում կրում են հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում և հանրային-իրավական



պարտավորություններին համապատասխան: Այս փուլում վարույթն իրականացնող մարմինը հաղորդման նախնական ստուգման միջոցով հանցագործության հատկանիշներ մատնանշող բավարար փաստական տվյալներ ձեռք բերելու դեպքում, ինչպես նաև քրեական գործի վարույթը բացառող դատավարական արգելքների բացակայության պայմաններում պարտավոր է հարուցել քրեական գործ, հակառակ դեպքում՝ որոշում կայացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին»⁴:

Վերահաստատելով վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0154/11/14 որոշման մեջ արձանագրում է, որ «(...) հանցագործության մասին հաղորդումն իրավաբանական փաստ է, որն առաջացնում է այն ստուգելուն և լուծելուն ուղղված դատավարական իրավահարաբերություններ: Հաղորդումը՝ որպես քրեական գործ հարուցելու առիթ, պետք է համապատասխանի որոշակիության բովանդակային չափանիշին, մասնավորապես՝ բովանդակի տեղեկություն կոնկրետ հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին: Նշվածը, սակայն, չի ենթադրում, որ քննարկման և լուծման ենթակա է միայն այն հաղորդումը, որը պարունակում է քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունները կարող են բավարար լինել այն քննարկելուն, ստուգելուն և լուծելուն ուղղված օրենսդրական կարգավորումները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներ) գործողության մեջ դնելու համար, եթե ողջամիտ հավանակություն կա, որ դրանց ստուգման արդյունքում կարող են հայտնաբերվել, այլ

⁴ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշումը <http://www.datalex.am/>:

ոչ թե հաստատապես հայտնաբերվելու են քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քննարկված չափանիշին համապատասխանող յուրաքանչյուր հաղորդում առաջացնում է վարույթ իրականացնող մարմնի պարտականությունը դրա կապակցությամբ կայացնել ԶԶ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը (...):

Եթե առիթներն օրենքով հստակ նախատեսված են, իսկ դատական պրակտիկան պարզաբանում է դրանց էությունը, ապա քրեական գործ հարուցելու համար «բավարար հիմքեր» հասկացությունն օրենքով նախատեսված չէ, և դրա առկայության հարցը յուրաքանչյուր դեպքում որոշում է իրավասու պաշտոնատար անձը կամ մարմինը՝ ելնելով կոնկրետ հանցագործության բնույթից, տեսակից և այլ հանգամանքներից:

Ձևավորված դատական պրակտիկայի համաձայն, քրեական գործ հարուցելու հիմքերը այն տվյալներն են, որոնք վկայում են հանցագործության հատկանիշների առկայության մասին: Այլ կերպ ասած՝ քրեական գործ հարուցելու մասին օրինական և հիմնավորված որոշում կայացնելու համար իրավասու պաշտոնատար անձի կամ մարմնի տրամադրության տակ պետք է առկա լինեն բավարար տվյալներ հանցագործության փաստի (հանցակազմի օբյեկտիվ կողմի և օբյեկտի) առկայության մասին⁵: Ասվածն ուղղակիորեն բխում է ԶԶ քր. դատ. օր.-ի 182-րդ և 185-րդ հոդվածներից, որոնցից առաջինը սահմանում է քրեական գործ հարուցելու կարգը և քրեական գործ հարուցելու մասին որոշմանը ներկայացվող պահանջները,


⁵ԶԶ վճռաբեկ դատարանի 2013թ. փետրվարի 15-ի ԵԿԴ/0077/11/12 թիվ որոշումը <http://www.datalex.am/>:

իսկ երկրորդը՝ քրեական գործ հարուցելը մերժելու կարգը և քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշմանը ներկայացվող պահանջները:

Վերոգրյալից կարող ենք եզրակացնել, որ օրինական և հիմնավորված քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու համար իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի տրամադրության տակ առնվազն պետք է առկա լինեն ՀՀ քր. դատ. օր.-ի 176-րդ հոդվածով նախատեսված քրեական գործ հարուցելու օրինական առիթներից որևէ մեկը և այնպիսի բավարար տվյալներ, որոնք առերևույթ վկայում են այն հանցագործության օբյեկտի և օբյեկտիվ կողմի հատկանիշների առկայության մասին, որի համար քրեական պատասխանատվությունն նախատեսող ՀՀ քր. օր.-ի հոդվածով, հոդվածի մասով կամ կետով պետք է հարուցվի կոնկրետ քրեական գործը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ քրեական գործ հարուցելու փուլում իրականացվում է երեք խումբ գործողություններ՝ (1) հանցագործության մասին անչափահասի ներկայացրած հաղորդման ստացումը և գրանցումը, (2) հաղորդման մեջ նշված հանգամանքների ստուգումը (եթե դրա անհրաժեշտությունը առկա է տվյալ դեպքում), և (3) այդ հաղորդումը, որպես քրեական գործ հարուցելու առիթ գնահատելու և քրեական գործ հարուցելու փուլը եզրափակող որոշման կայացումը, ուստի քրեական գործ հարուցելու փուլում անչափահաս տուժողների⁶ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունն առաջանում է հենց հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու պահից, այնուհետև՝ շարունակվում հաղորդման մեջ նշված հանգամանքները ստուգելու ընթացքում և ավարտվում քրեական գործ հարուցելու

⁶Ինչպես արդեն նշել ենք նախորդ թեման քննարկելիս՝ անչափահաս տուժողը մինչև 18 տարեկան երեխան է:



կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելով:

Հանցագործության մասին հաղորդումների ստացումը և գրանցումն անչափահաս տուժողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առաջին և սկզբունքային փուլերից մեկն է, որն ապահովում է նաև անհրաժեշտ ապացուցողական նյութի արագ հավաքումը, դրանց պաշտպանությունը ոչնչացումից, վնասումից, փոփոխությունից, ենթադրյալ հանցագործությունը կատարած անձի արագ բացահայտումը և այլն⁷:

ՀՀ քր. դատ. օր.-ի համակարգային վերլուծությունից հետևում է, որ դրանում սահմանված չէ հանցագործության մասին հաղորդում ներկայացնող

⁷Այս հետևությունն ուղղակի բխում է «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017թ. նոյեմբերի 23-ի թիվ 1495-Ն որոշումից, որում, մասնավորապես, սահմանված է, որ «(...) Իրավախախտման կամ պատահարի վայր ժամանած օպերատիվ խմբի ղեկավարը և անդամները (ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում՝ ճանապարհային ոստիկանության ծառայողները) իրենց իրավասության սահմաններում պարտավոր են՝ 1) կանխել, խափանել իրավախախտումները, իրավախախտում կատարած անձանց բռնելու նպատակով ձեռնարկել անհետաձգելի միջոցառումներ. 2) իրավախախտումից, պատահարից տուժած, կյանքի կամ առողջության համար վտանգավոր այլ վիճակներում գտնվող անձանց ցույց տալ անհրաժեշտ օգնություն. 3) միջոցներ ձեռնարկել իրավախախտման կամ պատահարի վայրը պահպանելու ուղղությամբ. 4) ընդունել հայտնաբերված իրավախախտման վերաբերյալ հաղորդումներ. 5) հանցագործության հատկանիշներ անմիջականորեն հայտնաբերելիս՝ կատարել դեպքի վայրի զննություն. 6) ձեռնարկվող միջոցառումների ընթացքի մասին հայտնել տարածքային մարմնի հերթապահ մաս, իսկ անհրաժեշտության դեպքում նաև տարածքային մարմնի պետին կամ պատասխանատուին, Երևան քաղաքում՝ ճանապարհատրանսպորտային պատահարների ստուգման դեպքում՝ ճանապարհային ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն: (...)»:


Ֆիզիկական անձի կամ դիմողի նվազագույն տարիք, այսինքն՝ այն տարիքային շեմը, որից ցածր տարիքի անձինք հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու իրավունք չունեն, ինչը նշանակում է, որ զուտ տարիքի պատճառաբանությամբ, անչափահասի կողմից տրված հաղորդումը չի կարող չընդունվել, չգրանցվել, ընթացք չտրվել և դրա հիման վրա քրեական գործ հարուցելու կամ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում չկայացվել: Այս հետևությունն ուղղակիորեն բխում է հանցագործության մասին ֆիզիկական անձանց հաղորդումների ներկայացման և ընդունման կարգին վերաբերող հարցերը կանոնակարգող ՀՀ քր. դատ. օր.-ի 177-րդ հոդվածից, որում ոչ միայն սահմանված են հաղորդումների ձևին, բովանդակությանը և արձանագրմանը ներկայացվող պահանջները, այլև հաղորդում ներկայացնող ֆիզիկական անձի տարիքին և դրանով պայմանավորված նրա իրավունքների պարզաբանմանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես, հիշյալ հոդվածի 3-րդ մասում սահմանված է, որ եթե լրացել է դիմողի 16 տարին, նա նախազգուշացվում է սուտ մատնության համար պատասխանատվության մասին, որպիսի հանգամանքը վկայում է այն մասին, որ անկախ տարիքից՝ անչափահասի հաղորդումը պետք է ընդունվի և դրան պետք է օրենքով սահմանված կարգով ընթացք տրվի⁸, իսկ զուտ տարիքային հատկանիշով պայմանավորված անչափահասը նախազգուշացվում է

⁸Հանցագործությունների ընդունման, գրանցման և ընթացք տալու հետ կապված կազմակերպական և տեխնիկական հարցերը կանոնակարգված են «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017թ. նոյեմբերի 23-ի N 1495-Ն որոշմամբ:

կամ չի նախագգուշացվում սուտ մատնության համար քրեական պատասխանատվության մասին: Այստեղից էլ հետևում է, որ օրենսդիրը, ելնելով անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին նախագգուշացման չափանիշից, փաստացի երկու խմբի է բաժանում հանցագործության մասին հաղորդում ներկայացնող անչափահասներին՝ մինչև 16 տարեկանների և 16-ից 18 տարեկանների⁹:

⁹Պետք է նկատի ունենալ, որ գործնականում անչափահասներին փորձում են տարբերակել՝ հիմք ընդունելով նաև այլ չափանիշ: Թիվ ԵՂ/0227/01/18 քրեական գործով դատարանի կողմից կայացրած՝ «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ» որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքում դատախազը, չհամաձայնելով դատարանի այն պատճառաբանություններին, որ անչափահասը և նրա օրինական ներկայացուցիչը չեն բողոքել, ուստի քրեական գործ չէր կարող հարուցվել՝ նշել էր, որ գործող օրենսդրության ընդհանուր տրամաբանությունն իրավակիրառ պրակտիկայի կողմից ընկալվել և իրացվում է այնպես, որ համաձայն քաղաքացիական, քրեական, վարչական պատասխանատվության համար տարիք սահմանող նորմերի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ և 1067-րդ հոդվածներ, ՀՀ քր. օր.-ի 24-րդ հոդված, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 12-րդ հոդված)՝ տասնչորս տարին չլրացած անչափահասները և հոգեկան խանգարման հետևանքով դատարանով անգործունակ ճանաչված անձինք դիտարկվում են միևնույն կատեգորիայում, հետևաբար, 9 տարեկան տուժողին պետք է դիտարկել որպես անօգնական վիճակում գտնվող անձ և գործը քննել հանրային մեղադրանքի կարգով: Ուշագրավ է այն հանգամանքը, որ դատախազը, հիմք ընդունելով այն, որ տասնչորս տարին չլրացած երեխաների կողմից հանցագործությունների հանրային վտանգավորության չգիտակցումը և այդ հիմքով վերջինների նկատմամբ քրեական պատասխանատվության բացառումը խոսում է այն մասին, որ այդ կատեգորիայի երեխաները հանցագործության ենթարկվելու դեպքում ի վիճակի չեն գիտակցելու իրենց շահը հանցագործին քրեական պատասխանատվության ենթարկելու կամ ազատելու հարցերում: Այնուհետև համեմատական անցկացնելով նաև այն իրավակարգավորման հետ, որ մինչև տասնչորս տարին լրացած երեխաների, ինչպես նաև կասկածյալի, մեղադրյալի հետ անգործունակների հաշտվելը հիմք չէ գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար, հանգել է հետևության, որ քրեական գործ հարուցելու հարցը լուծելու դեպքում էլ մինչև 14 տարեկանների դիրքորոշումն էական չպետք է լինի, ուստի այդ անձանց դեմ ուղղված ոտնձգությունների վերաբերյալ քրեական գործերը պետք է հարուցվեն և քննվեն հանրային մեղադրանքի կարգով:


Ասվածից որոշակի վերապահում կարելի է անել՝ ելնելով ՀՀ քր. դատ. օր.-ում ամրագրված «օրինական ներկայացուցչության» ինստիտուտի համալիր վերլուծությունից, որի տեսանկյունից անչափահաս կամ անգործունակ տուժողի իրավունքները նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը (ՀՀ քր. դատ. օր.-ի 59-րդ հոդվածի 4-րդ մաս), ինչը նշանակում է, որ մինչև 16 տարեկանների փոխարեն հանցագործության մասին հաղորդում կարող են ներկայացնել նաև նրանց օրինական ներկայացուցիչները: Այս հարցերին դեռ կանոնադաշտանք՝ այստեղ նշենք, որ անկախ օրենսդրական կարգավորումների անորոշությունից, գործնականում գրեթե չի հանդիպում դեպք, երբ մինչև 16 տարեկան անչափահասները հանցագործության մասին հաղորդում ներկայացնեն ինքնուրույն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաների դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ դեպքերով քրեական գործ հարուցելու օրինական առիթ դիտարկվում է կամ անչափահասի ծնողի/օրինական ներկայացուցչի բողոքը, կամ օրենքով նախատեսված ցանկացած այլ հաղորդում, իսկ առավել տարածված է ՀՀ քր. դատ. օր.-ի 176-րդ հոդվածի 3-րդ կետում նշված՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս: Ընդ որում, գործնականում որևէ տարբերակում չի դրվում անգամ այն հարցում, թե հանցագործությունը հանրային, թե՛ մասնավոր մեղադրանքի կարգով է ենթակա քննության: Բոլոր դեպքերում, քրեական գործ հարուցելու օրինական առիթ է ընդունվում կամ անչափահասի ծնողի հաղորդումը, կամ ոստիկանության ծառայողի զեկուցագիրը, և



գործնականում չի հանդիպել մի դեպք, երբ քրեական գործ հարուցելու առիթ է դիտարկվել մինչև 16 տարեկան անչափահասի հաղորդումը: Օրինակ, քրեական գործերից մեկով 15 տարեկան անչափահասը զանգահարել էր ոստիկանության ՕԿԿ և հայտնել իրեն սեռական հարաբերություն ունենալուն հարկադրելու դեպքի մասին, սակայն դա չէր դիտվել որպես հանցագործության մասին հաղորդում: Չանգը գրանցվել էր ոստիկանության հանցագործության մասին հաղորդումների հաշվառման համապատասխան մատյանում և իրականացվել էին ստուգողական գործողություններ, որի արդյունքում պարզվել էր, որ տեղի ունեցածը պարունակում է հանցագործության հատկանիշներ, և որոշում էր կայացվել քրեական գործ հարուցելու մասին, սակայն որպես քրեական գործ հարուցելու առիթ էր դիտվել ոստիկանության ծառայողի զեկուցագիրը, այսինքն՝ իրենց լիազորություններն իրականացնելիս հանցագործության դեպքի հայտնաբերումը, այլ ոչ թե երեխայի հաղորդումը:

Եթե հանրային մեղադրանքի գործերով քրեական գործ հարուցելու առիթի հարցը խնդրահարույց չէ, քանի որ այս դեպքում էական չէ, թե հանցագործության կատարման մասին իրավասու մարմիններն ինչ աղբյուրներից են տեղեկացվում, ապա նույնը չի կարելի ասել երեխայի դեմ ուղղված և մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործությունների վերաբերյալ դեպքերի մասին:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ անչափահասի դիրքորոշումն ընդհանրապես հաշվի չի առնվում քրեական գործ հարուցելու կամ մերժելու մասին որոշում կայացնելիս՝ մասնավոր մեղադրանքի գործերի դեպքում. ավելին,



Եթե անչափահասի օրինական ներկայացուցիչը բողոքում է ենթադրյալ հանցագործությունը կատարած անձի դեմ, ապա քրեական գործ հարուցելու առիթ է ընդունվում հենց օրինական ներկայացուցչի բողոքը՝ առանց ճշտելու անչափահասի դիրքորոշումը, իսկ եթե չի բողոքում, ապա քրեական գործը հարուցվում է հանրային մեղադրանքի գործերին բնորոշ կարգով՝ առանց հաշվի առնելու ինչպես անչափահաս տուժողի, այնպես էլ նրա օրինական ներկայացուցչի դիրքորոշումը: Նման դեպքերում քրեական գործը հարուցվում է հանրային մեղադրանքի կարգով և որպես պատճառաբանություն գրեթե միշտ նշվում է, որ տուժողն *անչափահաս է, օրինակ՝ 8, 9, 12 տարեկան է, ինչի հետևանքով չի կարող հայտնել իր կամարտահայտությունը բողոքի վերաբերյալ:* Օրինակ, թիվ ԵԱՆԴ/0097/01/17 քրեական գործով մեղադրողը, պատասխանելով դատարանի այն հարցին, թե ինչու է քրեական գործը հարուցվել և քննվել հանրային մեղադրանքի կարգով այն դեպքում, երբ տուժողի օրինական ներկայացուցիչը բողոք չի ներկայացրել, իսկ երեխայի կարծիքն առհասարակ չի ճշտվել՝ մեղադրողը հայտնել է հետևյալը. «Վճռաբեկ դատարանի հայտնի որոշմամբ¹⁰ անդրադարձ է կատարվել մասնավոր մեղադրանքի գործերով անչափահասների գործերին: Նկատելով, որ անչափահասներն ինքնուրույն չեն կարող դիրքորոշում հայտնել՝ ելնելով իրենց ֆիզիոլոգիական առանձնահատկություններից, և նրանց փոխարեն իրենց ծնողները ևս չեն կարող դիրքորոշում հայտնել, իսկ Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշված է, որ անօգնական կամ այլ վիճակից ելնելու պայմաններում, եթե տուժողը չի կարող հայտնել բողոք ունենալու կամ հաշտության մասին, ապա քրեական գործի

¹⁰Խոսքը ՀՀ Վճռաբեկ դատարանի 2008թ. դեկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-73/08 որոշման մասին է:

քննությունը շարունակվում է հանրային մեղադրանքի գործերի համար սահմանված կարգով, բացի այդ, հաշվի առնելով նաև անչափահասների իրավունքների պաշտպանության հարցում պետական հոգածությունը, այսինքն այն, որ պետությունն իր հովանու տակ է վերցնում անչափահասների իրավունքների պաշտպանությունը, այդ իսկ առումով անհրաժեշտ է սույն քրեական գործով վարույթը շարունակել հանրային մեղադրանքի կարգով՝ հաշվի առնելով, որ տուժողն անչափահաս է»¹¹:

Թվում է, թե իրավասու մարմինները և պաշտոնատար անձինք ելնում են անչափահասի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կամ երեխայի լավագույն շահերի¹² գաղափարից, երբ


¹¹ԵԱՆԴ/0097/01/17 քրեական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2018թ. փետրվարի 28-ի՝ «Քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը» // <http://www.datalex.am/>:

¹²ՄԱԿ-ի ուղեկիշների 8-րդ կետի համաձայն՝ «(...) հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատությունն ապահովելու նպատակով, այդ երեխաների բարեկեցության համար պատասխանատու մասնագետները պետք է հարգեն հետևյալ փոխկապակցված սկզբունքները. (...) գ) երեխայի լավագույն շահերը. մեղադրյալ և դատապարտյալ իրավախախտների իրավունքները երաշխավորելու հետ մեկտեղ՝ յուրաքանչյուր երեխա իրավունք ունի պահանջելու, որպեսզի իր լավագույն շահերին առաջնային ուշադրություն դարձվի: Դա ներառում է պաշտպանության և ներդաշնակ զարգացման հնարավորությունների իրավունքը. (i) պաշտպանությունը. յուրաքանչյուր երեխա ունի կյանքի և գոյատևելու, զրկանքի, չարաշահման կամ անտեսման ցանկացած դրսևորումից, ներառյալ՝ ֆիզիկական, հոգեբանական, հոգեկան և հուզական չարաշահումից և անտեսումից զերծ մնալու իրավունք, (ii) ներդաշնակ զարգացումը. յուրաքանչյուր երեխա ներդաշնակ զարգացման հնարավորության և ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական և սոցիալական աճին համարժեք կենսապայմանների իրավունք ունի: Երեխային վնաս պատճառելու դեպքում պետք է ձեռնարկվեն բոլոր քայլերը՝ երեխայի առողջ զարգացումն ապահովելու ուղղությամբ. (...)»:

Երեխաների դեմ ուղղված և մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը հարուցում են առանց նրանց կարծիքը ճշտելու՝ հանրային մեղադրանքի գործերին բնորոշ կարգով, ընդ որում՝ անտեսելով նաև անչափահասի օրինական ներկայացուցչի դիրքորոշումը, մինչդեռ, նման կերպ վարվելով՝ նրանք թույլ են տալիս Երեխայի՝ ՀՀ Սահմանադրությամբ և ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 1989թ. նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով ընդունված և 1990թ. սեպտեմբերի 2-ին ուժի մեջ մտած՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտում:

Մինչ այս հարցերին անդրադառնալը՝ նկատենք, որ ձևավորված իրավակիրառ պրակտիկան հետևանք է ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. դեկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-73/08 որոշման մեջ արտահայտած մոտեցումների և դրանց յուրովի մեկնաբանության:

Քննարկվող որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը, վերլուծելով մասնավոր մեղադրանքի կարգով քրեական գործ հարուցելու դատավարական կարգը սահմանող նորմերը, մասնավորապես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 33-րդ և 183-րդ հոդվածները, իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «մասնավոր մեղադրանքով գործ հարուցելու և դրանով քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը լիովին կախված է դիմողի՝ հանցավորին քրեական պատասխանատվության ենթարկելու միջոցով իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար քրեական հետապնդման մարմնին դիմելու ցանկությունից և կամարտահայտությունից:




(...) ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործը ենթակա է կարճման, եթե բացակայում է դիմողի բողոքը:

ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 33-րդ կետի համաձայն, դիմող հանդիսանում է յուրաքանչյուր անձ, որը դիմել է դատարան, քրեական հետապնդման մարմնին կամ հավատարմագրված փաստաբանին¹³ քրեական դատավարության կարգով խախտված իրավունքների պաշտպանության համար:

ՀՀ քր. դատ. օր.-ի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, տուժող է ճանաչվում այն անձը, որին քր. օր.-ով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե քր. օր.-ով չթույլատրված արարքի կատարումը ավարտվեր:

Վերոնշյալ երկու հոդվածների վերլուծությունից բխում է, որ մասնավոր մեղադրանքի գործերով «դիմող» եզրույթն ավելի լայն է, քան «տուժողը»: Քրեական դատավարությունում «դիմող» կարող է հանդիսանալ յուրաքանչյուր ոք, ով իր խախտված իրավունքների պաշտպանության նպատակով դիմել է դատարան, քրեական հետապնդման մարմնին կամ հավատարմագրված փաստաբանին: Անձը «տուժող» ճանաչվում է վարույթն իրականացնող մարմնի


¹³Այս տերմինի կիրառումը պայմանավորված է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման ընդունման պահին այդ ինստիտուտի գոյությամբ:



կողմից՝ կատարվող ստուգողական գործողությունների արդյունքում պարզելով, որ անձի իրավունքների խախտումը քրեական օրենքով արգելված արարքի կատարման հետևանք է, և այդ արարքի կատարման հետևանքով դիմողին անմիջականորեն պատճառվել է կամ կարող էր պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս:

«Դիմողը» քրեադատավարական գործունեության ոլորտ ներգրավվում է սեփական նախաձեռնությամբ, առանց վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշման, մինչդեռ «տուժող» ճանաչվելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմինները կայացնում են ինքնուրույն դատավարական որոշում: Այսինքն, նյութերի նախապատրաստման փուլում ՀՀ քրեադատավարական օրենսդրության իմաստով տուժող չկա, «տուժող» քրեադատավարական սուբյեկտը քրեական դատավարությունում ի հայտ է գալիս քրեական գործի հարուցումից հետո կամ գործի հարուցման հետ միաժամանակ՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվող որոշման հիման վրա:

(...) Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածի 1-ին մասում առկա այն ձևակերպումը, որի համաձայն՝ «(...) հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա (...))», հակասում է ՀՀ քր. դատ. օր.-ի տրամաբանությանը, քանի որ նշված ձևակերպմամբ ստացվում է, որ մասնավոր հետապնդման գործ հարուցելու մասին որոշում կայացվում է տվյալ դատավարական փուլում գոյություն չունեցող սուբյեկտի բողոքի հիման վրա: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քր.




դատ. օր.-ի 183-րդ հոդվածում թվարկված մասնավոր հետապնդման գործերով վարույթի հարուցման հիմք պետք է դիտել ոչ թե տուժողի, այլ դիմողի բողոքը, որի բացակայության դեպքում վարույթը ենթակա է կարճման ՅՅ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով:

(...) Վճռաբեկ դատարանը մասնավոր հետապնդման գործերով «դիմող» համարում է այն անձանց, ում իրավունքները խախտվել են քր. օր.-ով չթույլատրված արարքով, ինչպես նաև նրանց, ովքեր օրենքի ուժով հանդիսանում են անչափահաս կամ անգործունակ անձանց օրինական ներկայացուցիչներ, եթե խախտվել են նրանց խնամարկյալների իրավունքները:


Վերոնշյալ մոտեցումից բացառություն է այն դեպքը, երբ անձը, ում իրավունքները խախտվել են, իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման իրավիճակում քրեական գործ հարուցելու առիթը՝ օրինական, իսկ հիմքերը՝ բավարար լինելու դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով: (...):»:

Վճռաբեկ դատարանի վերոգրյալ որոշման վերլուծությունից ուղղակի հետևում է, որ դրանում քննարկման առարկա է դարձել հենց մասնավոր մեղադրանքի կարգով քննվող գործերով քրեական գործ հարուցելու **օրինական առիթի** հարցը, մասնավորապես այն, թե ով է հանդիսանում մասնավոր մեղադրանքի գործերով քրեական գործ



հարուցելու համար «դիմողը», և, վերլուծելով համապատասխան քրեադատավարական նորմերը, Ղատարանը հանգել է եզրակացության, որ այն դեպքում, երբ քր. օր.-ով չթույլատրված արարքով խախտվել են անչափահասի իրավունքները, ապա մասնավոր մեղադրանքի կարգով քննվող գործերով քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ «դիմող»-ը անչափահասի օրինական ներկայացուցիչն է: Ինչը նշանակում է, որ այն դեպքում, երբ մասնավոր մեղադրանքի կարգով քննվող գործերով քր. օր.-ով չթույլատրված արարքով խախտվել են անչափահասի իրավունքները, ապա քրեական գործ կարող է հարուցվել և քրեական հետապնդում իրականացվել, եթե առկա է անչափահասի օրինական ներկայացուցչի բողոքը: Այլ կերպ ասած՝ երեխայի դեմ ուղղված և մասնավոր մեղադրանքի կարգով քննվող որևէ հանցագործության դեպքով քրեական գործ հարուցելու օրինական առիթ է անչափահասի օրինական ներկայացուցչի (որպես դիմողի) բողոքը, որի բացակայությունը բացառում է քրեական գործ հարուցելը և անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նման դիրքորոշում արտահայտելով, բավարար չափով հաշվի չի առել «անչափահասի իրավունքների» պաշտպանության միջազգային և սահմանադրական սկզբունքները, քանի որ անչափահասին ոչ միայն զրկել է օրենքով, Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով երաշխավորված իրավունքներից, այլև նրա իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ուղղակիորեն կախվածության մեջ է դրել օրինական ներկայացուցչից, իսկ իրավակիրառ պրակտիկան իր հերթին զարգացել է այնպես, որ անտեսվում է անչափահասի դիրքորոշումն՝ առհասարակ: Բացի




այդ, ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը խոցելի է նաև այն տեսանկյունից, որ տարանջատում դրված չէ մինչև 16 և 16-ից 18 տարեկան անչափահասների միջև, ստացվում է, որ 16-ից բարձր անչափահասների դեպքում ևս հանցագործության մասին հաղորդում ներկայացնող կամ դիմող կարող է լինել անչափահաս օրինական ներկայացուցիչը: Մինչդեռ այդ տարիքային խմբի մասին ուղղակի նշված է հանցագործությունների մասին ֆիզիկական անձանց հաղորդումների ներկայացման և արձանագրման կարգը սահմանող ՀՀ քր. դատ. օր.-ի 177-րդ հոդվածի 3-րդ մասում, ինչի մասին նշեցինք վերը, ուստի, այս տարիքային խմբի մասով վերապահում չանելը հակասում է ոչ միայն ՀՀ քր. դատ. օր.-ի 177-րդ հոդվածին, այլև ՀՀ քրեական օրենսդրությանը:

Այս տեսանկյունից առավել ընդունելի են ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. դեկտեմբերի 20-ի թիվ ՍԴՈ-1333 որոշման մեջ ձևավորած դիրքորոշումները:

Վերլուծելով ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, սահմանադրական դատարանը նշում է հետևյալը. *«Սահմանադրական վերոնշյալ նորմերից հետևում է, որ սահմանադիրը տվյալ նորմով երեխային վերապահել է.*

- *ոչ միայն իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, այլ նաև, ի թիվս այլնի, իրեն վերաբերող դատական գործընթացներում լսվելու իրավունք,*
- *լսվելու իրավունքի շրջանակներում՝ դատական մարմինների կողմից իր կարծիքը հաշվի առնելու իրավունք: Միաժամանակ, Սահմանադրության տվյալ հոդվածը չի նախատեսում տարիքային կամ այլ որևէ սահմանափակում: «Հաշվի առնողի» համար պարտականություն է սահմանված՝ ելնել երեխայի տարիքից և հասունության աստիճանից: Բացի*



այդ, ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասը հանրային իշխանության վրա դնում է հստակ պարտականություն՝ առաջնահերթ ուշադրության արժանացնել երեխայի շահերին՝ նրան վերաբերող հարցերում: Հետևաբար, սահմանադրի նպատակն է՝ երեխային վերաբերող հարցերում տարբեր շահերի առկայության դեպքում առաջնահերթ պաշտպանել երեխայի շահերը, այնուհետև՝ առկա մյուս շահերը, իսկ այդ շահերի հակասության դեպքում հանրային իշխանությունը պարտավոր է պաշտպանել երեխայի շահերը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, 37-րդ հոդվածի, մասնավորապես՝ 1-ին և 2-րդ մասերի դրույթները գործում են անմիջականորեն, և դատական պրակտիկան պարտավոր է առաջնորդվել այդ պահանջով:


Վերոգրյալից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառ պրակտիկայում չպետք է փորձել երեխայի լսվելու իրավունքը պայմանավորել տարիքային սահմանափակումով, ... և չի բխում Սահմանադրության 37-րդ հոդվածի պահանջներից: Վարույթն իրականացնող մարմինն է պարտավոր ապահովել երեխայի լսվելու իրավունքի իրացումը՝ անկախ տարիքից, հաշվի առնել այն և առաջնահերթ կարգով երեխայի շահերից ելնելով որոշում կայացնել: (...)»:

Թեև սահմանադրական դատարանի դիրքորոշումներն արտահայտվել են հարուցված քրեական գործի շրջանակներում անչափահաս տուժողի կողմից կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու իրավունք ունենալու խնդրի

համատեքստում, սակայն դրանք հավասարապես վերաբերում են նաև մասնավոր մեղադրանքի կարգով քրեական գործ հարուցելու դեպքում դիմողի բողոքին, ուստի հետաքննության, նախաքննության և դատախազության մարմինները պետք է հիմք ընդունեն սահմանադրական դատարանի կողմից ձևավորած չափանիշները և յուրաքանչյուր դեպքում լսեն նաև անչափահասին: Իհարկե, պետք է նկատել, որ որոշ մանկահասակ երեխաների կարծիքը լսելը պարզապես անիրավաչափ է, ուստի, այս դեպքում վարույթն իրականացնող մարմինն է, որ պետք է գնահատի այդ հանգամանքը. նրան է վերապահված գնահատման հայեցողությունը:

Երեխայի տարիքի, հասունության մակարդակի և նրան առաջադրված հարցի բարդության միջև հարաբերակցության, երեխայի շահերն առաջնահերթ ուշադրության արժանացնելու հարցերին է նվիրված նաև Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, որի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. *«Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ նրանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:*

Նույն կոնվենցիայի 12-րդ հոդվածը սահմանում է. *«1. Իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան*



պատշաճ ուշադրություն»:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն, 2013թ. մայիսի 29-ին հատուկ անդրադարձ կատարելով երեխայի լավագույն շահերի ապահովմանը, մասնավորապես արձանագրում է, որ բոլոր երկրներն են պարտավոր երաշխավորել, որպեսզի երեխայի լավագույն շահերն առաջնահերթության կարգով հաշվի առնվեն նրա վերաբերյալ որոշումներ կայացնելիս՝ ինչպես դատարանների, վարչական մարմինների կողմից, այնպես էլ իրավակարգավորման գործընթացում»:


Քննարկվող համատեքստում կարևոր պահանջներ է սահմանում նաև ՄԱԿ-ի Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշները, որի հավելվածի 3-րդ բաժնի 8-րդ կետի «դ» ենթակետում սահմանված է, որ յուրաքանչյուր երեխա, ներպետական դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է իրավունք ունենա ազատորեն, սեփական բառերով արտահայտելու իր տեսակետները, կարծիքները և համոզմունքները, և հատկապես՝ ներազդելու իր կյանքին առնչվող որոշումների ընդունման վրա, ներառյալ դատական գործընթացների արդյունքում կայացվող որոշումները. նրանց կարծիքները պետք է հաշվի առնվեն՝ ելնելով վերջիններիս ունակություններից, տարիքից, մտավոր հասունությունից և զարգացման աստիճանից:

Ուշագրավ է նաև ՄԱԿ-ի ուղենիշների՝ «Խտրականությունից պաշտպանված լինելու իրավունքը» վերտառությամբ 6-րդ բաժնի 18-րդ կետում սահմանված այն կանոնը, որ տարիքի գործոնը չպետք է խոչընդոտի արդարադատության գործընթացին լիարժեք մասնակցելու՝ երեխայի իրավունքը: Յուրաքանչյուր

երեխա պետք է դիտվի որպես լիարժեք վկա, որը կարող է հարցաքննվել, իսկ նրա տված ցուցմունքները չպետք է անվավեր կամ ոչ արժանահավատ համարվեն՝ ելնելով միայն երեխայի տարիքից, քանի դեռ նրա տարիքը և հասունությունը թույլ են տալիս ողջամիտ և արժանահավատ ցուցմունք տալ՝ հաղորդակցման կամ այլ հարցում օգնություն ստանալով կամ առանց դրա:

Ըստ ՄԱԿ-ի ուղենիշների 8-րդ կետի՝ «(...) հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատությունն ապահովելու նպատակով, այդ երեխաների բարեկեցության համար պատասխանատու մասնագետները պետք է հարգեն հետևյալ փոխկապակցված սկզբունքները. (...) (դ) *մասնակցության իրավունքը*. յուրաքանչյուր երեխա, ներպետական դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է իրավունք ունենա ազատորեն, սեփական բառերով արտահայտելու իր տեսակետները, կարծիքները և համոզմունքները, և հատկապես՝ ներազդելու իր կյանքին առնչվող որոշումների ընդունման վրա, ներառյալ դատական գործընթացների արդյունքում կայացվող որոշումները. նրանց կարծիքները պետք է հաշվի առնվեն՝ ելնելով վերջիններիս ունակություններից, տարիքից, մտավոր հասունությունից և զարգացման աստիճանից»:


Վերոգրյալից հետևում է, որ քննարկվող հարցի վերաբերյալ ձևավորված իրավակիրառ պրակտիկան անհրաժեշտ է հիմնովին փոփոխել, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած մոտեցումները և ձևավորված պրակտիկան սահմանափակում են անչափահասների իրավունքները, տարիքի չափանիշով պայմանավորված՝ հանգեցնում են խտրական վերաբերմունքի, զրկում նրանց միջազգային



փաստաթղթերով երաշխավորված լսված լինելու և իրեն վերաբերող հարցերին մասնակցության իրավունքից, ուստի, իրավասու մարմինները պետք է առաջնորդվեն միջազգային իրավական ակտերի պահանջներով և ՀՀ սահմանադրական դատարանի՝ վերը վկայակոչված դիրքորոշումներով՝ բացառելու համար երեխայի տարիքով պայմանավորված ցանկացած խտրականություն, իրավունքների կամայական սահմանափակում:

Հարցն առավել արդիական է՝ հիմք ընդունելով այն, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածը 21.12.2017թ. լրացվել է 1.1-րդ մասով, որի համաձայն՝ երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: Երեխայի կարծիքը լսելիս իրավասու մարմինը օրենքով նախատեսված դեպքերում ներգրավում է մանկական հոգեբանի կամ մանկավարժի կամ սոցիալական աշխատողի:

Սահմանադրական դատարանի դիրքորոշումներով առաջնորդվելու պահանջը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ, ինչպես իրավացիորեն նշում է դատարանը՝ գործնականում կարող են հանդիպել դեպքեր, երբ անչափահասը դառնում է հենց ծնողի հանցավոր գործողության զոհը, որպիսի պարագայում փոքրահասակի մյուս ծնողն է հանդես գալու որպես օրինական ներկայացուցիչ և տարբեր օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով կարող է բողոք չներկայացնել մյուս ծնողի դեմ, ինչը կարող է բխել կամ չբխել երեխայի լավագույն շահերից: Հետևաբար, որպեսզի չխախտվեն երեխայի իրավունքներն ու օրինական շահերը, նման դեպքերում ևս քրեական գործ հարուցելու կամ չհարուցելու անհրաժեշտության




գնահատումը պետք է վերապահել վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը՝ ելնելով կոնկրետ իրավիճակից, միաժամանակ նկատի ունենալով, որ այն չի կարող լինել բացարձակ, այսինքն՝ նման իրավիճակներում վարույթն իրականացնող մարմինը ոչ թե պարտադիր պետք է քրեական գործ հարուցի հանրային մեղադրանքի կարգով, այլ պետք է գնահատի, թե որքանով է դա բխում երեխայի լավագույն շահերից և միայն այդ հանգամանքը հաստատելու դեպքում է, որ իրավունք է ստանում հարուցելու քրեական գործ: Այս տրամաբանության մեջ է նաև ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված այն դրույթը, որի ուժով դատախազն իրավասու է մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործությունների վերաբերյալ գործերով հարուցելու քրեական գործ ընտանիքում բռնության դեպքերում, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Այս դեպքում քրեական գործը հարուցվում և քննվում է ընդհանուր կարգով, և տուժողի ու մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը չի դադարեցվում:

Այս դեպքում դատախազը պետք է հիմնավորի երկու կարևոր հանգամանք, այն է՝ ընտանեկան բռնության դեպքի առկայությունը և տուժողի անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստը¹⁴:

Այսպիսով, անչափահասի նկատմամբ կատարված և մասնավոր մեղադրանքի կարգով

¹⁴Այս հարցերին մանրամասն կանոնադաշտնանք քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հարցերը քննարկելիս:



քննվող հանցագործությունների վերաբերյալ դեպքերով քրեական գործ հարուցելու առիթ կարող է լինել՝


- 1. անչափահասի հաղորդումը, որը պետք է ՀՀ կառավարության 2017թ. նոյեմբերի 23-ի N 1495-Ն որոշմամբ սահմանված կարգով ընդունվի, գրանցվի և ընթացք տրվի,**
- 2. եթե անչափահասն այնպիսի տարիքի է, որ չի հասկանում և գիտակցում, թե ինչ է տեղի ունեցել և չի կարող պատշաճ գնահատել ստեղծված իրավիճակը, ապա անչափահասի օրինական ներկայացուցչի հաղորդումը՝ լսելով անչափահասի դիրքորոշումը (եթե այնպիսի տարիքի է, որ կարող է արտահայտել նման դիրքորոշում). այս դեպքում քրեական գործ հարուցելու հարցը պետք է լուծել՝ հիմք ընդունելով երեխայի լավագույն շահերը:**

Եթե ենթադրյալ հանցագործության կատարման մեջ կասկածվողը անչափահասի ծնողն է, ապա, լսելով երեխային (եթե այնպիսի տարիքի է, որ կարող է արտահայտել նման դիրքորոշում) և մյուս ծնողին, քրեական գործ հարուցելու կամ չհարուցելու հարցը պետք է գնահատի իրավասու մարմինը՝ ելնելով երեխայի լավագույն շահերից: Եթե իրավասու մարմինը նպատակահարմար գտնի քրեական գործ հարուցելը, ապա այն պետք է հարուցվի հանրային մեղադրանքի գործերին բնորոշ կարգով: Նման կերպ պետք է վարվի իրավասու մարմինը նաև այն դեպքում, երբ անչափահասի և օրինական ներկայացուցչի դիրքորոշումը տարբերվում են, օրինակ՝ երեխան բողոքում է, իսկ ծնողը՝ ոչ, կամ հակառակը, երբ ծնողը բողոքում է, իսկ երեխան՝ ոչ, նկատի ունենալով, որ հնարավոր է, որ երեխային համոզելու կամ վախի ազդեցության տակ ստիպել են չբողոքել հանցանք կատարած անձի դեմ կամ հակառակը՝ բողոքել, և այլն:

Գտնում ենք, որ բոլոր դեպքերում կամայականությունները բացառելու համար մասնավոր մեղադրանքի գործերով՝ քրեական գործ հարուցելու և հանրային մեղադրանքի կարգով քննելու դեպքում, քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ պետք է հստակ նշվի, թե ինչով է պայմանավորված մասնավոր մեղադրանքի կարգով քննվող գործի հարուցումը և քննումը՝ հանրային մեղադրանքի գործերին բնորոշ կարգով: Այս առումով անընդունելի է այն պրակտիկան, երբ մեղադրական եզրակացության մեջ նշվում է, թե ինչու է քրեական գործը հարուցվել հանրային մեղադրանքի գործերին բնորոշ կարգով: Դա հակասում է ինչպես մեղադրական եզրակացության բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջներին, այնպես էլ անձի իրավունքներին ու օրինական շահերին, քանի որ անձը մինչև մեղադրական եզրակացության կազմումը չի կարող տեղեկանալ և հասկանալ, թե ինչու է մասնավոր մեղադրանքի գործը հարուցվել հանրային մեղադրանքի կարգով: Եթե քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ նշվի այդ մասին, ապա անձը կարող է ընդհուպ բողոքարկել այդ որոշման իրավաչափությունը դատախազին, նաև դատարան¹⁵:

Նկատի ունենալով, որ հանցագործությունների մասին հաղորդումների առթիվ ոչ միշտ է, որ հնարավոր է լինում հարուցել քրեական գործ և իրականացնել

¹⁵Սա այն եզակի դեպքերից է, երբ դատարանը հետագա դատական վերահսկողության կարգով իրավասու է քննության առարկա դարձնելու քրեական գործ հարուցելու իրավաչափությունը և գնահատելու այն, որը միանշանակ բխում է ենթադրյալ հանցանք կատարած անձի շահերից: Այս առումով ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը զարգացման անհրաժեշտություն ունի:



Նախաքննությունն կամ որոշում կայացնել քրեական գործ հարուցելը մերժելու մասին, քանի որ լինում է տեղեկատվության պակաս, ուստի հաղորդման մեջ, դիմումներում ներկայացված տեղեկությունների ստուգման, վերլուծության, համադրման և դրանց հիման վրա կատարված արարքի հատկանիշների պարզաբանման, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործ հարուցելը մերժելու հարցի լուծման համար իրավասու մարմիններն իրականացնում են որոշակի ստուգողական և օրենքով ուղղակիորեն թույլատրված անհետաձգելի քննչական և այլ դատավարական և ոչ դատավարական գործողություններ¹⁶: Այդ թույլատրելի գործողությունների թվարկումը տրված է ՀՀ քր. դատ. օր.-ի 180-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝


«(...) 2. [հանցագործությունների մասին հաղորդումների ստուգման և լուծման համար] [նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն: (...)]»¹⁷:

¹⁶Այսուհետ՝ նյութերի նախապատրաստում.

¹⁷ Պետք է նկատել, որ հանցագործությունների մասին հաղորդումների ստուգման հետ կապված կազմակերպական և տեխնիկական հարցերը կանոնակարգված են «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017թ. նոյեմբերի 23-ի N 1495-Ն որոշման հավելվածի 4-րդ բաժնում:

Հանցագործության մասին հաղորդումների ստուգումը ենթադրում է այդ հաղորդումներում և ներկայացված նյութերում պարունակվող սկզբնական կամ առաջնային տեղեկատվության ուսումնասիրություն, վերլուծություն և գնահատում՝ քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ հիմքերի առկայության կամ բացակայության տեսանկյունից: Այդ ստուգումը որոշ դեպքերում կարող է սահմանափակվել զուտ ներկայացված նյութերի և ստացված տեղեկությունների վերլուծությամբ, մնացած դեպքերում կարող է դրանց լրացուցիչ ստուգման անհրաժեշտություն առաջանալ, որը ենթադրում է, մասնավորապես՝ *լրացուցիչ փաստաթղթեր և այլ նյութեր պահանջելը, բացատրություններ վերցնելը, դեպքի վայրի զննություն կատարելը, հետազոտման համար նմուշներ վերցնելը, փորձաքննություն նշանակելը և այլն: Այդ գործողությունների կատարման անհրաժեշտությունը թելադրված է հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու և քննության սկզբնական պահին առկա քննչական իրադրությամբ:*

Երեխաների դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով վարույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անկախ օրենսդրական կարգավորումներից և հնարավորություններից, քննարկվող դեպքերով հաղորդումների ստուգման առավել տարածված միջոցը **բացատրություն վերցնելն է:** Ընդ որում, բացատրություն վերցվում է ինչպես անչափահաս տուժածներից, անչափահաս ականատեսներից, այնպես էլ այն անչափահասներից, ում մասնակցությունը կամ առնչությունը ենթադրյալ հանցագործությանը



ստուգվում է¹⁸, ուստի այստեղ կանդիդատնանք անչափահասներից բացատրություն վերցնելու հետ կապված վեր հանված խնդիրներին:

Բացատրություն վերցնելու հիմքերը, դատավարական կարգն ու պայմաններն օրենքում սահմանված չեն, այլ ընդամենը ամրագրված է, որ բացատրությունն իրենից ներկայացնում է բանավոր կամ գրավոր փաստարկումներ, որոնք բերում են դատավարության մասնակիցները և դիմողները՝ հիմնավորելու համար իրենց կամ ներկայացվող անձի պահանջները, ինչպես նաև այլ անձանց բանավոր կամ գրավոր հաղորդումները, որոնք տրվում են մինչև քրեական գործ հարուցելը (ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 35-րդ կետ):

Ըստ այդմ, կարող ենք արձանագրել, որ մինչև քրեական գործ հարուցելը այս կամ այն անձից բացատրություն վերցնելու նպատակն է՝ պարզաբանել՝
ա. կատարված դեպքի հանգամանքները (տեղը, ժամանակը, երեխայի նկատմամբ դրսևորված բռնության եղանակը և այլն),
բ. այն անձանց տվյալները, ովքեր կասկածվում են այդ արարքի կատարման մեջ, ինչպես նաև ականատես են եղել կատարված դեպքին կամ ունեն տեղեկատվություն դրա հանգամանքների մասին,
գ. երեխայի գործողությունների բնույթը (արդյոք դիմադրել է, գտնվել է անօգնական վիճակում) և այլն,


¹⁸Այստեղ չենք անդրադառնում այլ անձանցից (երեխայի ծնողներից կամ նրանց փոխարինող այլ անձանցից, հարազատներից, բարեկամներից, հարևաններից, կրթական կազմակերպության աշխատակիցներից, երեխային բուժօգնություն ցույց տված բժշկական հաստատության աշխատակիցներից) բացատրություն վերցնելու հարցերին, քանի որ մեր խնդիրը երեխաների իրավունքների ապահովման հարցերի քննարկումն է:

դ. այլ հանգամանքներ, որոնք որոշվում են՝
ելնելով կոնկրետ դեպքի հանգամանքներից,
հաղորդումներում և այլ դիմումներում պարունակվող
տեղեկատվությունից և այլն:

Նկատի ունենալով, որ օրենսդրորեն ամրագրված
չեն բացատրություն վերցնելու հատուկ կանոններ,
գործնականում հարց է ծագում՝ որքանով է անհրաժեշտ
մանկավարժ հրավիրելը՝ անչափահասից բացատրություն
վերցնելիս, իրավունք ունե՞ն արդյոք անչափահասի
օրինական ներկայացուցիչները ներկա գտնվելու
բացատրություն վերցնելու գործողությանը և այլն:

Իրավակարգավորման բացակայության
պայմաններում այդ հարցը գործնականում լուծվում
է տարբեր կերպ. որոշ դեպքերում բացատրություն
վերցնելուն ներգրավվում են ինչպես օրինական
ներկայացուցիչը, այնպես էլ մանկավարժը, իսկ
որոշ դեպքերում՝ միայն օրինական ներկայացուցիչը
կամ մանկավարժը: Հանդիպում են նաև դեպքեր,
երբ անչափահասից առհասարակ բացատրություն
չի վերցվում, այլ հարուցված քրեական գործով
անչափահասը միանգամից հրավիրվում է
հարցաքննության: Այլ կերպ ասած, օրենսդրական հստակ
և պատշաճ կանոնակարգումների բացակայությունը
գործնականում իրավակիրառողի համար ստեղծում է
հայեցողության լայն հնարավորություն՝ վարվելու այս
կամ այն կերպ, ինչը ոչ միշտ է, որ բխում է երեխայի
լավագույն շահերից:


Հիմք ընդունելով երեխայի իրավունքների
և օրինական շահերի պաշտպանության
երաշխավորվածությունը թե՛ Սահմանադրությամբ,
թե՛ միջազգային իրավական ակտերով, որոնցում
ամրագրված կանոնների տեսանկյունից էական



նշանակություն չի կարող ունենալ այն հանգամանքը, թե երեխայի մասնակցությամբ քրեադատավարական օրենքով նախատեսված այս կամ այն գործողությունը կատարվում է քրեական գործ հարուցելով, թե՛ նախաքննության կամ դատաքննության փուլում, այլ էական է այն, որ ցանկացած պարագայում հաշվի առնվեն երեխայի լավագույն շահերը, ուստի, իրավակիրառ պրակտիկան պետք է առաջնորդվի անչափահաս տուժողների և վկաների հարցաքննության կանոններով, և անալոգիայի կիրառմամբ¹⁹ բացատրություն վերցնելուն մասնակից դարձնի ծնողին, մանկավարժին կամ այլ մասնագետի: Այլ կերպ ասած, էական չէ այն հանգամանքը, որ գործող քրեադատավարական օրենսդրության տեսանկյունից տուժող, տուժողի օրինական ներկայացուցիչ և այլ սուբյեկտներն ի հայտ են գալիս բացառապես քրեական գործ հարուցելուց հետո, և այդ պարագայում է հնարավոր նրանց ապահովել օրենքով վերապահված իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության երաշխիքներով, այլ էականն այն է, որ երեխայի մասնակցությամբ իրականացվող ցանկացած քննչական կամ դատավարական գործողություն կատարելիս պետք է ելնել երեխայի լավագույն շահերից, երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ու երաշխավորման անհրաժեշտությունից:

Այս հետևությունը պայմանավորված է նաև նրանով, որ ՄԱԿ-ի ուղենիշների տեսանկյունից՝ քրեական գործ հարուցելու հարցը լուծելու նպատակով իրականացվող ստուգողական գործողությունների վարույթը (նյութերի

¹⁹Այս դեպքում անալոգիայի կիրառումն իրավաչափ է և բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածի կանոնակարգումներից, որոնք հստակ սահմանում են ինչպես օրենքի, այնպես էլ իրավունքի անալոգիայի կիրառման չափանիշները:



նախապատրաստությունը) ևս հանդիսանում է «արդարադատության գործընթացի»²⁰, առավել լայն հասկացության մաս, որի տեսանկյունից անչափահասի հետ իրականացվող ցանկացած վարույթում պետք է ապահովված լինեն երեխայի իրավունքներն ու օրինական շահերը:

Այսպես, ՄԱԿ-ի ուղենիշների 25-րդ կետում սահմանված է, որ մասնագետները²¹ պետք է մշակեն և իրականացնեն այնպիսի միջոցառումներ, որոնք ուղղված են երեխաների համար վկայություն կամ ցուցմունք տալը հեշտացնելուն, միջոցառական և դատական փուլերում հաղորդակցությունը և ընկալումը բարելավելուն:

Այդ միջոցները կարող են ներառել հետևյալը.

ա. ներգրավել տուժող և վկա երեխաների հարցերով մասնագետների՝ երեխայի հատուկ կարիքները բարելավելու նպատակով.

²⁰Ըստ ՄԱԿ-ի ուղենիշների 4-րդ բաժնի 9-րդ կետի «գ» ենթակետի՝ «արդարադատության գործընթաց» արտահայտությունը ներառում է հանցագործության բացահայտումը, բողոքի ներկայացումը, քննությունը, քրեական հետապնդումը և դատական ու հետդատական ընթացակարգերը՝ անկախ այն հանգամանքից՝ գործը վարվում է չափահասների կամ անչափահասների համար նախատեսված քրեական արդարադատության ներպետական, միջազգային կամ տարածաշրջանային համակարգում, թե՛ արդարադատության ավանդական կամ ոչ պաշտոնական համակարգում:

²¹Ըստ ՄԱԿ-ի ուղենիշների 9-րդ կետի «բ» կետի՝ մասնագետներ հասկացությունը ներառում է երեխայի և վկայի գործերով պաշտպաններին և օժանդակող անձանց, երեխայի պաշտպանության ծառայության աշխատողներին, երեխայի սոցիալական ապահովության գործակալության անձնակազմին, դատախազներին, ըստ անհրաժեշտության՝ նաև փաստաբաններին, դիվանագիտական և հյուպատոսական անձնակազմին, ընտանեկան բռնության ծրագրերի անձնակազմին, դատավորներին, դատական ծառայողներին, իրավապահ մարմինների ծառայողներին, բժշկական և հոգեբուժական ոլորտի մասնագետներին և սոցիալական աշխատողներին:


բ. ներգրավել օժանդակող անձանց, այդ թվում՝ մասնագետների և ընտանիքի համապատասխան անդամների, ովքեր ցուցմունք տալու պահին գտնվում են երեխայի հետ.

գ. անհրաժեշտության դեպքում նշանակել խնամակալ՝ երեխայի իրավական շահերը պաշտպանելու նպատակով:

Իսկ ըստ ՄԱԿ-ի ուղենիշների 24-րդ կետի՝ տուժող և վկա երեխաներն օժանդակությունը պետք է ստանան օժանդակող այնպիսի անձանցից, ինչպիսիք են՝ տուժող/վկա երեխաների հարցերով մասնագետները, ովքեր աշխատանքն սկսում են նախնական զեկույցից և շարունակում են մինչև այն պահը, երբ այդ ծառայություններն այլևս անհրաժեշտ չեն:

Ըստ ԵԽՆԿ «Տուժողի դերը քրեական իրավունքում և դատավարությունում» թիվ (85)11 հանձնարարականի 8-րդ կետի՝ վարույթի բոլոր փուլերում տուժողին պետք է այնպես հարցման ենթարկել, որպեսզի պատշաճ ձևով հաշվի առնվեն նրա անձնական վիճակը, իրավունքներն ու արժանապատվությունը: Երբ դա հնարավոր է, ապա երեխաներին և հոգեկան հիվանդներին պետք է հարցման ենթարկել ծնողների, խնամակալների կամ նրանց օգնող այլ անձանց ներկայությամբ:


Այսպիսով, միջազգային իրավական չափանիշների տեսանկյունից երեխաների իրավունքներն ու օրինական շահերը պետք է պաշտպանվեն ու երաշխավորվեն առաջին իսկ պահից, երբ նրանք ներգրավվում են քրեական վարույթին՝ անկախ ներպետական օրենսդրությամբ ամրագրված դատավարության փուլային կառուցվածքի և դրանով պայմանավորված՝



դրանում սահմանված կանոնների:


Անդրադառնալով անչափահասից բացատրություն վերցնելու անհրաժեշտության հարցին՝ պետք է փաստել, որ իրավասու մարմինները չպետք է հաճախակի օգտագործեն անչափահասից բացատրություն վերցնելը, քանի որ այն քրեական գործով ապացույցի ինքնուրույն տեսակ չէ, ինչը նշանակում է, որ հետագայում անխուսափելիորեն անչափահասից պետք է ցուցմունքներ վերցվեն, որպեսզի հնարավոր լինի քրեական գործով օգտագործել որպես ապացույց, ուստի ստացվում է, որ երեխան պետք է նույն հարցերի շուրջ կրկին հարցաքննվի, ինչը չի բխում երեխայի լավագույն շահերից և դրանով պայմանավորված՝ չի խրախուսվում միջազգային չափանիշների տեսանկյունից: Մասնավորապես, ՄԱԿ-ի ուղենիշների՝ «Արդարադատության գործընթացում զրկանքներից պաշտպանված լինելու իրավունքը» վերտառությամբ 11-րդ, բաժնի 31-րդ կետի «ա» ենթակետում հստակ սահմանված է, որ մասնագետները պետք է նաև իրականացնեն այնպիսի միջոցառումներ, որոնք կնվազեցնեն հարցաքննությունների թիվը: Պետք է սահմանել տուժող և վկա երեխաներից ցուցմունք ստանալու հատուկ ընթացակարգեր՝ հարցաքննությունների, լսումների, ցուցմունքների, և հատկապես՝ արդարադատության գործընթացի հետ անհարկի շփումների թիվը նվազեցնելու նպատակով:

Վերոգրյալի հիման վրա կարող ենք արձանագրել, որ անչափահասից բացատրություն վերցնելու անհրաժեշտության հարցի լուծումը միանշանակ չէ. այն որոշվում է ըստ կոնկրետ իրավիճակի, քանի որ խնդիրը միայն երեխայի իրավունքների ապահովման հարցն է, այստեղ կարող են շոշափվել նաև այլ անձանց իրավունքներ ու օրինական շահեր:




Այդուհանդերձ, կարող ենք փաստել, որ երեխայից բացատրություն վերցնելու անհրաժեշտությունը, կախված մեղադրանքի բնույթից՝ հանրային կամ մասնավոր, կարող է տարբեր լինել:

Մասնավոր մեղադրանքի գործերի դեպքում, քանի որ քրեական գործ հարուցելու առիթը դիմողի բողոքն է, անչափահասի դիրքորոշումը չճշտելը, նրանից բացատրություն չվերցնելը կարող է գնահատվել որպես երեխայի իրավունքի խախտում: Մյուս կողմից, ելնելով տարիքից, իրավասու մարմինը պետք է ինքը որոշի բացատրություն վերցնելու անհրաժեշտությունը: Այստեղ, սակայն, խոսքը միայն քրեական գործ հարուցելու առիթի մասին չէ, այլև քրեական գործ հարուցելու հիմքերի առկայությունը հաստատելու կամ հերքելու, ուստի բացատրություն վերցնելը նաև այս տեսանկյունից պետք է դիտարկել և կոնկրետ գործով գնահատել: Ուսումնասիրված քրեական գործերում հաճախ էին հանդիպում դեպքեր, երբ նյութերի նախապատրաստման ընթացքում անչափահասից բացատրություն չի վերցվել, քանի որ ծնողը (որպես կանոն՝ մայրը) հաղորդում, այնուհետև բացատրություն տալիս հայտնել է այն ամենը, ինչ պատմել է երեխան, որից հետո հարուցված քրեական գործով երեխան հարցաքննվել է: Եղել են դեպքեր, երբ նյութերի նախապատրաստման ընթացքում թեև անչափահաս տուժողից («տուժող» եզրույթը պայմանական է օգտագործվում, քանի որ այս փուլում չի կարող լինել դատավարական իմաստով տուժող) բացատրություն չի վերցվել, սակայն բացատրություն է վերցվել անչափահաս վկայից («վկա» եզրույթը ևս պայմանական է օգտագործվում), որը հանդիսացել է տուժողի ավագ քույրը, ում առաջինը փոքրահասակը պատմել է իր հետ տեղի ունեցած դեպքը: Այսինքն,



խնդիրը միայն քրեական գործ հարուցելու օրինական առիթի հարցը լուծելը չէ, այլ քրեական գործ հարուցելու համար բավարար հիմքերի առկայությունը կամ բացակայությունը հաստատելը: Այս տեսանկյունից պետք է փաստել, որ հանրային մեղադրանքի գործերով **երեխայից բացատրություն վերցնելը կարող է հետապնդել բացառապես քրեական գործ հարուցելու հիմքերի հաստատման կամ հերքման նպատակ, ուստի, եթե այլ տվյալներ կան, որոնք բավարար են քրեական գործ հարուցելու կամ հարուցումը մերժելու հարցը լուծելու համար, ապա երեխայից բացատրություն վերցնելուն պետք չէ դիմել:**

Այստեղ չենք անդրադառնում անչափահասի մասնակցությամբ իրականացվող այլ քննչական և դատավարական գործողությունների կատարմանը, քանի որ դրանք նույնն են, ինչ նախաքննության փուլում կատարվողները, որոնց առանձին կանոնադրադրանք հետագա շարադրանքում: Այստեղ պարզապես փաստենք, որ այլ քննչական և դատավարական գործողությունների կատարման կարգն ու պայմանները սահմանող նորմերում տարբերակված մոտեցում ցուցաբերված չէ՝ քրեական գործ հարուցելուց առաջ, թե՛ հետո են դրանք կատարվում, ինչը նշանակում է, որ անչափահասների մասնակցությամբ դրանք կատարվում են նույն երաշխիքներով նաև քրեական գործ հարուցելու փուլում, որը ևս մեկ լրացուցիչ փաստարկ է այն առաջարկի օգտին, որ բացատրություն վերցնելիս պետք է կիրառվեն հարցաքննության կանոնները, հատկապես, որ մինչև 16 տարեկան երեխաների պարագայում դրանց միջև միակ տարբերությունն անվանումն է՝ բացատրություն, թե՛ ցուցմունք:




Այս փուլում երեխաների իրավունքների և օրինական շահերի ապահովման խնդիր է ծագում նաև երեխայի առողջական վիճակին վերաբերող **բժշկական փաստաթղթեր** պահանջելու և տրամադրելու կապակցությամբ, որոնցում պարունակվող տեղեկությունները անձի անձնական կյանքին վերաբերող գաղտնիք են հանդիսանում²², որը ենթակա է պահպանության և պաշտպանության:

Հաճախ անհրաժեշտություն է առաջանում նշանակելու դատաբժշկական, դատահոգեբանական կամ դատահոգեբուժական փորձաքննություն՝ բռնության ենթարկված երեխայի առողջությանը պատճառված վնասի (հոգեկան կամ ֆիզիկական) առկայությունը և դրա աստիճանը որոշելու համար²³, ինչը ենթադրում է, որ նյութեր նախապատրաստող մարմինը կամ պաշտոնատար անձը պետք է պահանջի և համապատասխան բժշկական հաստատությունից ստանա երեխային վերաբերող և գաղտնիք հանդիսացող բժշկական փաստաթղթեր՝ փորձաքննության իրականացնող փորձագետներին տրամադրելու նպատակով: Ըստ բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կանոնակարգող

²²Անձնական կյանքի իրավունքը սահմանված է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով, որի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք: 2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

²³Այս հարցերի մասին մանրամասն տե՛ս հաջորդ թեմաներում:




օրենսդրության²⁴ պահանջների, բուժօգնության դիմած անձի հետազոտության արդյունքները արտացոլվում են համապատասխան բժշկական փաստաթղթերում (ամբուլատոր քարտում կամ հիվանդության պատմության նկարագրում), որոնցում պարունակվող տեղեկատվությունը հանդիսանում է պաշտպանության ենթակա գաղտնիք:

Այսպես, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի «գ» ենթակետի համաձայն, բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի *«պահանջել բժշկի օգնությանը դիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում՝ բացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերից»*: Նույն օրենքի 7-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ մարդու առողջական վիճակի մասին տեղեկությունը նրա կամքին հակառակ չի կարող հաղորդվել նրան կամ այլ անձանց, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից:

Բժշկական օգնության դիմած, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստացող անձի՝ վերը նշված իրավունքը տրամաբանորեն հանգեցնում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների համապատասխան պարտականության, որի ապահովման համար


²⁴Այս օրենսդրությունը ներառում է՝ «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքը, «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքը, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը և այլն:



«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի «ե» ենթակետը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներին պարտավորեցնում է՝ *«ապահովել բժշկի օգնությանը դիմելու փաստի, նրա առողջական վիճակի մասին հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիություն՝ բացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերից»*: Նույն հոդվածի 2-րդ մասի ուժով՝ վերը նշված պարտականությունները չկատարելու դեպքում համապատասխան անձինք պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ՄԻԱՎ-ի հայտնաբերման լաբորատոր հետազոտությունները կամավոր են և անանուն, բացառությամբ սույն օրենքի 11 հոդվածով (վերաբերում է պարտադիր բժշկական հետազոտությանը) նախատեսված դեպքերի: Նույն օրենքի 14-րդ հոդվածի «գ» կետը երաշխավորում է ՄԻԱՎ-ով վարակված անձանց իրավունքը՝ *պահանջել բժշկական գաղտնիության պահպանում՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի*:


«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է, որ «Զաղաքացիների հոգեկան առողջության վերաբերյալ տեղեկությունները բժշկական գաղտնիք են: Այդպիսի տեղեկությունները տրամադրվում են հիվանդին և նրա օրինական ներկայացուցչին նրանց պահանջով՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում: Հոգեբուժական



հետագոտման տվյալները և եզրակացությունը գրանցվում են բժշկական փաստաթղթերում (ամբուլատոր քարտում կամ հիվանդության պատմության նկարագրում)»:

Բժշկական գաղտնիք կազմող տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի առգրավման կամ իրավասու մարմինների պահանջով նրանց տրամադրելու հետ կապված հարաբերությունները կանոնակարգված են ՀՀ քր. դատ. օր.-ի 172-րդ հոդվածում, որում սահմանված են մի շարք երաշխիքներ ինչպես գաղտնիք կազմող տեղեկություն պարունակող փաստաթղթերը վերցնելու (առգրավելու), այնպես էլ այդ գաղտնի տեղեկությունը պաշտպանելու և չհրապարակելու հետ կապված, որոնք պարտադիր են այդ գաղտնիքի հետ առնչություն ունեցող ցանկացած ֆիզիկական կամ պաշտոնատար անձի և պետական մարմնի համար:


Այսպես, գաղտնիք կազմող տեղեկությունները չեն կարող չտրամադրվել իրավասու մարմինների պահանջով, սակայն գաղտնիքը պահպանելու պարտականություն ունեցող անձն իրավունք ունի իրավասու մարմիններից նախապես ստանալու նրանց կողմից նշված տեղեկությունների ստանալու անհրաժեշտությունը հաստատող, համապատասխան քննչական կամ դատավարական գործողության արձանագրության մեջ արտացոլման ենթակա պարզաբանում (ՀՀ քր. դատ. օր.-ի 172 հոդվածի մաս 3-րդ): Այս պահանջին համապատասխան, օրենսդիրը նաև սահմանել է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունն առ այն, որ գաղտնիք կազմող տեղեկությունները պետք է հավաքվեն, պահվեն, օգտագործվեն և տարածվեն բացառապես այն դեպքում, երբ առաջանում է դրա անհրաժեշտությունը (ՀՀ քր. դատ. օր.-ի 172 հոդվածի մաս 2-րդ), ինչը նշանակում



Է, որ յուրաքանչյուր դեպքում գաղտնիք կազմող տեղեկություններ պահանջելու անհրաժեշտությունը հիմնավորելու պարտականությունը կրում է վարույթն իրականացնող մարմինը, ինչը երաշխիք է առանց անհրաժեշտության նման տեղեկությունների հավաքումը կանխելու համար:

Բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության և պաշտպանության պարտականությունը, բացի բժշկական հաստատությունների աշխատողներից, կրում են նաև քրեական գործով վարույթն իրականացնող մարմիններն ու պաշտոնատար անձինք: Այսպես, օրենքը, որպես ընդհանուր կանոն, սահմանում է վարույթն իրականացնող մարմինների պարտականությունը՝ ձեռնարկել օրենքով նախատեսված միջոցներ ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանման համար, այնուհետև մասնավորեցնելով ամրագրում է, որ դատարանի, ինչպես նաև հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի պահանջով քննչական և դատական գործողությունների մասնակիցները պարտավոր են չիրապարակել նշված տեղեկությունները, որի համար նրանցից վերցվում է ստորագրություն: Բացի այդ, օրենքը նաև սահմանում է, որ ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցներն այն անձանց պահանջով, որոնց սպառնում է նշված տեղեկությունների իրապարակումը, կարող են հետազոտվել դռնփակ դատական նիստում:

Վերոնշյալ պահանջներին խստիվ հետևելը և ոչ ձևական մոտեցում ցուցաբերելը հանդիսանում է երեխայի անձնական կյանքի մաս կազմող՝ բժշկական գաղտնիքի պահպանման իրավունքի ապահովման




երաշխիք, թեև պետք է նկատել, որ ուսումնասիրված քրեական գործերում, որոնցում առկա էին երեխային վերաբերող բժշկական գաղտնիք կազմող տեղեկություններ, չհանդիպեց որևէ դեպք բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունները չիրապարակելու մասին ստորագրություն վերցնելու վերաբերյալ:

Երեխայի անձնական կյանքին վերաբերող տեղեկությունները պահպանելու և պաշտպանելու անհրաժեշտությունն ուղղակիորեն բխում է նաև ՄԱԿ-ի Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշներից, որի 12-րդ կետում ուղղակիորեն ամրագրված է, որ *երեխայի անձնական կյանքին միջամտությունը պետք է հասցվի անհրաժեշտ նվազագույնի՝ միաժամանակ պահպանելով ապացույցների ձեռքբերման բարձր ստանդարտները՝ արդարադատության գործընթացի արդարացի և անկողմնակալ արդյունքների հասնելու նպատակով:*


Նյութերի նախապատրաստման ընթացքում երեխայի հայտնած տվյալները (գործի փաստական հանգամանքները) ստուգելու հարցում գործող քրեադատավարական կարգավորումների պայմաններում կարող են էական նշանակություն ունենալ **համեմատական հետազոտման համար նմուշներ վերցնելը** և փորձաքննությունն նշանակելը, իսկ կոնկրետ գործի հանգամանքներով պայմանավորված՝ արագ քրեական գործ հարուցելը և ամբողջ քրեադատավարական գործիքակազմն օգտագործելը:

Քննության կազմակերպումը ժամանակակից պայմաններում գրեթե անհնար է առանց գիտության և տեխնիկայի բնագավառի նվաճումների օգտագործման, դեռ ավելին՝ առկա են մի շարք հարցեր, որոնց




պարզաբանման համար անհրաժեշտ է բացառապես փորձագետի եզրակացություն: Օրինակ, սեռական բնույթի բռնի գործողությունների վերաբերյալ գործերից մեկով 5 տարեկան երեխան հայտնել էր, որ կասկածյալը հանել է իր անդրավարտիքը և երկար ժամանակ լիզել է հետանցքը, այնուհետև հեշտոցը, ինչը հիմք էր հանդիսացել երեխայի կողմից մատնանշած տեղերից քրտինքի և թքի հնարավոր նմուշներ վերցնելու համար, որոնք փորձագետի կողմից համեմատվել էին կասկածյալից վերցված նմուշների հետ: Դատագենետիկ փորձաքննության եզրակացությամբ հաստատվել էր երեխայից վերցված նմուշի ու կասկածյալի թքի նմուշի նույնականությունը, որը հանդիսացել էր այդ գործով մեղադրանքը հաստատելու առանցքային ապացույցներից մեկը: Դրա համար անհետաձգելի քննչական և այլ դատավարական գործողությունների արագ կատարումը, հատուկ մասնագիտական գիտելիքների ժամանակին օգտագործումն էական նշանակություն ունեն դեպքի հանգամանքները, դեպքին կասկածյալի առնչությունը ապացուցելու գործում:

Երեխաների դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ դեպքերով նյութեր նախապատրաստելիս կամ հարուցված քրեական գործերով հաճախ անհրաժեշտություն է առաջանում նշանակելու դատաբժշկական, դատահոգեբուժական, դատահոգեբանական, համալիր դատահոգեբուժական-հոգեբանական, դատագենետիկական, դատակենսաբանական, հագուստի, արյան, մարմնի արտաթորանքների և այլ փորձաքննություններ, որոնք պայմանավորված են կոնկրետ գործի հանգամանքներով և հանցագործության բնույթով ու տեսակով, որոնց կանոնադաշտանք առանձին այլ թեմաների շրջանակներում:



Նկատի ունենալով, որ փորձանմուշ վերցնելու դեպքում Էական միջամտությունն է տեղի ունենում երեխայի ֆիզիկական, հոգեկան և բարոյական անձեռնմխելիությանը, ուստի այդ գործողությունը պետք է կատարվի երեխայի հանդեպ հոգատար և զգայուն կերպով, մինչդեռ ՀՀ քր. դատ. օր.-ում այս առումով հատուկ կանոններ և չափանիշներ սահմանված չեն, այլ առկա է ընդհանուր սկզբունք՝ «Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը և անձնական ազատությունը» վերտառությամբ (հոդված 11), որում սահմանված են ընդհանուր բնույթի պահանջներ քրեական վարույթին առնչվող բոլոր անձանց նկատմամբ վերաբերմունքի մասով, ինչը բավարար չէ երեխաների ֆիզիկական, հոգեկան և բարոյական անձեռնմխելիության պաշտպանության և երաշխավորման համար:


Այս առումով հիմք պետք է ընդունել ՄԱԿ-ի ուղենիշներում ամրագրված սկզբունքները և առաջնորդվել դրանցում առաջարկվող չափանիշներով, այն է՝ երեխայի անձնական կյանքին և ֆիզիկական, հոգեկան և բարոյական անձեռնմխելիությանը միջամտող ցանկացած գործողությունն պետք է կատարվի՝ ելնելով նրանց անձնական իրավիճակից և անմիջական կարիքներից, տարիքից, սեռից, հաշմանդամության առկայությունից, ունակություններից, մտավոր հասունությունից և զարգացման աստիճանից՝ լիարժեք հարգելով նրանց ֆիզիկական, հոգեկան և բարոյական անձեռնմխելիությունը: Ընդ որում՝ երեխային հետագա զրկանքներ պատճառելուց խուսափելու համար քննչական այդ գործողությունը պետք է կատարվի վերապատրաստում անցած մասնագետների կողմից, ովքեր դա կատարում են զգայուն²⁵, հարգալից և հիմնավոր կերպով, ինչպես



նաև երեխայի հատուկ կարիքներին համապատասխան միջավայրում²⁶:

²⁵«Երեխաների հանդեպ զգայուն» արտահայտությունը վերաբերում է այնպիսի մոտեցմանը, որը հավասարակշռում է պաշտպանություն ստանալու՝ երեխայի իրավունքը, և որի ժամանակ հաշվի են առնվում երեխայի անհատական կարիքներն ու տեսակետները (ՄԱԿ-ի ուղեցիկների 9-րդ կետի «դ» ենթակետ):

²⁶Տե՛ս ՄԱԿ-ի ուղեցիկների «Արժանապատիվ ու կարեկից վերաբերմունքի արժանանալու իրավունքը» վերտառությամբ 5-րդ բաժնի 10-14-րդ կետերը:






Լրացուցիչ մեդիա-նյութերը
նախատեսված են Ձեզ
հետաքրքրող նյութի մասին
հավելյալ գիտելիքներ
ստանալու համար:

1. ԵԱՆԴ/0097/01/17 քրեական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2018թ. փետրվարի 28-ի՝ «Քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը» [//http://www.datalex.am/](http://www.datalex.am/)
2. ԵԴ/0227/01/18 քրեական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի՝ «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ» որոշումը [//http://www.datalex.am/](http://www.datalex.am/)
3. ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. դեկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-73/08 որոշումը [//http://www.datalex.am/](http://www.datalex.am/)
4. ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշումը [//http://www.datalex.am/](http://www.datalex.am/)
5. ՀՀ վճռաբեկ դատարանի 2007թ. հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 որոշումը [//http://www.datalex.am/](http://www.datalex.am/)
6. ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0154/11/14 որոշումը [//http://www.datalex.am/](http://www.datalex.am/)
7. ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշումը [//http://www.datalex.am/](http://www.datalex.am/),
8. ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշումը [//http://www.datalex.am/](http://www.datalex.am/)
9. ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. դեկտեմբերի 20-ի թիվ ՍԴՈ-1333 որոշումը [//www.concourt.am/](http://www.concourt.am/)

10. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017թ. նոյեմբերի 23-ի N 1495-Ն որոշումը // www.arlis.am/



Հանցագործության մասին հաղորդումը, որպես քրեական գործ հարուցելու առիթ, պետք է բովանդակի

Կոնկրետ հանցագործության տարրեր պարունակող նախապատրաստվող կամ կատարված հանցագործության մասին տեղեկատվություն: Այսինքն՝ քրեական գործ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ ոչ թե ցանկացած, այլ միայն հանցագործության մասին արված հաղորդումը:

Դիմող

Յուրաքանչյուր անձ, որը դիմել է դատարան, քրեական հետապնդման մարմին՝ քրեական դատավարության կարգով խախտված իրավունքների պաշտպանության համար:

Մասնավոր հետապնդման գործերով «դիմող»

Անձինք, ում իրավունքները խախտվել են քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով, ինչպես նաև անձինք, ովքեր օրենքի ուժով հանդիսանում են անչափահաս կամ անգործունակ անձանց օրինական ներկայացուցիչներ, եթե խախտվել են նրանց խնամարկյալների իրավունքները:

Երեխայի լավագույն շահեր

Երեխայի իրավունքների երաշխավորման սկզբունք, որի առանցքում նրա բարեկեցության ապահովումն է՝ նպատակ ունենալով առավելագույնս երաշխավորել



Ուշադրությամբ ծանոթացե՛ք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձե՛ք դրանց:




Մինչև 15 րոպե

Երեխայի անվտանգությունը, ինչպես նաև նրա առաջնահերթ կարիքների բավարարումն ու խնամքը: Երեխայի լավագույն շահերը որոշվում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքով՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ երեխայի տարիքը, նրա հասունության մակարդակը, մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի հնարավորությունը, ծնողների ներկայությունը կամ բացակայությունը, նրանց հետ հուզական կապը, երեխայի զարգացման համար ծնողի/ների, ընտանիքի անդամների հետ անվտանգ պայմաններում շփվելու կարևորությունը, երեխայի սոցիալական շփումը / դպրոց, ընկերներ, մասնակցություն մշակույթային կյանքին, սոցիալ-մշակույթային խմբակներին և այլն/, ինչպես նաև երեխայի մշակույթային, լեզվական, հոգևոր, կրոնական կապերը:

«Երեխայի լավագույն շահերը» գնահատում

Գնահատել բոլոր այն տարրերը, որոնք անհրաժեշտ են երեխայի կյանքում որևէ միջամտություն իրականացնելու համար: Ընդ որում, այդ որոշումը բավական անհատական է, քանի որ յուրաքանչյուր դեպք, յուրաքանչյուր երեխա անհատ է և պահանջում է առանձնահատուկ մոտեցում: Երեխայի լավագույն շահերի գնահատումը ենթադրում է հարցազրույցների իրականացում երեխայի և նրա ծնողների/ խնամակալների հետ, տնային այցելությունների իրականացում, տեղեկատվության ստացում բոլոր այն կառույցներից, որտեղ երեխան ընդգրկված է եղել նախկինում կամ ընդգրկված է տեղեկատվության ստացման պահին («Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա):



«Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշների» 8-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ երեխայի լավագույն շահերը ներառում է


պաշտպանության և ներդաշնակ զարգացման հնարավորությունների իրավունքը.

(i) պաշտպանությունը. յուրաքանչյուր երեխա ունի կյանքի և գոյատևելու, զրկանքի, չարաշահման կամ անտեսման ցանկացած դրսևորումից, ներառյալ՝ ֆիզիկական, հոգեբանական, հոգեկան և հուզական չարաշահումից և անտեսումից զերծ մնալու իրավունք,

(ii) ներդաշնակ զարգացումը. յուրաքանչյուր երեխա ներդաշնակ զարգացման հնարավորության և ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական և սոցիալական աճին համարժեք կենսապայմանների իրավունք ունի: Երեխային վնաս պատճառելու դեպքում պետք է ձեռնարկվեն բոլոր քայլերը՝ երեխայի առողջ զարգացումն ապահովելու ուղղությամբ:

«Արդարադատության գործընթաց»

արտահայտությունը ներառում է հանցագործության բացահայտումը, բողոքի ներկայացումը, քննությունը, քրեական հետապնդումը և դատական ու հետդատական ընթացակարգերը՝ անկախ այն հանգամանքից՝ գործը վարվում է չափահասների կամ անչափահասների համար նախատեսված քրեական արդարադատության ներպետական, միջազգային կամ տարածաշրջանային համակարգում, թե՛ արդարադատության ավանդական կամ ոչ պաշտոնական համակարգում (ՄԱԿ-ի ուղենիշների 4-րդ բաժնի 9-րդ կետի «գ» ենթակետ):




Մասնագետներ

հասկացությունը ներառում է երեխայի և վկայի գործերով պաշտպաններին և օժանդակող անձանց, երեխայի պաշտպանության ծառայության աշխատողներին, երեխայի սոցիալական ապահովության գործակալության անձնակազմին, դատախազներին, ըստ անհրաժեշտության՝ նաև փաստաբաններին, դիվանագիտական և հյուպատոսական անձնակազմին, ընտանեկան բռնության ծրագրերի անձնակազմին, դատավորներին, դատական ծառայողներին, իրավապահ մարմինների ծառայողներին, բժշկական և հոգեբուժական ոլորտի մասնագետներին և սոցիալական աշխատողներին (ՄԱԿ-ի ուղեկիշների 9-րդ կետի «բ» կետ):

«Երեխաների հանդեպ զգայուն»

արտահայտությունը վերաբերում է այնպիսի մոտեցմանը, որը հավասարակշռում է պաշտպանությունն ստանալով՝ երեխայի իրավունքը, և որի ժամանակ հաշվի են առնվում երեխայի անհատական կարիքներն ու տեսակետները (ՄԱԿ-ի ուղեկիշների 9-րդ կետի «դ» ենթակետ):



Հարց 1.

2019 թվականի հոկտեմբերի 10-ին Հ-ն իրեն պատկանող տաքսի ավտոմեքենայով վրաերթի է ենթարկում 7 (յոթ) տարեկան Մ-ին, որից հետո անհապաղ հասցնում է հիվանդանոց: Հիվանդանոցից ոստիկայության բաժին տեղեկություն է հաղորդվում դեպքի վերաբերյալ, որի առթիվ նյութեր են նախապատրաստվում:

Նշանակված դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ հաստատվում է, որ երեխայի առողջությանը պատճառված վնասը միջին ծանրության է:

Ոստիկանության տեսուչը բացատրություն է վերցնում երեխայի ծնողից՝ Ա-ից, որը նշել է հետևյալը. «Հանդիսանալով Մ-ի ծնողը հայտնում եմ, որ Մ-ին վրաերթի ենթարկող վարորդի դեմ որևէ բողոք չունեմ, ստացած մարմնական վնասվածքների հետ կապված, անկախ դրանց ծանրության աստիճանից: ... Ավելացնեմ նաև, որ չեմ ցանկանում, որ վրաերթի ենթարկող վարորդը ենթարկվի քրեական պատասխանատվության: Բացատրությունը գրվեց տեսուչ Գ-ի կողմից, Մ-ի և Հ-ի պատմածով և բառերով ...»

Բացտրություն է տալիս նաև վարորդը և հայտնում է, որ ընդունում է, որ իր գործողությունների հետևանքով է տեղի ունեցել վրաերթը, զղջում է կատարածի համար, հատուցել է հիվանդանոցային ծախսերը և հաշտվել են երեխայի ծնողների հետ:



Ընտրել ճիշտ տարբերակը:
Ընտրությունը կատարվում
է համապատասխան
հարցերի համար նախա-
տեսված պատասխանների
ճիշտ տարբերակի տառը
նշելու միջոցով:




Մինչև 40 րոպե

Ոստիկանության տեսուչ Գ-ն որոշում է կայացնում դեպքի առթիվ հարուցել քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով և գործն ուղարկել նախաքննություն կատարելու նպատակով քննիչին, որից հետո նախաքննության մարմինը Ա-ին մեղադրանք է առաջադրում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով և խափանման միջոց ընտրում ստորագրություն չհեռանալու մասին:

Վարորդ Ա-ն բողոք է ներկայացնում դատախազին՝ խնդրելով իր նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել, քանի որ երեխայի օրինական ներկայացուցիչը բողոք և պահանջ չի ներկայացրել, մինչդեռ անտեսելով այդ հանգամանքը հարուցվել է քրեական գործ, իսկ նախաքննության մարմինն իրեն մեղադրանք է առաջադրել:

Դատախազը մերժում է բողոքը նշելով հետևյալը.

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մ-ն անչափահաս է՝ յոթ տարեկան, ինչի հետևանքով չի կարող հայտնել իր կամարտահայտությունը բողոքի վերաբերյալ, ուստի նման իրավիճակում քրեական գործ հարուցելու առիթն օրինական, իսկ հիմքերը բավարար լինելու դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով, ուստի ոստիկանության տեսուչի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 60111117 քրեական գործը, որն ուղարկվել է ՀՀ ԶԿ Երևան քաղաքի քննչական վարչություն և կատարվել նախաքննություն»:




**իրավաչափ են արդյոք դատախազի
պատճառաբանությունները.**

ա. Այո, քանի որ տուժողի անչափահաս լինելու դեպքում նա չի կարող հայտնել իր կամարտահայտությունը անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ, ուստի նրա իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհարժեշտությամբ պայմանավորված քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով:

բ. Այո, քանի որ այն ուղղակիորեն բխում է ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-73/08 որոշման 13-րդ կետից, որում դատարանը նշել է, որ այն դեպքում, երբ անձը, ում իրավունքները խախտվել են, իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը ինքնուրույն, ապա նման իրավիճակում քրեական գործ հարուցելու առիթն օրինական, իսկ հիմքերը բավարար լինելու դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով:

գ. Այո, քանի որ այն ուղղակիորեն բխում է ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-73/08 որոշման 13-րդ կետից, որում դատարանը նշել է, որ այն դեպքում, երբ անձը, ում իրավունքները խախտվել են, իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական




շահերը ինքնուրույն, ապա նման իրավիճակում քրեական գործ հարուցելու առիթն օրինական, իսկ հիմքերը բավարար լինելու դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով:

դ. Ոչ, քանի որ մասնավոր մեղադրանքի գործերով դիմող հանդես է գալիս այն անձը, ում իրավունքները խախտվել են քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով, ինչպես նաև այն անձինք, ովքեր օրենքի ուժով հանդիսանում են անչափահաս կամ անգործունակ անձանց օրինական ներկայացուցիչներ, եթե խախտվել են նրանց խնամարկյալների իրավունքները, իսկ սույն դեպքում անչափահաս տուժողի ծնողը բողոք և պահանջ չի ներկայացրել:

Հարց 2.

13 տարեկան Ա-ն զանգահարել է ոստիկանության ՕԿԿ և հայտնել իրեն սեռական հարաբերություն ունենալուն հարկադրելու դեպքի մասին: Չանգը գրանցվել է ոստիկանության հանցագործության մասին հաղորդումների հաշվառման համապատասխան մատյանում և իրականացվել է ստուգողական գործողություններ, որի արդյունքում պարզվելով, որ տեղի ունեցածը պարունակում է հանցագործության հատկանիշներ՝ որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու մասին: Քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ որպես քրեական գործ հարուցելու առիթ դիտվել է ոստիկանության ծառայողի զեկուցագիրը, այսինքն՝ իրենց լիազորություններն իրականացնելիս հանցագործության դեպքի հայտնաբերումը, որը



Նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետում:


Օրինակա՞ն է արդյոք կոնկրետ դեպքում քրեական գործ հարուցելու առիթը.

ա. Այո, քանի որ քրեական գործը կարող է հարուցվել ինչպես ֆիզիկական անձի հաղորդման հիման վրա, այնպես էլ հետաքննության մարմնի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:

բ. Այո, քանի որ մինչև 14 տարեկան երեխաները, լինելով անգործունակ, չեն կարող ինքնուրույն քրեադատավարական հարաբերությունների մեջ մտնել, այդ թվում՝ հանցագործության մասին հաղորդում ներկայացնել:

գ. Այո, քանի որ հեռախոսով հայտնած տեղեկատվությունը չի հանդիսանում օրենքով նախատեսված քրեական գործ հարուցելու օրինական առիթ, այդ զանգերը պետք է գրանցվեն և ստուգվեն, որից հետո, եթե հաստատվում է դրանցում նշված հանգամանքները, ապա քրեական գործ հարուցելու օրինական առիթ է դառնում՝ հետաքննության մարմնի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս, այլ ոչ թե ֆիզիկական անձի հաղորդումը:


դ. Ոչ, քանի որ երեխայի կողմից տրված հաղորդումը պետք է գնահատվեր որպես քրեական գործ հարուցելու առիթ՝ անկախ երեխայի տարիքից:



Հարց 3.

14 տարեկան Ա-ն զանգահարել է ոստիկանության ՕԿԿ և հայտնել իրեն սեռական հարաբերություն ունենալուն հարկադրելու դեպքի մասին: Չանգը գրանցվել է ոստիկանության հանցագործության մասին հաղորդումների հաշվառման համապատասխան մատյանում և իրականացվել է ստուգողական գործողություններ, որի արդյունքում պարզվել է, որ տեղի ունեցածը պարունակում է հանցագործության հատկանիշներ, ուստի որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու մասին: Քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ, որպես քրեական գործ հարուցելու առիթ դիտվել է ոստիկանության ծառայողի զեկուլցագիրը, այսինքն՝ իրենց լիազորություններն իրականացնելիս հանցագործության դեպքի հայտնաբերումը, որը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետում: Այդ հանգամանքը պարզաբանվել է նրանով, որ անչափահասներն ինքնուրույն չեն կարող դիրքորոշում հայտնել՝ ելնելով իրենց ֆիզիոլոգիական առանձնահատկություններից և նրանց փոխարեն իրենց ծնողները ևս չեն կարող դիրքորոշում հայտնել, բացի այդ հաշվի առնելով նաև այն, որ անչափահասների իրավունքների պաշտպանությունը պետության հոգածությունն է և պետությունն իր հովանու տակ է վերցնում անչափահասների իրավունքների պաշտպանությունը, ուստի այս գործերը պետք է հարուցվեն և քննվեն ընդհանուր կարգով:

Խախտվե՞լ են արդյոք երեխայի իրավունքները, երբ նրա կողմից ներկայացրած հաղորդումը չի դիտվել, որպես քրեական գործ



հարողելու օրինական առիթ.

ա. Ոչ, քանի որ քրեական գործը կարող է հարուցվել ինչպես ֆիզիկական անձի հաղորդման հիման վրա, այնպես էլ հետաքննության մարմնի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:

բ. Ոչ, քանի որ էական նշանակություն չունի, թե քրեական գործ հարուցելու համար ինչն է ընդունվել որպես օրինական առիթ, կարևորն այն է, որ երեխայի նկատմամբ իրականացված հանցագործության դեպքով հարուցվել է քրեական գործ:

գ. Ոչ, քանի որ մինչև 16 տարեկան անչափահասներն ինքնուրույն չեն կարող դիրքորոշում հայտնել՝ ելնելով իրենց ֆիզիոլոգիական առանձնահատկություններից, ուստի նրանց իրավունքները չի խախտվել, երբ քրեական գործ հարուցելու առիթ չի գնահատվել նրանց հեռախոսզանգով հայտնած տեղեկատվությունը:

դ. Այո, քանի որ երեխայի նկատմամբ դրսևորվել է խտրականություն տարիքի չափանիշով:

Հարց 4.

Դիմող է հանդիսանում՝

ա. Յուրաքանչյուր անձ, որը դիմել է դատարան, քրեական հետապնդման մարմնին՝ քրեական դատավարության

կարգով խախտված իրավունքների պաշտպանության համար:

- բ. Որոնց պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, ինչպես նաև այն անձինք, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:
- գ. Որոնց պատճառվել է ֆիզիկական, հոգեբանական կամ նյութական վնաս, ինչպես նաև հիմնական իրավունքների էական սահմանափակում:
- դ. Որոնց պատճառվել է ֆիզիկական, հոգեբանական կամ նյութական վնաս, ինչպես նաև բարոյական վնաս կամ հուզական տանջանքներ:

Հարց 5.

Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-73/08 որոշման՝ մասնավոր հետապնդման գործերով «դիմող» են հանդիսանում՝

- ա. Անձինք, ում իրավունքները խախտվել են քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով, ինչպես նաև անձինք, ովքեր օրենքի ուժով հանդիսանում են անչափահաս կամ անգործունակ անձանց օրինական ներկայացուցիչներ, եթե խախտվել են նրանց ինամարկյալների իրավունքները:
- բ. Անձինք, ովքեր դիմել են դատարան կամ քրեական հետապնդման մարմին՝ քրեական դատավարության կարգով խախտված իրավունքների պաշտպանության համար:
- գ. Տուժողը, ում իրավունքներն ու օրինական շահերը խախտվել են ենթադրյալ հանցագործության

կատարմամբ, իսկ անչափահասի կամ անգործունակ տուժողի դեպքում՝ նրանց օրինական ներկայացուցիչները:

դ. Բոլոր պատասխանները ճիշտ են:

Հարց 6.

Դիմողը քրեադատավարական հարաբերությունների ոլորտ է ներգրավվում՝

ա. Վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա, երբ բավարարվում է նրա խնդրանքը:

բ. Վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա, անկախ խնդրանքը բավարարելու հանգամանքից:


գ. Սեփական նախաձեռնությամբ, առանց վարույթն իրականացնող մարմնի որոշման:

դ. Սեփական նախաձեռնությամբ՝ դիմելով դատարան կամ քրեական հետապնդման մարմնին՝ քրեական դատավարության կարգով խախտված իրավունքների պաշտպանության համար:

Հարց 7.

Սեռական բնույթի բռնի գործողությունների վերաբերյալ հաղորդման ստուգման ընթացքում 5 տարեկան երեխան բացատրությամբ հայտնել էր, որ «կասկածյալը» հանել է իր անդրավարտիքը և երկար ժամանակ լիզել է հետանցքը, այնուհետև հեշտոցը:

Փորձաքննությունն իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված քննիչը որոշել էր երեխայի կողմից մատնանշած տեղերից քրտինքի և թքի




հնարավոր նմուշներ վերցնել: Երեխայի մայրը պահանջել էր քննիչից, որպեսզի փորձանմուշները վերցվեն հատուկ հարմարեցված վայրում, ընդ որում՝ պատշաճ մասնագետի կողմից, քանի որ երեխան փոքր է, հնարավոր է ենթարկվի տրավմայի, բացի այդ, քննիչից պահանջել էր, որպեսզի մասնակից դարձնի նաև իրեն՝ հաշվի առնելով, որ գործողությունը ենթադրում է երեխայի մերկացում:

Իրավաչափ են արդյոք երեխայի օրինական ներկայացուցչի պահանջները.

ա. Ոչ, քանի որ օրենքով նախատեսված չէ պահանջ առ այն, որ երեխայի մայրը (օրինական ներկայացուցիչը) իրավունք ունի ներկա գտնվելու նմուշ վերցնելու գործողությանը, իսկ ինչ վերաբերում է մասնագետի ներգրավմանը և հատուկ վայրում այդ գործողությունը կատարելուն, ապա դրանք քննիչի հայեցողության տիրույթում են, ուստի քննիչը պետք է որոշում կայացնի բավարարի խնդրանքը, թե՛ ոչ:

բ. Մասնագետ ներգրավելու և հատուկ վայրում իրականացնելու մասով այո, քանի որ երեխայի կողմից նշած տեղերից նմուշ վերցնելը ենթադրում է երեխայի բարոյական, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության նկատմամբ միջամտություն, որը պետք է իրականացվի զգայուն կերպով և հատուկ պատրաստված մասնագետի կողմից և վայրում, իսկ նմուշ վերցնելու գործողությանն իրեն մասնակից դարձնելու մասով՝ ոչ, քանի որ օրենքով նախատեսված չէ պահանջ առ այն, որ երեխայի մայրը (օրինական ներկայացուցիչը) իրավունք ունի ներկա գտնվելու նմուշ վերցնելու գործողությանը:

գ. Այո, քանի որ փորձանմուշ վերցնելու դեպքում



Էական միջամտություն Է տեղի ունենում երեխայի ֆիզիկական, հոգեկան և բարոյական անձեռնմխելիությանը, ուստի այդ գործողությունը պետք Է կատարվի երեխայի հանդեպ հոգատար և զգայուն կերպով՝ ելնելով երեխայի լավագույն շահերն ապահովելու անհրաժեշտությունից:

դ. Ոչ, քանի որ օրենքում այս առումով հատուկ կանոններ և չափանիշներ սահմանված չեն, այլ առկա Է ընդհանուր սկզբունք՝ «Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը և անձնական ազատությունը» վերտառությամբ (հոդված 11), որում սահմանված են ընդհանուր բնույթի պահանջներ քրեական վարույթին առնչվող բոլոր անձանց նկատմամբ վերաբերմունքի մասով, ինչը քննիչի հայեցողությանն Է թողնում ինչպես երեխայի մոր, այնպես էլ հատուկ մասնագետի ներգրավման և հատուկ վայրում իրականացնելու հարցի լուծումը:

Հարց 8.

Ո՞ր դեպքերում պետք Է մասնավոր հետապնդման գործը հարուցել հանրային մեղադրանքի գործերին բնորոշ ընդհանուր կարգով.

ա. Այն դեպքում, երբ անձը, ում իրավունքները խախտվել են, իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը:

բ. Այն դեպքում, երբ անչափահասի նկատմամբ ենթադրյալ հանցագործությունը կատարել Է նրա ծնողներից մեկը, իսկ մյուսը չի բողոքում, իսկ երեխան բողոքում Է՝ նշելով, որ իրեն ստիպում էին բողոք

չներկայացնել:

գ. Ընտանիքում բռնության դեպքերում, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:

դ. Բոլոր պատասխանները ճիշտ են:

Հարց 9.


Իրավաչափ է արդյոք 10 տարեկան երեխայից բացատրություն վերցնել առանց նրա օրինական ներկայացուցչի և մանկավարժի մասնակցության.

ա. Այո, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածում բացառապես մինչև 16 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննության ժամանակ է պարտադիր մանկավարժի և օրինական ներկայացուցչի մասնակցությունը:

բ. Ծնողի բացակայության մասով այո, քանի որ նա կարող է ներկա գտնվել բացատրություն վերցնելուն, այլ ոչ թե մասնակցել, իսկ մանկավարժի մասով՝ ոչ, քանի որ անկախ նրանից հարցաքննություն է, թե բացատրություն վերցնել՝ երեխայի նկատմամբ այդ գործողության կատարմանը պետք է մասնակցի նաև մանկավարժը:

գ. Ոչ, քանի որ երեխայի լավագույն շահերից է բխում օրինական ներկայացուցչի և մանկավարժի մասնակցությունն ապահովելը:

դ. Բացակայում է ճիշտ պատասխանը:




11 տարեկան Ա-ն, որն ունի հոգեկան խնդիրներ, հարևանի կողմից ենթարկվում է սեռական բռնության, որի առնչությամբ նյութեր են նախապատրաստվում քրեական գործ հարուցելու հարցը լուծելու նպատակով: Չետաքննության մարմինը պարզելով, որ երեխան ունի հոգեկան խնդիրներ և հաշվառված է «Հոգեկան առողջության» կենտրոնում՝ գրությամբ դիմում է կենտրոնի տնօրենին և խնդրում տրամադրել Ա-ի վերաբերյալ առկա բժշկական փաստաթղթերը՝ հնարավոր փորձաքննությունն նշանակելու դեպքում օգտագործելու նպատակով:

«Հոգեկան առողջության» կենտրոնի տնօրենը, վկայակոչելով «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը (որը սահմանում է, որ քաղաքացիների հոգեկան առողջության վերաբերյալ տեղեկությունները բժշկական գաղտնիք են), հրաժարվում է տրամադրել փաստաթղթերը՝ նշելով, որ դրանք պարունակում են բժշկական գաղտնիք:

Իրավաչափ է արդյոք «Հոգեկան առողջության» կենտրոնի տնօրենի պատճառաբանությունը.

ա. Այո, քանի որ այն օրենքով պաշտպանվող գաղտնիք է, որը կարող է վարույթն իրականացնող մարմնի կողմից վերցվել բացառապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածով սահմանված կարգով՝ դատարանի որոշման հիման վրա: Դրանից հետո այդ փաստաթղթերի հետազոտությունն իրականացվում է դռնփակ, իսկ դրանց տիրապետող անձանցից վերցվում է




ստորագործություն չհրապարակելու մասին:


բ. Ոչ, քանի որ, թեև բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունները համարվում են օրենքով պաշտպանվող գաղտնիք, սակայն այն տիրապետող անձինք չեն կարող վկայակոչելով օրենքով պահպանվող գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը և հրաժարվել այդ պահանջը կատարելուց, այլ իրավունք ունեն այդ տեղեկությունը պահանջող մարմնից նախապես ստանալ նրանց կողմից նշված տեղեկություններ ստանալու անհրաժեշտությունը հաստատող, համապատասխան քննչական կամ դատավարական գործողության արձանագրության մեջ արտացոլման ենթակա պարզաբանում:

գ. Ոչ, քանի որ, թեև բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունները համարվում են օրենքով պաշտպանվող գաղտնիք, սակայն այն կարող է վերցվել վարույթն իրականացնող մարմնի առգրավման մասին որոշման հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածով սահմանված կարգով: Դրանից հետո այդ փաստաթղթերի հետազոտությունն իրականացվում է դռնփակ, իսկ դրանց տիրապետող անձանցից վերցվում է ստորագործություն չհրապարակելու մասին:

դ. Ոչ, քանի որ, թեև բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունները համարվում են օրենքով պաշտպանվող գաղտնիք, սակայն տվյալ դեպքում դատախազը օրենքով սահմանված կարգով պայմանավորվածություն է ձեռք բերում համապատասխան հիմնարկի տնօրենի հետ՝ գաղտնիք պրունակող փաստաթղթերը



հետազոտելու և կրկին հետ վերադրձնելու մասին, որին համապատասխան տրվում են այդ փաստաթղթերը: Դրանից հետո այդ փաստաթղթերի հետազոտությունն իրականացվում է դռնփակ, իսկ դրանց տիրապետող անձանցից վերցվում է ստորագորություն չհրապարակելու մասին:



ԴԱՍ 6

ԵՐԵՒԱՅԻ ԴԵՄ ՈՒՂԴԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՓՈԽԼՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔՆՆՉԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՅԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԴԱՇՏԴԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Այս դասի (մոտիվացնող
ներածական տեսանյութ+դասի
տեքստ+բառարան+ինքնաստուգիչ հարցեր)
յուրացման համար անհրաժեշտ է
240 րոպե / 4 ժամ:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի
կայքի հեռաուսուցման բաժնում):

Երեխայի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով առանձին քննչական և դատավարական գործողությունների կատարումն ունի մի շարք տակտիկական առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են, նախևառաջ, կատարված հանցագործության եղանակով, այն կատարելու այլ օբյեկտիվ հանգամանքներով, ինչպես նաև կասկածյալի և տուժողի անձով: Դրա հետ մեկտեղ գոյություն ունեն մի շարք ընդհանուր հատկանիշներ, որոնք բնութագրում են բռնության ենթարկված երեխա տուժողների վարքագիծը և ներքին անհանգստությունները. ակտիվության անկումը, պարփակվելը, մեկուսացումը, անհանգստությունը, ուժեղ վախը, լացը և այլն: Պետք է նկատի ունենալ, որ ելնելով կոնկրետ երեխայի ընկալունակության



Մինչև 10 րոպե

Ուշադրությամբ
կարդացե՛ք
տեքստը (օգտվելով
բառարանից) և
այն յուրացնելուց
հետո միայն անցե՛ք
ինքնաստուգիչ
հարցերին:




Մինչև 175 րոպե

առանձնահատկությունից, վերը նշված ոչ բոլոր հատկանիշներն են իրենց դրսևորումը գտնում երեխայի մոտ. այդուհանդերձ, դրանցից շատերի առկայության մասին կարելի է ենթադրություն անել: Այս հանգամանքների իմացությունն էական է, որովհետև դա ուղղակի կապված է երեխայի մասնակցությամբ կամ նրա հետ որևէ քննչական և դատավարական գործողության կատարումը պլանավորելու և իրականացնելու տակտիկան որոշելու հանգամանքների հետ:

Անդրադառնալով այս կամ այն քննչական և դատավարական գործողությունների կատարման տակտիկական առանձնահատկությունների քննարկմանը՝ նկատենք, որ դրանք պետք է հաշվի առնել երեխայի մասնակցությամբ կամ երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն կատարելիս՝ անկախ նրանից, թե քրեական դատավարության որ փուլում է այն կատարվում, ինչ գործողություն է և ում կողմից է կատարվում:


Քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված տարբեր քննչական գործողությունների նախատեսումն ինքնանպատակ չէ և չի որոշված կամայականորեն, քանի որ դրանցից յուրաքանչյուրը համապատասխանում է կոնկրետ հանցագործության բնույթով պայմանավորված այն հետքերի և հետևանքների որոնմանը, հայտնաբերմանը և ամրագրմանը, որոնք թողնվում են հանցագործության կատարման հետևանքով կամ արդյունքում նյութական աշխարհում, անձանց հիշողության մեջ, որոնք ունեն ապացուցողական նշանակություն և հիմք են հանդիսանում հաստատելու հանցագործության դեպքը, դրա առանձին հանգամանքները և այլն:



Երեխայի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի առթիվ ներկայացված հաղորդումներում և դիմումներում պարունակվող տեղեկատվությունը ստուգելու գործուն միջոց է **դեպքի վայրի զննությունը**: Նկատի ունենալով, որ երեխաների դեմ ուղղված հանցագործությունները կարող են կատարվել նաև որևէ տեղանքում, վայրում և կապված հանցագործության բնույթից այն կարող է կոնկրետ վայրում, տեղանքում թողնել տարբեր հետքեր, նյութական օբյեկտներ, այլ հետևանքներ և այլն, ուստի օրենսդիրը նախատեսել է դեպքի վայրի զննություն քննչական գործողությունը, որպեսզի վարույթն իրականացնող մարմինը դրա կատարման արդյունքում անձամբ անմիջականորեն դիտարկի, ընկալի, ուսումնասիրի համապատասխան վայրը, տեղանքը և հայտնաբերի, վերցնի ու ամրագրի այդ հետքերը, նյութական օբյեկտները, ինչպես նաև ուսումնասիրի նյութական աշխարհի այն հատվածը, դրանում առկա կոնկրետ իրադրությունը և այլնը, որը կարող է գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունենալ:


ՀՀ քր. դատ. օր.-ի 217-րդ հոդվածի իմաստով զննությունը կատարվում է հանցագործության հետքերը, այլ նյութական օբյեկտները հայտնաբերելու, հանցագործության դեպքը, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող մյուս հանգամանքները պարզելու նպատակով:

Կոնկրետ դեպքով պայմանավորված զննության օբյեկտը կարող է տարբեր լինել, օրինակ, բռնությամբ զուգորդված երեխային դաստիարակելու պարտականությունները չկատարելու դեպքերի քննության ընթացքում զննության օբյեկտ կարող են հանդիսանալ բնակարանը,



անհատական բնակելի տունը, շքամուտքը, բակը, մանկապարտեզի տարածքը (խաղերի սենյակը, քնի սենյակը, զուգարանը), դպրոցի դասասենյակը, մանկատան տարածքը, բժշկական հաստատության սենյակը և այլն: Դա պայմանավորված է այն հանգամանքով, թե ով է հանդիսանում կասկածյալը՝ ծնողը, խնամակալը, կրթական հաստատության աշխատակիցը, սոցիալական կամ բժշկական հաստատության աշխատակիցը և ցանկացած անձ, ով պարտավոր է երեխայի նկատմամբ հսկողություն իրականացնել, կամ այլ անձ, ով չունի որևէ պարտականություն երեխայի հսկողության և խնամքի ու դաստիարակության հարցում:

Նկատի ունենալով, որ մինչև քրեական գործ հարուցելը չի կարող իրականացվել առարկաների, փաստաթղթերի, հագուստի զննություն, ուստի այդ փուլում դեպքի վայրի զննություն իրականացնելու դեպքում հայտնաբերված փաստաթղթերը, առարկաները և այլ իրերը պետք է նկարագրվեն դեպքի վայրի զննության արձանագրության մեջ և վերցվեն, որպեսզի քրեական գործ հարուցելուց հետո ենթարկվեն առանձին զննության, ըստ անհրաժեշտության՝ նաև փորձաքննության և այլն: Այս պահանջը բխում է, մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր.-ի 218-րդ հոդվածից, որի 3-րդ մասում սահմանված է, որ զննության ընթացքում քննիչն ինքնուրույն կամ մասնագետի օգնությամբ վերցնում է հետքեր, իրեր, փաստաթղթեր, ինչպես նաև այլ առարկաներ, որոնք գործով հետազայում կարող են ունենալ ապացուցողական նշանակություն, իսկ 5-րդ մասից հետևում է, որ զննումն ավարտվելուց հետո կազմվում է արձանագրություն, որում նշվում




Է այն ամենը, ինչ հայտնաբերվել է, և այն հաջորդականությամբ, ինչ հաջորդականությամբ քննչական գործողության կատարման ժամանակ տարվել են հայտնաբերվածի դիտարկումները:

Կատարված հանցագործության հանգամանքներով պայմանավորված, զննությունը կարող է հանդիսանալ առանցքային քննչական գործողություն հանցագործության հետքերը, հետևանքները և ապացուցողական այլ նյութ հավաքելու համար, ուստի այն պետք է կատարել մանրակրկիտ և որակյալ:

Դեպքի վայրի զննությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջ քաշել և ստուգել մի շարք քննչական վարկածներ, որոնք կարող են վերաբերել հանցագործությունը կատարելու եղանակին, այն կատարող անձանց, այնպիսի հետքերի, առարկաների, փաստաթղթերի գտնվելու վայրին, որոնք կարող են վկայել հանցագործության հատկանիշների մասին: Այլ կերպ ասած, դեպքի վայրի զննությունն երեխայի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի քննության ժամանակ անհրաժեշտ է հանցագործության կատարման իրադրությունը, կատարվածի մեխանիզմը և բնույթը պարզելու և արձանագրելու համար:

Դեպքի վայրի զննությանը ներկայացվում են մի շարք պահանջներ (նախևառաջ՝ դատավարական), իսկ զննությունը կատարվում է փաստական և դատավարական հիմքերի առկայության դեպքում: Չննության կատարման փաստական հիմք կարող է հանդիսանալ վարույթն իրականացնող մարմնի հիմնավորված ենթադրությունն առ այն, որ կոնկրետ վայրում կարող են հայտնաբերվել հանցագործության հետքեր կամ պարզաբանվել այլ էական հանգամանքներ:



Օրենսդիրը հատուկ պահանջներ սահմանել է միայն դեպքի վայր հանդիսացող բնակարանի զննության դատավարական հիմքի վերաբերյալ՝ մասնավորապես ամրագրելով, որ բնակարանի զննումը, այնտեղ դատավարական այլ գործողություններ կատարելը, ինչպես նաև տեխնիկական միջոցների գործադրմամբ մուտք գործելն այն զբաղեցնող անձանց կամքին հակառակ քրեական դատավարության ընթացքում կարող են կատարվել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի որոշմամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 12-րդ հոդվածի 2-րդ մաս): Ասվածը նշանակում է, որ եթե դեպքի վայրը հանդիսանում է բնակարանը¹, ապա այնտեղ բնակվող անձանց համաձայնության բացակայության դեպքում դրանում զննությունն իրականացնելու համար անհրաժեշտ է վարույթն իրականացնող մարմնի որոշումը:

Դեպքի վայրի զննությունը, կոնկրետ դեպքի հանգամանքներով պայմանավորված, հանդիսանում է քննության սկզբնական փուլի անհետաձգելի քննչական գործողություններից մեկը, քանի որ դրա կատարման հապաղումը, լրիվության, օբյեկտիվության

¹ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 46-րդ կետի համաձայն, բնակարան հասկացության տակ պետք է հասկանալ շենքը կամ շինությունը, որը մշտապես կամ ժամանակավոր օգտագործվում է որոշակի անձի կամ անձանց բնակության համար, այդ թվում՝ սեփական կամ վարձակալած բնակարանը, այգետնակը, հյուրանոցային համարը, նավախցիկը, գնացքի ճամփորդախցիկը, համապատասխանաբար՝ դրանց անմիջական հարող ծածկապատշգամբները, սանդղավանդակները, վերնասրահները, պատշգամբները, ընդհանուր օգտագործման տարածքը, ինչպես նաև դրանց այլ բաղկացուցիչ մասերը, որոնք օգտագործվում են հանգստի, գույքը պահելու, ինչպես նաև որոշակի անձի կամ անձանց այլ պահանջմունքները բավարարելու համար, բնակելի շինության նկուղը և ձեղնահարկը: «Բնակարան» հասկացությունն իր մեջ ընդգրկում է նաև մասնավոր ավտոմեքենան, գետային կամ ծովային նավը, ինչպես նաև ծառայողական անձնական աշխատասենյակը և ավտոմեքենան, արվեստանոցը:


ու բազմակողմանիության պահանջների չպահպանումը կարող է հանգեցնել ապացուցողական և կրիմինալիստիկական նշանակություն ունեցող հետքերի և այլ տեղեկությունների կորստին, փոփոխությանը և այլն: Ցանկալի է դեպքի վայրի զննության ժամանակ օգտագործել տեխնիկական միջոցներ (լուսանկարչական սարք, տեսագրող և ձայնագրող սարքեր և այլն), դիմել մասնագետների օգնությանը և այլն, որպեսզի հնարավոր լինի առավել լրիվ իրականացնել զննությունը, հայտնաբերել անհրաժեշտ հետքերը, առարկաները և այլ ապացուցողական և կրիմինալիստիկական նշանակություն ունեցող տեղեկատվությունը, դրանք ամրագրել առավել օբյեկտիվ:

Դեպքի վայրի զննության մանրամասն իրականացումը պայմանավորված է նաև նրանով, որ երեխայի կողմից հայտնած տվյալների հավաստիությունը ստուգելու և գնահատելու հարցում այն հաճախ կարող է ունենալ սկզբունքային նշանակություն: *Օրինակ, մի գործով, որը հարուցվել և քննվել էր 5 տարեկան երեխայի նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների դեպքի առթիվ, և որի կատարման մեջ կասկածվում էր հարևանը, երեխան հայտնել էր հարևանի տան կառուցվածքը, այն սենյակը և դրանում առկա իրերի դասավորությունը, գույները և այլն, որն ստուգելուց հետո պարզվել էր, որ ասվածը համապատասխանում է իրականությանը²: Մեկ այլ դեպքում, 10 տարեկան*

²Երեխայի հայտնած տվյալները կասկածյալը կասկածի տակ էր դրել, որով պայմանավորված՝ անհրաժեշտություն էր առաջացել ստուգելու դրանց հավաստիությունը, ընդ որում՝ կոնկրետ դեպքում դա էական էր, քանի որ գործի նյութերից ակնհայտ էր, որ հարևանի հետ շփումներ չեն եղել, որով պայմանավորված՝ երեխան չէր կարող պարզապես ստել կամ հորինել:

Երեխան մանրամասն նկարագրել էր իր նկատմամբ սեռական բնույթի բռնի գործողությունն կատարած անձի հագուստը, դրա գույները, դրանց վրա առկա գրառումները և այլն, որոնց քննիչի կողմից զննվելուց հետո հաստատվել էր երեխայի հայտնած տվյալների ճշմարտացիությունը: Իհարկե, խոսքը տվյալ դեպքում վերաբերում էր առարկաներին, սակայն այդ առարկաները քննիչը վերցրել (առգրավել) էր դեպքի վայրի զննության ժամանակ: Մեկ այլ դեպքում, մանկահասակ երեխան նկարագրել էր, որ հետանցքի հատվածում «այդ գործողությունների ժամանակ շարիկ (գնդիկ) էր զգում», և այդ խոսքը արձանագրվել էր քննիչի կողմից: Այս հանգամանքը փարատվել էր դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ, որտեղ բռնարարի սեռական օրգանի նկարագրության հատվածում նշվել էր իմպլանտի առկայության մասին, որը երեխան կարող էր զգալ հարաբերության ժամանակ «որպես շարիկ»:

Հասնելով դեպքի վայր, վարույթն իրականացնող մարմինը պարզում է՝ դեպքի իրադրությունը պահպանելու հետ կապված միջոցառումներ ձեռնարկվե՞լ են, թե՞ ոչ, ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել դրանում, պարզում է կատարված դեպքի հանգամանքները, ժամանակը, որն անցել է դեպքից, ովքեր են տիրապետում դեպքի հանգամանքների մասին տեղեկություններին (ականատեսներ և այլ ապագա վկաներ), ընդհանուր դիտարկում է այն տարածքը, որը պետք է զննի, առանձնացնում է այն օբյեկտները, որոնք կարող են դեպքի հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ, հետքեր պարունակել և, ըստ անհրաժեշտության, այլ հանգամանքներ ևս, որից հետո իրականացնում է իր գործողությունները: Օրինակ, բռնությամբ զուգորդված երեխային դաստիարակելու պարտականությունները



չկատարելու դեպքի քննության ընթացքում զննության են ենթարկվում ինչպես երեխայի, այնպես էլ նրա ծնողների կողմից զբաղեցրած սենյակները: Վարույթն իրականացնող մարմինը պետք է ուշադրություն դարձնի և զննության արձանագրության մեջ պարտադիր ամրագրի բնակարանում առկա իրադրությունը (ջեռուցման, ջրի, կոյուղու առկայությունը, վերանորոգումը, հատակի, պատերի վիճակը և այլն), բնակարանի սանիտարական վիճակը, ջերմաստիճանը, սենյակների թիվը, կահույքի, կենցաղային օգտագործման առարկաների, անձնական հիգիենայի պարագաների, սառնարանի առկայությունը, դրա պարունակությունը, սննդի տեսականին, ըստ անհրաժեշտության՝ թարմությունը, օգտագործման համար պիտանիությունը և այլն:

Կարևոր նշանակություն ունի երեխայի սենյակի զննությունը, մասնավորապես՝ մահճակալի առկայությունը, խաղերի և այլ զբաղմունքի տեղերը, խաղալիքների, անկողնային պարագաների, գրքերի, տետրերի, գրենական այլ պիտույքների, համակարգչային տեխնիկայի և այլ առարկաների առկայությունը:


Սկզբունքային նշանակություն ունի դռների վրա փականների և նման այլ առարկաների առկայությունը, դրանց վիճակը և տեսակը ստուգելը և արձանագրելը: Նկատի ունենալով, որ քննության առարկա դեպքը վերաբերում է բռնությամբ զուգորդված լինելուն՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այնպիսի առարկաների ի հայտ բերմանը, որոնք կարող էին ծառայել որպես բռնություն կիրառելու գործիք, միջոց, որոնք հայտնաբերման դեպքում պետք է վերցվեն և ամրագրվեն զննության արձանագրության մեջ:

Քննարկվող դեպքերով զննությունն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք, մասնավորապես, հանգում են նրան, որ, որպես կանոն, զննության պահին ենթադրյալ հանցանքը կատարած անձի կամ այլ անձանց կողմից դեպքի վայրի իրադրությունը փոփոխվում է, որը կարող է բերել հետքերի լրիվ կամ մասնակի կորստի, փոփոխության և այլն: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ դեպքի հայտնաբերման և զննության իրականացման միջև անցնում է որոշակի ժամանակահատված, որը քննիչը կամ հետաքննության մարմնի աշխատակիցը պետք է հաշվի առնի³:

Դեպքի վայրի զննությանը ՀՀ քր. դատ. օր.-ը ներկայացնում է մի շարք պահանջներ, որոնք պարտադիր պետք է պահպանվեն, որպեսզի դրա արդյունքում ձեռք բերված տվյալները հնարավոր լինի օգտագործել որպես թույլատրելի և արժանահավատ ապացույցներ:

Երեխաների դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ դեպքերով նյութեր նախապատրաստելիս կամ հարուցված քրեական գործերով հաճախ անհրաժեշտություն է առաջանում նշանակելու դատաբժշկական, դատահոգեբուժական, դատահոգեբանական, համալիր դատահոգեբուժական-հոգեբանական, դատագենետիկական, դատակենսաբանական, հագուստի, արյան, մարմնի արտաթորանքների և այլ փորձաքննություններ, որոնք պայմանավորված են կոնկրետ գործի հանգամանքներով և հանցագործության բնույթով ու տեսակով:

³Չննության տակտիկայի մասին առավել մանրամասն տե՛ս Ենգիբարյան Վ., Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա: Երևան, 2018, էջեր 131-217:



Փորձաքննությունները, որպես երեխայի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով առաջացող շատ հարցերի լուծման օբյեկտիվ և գիտական եղանակ, լայն տարածում ունեն քննչական և դատական պրակտիկայում: Փորձաքննությունների նշանակման և իրականացման հետ կապված շատ հարցեր պարզաբանված են մասնագիտական գրականության մեջ, ուստի այստեղ դրանց բոլորին անդրադառնալը ոչ միայն նպատակահարմար չէ, այլև տեխնիկապես անհնար է: Հետևաբար, կանդիդատանք հիմնականում երեխայի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերում առավել հաճախ նշանակվող և իրականացվող փորձաքննությունների կատարման հետ կապված որոշ էական հարցերի:

Միայն որոշակի ապացույցների առկայությամբ հաստատվող՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 108-րդ հոդվածում թվարկված հանգամանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առողջությանը պատճառված վնասի բնույթը և ծանրության աստիճանը կարող են հաստատվել ոչ այլ կերպ, քան դատաբժշկական փորձագետի եզրակացությունը նախապես ստանալով և հետազոտելով: Այսինքն, նշված դեպքում փորձաքննության նշանակումն ու կատարումը պարտադիր են, իսկ առողջությանը հասցված վնասի վերաբերյալ փորձագետի կողմից տրված եզրակացությանը⁴ որևէ փաստաթուղթ կամ ապացույցի այլ տեսակ չի կարող փոխարինել⁵:

⁴Փորձագետի եզրակացությունն իրենից ներկայացնում է գրավոր շարադրված հետևություններ, որտեղ փորձագետը հատուկ գիտելիքների կիրառմամբ կատարված հետազոտությունների հիման վրա պատասխանում է վարույթն իրականացնող մարմնի առաջադրած հարցերին (տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2016թ.-ի նոյեմբերի 1-ի թիվ ՍՂ3/0226/01/14 որոշումը):


⁵ ՀՀ վճռաբեկ դատարանի 2016թ.-ի նոյեմբերի 1-ի թիվ ՍՂ3/0226/01/14 որոշումը:

Այն դեպքում, երբ անհրաժեշտություն է առաջանում հաստատելու տուժողի որոշակի տարիքի հասած լինելը, և եթե տարիքի մասին որևէ փաստաթուղթ առկա չէ, ապա նշանակվում է դատաբժշկական և դատահոգեբանական փորձաքննություն:

Եթե առկա են կասկածներ առ այն, որ երեխան ունի մտավոր հետամնացություն, ապա նշանակվում է համալիր դատահոգեբանական-հոգեբուժական փորձաքննություն: Այս փորձաքննությունը նպատակահարմար է նշանակել այն դեպքում, երբ հայտնաբերվում է հոգեկան խանգարում, օլիգոֆրենիա, հոգեֆիզիոլոգիական թերզարգացվածություն (ինֆանտիլիզմ) և հոգեկան խանգարման այլ վիճակներ, որի նպատակն է որոշելու երեխայի հոգեկան զարգացման աստիճանը և քրեական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները ճիշտ ընկալելու, մտապահելու և վերարտադրելու ունակությունը:

Երեխայի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով հաճախ է անհրաժեշտություն առաջանում նշանակելու դատահոգեբուժական փորձաքննություն քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները վկայի կամ տուժողի կողմից ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունը պարզելու նպատակով:


Բանն այն է, որ անչափահաս տուժողի կամ վկայի ցուցմունքների գնահատումն առհասարակ հանդիսանում է քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու գործում ամենաբարդ խնդիրներից մեկը: Երեխաների ցուցմունքների աղեկվատությունը և



լրիվությունը կախված է մի քանի գործոններից, որոնց թվում կարելի է առանձնացնել հետազոտվող դեպքի ընկալման պայմանները, մտավոր գործունեության, հիշողության, կյանքի փորձի առանձնահատկությունները, անձնային առանձնահատկությունները, ստացած տեղեկատվությունն ընկալելու և մտապահելու ունակությունը, ինչպես նաև անձի հուզական և սոմատիկ վիճակը դեպքի հանգամանքներն ընկալելու պահին:

Նկատի ունենալով, որ վերոնշյալ գործոններից որոշները տարիքային առանձնահատկությունների ուժով տվյալ խումբ վկաների և տուժողների մոտ էականորեն սահմանափակված են, ուստի վարույթն իրականացնող մարմինները գործնականում սովորաբար թերահավատորեն են վերաբերվում այդ անձանցից որևէ արժեքավոր ցուցմունք ձեռք բերելուն:

Այդ ցուցմունքների արժանահավատությունը կախված է նաև անձի կողմից ընկալած տեղեկատվությունն այլ անձանց հայտնելու ունակությունից, քանի որ ցուցմունքները հաճախ տրվում են բանավոր, ուստի միշտ հարց է ծագում, թե որքանով են զարգացած երեխայի խոսքը, միտքը, բառապաշարը, հատկապես, երբ երեխան փոքրահասակ է: Դրանով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում դիմելու հատուկ մասնագիտական գիտելիքներով օժտված անձանց օգնությանը, որպեսզի հնարավոր լինի ամբողջական պատկերացում կազմել այն մասին, թե կոնկրետ դեպքում երեխան որքանով կարող է օբյեկտիվ, ադեկվատ ապացուցողական տեղեկություններ հայտնել:



ՀՀ քր. դատ. օր.-ի 86-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ որպես վկա [տուժող⁶] չեն կարող կանչվել և հարցաքննվել այն անձինք, որոնք ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով ունակ չեն ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները: Իսկ 108-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ բացառապես *դատահոգեբուժական փորձագետի եզրակացությամբ կարող է հաստատվել վկայի կամ քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու՝ տուժողի անընդունակությունը, ինչը նշանակում է, որ նման կասկածների առկայության դեպքում պարտադիր պետք է նշանակվի դատահոգեբուժական փորձաքննություն:*


Անդրադառնալով քննարկվող հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 2015թ. մարտի 27-ի թիվ ԿԴ1/0006/01/14 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ *տուժողը [վկան] չի կարող կանչվել և հարցաքննվել այն դեպքում, երբ ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով ունակ չէ ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները:* Այլ խոսքով՝ ՀՀ քր. դատ. օր.-ով նախատեսված է տուժողի [վկայի]՝ ցուցմունք տալու պարտականությունից բացառություն, ինչպես նաև նրա ցուցմունք տալու իրավունքի սահմանափակման հիմք: Նշված սահմանափակումը նպատակ է հետապնդում ապահովելու ամբաստանյալի արդար դատաքննության իրավունքը, համաչափ է հետապնդվող նպատակին և չի իմաստազրկում տուժողի՝ իր իրավունքներն ու օրինական շահերը

⁶ՀՀ քր. դատ. օր.-ի 210-րդ հոդվածի համաձայն տուժողը հարցաքննվում է վկայի հարցաքննության կանոններով:

պաշտպանելու բուն իրավունքը, քանի որ վերջինս օժտված է իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության այլ իրավական միջոցներով (ՀՀ քր. դատ. օր.-ի 59-րդ հոդված): Միևնույն ժամանակ, ՀՀ քր. դատ. օր.-ով հստակ սահմանված են տուժողին հարցաքննելու սահմանափակման հիմքերը: Մասնավորապես, որպես տուժող չի կարող կանչվել և հարցաքննվել այն անձը, ով.

1. ունի ֆիզիկական կամ հոգեկան պակասություններ,
2. (1) կետում նշված հանգամանքի հետևանքով ունակ չէ ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները:

Ընդ որում, վերոնշյալ հանգամանքների միաժամանակյա առկայությունը պարտադիր է քննարկվող սահմանափակումը կիրառելու համար: Օրենսդրական նման կարգավորումը պայմանավորված է նրանով, որ անձի մոտ ֆիզիկական կամ հոգեկան բնույթի առանձին շեղումների առկայությունը դեռևս չի նշանակում, որ տվյալ անձն առհասարակ չի կարող ճիշտ ընկալել և վերարտադրել օբյեկտիվ իրականության փաստերը: Մասնավորապես, հնարավոր են դեպքեր, երբ հոգեկան հիվանդությամբ տառապող անձի մոտ ժամանակավորապես վերականգնվի օբյեկտիվ իրականության փաստերը ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունը, կամ տվյալ հիվանդությունն իր բնույթով այնպիսին լինի, որ անձին չգրկի երևույթների նշանակությունը հասկանալու և դրանք վերարտադրելու ունակությունից և այլն: Հետևաբար, անձը չի կարող հարցաքննվել, եթե ֆիզիկական կամ հոգեկան պակասությունը զրկում է նրան քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունից: Միաժամանակ, նկատի ունենալով, որ քրեական



գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու՝ վկայի և տուժողի անընդունակությունը կարող են հաստատվել միայն դատահոգեբուժական փորձագետի եզրակացությամբ, ԶԶ վճռաբեկ դատարանը նշում է, որ քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու՝ տուժողի և վկայի ունակությունը կասկածի տակ դնելու հիմքերի առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է նշանակի փորձաքննություն:


Վկա և տուժող երեխայի կողմից դեպքի հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունը պարզելու նպատակով դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու առիթ կարող են հանդիսանալ՝

1. վկայի կամ տուժողի տարիքը, նրա մտավոր զարգացման ցածր մակարդակը, ակտիվ խոսքին անբավարար տիրապետելը, բնավորության որոշ առանձնահատկությունները (բարձր ներշնչվողականությունը, երևակայելու հակումը, հուզական անկայունությունը), գործի համար կարևոր հանգամանքները ճիշտ ընկալելու ունակության և դրանց մասին ցուցմունքներ տալու կասկածները,
2. իրադարձություններն ընկալելու պահին վկայի և տուժողի արտասովոր հոգեկան վիճակի (հոգեկան լարվածություն, վախ, անհանգստություն) մասին տեղեկությունները,
3. գործի ելքով շահագրգիռ անձանց կողմից վկայի կամ տուժողի վրա հնարավոր ազդեցություն գործադրելու մասին տեղեկությունները,
4. ցուցմունքների հակասականությունը, ինչպես նաև քրեական գործի այլ նյութերին դրանց ակնհայտ անհամապատասխանությունը:

Քննչական և դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թեև հաճախ են նշանակվում փորձաքննություն երեխայի կողմից դեպքի հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունը պարզելու նպատակով, սակայն փորձաքննություն նշանակելու որոշումները կազմվում են թերություններով, ոչ լրիվ, փորձագետներին առաջադրվում են ընդհանրական բնույթի հարցեր, որոշ կարևոր հանգամանքների վերաբերյալ առհասարակ հարցադրումներ չեն արվում, ավելին՝ հարցադրումներում քննիչները չեն մասնավորեցնում, թե գործի կոնկրետ որ հանգամանքների մասին ճիշտ ցուցմունք տալու մասին է խոսքը, և այդ ամենն, ըստ էության, թողնում են փորձագետների գնահատմանը, ինչը սկզբունքային սխալ է:

Ինչպես ցույց տվեցին ուսումնասիրությունները, հիմնականում նման փորձաքննություններ նշանակելիս երեք հարց է առաջադրվում փորձագետներին: Օրինակ, մի քրեական գործով քննիչը փորձաքննություն էր նշանակել 5 տարեկան երեխայի կողմից դեպքի հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունը պարզելու նպատակով և փորձագետներին առաջադրել էր պարզաբանել հետևյալ հարցերը՝


1. ինչպիսին է անչափահասի ինտելեկտը, անհատական հոգեբանական առանձնահատկությունները,
2. անչափահասը դեպքի ընթացքում ի վիճակի՞ էր դիմադրություն ցույց տալու, թե՞ ոչ,
3. անչափահասը ի վիճակի է ադեկվատորեն ըմբռնել և վերարտադրել կատարված դեպքը, թե՞ ոչ:



Մեկ այլ քրեական գործով, որը վերաբերում էր 6 տարեկան երեխայի կողմից դեպքի հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունը պարզելու նպատակով նշանակած դատահոգեբուժական փորձաքննությանը, քննիչը փորձագետների պարզաբանման էր առաջադրել հետևյալ հարցերը՝

1. տուժողը ի՞նչ հոգեբանական առանձնահատկություններ ունի (մտավոր զարգացման մակարդակը, ներշնչվողականությունը, հակում ունի՞ հորինելու՝ ընկնելով ֆանտազիայի մեջ և այլն),
2. ի՞նչ հոգեվիճակում է գտնվել տուժողը դեպքերի պահին: Հաշվի առնելով նրա հոգեբանական առանձնահատկությունները, հոգեվիճակը, դեպքի իրավիճակի առանձնահատկությունները՝ տուժողը կարո՞ղ էր ընկալել, հասկանալ իր հետ կատարվող գործողությունների բնույթը, նշանակությունը և դիմադրություն ցույց տալ, թե՞ ոչ,
3. հաշվի առնելով իր հոգեբանական առանձնահատկությունները, տուժող ...-ը կարո՞ղ էր արդյոք հասկանալ և վերարտադրել քրեական գործի նախաքննության համար նշանակություն ունեցող հանգամանքները և տալ ճշմարտացի ցուցմունքներ, թե՞ ոչ:

Այս որոշումը տարբերվում էր նախորդից ոչ միայն հարցերի առավել ծավալուն և բովանդակային բնույթով, այլև նրանով, որ քննիչը փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ նաև նշել էր, որ եթե փորձաքննության ընթացքում կառաջանան հարցեր, որպիսիք սույն որոշմամբ առաջ չեն քաշվել, սակայն կմտնեն փորձագետի իրավասության մեջ և կարող են կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար, ապա խնդրում է պատասխանել նաև այդ հարցերին: Պետք է



նաև նկատել, որ ուսումնասիրած գործերից և ոչ մեկով փորձագետները չէին անդրադարձել այնպիսի հարցերի, որոնք հստակ ձևակերպված չէին քննիչի որոշման մեջ, ուստի, անհրաժեշտ է հնարավորության սահմաններում հարցադրումներն անել ամբողջական, մանրակրկիտ և չթողնել հայեցողության որևէ տեղ. որևէ հարցադրում, որն էական նշանակություն կունենա երեխայի հոգեվիճակը և նրա ցուցմունքների արժանահավատությունը ստուգելու և գնահատելու առումով, չպետք է բաց թողնել:


Դատական պրակտիկայի և մասնագիտական գրականության ուսումնասիրությունների հիման վրա ակնհայտ է, որ անչափահաս տուժողների և վկաների կողմից դեպքի հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունը պարզելու նպատակով նշանակվող դատահոգեբուժական փորձաքննությունների դեպքում նպատակահարմար է փորձագետների պարզաբանմանն առաջադրել նվազագույնը հետևյալ հարցադրումները՝

ա. որո՞նք են վկայի կամ տուժողի ճանաչողական գործունեության անհատական հիմնական առանձնահատկությունները (ընկալունակություն, հիշողություն, մտածողություն, ներշնչվողականություն և այլն),

բ. արդյոք երեխան ունի՞ մտավոր հետամնացություն, այդ թվում՝ հոգեկան հիվանդության հետ չկապված կամ մտավոր զարգացման այլ շեղումներ,

գ. ինչպիսի՞ն էր դեպքի (նշել, թե որ) ընկալման պահին վկայի կամ տուժողի հոգեկան վիճակը,


դ. երեխան ունա՞կ էր արդյոք իր կողմից նկարագրած դեպքի հանգամանքների ընկալման պահին իր հոգեկան վիճակով պայմանավորված ճիշտ հասկանալու գործի համար էական նշանակություն



ունեցող հանգամանքները (նշել, թե որ),
Ե. երեխայի մոտ առկա՞ են արդյոք
ներշնչվողականության բարձր ցուցանիշներ,
զ. երեխայի մոտ առկա՞ են արդյոք երևակայելու,
հորինելու հակումների բարձր հատկանիշներ,
Է. երեխան ունա՞կ է արդյոք տալ ճշմարտացի
ցուցմունքներ գործի հանգամանքների մասին (նշել,
թե որ)՝ ելնելով նրա մոտ հայտնաբերված խոսքի
զարգացման աստիճանից:

Այնուհետև, կարելի է նաև ընդհանրական
ձևակերպումով փորձագետներին առաջադրել լրացուցիչ
պարզաբանումներ տալ նաև այլ հարցերի վերաբերյալ,
որոնք ի հայտ կգան փորձաքննության ընթացքում
և Էական նշանակություն կունենան գործի ելքի
համար, որոնք, սակայն, առաջադրված չեն եղել
փորձաքննություն նշանակելիս:


Ընդունելով նպատակահարմար փորձագիտական
հետազոտությունները և եզրակացությունն
անչափահաս վկաների և տուժողների կողմից
քրեական գործով ցուցմունք տալու ունակությունը
ստուգելու հարցում՝ միաժամանակ անհրաժեշտ
է, որ դատահոգեբուժական եզրակացության
հետևությունները մեխանիկորեն չդրվեն այդ
ցուցմունքների արժանահավատության մասին
հետևությունների հիմքում, քանի որ փորձագետի
եզրակացության միջոցով պարզվում է փորձաքննվողի՝
գործի հանգամանքներն ադեկվատ ընկալելու, հիշելու
և արտաբերելու ունակությունը, ինչպես նաև
փաստվում է նրա մոտ առկա այս կամ այն
հոգեբանական առանձնահատկությունը, որոնցից
որոշները կարող են վկայել երեխայի ցուցմունքների
արժանահավատ լինելու, իսկ մյուսները՝ հակառակի



մասին: Ընդ որում, ինքնին այդ ցուցմունքների գնահատականը դուրս է փորձագետի եզրակացության սահմաններից և գտնվում է վարույթն իրականացնող մարմնի և մասնավորապես՝ դատարանի բացառիկ իրավագործության տիրույթում:

Այս առումով ՀՀ վճռաբեկ դատարանը⁷ նշում է, որ փորձագետի եզրակացությունն ապացույցների տեսակներից մեկն է և, որպես այդպիսին, չունի նախապես հաստատված ապացույցի ուժ, իսկ դրա գնահատման նկատմամբ կիրառելի են ապացույցների գնահատման ընդհանուր կանոնները՝ հաշվի առնելով ապացույցի այդ տեսակի առանձնահատկությունները: «... Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հոգեկան կամ ֆիզիկական պակասություններ ունեցող անձանց ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու և դրանք մեղադրական դատավճռի հիմքում դնելու հարցը պարզելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է որոշել, թե տվյալ անձն արդյոք ունա՞յ է ճիշտ ընկալել գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը և վերարտադրել դրանք: Այս հանգամանքները կարող են հաստատվել միայն հիմնավորվածության, լրիվության և հստակության պահանջներին համապատասխանող դատահոգեբուժական փորձաքննությամբ: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ամբաստանյալի և տուժողի մրցակցող իրավունքները (համապատասխանաբար՝ արդար դատաքննության և իր իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության), ինչպես նաև տուժողի վերոնշյալ ունակությունների հանգամանքը

⁷Ապացույցների գնահատման կանոնների վերաբերյալ մանրամասն տե՛ս, օրինակ, ԵԿԴ/0252/01/13 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2014թ. հոկտեմբերի 31-ի որոշման 31-31.3-րդ կետերը:



հաստատելու համար փորձագետի եզրակացության անփոխարինելիությունը՝ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները՝ փորձագետի եզրակացության արժանահավատությունն ապահովելու համար»⁸:

Երեխայի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի քննության սկզբնական փուլի անհետաձգելի գործողություններից է նաև **քննումը**⁹, որը, սակայն, ի տարբերություն դեպքի վայրի զննության և փորձաքննության, կատարվում է բացառապես քրեական գործ հարուցելուց հետո:

ՀՀ քր. դատ. օր.-ի 220-րդ հոդվածի համաձայն, «1. *Քննիչն իրավունք ունի կատարել կասկածյալի, մեղադրյալի, վկայի կամ տուժողի քննում՝ նրանց մարմնի վրա հանցագործության հետքերի կամ հատուկ նշանների առկայություն հայտնաբերելու համար, եթե դրա համար չի պահանջվում դատաբժշկական փորձաքննություն:*

2. *Քննում կատարելու մասին քննիչը կայացնում է որոշում: Այդ որոշումը պարտադիր է այն անձի համար, որի նկատմամբ այն կայացվել է:*

3. *Քննումը կատարվում է բժշկի կամ դատաբժշկության բնագավառի մասնագետի*

⁸ԿԴ1/0006/01/14 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2015թ. մարտի 27-ի որոշում:

⁹ Կասկածյալի, մեղադրյալի, վկայի կամ տուժողի մարմնի վրա հանցագործության հետքերի կամ հատուկ նշանների առկայություն հայտնաբերելու համար իրականացվող դիտարկում, ընկալում, ուսումնասիրություն, եթե չի պահանջվում դատաբժշկական փորձաքննություն:


մասնակցությամբ: Եթե քննումը չի զուգորդվում քննվող անձին մերկացնելու հետ, ապա քննվող անձի համաձայնությամբ նրա մարմնի վրա առկա հանցագործության հետքերը կամ հատուկ նշանները լուսանկարահանվում կամ տեսաձայնագրավում են:

4. Քննիչն իրավունք չունի ներկա գտնվել մյուս սեռին պատկանող անձին քննելիս, եթե քննումը զուգորդվում է այդ անձին մերկացնելու հետ: Այդ դեպքում, քննիչի հանձնարարությամբ, քննումը կատարում է դատաբժշկության բնագավառի մասնագետը կամ բժիշկը:

5. Քննումն ավարտվելուց հետո քննիչը կազմում է դրա արդյունքները ներկայացնող արձանագրություն: Արձանագրությունն ստորագրվում է քննչական գործողության բոլոր մասնակիցների կողմից, որոնք իրավունք ունեն պահանջել դրա մեջ մտցնելու իրենց դիտողությունները»:

Քննում կատարելու նպատակահարմարությունը թելադրված է կոնկրետ քրեական գործով երեխայի մարմնի վրա հնարավոր վնասվածքների հայտնաբերմամբ, որոնք կբնութագրեն նրան բռնության ենթարկելը, շահագործումը և այլ էական հանգամանքները: Առանձին դեպքերում քննումը կարող է հանդիսանալ երեխայի կողմից հայտնած տեղեկությունները, փաստերը ստուգելու արդյունավետ միջոց:


Քննման նպատակն է երեխայի մարմնի վրա հնարավոր վնասվածքների հայտնաբերումը և ամրագրումը, ինչպես նաև երեխայի ֆիզիկական զարգացման աստիճանը (քաշը, հասակը,



մարմնակազմությունը և այլն) որոշելը: Եթե քննման արդյունքում հայտնաբերվում են վնասվածքներ, ապա յուրաքանչյուր վնասվածք պետք է արձանագրության մեջ առանձին նկարագրվի՝ նշելով դրա տեսակը (քերծվածք, վերք, արնագեղում, կապտուկ և այլն), դրա ճիշտ անատոմիական տեղակայումը, ձևը, չափերը, գույնը, մարմնի առանցքի նկատմամբ ուղղվածությունը, եզրերի բնույթը, քերծվածքի ռեփեֆի բնույթը, ապաքինման կամ բորբոքման նշանները, հարակից մկանների վիճակը և այլն: Այս ամենը մանրամասն նկարագրելու նպատակներից մեկն այն է, որ ժամանակի ընթացքում քերծվածքները, արնագեղումները, վերքերը փոփոխվում են, ապաքինվում են, և երեխայի առողջությանը պատճառված վնասի աստիճանը գնահատելը կարող է վտանգվել: Դրանք Էական նշանակություն ունեն նաև հանցավորի գործողությունների բնույթը, դիտավորության ուղղվածությունը և շարժառիթը (օրինակ՝ առանձին դաժանությունը) գնահատելու հարցում:

Հնարավոր են իրավիճակներ, երբ երեխան գտնվում է ալկոհոլային կամ այլ հարբածության վիճակում, որը հետևանք է հանցավորի կողմից նրան այդ վիճակի հասցնելու, ուստի, նման կասկածների դեպքում պետք է իրականացվի նաև բժշկական հետազոտություն՝ այդ հանգամանքը պարզելու համար:


Երեխայի մարմնի քննումը պետք է պարտադիր իրականացվի բժշկի կամ դատաբժշկության բնագավառի



մասնագետի մասնակցությամբ, որը, ելնելով հատուկ մասնագիտական գիտելիքներից, կարող է ոչ միայն հայտնաբերել և գրագետ նկարագրել վնասվածքները, այլև ախտորոշել ներքին օրգանների վնասված լինելը: Բժիշկը կարող է տարատեսակ տեխնիկական միջոցների, սարքերի օգտագործմամբ հայտնաբերել նաև թաքնված վնասվածքները, ավելին՝ նշել վնասվածքների առաջացման հնարավոր վաղեմությունը և այլն:

Բժշկի մասնակցությունը, բացի վերոնշյալից, ունի նաև տակտիկական նշանակություն, քանի որ կարող է երեխային անհրաժեշտության դեպքում բուժօգնություն ցույց տալ, այնպես իրականացնել քննումը, որ երեխային լրացուցիչ ցավ չպատճառվի: Այս տեսանկյունից խելամիտ կլինի, եթե քննումը կատարվի բժշկական հաստատությունում:

Քննման ժամանակ մասնագետ բժշկի մասնակցությունը հետապնդում է նաև երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակ, բխում է երեխայի լավագույն շահերից, քանի որ, ինչպես սահմանված է ՄԱԿ-ի Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղղեմիջնություն, մասնագետները պետք է միջոցներ ձեռնարկեն քննության և քրեական հետապնդման ընթացքում զրկանքները բացառելու ուղղությամբ՝ տուժող և վկա երեխաների լավագույն շահերը և արժանապատվությունը հարգելու նպատակով (կետ 29): Երեխային հետագա զրկանքներ պատճառելուց խուսափելու համար քննչական այլ գործողությունները




պետք է կատարվեն վերապատրաստում անցած մասնագետների կողմից, ովքեր դա կատարում են զգայուն, հարգալից և հիմնավոր կերպով (կետ 13): Սույն ուղենիշներում նկարագրված բոլոր գործողությունները պետք է կատարվեն երեխաների հանդեպ զգայուն կերպով՝ երեխայի հատուկ կարիքներին համապատասխանող միջավայրում՝ ելնելով նրա ունակություններից, տարիքից, մտավոր հասունությունից և զարգացման աստիճանից: Դրանք պետք է կատարվեն երեխայի կողմից կիրառվող և նրա համար հասկանալի լեզվով (կետ 14-րդ):

Քննումը ևս հանդիսանում է անհետաձգելի քննչական գործողություն, որի կատարումը նույնպես չպետք է հապաղի, քանի որ դա կարող է հանգեցնել հետքերի փոփոխության, վերացման և այլն:


Քննիչի կողմից այդ վնասվածքների նկարագրությունը պետք է համադրվի քրեական գործում առկա ապացույցների հետ, որպեսզի հնարավոր լինի քննությունն իրականացնել հանցավորի կողմից կիրառած գործիքների ու միջոցների հայտնաբերման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա պարզելու նաև տուժողի և հանցավորի փոխադարձ դիրքը, հանցանքի կատարման մեխանիզմը, եղանակը և այլ էական հանգամանքները:

Ինչպես երևում է գործող քրեադատավարական օրենսդրության կարգավորումներից՝ երեխայի քննմանը նրա օրինական ներկայացուցչի մասնակցության



մասին կանոն սահմանված չէ, մինչդեռ դա չի նշանակում, որ օրինական ներկայացուցիչն իրավունք չունի մասնակցելու քննմանը: Դա հանդիսանում է ոչ միայն երեխայի հետ որոշակի հարաբերության մեջ մտնելու և պահպանելու միջոց, այլև ապահովում է նրա իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Նկատի ունենալով, որ անչափահաս տուժողի փոխարեն նրա իրավունքներն իրականացնում է օրինական ներկայացուցիչը, քննման ընթացքը տեսաձայնագրելու կամ լուսանկարելու համաձայնությունը պետք է տա օրինական ներկայացուցիչը՝ լսելով նաև երեխայի դիրքորոշումը, եթե նրա տարիքը և զարգացվածության աստիճանը թույլ են տալիս: Հետևաբար, իրավաչափ կլինի, եթե երեխայի քննմանը մասնակցի նաև հոգեբանը, որպես մասնագետ, որն ըստ անհրաժեշտության կարող է օժանդակություն ցույց տալ քննիչին կամ քննում իրականացնող մասնագետին:


ՀՀ քր. դատ. օր.-ի 216-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ առերեսումը հարցաքննության տեսակ է, որի ընթացքում միաժամանակ հարցաքննվում է երկու անձ՝ նպատակ ունենալով պարզել ճշմարտությունը: Այն կատարվում է, եթե առերեսվողները նախկինում հարցաքննվել են և նրանց ցուցմունքներում առկա են էական հակասություններ: Ընդ որում, օրենսդիրը հստակ սահմանել է, որ եթե մեղադրյալի և այլ անձի ցուցմունքների միջև էական հակասություններ կան, ապա առերեսում կատարելը քննիչի



պարտականությունն է, իսկ մնացած անձանց մասով՝ իրավունքը: Առերեսվող անձանց ցուցմունքների միջև առկա հակասությունների էական կամ ոչ էական լինելը որոշում է քննիչը՝ ելնելով կոնկրետ ցուցմունքների բովանդակությունից և այլ հանգամանքներից:


Անդրադառնալով «Էական հակասություն» հասկացության բովանդակությանը՝ Վճռաբեկ դատարանը 2014թ. մայիսի 31-ի թիվ ԵԱԲԴ/0189/01/12 որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ երբ վկան մեղադրական բովանդակությամբ ցուցմունք է տալիս որևէ անձի դեմ, իսկ վերջինս օգտվում է իր լռելու իրավունքից, ապա վարույթն իրականացնող մարմինն այս օբյեկտիվ իրավիճակը կարող է գնահատել որպես փաստացի տրված երկու ցուցմունք, որոնց միջև առկա է էական հակասություն:

Երբ հակասություն է առաջանում վկա կամ տուժող երեխայի և մեղադրյալի կամ այլ անձի ցուցմունքների միջև, ապա առերեսումը պետք է իրականացնել բացառիկ դեպքերում, երբ այլ հնարավորություն չկա գործի ճիշտ լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզաբանելու համար, քանի որ, եթե մի կողմից արդարադատության շահն է և մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովումը, ապա մյուս կողմից՝ երեխայի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն է: Յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է մանրակրկիտ վերլուծել քրեական գործի նյութերը, այնուհետև որոշել, թե



կոնկրետ դեպքում որքանով է նպատակահարմար իրականացնել առերեսում: Եթե, այդուհանդերձ, անհրաժեշտություն է առաջանում իրականացնել երեխայի և այլ անձի միջև առերեսում, ապա տակտիկական տեսանկյունից պետք է հաշվի առնել և գնահատել մի շարք հանգամանքներ, մասնավորապես՝ հնարավոր ինչ վարքագիծ կդրսևորեն առերեսմանը մասնակցող անձինք, որպեսզի կանխվի կոնֆլիկտային իրավիճակի առաջացումը, առերեսվողներից մեկի կողմից մյուսի վրա ագրեսիություն գործադրելը: Այս հարցը խիստ կարևորվում է այն դեպքում, երբ մեղադրյալն երեխայի ծնողն է, մանկավարժը, դաստիարակը, ավագ եղբայրը կամ քույրը, ազգականը, ծանոթը կամ երեխայի հետ որոշակի փոխհարաբերություն ունեցող այլ անձ: Այսպիսի իրավիճակներում առերեսումը պետք է լինի ծայրահեղ միջոց, ընդ որում՝ հնարավորության դեպքում պետք է կիրառվեն տեսողական դիտարկումից դուրս հարցաքննության տարբերակները: Մասնավորապես, կարող են կիրառվել ժամանակակից տեխնիկական միջոցներ և առերեսումն իրականացվի տեսողական դիտարկումից դուրս կամ տեխնիկական միջոցներով կամ կարելի է օգտագործել անմիջական շփումը կանխելու համար հատուկ տակտիկա՝ տարբեր սենյակներից հարցաքննություն: Դա արդյունավետ է ինչպես ցուցմունքները փոխելու հավանականությունը բացառելու, այնպես էլ՝ երեխայի երկրորդային վիկտիմիզացիան բացառելու տեսանկյունից:

Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ առերեսումը կարող է երեխայի վրա շատ բացասական




ազդեցությունն ունենալ և նրա մոտ առաջացնել սթրեսային, հոգեճնշված վիճակ և այլն: Երեխան կարող է ճշմարիտ ցուցմունքները փոխել և տալ սուտ ցուցմունքներ՝ ելնելով խղճահարությունից, վախից, ներշնչանքից և այլ հանգամանքներից:

Տակտիկական առումով բավականին արդյունավետ կլինի, եթե քննիչը մինչ առերեսում իրականացնելն առերեսվողներին պարզաբանի առերեսման եղությունը, նպատակը, ինչպես նաև այն, որ դրա անհրաժեշտությունը, տևողությունը և ճշգրտման ենթակա տեղեկատվության ծավալը որոշում է բացառապես ինքը:

Առերեսման նախապատրաստական և աշխատանքային փուլերի տակտիկական պետք է ներառի այն սուբյեկտին որոշելը, ով պետք է հարցաքննվի առաջինը, քանի որ տակտիկական առումով որոշակի տարբերություն կա վկայի և տուժողի մասնակցությամբ առերեսում անելու հարցում:


Եթե առերեսման մասնակիցներից մեկն անչափահաս է, իսկ մյուսը՝ չափահաս, ապա նախապատվությունը պետք է տալ երեխային լսելուն: Եթե երկուսն էլ անչափահաս են, ապա նպատակահարմար է լսել մեղադրյալին, հետո՝ վկային: Մի կողմից՝ դա կհանգեցնի նրան, որ վկան անմիջականորեն կընկալի այն տեղեկությունները, որոնց վերաբերյալ իր կողմից տրվել են հակասող ցուցմունքներ, իսկ մյուս կողմից՝ քննիչը կարող է մեղադրյալին հարցադրումներ անելով կիրառել



այնպիսի տակտիկական հնարքներ, որոնք կբացահայտեն մեղադրյալի ցուցմունքների սուտ լինելը, որը կամրապնդի վկայի դիրքորոշումը և, միաժամանակ, հավատ կառաջացնի նրա մոտ առ այն, որ իր ցուցմունքներն ավելի շատ վստահություն են վայելում:

«Կոնֆլիկտ հրահրելու» մարտավարությունը¹⁰ անչափահասների մասնակցությամբ առերեսումների դեպքում չի երաշխավորվում կիրառել, քանի որ այն կարող է հոգեբանական անհարմարություն առաջացնել անչափահասների մոտ: Անգամ այն դեպքում, երբ վկան վստահ է, որ քննիչն իր ցուցմունքներն է գնահատում առավել արժանահավատ, քան առերեսման մյուս մասնակցինը, միևնույն է, ելնելով կյանքի փոքր փորձից, երեխան չի կարող ճիշտ գնահատել տրամաբանական սադրանքի էությունը, որին քննիչը դիմում է հարկադրված: Հավասարապես սխալ է հաջորդաբար մի քանի առերեսում անցկացնելու տակտիկան կիրառելը նույն երեխայի հետ, քանի որ, բացի ուշադրության և հիշողության ավելորդ ծանրաբեռնվածությունից, երեխան ձեռք է բերում ագրեսիվ հաղորդակցության բացասական փորձ և հոգեբանական անհարմարություն է զգում: Հակառակ դրան, առերեսման ժամանակ գործով ձեռք բերված ապացույցներ ներկայացնելը կարող է ինչպես վկա անչափահասին հակել իր

¹⁰Սրա էությունն այն է, որ հրահրվում է որոշակի կոնֆլիկտային իրավիճակ, որի պարագայում առերեսվողներից յուրաքանչյուրը բռնկվելով հայտնում է տվյալներ, որոնք սովորական պայմաններում կարող էր չհայտնել:




դիրքորոշումը ակոխելու, այնպես էլ անչափահաս մեղադրյալին «հարկադրել» ընդունել մեղադրանքը, տալ խոստովանական ցուցմունքներ: Դրա համար այսպիսի հնարքը կարելի է համարել ոչ միայն թույլատրելի, այլև նպատակահարմար:

Անդրադառնալով անչափահաս տուժողի առերեսման տակտիկական առանձնահատկություններին, պետք է նկատել, որ այն պայմանավորված է առերեսման երկրորդ մասնակցի դատավարական կարգավիճակով: Եթե տուժողն առերեսվում է վկայի հետ, ապա կոնֆլիկտայնություն կարող է առաջանալ կամ լարվածություն լինել, երբ առերեսվողներից մեկը տալիս է սուտ ցուցմունք:

Առանձնակի բարդություն է ներկայացնում անչափահաս տուժողի և մեղադրյալի առերեսումը, քանի որ այդ դեպքում անխուսափելի է հանցագործի և տուժող երեխայի շփումը, որի պարագայում տուժողը կարող է վախի զգացում ունենալ: Այդ վախի հաղթահարումը հանդիսանում է տակտիկական խնդիր, որը քննիչը պետք է լուծի ստեղծագործաբար:

Առերեսումը պետք է իրականացնել լուրջ նախապատրաստվելուց հետո, ինչը ներառում է ինչպես մասնագետների հետ խորհրդակցությունը (մանկավարժ, հոգեբան, մանկական բժիշկ և այլն), այնպես էլ առերեսման ընթացքը և արդյունքներն ամրագրելու համար տեխնիկական համապատասխան միջոցների կիրառման պայմաններ ստեղծելը: Պետք է որոշել այն վայրը, որտեղ պետք է իրականացվի




առերեսումը (տեղը պետք է լինի այնպիսին, որ երեխան իրեն հարմարավետ և անկաշկանդ զգա. որպես այդպիսիք կարող են ծառայել հատուկ կահավորված սենյակները)¹¹:

Էական նշանակություն ունի նաև առերեսում կատարելու ժամանակը, քանի որ այն չպետք է լինի ոչ ուշացած, ոչ էլ վաղաժամ:

Ցանկալի է, որ առերեսվողներն իրարից գտնվեն բավականին հեռու տարածության վրա, որպեսզի բացառվի նրանց միջև որևէ անցանկալի շփումը: Դրա հետ մեկտեղ, տուժողի և մեղադրյալի առերեսման սենյակ մտնելու հերթականությունը որոշելիս պետք է առաջնայնություն տրվի տուժողին, որպեսզի նրա համար ստեղծվի առավել բարենպաստ իրադրություն:

Ելնելով հուզական լարվածության վիճակից՝ քննիչը պետք է մանրամասն պատրաստի այն հարցերը, որոնք պետք է իր կողմից տրվեն, կանխորոշի

¹¹Այս առումով Էական է այն հանգամանքը, որ 2020 թվականի հունիսի 3-ին ընդունված՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու» մասին թիվ ՀՕ-300-Ն օրենքի 5-րդ հոդվածով՝ առաջարկվում է Օրենսգրքի 207-րդ հոդվածում (Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով՝ «9. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության վայրի ընտրությունն իրականացվում է՝ ելնելով երեխայի լավագույն շահերից»: Թեև այս օրենքը ուժի մեջ է մտնելու 2021 թվականի հունվարի 1-ից, սակայն դա չի խանգարում, որպեսզի դրա դրույթները կիրառվեն նաև մինչև ուժի մեջ մտնելը, քանի որ դրանք բխում են ինչպես երեխայի շահերից, այնպես էլ միջազգային չափանիշներից, ավելին՝ ունեն տակտիկական մեծ նշանակություն:




դրանց պատասխանները, առերեսվողների հնարավոր վարքագիծը, որպեսզի կարողանա վերահսկել գործողության ընթացքը: Այն դեպքում, երբ տուժողի և մեղադրյալի միջև առաջանում է բանավեճ, ապա քննիչը պետք է շատ կտրուկ և կոռեկտ մոտեցմամբ կանխի այն:

Տակտիկական առումով երեխայի մասնակցությամբ առերեսման ժամանակ հարցադրումները ցանկալի կլինի իրականացնել առանձին փաստերի, հանգամանքների կամ դրվագների մասով, ընդ որում՝ այն կարող է ուղեկցվել գործում առկա այլ ապացույցներ ներկայացնելով: Քննիչը պետք է բավականին զգուշավոր լինի հարցերի ձևակերպումներում, իր վարքագծում, դիմախաղում ու ժեստիկուլյացիայում: Նա չպետք է կասկածներ արտահայտի կամ իր վարքագծով, ժեստերով կամ դիմախաղով ցույց տա, որ չի հավատում երեխայի տված պատասխաններին: Հարցերը քննիչը պետք է ձևակերպի հստակ, աներկբա, ոչ երկիմաստ, հետևողական: Դա կօգնի խուսափել բարոյա-հոգեբանական բնույթի խնդիրներից:

Առերեսման տակտիկան ոչ ճիշտ ընտրելը, սխալ հաշվարկները, ոչ բավարար պատրաստվելը կարող են բացասական ազդեցություն ունենալ երեխայի մասնակցությամբ իրականացվող առերեսման արդյունքների վրա, կասկածի տակ դնել երեխայի ցուցմունքների արժանահավատությունը, հուզական վնաս պատճառել երեխային:


Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ



գործնականում երեխային հարցեր են տրվում սովորական ընթացակարգով՝ հաճախ բավականին բարդ ձևակերպված հարցադրումներով: Առավել խնդրահարույց է այն, որ կան գործեր, որոնցում քննիչը մեղադրյալի ու տուժող երեխայի միջև երկու և ավելի անգամ է առերեսում կատարել, ինչն առհասարակ չի բխում երեխայի լավագույն շահերից և ուղղակի հակասում է նաև միջազգային չափանիշներին, որոնք կոչ են անում բացառել ոչ միայն անչափահասի և մեղադրյալի առերեսումը, շփումը, այլև՝ կրկնությունները:

Այսպես, «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» 2007թ. հոկտեմբերի 25-ի ԵԽ-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին մասի «Է» կետի համաձայն՝ «(...) մասնավորապես պետք է ապահովվի, որ տուժողների և հանցագործություն կատարած անձանց միջև շփումը ... իրավապահ մարմնի տարածքում տեղի չունենա, եթե իրավասու մարմինները այլ բան չեն նախատեսում՝ ելնելով երեխայի շահերից, կամ երբ նման շփում պահանջվում է նախաքննության կամ վարույթների նպատակներով»:

Նույն կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը նախատեսում է, որ *«երեխայի հարցաքննությունների թիվը հնարավորինս սահմանափակել այնքանով, որքանով խիստ անհրաժեշտ է քրեական վարույթի նպատակով»*, իսկ նույն հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ *«յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու*



համար, որ տուժողի կամ, անհրաժեշտության դեպքում, վկայություն տվող երեխայի հետ բոլոր հարցազրույցները¹² հնարավոր լինի ձայնագրել տեսաներիզի վրա, և այդ բոլոր ձայնագրված հարցազրույցները հնարավոր լինի որպես վկայություն ընդունել վարույթի ժամանակ՝ իր ներպետական իրավունքով սահմանված կանոնների համաձայն»:

Այս համատեքստում Էական Է այն հանգամանքը, որ 2020 թվականի հունիսի 3-ին ընդունված՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու» մասին թիվ ՀՕ-300-Ն օրենքով¹³ սահմանված են մի շարք սկզբունքային կանոններ ներպետական օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու և երեխայի լավագույն շահերը ապահովելու տեսանկյունից: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է նրան, որ ըստ այդ օրենքի 5-րդ հոդվածի առաջարկվում է Օրենսգրքի 207-րդ հոդվածում (Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերով՝ «5. Ելնելով երեխայի լավագույն շահերից՝ անչափահաս վկային կամ անչափահաս տուժողին կարող է հարցեր տալ հոգեբանը:

6. Անչափահաս վկային կամ անչափահաս

¹²Երեխաների առնչությամբ «հարցազրույց» և «հարցաքննություն» եզրույթները սույն ձեռնարկում կիրառվում են որպես հոմանիշներ, քանի որ առաջին եզրույթը տարածված է միջազգային և օտարերկրյա պետությունների փաստաթղթերում, քանի որ ավելի «մեղմ» մեթոդիկա է նախատեսում, քան հարցաքննությունը:

¹³Այս օրենքը ուժի մեջ կմտնի 2021 թվականի հունվարի 1-ից:


տուժողին հարցերը հոգեբանի կողմից, որպես կանոն, տրվում են հետևյալ դեպքերում.

1. սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով.
2. ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ գործերով.
3. երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ գործերով.
4. անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի մտավոր զարգացման մեջ հետ մնալու կամ հոգեկան խնդիր ունենալու դեպքում.
5. մինչև 14 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննության դեպքում:

7. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը կարող է տեսաձայնագրառվել: Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում¹⁴ անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության տեսաձայնագրառումը պարտադիր է:

8. Հարցաքննության տեսաձայնագրառման վերաբերյալ քննիչը լսում է հարցաքննության մասնակիցների կարծիքները՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը: Տեսաձայնագրառման վերաբերյալ հարցաքննության մասնակիցների կարծիքներն արտացոլվում են արձանագրության մեջ: Մասնակիցները հարցաքննության տեսաձայնագրառման վերաբերյալ կարծիք չեն հայտնում սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում: (...)»:

¹⁴Այս հարցերին դեռ կանոնադաշտնանք:




Կարծում ենք՝ օրենսդիրը դրանով լուծում է գործնականում երեխաների մեկից ավել հարցաքննությունները կրճատելու խնդիրը՝ ստեղծելով դրա համար նաև օրենսդրական հիմքեր:

Անչափահաս երեխայի կրկնակի հարցաքննության անթույլատրելիության մասին դրույթներ առկա են նաև միջազգային այլ փաստաթղթերում: Օրինակ, ՄԱԿ-ի Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշների 31-րդ կետի համաձայն, մասնագետները պետք է նաև իրականացնեն այնպիսի միջոցառումներ, որոնք.

ա. կնվազեցնեն հարցաքննությունների թիվը: Պետք է սահմանել տուժող և վկա երեխաներից ցուցմունք ստանալու հատուկ ընթացակարգեր՝ հարցաքննությունների, ցուցմունքների, լսումների, և, հատկապես՝ արդարադատության գործընթացի հետ անհարկի շփումների թիվը նվազեցնելու նպատակով, այդ թվում՝ տեսաձայնագրման կիրառմամբ.

բ. եթե դա նախատեսված է տվյալ իրավական համակարգով, կապահովեն տուժող և վկա երեխաների պաշտպանությունը հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի կողմից հարցաքննվելուց՝ միաժամանակ հարգելով երեխայի պաշտպանության իրավունքը: Անհրաժեշտության դեպքում տուժող և վկա երեխաները պետք է հարցաքննվեն (այդ թվում՝ դատարանում) հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի տեսադաշտից դուրս պայմաններում, պետք է նաև տրամադրվեն առանձին դատական սպասասրահներ և մեկուսի հարցաքննության տարածքներ.




գ. կապահովեն, որ տուժող և վկա երեխաները հարցաքննվեն երեխայի հանդեպ զգայուն եղանակով՝ դատավորների կողմից հսկողության հնարավորությամբ՝ նպաստելով ցուցմունքներ տալու գործընթացին և կրճատելով ահաբեկման հնարավորությունը, օրինակ՝ ցուցմունք տալիս օգնելու կամ հոգեբան փորձագետներ նշանակելու միջոցով:

Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղենիշների (առաջարկվել է Տնտեսական և սոցիալական խորհրդի 1997թ. հուլիսի 21-ի թիվ 1997/30 բանաձևով) 49-րդ կետի համաձայն՝ տարբեր իրավական ավանդույթներին, պրակտիկային և իրավական շրջանակներին համապատասխան քննության և քրեական հետապնդման, ինչպես նաև դատական լուծման ընթացքում հարկավոր է հնարավորինս խուսափել տուժող երեխայի և իրավախախտի ուղղակի շփումից:

Առերեսման համատեքստում էական է Օրենսգրքի 216-րդ հոդվածում առաջարկվող այն լրացումը, որի համաձայն *«5.1. Անչափահաս տուժողի կամ վկայի մասնակցությամբ առերեսումները՝ սույն օրենսգրքի 207-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում, ինչպես նաև, եթե դա է պահանջում երեխայի լավագույն շահերը, իրականացվում են միջնորդավորված՝ տեսաձայնագրառման և տեխնիկական այլ միջոցների օգնությամբ»:*

Փաստորեն, օրենսդիրը հստակ թվարկում է այն դեպքերը, երբ *անչափահաս տուժողի կամ*




վկայի մասնակցությամբ առերեսումները պետք է իրականացվեն միջնորդավորված ձևով, այսինքն՝ տեսաձայնագրառման և տեխնիկական այլ միջոցների օգնությամբ, ընդ որում՝ ապահովելով նաև լրացուցիչ երեշախիքով՝ հոգեբանի կողմից հարցեր տալով:

Հետևաբար անհրաժեշտ է, որպեսզի քննիչը մանրակրկիտ նախապատրաստվի անչափահասների մասնակցությամբ դատավարական գործողություններին՝ բացառելով նրանց հետ միևնույն քննչական գործողությունների անհիմն կրկնելու դեպքերը: Դա կարող է ներառել գործի հանգամանքների, երեխայի, ընտանիքի, կասկածյալի վերաբերյալ առկա բոլոր տեղեկատվության հավաքագրում և ուսումնասիրություն, այդ թվում, նախևառաջ ծնողների (ավելի հաճախ երեխայի մոր) հետ զրույց, (ինչպես է ծնողն իմացել հանցագործության մասին, ով է երեխայի հետ ավելի շուտ խոսել հանցագործության մասին), և երկրորդ, զրույց այն մարդու հետ, ում երեխան առաջինն է պատմել հանցագործության մասին:


Երեխաների դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով մեծ ապացուցողական նշանակություն ունի **ճանաչման ներկայացնելու** արձանագրությունը. այն հաճախ անփոխարինելի ապացույցի դեր է կատարում քրեական գործով:

Ճանաչման ներկայացնելու դատավարական կարգը սահմանված է ՀՀ քր. դատ. օր.-ի 221-224-րդ հոդվածներում, որոնք մանրամասն սահմանում են ճանաչման ներկայացնելու հիմքերը, պայմանները,




սուբյեկտները, դատավարական կարգը, մասնակիցների իրավունքները, պարտականությունները, ճանաչման ենթակա օբյեկտները, կատարման ընթացքն արձանագրելուն ներկայացվող պահանջները և այլն: Սակայն դրանցում որևէ կանոն նախատեսված չէ այն դեպքերի համար, երբ ճանաչողն անչափահասն է. այն գործնականում իրականացվում է նույն կանոններով և սկզբունքներով, ինչ չափահասների դեպքում: Մինչդեռ տակտիկական առումով անչափահասի կողմից ճանաչման գործընթացն էական առանձնահատկություններ ունի, ընդ որում, կախված նաև նրանից՝ ճանաչողը տուժո՞ղն է, թե՞ վկան: Հետևաբար, անհրաժեշտ է յուրաքանչյուր անգամ ճանաչման ներկայացնելիս հաշվի առնել այդ հանգամանքը:

Անչափահասի մասնակցությամբ ճանաչման ներկայացնելը բարդանում է հատկապես այն դեպքում, երբ ճանաչվողի դերում հանդես է գալիս կասկածյալը կամ մեղադրյալը, հետևաբար՝ ճանաչումը պետք է իրականացվի այնպիսի պայմաններում, որոնք կբացառեն տուժողի, վկայի և կասկածյալի կամ մեղադրյալի փոխադարձ տեսողական դիտարկումը, աչքերով և խոսքով շփումը: Բացի այդ, անչափահասին պետք է նախապես պարզաբանել, թե ինչ կարգով պետք է իրականացվի ճանաչման ներկայացնելը, որն է դրա նպատակը, ինչ է այն իրենից ներկայացնում, ինչպես նաև պետք է հստակ պարզաբանել, որ այն անվտանգ է, որ ճանաչվողն իրեն չի տեսնելու և այլն:



Նկատի ունենալով, որ ճանաչման ներկայացնելու արդյունքը հաճախ անփոխարինելի ապացույցի դեր է խաղում՝ նախնական հարցաքննության ժամանակ քննիչը պետք է մանրակրկիտ տեղեկություն հավաքի ճանաչվող առարկայի կամ անձի անհատականացնող տվյալների վերաբերյալ, որոնց պայմաններում ինքը տեսել է ճանաչվող առարկան կամ անձին: Օրինակ, սեռական բռնության վերաբերյալ մի քրեական գործով երեխան իր ցուցմունքում հայտնել էր տվյալներ այն մասին, թե մեղադրյալն ինչ գույնի ներքնագգեստ էր կրել, դրա վրա ինչ գրառումներ էին եղել, սենյակի դասավորվածությունը և այլն, որոնք հաստատվել էին քննիչի կողմից բնակարանի խուզարկության ժամանակ հայտնաբերված իրերի առգրավման արդյունքում: Թեև մեղադրյալը փորձել էր արդարանալ, թե ինչ հանգամանքներում է երեխան տեսել իր ներքնագգեստի գույնը, գրառումները և այլն, սակայն դատարանն արժանահավատ չէր համարել դրանք, քանի որ երեխայի ցուցմունքների հետևողականությունը, ամբողջականությունը և գործում առկա այլ փաստական տվյալները համընկել էին և ձևավորել ամբողջական պատկեր:

Մինչ ճանաչում իրականացնելու մասին որոշում կայացնելը քննիչը պետք է պարզի ճանաչողի հոգեբանական վիճակը: Օրինակ, եթե երեխան հայտնում է, որ հուզված է, վախենում է և այլն, ապա պետք է ճանաչումը տեղափոխել այլ օր, քանի որ ճանաչման արժեքը հենց նրանում է, որ ճանաչողը լիարժեք վստահ է դրա արդյունքների հարցում:




Իրավաչափ է այն մոտեցումը, որ հնարավորության դեպքում առաջնայնությունն պետք է տալ անչափահաս վկաների մասնակցությամբ ճանաչում իրականացնելուն՝ տուժողների համեմատ: Բանն այն է, որ եթե ճանաչող վկան հանդիսանում է չեզոք սուբյեկտ, ապա տուժողը շահագրգռված է գործի ելքով, որն էական ազդեցություն կարող է ունենալ ճանաչման արդյունքների վրա:

Այս տեսանկյունից կարևոր է, որ քննիչը մանրակրկիտ նախապատրաստվի և իրականացնի նախնական հարցաքննությունը, որպեսզի հետագայում հնարավորություն ունենա ճանաչման արդյունքները համադրելու հարցաքննության արդյունքների հետ: Դրա համար կարևոր է, որ քննիչը պարզի՝ ճանաչողը շփվե՞լ է արդյոք ականատես վկաների հետ: Եթե առկա է վկա ճանաչող, ապա ցանկալի է նրան հարցաքննել առաջինը, որպեսզի ստացվի տեղեկատվություն դեպքի պահին տուժողի հոգեբանական վիճակի մասին: Դա հնարավորություն կտա քննադատաբար գնահատելու տուժողի ցուցմունքները:

Անմիջապես ճանաչման ներկայացնելու դեպքում դրա տակտիկական նշանակությունը այն է, որ դրանով ակտիվացվում, թարմացվում է ճանաչողի հիշողությունը, որը տուժողին կարող է կրկնակի վիկտիմիզացիայի ենթարկել:


Նույնիսկ այն դեպքերում, երբ վկան ակտիվ միջամտություն է ունեցել դեպքին, միևնույն է, նրա ցուցմունքները միշտ ավելի ճշգրիտ են, քան տուժողինը:



Թեև չի բացառվում, որ վկայի ցուցմունքները ևս լինեն բովանդակային առումով ոչ լրիվ, ինչպես տուժողինը, սակայն վկայի կողմից ուշադրության կենտրոնացումը, կատարվածը վերաիմաստավորելը, հատկապես հանգիստ և անվտանգ պայմաններում, թույլ են տալիս վկային առավել լրիվ և ամբողջական վերհիշել և պատմել կատարվածը: Էական չէ՝ վկան դեպքը ընկալել է որպես հանգամանքների հակաիրավակա՞ն, թե՞ սովորական ընթացք:


Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ մինչև ճանաչումը հարցաքննության առանձնահատկությունը կախված է հարցաքննվող և ճանաչող սուբյեկտի դատավարական կարգավիճակից, նրա ընդունած դիրքորոշումից, հետևաբար քննիչը ճանաչման նախապատրաստվելիս պետք է մանրազննին ուշադրություն դարձնի այս կամ այն տակտիկական հնարքի ընտրությանը:

Քննարկվող գործերով կարող է անհրաժեշտություն առաջանալ **պահանջելու համապատասխան փաստաթղթեր** բժշկական հաստատություններից (ամբուլատոր քարտը, հիվանդության պատմությունը, բժշկական քննության ակտերը և այլն) , իրավապահ մարմիններից (օրինակ՝ նախկինում երեխայի նկատմամբ բռնություն կիրառելու դեպքի մասին հաղորդում, քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում, վարչական իրավախախտման մասին արձանագրություն, որոշում և այլ նյութեր), դատարանից (քաղաքացիական գործով վճռի, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը



դադարեցնելու մասին որոշման, դատավճռի օրինակ
և այլն), մանկատնից, մանկապարտեզից, դպրոցից,
համայնքապետարաններից, մարզպետարաններից և
այլն:

Այդ փաստաթղթերը ստանալուց հետո կարող
են զննվել և կցվել քրեական գործին որպես այլ
փաստաթուղթ կամ իրեղեն ապացույց, որոնց հետ
կապված հարաբերությունները կարգավորված են ՀՀ
քրեական դատավարության օրենսգրքի 115-118-րդ և
122-րդ հոդվածներով:



1. Ենգիբարյան Վ., Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա: Երևան, 2018,
2. «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» 2007թ. հոկտեմբերի 25-ի ԵԽ-ի կոնվենցիա // <https://rm.coe.int/168046e1e4>
3. ՀՀ վճռաբեկ դատարանի 2016թ.-ի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ3/0226/01/14 որոշում // datalex.am
4. ՀՀ վճռաբեկ դատարանի 2014թ. հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշում // datalex.am
5. ՀՀ վճռաբեկ դատարանի 2014թ. մայիսի 31-ի թիվ ԵԱԲԴ/0189/01/12 որոշում // datalex.am
6. ՀՀ վճռաբեկ դատարանի 2015թ. մարտի 27-ի թիվ ԿԴ1/0006/01/14 որոշում // datalex.am



Լրացուցիչ մեդիա-նյութերը
նախատեսված են Ձեզ
հետաքրքրող նյութի մասին
հավելյալ գիտելիքներ
ստանալու համար:

Չննում

Հանցագործության հետքեր, այլ նյութական օբյեկտներ հայտնաբերելու, հանցագործության դեպքը, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող մյուս հանգամանքները պարզելու նպատակով տեղանքի, շինությունների, առարկաների, փաստաթղթերի, կենդանիների, մարդու կամ կենդանու դիակի անմիջական դիտարկումն է, ընկալումը, ուսումնասիրությունը:

Քննում

Կասկածյալի, մեղադրյալի, վկայի կամ տուժողի մարմնի վրա հանցագործության հետքերի կամ հատուկ նշանների առկայություն հայտնաբերելու համար իրականացվող դիտարկումն է, ընկալումը, ուսումնասիրությունը, եթե չի պահանջվում դատաբժշկական փորձաքննություն:

Փորձագետ

Քրեական գործով չչափադրգռված անձն է, ում, քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ փորձաքննություն նշանակելու մասին որոշման համապատասխան, նշանակում է փորձագիտական հաստատության ղեկավարը՝ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում իր հատուկ գիտելիքներն օգտագործելով գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացություն տալու համար:



Ուշադրությամբ ծանոթացե՛ք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձե՛ք դրանց:



Մինչև 15 րոպե

Փորձագետի եզրակացություն


Գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի որևէ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործմամբ գրավոր հիմնավորված հետևություններն են փորձագետին առաջադրած հարցերի, ինչպես նաև փորձագետի իրավասության մեջ մտնող այն հանգամանքների վերաբերյալ, որոնց նա հանգել է՝ գործի համապատասխան նյութերը հետազոտելով:

Առերեսում

Հարցաքննության տեսակ է, որի ընթացքում միաժամանակ հարցաքննվում է երկու անձ՝ նպատակ ունենալով պարզել ճշմարտությունը:

«Կոնֆլիկտ հրահրելու» մարտավարություն

Տակտիկական հնարք է, որի էությունն այն է, որ հրահրվում է որոշակի կոնֆլիկտային իրավիճակ, որի պարագայում առերեսվողներից յուրաքանչյուրը բռնկվելով հայտնում է տվյալներ, որոնք սովորական պայմաններում կարող էր չհայտնել:



Հարց 1.

Երեխային վրաերթի ենթարկելու վերաբերյալ ստացած հաղորդման հիման վրա քննիչը մեկնում է դեպքի վայր, որպեսզի իրականացնի իրավիճակից բխող քննչական և դատավարական գործողություններ՝ քրեական գործ հարուցելու հարցը լուծելու նպատակով:

Դեպքի վայրում քննիչը հայտնաբերում է մի շարք առարկաներ, որոնք մանրամասն նկարագրում է դեպքի վայրի զննության արձանագրության մեջ և վերցնում քրեական գործին կցելու և հետազոտելու համար:

Քննիչի կողմից վերցված առարկաները հետագայում ուղարկվում են փորձաքննության, որի արդյունքում ստացվում է եզրակացություն, որն այդ առարկաների հետ միասին դրվում է մեղադրանքի հիմքում:

Պաշտպանական կողմը վիճարկում է ինչպես դեպքի վայրից վերցված առարկաները, այնպես էլ դրանց վերաբերյալ փորձագետի եզրակացությունը՝ նշելով, որ մինչև քրեական գործ հարուցելը օրենքը նախատեսում է բացառապես դեպքի վայրի զննություն, մինչդեռ սույն դեպքում քննիչը իրականացրել է առարկաների զննություն և առգրավում, ինչն օրենքի խախտում է և հիշյալ ապացույցներն անթույլատրելի ճանաչելու հիմք:

Իրավաչափ էն արդյոք պաշտպանական կողմի պնդումները՝



Ընտրել ճիշտ տարբերակը:
Ընտրությունը կատարվում է համապատասխան հարցերի համար նախատեսված պատասխանների ճիշտ տարբերակի տառը նշելու միջոցով:




Մինչև 40 րոպե

- ա. Այո, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն մինչև քրեական գործ հարուցելը կարող է կատարվել բացառապես դեպքի վայրի զննություն, իսկ առարկաների զննություն և առգրավում կարող է կատարվել հարուցված քրեական գործով:
- բ. Ոչ, քանի որ քննիչը տվյալ դեպքում չի իրականացրել առանձին առարկաների առգրավում և զննություն, այլ դեպքի վայրի զննության արձանագրության մեջ նկարագրել է դեպքի վայրից հայտնաբերված առարկաները և վերցրել է դրանք, որն օրենքով թույլատրելի է:
- գ. Ոչ, քանի որ տվյալ դեպքում քննիչը պարտավոր էր առգրավել և զննել դեպքի վայրից հայտնաբերված առարկաները, քանի որ դրանք հանդիսանում են քրեական գործով ապացույցներ:
- դ. Ոչ, քանի որ ապացույցներն անթույլատրելի ճանաչելու համար անհրաժեշտ է, որպեսզի խախտված լինեն անձի հիմնարար իրավունքները, մինչդեռ պաշտպանական կողմը ներկայացրել է քրեադատավարական օրենքի պահանջների ձևական խախտման մասին պատճառաբանություններ:

Հարց 2.

Հինգ տարեկան երեխայի նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների դեպքի առթիվ հարուցված քրեական գործով, որի կատարման մեջ կասկածվում է հարևանը, երեխան հարցաքննության ընթացքում նկարագրել էր դեպքի վայր հանդիսացող բնակարանի կառուցվածքը, այն սենյակը և դրանում



առկա իրերի դասավորությունը, գույները և այլն, որտեղ տեղի էր ունեցել բուն սեռական բնույթի գործողությունը: Քննիչը, նպատակ ունենալով ստուգել երեխայի հայտնած տվյալները, գնում է հիշյալ բնակարան այն զննության ենթարկելու նպատակով, մինչդեռ բնակարանի սեփականատերն արգելում է քննիչի մուտքը բնակարան՝ պահանջելով, որպեսզի քննիչը ներկայացնի դատարանի որոշում: Քննիչը պատճառաբանելով, որ բնակարանը տվյալ դեպքում հանդիսանում է դեպքի վայր, որում զննություն կատարելը չի կարող հապաղել, ուստի բնակարանի սեփականատիրոջ կամքին հակառակ մուտք է գործում բնակարան և կատարում զննություն:


Իրավաչափ են արդյոք քննիչի գործողությունները.

ա. Այո, քանի որ բացառապես բնակարանի խուզարկության դեպքում է անհրաժեշտ դատարանի որոշում, մինչդեռ քննիչը կատարել է զննություն:

բ. Այո, քանի որ օրենքը չի սահմանել հատուկ կանոն դեպքի վայր հանդիսացող բնակարանի զննության կատարման համար, ուստի քննիչը գործել է իրավաչափ, երբ սեփականատիրոջ կամքին հակառակ մուտք է գործել բնակարան զննություն կատարելու համար:

գ. Ոչ, քանի որ բնակարանի անձեռնմխելիության սահմանադրական սկզբունքից ելնելով բնակարանում որևէ քննչական կամ դատավարական գործողություն կատարելու համար պարտադիր է դատարանի որոշումը:

դ. Ոչ, քանի որ բնակարանի զննումը կարող է կատարվել



քննիչի որոշման հիման վրա:

Չափ 3.


**Անչափահաս տուժողը կամ վկան ո՞ր դեպքերում
չի կարող կանչվել և հարցաքննվել՝**

- ա. երբ տարիքը թույլ չի տալիս ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները:
- բ. երբ ֆիզիկական պակասությունների հետևանքով ունակ չէ ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները:
- գ. երբ հոգեկան պակասությունների հետևանքով ունակ չէ ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները:
- դ. «բ» և «գ» կետերում նշված հանգամանքների միաժամանակյա առկայության դեպքում:

Չափ 4.

**Վկայի կամ տուժողի ունակ չլինելը ճիշտ
ընկալելու և վերարտադրելու քրեական գործով
բացահայտման ենթակա հանգամանքները
հաստատվում են՝**

- ա. Դատահոգեբուժական փորձագետի եզրակացությամբ:
- բ. Դատահոգեբանական փորձագետի եզրակացությամբ:
- գ. Համալիր դատահոգեբանական և դատահոգեբուժական փորձագետի եզրակացությամբ:
- դ. Մասնագետի կարծիքով:



Հարց 5.

Վկա և տուժող երեխայի կողմից դեպքի հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունը պարզելու նպատակով դատահոգեբուժական փորձաքննությունն նշանակելու առիթ կարող են հանդիսանալ՝

ա. Վկայի կամ տուժողի տարիքը, նրա մտավոր զարգացման ցածր մակարդակը, ակտիվ խոսքին անբավարար տիրապետելը, բնավորության որոշ առանձնահատկությունները (բարձր ներշնչվողականությունը, երևակայելու հակումը, հուզական անկայունությունը), գործի համար կարևոր հանգամանքները ճիշտ ընկալելու ունակության և դրանց մասին ցուցմունքներ տալու կասկածները:

բ. Իրադարձություններն ընկալելու պահին վկայի և տուժողի արտասովոր հոգեկան վիճակի (հոգեկան լարվածություն, վախ, անհանգստություն) մասին տեղեկությունները, ցուցմունքների հակասականությունը, ինչպես նաև քրեական գործի այլ կյուրերին դրանց ակնհայտ անհամապատասխանությունը:


գ. Գործի ելքով շահագրգիռ անձանց կողմից վկայի կամ տուժողի վրա հնարավոր ազդեցություն գործադրելու մասին տեղեկությունները:

դ. Բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:

Հարց 6.

Վկա և տուժող երեխայի կողմից դեպքի հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունը պարզելու նպատակով ինչպիսի հարցերի նվազագույն շրջանակ է նպատակահարմար առաջադրել փորձագետներին՝

- ա. 1. Ինչպիսին են անչափահասի ինտելեկտը, անհատական հոգեբանական առանձնահատկությունները,
2. Անչափահասը դեպքի ընթացքում ի վիճակի եղե՞լ է դիմադրություն ցույց տալու, թե՞ ոչ,
3. անչափահասն ի վիճակի՞ է ադեկվատորեն ըմբռնել և վերարտադրել կատարված դեպքը, թե՞ ոչ:
- բ. 1. Տուժողը ի՞նչ հոգեբանական առանձնահատկություններ ունի (մտավոր զարգացման մակարդակը, ներշնչվողականությունը, հորինելու հակումը՝ ընկնելով ֆանտազիայի մեջ և այլն),
2. Ի՞նչ հոգեվիճակում է գտնվել տուժողը դեպքերի պահին: Հաշվի առնելով նրա հոգեբանական առանձնահատկությունները, հոգեվիճակը, դեպքի իրավիճակի առանձնահատկությունները՝ տուժողը կարո՞ղ էր ընկալել, հասկանալ իր հետ կատարվող գործողությունների բնույթը, նշանակությունը և դիմադրություն ցույց տալ, թե՞ ոչ,
3. Հաշվի առնելով իր հոգեբանական առանձնահատկությունները, տուժողը կարո՞ղ էր արդյոք հասկանալ և վերարտադրել քրեական գործի նախաքննության համար նշանակություն ունեցող հանգամանքները և տալ ճշմարտացի ցուցմունքներ, թե՞ ոչ:
- գ. 1. Որո՞նք են վկայի կամ տուժողի ճանաչողական գործունեության անհատական հիմնական առանձնահատկությունները (ընկալունակություն, հիշողություն, մտածողություն, ներշնչվողականություն և այլն),
2. Արդյոք երեխան ունի՞ մտավոր հետամնացություն, այդ թվում՝ հոգեկան հիվանդության հետ չկապված, կամ մտավոր զարգացման այլ շեղումներ,
3. Ինչպիսի՞ն էր դեպքի (նշել, թե որ) ընկալման պահին վկայի կամ տուժողի հոգեկան վիճակը,



4. Երեխան ունա՞կ էր արդյոք իր կողմից նկարագրված դեպքի հանգամանքների ընկալման պահին իր հոգեկան վիճակով պայմանավորված ճիշտ հասկանալ գործի համար Էական նշանակությունն ունեցող հանգամանքները (նշել, թե որ)

5. Երեխան ունա՞կ է արդյոք տալ ճշմարտացի ցուցմունքներ գործի հանգամանքների մասին (նշել, թե որ)՝ ելնելով նրա մոտ հայտնաբերված խոսքի զարգացման աստիճանից

դ. 1.Որո՞նք են վկայի կամ տուժողի ճանաչողական գործունեության անհատական հիմնական առանձնահատկությունները (ընկալունակություն, հիշողություն, մտածողություն, ներշնչվողա-կանություն և այլն),

2. Արդյոք երեխան ունի՞ մտավոր հետամնացություն, այդ թվում՝ հոգեկան հիվանդության հետ չկապված, կամ մտավոր զարգացման այլ շեղումներ,


3. Ինչպիսի՞ն էր դեպքի (նշել, թե որ) ընկալման պահին վկայի կամ տուժողի հոգեկան վիճակը,

4. Երեխան ունա՞կ էր արդյոք իր կողմից նկարագրված դեպքի հանգամանքների ընկալման պահին իր հոգեկան վիճակով պայմանավորված ճիշտ հասկանալ գործի համար Էական նշանակությունն ունեցող հանգամանքները (նշել, թե որ),

5. Երեխայի մոտ առկա՞ են արդյոք ներշնչվողականության բարձր ցուցանիշներ,

6. Երեխայի մոտ առկա՞ են արդյոք երևակայելու, հորինելու հակումների բարձր հատկանիշներ,

7. Երեխան ունա՞կ է արդյոք տալ ճշմարտացի ցուցմունքներ գործի հանգամանքների մասին (նշել, թե որ)՝ ելնելով նրա մոտ հայտնաբերված խոսքի զարգացման աստիճանից:



Յադ 7.

Սեռական բնույթի բռնի գործողությունների վերաբերյալ հաղորդման ստուգման ընթացքում 10 տարեկան երեխան ցուցմունքով հայտնել էր, որ «կասկածյալն» իրեն հարվածել է, սեղմել իր մարմնի տարբեր մասերը, որի արդյունքում առաջացել են կապտուկներ և արնագեղումներ որովայնի, ոտքերի, մեջքի և այլ հատվածներում:

Այդ հանգամանքների իսկությունը պարզելու անհրաժեշտությամբ պայմանավորված քննիչը որոշել էր երեխային քննել: Երեխայի մայրը պահանջել էր քննիչից, որպեսզի քննումն իրականացվի հատուկ հարմարեցված վայրում, ընդ որում՝ պատշաճ մասնագետի կողմից, քանի որ երեխան փոքր է, հնարավոր է ենթարկվի տրավմայի, բացի այդ, քննիչից պահանջել էր, որպեսզի մասնակից դարձնի նաև իրեն՝ հաշվի առնելով, որ գործողությունն ենթադրում է երեխայի մերկացում:

Իրավաչափ են արդյոք երեխայի օրինական ներկայացուցչի պահանջները՝

ա. Ոչ, քանի որ օրենքով նախատեսված չէ պահանջ առ այն, որ երեխայի մայրը (օրինական ներկայացուցիչը) իրավունք ունի ներկա գտնվելու քննմանը, իսկ ինչ վերաբերում է մասնագետի ներգրավմանը և հատուկ վայրում այդ գործողությունը կատարելուն, ապա դրանք քննիչի հայեցողության տիրույթում են, ուստի քննիչը պետք է որոշում կայացնի՝ բավարարել խնդրանքը, թե՞ ոչ:

բ. Մասնագետ ներգրավելու և հատուկ վայրում իրականացնելու մասով՝ այո, քանի որ երեխայի քննումն ենթադրում է երեխայի բարոյական,


Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության
նկատմամբ միջամտություն, որը պետք է իրականացվի
զգայուն կերպով և հատուկ պատրաստված
մասնագետի կողմից և համապատասխան վայրում,
իսկ քննման իրեն մասնակից դարձնելու մասով՝ ոչ,
քանի որ օրենքով նախատեսված չէ պահանջ առ
այն, որ երեխայի մայրը (օրինական ներկայացուցիչը)
իրավունք ունի ներկա գտնվելու այդ գործողությանը:

գ. Այո, քանի որ քննման դեպքում էական միջամտություն
է տեղի ունենում երեխայի ֆիզիկական, հոգեկան
և բարոյական անձեռնմխելիությանը, ուստի այդ
գործողությունը պետք է կատարվի երեխայի հանդեպ
հոգատար և զգայուն կերպով՝ ելնելով երեխայի
լավագույն շահերն ապահովելու անհրաժեշտությունից:

դ. Ոչ, քանի որ օրենքում այս առումով հատուկ
կանոններ և չափանիշներ սահմանված չեն, այլ
առկա է ընդհանուր սկզբունք՝ «Ֆիզիկական և
հոգեկան անձեռնմխելիությունը և անձնական
ազատությունը» վերտառությամբ (հոդված 11), որում
սահմանված են ընդհանուր բնույթի պահանջներ
քրեական վարույթին առնչվող բոլոր անձանց
նկատմամբ վերաբերմունքի մասով, ինչը քննիչի
հայեցողությանն է թողնում ինչպես երեխայի մոր,
այնպես էլ հատուկ մասնագետի ներգրավման և
հատուկ վայրում իրականացնելու հարցի լուծումը:

Չափ 8.

**Ըստ 2020 թվականի հունիսի 3-ին ընդունված
«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում
լրացումներ և փոփոխություններ կատարելու»
մասին օրենքով ՀՀ քր. դատ. օր-ի 207-րդ հոդվածում**



կատարված լրացման, ո՞ր դեպքերում է պարտադիր անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության տեսաձայնագրառումը՝

- ա. Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ գործերով:
- բ. Երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ գործերով:
- գ. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի մտավոր զարգացման մեջ հետ մնալու կամ հոգեկան խնդիր ունենալու դեպքում, ինչպես նաև մինչև 14 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննության դեպքում:
- դ. Բոլոր պատասխանները ճիշտ են:

Հարց 9.

Ըստ 2020 թվականի հունիսի 3-ին ընդունված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու» մասին օրենքով ՀՀ քր. դատ. օր-ի 216-րդ հոդվածում կատարված լրացման, ո՞ր դեպքերում են անչափահաս տուժողի կամ վկայի մասնակցությամբ առերեսումներն իրականացվում միջնորդավորված՝ տեսաձայնագրառման և տեխնիկական այլ միջոցների օգնությամբ՝

- ա. Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ գործերով և երեխայի

թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ գործերով:

բ. Եթե դա է պահանջում երեխայի լավագույն շահերը:

գ. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի մտավոր զարգացման մեջ հետ մնալու կամ հոգեկան խնդիր ունենալու դեպքում, ինչպես նաև մինչև 14 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննության դեպքում:

դ. Բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:

Չափ 10.


Ըստ 2020 թվականի հունիսի 3-ին ընդունված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու» մասին օրենքով ՀՀ քր. դատ. օր-ի 207-րդ հոդվածում կատարված լրացման, ո՞ր դեպքերում են անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության ընթացքում նրանց հարցերը տրվում հոգեբանի կողմից՝

ա. Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ գործերով:

բ. Երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ գործերով:

գ. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի մտավոր զարգացման մեջ հետ մնալու կամ հոգեկան խնդիր ունենալու դեպքում, ինչպես նաև մինչև 14 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննության դեպքում:

դ. Բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:



ԴԱՍ 7

ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս դասի (մոտիվացնող ներածական տեսանյութ+դասի տեքստ+բառարան+ինքնաստուգիչ հարցեր) յուրացման համար անհրաժեշտ է **240 րոպե / 4 ժամ:**

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռաուսուցման բաժնում):

Հաշվի առնելով բռնության ենթարկված երեխայի հնարավոր հոգետրավմատիկ վիճակը՝ երեխաների հարցաքննության հիմնական նպատակներն երկուսն են.

1. բացահայտել և հավաքագրել բռնության վերաբերյալ ամբողջական և հավաստի տեղեկություններ,
2. պաշտպանել երեխայի հոգեբանական բարօրությունը, որն արդեն լրջորեն վնասվել է բռնությամբ կամ դրա փորձով:

Երեխայի հարցաքննության գրագետ իրականացումը բացառիկ կարևոր է, քանի որ շատ հաճախ երեխան միակն է, ով կարող է տալ պատահաժի վերաբերյալ հուսալի տեղեկություն: Մյուս կողմից, երեխայի նկատմամբ բռնություն կատարածների մի մասը չի ստանում համարժեք պատիժ, քանի որ երեխայի հարցաքննությունը չի կառուցվում



Մինչև 10 րոպե

Ուշադրությամբ կարդացե՛ք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցե՛ք ինքնաստուգիչ հարցերին:




Մինչև 175 րոպե

անհրաժեշտ գրագիտությամբ, ինչի հետևանքով ստացվում են անբավարար տեղեկություններ:

Արդարադատական համակարգը կարիք ունի, որպեսզի վկա կամ տուժող երեխան լինի «վստահելի վկա» և առանց հետաձգման տրամադրի հստակ ու ժամանակագրորեն ճշգրիտ վկայություն իրադարձության վերաբերյալ: Իսկ ո՞վ կարող է համարվել «վստահելի վկա»: Վկայի վստահելի լինելը ենթադրում է, որ նա.

- հնարավորինս ամբողջովին և ճշգրիտ հաշիվ է տալիս պատահածի մասին,
- տարբերակում է ճշմարտությունն ու սուտը,
- խնդրում է պարզաբանում, երբ չի հասկանում հարցը, և ոչ թե պատասխանում է պատահական կամ դրդված հարցաքննողին գոհացնելու կարիքով,
- զգում և դիմադրում է ուղղորդող հարցերին՝ դրանով իսկ թույլ չտալով, որ իրեն շփոթեցնեն:


Իրականում, երբ երեխան հարցաքննվում է, կարող են ի հայտ գալ մի շարք բարդություններ, որոնք, սակայն կարող են մնալ չնկատված՝ հարցաքննությունն իրականացնողների համար: Այդ բարդությունները բացասաբար են ազդում երեխայի վրա և կարող են նպաստել պակաս ամբողջական և հուսալի վկայություններ տալուն: Օրինակ, օտար և անսովոր միջավայրում գտնվելը երեխային դարձնում է չափազանց զգայուն, ինչը ներազդում է նրա կողմից տրվող տեղեկությունների ճշգրտության վրա: Ավելին, երբ խոսվում է զգայուն թեմայի մասին, ոչ



ճիշտ ձևակերպված հարցերը վտանգում են տրվող պատասխանի հավաստիությունը, իսկ սխալ տրված հարցերը վերակենդանացնում են երեխայի տրավմատիկ փորձը, և վերջինս ասես ստիպված է լինում իրեն «կրկին գոհ» զգալ (երկրորդային զոհականացում):

Հարցաքննությունը կառուցելիս բացառիկ կարևոր է հաշվի առնել երեխայի տարիքային զարգացման փուլի առանձնահատկությունները, քանի որ տարբեր տարիքի երեխաների մտածական և հուզական տարիքային հնարավորություններն ու դրսևորումներն ուղղակի ազդում և պայմանավորում են նրանց ընկալածի յուրացումը, վերամշակումը և հիշողության ու խոսքի մեջ վերարտադրությունը: Տարիքը երեխաների հիշողության հնարավորությունների առավել կարևոր պայմանավորող գործոնն է: Երեխայի տարիքը և զարգացման առանձնահատկություններն ազդում են նրա փորձի ընկալման և երկարատև հիշողության մեջ պահվող տեղեկությունների ծավալի վրա [1, 2]:


Մանկիկներն ու վաղ մանկական տարիքի երեխաները (մինչև 3 տարեկան) կարող են հիշել իրենց փորձը, ինչի մասին վկայում են նրանց արձագանքները մարդկանց, առարկաներին և միջավայրին, սակայն այդ վաղ հիշողությունները կապակցված չեն խոսքային նկարագրիչների հետ: Նույնիսկ եթե նրանք արդեն ունեն ձևավորված խոսք, նրանք քիչ չափով են ունակ իմաստավորելու անձանոթ փորձը, ունեն սահմանափակ բառապաշար



և դժվարանում են խոսել անցյալի մասին:

Մեծանալուն զուգահեռ երեխաների ուշադրության կենտրոնացումը բարելավվում է, և նրանք ավելի լավ են պատրաստված՝ հասկանալու, նկատելու առանձնահատուկ տարրեր և նկարագրելու իրենց փորձը խոսքով: Փոքր երեխաների հարցազրույցի ժամանակ բարդ է կենտրոնացնել նրանց ուշադրությունը և արդյունավետ տևողել նրանց հիշողությունները: Նրանք կարող են ուղղակի արձագանքել ծանոթ բառերին կամ պարզ արտահայտություններին՝ առանց անդրադառնալու ամբողջական հարցին, ընդունակ չեն դիտարկելու իրենց ընկալումները և հարցերին տրվող պատասխանները: Տարիքին զուգահեռ, երեխաների բնականոն զարգացումը և ստացած գիտելիքները բարելավվում են այս հմտությունները:


Փորձի մտապահումը կամ հիշելը դեռևս չեն երաշխավորում, որ երեխան կկարողանա այն նկարագրել ուրիշներին: Հարցաքննությունը երեխաների համար բարդ է, քանի որ այն ներառում է շատ տարբեր հաղորդակցական ձևանմուշներ և մանրամասներ ներկայացնելու անսովոր պահանջ: Փոքր երեխաները կարող են օգտագործել բառեր՝ նախքան դրանց իմաստը լիարժեք հասկանալը, կարող են շփոթել նույնիսկ պարզ հասկացություններ և եզրույթներ, ինչպիսիք են «վաղը», «շատ» կամ «երկար»: Մեծանալուն զուգահեռ, երեխաները ձեռք են բերում ունակություն՝ օգտագործելու բառերը մշակույթային-



Նորմատիվային սահմաններին ավելի համապատասխան, չնայած սեռական կոնտակտների, մտքերի և հույզերի վերաբերյալ հասկացությունները, դատաիրավական հարցերի առանձնահատկությունները, այնուամենայնիվ, կարող են նրանց ընկալումից դուրս լինել [3]:

Քանի որ ավելի մեծ տարիքի երեխաները և դեռահասները (10 տարեկանից բարձր) շատ նման են մեծահասակներին, հարցաքննողները կարող են չհասկանալ, որ նրանք կարող են էականորեն տարբերվել իրենց խոսքային և մտածական հնարավորություններով: Արդյունքում, հարցաքննողները կարող են ունենալ բարդություններ կոնտակտի հաստատման, հարցաքննության հրահանգների բացատրման և հարցերի հասկացման ապահովման առումով: Ցանկանալով երևալ կոմպետենտ՝ դեռահասները կարող են դժվարությամբ դիմել օգնության: Հարցաքննողները պետք է զգուշանան դեռահաս վկաներից/տուժողներից չհիմնավորված բարձր սպասելիքներից և չպետք է ցուցաբերեն ավելի քիչ աջակցող մոտեցում կամ խոսեն բարդ, խճճող լեզվով, ինչը կբարդացնի իրավիճակը[4, 5]:

Ստորև աղյուսակով ներկայացվում են երեխաների և դեռահասների իմացական և հուզական հիմնական տարիքային առանձնահատկությունները, սահմանափակումները և հարցաքննության վարմանն ուղղված գործնական խորհուրդներ:



Տարիք	Առանձնահատկություններ	Սահմանափակումներ	Խորհուրդներ
Վաղ մանկություն (2-6 տարեկան)	<u>2-3 տարեկան՝</u> - Երեխայի ֆանտազիաները, երևակայությունը դառնում են արտաքին աշխարհի օբյեկտներից անկախ, ավելի քիչ եսակենտրոն, ավելի ամբողջական - Հասկանում են նկարների և լուսանկարների սիմվոլիկ նշանակությունը - Տարբերակում են ներքին, հոգեկան և արտաքին իրադարձությունները - Սկսում են հաշվել - Սովորաբար արդեն ունենում են որոշակի բառապաշար, կազմում են կարճ նախադասություններ - Հակված են ընդհանրացնելու (օրինակ, եթե տանն ունեն կատու, ապա բոլոր չորքոտանի կենդանիներին կարող են անվանել կատու) - Հասկանում և ճանաչում են հիմնական հույզերի պատճառները, հետևանքները և վարքային նշանները - Սկսում են ձևավորվել ինքնագնահատականը և ես-ի կոնցեպցիան - Ցուցաբերում են բարոյական զգացողության զարգացման նշաններ՝ կարող են վերբալ գնահատել սեփական և ուրիշի արարքները: <u>3-4 տարեկան՝</u> - Գիտակցում են օբյեկտների մոդելների, պատկերների և իրական կյանքի օբյեկտների տարբերությունը - Հասկանում են պատճառահետևանքային կապերը սովորական իրադարձություններում - Տարբերակում են տեսքն իրական օբյեկտից (արդյոք	- Գնահատման ժամանակ կարևոր է վստահ լինել, որ երեխան հասկանում է բոլոր բառերի նշանակությունը. նրանց հետ շատ դժվար է իրականացնել լիարժեք հարցազրույց - Հարցազրույցը հնարավոր է անցկացնել խաղի ձևով - Ուշադրությունն ու կամային դրսևորումները սահմանափակ են, երեխաները կարող են արագ հոգնել և կարիք են ունենում գործողությունների փոփոխության - Երեխան դեռևս ամբողջապես չի տարբերակում սոցիալական, ֆիզիկական և մտածական իրողությունները - Աշխարհը դիտարկվում է միայն սեփական անձի տեսակետից (մտածողության եսակենտրոնություն). ունակ չեն «կողքից նայել» և քննադատորեն վերաբերվել սեփական կարծիքին - Թեև սկսում է ընկալել տեսակետների բազմազանությունը, սակայն մտածողության մեջ դեռ կարող է առաջնորդվել մոգականությամբ - Մտածողությունը <i>կոնկրետ է՝</i> երեխան գործ է ունենում միայն իրողության հետ, որը տեղի է ունենում «այստեղ և հիմա», չի կարողանում վերացարկվել ժամանակի մեջ - Մտածողությունը <i>կենտրոնացված է</i>, այսինքն՝ մտածողությունը կարողանում է հաշվի առնել օբյեկտի միայն մի առանձնահատկություն և ի վիճակի չէ կենտրոնանալ մի քանի առանձնահատկության	- Բառապաշարը պետք է լինի պարզ և երեխային հասկանալի, կարճ, ոչ երկիմաստ նախադասություններով - Մեծամասամբ օգտագործել բաց հարցեր - Տալ հստակ հարցեր, որոնք վերաբերում են դեպքի մանրամասներին, մարդուն, մարմնի մասերին - Երեխան չի կողմնորոշվում ժամանակի մեջ, ուստի հարցադրումները պետք է կապված լինեն հստակ գործողությունների հետ - Երեխան վախենում է չարդարացնել մեծահասակի սպասելիքները, ուստի, հնարավոր է հաճախ ասի «Չեմ հիշում» կամ «Չգիտեմ», կամ պատասխանի ըստ նրա, թե իր կարծիքով հարցաքննողն ինչ է սպասում իրենից - Բազմակի հարցաքննությունները կամ դեպքի մասին հաճախակի խոսելը կարող են դրդել երեխայի մոտ իրադարձությունների երևակայական պատկերացմանը:

	մոմը, որը նման է մատիտի, իսկապես մատիտ է) • Օգտագործում են անհատական խոսքը՝ սեփական վարքն ուղղորդելու նպատակով • Սկսում է զարգանալ հուզական ինքնակարգավորումը և ապրումակցումը: <u>4-5 տարեկան՝</u> • Չարգանում է կայուն ուշադրությունը և պլանավորումը • Օգտագործում են «վարքային սցենարները» հիշողության համար (հիշում են կոնկրետ գործողություններ) • Հաշվում են մինչև 10-ը, գիտեն թվերի նշանակությունը • Կարողանում են կառավարել իրենց հույզերը: <u>5-6 տարեկան՝</u> • Նվազում է մոգական/կախարդական մտածողությունը • Ավելանում են պլանավորման և ուշադրության կենտրոնացման հնարավորությունները • Ճանաչելը, վերհիշելը, «սցենարային» հիշողությունը շարունակում են զարգանալ • Չարգանում է հուզական հասկացումը (ուրիշների հուզական հակազդումները մեկնաբանելու, կանխատեսելու և դրանց վրա ազդելու հնարքներ) • Մեծանում են ապրումակցելու հակազդումները • Ցուցաբերում են տարաբնույթ բարոյական նորմեր և վարքաձևեր • Հասկանում են սեռի անփոփոխ լինելը:	վրա միաժամանակ • Մտածողությունը միավեկտոր է՝ իրադարձությունների զարգացումը և կապերի ստեղծումը կարող է իրականանալ մեկ ուղղությամբ («Վահանը քո եղբայրն է» հասկացվում է, բայց «Դու էլ Վահանի եղբայրն ես» չի հասկացվում) • Կենտրոնացնում են իրենց ուշադրությունը տվյալ վիճակի վրա: Երեխան դատում է օբյեկտի մասին համաձայն նրա, թե ինչպիսի տեսք ունի այն հիմա: Երեխան հաշվի չի առնում այն գործոնները, որոնք օբյեկտին հասցնում են տվյալ վիճակին • Ժամանակային և տարածական կողմնորոշումը դեռ ձևավորված չեն, կարող են շփոթել ժամերը, օրերը, վայրերը:	
--	---	---	--

Միջին մանկություն (7-12 տարեկան)	- Մտածողությունը ճկուն է, դուրս է գալիս «այստեղ և հիմա» սահմաններից, ավելի քիչ էզոցենտրիկ է - Կարողանում է անել տրամաբանական եզրահանգումներ - Երեխան դատում է այս կամ այն քայլի բարոյականություն մասին՝ ելնելով դրանց հետևանքներից, այլ ոչ թե՝ դրդապատճառներից - Իմացական գործընթացն ակտիվ է, ընտրողական, պատճառա-հետևանքային, համակարգված - Հիշողությունն ավելի համակարգված է - Առաջ են գալիս բարոյական պատկերացումներ, որոնք դեռ հիմնվում են արտաքին պատժի կամ խրախուսանքի վրա - Մեծանում է սեփական անձի ընկալման կարևորությունը, ուստի տրամաբանական ժամանակ մեծանում է երեխայի սեփական դերի ընկալման կարևորությունը:	- Կենտրոնացած են ենթարկվելու և պատժից խուսափելու/պարգևատրվելու վրա, ինչը կարող է ազդել հարցերի պատասխանների ճշմարտացիության վրա: 10-12 տարեկան՝ - Կողմնորոշված են դեպի լավ հարաբերությունների պահպանում և այլ մարդկանցից խրախուսանքի ստացում. պետք է ենթարկվել, որպեսզի խուսափեն այլ մարդկանց արհամարհանքից կամ պատժից:	- Տալ բաց, ընդհանուր հարցեր, որոնք թույլ կտան ազատ շարադրել իրողությունը - Խուսափել եզրույթներից, որոնք կարող են վախեցնել երեխային - Կարևոր է մոտիվացնել երեխային, հատկապես դա հնարավոր է անել խրախուսելով նրանց դրական դերն ու նշանակալիությունը հարցաքննության համար - Չի կարելի սպառնալ կամ վախեցնել ուղղակի կամ անուղղակի, քանի որ երեխան կարող է սկսել ձգտել հեռանալ այդտեղից, այլ ոչ թե անկեղծ լինել:
Դեռահասություն/ վաղ պատանեկություն (12-18 տարեկան)	- Սեռահասունացման շրջան - Հուզական անհավասարակշռություն «Մեծահասակ» լինելու զգացողության զարգացում - Ինքնագիտակցության զարգացում - Ապահովության փնտրտուք հասակակիցների շրջանում - Հասունության և անկախության ձգտում <i>Դեռահասի կարևոր պահանջմունքներ՝</i> - Ֆիզիոլոգիական պահանջմունքները, որոնք դրդում են դեռահասներին ֆիզիկական և սեռական ակտիվության - ապահովության պահանջմունք, որը դեռահասը սկսում է փնտրել իր հասակակիցների շրջանում - ընտանիքից անկախ	- Հուզական անհավասարակշռություն - Ձգտում առանձնանալու, ինքնամիտփություն - Կաշկանդվածություն, ամոթխածություն - Խոցելի ինքնասիրություն - Չափազանցված և մաքսիմալիստական մտածողություն - Կոնֆլիկտայնություն, հակվածություն ներքին կոնֆլիկտների - Ըմբոստություն ծնողական/ հասարակական/ համակարգային նորմերի դեմ:	- Անհրաժեշտ է ընտրել հաղորդակցման ոչ ակնհայտ հիերարխիկ ոճ՝ ավագ ընկերոջ կամ հավասարի - Խոսքը պետք է լինի հասկանալի, հասարակ, բայց՝ ոչ ժարգոնային - Կարևոր է խոսել դեռահասի նախասիրություններին և ներքին շրջանակից, կիսվել սեփական հետաքրքրություններով - Չմոռանալ, որ չնայած դիմացինն արդեն երեխա չէ, բայց հուզական մակարդակում նա վերջնականապես հասունացած չէ, և նրա մոտ կարող են գերակայել լավ

	լինելու պահանջմունքը (ինքնահաստատում, ինքնուրույնություն) - կապվածության պահանջմունք - հաջողության պահանջմունք՝ սեփական ուժերը փորձելու և հաջողության հասնելու, ինքնահաստատվելու պահանջմունք - ինքնիրացման և սեփական «Ես»-ի զարգացման պահանջմունք:		թաքցվող մանկական հետաքրքրություններ - Անհրաժեշտ է խուսափել գերակայող, ուժի դիրքից զրույցը վարելուց, քանի որ նման ոճը հավանական է, որ կարթնացնի ընդդիմառակ ու պահանջ - Հոգեբանական հարմարավետություն ստեղծելու համար արդյունավետ է թույլ տալ, որպեսզի զրույցի տեմպը թելադրի դեռահասը և չզգա ճնշում կամ պարտադրանք - Տեղին հոլմորդ կարող է նպաստել «սառույցի կոտրմանը»:
--	---	--	--

Բռնության ենթարկված երեխայից ամբողջական և ճշգրիտ վկայություն ստանալու համար գոյություն ունեն հարցազրույց/հարցաքննություն վարելու տարբեր մոդելներ:

Բազմաթիվ հետազոտություններ են իրականացվել՝ ուղղված երեխայի հիշողության, հաղորդակցման և սոցիալական ունակությունների ոլորտներին, հարցազրույցի վարման գործնական ուղեցույցներին: Արդյունքում, արձանագրվել են մի շարք փաստեր, որոնց վերաբերյալ մինչ այդ չկար համաձայնություն [6]: Բացահայտվել է, որ՝


- երեխաները, անկախ տարիքից, ունեն հստակ ունակություն՝ հիշելու իրենց շուրջը կատարվածը,
- հնարավոր է երեխայից ստանալ հուսալի տեղեկություն, բայց դրան հասնելու համար անհրաժեշտ է հստակ հետևել որոշակի ընթացակարգերի և հաշվի առնել երեխայի տարիքային և անհատական ունակությունները,
- երեխայի կողմից տրված տեղեկության

ամբողջականությունն ու հոսալիությունը կախված է հարցազրուցավարի արհեստավարժությունից: Մասնավորապես, հարցազրուցավարը պետք է կիրառի լայն հարցեր, օրինակ՝ «պատմիր ինձ պատահածի մասին», այնպես, որ երեխան կարողանա հաղորդել որքան հնարավոր է շատ տեղեկատվություն,

- երեխայից ստացվող տեղեկության կեսից ավելին ձևավորվում է ազատ զուգորդությունների և բաց հարցերի միջոցով (անկախ տարիքից): Ազատ պատմությամբ ստացված տեղեկությունը մինչև 5 անգամ ավելի ինֆորմատիվ և հոսալի է, քան ուղիղ և նեղ հարցերի միջոցով ստացվող տեղեկությունը,
- ազատ պատմության կամ զուգորդությունների օգնությամբ փոքր տարիքի երեխաները կարող են պատասխանել քննությանը վերաբերվող գրեթե բոլոր հարցերին,
- ուղղորդող հարցերը, որոնցից պետք է ցանկացած դեպքում խուսափել, մասնավորապես ռիսկային են մինչև 6 տարեկան երեխաների դեպքում, քանի որ այս տարիքի երեխաներն առավելապես հակված են գոհացնելու մեծահասակներին, ինչպես նաև չափազանց ներշնչվող են:

Հաջողված հարցազրույցը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին՝

- նշանակալիորեն իջեցնի երեխայի սթրեսի աստիճանը,
- ավելացնի երեխայի կողմից տրվող հոսալի տեղեկությունների ծավալը,
- նվազագույնի հասցնի ցանկացած գործոնի ազդեցությունը՝ ձևափոխելու կամ աղճատելու երեխայի կողմից տրվող տեղեկությունները [6]:



Այս չափանիշներին հետևելը գրեթե ամբողջապես կախված է երեխային ուղղվող հարցերի տեսակից, դրանց ձևակերպումից, հաջորդականությունից և օգտագործվող բառերից:


Հարցազրույցի/հարցաքննության ընթացքում կիրառվող հարցերը կարող են լինել մի քանի տեսակի: Ստորև թվարկված հարցերի տեսակների հաջորդականությունն արտացոլում է գրագետ հարցազրույցում դրանց կիրառելիության հաճախականությունը՝ նվազման սկզբունքով (հարցերի տեսակերը և դրանց հերթականությունը համաձայն NICHD արձանագրության¹):

1. Բաց հարցեր: Այս հարցերն առավելապես խթանում են երեխայի ազատ պատմությունը/գուգորդությունները. «Պատմիր՝ ինչ է պատահել», «Հետո ի՞նչ եղավ»: Նման հարցադրումները ներառում են նաև հարցեր՝ ուղղված պատասխանի պարզաբանմանը. «Դու նշեցիր..., պատմիր ինձ ավելի շատ այդ մասին» և այլն:

2. Կենտրոնացնող հարցեր՝

- Ի՞նչ. «Ի՞նչ գույնի էր նրա վերնաշապիկը»,
- Ո՞վ. «Ո՞վ կար նրա հետ»,
- Որտե՞ղ. «Որտե՞ղ նա քեզ դիպչեց» (եթե երեխան դա նշում է),
- Ե՞րբ. «Ե՞րբ դա տեղի ունեցավ»,
- Ինչպե՞ս. «Ինչպե՞ս դու դուրս պրծար»,
- Ինչո՞ւ. «Ինչո՞ւ նա քեզ հարվածեց» (կարևոր է նշել,

¹ԱՄՆ Երեխայի առողջության և անձի զարգացման ազգային ինստիտուտի հարցազրույցի վարման կառուցվածքային մեթոդ (USA's National Institute of Child Health and Human Development's structured method of interviewing):




որ բռնության ենթարկված երեխայի հետ ավելի լավ է խոսափել «ինչո՞ւ» հարցից, քանի որ այն պարունակում է մեղքի տարր):

3. Փակ հարցեր: Հարցերի այս տեսակը ենթադրում է միանշանակ պատասխան կամ նախապես ենթադրելի պատասխանների այլընտրանք՝ «այո-ոչ», օրինակ՝ «Նա սպառնում էր քեզ», կամ տարբերակի ընտրությամբ հարցեր, օրինակ՝ «Նա կանգնած էր, թե՛ նստած»: Փակ հարցերը պակաս ինֆորմատիվ են և կարող են հանգեցնել երեխայի ներփակման, կաշկանդվածության և տագնապի:

4. Թելադրող/ուղղորդող հարցեր: Չնայած, որ որոշ դեպքերում ուղղորդող հարցերը («Նա համբուրեց քեզ, այդպես չէ՞», «Դու չես ուզում, չէ՞, որ նա մնա անպատիժ») կարող են լինել օգտակար, այնուամենայնիվ, դրանք հարցերի տեսակներից առավել վտանգավորը և անթույլատրելի են: Նման ձևով կառուցվող հարցադրումներն իրենց մեջ կրում են երեխային մանիպուլյացիայի ենթարկելու միտում, ինչը հստակ հակասում է հարցազրույցի նպատակներին և վնասում է երեխայի հոգեվիճակին [7,8]:

Բռնության ենթարկված երեխայի հետ հարցազրույցի կառուցվածքը բաղկացած է հետևյալ երեք հիմնական փուլերից՝

1. Ռապորտի (կոնտակտի) կառուցում և երեխայի զարգացման աստիճանի գնահատում. սա վստահելի, ապահով ու հանգիստ փոխազդեցության կառուցումն է.
2. Տեղեկությունների հավաքում. հարցազրույցի հիմնական մասն է.




3. Հարցազրույցի փակում. կարևոր է՝ չեզոքացնելու համար հարցազրույցի հնարավոր բացասական հուզականությունը:

1. Ռապորտի կառուցում և երեխայի զարգացման գնահատում

Հարցազրույցի ՊԱՅՄԱՆՆԵՐ.

- հարցազրույցի վայրը պետք է լինի չեզոք, հանգիստ և ապահով: Օգտակար է, եթե առկա են թղթեր, մատիտներ, խաղալիքներ,
- պետք է նստել այնպես, որպեսզի երեխայի հետ լինի աչքերի կոնտակտ: Ընդունելի չէ հարցեր տալը՝ նստած սեղանի հետևում: Պետք է նստել երեխային մոտ, բայց ոչ շատ մոտ. չի կարելի ներխուժել երեխայի «տարածք», դա կարող է շատ վտանգավոր լինել վերջինիս համար,
- որքան հնարավոր է քիչ մարդ պետք է ներկա գտնվի հարցազրույցի ընթացքում: Միջազգային պրակտիկայում լավագույն տարբերակը հատուկ մասնագիտացված անձի կողմից կազմակերպվող հարցազրույցն է, իսկ իրավապահներն ուղղակի հետևում են միակողմանի հայելու միջոցով²: Հոգեբանը կամ մանկավարժը պետք է ներկա գտնվի հարցազրույցին: Եթե սեռական բռնության կասկած կա, հարցազրուցավարի և երեխայի սեռերի


²Հայաստանում այս մոդելը կիրառելու համար անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական փոփոխություններ և իրականացնել ՀՀ քր. դատ. օր.-ում:



համապատասխանությունը կարևոր է երեխայի որոշակի տարիքի դեպքում, սակայն առավել առաջնայինը հարցազրուցավարի հմտություններն են:

ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՏԱԿՏ.

- անհրաժեշտ է թույլ տալ երեխային՝ վարժվել տեղանքին, հետազոտել սենյակը,
- երեխային պետք է ողջունել նրա անունով, լինել բաց և ընկերական,
- կարևոր է տեղեկացնել երեխային՝ որտեղ են լինելու նրա ծնողները/ծնողը հարցազրույցի ընթացքում,
- պետք է ներկայանալ երեխային և ներկայացնել մյուսներին, երեխային հասկանալի ձևով պատմել, թե որտեղ է գտնվում նա և որն է ներկաների դերը,
- անհրաժեշտ է տեղեկացնել երեխային՝ ինչ է տեղի ունենալու և որքան է տևելու,
- առանձնահատուկ կարևոր է լինել ապրումակցող, ուշադրություն դարձնել երեխայի մոտ առաջ եկող նյարդայնության ցանկացած դրսևորմանը,
- հարցազրույցն անհրաժեշտ է սկսել երեխայի կյանքին վերաբերվող հարցերից՝ ինչ դպրոց է հաճախում, ինչ է սիրում անել: Հարցեր ձևակերպելիս կիրառվում են երեխայի մասին ունեցած տեղեկությունները: Օրինակ, եթե նախապես հայտնի է, որ երեխան ինքնամփոփ է և չունի ընկերներ, «Ամենամոտ ընկերոջդ անունն ի՞նչ է» հարցը սխալ հարց է:
- պետք է բացառվեն ճնշում պարունակող հարցերը.




«Ուզո՞ւմ ես իմ ընկերը դառնալ», «Կարո՞ղ եմք ընկերներ մնալ»,

- կարևոր է զգայուն լինել երեխայի կարիքների նկատմամբ, արձագանքել, եթե երեխան ուզում է ջուր կամ զուգարան գնալ, կամ առաջարկել երեխային ջուր կամ ընդմիջում: Երբեմն երեխաները, չցանկանալով խոսել ինչ-որ երևույթների կամ առարկաների մասին, փորձում են հետաձգել այդ իրավիճակը, փնտրում են արդարացված փախուստի ձևեր: Եվ եթե թույլ չտրվի նրան դա անել, դիմադրությունը կարող է մեծանալ, նրա հետ լավ կոնտակտի հաստատումը կարող է բարդանալ կամ նույնիսկ անհետանալ:

ԵՐԵՒԱՅԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ
ԳՆԱՅԱՏՈՒՄ.

- երեխային ծանոթ թեմաների քննարկման ընթացքում պետք է լսել երեխայի խոսքը և լեզուն, հարմարեցնել հարցազրույցի ընթացքում օգտագործվող լեզուն և բառապաշարը,
- պետք է խնդրել երեխային՝ նույնականացնել գույները, նպաստել, որ երեխան ցուցաբերի հաշվելու ունակությունը, ստուգել նախդիրների հասկացումը՝ առջև, հետևում և այլն,
- հիշողության արդյունավետությունը ստուգելու նպատակով անհրաժեշտ է երեխային խնդրել պատմել այսօրվա կամ երեկվա մասին. «Պատմիր՝ այսօր մինչ այստեղ գալիս ինչ ես արել», «Երեկվա օրը կպատմե՞ս ինձ» և այլն:




2. Տեղեկությունների հավաքում

ԳԼԽԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ.

անհրաժեշտ է՝

- հարցնել երեխային՝ ինչու է նա այստեղ, ինչ են նրան ասել ուրիշներն այստեղ կատարվելիքի մասին.
- ծանոթացնել ստի և ճշմարտության իմաստներին (ինչը, մասնավորապես, կարևոր է փոքր երեխաների հետ), օրինակ՝ հասկանալու համար, որ երեխան տարբերակում է դրանք («Եթե ես ասեմ, որ ես ունեմ կանաչ մազեր, դա ճշմարտություն կլինի, թե՛ սուտ»).
- բացատրեք երեխային, որ այսօր խոսվելու է միայն ճշմարիտ բաների մասին.
- հաշվի առնել այն, որ երեխան վախեցած է.
- բացատրել, որ կարիք կլինի խոսել նաև գաղտնիքներից, երեխաների հետ աշխատելիս պետք է լինում շատ ժամանակ տրամադրել տարբերակելու «վատ» և «լավ» գաղտնիքները: Բռնարարները շատ հետաքրքրված են, որ երեխան պահպանի գաղտնիքը: Նրանք կիրառում են ճնշման բոլոր ձևերը երեխայի վրա, երբեմն շատ քողարկված և դաժան, որ նա լռի.
- ասել երեխային, որ եթե նա չգիտի հարցի պատասխանը, պետք չէ կռահել, այլ պետք է ուղղակի ասել «չգիտեմ»: Պետք է հավաստիացնել, որ նա կարող է որոշ հարցերի պատասխանները չունենալ և որ նորմալ է ասել «չգիտեմ»: Պետք է երեխային հիշեցնել, որ նա դպրոցում չէ, և




պարտադիր չէ պատասխանել, առավել ևս, որ այդ պատասխանները չեն գնահատվելու: Կարելի է օրինակ բերել՝ ստուգելու վերոնշյալի ընկալումը (մասնավորապես կարևոր է փոքր երեխաների դեպքում): Օրինակ, հարցնել՝ «Ի՞նչ գույնի ավտոմեքենա եմ ես վարում», և եթե երեխան տա միանշանակ պատասխան, զգուշորեն ցույց տալ նրան, որ նա դա չի կարող իմանալ և ուղղակի փորձում է կռահել. փոխարենը կարող է ուղղակի ասել՝ «չգիտեմ»:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՀՆԱԲՔՆԵՐԸ.

անհարժեշտ է՝

- օգտագործել երեխայի համար հասկանալի լեզու,
- օգտագործել միայն մեկ հարց կամ միտք պարունակող արտահայտություններ, պարզ բառեր, կարճ նախադասություններ,
- խուսափել «Եթե..., ապա...» արտահայտությունները կիրառել փոքր երեխաների հետ հարցազրույց վարելիս,
- համաձայնեցնել երեխայի հետ հիմնական անձանց անունները, օգտագործել դրանք խոսքում՝ դերանունների փոխարեն (քեռի Վարդանը, ոչ թե՛ նա),
- հարցերում լինել կոնկրետ. փոքր երեխաները շատ բառացի են հասկանում ասվածը,
- միշտ խնդրել երեխային՝ բացատրել այն բառը կամ արտահայտությունը, որն անհասկանալի էր,
- հարմարեցնել հարցազրույցի տեմպը երեխայի




բացվելու ունակությանը, լինել համբերատար,

- եթե երեխան փակում է դեմքը կամ աչքերը, իջեցնում է ձայնը կամ շշնջում է հարցերին պատասխանելիս, թույլատրել դա անել,
- վերահսկել սեփական հույզերը, ձայնի երանգը, դիմախաղը, ցույց չտալ հետաքրքրվածություն կամ շոկ՝ անկախ նրանից, թե ինչ է նա պատմում,
- եթե երեխան դժվարանում է խոսել բռնության մասին, խնդրել նրան՝ ցույց տալ տիկնիկի վրա կամ նկարել,
- խրախուսել պատմողական գործընթացը՝ կիրառելով բաց հարցեր. «պատմիր ինձ՝ ինչ է տեղի ունեցել»,
- խթանել պատմությունը՝ ասելով «մի քիչ էլ պատմիր» կամ «ի՞նչ եղավ հետո»,
- անցում կատարել ընդհանուր հարցերից դեպի սպեցիֆիկ հարցեր՝ կապված կրիտիկական իրադարձությունների և անձանց հետ,
- զգուշանալ «այո-ոչ» պատասխան ենթադրող հարցերից,
- ունենալ նախապես պատրաստված հարցերի ցանկ, որոնք պետք է պարտադիր հնչեցնել:


ԻՆՉ ՉԻ ԿԱՐԵԼԻ ԱՆԵԼ

- հարցազրույցի ընթացքում ճառ կարդալ, երկար բացատրել կամ ներկայացնել ինչ-որ մանրամասներ,
- տեղեկությունների դիմաց գովել երեխային կամ խոստանալ պարգևատրում,
- պարտադրել երեխային՝ պատասխանել, նույնիսկ եթե առկա է վստահություն, որ երեխան ստում է կամ չի բացահայտում տեղեկության մի հատված,



որ պետք է իմանար: Եթե առկա է տեղեկություն,
որ երեխան մեկ ուրիշին պատմել է տարբերվող
ինֆորմացիա, նորմալ է՝ խնդրել նրան պարզաբանել
շփոթությունը: Բացարձակ անընդունելի է ճնշումը
երեխայի նկատմամբ, եթե երեխան չի ցանկանում
պատասխանել,


- հարցնել երեխային՝ ինչպես նա կցանկանար պատժել
բռնարարին, ինչպիսին, ըստ նրա, պետք է լինի
պատիժն իր հետ արածի համար,
- գնահատել երեխայի տված պատասխանները,
- ուղղել «սխալ պատասխանը». փոխարենը պետք է
խնդրել տալ պարզաբանում,
- ուղղորդել երեխային՝ առաջարկելով բռնության
մասին մանրամասներ (օրինակ՝ «Ես գիտեմ, որ նա
քեզ սկզբում հարվածել է ձեռքով, իսկ ապա՝ զցել
հատակին: Պատմիր դրա մասին»),
- ցույց տալ ձանձրույթ, երբ չի ստացվում ստանալ
ցանկալի տեղեկություններ. ավելի ճիշտ է՝ ընդմիջել,
- շտապեցնել երեխային, ով պատրաստ չէ խոսել. ավելի
լավ է՝ պայմանավորվել մեկ այլ հանդիպման համար,
- հարցնել երեխային՝ ինչու է բռնարարը վնասել նրան.
Երեխան չի իմանում և հաճախ մեղադրում է ինքն
իրեն,
- հարցնել երեխային, արդյոք նա սիրո՞ւմ է բռնարարին
և արդյոք բռնարարը սիրո՞ւմ է նրան,
- տալ խոստումներ, որոնք անհնար է պահել, օրինակ՝
«այլևս ոչ մի վատ բան քեզ հետ չի պատահի»,
- խոստանալ երեխային, որ ոչ ոք չի իմանա այն, ինչ նա
կասի:



3. Հարցազրույցի փակում (բացառիկ կարևոր է՝ հարցազրույցի ընթացքում առաջացած բացասական հոգեվիճակները չեզոքացնելու համար). անհրաժեշտ է՝


- բացատրել երեխային՝ ինչ է տեղի ունենալու հաջորդիվ, ինչ գործընթացների է նա դեռևս մասնակցելու և մոտավորապես երբ է դա լինելու,
- գովել երեխային ջանքերի համար, այլ ոչ՝ բովանդակության («դու այսօր մեծ աշխատանք կատարեցիր, ապրես»),
- շնորհակալություն հայտնել երեխային,
- տալ ավարտական հարցեր. «Էլի բան կա՞, որ, կարծում ես ես պետք է իմանամ», «Կա՞ բան, որ կուզես ասել մինչև ավարտելը», «Կա՞ բան, որ կուզես հարցնել ինձ»,
- պատասխանել բոլոր հարցերին, որ երեխան կուներևա,
- ծախսել մի քանի րոպե՝ խոսելու չեզոք թեմայից. «Այստեղից գնալուց հետո ի՞նչ ես պատրաստվում անել» [5, 7, 8]:

Հարցազրույցի բոլոր փուլերը պետք է կառուցվեն ապրումակցման հենքի վրա: Ապրումակցման կամ էմպաթիայի կարևոր հատկանիշը դիմացինի անձի նկատմամբ հարգանքի և նրան չվնասելու դիրքորոշումն է, նրա հուզական վիճակը հասկանալու և փորձառությունը կիսելու պատրաստակամությունն է: Սա էթիկական կարևոր նորմ է, որը երեխայի հարցաքննության (հարցազրույցի) ընթացքում պարտադիր է պահպանել սկզբից մինչև վերջ:



Ընդ որում, ապրումակցման պարտադիր պայմանը դրա անկեղծությունն է. անհնար է լինել կեղծ ապրումակցող, քանի որ այդ կեղծությունը անպայման անգիտակցորեն հաղորդվելու է դիմացինին (իսկ երեխաները չափազանց զգայուն են) շարժումների, դիմախաղի, ձայնի հնչերանգի, մարմնի դիրքի, աչքերի արտահայտության կամ շարժումների միջոցով: Հետևաբար, մինչև հարցազրույցն սկսելը կարևոր է, որպեսզի հարցազրուցավարը հստակ գիտակցի և փոփոխի իր իրական վերաբերմունքը երեխային, իրեն խանգարող բացասական դիրքորոշումները երեխայի, նրա խնամակալների, իրավիճակի, տեղի ունեցածի վերաբերյալ, այլապես այդ դիրքորոշումները թույլ չեն տա հարցազրուցավարին՝ երեխայի հանդեպ զբաղեցնել օպտիմալ, անվտանգ և նրբանկատ դիրք (ինչը պարտադիր է երեխայի հետ հարցազրույցի համար): Էմպաթիկ լսելիս պետք է արտահայտել հետաքրքրվածություն զրուցակցի ասածների նկատմամբ, կիրառել չեզոք, գնահատական չարտահայտող բառեր, խուսափել քննադատությունից, զրուցակցին ընդհատելուց, հապճեպ եզրակացություններ անելուց, առարկելուց, մեղադրելուց, համոզելուց կամ խորհուրդ տալուց [8]:

Մասնագիտական գրականության մեջ բացատրված են կրկնվող հարցադրումների և կրկնակի հարցազրույցների վտանգները [2, 3, 5]: Մասնավորապես, մի քանի անգամ նույն հարցման գործընթացով անցնող երեխան վտանգված է




վերատրավմատիզացիայի առումով, ինչպես նաև իր կողմից հաղորդվող տեղեկությունների ճշգրտությունն ու մանրակրկիտությունն էականորեն նվազում են: Այնուամենայնիվ, որոշ երեխաներ պահանջում են ավելի շատ ժամանակ՝ գործընթացին և հարցազրուցավարին հարմարվելու համար:

Երեխային հարցազրույցի սկզբում մանրամասն պատասխաններ տալու հարցում խրախուսելը նպաստում է նրա ընդգրկուն պատասխաններին՝ դատավարության հետագա փուլերում: Հետևաբար, հարցազրույցի առաջին փուլի վրա ծախսված ժամանակահատվածն այնուհետև փոխհատուցվում է վստահելի տեղեկություններ հավաքելով:

Հարցազրուցավարը պետք է կիրառի բաց հարցեր և պետք է թույլատրի լռությունը կամ երեխայի անվճռականությունը՝ առանց ժամանակից շուտ անցնելու ավելի հստակ հարցադրումների: Չնայած, որ նման հարցերը կարող են խրախուսել ավելի մանրամասն տեղեկությունների տրամադրումը, դրանք կարող են նաև խթանել պոտենցիալ սխալ պատասխանները, եթե երեխան իրեն պարտադրված է զգում՝ տալու հստակ պատասխաններ:

Երեխայի կողմից տրվող տեղեկությունների ճշգրտության վրա ազդող գործոնները շատ են և բազմազան՝


- Երեխայի տարիքը,
- Երեխայի իմացական, հուզական և սոցիալական զարգացման մակարդակը,



- իրադարձության խոսքային կառուցումը (խոսքի զարգացման աստիճանը),
- մանրամասների քանակը (հիշողության բժախնդրությունը),
- իրադարձության մասին այլ անձանցից ստացված տեղեկությունը (ընտանիքի կողմից պոտենցիալ ճնշումը),
- հարցազրուցավարի՝ ռապորտ հաստատելու եղանակը,
- հարցազրուցավարի անձի ընկալումը երեխայի կողմից,
- հարցազրույցի վարման ոճը և հարցերի կառուցվածքը,
- անձնային գործոնները (բնավորությունը, խառնվածքը, հուզական առանձնահատկությունները և այլն):

Հաշվի առնելով բոլոր այս գործոնները՝ հարցազրուցավարը պետք է ընդունի, որ իր առջև դրված է խնդիր ոչ միայն երեխայից ստանալու հավաստի և ամբողջական վկայություն, այլ նաև պաշտպանելու երեխայի հոգեբանական բարօրությունը և կանխելու հետագա վերատրավմատիզացիան: Կարևոր է միշտ հիշել, որ երեխաները, ովքեր հարցաքննության ժամանակ դժկամությամբ են խոսում, կարիք ունեն աջակցության, այլ ոչ ճնշման:


Ընդհանրապես, բարդ իրավիճակների կանխարգելումը երեխային քննչական և այլ դատավարական գործողությունների բոլոր տեսակներին ներգրավելիս, երեխայի լավագույն շահերի պաշտպանության և նրա արժանապատվության



Նկատմամբ հարգանքի պարտադիր պայմանն է: Ավելորդ հոգեֆիզիոլոգիական լարվածության կանխարգելումը միտված է հեշտացնելու երեխայի մասնակցությունը արդարադատության գործընթացին և նվազեցնելու նրան պատճառվող հոգեբանական վնասը:

Արդարադատության իրականացման գործընթացի շրջանակներում հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաները անվերապահորեն բախվում են բարդ իրավիճակների հետ, որոնք նաև բնութագրվում են որպես կրկնակի զոհայնացում. դա կարող է տեղի ունենալ հանցագործության նկարագրության և համապատասխան փաստերի շարադրման ընթացքում, դատական լուսմների սկզբունն սպասելիս կամ դատարանում վկայություն տալու ժամանակ և այլն:


Երեխաները կարող են շատ չկամորեն հայտնել տեղեկություններ հանցագործության վերաբերյալ և պատմել հանգամանքների մասին, մասնավորապես, սեռական բռնության հետ կապված գործերի շրջանակում, քանի որ նման դեպքերում անդրադարձը մանրամասներին կամ հանգամանքներին առաջ է բերում ուժեղ սթրեսի ապրում: Սթրեսի պատճառը և բնույթը կարող են պայմանավորվել ենթադրյալ հանցագործի կողմից վրեժի հանդեպ վախով, հասարակության կամ ընտանիքի կողմից մերժված լինելու տագնապով, ամոթի զգացմամբ, մտավախությամբ, որ նրան չեն հավատա, ծնողների կողմից բացասական արձագանքի վախով, մեղավորության զգացումով և այլն [9]:



Դատական նիստի սպասման շրջանը, իր հերթին, կարող է երեխայի համար դառնալ լուրջ փորձություն, մանավանդ՝ փոքր տարիքում: Եթե դատական լուսմների հետաձգումը զուգորդվում է ենթադրյալ հանցագործի կողմից հոգեբանական ճնշմամբ կամ հետապնդումներով, սա երեխայի ներդաշնակ զարգացման համար էլ ավելի մեծ ռիսկային գործոն է: Մանավանդ, եթե երեխան ընտանիքի անդամների կողմից է ենթարկվել բռնության, ապա այդ փաստերի ի հայտ բերումը հանգեցնում է լուրջ հետևանքների ներընտանեկան իրավիճակի առումով (ենթադրյալ բռնարարի հետ շարունակվող վնասակար հաղորդակցում, նրա կողմից վկայությունները փոխելուն ուղղված ճնշումներ, հոգեբանական ահաբեկում և այլն), ինչը կարող է կործանիչ ազդեցություն ունենալ երեխայի վրա գործքի միջնդատական վարույթի ողջ շրջանում:


Ինքնին դատարանում վկայություն տալը երեխայի համար առանձին լուրջ սթրես է: Այս իրավիճակում վախերն ու տագնապները կարող են, մասնավորապես, կապված լինել մեղադրյալի և/կամ դահլիճում ներկաների առջև կանգնելու, ինտիմ և ամոթի զգացում առաջացնող մանրամասներ պատմելու անհրաժեշտության, տրվող հարցերը լավ չհասկանալու կամ քննադատության ենթարկվելու վախի հետ [9]:

Միևնույն ժամանակ, դատարանում վկայություն տալը միշտ չէ, որ ունի բացասական հետևանքներ: Պատշաճ նախապատրաստված և երեխայի հանդեպ



բարյացակամ ոճով իրականացվող դատական գործընթացը կարող է իրականում լինել չափազանց օգտակար երեխայի համար՝ ապացուցելու իր խախտված իրավունքի փաստը, հասնելու անարդարության պաշտոնական դատապարտմանը և պաշտապանելու ինքն իրեն: Նշված արդյունքները էական դրական դերակատարում են ունենում երեխայի հոգեբանական վերականգնման և արժեքավոր կյանքի փորձի ձեռքբերման համար:


Դատական գործընթացում երեխայի անվնաս մասնակցության և երկրորդային զոհայնացման կանխման համար առաջնահերթ են գործքի քննության իրականացումը առավելագույն հնարավոր սեղմ ժամկետներում, ինչպես նաև երեխային աջակցող մասնագետի անփոփոխ լինելը գործընթացի ողջ ընթացքում: Սա դարձնում է իրավիճակն առավել կանխատեսելի և ստեղծում է իրավիճակի նկատմամբ վերահսկողության զգացում, ինչը կարևորագույն նպաստավոր հոգեբանական գործոններից է տրավմատիկ իրավիճակներում: Վերահսկողության զգացմանն է նպաստում նաև երեխային նախապես իրազեկելը հետագա գործընթացների բնույթի, տևողության, նրանից պահանջվող գործողությունների և հետևանքների մասին: Նույնիսկ, եթե առկա է մտավախություն, որ նման նախապատրաստումը կարող է խանգարել դատարանում ինքնաբուխ վկայություններ ստնալուն և գուցե իջեցնել գործընթացի իրավաբանական արդյունավետությունը, այնուամենայնիվ, ելնելով երեխայի լավագույն շահերի սկզբունքից, նրան նախապատրաստելը պարտադիր



պայման է:


Անմիջական **առերեսումը**, որպես սթրեսաժին գործոն, հանդիսանում է առավել ռիսկային, քանզի երեխայի տրավմատիկ ապրումների խթանման հավանականությունը էականորեն բարձրանում է: Մասնավորապես, ենթադրյալ մեղադրյալի հետ աչքերի ուղիղ կոնտակտը կարող է երեխային վախեցնող և տրավմատիկ լինել, խթանել սուր հուզական արձագանք կամ հանգեցնել ներփակման: Բացի այդ, անմիջական առերեսումը կարող է խթանել երեխայի մեղքի զգացումը, քանի որ հաճախ ընտանեկան բռնության դեպքերում երեխաները ունենում են ամբիվալենտ (երկարժեք) զգացմունքներ և հույզեր իրենց նկատմամբ բռնացողների հանդեպ: Լինելով որոշակի իմաստով հուզականորեն կախյալ՝ երեխան կարող է դատական սթրեսային իրավիճակում ժամանակավորապես կամ կայուն ձևով վերափոխել իր վերաբերմունքը ենթադրյալ բռնարարին, իսկ ուղիղ առերեսումը այդ դեպքում վերջինիս հանդեպ մեղքի և ամոթի սուր զգացման հիմքեր կարող է ստեղծել: Նման ներքին կոնֆլիկտը միայն խորացնում է երեխայի տրավմատիզացիան և խոչընդոտում է նրա վերականգնմանը [9, 10]:

Առերեսման դեպքում երեխային օգնելու նպատակով կարող են ձեռնարկվել տարբեր միջոցներ: Այդ միջոցները կապված են փաստերի թույլատրելիության հետ և ներառում են երեխայի մինչդատական փուլում արված հայտարարությունների



տեսաձայնագրությունների կիրառումը, երեխայի հարցումը փակ հեռուստահամակարգի օգնությամբ, երբ երեխան չի տեսնում մեղադրյալին և գտնվում է դատարանի դահլիճից դուրս, տեղաշարժվող էկրանի կամ վարագույրի (ոչ թափանցիկ միջնորմի, միակողմանի հայելու) կիրառումը, որը թույլ չի տա երեխային և մեղադրյալին տեսնել միմյանց, դատարանի դահլիճից մեղադրյալի հեռացումը և այլն:

Միջազգային չափորոշիչները պահանջում են, որ երեխան հարցաքննվի բացառապես բարյացակամ ոճով՝ վախեցնելու պոտենցիալ ռիսկի իջեցման նպատակով: Թե՛ քննիչները և թե՛ դատավորները կարևոր դերակատարում ունեն այս դրույթի ապահովման հարցում: Փորձը ցույց է տալիս, որ լավագույն արդյունքների կարելի է հասնել, եթե երեխան հարցաքննվում է զրույցի ձևաչափում՝ ի համեմատություն միակողմանի կամ խաչաձև հարցաքննության ձևաչափերի: Վերջինիս դեպքում անհրաժեշտ է դատավորի կողմից գործընթացի նկատմամբ խստագույն վերահսկողություն երեխային հասցվող հնարավոր վնասի կանխարգելման նկատառումներից: Ավելին, անհրաժեշտ է հաշվի առնել, որ երեխան, մեծահասակի համեմատ, ունի ուշադրության կենտրոնացման ավելի քիչ ունակություն, այդ պատճառով կարևոր է նախատեսել ընդմիջումներ ըստ անհրաժեշտության: Երեխային տրվող հարցերի քանակը կարող է սահմանափակվել՝ նրա ուշադրությունը պահպանելու և առավել որակյալ ցուցմունքներ ստանալու նպատակով: Երեխաներին




հարցաքննության պետք է ենթարկել միայն մեկ անգամ, բացառությամբ հատուկ դեպքերի:

Հանցագործությունից տուժած կամ հացագործության վկա երեխաներին դատավարության ժամանակ հարցեր ուղղվելու դեպքում դատավորները պետք է հստակ հետևեն գործընթացին և վերահսկեն՝ ինչ հարցեր և ինպես են տրվում: Նրանք պետք է կասեցնեն.

- անհամապատասխան հարցերը, որոնք տրվում են երեխային վախեցնելու կամ տրավմատիզացիայի ենթարկելու նպատակով,
- արագ և բազմաթիվ անգամներ տրվող հարցերը, որոնք նպատակ ունեն երեխային շեղելու կամ շփոթեցնելու,
- երեխային իր տարիքում անհասկանալի լեզվով տրվող հարցերը,
- սեռական բռնության դեպքերում տրվող այն հարցերը, որոնք ենթադրում են, որ երեխան համաձայնություն է տվել սեռական գործողություններին, կամ նրա սեռական կյանքին վերաբերվող հարցերը:

Նման մարտավարությունները կարող են հանգեցնել երեխայի վախենալուն և նսեմացմանը, ինչը ոչ միայն կարող է նրան վնասել և սթրես առաջացնել, այլև այնպես ազդել նրա վրա, որ չկարողանա այլևս տալ գործի հետ կապված ճշմարիտ և հստակ տեղեկություններ [10]:






Լրացուցիչ մեդիա-նյութերը
նախատեսված են Ձեզ
հետաքրքրող նյութի մասին
հավելյալ գիտելիքներ
ստանալու համար:

1. Lamb M.E., Malloy L.C., Hershkowitz I., La Rooy D. 2015. Children and the law. In Handbook of Child Psychology and Developmental Science, 7th ed., vol. 3: Socioemotional Processes, edited by R.M. Lerner and M.E. Lamb. Hoboken, NJ: Wiley, էջեր 464–512: <https://onlinelibrary.wiley.com/doi/abs/10.1002/9781118963418.childpsy312>
2. Brown D., Pipe M.-E. Individual Differences in Children's Event Memory Reports and the Narrative Elaboration Technique. Journal of Applied Psychology, 2003, Vol. 88, No. 2, էջ 195–206: <https://pdfs.semanticscholar.org/97fe/7756cf1c5b34169da653a7479fd-969b1c0e4.pdf>
3. Lamb M.E., Brown D.A. Conversational apprentices: Helping children become competent informants about their own experiences. British Journal of Developmental Psychology, 2006/24(1), էջեր 215–234: <https://www.nationalcac.org/wp-content/uploads/2020/02/Conversational-apprentices-Helping-children-become-competent-informants-about-their-own-experiences..pdf>
4. Walker A.G. Handbook on Questioning Children: A Linguistic Perspective, 3d ed. Washington, DC: ABA Center on Children and the Law, 2013. <https://www.americanbar.org/products/inv/book/213559/>
5. Newlin C., L Cordisco Steele L., Chamberlin A., Anderson J., Kenniston J., Russell A., Stewart H., and Vaughan-Eden V. Child Forensic Interviewing: Best Practices, Juvenile Justice Bulletin, Sep. 2015. <https://ojjdp.ojp.gov/sites/g/files/xyckuh176/files/pubs/248749.pdf>

6. Interviewing a child witness or victim: how to get an accurate testimony without further traumatising the child.
<http://phf.org.ge/en/resources/interviewing-a-child-victim-or-witness/>
7. International Evidence-Based Investigative Interviewing of Children (NICHD Protocol). <http://nichdprotocol.com/>
8. Գևորգյան Դ.Է., Խանամիրյան Ի.Ռ. Տուժող կամ վկա երեխայի հոգեվիճակի և նրա հետ հարցազրույցի վարման առանձնահատկությունները (ուղեցույց ոստիկանների համար). Եր., 2020: (տպագրության մեջ)
9. Справочник для специалистов и должностных лиц по вопросам правосудия в делах, связанных с участием детей – жертв и свидетелей преступлений, Серия справочников по вопросам уголовного правосудия, Управление ООН по наркотикам и преступности (UN-ODC), 2010. https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/handbook_on_child_victims_and_witnesse.RUS.pdf
10. Protecting children's rights in criminal justice systems: A training manual and reference point for professionals and policymakers, Penal Reform International, 2013.
<https://cdn.penalreform.org/wp-content/uploads/2013/11/Childrens-rights-training-manual-Final%C2%ADHR1.pdf>



Ազատ պատմության կամ գուցորդությունների մեթոդ

Հարցազրույց վարելու արդյունավետ եղանակ է, երբ հարցազրույցավարը նվազագույն չափով է ներազդում կամ միջամտում պատասխանողի խոսքին, տալիս է հիմնականում բաց հարցեր և ակտիվորեն խթանում է պատմության ազատ շարադրումը: Շնորհիվ տեղեկության պահպանման և վերարտադրության ենթագիտակցական մեխանիզմների յուրահատկությունների՝ այս մեթոդը թույլ է տալիս բնական կերպով ակտիվացնելու երեխայի հիշողությունը առանց նրա վրա ճնշում գործադրելու կամ ուղղորդելու:

Ռապորտ

Ենթադրում է յուրատեսակ կոնտակտի հաստատում, որը ներառում է մարդու կամ խմբի հետ փոխվստահության և փոխհասկացման որոշակի չափ: Ռապորտը մտերիմ և ներդաշնակ հարաբերությունների կառուցումն է, որոնցում մարդիկ հասկանում են միմյանց զգացմունքներն ու մտքերը և արդյունավետորեն հաղորդակցվում են:

Ապրումակցում կամ Էմպաթիա

Մարդու հուզական վիճակի գիտակցումն է և նրա փորձառությունը կիսելու ընդունակությունը. յուրօրինակ միաձուլում դիմացինի անձի և խնդիրների հետ: Այն դիմացինի հոգեվիճակը սեփականի պես զգալու ընդունակությունն է, գիտակցելով, սակայն, որ դրանք դիմացինին են: Էմպաթիկ լսողի համար կարևոր



Ուշադրությամբ ծանոթացե՛ք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձե՛ք դրանց:



Մինչև 15 րոպե


չէ խոսողի ճիշտ կամ սխալ լինելը, քանի որ չեն լինում ճիշտ կամ սխալ զգացմունքներ և ապրումներ: Էմպաթիկ վերաբերմունքը նպաստում է դիմացինի հոգեվիճակի ընկալմանը և, իր հերթին, հեշտացնում է նրա հետ հաղորդակցումը:

Կրկնակի կամ երկրորդային զոհայնացում

Տեղի է ունենում, երբ զոհին պատճառվում է լրացուցիչ վնաս ոչ թե հանցավոր գործողությունների արդյունքում, այլ նրա հետ տարբեր հաստատությունների (ոստիկանություն, դատարան) և այլ անձանց վարվելակերպի ու վերաբերմունքի հետևանքով: Երկրորդային զոհայնացում կարող է տեղի ունենալ, օրինակ, բռնարարի հետ զոհի բազմակի կոնտակտների, առերեսման, կրկնակի հարցաքննությունների, զոհի հետ կոնտակտի գնացող անձանց կողմից ոչ նորմատիվային բառապաշարի կամ աննրբանկատ մեկնաբանությունների օգտագործման հետևանքով:

Ամբիվալենտ զգացմունքներ և հույզեր

Առանձնահատուկ բարդ հուզական վիճակ է, որը բնորոշվում է լարվածությամբ և ներքին կոնֆլիկտով: Վերջիններն առաջանում են, երբ մարդը միաժամանակ ունենում է դրական և բացասական հույզեր կամ զգացմունքներ, միևնույն երևույթին կամ անձին ուղղված երկակի, հակասական հուզական վերաբերմունք (սեր և ատելություն, վախ և համակրանք):



Հարց 1.

Երեխայի հետ հարցազրույցի գլխավոր նպատակն է.

- ա. Իջեցնել երեխայի սթրեսի աստիճանը և բացահայտել ամբողջական ու հավաստի տեղեկություններ:
- բ. Համոզել երեխային պատմել դեպքի վերաբերյալ իր իմացածը և բացահայտել հնարավոր անճշտությունները:
- գ. Օգնել երեխային հաղթահարել իր հոգետրավման և վերականգնել հոգեկան առողջությունը:
- դ. Ճիշտ են բոլոր պատասխանները:

Հարց 2.

Երեխան, ով հարցազրույցի ընթացքում զգում և դիմադրում է իրեն տրվող ուղղորդող հարցերին.

- ա. Անվստահելի է, քանի որ ամենայն հավանականությամբ ուզում է ինչ-որ բան թաքցնել:
- բ. Կամակոր և բարդ վկա/տուժող է, ում հետ պետք է «լեզու» գտնել:
- գ. Վստահելի վկա է:
- դ. Խելացի է, բայց ունի վարքային կամ հուզական խնդիրներ:

Հարց 3.

Նախադպրոցական տարիքի երեխաների (3-6 տարեկան) մտածողությունը.



Ընտրել ճիշտ տարբերակը:
Ընտրությունը կատարվում է համապատասխան հարցերի համար նախատեսված պատասխանների ճիշտ տարբերակի տառը նշելու միջոցով:



Մինչև 40 րոպե

- ա. Վերացական է և անորոշ:
- բ. Ոչ կոնկրետ է և ցրված:
- գ. Կոնկրետ է, կենտրոնացված և եսակենտրոն:
- դ. Թերի է զարգացած:

Հարց 4.


Բարոյական պատկերացումները («ճշտի» և «սխալի» հասկացումները) սկսում են ակտիվորեն ձևավորվել.

- ա. Երեխայի ծնված օրվանից մինչև նախադպրոցական տարիք:
- բ. Վաղ դեռահասության շրջանում (12-14 տարեկանում):
- գ. Ուշ դեռահասության և պատանեկության շրջանում:
- դ. Միջին մանկության շրջանում (7-12 տարեկանում):

Հարց 5.

Դեռահասության շրջանում, որպես կանոն, երեխային բնորոշ չէ.

- ա. Հուզական անհավասարակշռությունը և անկայունությունը:
- բ. Ինքնահաստատման վառ արտահայտված պահանջմունքը:
- գ. Անինքնուրույնությունը և ձգտումը կախյալ հարաբերությունների:
- դ. Ըմբոստությունը ընտանեկան կամ հասարակական նորմերի հանդեպ:



Հարց 6.

Երեխայի հարցազրույցի վայրը.

- ա. Պետք է լինի հանգիստ, չեզոք ու ապահով:
- բ. Պետք է լինի գունագեղ և ուրախ, շատ խաղալիքներով:
- գ. Չպետք է առանձնահատուկ ուստիկանության մյուս սենյակներից:
- դ. Առանձնապես կարևոր դեր չի խաղում հարցազրույցի իրականացման համար:

Հարց 7.


Ապրումնակցումը կամ Էմպաթիան.

- ա. Դիմացիոն կարեկցելու և խորհուրդով օգնելու ունակությունն է:
- բ. Մարդու ապրումների հետ նույնականանալու և սեփականի պես զգալու ընդունակությունն է:
- գ. Մարդու հուզական վիճակը հասկանալու և նրա փորձառությունը կիսելու ընդունակությունն է:
- դ. Բոլոր պատասխանները ճիշտ են:

Հարց 8.

Բաց հարցերը.

- ա. Հանգեցնում են առավել ճշգրիտ վերհիշմանը:
- բ. Կիրառելի են միայն հարցազրույցի սկզբում, որից հետո տրվում են կոնկրետացնող հարցեր:
- գ. Արդյունավետ չեն չհամագործակցող, փակ երեխաների հետ:
- դ. Ժամանակատար են և հաճախ քիչ ինֆորմատիվ:



Չափ 9.


Ուղղորդող հարցերը.

- ա. Չափազանց արդյունավետ են, քանի որ թույլ չեն տալիս երեխային շեղվել երկրորդական թեմաների վրա:
- բ. Վնասակար են, քանի որ արտահայտում են հարցազրույցավարի իշխանությունը և վերահսկողությունը երեխայի հանդեպ:
- գ. Արդյունավետ են, քանի որ հանգեցնում են ցանկալի պատասխանների և կրճատում են հարցազրույցի տևողությունը:
- դ. Կիրառելի են, երբ երեխան հուզված է և շփոթված:

Չափ 10.

Հարցազրույցի ընթացքում չի կարելի.

- ա. Տրված տեղեկությունների դիմաց գովել կամ «պարգևատրել» երեխային (օրինակ՝ քաղցրավենիքով):
- բ. Երկար դադարներ վերցնել, հաճախակի լռել:
- գ. Նպաստել երեխայի դժվար հույզերի և ապրումների մասին խոսելուն:
- դ. Ճիշտ են բոլոր պատասխանները:



ԱՆՉԱՓԱՅԱՍ ՏՈՒԺՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՅԵՐԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԶԵՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Այս դասի (մոտիվացնող
ներածական տեսանյութ+դասի
տեքստ+բառարան+ինքնաստուգիչ հարցեր)
յուրացման համար անհրաժեշտ է
240 րոպե / 4 ժամ:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի
կայքի հեռաուսուցման բաժնում):

Անչափահաս տուժողների տարիքային, հոգեֆիզիոլոգիական, սոցիալիզացիոնական և այլ առանձնահատկություններով պայմանավորված խոցելիությունը պահանջում է նրանց իրավունքների իրականացումն ապահովող լրացուցիչ երաշխիքներ, որոնց շարքում էական նշանակություն ունի երեխայի շահերի ներկայացումն օրինական ներկայացուցչի միջոցով և նրա մասնակցությամբ իրականացնող քննչական և դատավարական գործողություններին մասնավարժի, օրինական ներկայացուցչի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հոգեբան մասնագետի մասնակցությունը:

Տուժողի օրինական ներկայացուցչի մասնակցությունը քրեական վարույթին պայմանավորված է այն իրողությամբ, որ նա քրեական վարույթում պաշտպանում է տուժողի իրավունքներն ու օրինական շահերը՝ իհարկե, իրականացնելով նաև իր ծնողական իրավունքներն ու պարտականությունները, կամ այն իրավունքներն ու պարտականությունները, որոնք առաջանում են «խնամակալ» - «խնամարկյալ» (լայն առումով) հարաբերություններից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի օրինական ներկայացուցչության ինստիտուտի



Մինչև 10 րոպե


Ուշադրությամբ
կարդացե՛ք
տեքստը (օգտվելով
բառարանից) և
այն յուրացնելուց
հետո միայն անցե՛ք
ինքնաստուգիչ
հարցերին:



Մինչև 175 րոպե

տարբեր կողմերը կանոնակարգող նորմերի համալիր վերլուծությունից պարզ է դառնում, որ եթե դրանում հստակ սահմանված է այն անձանց շրջանակը, որոնք կարող են լինել տուժողի օրինական ներկայացուցիչ (տուժողի ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմինը (ՀՀ քր. դատ. օր-ի 76-րդ հոդված, մաս 1-ին)), ապա որոշակի հակասական կարգավորումներ է սահմանված այն հարցում, թե ո՞ր տուժողներն իրավունք ունեն ունենալու օրինական ներկայացուցիչ: Բանն այն է, որ ըստ ՀՀ. քր. դատ. օր-ի 59-րդ հոդվածի 4-րդ մասի և 76-րդ հոդվածի 1-ին մասի՝ օրինական ներկայացուցիչ ունենալու իրավունք ունեն **անչափահաս և անգործունակ տուժողը**¹, մինչդեռ ՀՀ.


¹ Նկատենք, որ ՀՀ. քր. դատ. օր-ի 59-րդ հոդվածի 4-րդ մասի (Անչափահաս կամ անգործունակ տուժողի իրավունքները սույն օրենսգրքով սահմանված կարգով նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը) և ՀՀ. քր. դատ. օր-ի 76-րդ հոդվածի 1-ին մասի (Տուժողի, ... օրինական ներկայացուցիչներ են համարվում նրանց ... որոնք քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում են դատավարության համապատասխան անչափահաս կամ անգործունակ մասնակցի օրինական շահերը) ձևակերպումներն այնպիսին են, որ, կարծես, օրենսդիրն անչափահաս և անգործունակ հասկացություններն օգտագործում է որպես հոմանիշներ, այսինքն՝ նույն սուբյեկտին բնորոշելով ինչպես անչափահաս, այնպես էլ անգործունակ: Նման հետևությունների համար հիմք է հանդիսանում նաև այն, որ օրենսդիրն օրինական ներկայացուցչի իրավունքներն ու պարտականությունները սահմանող ՀՀ քր. դատ. օր-ի 77-րդ հոդվածում խոսում է անգործունակ և սահմանափակ գործունակի մասին, սակայն անչափահասի մասին որևէ նշում չի անում, որպիսի հանգամանքը հիմք է տալիս ենթադրելու, որ օրենսդիրը դրանով «անչափահաս հասկացությունը կլանում է «անգործունակ» հասկացության մեջ կամ «անչափահաս» հասկացության փոխարեն օգտագործում միայն «անգործունակ» հասկացությունը: Այս հարցերին առավել մանրամասն կանոնադաշտանք տեքստում, այստեղ ուղղակի նշենք, որ նման մեկնաբանությունը մեզ համար անընդունելի է՝ ելնելով նրանից, որ այն հակասում է ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, որում տարբերակված են հիշյալ հասկացությունները, այնպես էլ ՀՀ քր. դատ. օր-ի 207-րդ և 342-րդ հոդվածներին, որոնցում խոսվում է անչափահաս տուժողի, այլ ոչ թե՝ անգործունակի հարցաքննության մասին, ընդ որում՝ հարցաքննությանը հենց անչափահասի օրինական ներկայացուցչի մասնակցության մասին: Ինչևէ, եթե ընդունենք, որ օրենսդիրը վերոնշյալ հոդվածներում «անգործունակ» և «անչափահաս» հասկացությունները նույնական լինելու իմաստով է օգտագործում, ապա, մեր խորին համոզմամբ, օրենքը պետք է փոխել և հստակ տարանջատել այդ երկու հասկացությունները, քանի որ դրանք տարբեր սուբյեկտներ են: Այստեղ չենք անդրադառնում այն հարցին, որ անգործունակի հարցաքննության կարգ առհասարակ սահմանված չէ, ինչը սկզբունքային խնդիր է անգործունակ անձանց իրավունքների և օրինական շահերի ապահովման տեսանկյունից:



քր. դատ. օր.-ի 77-րդ հոդվածի 4-րդ մասից հետևում է, որ օրինական ներկայացուցիչ ունենալու իրավունք ունի նաև **«սահմանափակ գործունակ» տուժողը**:

Այս հակասական կարգավորման հստակեցումն ունի կարևոր գործնական նշանակություն, որովհետև ըստ ՀՀ. քր. դատ. օր.-ի 59-րդ հոդվածի 4-րդ մասի՝ անչափահաս կամ անգործունակ տուժողի օրինական ներկայացուցիչը տուժողի փոխարեն իրականացնում է նրա իրավունքները (այս հարցի իրավաչափությանը կանդրադառնանք առանձին), իսկ սահմանափակ գործունակ տուժողի օրինական ներկայացուցչի մասով նման կարգավորումներ առկա չեն, ընդ որում, ինչն առավել կարևոր է, խնդիր կա հստակեցնելու, թե ով է սահմանափակ գործունակ տուժողը և ինչպես է հարաբերակցվում անչափահաս և անգործունակ տուժողի հետ:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված օրինական ներկայացուցչության ինստիտուտը կանոնակարգվել է բլանկետային նորմերի միջոցով, ուստի այդ հակասությանն անդրադառնալու և վերլուծելու համար պետք է դիմել այլ իրավական ակտերի կանոնակարգումներին, որպիսին սույն դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն է, որի 24-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ և 32-րդ հոդվածների համադրումից պարզ է դառնում, որ քաղաքացու գործունակությունը որոշվում է տարբեր չափանիշներ հիմք ընդունելով, իսկ տարիքը դրանցից միայն մեկն է: Ընդ որում, քաղաքացիական օրենսգրքում օգտագործվող «գործունակություն» սեռային հասկացությունը ներառում է ինչպես տարիքային չափանիշով «անգործունակներին» և «սահմանափակ




գործունակներին», այնպես էլ այլ հանգամանքներով² պայմանավորված «անգործունակներին» և «սահմանափակ գործունակներին», ինչը նշանակում է, որ «անչափահասը» և «անգործունակ» ու «սահմանափակ գործունակը» քաղաքացիաիրավական առումով իրավունքների տարբեր ծավալով օժտված սուբյեկտներ են (թեև մի շարք դեպքերում նաև նույնանում են):

Այսպես, ըստ տարիքային չափանիշի՝ քաղաքացու գործունակությունը բաժանված է երկու հիմնական խմբի, մասնավորապես՝ մինչև 14 տարեկանների (որը բաժանվում է երկու խմբի՝ մինչև 6 և դրանից բարձր՝ մինչև 14 տարեկաններին) գործունակություն (հոդված 29) և 14-18 տարեկանների գործունակություն (հոդված 30), ընդ որում՝ եթե առաջին խմբի պարագայում պայմանականորեն կարող ենք խոսել տարիքային անգործունակների մասին (որոշ վերապահումներով), ապա երկրորդ խմբի պարագայում խոսքը տարիքային սահմանափակ գործունակների մասին է: Ըստ այլ չափանիշների՝ անգործունակությունը կարող է լինել հետևանք այնպիսի հոգեկան հիվանդությամբ տառապելու, որի պատճառով անձը չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք (ՀՀ քաղ. օր-ի 31-րդ հոդված), իսկ սահմանափակ գործունակությունը՝

² ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 31-32-րդ հոդվածներում սահմանված են նաև քաղաքացու գործունակության սահմանափակման կամ գործունակությունից զրկելու կամ անգործունակ ճանաչելու հիմքերը, որոնք ներառում են հոգեկան այնպիսի հիվանդությամբ տառապելը, որի հետևանքով նա չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, ինչպես նաև ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելը և այլն:

հետևանք ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման և այլնի (ՀՀ քաղ. օր-ի 32-րդ հոդված): Այսինքն, տարիքից զատ, օրենքը սահմանել է նաև անգործունակ և սահմանափակ գործունակ սուբյեկտների այլ հատկանիշներ, որոնք լրացուցիչ հիմք են անձին անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու: Հետևաբար, այս չափանիշները պետք է հիմք ընդունել, երբ քննարկվում են «անչափահաս», «անգործունակ» և «սահմանափակ գործունակ» սուբյեկտների և նրանց օրինական ներկայացուցիչների կարգավիճակի և իրավունքների ու պարտականությունների ծավալի հարցերը: Այստեղից էլ հետևում է, որ «անչափահաս տուժող» հասկացությունը կարող է ներառել նաև «անգործունակ» և «սահմանափակ գործունակ» տուժողներին՝ տարիքային հատկանիշով պայմանավորված, մինչդեռ «անգործունակ» և «սահմանափակ գործունակ» տուժող հասկացությունը ոչ միշտ է, որ համընկնում է անչափահաս տուժողի հետ: Ուստի, յուրաքանչյուր դեպքում տուժող և տուժողի օրինական ներկայացուցիչ ճանաչելիս և դրանից բխող իրավունքների ու պարտականությունների ծավալի հարցերը քննարկելիս և լուծելիս պետք է հիմք ընդունել այն, թե ինչ չափանիշով է անձը ճանաչվել տուժողի օրինական ներկայացուցիչ՝ տուժողի տարիքի, անգործունակության, թե սահմանափակ գործունակության: Միաժամանակ հարկ է արձանագրել, որ եթե օրենքում հատուկ վերապահում չի արվում, ապա անգործունակ և սահմանափակ գործունակ տուժող ասելով պետք է հասկանալ նաև անչափահաս տուժողին, համապատասխանաբար՝ մինչև 14 տարեկաններին դիտարկելով անգործունակ,



իսկ 14-18 տարեկաններին՝ սահմանափակ գործունակ³: Այս հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրինական ներկայացուցչի իրավունքներն ու պարտականությունները սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածում թվարկված ընդհանուր իրավունքների ու պարտականությունների ծավալից օրենսդիրը հատուկ առանձնացրել է անգործունակ և սահմանափակ գործունակ տուժողի օրինական ներկայացուցչի իրավունքներն ու պարտականություններն առանձնահատկությունները (մասեր 2-րդ, 3-րդ և 4-րդ) և որևէ նշում չի արել **անչափահասի օրինական ներկայացուցչի իրավունքների առանձնահատկությունների** մասին, ինչը, ըստ էության, նշանակում է, որ օրենսդիրն այս դեպքում տուժողի տարիքային չափանիշը ներառել է անգործունակության և սահմանափակ գործունակության մեջ և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այն անհատականացնելու հարցը թողել իրավասու մարմինների լուծմանը: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ **սահմանափակ գործունակ տուժողի օրինական ներկայացուցչին** իրավունք ունի՝ ... 2) իմանալ իր կողմից ներկայացվող սահմանափակ գործունակ մասնակցի մտադրության մասին՝

³Նկատենք, որ քրեական դատավարության տեսության մեջ ևս ընդունված է այն մոտեցումը, որ մինչև 14 տարեկան անչափահասները համարվում են անգործունակ, իսկ 14-ից մինչև 18 տարեկանները՝ սահմանափակ գործունակ // տե՛ս Танцерева М. В. Потерпевший и его функция в уголовном процессе России. Дисс. ... канд. юрид. наук. Томск, 1999, էջ 58 // <http://www.dslib.net/kriminal-process/poterpevshij-i-ego-funkcija-v-ugolovnom-processe-rossii.html>:

ա. հետ վերցնելու նրա նկատմամբ քրեական օրենսգրքով
չթույլատրված արարք կատարելու վերաբերյալ բերված
բողոքը.

բ. հաշտվելու ... կասկածյալի, մեղադրյալի հետ,

գ. հրաժարվելու իր ներկայացրած քաղաքացիական
հայցից ...,

դ. հետ վերցնելու նրա շահերի պաշտպանության համար
ներկայացված բողոքը,

3. համաձայնվելու կամ չհամաձայնվելու իր կողմից
ներկայացվող անձի՝ սույն հոդվածի երրորդ
մասի 2-րդ կետում թվարկված որոշումներին,
(մաս 3-րդ), **մինչդեռ անգործունակ տուժողի
օրինական ներկայացուցիչն իրավունք չունի
դատավարությանը՝ իր կողմից ներկայացվող
սահմանափակ գործունակ⁴ մասնակցի անունից՝**

1. հետ վերցնել նրա նկատմամբ քրեական օրենսգրքով
չթույլատրված արարք կատարելու վերաբերյալ բերված
բողոքը,

...


3. հաշտվել ... կասկածյալի, մեղադրյալի հետ.

4. ... հրաժարվել քաղաքացիական հայցվորի ներկայացրած
հայցից,

⁴Կարծում ենք այստեղ վրիպում է թույլ տրվել, երբ նշվել է
«սահմանափակ գործունակ» հասկացությունը, քանի որ հոդվածի
այս մասում ներկայացվում է դատավարության «անգործունակ»
մասնակցի օրինական ներկայացուցչի իրավունքների
առանձնահատկությունները: Այս հակասությանն անդրադարձել
է ՀՀ սահմանադրական դատարանը 2016 թվականի դեկտեմբերի
20-ի թիվ ՍԴՈ-1333 որոշամ մեջ և արձանագրել հետևյալը.
«հաշվի առնելով օրենսգրքի ընդհանուր տրամաբանությունը,
Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 77-րդ
հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերությունում «սահմանափակ
գործունակ մասնակցի անունից» բառակապակցությունը
վերաբերում է անգործունակ մասնակցին» (կետ 5): <http://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1333.pdf>

5. հետ վերցնել դատավարությանը՝ իր կողմից ներկայացվող մասնակցի ներկայացրած բողոքը (մաս 4-րդ), ընդ որում՝ անգործունակ տուժողի օրինական ներկայացուցիչը քրեական գործով վարույթի ընթացքում իրականացնում է նրա իրավունքները, բացի այն իրավունքներից, որոնք անբաժանելի են նրա անձից (մաս 2-րդ):


Օրինական ներկայացուցչի դատավարական իրավունքների ու պարտականությունների տարբերակումը և ներկայացվող անձի հետ փոխհարաբերությունների առանձնահատկությունները, կապված նրանից, թե անգործունակի, թե սահմանափակ գործունակի շահերն է ներկայացնում, իրավաչափ են, քանի որ նույն կերպ տարբերակված են անգործունակի և սահմանափակ գործունակի և նրանց ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի քաղաքացիաիրավական իրավունքների ծավալը և փոխհարաբերությունները: Այլ կերպ ասած՝ ելնելով նրանից, որ օրինական ներկայացուցչության ինստիտուտը քրեական դատավարությունում կանոնակարգվել է բլանկետային նորմերի միջոցով, ուստի իրավաչափ է, որ քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրվել են այնպիսի կանոններ, որոնք համահունչ են քաղաքացիական օրենսդրությանը. եթե քաղաքացիական օրենսգրքում օրենսդիրը սահմանում է անգործունակի կամ սահմանափակ գործունակի և նրա օրինական ներկայացուցչի քաղաքացիաիրավական հարաբերություններում իրավունքների ծավալի և նրանց փոխհարաբերությունների առանձնահատկությունները,



ապա քրեական դատավարությունում՝ դատավարական իրավունքների ծավալի և փոխհարաբերությունների առանձնահատկությունները:

Այսպիսով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ և 32-րդ հոդվածների կարգավորումները, կարող ենք արձանագրել, որ եթե տուժողը մինչև 14 տարեկան է, ապա կիրառելի են անգործունակ տուժողի և նրա օրինական ներկայացուցչի իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարցերը կարգավորող դրույթները, իսկ եթե 14-18 տարեկան է, ապա սահմանափակ գործունակ տուժողի և նրա օրինական ներկայացուցչի իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարցերը կարգավորող դրույթները: Այստեղից էլ հետևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածում ամրագրված այն կանոնը, որ օրինական ներկայացուցիչն է իրականացնում անչափահաս կամ անգործունակ տուժողի փոխարեն նրա իրավունքները, պետք է հասկանալ մինչև 14 տարեկան անչափահասներին, քանի որ 14-ից մինչև 18 տարեկան անչափահասները համարվում են սահմանափակ գործունակ և նրանց փոխարեն օրինական ներկայացուցիչը չի կարող իրականացնել նրանց իրավունքները:

Այդուհանդերձ պետք է արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, նման կանոններ սահմանելով, հանգեցրել է մի վիճակի, որ փաստացի մինչև 14 տարեկան տուժողին դարձրել է իրավագուրկ կամ երաշխավորել է ձևական, այլ ոչ թե




իրական քրեադատավարական իրավունքներ, որպիսի հանգամանքը հակասում է ինչպես միջազգային չափանիշներին, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով երեխայի համար երաշխավորված իրավունքներին ու ազատություններին, որոնց արդեն իսկ անդրադարձել ենք⁵: Հետևաբար՝ անկախ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ և 77-րդ հոդվածի կանոնակարգումներից՝ երեխաներին պետք է հնարավորություն տրվի գործնականում իրացնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տուժող սուբյեկտի իրավունքները: Այսինքն՝ օրինական ներկայացուցչի մասնակցությունը վարույթին չպետք է բացառի անչափահաս տուժողի օրենքով երաշխավորված իրավունքներից անձամբ օգտվելու հնարավորությունը:

Օրինական ներկայացուցչի իրավական վիճակը բնութագրող կարևոր հատկանիշ պետք է դիտել նրա պարտադիր մասնակցությունը վարույթին, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքից միանշանակ չի բխում այդ հատկանիշի առկայությունը, քանի որ 77-րդ հոդվածում ամրագրված է, որ օրինական ներկայացուցիչն իրավունք ունի մասնակցել իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին քրեական հետապնդման մարմնի առաջարկով, այլ ոչ թե պարտադիր կարգով (մաս 1-ին, կետ 4-րդ): Հաշվի առնելով օրինական ներկայացուցչի մասնակցության գաղափարախոսությունը, որը պայմանավորված է երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությամբ և երաշխավորված

⁵Տե՛ս «Երեխաների իրավունքների ապահովման հարցերը քրեական գործ հարուցելու փուլում» դասը:

Ե միջազգային փաստաթղթերով՝ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է անչափահասի մասնակցությամբ իրականացնող ցանկացած քննչական և դատավարական գործողության կատարմանն ապահովել օրինական ներկայացուցչի մասնակցությունը. հայեցողությունը պետք է բացառել, իսկ օրինական ներկայացուցչի համար սահմանել պարտականություն մասնակցելու համապատասխան քննչական և դատավարական գործողությանը, եթե բացակայում են նրա մասնակցությունը բացառող հանգամանքները: Այլ կերպ ասած՝ օրինական ներկայացուցչի իրավունքին պետք է համապատասխանի վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը և «նրա առաջարկությամբ» եզրույթը պետք է մեկնաբանել որպես պարտականություն, այլ ոչ թե՝ հայեցողություն:

Այս մոտեցումը բխում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի Հ.Աթոյանի վերաբերյալ թիվ ԵԱԴԴ/0014/11/09 որոշման մեջ ձևավորած այն դիրքորոշումից, որ «Երեխաների իրավունքների մասին» Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իր սեփական հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Ընդ որում, երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն: Կոնվենցիայի նշված հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ այդ նպատակով երեխային, մասնավորապես, հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական




քննության ժամանակ ունկնդրվել թե անմիջականորեն, թե իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով, ազգային օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով: Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանում դատաքննությանն անհրաժեշտ էր ապահովել երեխաների և վերջիններիս ներկայացուցչի մասնակցությունը⁶:

Թեև այս դեպքում խոսքը վերաբերում է անչափահաս մեղադրյալին, սակայն նկատի ունենալով, որ Կոնվենցիան երեխա ասելով նկատի ունի նաև տուժողին, ուստի այս մոտեցումը համապատասխանաբար կիրառելի է նաև անչափահաս տուժողի օրինական ներկայացուցչի նկատմամբ:

Գործնական կարևոր նշանակություն ունի այն հարցի քննարկումը, թե արդյո՞ք երկու ծնողներն էլ պետք է մասնակցեն վարույթին, թե՞ նրանցից միայն մեկը: Ըստ ՀՀ քր. դատ. օր-ի 76-րդ հոդվածի՝ «Չետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանն իրենց որոշմամբ թույլատրում են քրեական գործով վարույթին որպես համապատասխան տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչներ մասնակցել նրանցից յուրաքանչյուր ծնողներից, որդեգրողներից, խնամակալներից կամ հոգաբարձուներից մեկին: Ընդ որում, որպես օրինական ներկայացուցիչ պետք է թույլատրվի մասնակցել այն ծնողին, որդեգրողին, խնամակալին կամ հոգաբարձուին,

⁶Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Հայարփի Միշայի Աթոյանի վերաբերյալ թիվ ԵԱԴԴ/0014/11/09 որոշումը:




որի թեկնածությունն իր համաձայնության առկայության դեպքում պաշտպանում են մյուս բոլոր օրինական ներկայացուցիչները: Հակառակ դեպքում քրեական գործով վարույթին որպես օրինական ներկայացուցիչ մասնակցող անձին ընտրում է դատախազը կամ դատարանը»:

Ինչպես տեսնում ենք, որպես օրինական ներկայացուցիչ կարող է մասնակցել վերը թվարկված անձանցից միայն մեկը, որի թեկնածությունը պաշտպանում են մյուսները, իսկ հակառակ դեպքում այն որոշում է վարույթն իրականացնող մարմինը:

Կարծում ենք՝ կարևոր է այն հարցի պարզաբանումը, թե արդյո՞ք անչափահասի համաձայնությունն անհրաժեշտ է օրինական ներկայացուցչի մասնակցության համար:


Տեսության մեջ մոտեցում կա, որ քրեադատավարական օրենսդրությամբ նման համաձայնություն չի նախատեսվում, հետևաբար նման համաձայնության անհրաժեշտություն չկա: Հեղինակի գնահատմամբ օրենսդրական նման կարագավորումը հիմնվում է այն գաղափարախոսության վրա, որ ծնողները պաշտպանում են իրենց երեխաների իրավունքներն ու շահերը ցանկացած հարաբերություններում, ինչպես նաև այն, որ անչափահասը չի կարող հրաժարվել օրինական ներկայացուցչի մասնակցությունից, որովհետև վերջինս վարույթին մասնակցում է ոչ թե անչափահասի համաձայնությամբ, այլ օրենքի ուժով: Թեև ընդունելի



Է, որ քրեադատավարական օրենսդրությունը չի պահանջում երեխայի համաձայնությունը օրինական ներկայացուցիչ ներգրավելու հարցում, սակայն վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է գործնականում գնահատել, թե որքանով է բխում երեխայի լավագույն շահերից այն իրավիճակը, երբ երեխան չի ցանկանում, որպեսզի կոնկրետ անձը, որպես օրինական ներկայացուցիչ, ներկայացնի իր շահերը, քանի որ այն հանդիսանում է միջազգային իրավական ակտերով և մասնավորապես՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով երաշխավորված սկզբունք, որի տեսանկյունից ցանկացած հարց լուծելիս պետք է ելնել երեխայի լավագույն շահերից և որոշում կայացնել հոգուտ երեխայի: Մասնավորապես, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված է, որ *«Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:*

Ցանկացած հարցում երեխայի լավագույն շահերին առաջնություն տալու և բոլոր հանգամանքներում հոգուտ երեխայի որոշում կայացնելու մասին նշում է նաև ՀՀ սահմանադրական դատարանը 2016թ. դեկտեմբերի 20-ի թիվ ՍԴՈ-1333 որոշման մեջ, երբ մեկնաբանում է ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով

⁷ՏԵՍ Աղաբաբյան Ն., Անչափահասների գործերով վարույթի իրավական և տեսական հիմքերի զարգացումը ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթում, Երևան, 2019թ., Էջեր 148-149:




երաշխավորված երեխայի իրավունքները և դրանց կիրառության ապահովման հարցերը ՀՀ քրեական դատավարությունում:

Գործող քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված չէ նաև անչափահաս տուժողի և նրա օրինական ներկայացուցչի արտահայտած մոտեցումներում հակասություն առաջանալու դեպքում որևէ լուծման հնարավորություն, մինչդեռ միջազգային չափանիշները պահանջում են, որպեսզի այդ հարցը ևս լուծվի հոգուտ երեխայի: Մասնավորապես, Երեխայի իրավունքների կոմիտեն 2013 թվականի թիվ 14 մեկնաբանություններում նշում է, որ եթե երեխան ցանկանում է կարծիք հայտնել, և երբ այդ իրավունքը իրացվում է ներկայացուցչի միջոցով, ապա վերջինը պարտավոր է ճշգրտությամբ փոխանցել երեխայի կարծիքը: Այն դեպքերում, երբ երեխայի կարծիքը հակասության մեջ է մտնում ներկայացուցչի կարծիքին, անհրաժեշտ է ընթացակարգ մշակել, որը հնարավորություն կտա երեխային անձամբ դիմելու համապատասխան մարմնին իրեն այլ ներկայացուցիչ տրամադրելու համար, եթե դա անհրաժեշտ է (կետ 90)⁸:

Նկատի ունենալով, որ օրինական ներկայացուցչի մասնակցությունը նպատակ ունի անչափահասին օգնելու և ոչ թե՝ վնասելու, ուստի օրենսդիրը 2020 թվականի հունիսի 3-ին ընդունված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-300-Ն օրենքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացրել է «Օրինական ներկայացուցչին գործով վարույթից հեռացնելը» վերտառությամբ 93.1-

⁸Տե՛ս <https://www.refworld.org.ru/docid/528b2c874.html>:



րդ հոդվածը, որում թվարկել է այն դեպքերը, երբ մի օրինական ներկայացուցիչը կարող է հեռացվել վարույթից և ներգրավվել այլ օրինական ներկայացուցիչ կամ օրինական ներկայացուցիչ նշանակել խնամակալության կամ հոգաբարձության մարմին:

Այսպես, ըստ քննարկվող 93.1-րդ հոդվածի՝ «1. Անչափահաս կամ անգործունակ մասնակցի խնամակալը կամ հոգաբարձուն չի կարող մասնակցել վարույթին, եթե՝

1) գտնվում է ազգակցական կապի կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ այն դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի աշխատակցի հետ, որը մասնակցել կամ օրինական ներկայացուցչի ներգրավման պահին մասնակցում է վարույթին,


2) գտնվում է ազգակցական կապի կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ կասկածյալի կամ մեղադրյալի կամ նրանց մերձավոր ազգականների հետ,

3) օրենքով կամ դատական ակտով չի կարող լինել օրինական ներկայացուցիչ,

4) իր վարքագծով ակնհայտորեն վնասում է ներկայացվողի շահերին, իր վարքագծով խոչընդոտել է ներկայացվողի իրավունքների իրականացմանը կամ հանգեցրել է դրանց խախտմանը,

5) նրա վերաբերյալ առկա են ներկայացվողի շահերի դեմ ուղղված ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր:

2. Անչափահաս կամ անգործունակ մասնակցի ծնողը, որդեգրողը չեն կարող մասնակցել վարույթին սույն հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով նախատեսված դեպքերում»:



թվականից, սակայն այն կարող է կիրառելի լինել նաև ներկայումս՝ հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. դեկտեմբերի 20-ի թիվ ՍԴՈ-1333 որոշման մեջ ձևավորած իրավական դիրքորոշումները:

Այս համատեքստում հարկ է նաև փաստել, որ ընտանեկան բռնության դեպքերում, ըստ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» 2017թ. դեկտեմբերի 13-ի ՀՀ օրենքի, օրենսդիրը սահմանել է նաև այնպիսի միջոցների կիրառման հնարավորություն, ինչպիսիք են անհետաձգելի միջամտության որոշումը⁹ (հոդված 7) և պաշտպանության որոշումը¹⁰ (հոդված

⁹Ըստ այդ հոդվածի 3-րդ մասի՝ անհետաձգելի միջամտության որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները.

1) հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը. 2) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում բռնության ենթարկվածին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր. 3) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց), որն ընտանիքում բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին: Այս սահմանափակումը կիրառելիս որոշմամբ սահմանվում է հեռավորության կոնկրետ չափը. 4) մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալն ի պահ վերցնել բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքը: Այս սահմանափակումը կիրառելիս որոշման մասին իրազեկելու պահին ընտանիքում բռնություն գործադրած անձի տիրապետման տակ զենք լինելու դեպքում նա այն անհապաղ հանձնում է որոշումը կայացրած ոստիկանության ծառայողին. 5) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց հետ:

8), եթե ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց չի

⁹Ըստ այդ հոդվածի 5-րդ մասի՝ պաշտպանական որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները. 1) հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության վայրից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը: Այս սահմանափակման ժամկետը սահմանելիս դատարանը հաշվի է առնում ընտանիքում բռնության ենթարկված անձին և նրա խնամքի տակ եղող անձանց ապաստարան տեղափոխելու հնարավորությունը և նպատակահարմարությունը, ընտանիքում բռնություն գործադրած անձի համար բնակության այլ վայրերի մատչելիությունը. 2) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր. 3) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց), որն ընտանիքում բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին: Այս սահմանափակումը կիրառելիս որոշմամբ սահմանվում է հեռավորության կոնկրետ չափը. 4) մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը բռնություն գործադրած անձի տիրապետման տակ եղած գենքն ի պահ հանձնել ոստիկանություն. 5) ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա պարտականություն դնել՝ ընտանիքում բռնության ենթարկվածի հետ կիսելու իրենց համատեղ անչափահաս կամ չափահաս անաշխատունակ երեխաների, ինչպես նաև իրենց համատեղ խնամքի տակ եղող անձանց խնամքի ծախսերը՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով սահմանված ալիմենտային պարտավորությունների համար վճարման ենթակա գումարի չափով: Դատարանը կարող է ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա պարտականություն դնել հոգալու ընտանիքում բռնության ենթարկվածի այլ անհրաժեշտ ծախսերը, որոնք ծագել են գործադրված բռնության պատճառով. 6) անհրաժեշտության դեպքում արգելել երեխաների հետ տեսակցությունները. 7) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց հետ. 8) ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա դնել պարտականություն անցնելու ռեաբիլիտացիոն ծրագիր:

ընտրվել, նրա նկատմամբ բժշկական հաստատությունում հարկադրաբար պահելու մասին որոշում չի կայացվել, և վարույթն իրականացնող մարմինը չի կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելու, բնակարանը և այլ գույքը պահպանելու, պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելու, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելու կամ արտաքինը փոխելու պաշտպանության միջոցները (հոդված 9):

Այսինքն՝ օրենսդիրը հնարավոր է համարում ինչպես օրինական ներկայացուցչին վարույթից հեռացնելը, այնպես էլ ձեռնարկել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» 2017թ. դեկտեմբերի 13-ի ՀՀ օրենքով սահմանված միջոցներ (մասնավորապես, կայացնել անհետաձգելի միջամտության որոշում կամ պաշտպանության որոշում): Նկատենք, որ նման միջոցներ ձեռնարկելու պահանջ է սահմանում նաև «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» 2007թ. հոկտեմբերի 25-ի ԵԽ-ի կոնվենցիան, որի 14-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է, որ *եթե երեխայի ծնողները կամ նրա խնամքը իրականացնող անձինք ներգրավված են նրա նկատմամբ սեռական շահագործման կամ սեռական բռնության մեջ, 11-րդ հոդվածի 1-ին կետի¹¹ կիրառման նպատակով իրականացվող ընթացակարգերը պետք է ներառեն՝ ենթադրյալ իրավախախտի մեկուսացման*


¹¹Հոդված 11 – Սկզբունքները «1. Յուրաքանչյուր Կողմ պետք է հաստատի արդյունավետ սոցիալական ծրագրեր և ստեղծի բազմաբնույթ կառույցներ՝ տուժածներին, նրանց մերձավոր ազգականներին, ինչպես նաև տուժածների խնամատար անձանց անհրաժեշտ օգնություն տրամադրելու նպատակով»:

հնարավորությունը, տուժածին իր ընտանեկան միջավայրից մեկուսացման հնարավորությունը: Նման մեկուսացման պայմանները և տևողությունը պետք է որոշվեն ելնելով երեխայի ամենակարևոր շահերից:

Անդրադառնալով մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությանը **մանկավարժի մասնակցության հարցերին**՝ պետք է նկատել, որ այն բավարար չափով իրավական կարգավորման չի ենթարկվել: Մասնավորապես, օրենքում որևէ կանոն սահմանված չէ առ այն, թե հարցաքննությանը մասնակցելիս մանկավարժն ի՞նչ դատավարական իրավունքներ կամ պարտականություններ ունի, արդյոք կարո՞ղ է հարցեր տալ անչափահասին, կամ հարցաքննության արձանագրության մեջ առարկություններ ներկայացնել: Օրենքով կարգավորված չէ նաև մանկավարժին ներկայացվող պահանջները, նրան բացարկ հայտնելու հիմքերը և այլն: Սա այն դեպքն է, երբ օրենքը պարզապես նախատեսում է քննչական գործողությանն անորոշ կարգավիճակ ունեցող անձի մասնակցություն, սակայն չի նախատեսում որևէ իրավունք կամ պարտականություն, ինչը բացասական ազդեցություն է թողնում իրավակիրառ պրակտիկայի վրա:

Գործնականում կարևոր նշանակություն ունի նաև քննչական գործողություններին մասնակցելու համար ծանոթ կամ անծանոթ մանկավարժ հրավիրելու, ինչպես նաև գործի նկատմամբ վերջինիս շահագրգռվածության վերաբերյալ հարցի պարզումը:

Որոշ մասնագետների կարծիքով, անհրաժեշտ է հրավիրել երեխային ծանոթ մանկավարժի, իսկ մյուսների կարծիքով՝ հակառակը: Որոշ հարցեր է առաջացնում նաև այն, թե միևնու՞յն մանկավարժը



պետք է մասնակցի ամբողջ վարույթին, թե՛ կարող է փոխվել և այլ մանկավարժ ներգրավվել: Օրինակ, ՀՀ քննչական կոմիտեի 2015թ. 1-ին կիսամյակում սեռական բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննության ընթացքում անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանության վիճակի ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ անչափահասների հարցաքննությանը մանկավարժի մասնակցությունը շատ դեպքերում քննիչների կողմից ապահովվել է ձևականորեն. միևնույն գործով յուրաքանչյուր անգամ անչափահասին լրացուցիչ հարցաքննելիս մասնակցել է նոր մանկավարժ, որը տեղյակ չի եղել գործի հանգամանքների, անչափահաս տուժողի տված նախորդ ցուցմունքների մասին, ինչով էլ պայմանավորված է և բացատրվում է մանկավարժների պասիվությունը քննչական գործողության ընթացքում¹²:

Քննարկվող հարցի կապակցությամբ պետք է նշել, որ օրենսդրությամբ ամրագրված չէ, թե որ մանկավարժն է հրավիրվում քննչական գործողություններին մասնակցելու: Այդ հարցն ունի բացառապես տակտիկական նշանակություն, ուստի, այս կամ այն մանկավարժին ընտրում է քննիչը՝ կախված գործի կոնկրետ հանգամանքներից, երեխայի անձից, նրա հոգեբանական վիճակից և այլ գործոններից: Հարցաքննությանը մանկավարժի մասնակցությունը հավաստվում է անչափահասի ցուցմունքը մանկավարժի

¹²Տե՛ս Ղամբարյան Ա., Թումասյան Դ. Երեխաների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները (ձեռնարկ քննիչների համար): Երևան, 2015, էջեր 107-115:


ստորագրությամբ հաստատելով և գործի նյութերին վերջինիս մանկավարժական կրթությունը հաստատող փաստաթուղթի պատճենը կցելով: Մանկավարժի մասնակցությունն ապահովելու օրենսդրական պահանջի նկատմամբ անտարբեր վերաբերմունքի վառ օրինակ է, երբ վարույթն իրականացնող մարմինը ՀՀ քր. օր.-ի 142-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործով անչափահասի հարցաքննությանը որպես մանկավարժ է հրավիրվել միջնակարգ ուսումնական հաստատությունում դասավանդող, մասնագիտությամբ ինժեներ-մեխանիկի: Մեկ այլ օրինակ. վարույթն իրականացնող մարմինը ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործով անչափահաս տուժողի հարցաքննությանը որպես մանկավարժ ներգրավել է դպրոցի զինղեկին¹³:

Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ վարույթին որպես մանկավարժ կամ որպես ինքնուրույն մասնակից ներգրավվում է հոգեբան: Այսպես, Շիրակի մարզային քննչական վարչության վարույթում քննվող քրեական գործով մասնակցել է հոգեբան, ինչը պայմանավորված է եղել նրանով, որ տուժողն ունեցել է հոգեկան խնդիրներ: Մեկ այլ դեպքում ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական գործով տուժողի հարցաքննությանը մասնակցել է կրթահամալիրի հոգեբանը՝ մանկավարժի կարգավիճակով¹⁴:

Անչափահաս տուժողների մասնակցությամբ


¹³Նույն տեղում:

¹⁴Նույն տեղում:




կատարվող քննչական գործողություններին հոգեբանի մասնակցության վերաբերյալ հատուկ նորմ նախատեսված չէ: Մանկավարժի մասնակցությունն ինքնին չի բացառում անչափահասի մասնակցությամբ կատարվող գործողություններին նաև հոգեբանի մասնակցությունը: ՀՀ քննչական կոմիտեում ձևավորված պրակտիկայի համաձայն՝ հոգեբանների ներգրավման դեպքերն էապես ավելացել են՝ պայմանավորված քննիչների և հասարակական կազմակերպությունների ու անհատ հոգեբանների միջև սերտ համագործակցությամբ:

Հոգեբանը քրեական վարույթին կարող է հրավիրվել ՀՀ քր. դատ. օր.-ի 84-րդ հոդվածի կարգով՝ որպես մասնագետ: Անդրադառնալով մասնագետի դատավարական կարգավիճակին, ՀՀ վճռաբեկ դատարանը 2016թ. նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ3/0226/01/14 որոշման մեջ դիրքորոշում է ձևավորել առ այն, որ մասնագետը դասվում է քրեադատավարական այն սուբյեկտների շարքին, ով գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի որևէ բնագավառում իր ունեցած հատուկ գիտելիքներով և հմտություններով օժանդակում է գործի համար նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքների բացահայտմանը, որոնք չեն կարող պարզվել առանց համապատասխան մասնագիտություն, որակավորում կամ փորձ ունեցող անձանց ներգրավվածության և համապատասխան գիտելիքների: Մասնագետի հիմնական պարտականությունն իր մասնագիտական հմտություններն ու գիտելիքներն օգտագործելով առարկաներ և փաստաթղթեր հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու, տեխնիկական միջոցներ կիրառելու, փորձագետին




հարցեր առաջադրելու գործում քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարող անձին օգնություն ցույց տալն է: Վերոնշյալով պայմանավորված, մասնագետի իրավունքների շրջանակը սահմանափակվում է վարույթն իրականացնող մարմնի կամ քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարող անձի թույլտվությամբ գործի նյութերին ծանոթանալով և ներկաներին հարցեր տալով, ինչպես նաև առարկաներ և փաստաթղթեր հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու, տեխնիկական միջոցներ կիրառելու, փորձագետին հարցեր առաջադրելու հետ կապված հանգամանքների վրա ներկաների ուշադրությունը հրավիրելով: Մասնագետն իր մասնագիտական հմտություններով ու գիտելիքներով աջակցում է վարույթն իրականացնող մարմնին՝ քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելիս: Մասնագետը հետազոտություններ չի իրականացնում և եզրակացություն չի տալիս, այլ որևէ բնագավառում իր ունեցած հմտություններով և գիտելիքներով աջակցում է վարույթն իրականացնող մարմնին՝ այս կամ այն քննչական կամ այլ դատավարական գործողությունը կատարելիս:

Դատավարությանը ներգրավվող հոգեբանին պետք է դիտարկել ոչ թե որպես մանկավարժ (այսինքն՝ անձ, ով զբաղվում է ուսումնական և մանկավարժական գործունեությամբ), այլ որպես քրեական դատավարությանը ներգրավվող, մարդու վարքագիծը և նրա հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրող մասնագետ, ով կարող է օժանդակել վարույթն իրականացնող մարմնին՝ երեխային ինչպես



այս կամ այն քննչական կամ դատավարական գործողությանը մասնակցելուն նախապատրաստելիս, այնպես էլ փորձաքննությունն նշանակելու դեպքում փորձագետներին առաջադրվելիք հարցերի շրջանակը հստակեցնելիս, ինչպես նաև տրամադրել ցանկացած այլ մասնագիտական աջակցություն: Այլ կերպ ասած, հոգեբանը, նախապես ուսումնասիրելով երեխայի անձը (քրեական գործի նյութերով, ինչպես նաև օրինական ներկայացուցչի, մանկավարժի հետ անմիջական շփման ճանապարհով), կարող է աջակցություն ցուցաբերել վարույթն իրականացնող անձին՝ մարտավարական հնարքների ընտրության գործում՝ շփման ենթադրյալ ձևի, երեխայի մոտ ճիշտը պատմելու ցանկության առաջացման վրա: Բացի այդ, հոգեբանը կարող է գնահատական տալ երեխայի ընթացիկ հոգեվիճակի և ըստ դրա՝ դատավարական գործընթացներում նրա ներգրավվածության անվնաս չափի և եղանակների վերաբերյալ՝ դրանով իսկ աջակցելով երեխայի հոգեկան առողջության և լավագույն շահերի պաշտպանությանը:

Պետք է նկատել, որ գործնականում հանդիպում են դեպքեր, երբ վարույթն իրականացնող մարմինն երեխայի մասնակցությամբ կատարվելիք գործողությանը ներգրավում է հոգեբանի: Օրինակ, դատարանում քննվող քրեական գործերից մեկով, որը վերաբերում էր 4-5 տարեկան երեխաների նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելու դեպքին, դատարանը դիմել էր ՀՀ արդարադատության նախարարության «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ին և խնդրել էր նշանակել հոգեբանի, որպեսզի վերջինս



դատական քննության փուլում օգնի երեխայի հարցաքննությանը, որին ի պատասխան դատարանին էր ներկայացվել հոգեբան-ուսուցիչ: Թեև դատախազը և տուժողի ներկայացուցիչ փաստաթանը բացարկ էին հայտնել հոգեբանին, առարկություններ էին ներկայացրել դատարանի գործողությունների դեմ այն պատճառաբանությամբ, որ օրենքով նախատեսված չէ նման կարգ, սակայն դատարանը երեխայի հարցաքննությունն իրականացրել էր հոգեբանի մասնակցությամբ¹⁵:


Քրեական դատավարությանը մասնակցելու համար ցանկալի է հրավիրել մանկական կամ զարգացման հոգեբանության մեջ մասնագիտացված, հոգեբանության բնագավառում փորձառու մասնագետի: Երեխաների նկատմամբ կատարված սեռական հանցագործությունների գործերով վերջիններս բախվում են սթրեսի, շոկային իրավիճակների, որոնք առաջանում են կատարվածի բացասական գործոնների ազդեցությունից: Նշված վիճակն իր հերթին հանգեցնում է երեխաների հուզական անկայունության, այդ իսկ պատճառով երեխայի նկատմամբ սեռական բռնության կիրառման վերաբերյալ գործերով անհրաժեշտ է կլինիկական (բժշկական) հոգեբանության բնագավառի մասնագետի մասնակցություն: Ենթադրվում է, որ քննչական գործողություններին հենց այդպիսի հոգեբանի մասնակցությունը կարող է օգտակար լինել

¹⁵Մեկ այլ դեպքում տուժողի օրինական ներկայացուցիչը դատարանին միջնորդություն էր ներկայացրել, որպեսզի երեխայի հարցաքննությունն իրականացվի փորձառու հոգեբանի մասնակցությամբ, ընդ որում՝ ոչ դատական նիստերի դահլիճում, ամբաստանյալի և պաշտպանի բացակայությամբ:

մի շարք գործնական խնդիրների լուծման հարցում, այդ թվում՝ երեխայի հետ կոնտակտի հաստատման հարցում քննիչին օժանդակություն ցուցաբերելը (մանկավարժի և ներկայացուցիչների հետ համատեղ)՝ քննչական գործողությունների կատարման տակտիկայի որոշման և ցուցմունք տալու հարցում երեխայի վերաբերմունքի մշակման համար, ինչպես նաև հուզական ծանրաբեռնվածության հաղթահարման գործում աջակցության ցուցաբերում՝ պայմանավորված տարբեր բացասական գործոններով:


Այս առումով ուշագրավ է, որ երեխաների նկատմամբ անառակաբարո գործողությունների վերաբերյալ քրեական գործով դատարանը դիմել էր մարզպետին և խնդրել դատական նիստին ապահովել մանկահասակ երեխաների հետ աշխատանքի փորձ ունեցող մանկավարժի և հոգեբանի կամ մանկավարժ-հոգեբանի մասնակցությունը, որպեսզի աջակցեն տուժող երեխաների հարցաքննությանը: Ի պատասխան դատարանի խնդրանքի, մարզպետի կողմից երեխայի հարցաքննությանը մասնակցելու համար ներկայացվել էին մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնագետներ՝ մանկավարժը և հոգեբանը, որոնք ոչ միայն մասնակցել էին հարցաքննությանը, այլև մեկնաբանություններ էին ներկայացրել երեխայի տված ցուցմունքների վերաբերյալ և այլն:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հոգեբանի մասնակցությամբ քննչական կամ



դատավարական գործողություններ կատարելու դրական փորձ առկա է, որը պարզապես անհրաժեշտ է լայնորեն կիրառել և ձևավորել միջազգային չափանիշներին համապատասխանող իրավակիրառ պրակտիկա, որը կլուծի նաև երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և ապահովման հարցը: Դա հնարավորություն կտա ապահովելու ՄԱԿ-ի ուղենիշներում սահմանված այն պահանջի կատարումը, որ բոլոր գործողությունները պետք է կատարվեն երեխաների հանդեպ զգայուն կերպով՝ երեխայի հատուկ կարիքներին համապատասխանող միջավայրում՝ ելնելով նրա ունակություններից, տարիքից, մտավոր հասունությունից և զարգացման աստիճանից (կետ 14), որ տուժող և վկա երեխաները հարցաքննվեն երեխայի հանդեպ զգայուն եղանակով՝ դատավորների կողմից հսկողության հնարավորությամբ՝ նպաստելով ցուցմունքներ տալու գործընթացին և կրճատելով ահաբեկման հնարավորությունը, օրինակ՝ ցուցմունք տալիս օգնելու կամ հոգեբան փորձագետներ նշանակելու միջոցով (31 կետ, «գ» ենթակետ):

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հոգեբանն ու մանկավարժը հիմնականում մասնակցում են երեխայի հարցաքննությանը, որովհետև օրենքում ուղղակի սահմանված է երեխայի հարցաքննությանը մանկավարժի մասնակցությունը: Մինչդեռ գործնականում երեխաների մասնակցությամբ կատարվում են նաև քննչական և դատական այլ գործողություններ, որոնց մանկավարժի կամ հոգեբանի մասնակցությունը նույնպես ցանկալի է,



օրինակ, քննչական փորձարարության, ճանաչման
ներկայացնելու, քննման ժամանակ և այլն:

Այս առաջարկությունն ուղղակի բխում է ՄԱԿ-ի
ուղեցույցներից, որոնց համաձայն՝

1) երեխային հետագա զրկանքներ պատճառելուց
խուսապելու համար հարցաքննությունները,
խուզարկությունները և քննչական այլ գործողությունները
պետք է կատարվեն վերապատրաստում անցած
մասնագետների կողմից, ովքեր դա կատարում են զգայուն,
հարգալից և հիմնավոր կերպով (կետ 13),


2) տուժող և վկա երեխաներն օժանդակությունը
պետք է ստանան օժանդակող այնպիսի անձանցից,
ինչպիսիք են տուժող/վկա երեխաների հարցերով
մասնագետները, ովքեր աշխատանքն սկսում են
նախնական զեկույցից և շարունակում մինչև այն պահը,
երբ այդ ծառայություններն այլևս անհրաժեշտ չեն (կետ
24):

3) մասնագետները պետք է մշակեն և
իրականացնեն այնպիսի միջոցառումներ, որոնք
ուղղված են ... մինչդատական և դատական փուլերում
հաղորդակցությունը և ընկալումը բարելավելուն: Այդ
միջոցները կարող են ներառել հետևյալը.

ա) ներգրավել տուժող և վկա երեխաների
հարցերով մասնագետների՝ երեխայի հատուկ կարիքները
բարելավելու նպատակով.

(...) գ) անհրաժեշտության դեպքում խնամակալ
նշանակել՝ երեխայի իրավական շահերը պաշտպանելու
նպատակով (կետ 25):


Ըստ ԵԽՆԿ «Տուժողի դերը քրեական



իրավունքում և դատավարությունում» թիվ (85)11 հանձնարարականի 8-րդ կետի՝ վարույթի բոլոր փուլերում տուժողին պետք է այնպես հարցման ենթարկել, որպեսզի պատշաճ ձևով հաշվի առնվեն նրա անձնական վիճակը, իրավունքներն ու արժանապատվությունը: Երբ դա հնարավոր է, ապա երեխաներին և հոգեկան հիվանդներին պետք է հարցման ենթարկել ծնողների, խնամակալների կամ նրանց օգնող այլ անձանց ներկայությամբ:


Նկատենք, որ հոգեբանին քրեական վարույթին մասնակից դարձնելու խնդիրը լուծվեց 2020 թվականի հունիսի 3-ին ընդունված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-300-Ն ՀՀ օրենքով, որով փոփոխություններ ու լրացումներ են կատարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածում և անչափահաս վկայի կամ տուժողի հարցաքննությանը նախատեսվել է որակավորված հոգեբանի մասնակցությունը, որի արդյունքում ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը համապատասխանեցվեց միջազգային չափանիշներին: Այդուհանդերձ, պետք է փաստենք, որ հոգեբանի մասնակցությունը նախատեսվել է կրկին հարցաքննությանը մասնակցելու, իսկ առանձին դեպքերում նաև հարցաքննություն իրականացնելու համար, մինչդեռ, ինչպես նշեցինք, հոգեբանի մասնակցությունը պետք է ապահովել անչափահասի մասնակցությամբ իրականացվող բոլոր քննչական և դատավարական գործողությունների կատարմանը:

Մինչև քրեական գործ հարուցելը քրեական վարույթին անչափահասի օրինական ներկայացուցչի, մանկավարժի և հոգեբանի մասնակցության հետ կապված հարցերին արդեն անդրադարձել ենք նախորդ դասերում: Այստեղ պարզապես փաստենք, որ դա չպետք



Է պայմանավորել քրեական դատավարության փուլային կառուցվածքով, և քրեական դատավարության բոլոր փուլերում և յուրաքանչյուր գործողություն կատարելիս պետք է ապահովել օրինական ներկայացուցչի, մանկավարժի և հոգեբանի մասնակցությունը, եթե դա բխում է երեխայի լավագույն շահերից: Այն չի խախտում դատավարության որևէ մասնակցի իրավունքներն ու օրինական շահերը, չի կարող հանգեցնել որևէ ապացույցի անթույլատրելիության և այլ բացասական իրավական հետևանքների, հակառակը՝ չմասնակցելը կարող է հանգեցնել և՛ ապացույցի անթույլատրելիության, և՛ երեխայի իրավունքների ու օրինական շահերի խախտմանը:

Անչափահասի իրավունքների և օրինական շահերի ապահովման կարևոր և սկզբունքային երաշխիք է ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված այն իմպերատիվ պահանջը, որ դատավարության յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իմանալու իր իրավունքները, պարտականությունները, իր ընտրած դիրքորոշման իրավական հետևանքները, իր մասնակցությամբ կատարվող դատավարական գործողությունների նշանակությունը և դրան համապատասխան՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ պարզաբանելու դատավարության մասնակցի իրավունքները, պարտականությունները և ապահովելու դրանց փաստացի իրացման հնարավորությունը: Այս հարցերը կանոնակարգված են, մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր.-ի 101-րդ, 188.1-րդ և 198-րդ հոդվածներով, ինչպես նաև դատական քննության նախապատրաստական մասը կանոնակարգող 42-րդ գլխում ընդգրկված նորմերով: Միաժամանակ, ՀՀ քր. դատ. օր.-ի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանում որևէ առանձնահատուկ




կարգավորում նախատեսված չէ անչափահաս տուժողների իրավունքների, պարտականությունների, իրենց ընտրած դիրքորոշման իրավական հետևանքների, ինչպես նաև իրենց մասնակցությամբ կատարվող դատավարական գործողությունների նշանակությունը պարզաբանելու առումով: Նույն կանոններն են կիրառվում դատավարության թե՛ չափահաս, թե՛ անչափահաս մասնակիցների նկատմամբ, բացառություն են կազմում զուտ տարիքով պայմանավորված առանձին իրավունքներ ու պարտականություններ, որոնք քննարկվող հարցի համատեքստում էական նշանակություն չունեն:

Անդրադառնալով անչափահաս տուժողի իրավունքների ու օրինական շահերի ապահովման ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված կառուցակարգերին, պետք է նկատել, որ դրանք առերևույթ չեն համապատասխանում միջազգային չափանիշներին, որոնք, ելնելով երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից, սահմանում են մի շարք լրացուցիչ իրավունքներ և երաշխիքներ քրեական գործի ընթացքի մասին տեղեկացված լինելու վերաբերյալ, և դրան համապատասխան՝ վարույթն իրականացնող մարմինների համար սահմանում են լրացուցիչ պարտականություններ երեխաների իրավունքների ապահովման համար:

Մասնավորապես, ՄԱԿ-ի ուղենիշներում սահմանված է, որ «(...) 19. Տուժող և վկա երեխաները, նրանց ծնողները կամ խնամակալներն ու օրինական ներկայացուցիչները, արդարադատության գործընթացին իրենց առաջին շփումից սկսած և ողջ գործընթացի ժամանակ պետք է անհապաղ և պատշաճ կերպով հնարավորինս տեղեկացվեն հետևյալի մասին.

(ա) առողջապահական, հոգեբանական,



սոցիալական և համապատասխան այլ ծառայությունների, ինչպես նաև նման ծառայություններից օգտվելու հնարավորության, անհրաժեշտության դեպքում՝ իրավական կամ այլ խորհրդատվության կամ ներկայացուցչության, փոխհատուցման և արտակարգ դեպքերում՝ ֆինանսական աջակցության հնարավորությունների հետ մեկտեղ,

(բ) չափահասների և անչափահասների համար նախատեսված քրեական արդարադատության գործընթացի իրականացման ընթացակարգերի, ներառյալ՝ տուժող և վկա երեխաների դերակատարության և նշանակալիության, ցուցմունք տալու տևողության և եղանակի, ինչպես նաև քննության և դատավարության ընթացքում «հարցաքննության» իրականացման ձևերի վերաբերյալ,

(գ) բողոք ներկայացնելիս և քննության ու դատական ընթացակարգերի ժամանակ երեխային աջակցելու առկա մեխանիզմները,

(դ) լսումների և համապատասխան այլ միջոցառումների առանձին վայրերը և ժամանակը,

(ե) պաշտպանության միջոցների առկայությունը,

(զ) տուժող և վկա երեխաներին առնչվող որոշումների վերանայման՝ գոյություն ունեցող մեխանիզմները,

(է) երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և Հանցագործությունների և լիազորությունների չարաշահումից տուժած անձանց գործերով արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագրով տուժող և վկա երեխաների համար

սահմանված իրավունքները:

20. Բացի այդ, տուժողը և վկաները, նրանց ծնողները կամ խնամակալները և օրինական ներկայացուցիչները պետք է հնարավորինս անհապաղ և պատշաճ կերպով տեղեկացվեն հետևյալի մասին.


(ա) տվյալ գործի ընթացքը և բնույթը, ներառյալ՝ մեղադրյալի ձերբակալությունը, կալանավորումը և նման այլ կարգավիճակը և այդ կարգավիճակի ցանկացած սպասելի փոփոխություն, մեղադրող կողմի որոշումները և համապատասխան հետդատական զարգացումները և գործի ելքը,

(բ) արդարադատության գործընթացում իրավախախտի կամ պետության կողմից վնասի հարթման առկա հնարավորությունները՝ այլընտրանքային քաղաքացիական վարույթի կամ այլ ընթացակարգերի միջոցով:

21. Մասնագետները պետք է գործադրեն բոլոր ջանքերը՝ տուժող և վկա երեխաներին արդարադատության գործընթացում իրենց ներգրավման վերաբերյալ տեսակետներն ու մտահոգություններ հայտնելու հնարավորությունն ընձեռելու ուղղությամբ, այդ թվում՝ հետևյալ միջոցներով.

(ա) ապահովելով, որ տուժող, անհրաժեշտության դեպքում՝ նաև վկա երեխաներին խորհրդատվություն տրամադրվի վերը՝ 19-րդ կետում նշված հարցերի շուրջ.

(բ) ապահովելով, որ տուժող և վկա երեխաները հնարավորություն ունենան ազատորեն և սեփական ոճով արտահայտելու իրենց տեսակետներն ու մտահոգություններն արդարադատության գործընթացում



իրենց ներգրավման, մեղադրյալի կողմից իրենց սպառնացող վտանգի, ինչպես նաև ցուցմունք տալու նախընտրելի եղանակի և այն զգացողությունների մասին, որ նրանք ունեն գործընթացի հետ կապված եզրակացությունների առնչությամբ,

(գ) պատշաճ ուշադրության առնել երեխայի տեսակետներն ու մտահոգությունները, իսկ եթե նրանք ի վիճակի չեն ընթացք տալ դրան՝ պատճառները բացատրել երեխային: (...):

(...)»:

«Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» 2007թ. հոկտեմբերի 25-ի ԵԽ-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածը (Պաշտպանության ընդհանուր միջոցառումները) ևս պարտավորեցնում է պետություններին ձեռնարկել մի շարք միջոցառումներ երեխաների իրավունքների մասին իրազեկելու, համապատասխան ծառայություններ ստեղծելու և միջոցներ ձեռնարկելու այդ իրավունքների ապահովման համար: Մասնավորապես, հիշյալ հոդվածում ամրագրված է հետևյալը. «1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ պաշտպանելու համար տուժածների իրավունքներն ու շահերը, ներառյալ որպես վկաների՝ նրանց հատուկ կարիքների բավարարումը հետաքննության և քրեական դատավարության բոլոր փուլերում, մասնավորապես հետևյալ միջոցներով՝

ա) տեղեկացնելով նրանց իրենց իրավունքների և այն ծառայությունների մասին, որոնցից նրանք կարող են օգտվել և, եթե նրանք չեն հրաժարվում ստանալ նման տեղեկատվություն, այն միջոցառումների մասին, որ

ձեռնարկվել են նրանց բողոքների կամ մեղադրանքների հիման վրա, ինչպես նաև հետաքննության և դատավարության ընթացքի մասին, դրանցում նրանց դերի և իրենց գործերի արդյունքների մասին,


բ) անհրաժեշտության դեպքում ապահովելով, որպեսզի այն դեպքերում, երբ տուժածներին և նրանց ընտանիքներին կարող է վտանգ սպառնալ, նրանք տեղեկացվեն այն մասին, որ դատական հետապնդման ենթարկված կամ դատապարտված անձը ժամանակավորապես կամ վերջնականապես ազատ է արձակվել,

գ) նրանց իրավունք տալով ներքին օրենսդրության ընթացակարգային կանոններին համաձայն, ցուցմունքներ տալ, տրամադրել ապացույցներ և ընտրել ինչպես ներկայացնել իրենց կարծիքները, կարիքները և մտահոգությունները՝ ուղղակիորեն թե միջնորդի միջոցով,

դ) տրամադրելով նրանց համապատասխան օժանդակ ծառայություններ, որպեսզի նրանց իրավունքներն ու շահերը պատշաճ կերպով ներկայացված և հաշվի առնված լինեն,

ե) պաշտպանելով նրանց անձնական կյանքի, ինքնության և տեսքի գաղտնիությունը և ձեռնարկելով միջոցներ ներքին օրենսդրությանը համապատասխան թույլ չտալու համար ցանկացած տեղեկատվության հրապարակայնացումը, որը կարող է հանգեցնել նրանց ինքնության բացահայտմանը,

զ) ապահովելով նրանց, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների և նրանց կողմից հանդես եկած վկաների անվտանգությունը ահաբեկումից, վրեժխնդրությունից և կրկնակի անգամ տուժելուց,



Է) կանխելով շփումը տուժածների և հանցագործություն կատարած անձանց միջև դատարանի դահլիճում և իրավապահ մարմինների շենքերի տարածքում, եթե միայն իրավասու մարմինները այլ որոշում չեն կայացրել՝ ելնելով երեխայի շահերից կամ եթե նման շփումն անհրաժեշտ է հետաքննության կամ դատավարության համար:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որպեսզի իրավասու մարմինների հետ առաջին իսկ շփումից սկսած տուժածներին հասու լինի համապատասխան դատական և վարչական գործընթացների մասին տեղեկատվությունը:

3. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որպեսզի տուժածները քրեական հետաքննության կողմի կարգավիճակ ստանալու դեպքում ստանան իրավաբանական օժանդակություն, որը համապատասխան պայմանների դեպքում պետք է լինի անվճար:

4. Յուրաքանչյուր Կողմ պետք է դատական իշխանություններին հնարավորություն ընձեռի նշանակել տուժածին հատուկ ներկայացուցիչ այն դեպքում, երբ ներքին օրենսդրության համաձայն նա կարող է ստանալ քրեական հետաքննության կողմերից մեկի կարգավիճակ, իսկ ծնողական պատասխանատվություն կրող անձինք չկարողանան նման հետաքննություններում ներկայացնել երեխային՝ նրանց և երեխայի շահերի միջև հակասության առկայության պատճառով:


5. Յուրաքանչյուր Կողմ պետք է հնարավորություն ընձեռի խմբերին, հիմնադրամներին, միություններին կամ կառավարական և ոչ-կառավարական

կազմակերպություններին օրենսդրական կամ այլ միջոցներով, ներքին օրենսդրությամբ նախատեսված պայմանների համաձայն օգնություն ցուցաբերել և/կամ աջակցել տուժածներին նրանց համաձայնության դեպքում՝ սույն Կոնվենցիայի համաձայն հանցագործությունների քրեական հետաքննությունների ընթացքում:

6. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որ սույն հոդվածի դրույթների համաձայն տուժածներին տրամադրվող տեղեկատվությունը հաղորդվի նրանց տարիքին և հասունացման մակարդակին համապատասխան կերպով և նրանց համար հասկանալի լեզվով»:


Այսպիսով, միջազգային իրավական չափանիշների տեսանկյունից երեխաների իրավունքներն ու օրինական շահերը պետք է պաշտպանվեն ու երաշխավորվեն առաջին իսկ պահից, երբ նրանք ներգրավվում են քրեական վարույթին՝ անկախ ներպետական օրենսդրությամբ ամրագրված դատավարության փուլային կառուցվածքի և դրանով պայմանավորված՝ դրանում սահմանված կանոնների: Ընդ որում, ինչն առավել կարևոր է, երեխաների իրավունքների ծավալը և դրանք ապահովելու երաշխիքներն ավելի ընդարձակ են, քան ներպետական օրենսդրությամբ է ամրագրված:

Եթե անչափահաս տուժողի իրավունքների ծավալի համատեքստում խնդիրն օրենսդրական է, ապա այդ իրավունքների ապահովման հարցը գործնական է, իսկ դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործնականում խնդրահարույց է երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով նրա իրավունքները, պարտականությունները, գործի




ընթացքը նրանց պարզաբանելու պրակտիկան: Օրինակ, ՀՀ քր. օր.-ի 140-րդ հոդվածով քննվող քրեական գործով՝ տուժողի օրինական ներկայացուցիչը դիմում է քննիչին և հայտնում, որ որպես տուժողի օրինական ներկայացուցիչ տուժող կողմը չի հրավիրվել և չի ծանոթացել որևէ որոշման և որևէ տեղեկություններ չունեն գործով ընթացող նախաքննությունից: Նույն քրեական գործով տուժող կողմը գործի ընթացքի վերաբերյալ երկրորդ անգամ է քննիչին դիմում ներկայացրել՝ խնդրելով տեղեկացնել, թե գործն ինչ փուլում է գտնվում, քանի որ 9 ամիս է քննվում է և իրենք տեղեկություն չունեն դրա մասին:

Վերոնշյալ դիմումները մնում են անպատասխան, որից հետո տուժող կողմը դիմում է ներկայացնում հսկողություն իրականացնող դատախազին՝ գործի քննությունը ձգձգելու և դրա ընթացքի վերաբերյալ իրենց տեղեկատվություն չտրամադրելու մասին: Դատախազի կողմից ստանալով ցուցում դիմումին օրենքով սահմանված կարգով ընթացք տալու մասին՝ քննիչը գրավոր պատասխան է ներկայացնում տուժողի ներկայացուցչին, որում, մասնավորապես, նշված է հետևյալը. **«Դիմումում նշված հարցադրումների վերաբերյալ հայտնվում է, որ վարույթն իրականացնող մարմինը տուժողին կամ տուժողի ներկայացուցչին կատարվող կամ կատարվելիք քննչական գործողությունների ժամկետների և ընթացքի վերաբերյալ հայտնելու պարտավորություն չունի...: Նախաքննական մարմինը չի անդրադառնում այն պնդմանը, որ որևէ քննչական գործողություն չի կատարվում, քանի որ ինչպես նշված է դիմումում, տուժող կողմը որևէ տեղեկություն չունի նախաքննության ընթացքի մասին և այդ պայմաններում, այն պնդումը, որ որևէ քննչական գործողություն**



չի կատարվում, առնվազն անհիմն է»: Քննիչը միաժամանակ տեղեկացնում է, որ տուժող կողմի իրավունքները պարզաբանվել են, և եթե անհրաժեշտ է՝ մեկ անգամ ևս կպարզաբանի:

Հիմք ընդունելով ՄԱԿ-ի ուղենիշներն ընդունելու անհրաժեշտությունը, նպատակը և, մասնավորապես այն, որ Տնտեսական և սոցիալական խորհուրդը հորդորում է անդամ երկրներին՝ քրեական դատավարությունում ներգրավված տուժող և վկա երեխաներին առնչվող օրենսդրություն, ընթացակարգեր, քաղաքականություն մշակելիս և պրակտիկա ձևավորելիս հիմք ընդունել ուղենիշները՝ գտնում ենք, որ վերևում նշված կանոնները պետք է փաստացի կիրառություն ունենան և դրանով իսկ նպաստեն միջազգային չափանիշներին համապատասխան քննչական և դատական պրակտիկա ձևավորելուն, ինչը նշանակում է, որ տուժող երեխան և նրա օրինական ներկայացուցիչը պետք է տեղեկացվեն գործի ընթացքի մասին՝ անկախ նրանից, թե ինչ ընթացակարգեր են սահմանված ներպետական օրենսդրությամբ:






Լրացուցիչ մեդիա-նյութերը
նախատեսված են Ձեզ
հետաքրքրող նյութի մասին
հավելյալ գիտելիքներ
ստանալու համար:

1. ՀՀ վճռաբեկ դատարանի Արտեմ Արմենի
Հարույթունյանի 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ
ՍԴ3/0226/01/14 որոշումը // www.datalex.am
2. ՀՀ վճռաբեկ դատարանի Հայարփի Միշայի Աթոյանի
վերաբերյալ 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ
ԵԱԴԴ/0014/11/09 որոշումը // www.datalex.am
3. «Սեռական շահագործումից և սեռական բնույթի
բռնություններից երեխաների պաշտպանության մասին»
2007թ. հոկտեմբերի 25-ի ԵԽ-ի կոնվենցիա // [https://
rm.coe.int/168046e1e4](https://rm.coe.int/168046e1e4)
4. Ղամբարյան Ա., Թումասյան Դ. Երեխաների սեռական
անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ
ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի
առանձնահատկությունները (ձեռնարկ քննիչների
համար): Երևան, 2015 // [http://investigative.am/images/
grakanutyun/Dzernark_1.pdf](http://investigative.am/images/grakanutyun/Dzernark_1.pdf)
5. Танцеров М. В. Потерпевший и его функция в
уголовном процессе России. Дисс. ... канд. юрид. наук.
Томск, 1999, էջ 58 // [http://www.dslib.net/kriminal-pro-
cess/poterpevshij-i-ego-funkcija-v-ugolovnom-processe-
rossii.html](http://www.dslib.net/kriminal-process/poterpevshij-i-ego-funkcija-v-ugolovnom-processe-rossii.html)
6. Աղաբաբյան Ն., Անչափահասների գործերով վարույթի
իրավական և տեսական հիմքերի զարգացումը ՀՀ
քրեական դատավարության մինչդատական վարույթում,
Երևան, 2019թ.

7. ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. դեկտեմբերի 20-ի թիվ ՍԴՈ-1333 որոշում // <http://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1333.pdf>



Անգործունակ տուժող

Մինչև 14 տարեկան երեխան է, ինչպես նաև հոգեկան հիվանդությամբ տառապելու հետևանքով իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ ղեկավարելու ունակությունը կորցրած անձը:

Սահմանափակ գործունակ տուժող

14-18 տարեկան երեխան է:

Տուժողի օրինական ներկայացուցիչ

Քրեական գործով վարույթի ընթացքում անչափահաս կամ անգործունակ տուժողի օրինական շահերը ներկայացնող ծնողներն են, որդեգրողները, ինամակալները կամ հոգաբարձուները, ինչպես նաև ինամակալության և հոգաբարձության մարմինը:

Օժանդակող անձինք

Տուժող/վկա երեխաների հարցերով մասնագետներն են, ովքեր աշխատանքը սկսում են նախնական զեկույցից և շարունակում են մինչև այն պահը, երբ այդ ծառայություններն այլևս անհրաժեշտ չեն:



Ուշադրությամբ ծանոթացե՛ք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձե՛ք դրանց:



Մինչև 15 րոպե

Հարց 1.

14 տարեկան տուժողի օրինական ներկայացուցիչը սեռական բնույթի բռնի գործողությունների վերաբերյալ հարուցված քրեական գործով դիմում է ներկայացնում քննիչին և հայտնում, որ տուժող կողմն արդեն 9 ամիս է չի հրավիրվել և չի ծանոթացվել որևէ որոշման և որևէ տեղեկություններ չունի գործով ընթացող նախաքննությունից՝ խնդրելով տեղեկացնել, թե գործն ինչ փուլում է գտնվում, ինչ գործողություններ են կատարվել և ինչ գործողություններ են նախապատրաստվում գործի հետագա ընթացքը լուծելու նպատակով և ինչ ժամկետներում:

Քննիչը գրավոր պատասխան է ներկայացնում տուժողի ներկայացուցչին, որում մասնավորապես նշված է հետևյալը. «Դիմումում նշված հարցադրումների վերաբերյալ հայտնվում է, որ վարույթն իրականացնող մարմինը տուժողին կամ տուժողի ներկայացուցչին կատարվող կամ կատարվելիք քննչական գործողությունների ժամկետների և ընթացքի վերաբերյալ հայտնելու պարտավորություն չունի ... : Նախաքննական մարմինը չի անդրադառնում այն պնդմանը, որ որևէ քննչական գործողություն չի կատարվում, քանի որ, ինչպես նշված է դիմումում, տուժող կողմը որևէ տեղեկություն չունի նախաքննության ընթացքի մասին և այդ պայմաններում, այն պնդումը, որ որևէ քննչական գործողություն չի կատարվում, առնվազն անհիմն է»:

Իրավաչափ են արդյոք քննիչը պարզաբանումները՝

ա. Այո, քանի որ նախաքննությունը գաղտնի է, ուստի



Ընտրել ճիշտ տարբերակը:
Ընտրությունը կատարվում է համապատասխան հարցերի համար նախատեսված պատասխանների ճիշտ տարբերակի տառը նշելու միջոցով:



Մինչև 40 րոպե

քննիչը պարտականություն չունի իր կողմից իրականացվելիք քննչական գործողությունների մասին տեղեկացնելու տուժողին կամ նրա ներկայացուցչին:

բ. Այո, քանի որ տուժողը և տուժողի ներկայացուցիչը գործի քննության արդյունքների մասին տեղեկացվում են նախաքննության ավարտին, երբ քրեական գործը ներկայացվում է ծանոթացման:

գ. Ոչ, քանի որ օրենքով տուժողը և տուժողի օրինական ներկայացուցիչն իրավունք ունեն ստանալու գործից նյութեր, ծանոթանալու իրենց մասնակցությամբ կատարված քննչական և դատավարական գործողությունների արձանագրություններին, փորձաքննությունների եզրակացություններին և այլն:

դ. Ոչ, քանի որ միջազգային չափանիշների տեսանկյունից տուժող երեխաները պետք է տեղեկություն ստանան գործի ընթացքի մասին, այդ թվում այն մասին, թե արդյոք կա մեղադրյալ ներգրավված անձ, նրա նկատմամբ ընտրված է խափանման միջոց կալանավորում և ցանկացած գործողության կամ որոշման մասին, որը կայացնելու է քրեական հետապնդման մարմինը:

Հարց 2.

Հ-ն 2018թ.-ի հունվարի 10-ի ժամը 01:00-ից մինչև 2018թ.-ի հունվարի 13-ի ժամը 13:30-ն ընկած ժամանակահատվածում «Ֆեյսբուք» սոցիալական կայքի «Վիկտորիա Մուրադյան», ապա «Վիկտորիա Սինկևիչ» վերտառությամբ անձնական էջի միջոցով գրագրություն ունենալով Արուսյակ Հովհաննիսյանի (ծնված՝ 20.10.2004թ.-ին) հետ, ստացել է վերջինիս մերկ լուսանկարները, որից հետո շանտաժի միջոցով՝ սպառնալով Ա.Հովհաննիսյանի «Ֆեյսբուքյան» ընկերներին տարածել նրա մերկ լուսանկարները, ստիպել է 2018թ.-ի հունվարի 13-ին՝ ժամը 13:30-ին հանդիպել Երևան քաղաքի մետրոյի «Սասունցի Դավիթ» կայարանում՝ լուսանկարները չհրապարակելու դիմաց հարկադրաբար սեռական հարաբերություն

ունենալու համար:

Ոստիկանության բաժնում Ա.Հովհաննիսյանի հաղորդման հիման վրա նյութեր են նախապատրաստվել դեպքի առթիվ և 13.01.2018 թվականին հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, և նախաքննություն կատարելու համար գործն ուղարկվել է ՀՀ ՔԿ ԵՔՔԿ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

Նույն օրը քննիչը որոշում է կայացրել Ա.Հովհաննիսյանին տուժող ճանաչելու մասին, որից հետո նրա ծնողին ճանաչում է օրինական ներկայացուցիչ, սակայն չի թույլատրում տուժողի մասնակցությամբ իրականացվող ճանաչում, «Ֆեյսբուք» սոցիալական կայքի զննություն քննչական գործողությունների կատարմանը:

Տուժողի օրինական ներկայացուցիչը բողոք է ներկայացնում քննիչի գործողությունների դեմ հսկողություն իրականացնող դատախազին՝ նշելով, որ քննիչն իրեն մասնակից չդարձնելով քննչական գործողություններին իրեն զրկել է օրենքով երաշխավորված իրավունքներից:

Հիմնավորված և օրինակա՞ն է արդյոք տուժողի օրինական ներկայացուցչի բողոքը՝

ա. Ոչ, քանի որ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված է, որ միայն հարցաքննությանն իրավունք ունի մասնակցել օրինական ներկայացուցիչը (հոդված 207), իսկ մնացած քննչական և դատավարական գործողությունների կատարմանը նրա մասնակցության մասին որևէ կարգավորում սահմանված չէ:

բ. Ոչ, քանի որ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված է, որ օրինական

ներկայացուցիչը քրեական հետապնդման մարմնի առաջարկով իրավունք ունի մասնակցել իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին (77-րդ հոդված, մաս 1-ին, կետ 4):

- գ. Ոչ, քանի որ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված է, որ օրինական ներկայացուցիչը թույլատրվում է մասնակցել քրեական գործով վարույթին հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ (76-րդ հոդվածի 1-ին մաս):
- դ. Այո, քանի որ այն բխում է Երեխայի շահերից և օրինական ներկայացուցչի մասնակցության գաղափարախոսությունից:

Հարց 3.


Օրինական ներկայացուցիչ ունենալու իրավունք ունեն՝

- ա. Անչափահաս կամ անգործունակ տուժողը:
- բ. Սահմանափակ գործունակ տուժողը:
- գ. Ե՛վ «ա» և՛ «բ» կետերում նշված անձինք:
- դ. Ճիշտ պատասխանը բացակայում է:

Հարց 4.

Օրինական ներկայացուցիչն իրականացնում է՝

- ա. Անչափահաս տուժողի իրավունքները նրա փոխարեն:
- բ. Անգործունակ տուժողի իրավունքները նրա փոխարեն:
- գ. Սահմանափակ գործունակ տուժողի իրավունքները նրա փոխարեն:
- դ. Ե՛վ «ա» և՛ «բ» կետերում նշված անձանց:



Հարց 5.

Անգործունակ են հանդիսանում՝

- ա. Մինչև 14 տարեկան երեխաները:
- բ. Անձինք, ովքեր ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իրենց ընտանիքը դրել են նյութական ծանր դրության մեջ:
- գ. Անձինք, ովքեր հոգեկան հիվանդությամբ տառապելու հետևանքով չեն կարող հասկանալ իրենց գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք:
- դ. Ե՛վ «ա» և՛ «գ» կետերում նշված անձինք:

Հարց 6.

Անչափահաս տուժողի օրինական ներկայացուցիչը՝

ա. Իրավունք ունի՝

1) իմանալ իր կողմից ներկայացվող մասնակցի մտադրության մասին՝


ա) հետ վերցնելու նրա նկատմամբ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելու վերաբերյալ բերված բողոքը,

բ) հաշտվելու կասկածյալի, մեղադրյալի հետ,

գ) հրաժարվելու իր ներկայացրած քաղաքացիական հայցից,

դ) հետ վերցնելու նրա շահերի պաշտպանության համար ներկայացված բողոքը,

2) համաձայնվել կամ չհամաձայնվել իր կողմից



Ներկայացվող անձի՝ 1-ին կետում թվարկված որոշումներին:

բ. Իրավունք չունի դատավարությանն իր կողմից ներկայացվող անձի անունից՝

1) հետ վերցնել նրա նկատմամբ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելու վերաբերյալ բերված բողոքը,

2) հաշտվել կասկածյալի, մեղադրյալի հետ,

3) հրաժարվել քաղաքացիական հայցվորի ներկայացրած հայցից,

4) հետ վերցնել դատավարությանն իր կողմից ներկայացվող մասնակցի ներկայացրած բողոքը:

գ. Իրականացնում է նրա իրավունքները, բացի այն իրավունքներից, որոնք անբաժանելի են նրա անձից:

դ. Բոլոր տարբերակներն էլ ճիշտ են:

Հարց 7.


Անչափահաս տուժողի օրինական ներկայացուցիչը չի կարող մասնակցել վարույթին, եթե՝

ա. Նա մեղադրվում է անչափահասի դեմ ուղղված հանցագործության կատարման մեջ:

բ. Իր վարքագծով ակնհայտորեն վնասում է անչափահասի շահերին:

գ. Իր վարքագծով խոչընդոտել է անչափահասի իրավունքների իրականացմանը կամ հանգեցրել է դրանց խախտմանը:

դ. Բոլոր տարբերակներն էլ ճիշտ են:




Հարց 8.

Սեռական բնույթի հանցագործություններից տուժող 14 տարեկան Ա-ի հարցաքննությանը մասնակցող օրինական ներկայացուցիչը միջնորդություն է ներկայացնում դատարանին և խնդրում ապահովել հոգեբանի մասնակցությունը հարցաքննությանը, որպեսզի վերջինս իրականացնի հարցաքննությունը: Որպես պատճառաբանություն օրինական ներկայացուցիչը նշում է, որ հոգեբանի մասնակցությամբ հարցաքննության կարգ արդեն իսկ նախատեսվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում՝ 2020 թվականի հունիսի 3-ի՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-300-Ն օրենքով կատարված լրացման և փոփոխման արդյունքում, ուղղակի այն գործելու է 2021 թվականին:

Դատարանը մերժում է միջնորդությունը՝ նշելով, որ քանի դեռ օրենքն ուժի մեջ չի մտել, ինքը նման պարտականություն չունի:

Իրավաչափ են արդյոք դատարանի պատճառաբանությունները՝

ա. Այո, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված վարույթի կարգը պարտադիր է դատարանների, հետաքննության, նախաքննության և դատախազության մարմինների, ինչպես նաև դատավարության մասնակիցների համար, ուստի քանի դեռ նման կարգ սահմանված չէ, ապա չի կարող կիրառվել:



- բ. Այո, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված է, որ Դատարանի իրավասությունը, նրա կողմից քրեական դատավարության իրականացման կարգը չեն կարող կամայականորեն փոփոխվել առանձին գործերի կամ անձանց կամ որոշակի իրավիճակի համար կամ որևէ ժամանակահատվածով:
- գ. Այո, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործերով վարույթը կարգավորվում է քրեական դատավարական այն օրենքով, որը գործում է համապատասխանաբար հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ:
- դ. Ոչ, քանի որ անկախ օրենքի ուժի մեջ մտնելուց և ելնելով երեխայի լավագույն շահերից՝ դատարանը պետք է բավարարեր միջնորդությունը:

Հարց 9.

15 տարեկան Ա-ն ծեծի է ենթարկվում ազգական Բ-ի կողմից, որի վերաբերյալ հարուցվում է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով և նրան մեղադրանք առաջադրվում: Չղջալով կատարած արարքի համար Բ-ն հաշտության նպատակով գնում է Ա-ի տուն և խնդրում ներել իրեն, ասում, որ սխալ է թույլ տվել, բարեկամներ են, իսկ դեպքը պահի տակ է տեղի ունեցել:

Ա-ի ծնողը, որը քրեական գործով ճանաչված է օրինական ներկայացուցիչ, ընդունում է Բ-ի խնդրանքը և Բ-ի հետ միասին դիմում է ներկայացնում նախաքննության մարմնին առ այն, որ իրենք հաշտվել


են և չեն ցանկանում, որպեսզի Բ-ն ենթարկվի քրեական պատասխանատվության, բողոք և պահանջ չունեն նրա նկատմամբ: Ա-ն քննիչի մոտ հայտնում է, որ համաձայն չէ օրինական ներկայացուցչի դիրքորոշմանը, որ միջնորդությունը ներկայացվել է իր կարծիքն անտեսելով, քանի որ ինքը չի ներել Բ-ին և ցանկանում է, որ նա ենթարկվի քրեական պատասխանատվության:

Ի՞նչ որոշում պետք է կայացնի քննիչը տվյալ իրավիճակում՝

- ա. Պետք է որոշում կայացնի քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, քանի որ անչափահասի փոխարեն նրա իրավունքներն իրականացնում է օրինական ներկայացուցիչը:
- բ. Պետք է որոշում կայացնի օրինական ներկայացուցչին վարույթից հեռացնելու մասին, քանի որ նրա գործողությունները հակասում են անչափահասի շահերին:
- գ. Պետք է որոշում կայացնի օրինական ներկայացուցչի միջնորդությունը մերժելու մասին, քանի որ առաջնային է հաշտության վերաբերյալ անչափահասի կարծիքը, այլ ոչ թե՝ օրինական ներկայացուցչի:
- դ. Պետք է որոշում կայացնի օրինական ներկայացուցչի միջնորդությունը մերժելու մասին, քանի որ ինչպես անչափահասը, այնպես էլ նրա օրինական ներկայացուցիչը հաշտվելու իրավունք չունեն:

Չափ 10.


15 տարեկան Ա-ն, որը տուժել է ՀՀ քրեական



օրենսգրքի 113-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունից, առարկում է, որպեսզի իր հայրը հանդես գա որպես օրինական ներկայացուցիչ, քանի որ նա իրեն չի վստահում, անընդահատ քննադատում է նրան թույլ լինելու մեջ, նրանց միջև չի ձևավորվել վստահության վրա հիմնված փոխհարաբերություններ, միշտ կոնֆլիկտ է առաջանում այն հարցի հետ կապված, որ հայրը ալկոհոլ է օգտագործում և իրեն ստիպում սպորտով զբաղվել, որպեսզի կարողանա իրեն պաշտպանել, իսկ ինքը չի սիրում սպորտ և այլն:

Ինչ որոշում պետք է կայացնի դատարանը՝

- ա. Պետք է որոշում կայացնի օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին, քանի որ օրենքում սահմանված չէ, որ օրինական ներկայացուցիչ ճանաչելու հարցը լուծելիս պետք է հաշվի առնել անչափահասի կարծիքը:
- բ. Պետք է որոշում կայացնի օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին, քանի որ օրենքում սահմանված չէ, որ անչափահասը կարող է հրաժարվել օրինական ներկայացուցչից:
- գ. Պետք է որոշում կայացնի օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին, քանի որ նա գործում է օրենքի ուժով, այլ ոչ թե՝ անչափահասի համաձայնությամբ:
- դ. Պետք է գնահատի, թե որքանով է բխում երեխայի լավագույն շահերից, երբ երեխան չի ցանկանում, որպեսզի հայրը որպես օրինական ներկայացուցիչ ներկայացնի իր շահերը:



ԴԱՍ 9

ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼԻՍ

Այս դասի (մոտիվացնող
ներածական տեսանյութ+դասի
տեքստ+բառարան+ինքնաստուգիչ հարցեր)
յուրացման համար անհրաժեշտ է
240 րոպե / 4 ժամ:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի
կայքի հեռաուսուցման բաժնում):

Քրեական գործով վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանքները թվարկված են ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ և 37-րդ հոդվածներում, որոնցից առաջինը վերաբերում է քրեական գործով վարույթն ու քրեական հետապնդումն անվերապահ բացառող հիմքերին, իսկ երկրորդը՝ հայեցողական քրեական հետապնդման հիմքերին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ և 37-րդ հոդվածներով նախատեսված քրեական գործի վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման հիմքերը, դրանց կիրառման կարգի առանձնահատկություններով պայմանավորված, տարբերվում են միմյանցից: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ վարույթն իրականացնող մարմինները **կարող են** հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել, ինչը նշանակում է, որ այն դիսպոզիտիվ



Մինչև 10 րոպե

Ուշադրությամբ
կարդացե՛ք
տեքստը (օգտվելով
բառարանից) և
այն յուրացնելուց
հետո միայն անցե՛ք
ինքնաստուգիչ
հարցերին:




Մինչև 175 րոպե

քնույթ ունի և վարույթն իրականացնող մարմիններին քրեական գործի վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման հարցում օժտել են հայեցողական լիազորությամբ (դատարան, դատախազ կամ դատախազի համաձայնությամբ՝ նաև քննիչ), որը տեսության մեջ ընդունված է անվանել քրեական հետապնդման նպատակահարմարության սկզբունք¹: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերն իմպերատիվ են, և դրանցից յուրաքանչյուրի առկայությունը վարույթն իրականացնող մարմնի համար առաջացնում է քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու պարտականություն², այսինքն՝ դրանք քրեական գործով վարույթը և քրեական հետապնդումը բացառող անվերապավ հիմքեր են:

Անդրադառնալով անչափահաս տուժողների մասնակցությամբ քրեական գործով վարույթը և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմնահարցի քննարկմանը՝ պետք է փաստել, որ ՀՀ օրենսդրությունը, ընդհանուր կարգով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու դատավարական կարգից բացի, սահմանում է նաև որոշակի առանձնահատկություններ անչափահաս տուժողների մասնակցությամբ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հարցում:

¹Տե՛ս Մարաբյան Ս., *Քրեական դատավարության պարզեցման հիմնախնդիրները* (գիտագործնական ձեռնարկ) Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան.-Եր.: «Աստղիկ գրատուն», 2011, էջեր 195-196:

²Այս հարցերի մասին տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Ա. Բաղդասարովի վերաբերյալ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԱՎԴ4/0028/01/15 որոշումը, Տ.Առաքելյանի վերաբերյալ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱԲԴ/0217/01/14 որոշումը, Ա. Սարգսյանի վերաբերյալ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը և այլն:



ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «1. *Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթն ենթակա է կարճման, եթե՝*

(...)


4) *սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը.*

5) *սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ. (...)*»:


Քրեական հետապնդումը և քրեական գործով վարույթը բացառող այս երկու հիմքերն էլ, ըստ էության, վերաբերում են մասնավոր մեղադրանքի գործերին, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսդրության համալիր վերլուծությունը և մեկնաբանությունը, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորած նախադեպային իրավունքը ցույց են տալիս, որ բացառապես մասնավոր մեղադրանքի գործերի դեպքում է օրենսդիրը սահմանել հատուկ կանոն առ այն, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում իրականացվել այլ կերպ, քան տուժողի (դիմողի) բողոքի հիման վրա, և եթե տուժողն ու կասկածյալը կամ մեղադրյալը հաշտվել են, ապա քրեական հետապնդումն ենթակա է դադարեցման, իսկ քրեական գործի վարույթը՝ կարճման³:

³Այստեղ չենք անդրադառնում ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածին, քանի որ դրա կիրառման դատավարական ձևը, ինչպես նշվեց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածն է, ընդ որում՝ այն կյուրախրավական ինստիտուտ է, իսկ մասնավոր մեղադրանքի գործերով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու ինստիտուտը դատավարական է:


Քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի կարգի առանձնահատկությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ այս գործերի դեպքում բացակայում է հանրային շահը, ուստի օրենսդիրն այս գործերով վարույթի կարգը կանոնակարգել է՝ ելնելով մասնավոր շահի գերակայության սկզբունքից և մասնավոր անձի կամքից է ուղղակիորեն կախվածության մեջ դրել վարույթի սկիզբը և ավարտը: Օրենսդիրը, ընդունելով, որ ՀՀ Սահամանդրության 3-րդ հոդվածի իմաստով՝ մարդը, նրա իրավունքները և ազատությունները համարվում են բարձրագույն արժեք, մասնավոր մեղադրանքի գործերով սահմանել է, որ անձի իրավունքների խախտման դեպքում կարևորը ոչ թե այն է, թե ինչպես է դրան վերաբերվում պետությունը, այլ այն, թե ինչպես է դրան վերաբերվում անձը, ում իրավունքը խախտվել է: Այս մոտեցման հիմքում ընկած է այն գաղափարախոսությունը, որ մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործություններով շոշափվում են միայն տուժողի շահերը, այլ ոչ թե պետության և (կամ) հասարակության շահերը, իսկ դա նշանակում է, որ տուժողը պետք է որոշի քրեական վարույթ հարուցելու, շարունակելու կամ այն դադարեցնելու հարցը: Եթե անձը գտնում է, որ իր իրավունքները խախտվել են քրեական օրենսգրքով չթույլատրված և մասնավոր մեղադրանքի կարգով քննվող որևէ հանցավոր արաքով (դրանք թվարկված են ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածի 1-ին մասում), ապա նրան է պատկանում իր խախտված իրավունքների վերականգնման նպատակով պետական իրավասու մարմիններին դիմելու իրավունքը, իսկ եթե չի դիմում, կամ դիմում է, սակայն



հետագայում հրաժարվում է իր իրավունքների պաշտպանությունից, ապա պետությունը չի կարող նրան հարկադրել իրավունքների պաշտպանություն և պարտավոր է ընթացք չտալ բողոքին, իսկ եթե տվել է, ապա դադարեցնել վարույթ (բացառություններին դեռ կանդիդատանք): Նման դեպքերում տուժողն ինքն է իր հայեցողությամբ և կամքով տնօրինում իր իրավունքները և դրանց խախտման դեպքում որոշում դիմել դատական կամ այլ պաշտպանության, թե ոչ: Տուժողի կամքին հակառակ վարույթ նախաձեռնելը կամ շարունակելը կնշանակի նրա շահերը փոխարինել հանրային շահով, որպիսի հանգամանքը հակասում է մասնավոր մեղադրանքի գործերով տուժողի շահերի պաշտպանության նպատակներին: Նման մոտեցումը կարող է դիտարկվել որպես պետության անհիմն միջամտություն մասնավոր իրավունքների ոլորտ, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության 42-րդ, 43-րդ և 83.5-րդ հոդվածներին և այն հիմքերին, որոնցով թույլատրվում են անձի իրավունքների և ազատությունների սահմանափակումները: Այլ կերպ ասած, քրեական դատավարությունում մասնավոր շահն ենթադրում է մասնավոր անձի կողմից վարքագծի ընտրության ազատություն, ինչը մասնավոր մեղադրանքի գործերով նշանակում է տուժողի կամքով պայմանավորել քրեադատավարական հարաբերությունների առաջացումը, զարգացումը և դադարեցումը: Քրեադատավարական օրենսդրությունը, ըստ էության, թույլ չի տալիս պետական մարմիններին և պաշտոնատար անձանց միջամտել մասնավոր անձի քրեաիրավական վեճին, դիմողի բողոքի առկայության դեպքում պետությունը զուտ պոզիտիվ պարտավորություն ունի կատարելու անհրաժեշտ քննություն՝ ենթադրյալ հանցագործության դեպքը և այն կատարող անձին բացահայտելու



նպատակով, իսկ մասնավոր մեղադրանքի գործերի հիմքում ընկած տնօրինչականության (դիսպոզիտվության) սկզբունքը ենթադրում է, որ քրեաիրավական վեճի լուծման միջոցները և ձևերը պետք է որոշեն բացառապես վիճող կողմերը՝ տուժողը և ենթադրյալ հանցանք կատարած անձը: Գաղափարախոսությունը նրանում է, որ տուժողը, լինելով քրեաիրավական հարաբերության մասնակից, ունի կամքի ազատություն իր նկատմամբ հանցագործություն կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցում, իսկ օրենքի տառից և ոգուց պարզ է դառնում, որ տուժողը կարող է բողոք չներկայացնել առանց որևէ պատճառաբանության: Բողոքի բացակայությունը տուժողի միակողմանի տնօրինչական գործողությունն է, որը կարող է տեղի ունենալ տարբեր նկատառումներով, կարևորն այն է, որ բողոք չունենալը տեղի ունենա տուժողի ազատ կամքով՝ զերծ այլ անձանց հարկադրանքից: Վարույթն իրականացնող մարմինը կարող է ըստ ելության ստուգել, թե արդյոք բողոք չունենալը տուժողի ազատ կամքի արտահայտությունն է, թե հարկադրանքի արդյունք (եթե դեպքի մասին տեղեկացվել է այլ աղբյուրներից և իրականացնում է ստուգողական բնույթի գործողություններ), սակայն տուժողի կամքին հակառակ չի կարող շարունակել վարույթը, եթե տուժողի կամքի ազատությունը կասկած չի հարուցում: Մեր այս հետևությունները համահունչ են ՀՀ վճռաբեկ դատարանի Ա.Աբրահամյանի վերաբերյալ 2006 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-73/08 որոշման մեջ ձևավորած այն իրավական դիրքորոշմանը, որ «(...) մասնավոր մեղադրանքով գործ հարուցելու և դրանով քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը լիովին կախված է դիմողի՝



հանցավորին քրեական պատասխանատվության ենթարկելու միջոցով իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար քրեական հետապնդման մարմինն դիմելու ցանկությունից և կամահայտնությունից»:

Այլ կերպ՝ եթե տուժողը չի ցանկանում իր խախտված իրավունքների վերականգնում, հետամուտ չի լինում իր խախտված իրավունքների դատական կամ այլ պաշտպանությանը (ազատ կամքի դրսևորման պարագայում), ապա դա նրան չպետք է հարկադրվի կամքին հակառակ, եթե առկա են այլ իրավական պայմանները, օրինակ, եթե ենթադրյալ հանցագործությունն կատարած անձը չի առարկում, որպեսզի քրեական գործ չհարուցվի⁴ կամ առկա չէ մասնավոր մեղադրանքի գործը հանրային կարգով քննելու հիմքերն ու պայմանները և այլն, ապա քրեական գործ չպետք է հարուցվի և իրականացվի քննություն, իսկ եթե հարուցվել է, ապա այն պետք է կարճվի, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցվի: Մեր նման հետևությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածից ուղղակիորեն բխում է, որ անձի կողմից իր իրավունքներից օգտվելը կամ չօգտվելը չպետք է վնասի կամ խախտի այլ անձի կամ անձանց իրավունքները, ինչը մասնավոր մեղադրանքի գործերի դեպքում նշանակում է, որ տուժողը չպետք է իր իրավունքներից օգտվի այնպես, որ վնաս պատճառի քրեական հետապնդման ենթարկված անձի իրավունքներին:

Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ, 35-րդ, 36-րդ և 183-րդ հոդվածներով ամրագրված կանոնակարգումներին,


⁴Այս մասին տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի ՇԴ/0012/11/13 որոշումը (կետ 18):

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ մեջբերված դրույթների համադրված վերլուծությունից երևում է, որ քրեադատավարական օրենսդրությունը հանրային նվազ վտանգավորության հանգամանքով պայմանավորված առանձնացնում և հստակ սահմանում է մասնավոր հետապնդման գործերի շրջանակը, որոնց համար նախատեսում է քննության առանձնահատուկ դատավարական կարգ: Մասնավոր հետապնդման գործերը կարող են հարուցվել բացառապես տուժողի բողոքի հիման վրա և ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է քրեական գործի հարուցումը բացառող և արդեն իսկ հարուցված քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու անվերապահ հիմք, այն է՝ եթե օրենքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի (տուժողի) բողոքը⁵: Այս հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու համար ընդամենը պետք է, որ վարույթն իրականացնող մարմինը քննությամբ ձեռք բերված (փաստական) տվյալների հիման վրա հաստատված համարի, որ անձը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք է կատարել, և միևնույն ժամանակ բացակայում է դիմողի (տուժողի) բողոքը⁶:

Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով

⁵Տե՛ս Վ.Եղիազարյանի վերաբերյալ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՇԴ/0012/11/13 որոշումը:


⁶Տե՛ս Նույն տեղում:



Նախատեսված հիմքի կիրառմանը՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը նշում է, որ «այն կիրառելի է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝ ա. առկա է մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդում (անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք): Սույն դիրքորոշումը պայմանավորված է օրենսդրի կողմից քննարկվող նորմում «սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում» պայմանի նախատեսմամբ: Մասնավորապես, տուժողի կողմից կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքը վերաբերում է մասնավոր մեղադրանքի գործերով հաշտությանը, որը նախատեսված է նշյալ օրենսգրքի 33-րդ, 36-րդ և 183-րդ հոդվածներով:

բ. տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերը կրում են իմպերատիվ բնույթ, և դրանցից մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում: Այլ կերպ՝ եթե վարույթն իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա գործի վարույթն ենթակա է կարճման: Հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքի կիրառելիության՝ ա) և բ) ենթակետերում շարադրված պայմանների առկայությունն առաջացնում




Ե հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը (...)»⁷:

ՀՀ սահմանադրական դատարանը 2015 թվականի հունիսի 9-ի թիվ ՍԴՈ-1213 որոշման մեջ նշում է՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը սահմանում է՝ եթե օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթն ենթակա է կարճման: Այս իրավակարգավորման վերլուծությունից բխում է, որ առկա է դատավարական հակադիր շահերով օժտված սուբյեկտների փոխադարձ կամքը, որն արտահայտվում է հաշտության միջոցով: Որոշակի հանգամանքներով պայմանավորված՝ հիշյալ սուբյեկտներն ազատորեն արտահայտում են իրենց կամքն առ հաշտություն: Այլ կերպ ասած, քրեական գործի վարույթը կարճելու՝ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը կիրառելիս համապատասխան իրավասու սուբյեկտները, այդ թվում՝ դատարանը, հիմք են ընդունում տուժողի կողմից կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու հանգամանքը՝ ելնելով այն կանխավարկածից, որ երկու կողմերի կամքը գիտակցված է և նպատակային»:

Նկատենք, որ իրավակիրառ պրակտիկայում քննարկվող նորմերի մեկնաբանման և կիրառման որոշակի տարբերակված մոտեցում է ձևավորվել: Ինչպես երևում է վերևում մեջբերված ՀՀ վճռաբեկ դատարանի և սահմանադրական դատարանի

⁷Տե՛ս Տ. Առաքելյանի վերաբերյալ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱԲԴ/0217/01/14 որոշումը:


մեկնաբանություններից և ամենակարևորը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի ձևակերպումներից, թե՛ «դիմողի բողոքի բացակայությունը», թե՛ «տուժողի և կասկածյալի կամ մեղադրյալի հաշտությունը» հիմք են ինչպես քրեական գործ և քրեական հետապնդում չհարուցելու, այնպես էլ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու համար (դատարանների մեկնաբանություններում որևէ վերապահում առկա չէ), մինչդեռ իրավակիրառ պրակտիկայում առավել լայն տարածում ունի այն մոտեցումը, որ դիմողի բողոքի բացակայությունը գնահատվում է զուտ որպես քրեական գործ չհարուցելու հիմք, իսկ եթե արդեն հարուցվել է քրեական գործը, ապա քրեական հետապնդումը դադարեցնելու/չիրականացնելու և գործով վարույթը կարճելու մասին որոշում կարող է կայացվել բացառապես հաշտության հիմքով, այսինքն՝ եթե բողոքի բացակայությունը չի կարող քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք լինել, պետք է առկա լինի հաշտություն: Բողոքի բացակայության և հաշտության տարբերություններին դեռ կանդիդատականք. այստեղ նկատենք, որ ձևավորված քննչական և դատական պրակտիկան որոշակիորեն պայմանավորված են օրենսդրական ձևակերպումներով, մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի և 183-րդ հոդվածի 1-ին մասի ներքին հակասություններով: Բանն այն է, որ 35-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ «1. Քրեական գործ չի կարող հարուցվել ..., եթե՝ (...) 5) սույն օրենսգրքով նախատեսված



դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ(...)», իսկ 183-րդ հոդվածում սահմանված է, որ քրեական գործ կարող է հարուցվել տուժողի բողոքի հիման վրա, մինչդեռ «տուժող», «կասկածյալ» և «մեղադրյալ» դատավարական կարգավիճակի մասին խոսք կարող է լինել, եթե հարուցված է քրեական գործ, հետևաբար հարց է առաջանում, թե ինչպե՞ս պետք է մեկնաբանել և կիրառել քննարկվող նորմերը, որպեսզի այն բխի օրենքից և միաժամանակ չհակասի մասնավոր մեղադրանքի գործերի գաղափարախոսությանը և դրա վրա կառուցված օրենսդրական այլ լուծումներին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի մասով ՀՀ վճռաբեկ դատարանը լուծել է այդ հակասության հարցը և նշել, որ «տուժողի» փոխարեն պետք է հասկանալ «դիմող», որն ավելի լայն հասկացություն է⁸. ավելին՝ մինչև քրեական գործ հարուցելը տուժող չի կարող լինել և այլն⁹: Նկատենք, որ եզակի դեպքերում դատարանները կիրառում են բողոքի բացակայությունը նաև հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու հիմք՝ գտնելով, որ եթե անգամ սկզբից դիմողը բողոք է ներկայացրել, սակայն հետագայում փոխել է իր դիրքորոշումը, միաժամանակ չի հաշտվում կասկածյալի կամ մեղադրյալի հետ, ապա վերջինի կողմից առարկություն չունենալու դեպքում ևս որոշում պետք է կայացնել քրեական հետապնդումը


⁸Այս հարցերին արդեն անդրադարձել ենք նախկին դասերի ընթացքում:

⁹Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Ա.Աբրահամյանի վերաբերյալ 2006 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-73/08 որոշումը:




դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին, հակառակ դեպքում՝ ստացվում է, որ մասնավոր մեղադրանքի գործը վերածվում է հանրային մեղադրանքի, ինչը իրավաչափ չէ¹⁰: Այս մոտեցումը համահունչ է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի վերևում մեջբերված Վ.Եղիազարյանի վերաբերյալ որոշման մեջ արտահայտած մոտեցումներին, ինչի հետ մենք համակարծիք ենք և գտնում ենք, որ դատական պրակտիկան պետք է զարգանա այդ ուղղությամբ: Թվում է, թե նման մեկնաբանության պարագայում որոշակի հակասություն է առաջանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի այն պահանջի հետ, որի համաձայն մասնավոր մեղադրանքի գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման, սակայն մենք այն կարծիքին ենք, որ այս դրույթի նպատակը մասնավոր մեղադրանքի գործերով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքի սահմանումը չէ, այլ պարզապես այն հանգամանքի արձանագրումն է, որ մասնավոր մեղադրանքի գործերով հաշտության առկայության դեպքում պետությունն իրավասու չէ շարունակելու վարույթը: Ինչը, սակայն, չի բացառում բողոքի բացակայության դեպքում ևս գործի վարույթը կարճելու հնարավորությունը, քանի որ այն սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում որպես քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը

¹⁰Տե՛ս Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2015 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ ԱՐԱԴ1/0018/01/15 քրեական գործով՝ «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշումը:




դադարեցնելու հիմք: Հետևաբար, այս դեպքում պետք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ և 183-րդ հոդվածները մեկնաբանել և դիտարկել համակարգային փոխկապվածության մեջ որպես փոխլրացնող նորմեր, ինչպես նաև դրանք դիտարկել մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի նպատակային նշանակությանը համապատասխան, մասնավորապես այն համատեքստում, որ մասնավոր մեղադրանքի գործերով տուժողի (դիմողի) բողոքի դատավարական նշանակությունը չի սահմանափակվում միայն քրեական գործ հարուցելու միակ օրինական առիթ լինելու հանգամանքով, այն մասնավոր մեղադրանքի գործերով տուժողի մեղադրական ողջ գործունեության առաջին դատավարական ակտն է, որը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ տուժողը չի հրաժարվում իր բողոքից և հայտարարում իր մեղադրական գործունեությունից հրաժարվելու մասին, որը կարող է արտահայտվել ինչպես մեղադրյալի հետ հաշտվելու ձևով, այնպես էլ մեղադրյալի հետ առանց հաշտվելու նրա դեմ բողոք չներկայացնելու ձևով: Այլ կերպ ասած, քանի որ տուժողը մասնավոր մեղադրանքի գործերով հանդիսանում է մեղադրանքը տնօրինող եզակի սուբյեկտը, ուստի տուժողի բողոքի բացակայությունը մինչև դատավճիռ կայացնելու համար խորհրդակցական սենյակ հեռանալը պետք է առաջացնի իրավական հետևանք որպես մեղադրանքի տնօրինման ակտ:

Ինչ վերաբերում է հաշտությանը, ապա այն պետք է կիրառելի համարել բացառապես հարուցված քրեական գործով, քանի որ նյութերի նախապատրաստման ընթացքում, եթե տուժողը չի բողոքում, ապա այն բավարար է քրեական գործ չհարուցելու և քրեական հետապնդում չիրականացնելու համար: Հետևաբար,



գտնում ենք, որ պետք է ՀՀ վճռաբեկ դատարանի Տ. Առաքելյանի վերաբերյալ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱԶԴ/0217/01/14 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի կիրառման պայմաններին ավելացնել նաև հարուցված քրեական գործի առկայությունը, ինչը նշանակում է, որ քրեական գործով վարույթը և քրեական հետապնդումը բացառող հիշյալ հիմքի կիրառման համար անհրաժեշտ են հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝ ա) առկա է մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդում (անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք), բ) տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ և գ) առկա է հարուցված քրեական գործ:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչպես կարող է արտահայտվել դիմողի բողոքի բացակայությունը, անհրաժեշտ ենք համարում նկատել, որ այն չի կարող մեկնաբանվել զուտ ձևական-իրավաբանական իմաստով, օրինակ՝ բողոք չունենալու վերաբերյալ գրավոր ձևով ներկայացված դիմում կամ վարույթն իրականացնող մարմինն արված բանավոր հայտարարություն և այլն: Բողոքի բացակայությունը կարող է դրսևորվել տարբեր ձևերով, օրինակ՝ հանցագործություն կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իրավասու մարմիններին չդիմելու կամ անձին քրեական պատասխանատվության ենթարկելուն ուղղված որևէ գործողություն չկատարելու ձևով, այսինքն՝ պասիվ վարքագիծ դրսևորելով, ինչպես նաև դիմում բողոք ներկայացնելուց հետո այն հետ վերցնելով՝ անկախ շարժառիթից:



Վճռաբեկ դատարանն Ա.Բաբայանի վերաբերյալ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԱԶԴ/0157/01/10 որոշման մեջ անդրադառնալով տուժողի և հանցանք կատարած անձի հաշտությանը՝ նշում է, որ «Հանցանք կատարած անձի համար հաշտությունը հանցանքի կատարման մեջ իրեն մեղավոր ճանաչելն է, այդ արարքի համար գղջալը, աստուսանք հայտնելը, իսկ տուժողի համար՝ հանցանք կատարած անձին ներելը: Բացի այդ, հաշտությունն ենթադրում է տուժողի և ենթադրյալ հանցագործի կամավոր և փոխադարձ համաձայնություն միմյանց հետ հաշտվելու վերաբերյալ: Այսինքն, հաշտությունը պետք է լինի ինչպես գործողություն, այնպես էլ փոխադարձ գործողությունների արդյունք:

Հաշտության կամավոր բնույթն ենթադրում է հաշտվելու վերաբերյալ կողմերի ինքնուրույն և ազատ կամահայտնություն:

Հաշտության փոխադարձ բնույթը նշանակում է, որ կողմերից երկուսն էլ պետք է հայտարարեն հաշտության մասին:


Հաշտության կամավոր և փոխադարձ բնույթի բացակայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը չի կարող որոշում կայացնել հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ: Այլ կերպ՝ հաշտությունը երկու կողմերի փոխադարձ կամահայտնությունն է, այն երբեք չի կարող կրել միակողմանի բնույթ, և եթե տուժողը ցանկություն է հայտնում հաշտվելու, իսկ հանցանք կատարած անձը դրա դեմ առարկում է, կամ հակառակը, ապա հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու իրավական

հիմքը բացակայում է: Նույն կերպ, հաշտությունը կամավոր և փոխադարձ չի կարող համարվել, հետևաբար՝ այդ հիմքով քրեական գործի վարույթը չի կարող դադարեցվել, եթե հաշտությունը հետևանք է տուժողի նկատմամբ հանցանք կատարած անձի գործադրած ոչ իրավաչափ ներգործության:

(...) [Ե]թե տուժողն իրեն պատճառված վնասի հատուցման պահանջ չի ներկայացնում, կամ տուժողն ու հանցանք կատարած անձը համաձայնության են գալիս վնասն ապագայում հատուցելու մասին, կամ տուժողը զիջում է պարտքը, կամ պարզապես չի ցանկանում ստանալ իրեն պատճառված վնասի փոխհատուցում, ապա այդ հանգամանքը չի կարող խոչընդոտել հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից հաշտության հիմքով ազատելուն (...):»:

Անչափահաս տուժողների պարագայում դիմողի բողոքի առկայությունը որպես քրեական գործ հարուցելու առիթ արդեն քննարկել ենք, ուստի այստեղ այդ հարցին կանդիդատանք քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքի համատեքստում: Միաժամանակ, նկատի ունենալով, որ այս առումով որևէ հատուկ կանոնակարգում առկա չէ, որը այդ հիմքի կիրառումը կտարբերակեր հաշտության հիմքով քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքից, ուստի այդ հարցերին կանդիդատանք միասնական:


ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի և 77-րդ հոդվածի համալիր վերլուծության հիման վրա ակնհայտ է դառնում, որ



անչափահաս տուժողի իրավունքները նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչն անկախ անչափահասի տարիքից, իսկ օրինական ներկայացուցչի դատավարական կարգավիճակը կանոնակարգող նորմերի վերլուծությունից հետևում է, որ ինչպես անգործունակ տուժողը, այնպես էլ նրա օրինական ներկայացուցիչն իրավունք չունեն հաշտվելու կասկածյալի կամ մեղադրյալի հետ կամ հետ վերցնելու նրանց դեմ ներկայացված բողոքը (77-րդ հոդվածի մաս 2-րդ), մինչդեռ սահմանափակ գործունակ տուժողի և նրա օրինական ներկայացուցչի մասով կարգավորումն այլ է: Մասնավորապես, ՀՀ. քր. դատ. օր.-ի 77-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ սահմանափակ գործունակ տուժողի օրինական ներկայացուցիչն իրավունք ունի՝ 1) ինչպես իմանալ իր կողմից ներկայացվող սահմանափակ գործունակ մասնակցի մտադրության մասին՝ (ա) հետ վերցնելու նրա նկատմամբ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելու վերաբերյալ բերված բողոքը և (բ) հաշտվելու կասկածյալի կամ մեղադրյալի հետ, 2) այնպես էլ համաձայնվել կամ չհամաձայնվել իր կողմից ներկայացվող սահմանափակ գործունակ տուժողի կողմից կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու կամ բողոքը հետ վերցնելու որոշումների հետ (77-րդ հոդվածի մաս 3-րդ, կետեր 2-րդ և 3-րդ):

Նկատի ունենալով, որ անգործունակ տուժողը մինչև 14 տարեկան երեխան է, իսկ սահմանափակ գործունակ տուժողը՝ 14-18 տարեկան երեխան¹¹, ստացվում է, որ եթե մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործությունից տուժել է մինչև 14 տարեկան անչափահասը, ապա


¹¹Տե՛ս նախորդ դասը:



քրեադատավարական օրենսդրությամբ ինչպես նա, այնպես էլ նրա օրինական ներկայացուցիչը զրկված են հանցագործություն կատարած անձի դեմ ներկայացված բողոքը հետ վերցնելու, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու իրավունքից, իսկ վարույթն իրականացնող մարմիններն օրենքի ուժով ազատված են նրանց դիրքորոշումը ճշտելու և դրանց իրավական նշանակությունն տալու պարտականությունից: Մինչդեռ, սահմանափակ գործունակ տուժողն իրավունք ունի ինչպես հաշտվելու, այնպես էլ հետ վերցնելու բողոքը¹², իսկ նրա օրինական ներկայացուցիչն իրավունք ունի համաձայնվելու կամ չհամաձայնվելու այդ մոտեցմանը. այլ հարց է, որ օրենսդիրը չի սահմանել, թե ինչ իրավական հետևանք կարող է առաջացնել ինչպես սահմանափակ գործունակ տուժողի հաշտվելու կամ բողոքը հետ վերցնելու իրավունքից օգտվելը, այնպես էլ դրա վերաբերյալ օրինական ներկայացուցչի դիրքորոշումը: Այս հարցերին դեռ կանխադաշնանք, իսկ այստեղ նշենք, որ օրենսդրական վերագրյալ կարգավորումների հիման վրա դատական պրակտիկան զարգացել է այնպես, որ անչափահասների դեմ ուղղված և մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը մեխանիկորեն վերածվել են հանրային մեղադրանքի գործերի: Այս առումով «նախադեպային է» թիվ ԵԷԴ/0033/01/16/ քրեական գործը, որով տուժողը 3 տարեկան երեխա էր, և առաջին ատյանի դատարանը 2016թ. մայիսի 11-ի որոշմամբ հաշտության հիմքով կարճել էր քրեական գործի վարույթը և դադարեցրել քրեական հետապնդումը, քանի որ տուժողի օրինական ներկայացուցիչը հայտնել էր, որ բողոք-պահանջ չունի

¹²Թեև այս նորմը վերաբերելի է տուժողի օրինական ներկայացուցչի իրավունքներին, սակայն կարգավորումն այնպիսին է, որ խոսում է նաև անչափահաս տուժողի իրավունքների մասին

և չի ցանկանում, որ մեղադրյալն ենթարկվի քրեական պատասխանատվության: Ղատարանը վերլուծության էր ենթարկել ՀՀ քր. դատ. օր.-ի 59-րդ, 76-77-րդ հոդվածները և հանգել եզրակացության, որ տուժողի օրինական ներկայացուցչի՝ օրենքով սահմանված իրավունքները գրեթե հավասարեցված են տուժողի իրավունքներին, և ինչպես տուժողի, այնպես էլ տուժողի օրինական ներկայացուցչի դատավարական իրավունքների մեջ են մտնում իր ներկայացրած բողոքը հետ վերցնելը և օրենքով նախատեսված դեպքերում կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելը: Վերաքննիչ ղատարանը, չհամաձայնելով առաջին ատյանի ղատարանի վերոնշյալ մեկնաբանություններին, 07.07.2016թ. որոշմամբ հաստատել էր, որ անչափահաս տուժողների վերաբերյալ գործերով հաշտություն չի կարող լինել, քանի որ մի կողմից տուժողի օրինական ներկայացուցչի՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 77-րդ հոդվածում թվարկված իրավունքների շարքում բացակայում է կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու ենթակետը, որը համարվում է տուժողի անօտարելի իրավունքը, իսկ մյուս կողմից տուժողը, հանդիսանալով մանկահասակ (3 տարեկան), իր տարիքային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված, ըստ էության, զրկված է եղել իր դատավարական կարգավիճակի առանձնահատկությունները, մեղադրանքի էությունը ամբողջությամբ գիտակցելու հնարավորությունից, ինչն էլ տվյալ դեպքում համարվում է վերջինիս համար անօգնական վիճակ: Հետևաբար, Վերաքննիչ ղատարանը հանգել էր եզրակացության, որ անչափահաս տուժողը, իր տարիքային անօգնական վիճակով պայմանավորված, չէր կարող լիարժեք պաշտպանել իր իրավունքները և օրինական շահերը, ուստի, սույն գործով դատաքննությունը պետք է անցկացվեր հանրային մեղադրանքի գործերի հարուցման




համար սահմանված ընդհանուր կարգով: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, առաջին ատյանի դատարանի կողմից քրեական գործի վարույթի կարճման հետևանքով անտեսվել է մանկահասակի՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանության իրավունքը, քանի որ, ըստ Վերաքննիչ դատարանի, առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել անչափահաս տուժողի կողմից ինքնուրույն իր իրավունքների պաշտպանության, ազատ կամարտահայտության և իր գործողությունների իրավական հետևանքները գիտակցելու հետ կապված դժվարությունների առկայության հանգամանքները, չի գնահատել հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հետևանքները վերջինիս կողմից հիմնովին չգիտակցելու հնարավոր հավանականությունը (անօգնական վիճակը):

Փաստացի, օրենսդրական կարգավորումների և դրանց մեկնաբանման արդյունքում ձևավորված դատական պրակտիկայի հիման վրա այնպես է ստացվել, որ անչափահաս տուժողը օրենքի կողմից ենթարկվել է տարիքային խտրականության և դարձել իրավագուրկ, ինչը ոչ միայն չի բխում երեխայի լավագույն շահերից և միջազգային փաստաթղթերով երեխաներին երաշխավորված իրավունքներից, այլև հակասում է ենթադրյալ հանցանք կատարած անձի իրավունքներին ու օրինական շահերին՝ մասնավոր մեղադրանքի գործերի հարուցման և կարճման համատեքստում:


Այդուհանդերձ, պետք է փաստել, որ ժամանակագրական առումով, Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշումից հետո, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումի

հիման վրա, ՀՀ սահմանադրական դատարանը, ստուգելով ՀՀ քր. դատ. օր.-ի 59-րդ հոդվածի 4-րդ մասի և 77-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, 2016թ. դեկտեմբերի 20-ի թիվ ՍԴՈ-1333 որոշման մեջ, վերլուծելով ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածը, ՀՀ քր. դատ. օր.-ի 59-րդ հոդվածի 4-րդ մասը, 77-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը, դրանք համադրելով միմյանց, ինչպես նաև միջազգային իրավական ակտերի հետ, նշեց հետևյալը. «(...) ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառ պրակտիկայում չպետք է փորձել երեխայի լսվելու իրավունքը պայմանավորել տարիքային սահմանափակումով, ինչն ուղղակիորեն առկա չէ վեճի առարկա հոդվածներում [քր. դատ. օր.-ի 59-րդ հոդվածի 4-րդ մաս, 77-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետ] և չի բխում Սահմանադրության 37-րդ հոդվածի պահանջներից: Վարույթն իրականացնող մարմինն է պարտավոր ապահովել երեխայի լսվելու իրավունքի իրացումը՝ անկախ տարիքից, հաշվի առնել այն և առաջնահերթ կարգով երեխայի շահերից ելնելով որոշում կայացնել: (...) [2] ի բացառվում այնպիսի հնարավոր իրավիճակներ, ինչպիսիք են, մասնավորապես, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակում հենց փոքրահասակի ծնողի հայտնվելը, որպիսի պարագայում փոքրահասակի մյուս ծնողն է հանդես գալիս որպես օրինական ներկայացուցիչ: Նման իրավիճակում ծնողների միջև հնարավոր հաշտությունը, կախված տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներից, կարող է բխել կամ չբխել երեխայի լավագույն շահերից: Վերջինիս գնահատման պարտականությունը վարույթն իրականացնող մարմնին է վերապահված (...)»:




Վերոգրյալ հանգամանքով պայմանավորված՝ կարող ենք արձանագրել, որ անչափահաս տուժողի (անկախ տարիքից) կողմից բողոք ունենալու կամ կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու հիմքով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը պետք է լուծվի՝ առաջնահերթ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը, այնուհետև՝ առկա մյուս շահերը, իսկ այդ շահերի հակասության դեպքում հանրային իշխանությունը պարտավոր է պաշտպանել երեխայի շահերը, իսկ դատական պրակտիկան պարտավոր է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման մեջ արտահայտած մոտեցումներով և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհատական լուծել կասկածյալի կամ մեղադրյալի հետ տուժողի հաշտվելու կամ բողոքի բացակայության հիմքով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու կամ վարույթը ընդհանուր կարգով շարունակելու հարցը, այլ ոչ թե՝ որպես կանոն: Նման մոտեցման արդյունքում կերաշխավորվեն ինչպես երեխայի իրավունքներն ու օրինական շահերը, այնպես էլ կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքներն ու օրինական շահերը, միաժամանակ կլուծվի սահմանափակ գործունակ տուժողի և նրա օրինական ներկայացուցչի իրավունքների իրացման հարցը, որի մասին նշեցինք վերևում:

Այլ կերպ ասած՝ պետք է բացառել երեխաների դեմ ուղղված և մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը a priori (նախապես որոշված) հանրային կարգով քննելու պրակտիկան և այդ փոխակերպումը (մասնավոր մեղադրանքը հանրային մեղադրանքի վերածումը) իրականացնել՝ ելնելով կոնկրետ գործի



հանգամանքներից և երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից: Դա կարող է պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով, օրինակ, ինչպես նշել է ՀՀ սահմանադրական դատարանը վերոնշյալ որոշման մեջ՝ հնարավոր է իրավիճակ, երբ մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործության վերաբերյալ գործով *կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակում հենց փոքրահասակի ծնողն է, որպիսի պարագայում փոքրահասակի մյուս ծնողն է հանդես գալիս որպես օրինական ներկայացուցիչ և նման իրավիճակում ծնողների միջև հնարավոր հաշտությունը կախված տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներից կարող է բխել կամ չբխել երեխայի լավագույն շահերից, ուստի փոխակերպման հարցը պետք է գնահատեն վարույթն իրականացնող մարմինները և պատճառաբանված որոշում կայացնեն այդ մասին:*

Օրենսդիրը մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի ընդհանուր կանոնից սահմանել է բացառություն՝ նշելով, որ անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելուց դատախազն իրավասու է մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործություններով հարուցելու քրեական գործ ընտանիքում բռնության դեպքերում, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Ընդ որում, օրենսդիրը նաև սահմանել է, որ այս դեպքում քրեական գործը հարուցվում և քննվում է ընդհանուր կարգով, և տուժողի ու մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը չի դադարեցվում (ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածի մաս 4-րդ):



Նկատենք, որ այս իրավակարգավորումների հիմքում ընկած են միջազգային չափանիշները, մասնավորապես՝ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի¹³ (Ստամբուլի կոնվենցիա) 48-րդ հոդվածով արգելվում են կանանց նկատմամբ բռնության դեպքերի հետ կապված վեճերի լուծման պարտադիր այլընտրանքային ընթացակարգերը: Դրանով պետություններից պահանջվում է միջոցառումներ ձեռնարկել *«սույն Կոնվենցիայի գործողության ոլորտում ընդգրկվող բռնության բոլոր ձևերի հետ կապված վեճերի լուծման պարտադիր այլընտրանքային ընթացակարգերն արգելելու համար, ներառյալ՝ միջնորդությունը և հաշտարարությունը»*: ԿՆԽՎԿ-ի՝ կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ թիվ 33 ընդհանուր հանձնարարականն ավելի խորությամբ է անդրադառնում հարցին և առաջարկում է պետություններին *«ապահովել, որ կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության դեպքերը ոչ մի պարագայում չլուծվեն վեճերի լուծման պարտադիր այլընտրանքային ընթացակարգերով»*¹⁴:

Ինչպես նկարագրվում է Բացատրական զեկույցում, ընտանեկան բռնությունից տուժած անձինք *«երբեք չեն կարող վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերին մասնակցել բռնություն գործադրած անձի հետ հավասար պայմաններով»* (Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույց, 252-րդ կետ):

¹³ <https://rm.coe.int/168046246d>


¹⁴ ԿՆԽՎԿ, Կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ թիվ 33 ընդհանուր հանձնարարական, ԿՆԽՎԿ/C/GC/33, 58-րդ կետի «գ» ենթակետ:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասը ևս սահմանում է, որ *«Հաշտեցում չի իրականացվում, եթե ընտանիքում բռնության ենթարկվածն անչափահաս կամ անգործունակ անձ է»*:

Վերոգրյալից հետևում է, որ յուրաքանչյուր դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված կանոնով առաջնորդվելու դեպքում պետք է մեկնաբանել «ընտանեկան բռնություն», «անօգնական վիճակ» և «ենթադրյալ հանցանք կատարած անձից կախյալ վիճակ» հասկացությունները, որպեսզի հնարավոր լինի կայացնել օրինական և հիմնավորված որոշում, որը ոչ միայն չի խախտի հանցանք կատարած անձի իրավունքներն ու օրինական շահերը, այլև կբխի երեխայի լավագույն շահերից:

Ընտանեկան բռնության հասկացությունը տրված է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» 2017թ. դեկտեմբերի 13-ին ընդունված ՀՀ օրենքում, որի 3-րդ հոդվածը սահմանում է, որ ընտանիքում բռնություն է համարվում սույն օրենքով սահմանված ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, ինչպես նաև անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև¹⁵:

¹⁵Այս հարցերը արդեն քննարկվել են առաջին դասի ընթացքում:




Իսկ նույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ընտանիքի անդամներ են՝

ա. անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեգավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները,

բ. բ. համատեղ բնակվող տատը, պապը, քույրը և եղբայրը (նաև համամայրը կամ համահայրը), ամուսնու քույրը, ամուսնու եղբայրը, ինչպես նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը:

Վերոնշյալ մոտեցումը համահունչ է Ստամբուլի կոնվենցիայի 3-րդ հոդվածում տրված «ընտանեկան բռնություն» հասկացությանը, որը՝ *«նշանակում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողությունները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև, անկախ նրանից, թե արդյոք կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում»*: Նույն հոդվածի համաձայն՝ *«ե. «զոհ» կամ «տուժող»՝ նշանակում է ցանկացած ֆիզիկական անձ, ով ենթարկվում է (ա) և (բ) կետերում նշված վարքագծի դրսևորման»*, *«գ. «կանայք»՝ ներառում է նաև 18 տարին չլրացած աղջիկներին»*:


Այսպիսով, մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործությունն «ընտանեկան բռնության» վերաբերյալ դեպք դիտելու համար պետք է



գնահատել ինչպես բուն արարքը, այնպես էլ այն անձանց շրջանակը, որոնց միջև կարող է առկա լինել ընտանեկան հարաբերություն՝ վերոնշյալ օրենքի իմաստով, ուստի, ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման հարցը յուրաքանչյուր անգամ պայմանավորված է կոնկրետ դեպքով, որի գնահատումը դատախազի բացառիկ իրավասության շրջանակներում է:

Անդրադառնալով «անօգնական վիճակ» և «ենթադրյալ հանցանք կատարած անձից կախյալ վիճակ» հասկացություններին, պետք է նկատել, որ միանշանակ բանաձև սահմանել հնարավոր չէ, քանի որ կախվածությունը կարող է լինել նյութական և ոչ նյութական, իսկ անօգնական վիճակը կարող է պայմանավորված լինել ինչպես տուժողի տարիքով, այնպես էլ հոգեկան հիվանդությամբ, ֆիզիկական, հոգեբանական կամ հոգեֆիզիոլոգիական հանգամանքներով, ուստի այն պետք է դատախազի կողմից գնահատվի կոնկրետ դեպքում և կոնկրետ գործի հանգամանքների համալիր վերլուծության հիման վրա:

Դատախազական վերոնշյալ գործառույթի կատարումը պատշաճ ապահովելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ դատախազների համար 2018թ. մշակվել է ուղեցույց: Համաձայն վերջինիս՝ (...) *հաղորդումը ստուգելու՝ ՀՀ քր. դատ. օր.-ով սահմանված գործողություններից բացի, անհրաժեշտ է հաղորդման ստուգման օրինականության նկատմամբ հսկողություն հրականացնող դատախազի կողմից ընտանիքում բռնության յուրաքանչյուր դեպքով կազմակերպել ենթադրյալ բռնությունից տուժած անձի ընդունելություն՝ հավաստիանալու նրա՝ անօգնական վիճակում գտնվելու*




կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու հանգամանքների առկայության հարցում: Ընդունելության կապակցությամբ սահմանված կարգով կազմել արձանագրություն՝ այն կցելով համապատասխան հսկողական վարույթին:

Ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի առկայությունը գնահատելու նպատակով ստուգել բռնության ենթարկվածի ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական կախվածության հնարավոր դրսևորումների առկայությունը (ենթադրյալ հանցանք կատարած անձի կողմից գոյատևման, բնակվելու, սնվելու, ինչպես նաև կրթություն ստանալու համար անհրաժեշտ նյութական միջոցների տրամադրման պայմաններում, ենթադրյալ բռնության ենթարկված ընտանիքի անդամի՝ չհաշտվելու պատճառով սպառնալիքների առկայություն):

Օրինակ՝ եթե բռնության է ենթարկվել երեխան ծնողի կողմից, իսկ վերջինս սպառնացել է բողոք ներկայացնելու դեպքում ապրուստի միջոց չտրամադրել:

Որպես անօգնական վիճակ պետք է դիտարկել յուրաքանչյուր իրավիճակ, որի պարագայում ենթադրյալ բռնության ենթարկվածը զրկված է իր իրավաչափ շահերն ինքնուրույն պաշտպանելու հնարավորությունից:

Օրինակ՝ ենթադրյալ բռնություն գործադրած ամուսնու ընտանիքի անդամները սպառնացել են բողոք չունենալու մասին քրեական հետապնդման մարմիններին դիմում չներկայացնելու դեպքում վատ վերաբերմունքի արժանացնել, կամ ենթադրյալ բռնություն գործադրած ընտանիքի անդամի՝ դեպքից



առաջ և հետո դրսևորած վարքագիծը վկայում է կրկին բռնություն գործադրելու հավանականության բարձր աստիճանի մասին:

Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված՝ կյանքի իրավունքի երաշխավորման՝ պետության պոզիտիվ պարտականության պատշաճ կատարման հրամայականից ելնելով, ընտանիքում բռնության ենթարկված անձի կյանքին կամ առողջությանը սպառնացող իրական և անմիջական վտանգի առկայության յուրաքանչյուր դեպքում վերջինիս վիճակը գնահատել որպես անօգնական:

Յուրաքանչյուր դեպքում, երբ ստուգման արդյունքում կպարզվի բռնության ենթարկվածի՝ անօգնական վիճակում գտնվելու կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստ, դատախազի՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված լիազորությունը համարել պարտադիր, այլ ոչ հայեցողական՝ հարուցման որոշման մեջ նշելով այդ փաստի ու փաստարկների մասին¹⁶:

Հաջորդ առանձնահատկությունը, որը սահմանված է անչափահաս տուժողի մասնակցությամբ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու կապակցությամբ, վերաբերում է հանցանք կատարած անձին վաղեմության ժամկետը լրանալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելուն:

¹⁶ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ 2018 թվականին դատախազների համար մշակված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասի կիրարկման ուղեցույց:

Քրեական օրենսդրությամբ (75-րդ հոդված), կապված արարքի բնույթից և հանրության համար վտանգավորության աստիճանից, նախատեսված են քրեական պատասխանատվության ենթարկելու տարբեր ժամկետներ, որոնց անցնելու դեպքում կատարված արարքը կորցնում է իր վտանգավորությունը, և անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից: Վերոգրյալի հիման վրա քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթն ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները¹⁷: Քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները լրացած լինելը քրեական գործով վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող ոչ արդարացնող (ոչ ռեաբիլիտացիոն) հիմք է¹⁸, իսկ ոչ ռեաբիլիտացիոն այս հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում կայացնելու դեպքում ոչ թե փաստվում է նրա անմեղությունը, այլ վերջինիս մեղավորության հարցը մնում է չլուծված, այսինքն՝ անձը ձեռք չի բերում արդարացվածի կարգավիճակ՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով (անձը չի օգտվում

¹⁷Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Ա.Սադաթեյանի վերաբերյալ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշումը:


¹⁸Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Ա.Բադդասարյանի վերաբերյալ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԴ/0009/11/13 որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով երաշխավորված արդարացվածի բոլոր իրավունքներից), ուստիև չեն բացառվում բացասական բնույթ ունեցող որոշ սոցիալ-իրավական հետևանքների առաջացումը (վնասի հատուցման պարտականություն, հետագայում աշխատանքի անցնելու խոչընդոտներ և այլն):

Նկատի ունենալով, որ այս դասի շրջանակում մենք քննարկում ենք քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հարցերը՝ անչափահաս տուժողի իրավունքների և օրինական շահերի ապահովման համատեքստում, ուստի կանդիդատնանք քննարկվող ինստիտուտն իրավական հիմքերին և ձևավորած դատական պրակտիկային հենց այս տեսանկյունից:

ՀՀ քր. օր.-ի 75-րդ հոդվածի 7-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ անչափահասների նկատմամբ կատարված որոշ խումբ հանցագործությունների վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է տուժողի տասնութ տարին լրանալու պահից: Դրանք են, մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ և 168-րդ հոդվածներով, ինչպես նաև անչափահաս տուժողի նկատմամբ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված 138-142-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունները, իսկ մնացածի դեպքում վաղեմության հարցը լուծվում է ընդհանուր կարգով¹⁹: Այս

¹⁹Այս լրացումը կատարվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2013 թվականի նոյեմբերի 12-ի թիվ ՀՕ-112-Ն օրենքով:



պահանջն իրավաչափ է և պայմանավորված է երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությամբ, ուստի, յուրաքանչյուր դեպքում վարույթն իրականացնող մարմինները հանցանքի կատարման վաղեմության ժամկետը լրանալու հիմքով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելիս պետք է ուշադրություն դարձնեն այն հանգամանքին, թե ինչ հանցանքի կատարման մեջ է մեղադրվում անձը և արդյոք տուժողը հասել է չափահասության տարիքին:

ՀՀ քրեական օրենսգրքի վերոնշյալ կարգավորումը համահունչ է միջազգային չափանիշներին: Մասնավորապես, «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» 2007թ. հոկտեմբերի 25-ի ԵԽ-ի կոնվենցիայի 33-րդ հոդվածը, որը վերնագրված է «Վաղեմության օրենքը», սահմանում է, որ «Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիայի 18-րդ հոդվածի²⁰, 19-րդ հոդվածի 1-ին

²⁰Հոդված 18 – Սեռական բռնություն՝ «1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ քրեական պատասխանատվություն սահմանելու հետևյալ միտումնավոր գործողությունների համար, ա) սեռական բնույթի գործողություններով զբաղվելը երեխայի հետ, որը, համաձայն ազգային օրենսդրության համապատասխան դրույթների, դեռևս չի հասել օրենքով սահմանված տարիքի նման գործողություններով զբաղվելու համար, բ) երեխայի հետ սեռական բնույթի գործողություններով զբաղվելը, երբ՝ - կիրառվում են հարկադրանք, ուժ կամ սպառնալիքներ, կամ - տեղ է գտնում երեխայի նկատմամբ ունեցած վստահության, իշխանության կամ ազդեցության չարաշահում, այդ թվում և ընտանիքի ներսում, կամ - չարաշահվում է երեխայի առանձնապես անպաշտպան վիճակը, մասնավորապես սահմանափակ մտավոր կամ ֆիզիկական ունակությունների կամ կախվածության մեջ գտնվելու հանգամանքներում: (...)»:

կետի (ա) և (բ) ենթակետերի²¹, 21-րդ հոդվածի 1-ին կետի (ա) և (բ) ենթակետերի²² համաձայն սահմանված հանցագործությունների նկատմամբ հետաքննություններ հարուցելու վաղեմության օրենքը բավարար ժամկետ սահմանի տուժածի կողմից չափահաս դառնալուց հետո արդյունավետ հետաքննություն նախաձեռնելու համար, և որպեսզի այն համաչափ լինի գործած հանցանքի ծանրությանը»:

Ըստ 3-րդ հոդվածի, Կոնվենցիայի նպատակների համար՝

- ա. «Երեխա» նշանակում է ցանկացած անձ, ում 18 տարին դեռևս չի լրացել,
- բ. «Երեխաների սեռական շահագործումը և նրանց հանդեպ սեռական բռնությունը» ներառում են սույն Կոնվենցիայի 18-23 հոդվածներում բերված գործողությունները,

²¹Հոդված 19 – Հանցագործություններ, կապված մանկական մարմնավաճառության հետ՝ 1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ քրեական պատասխանատվություն սահմանելու հետևյալ միտումնավոր գործողությունների համար, ա) մարմնավաճառությամբ զբաղվելու մեջ երեխային ներգրավելը կամ նրան դրդելը՝ զբաղվելու մարմնավաճառությամբ, բ) երեխային հարկադրելը զբաղվելու մարմնավաճառությամբ կամ դրանից օգուտ քաղելը կամ այդ նպատակով երեխային այլ կերպ շահագործելը,


²²Հոդված 21 – Հանցագործություններ, կապված պոռնոգրաֆիկ ներկայացումներում երեխայի մասնակցության հետ՝ 1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ քրեական պատասխանատվություն սահմանելու հետևյալ միտումնավոր գործողությունների համար, ա) պոռնոգրաֆիկ ներկայացումների մեջ երեխային ներգրավելը կամ նրան դրդելը մասնակցել սման ներկայացումներին, բ) երեխային հարկադրելը մասնակցել պոռնոգրաֆիկ ներկայացումներին կամ դրանից օգուտ քաղելը կամ այդ նպատակներով երեխային այլ կերպ շահագործելը:

գ. «տուժած» նշանակում է սեռական շահագործման կամ սեռական բռնության ենթարկված երեխա:

Նկատենք, որ գործնականում հանդիպում են դեպքեր, երբ դատարաններ խախտում են թույլ տալիս և անտեսելով ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի կարգավորումը՝ կարծում են քրեական գործի վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը: Օրինակ, քրեական գործերից մեկով, որը վերաբերում էր անչափահասի կողմից անչափահաս տուժողի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարմանը՝ դատարանը վաղեմության ժամկետի անցած լինելու հիմքով որոշում էր կայացրել քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, սակայն վաղեմության ժամկետի հաշվարկը սխալ էր իրականացրել, քանի որ տուժողը դեռևս 15 տարեկան էր, ընդ որում՝ դատախազն առաջին ատյանի դատարանում չէր առարկել նշված հիմքով վաղեմություն կիրառելու դեմ, սակայն հետագայում բողոքարկել էր դատական ակտը, որը բավարարվել էր և գործն ուղարկվել էր նոր քննության առաջին ատյանի դատարան:


Վերոգրյալ առանձնահատկությունից զատ, որևէ այլ տարբերակված մոտեցում առկա չէ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հարցում այն դեպքում, երբ հանցագործությունից տուժողը անչափահաս է:

Առհասարակ տուժողի իրավունքների և օրինական շահերի ապահովման առումով առկա է որոշակի խնդիր ՀՀ քրեական դատավարության



օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասում սահմանված այն պայմանի մեկնաբանման և կիրառման հարցում, ըստ որի նույն հոդվածի առաջին մասի 6-րդ կետում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով:

Խնդիրը վերաբերում է նրան, որ ՀՀ վճռաբեկ դատարանը Ա.Սադաթեյանի գործով որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) [Ք]րեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակումը ընդհանուր կարգով: Ինչպես երևում է նշված արգելքը սահմանող իրավանորմի վերլուծությունից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի կիրառման համար ենթադրյալ իրավախախտում կատարած անձի համաձայնությունն անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ քրեական գործն արդեն իսկ հարուցված է, և անձը ներգրավվել է որպես մեղադրյալ, այսինքն՝ նրա նկատմամբ սկսվել է քրեական հետապնդում: Բոլոր այն դեպքերում, երբ քրեական գործը դեռ հարուցված չէ, կամ քրեական գործը հարուցվել է, սակայն որևէ անձի մեղադրանք չի առաջադրվել, և անցել են վաղեմության ժամկետները, ապա ենթադրյալ իրավախախտում կատարած անձի համաձայնությունն անհրաժեշտ չէ, և մինչդատական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է իր նախաձեռնությամբ հրաժարվել քրեական գործ հարուցելուց կամ որոշում կայացնել հարուցված քրեական գործի վարույթը կարճելու




մասին: Այլ կերպ՝ քրեական պատասխանատվության ենթարկելու ժամկետներն անցած լինելն ինքնին բացառում է քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը՝ անկախ ենթադրյալ իրավախախտում կատարած անձի համաձայնությունից կամ առարկությունից. համաձայնության հարցն առաջ է գալիս միայն կոնկրետ անձի նկատմամբ քրեական հետապնդում սկսելուց՝ նրան մեղադրանք առաջադրելուց հետո»²³:

Արդյունքում ձևավորվել է այնպիսի իրավակիրառական պրակտիկա, որ վաղեմության ժամկետը կիրառվում է «դեպքի/արարքի» նկատմամբ, ոչ թե «անձի», և որոշում է կայացվում քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ առանց անձին պարզելու: Ընդհանուր առմամբ համաձայնելով ՀՀ վճռաբեկ դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումների հետ՝ այդուհանդերձ գտնում ենք, որ այդ դիրքորոշումներն ունեն որոշակի ներքին հակասություն և չեն բխում ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածների տրամաբանությունից և եությունից²⁴:


²³Տե՛ս Ա. Սաղաթելյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշման 24-րդ կետը:

²⁴Քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու դատավարական այլ առանձնահատկությունների մասին տե՛ս Ս.Ղամբարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշումը, Հ.Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ՇԴ/0172/01/12 որոշումը, Ա.Բաղդասարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԶԴ/0009/11/13 որոշումը, Հ.Մազմանյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14 որոշումը և այլն:

Բանն այն է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում թվարկված քրեական գործով վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանքներից որոշները վերաբերում են դեպքի/արարքի (in rem), իսկ որոշներն՝ անձին (in personam), որով էլ պայմանավորված այդ հոդվածի 1-ին մասում նշված որոշումները կայացվում են կամ դեպքի/արարքի (in rem) առթիվ կամ անձի (in personam) նկատմամբ: Այլ կերպ ասած՝ քրեական գործ և քրեական հետապնդում չհարուցելու, իսկ հարուցված լինելու դեպքում՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և/կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կարող է կայացվել ինչպես անձի նկատմամբ (in personam), այնպես էլ դեպքի/արարքի (in rem) առթիվ: Քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելը վերաբերում է քրեական գործով վարույթը և քրեական հետապնդումը բացառող in personam (անձին վերաբերող) հիմքերին, քանի որ այն միշտ կայացվում է կոնկրետ անձի նկատմամբ, այլ ոչ թե դեպքի/արարքի առթիվ, ինչը նշանակում է, որ եթե անձը հայտնի չէ, ապա խոսք լինել չի կարող քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրացած լինելու, ինչպես նաև այդ հիմքով քրեական գործ և քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշում կայացնելու հնարավորության մասին: Հակառակ դեպքում անհասկանալի է մնում այն, թե նման որոշման կայացմամբ իրավասու մարմինները կամ պաշտոնատար անձինք ում են ազատում քրեական պատասխանատվությունից: Այլ կերպ ասած՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելը,




հանդիսանալով քրեական հետապնդումը բացառող
 ոչ արդարացնող (ոչ ռեաբիլիտացիոն) հիմք, միշտ
 վերաբերում է կոնկրետ անձին (in personam հիմք
 է), այլ ոչ թե դեպքին/արարքին, քանի որ «քրեական
 պատասխանատվության ենթարկելու վաղեմության
 ժամկետը» քրեաիրավական ինստիտուտ է և
 լուծում է կոնկրետ հանցանքը կատարած անձին
 քրեական պատասխանատվությունից ազատելու
 հարցը (ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդված):
 Հետևաբար, քրեական դատավարությունում այն
 չի կարող մեկնաբանվել և կիրառվել այնպես, որ
 վաղեմության ժամկետն անցած լինելը վերագրվի
 դեպքին/արարքին, ոչ թե անձին, և որոշում
 կայացվի դեպքի/արարքի առթիվ, ոչ թե անձի
 նկատմամբ: Նման դեպքերում կստացվի այնպես, որ
 տեղի կունենա ինստիտուտի էության փոփոխություն,
 որը կառաջացնի խառնաշփոթ, հետևաբար նաև
 իրավաչափ հարց կառաջանա, թե ոչ արդարացնող
 հիմքն ում է վերաբերելու և ինչ հետևանքներ
 է առաջացնելու նրա համար: Ի վերջո, քրեական
 գործով վարույթը և քրեական հետապնդումը
 բացառող հանգամանքներն արդարացնողի և ոչ
 արդարացնողի դասակարգելու հիմքում էլ ընկած է
 այն հանգամանքը, որ այն կոնկրետ անձանց համար
 է իրավական հետևանք առաջացնում: Ինչպես
 իրավագիտրեն նշել է ՀՀ վճռաբեկ դատարանը,
 ենթադրյալ հանցանք կատարած անձանց համար
 այն առաջացում է բացասական բնույթ ունեցող
 որոշ սոցիալ-իրավական հետևանքներ (*վնասի
 հատուցման պարտականություն, հետագայում
 աշխատանքի անցնելու խոչընդոտներ և այլն*),
 ուստի օրենսդիրը դրա համար է սահմանել
 կանոն առ այն, որ պետք է ճշտել այն անձի
 դիրքորոշումը, ում համար այն կարող է նման




բացասական հետևանքներ առաջացնել: Այստեղ չենք անդրադառնում այն հարցին, որ Օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասում օրենսդիրն ուղղակիորեն նշում է մեղադրյալ սուբյեկտին, քանի որ իրավունքի զարգացման արդի պայմաններում մեղադրյալ դատավարական սուբյեկտին հավասարեցվում են նաև փաստացի մեղադրվողները, ինչն անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից էական տարբերություն չի դնում մեղադրյալի կամ փաստացի մեղադրյալի կարգավիճակում գտնվող անձի միջև, ինչպես իրավացիորեն նշել է ՀՀ վճռաբեկ դատարանը Հ.Մազմանյանի վերաբերյալ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14 որոշման մեջ, հետևաբար այդ հիմքով կարելի է ազատել քրեական պատասխանատվությունից նաև փաստացի քրեական հետապնդման ենթարկվող անձին:

Հետևաբար կարելի է փաստել, որ եթե ենթադրյալ հանցագործությունը կատարած անձը հայտնի չէ, ապա խոսք լինել չի կարող քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական գործ չհարուցելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին, ինչպես բխում է ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներից և մասնավորապես Ա.Սադաթեյանի վերաբերյալ որոշումից: Այսինքն, վերանայման կարիք ունի ՀՀ վճռաբեկ դատարանի այն մոտեցումը, որը հնարավոր է համարում առանց ենթադրյալ հանցագործությունը կատարած անձի հայտնի լինելու կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված՝ քրեական պատասխանատվության ենթարկելու




վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքը, և կայացնելու քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում: Այս հետևությունը հիմնավորվում է նաև այն փաստարկով, որ հնարավոր է նաև վաղեմության ժամկետի ընդհատում տեղի ունեցած լինի, որը կարող է պարզվել, եթե անձը հայտնի է լինում: Այլ կերպ ասած՝ մենք համամիտ չենք այն մեկնաբանությանը, որ եթե անձը կարգավիճակ չունի, ապա չպետք է նրա դիրքորոշումը ճշտել քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանալու հիմքով համապատասխան որոշում կայացնելիս, քանի որ ՀՀ քր. դատ. օր.-ի տրամաբանությունը ոչ թե նրանում է, որ միայն կարգավիճակ ունեցող անձից (օրենքում խոսվում է բացառապես մեղադրյալի մասին) պետք է դիրքորոշում ճշտել, այլ նրանում, որ պետք է առնվազն բացահայտված լինի այն ենթադրյալ հանցանք կատարած անձը (փաստացի մեղադրվողը), որի վերաբերյալ հնարավոր է կայացնել ոչ արդարացնող հիմքով քրեական գործ և քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշում, այլ ոչ թե նրանում, որ կարելի է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետ կիրառել դեպքի/փաստի նկատմամբ: Հակառակ մեկնաբանությունը ոչ միայն հակասում է ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածին, այլև չի բխում տուժողի (փաստացի տուժածի) իրավունքներից ու օրինական շահերից, քանի որ տուժողը նման որոշում կայացնելու արդյունքում հնարավորություն չի ունենա այդ որոշմամբ հաստատված որևէ փաստական հանգամանք վկայակոչելու կոնկրետ անձի դեմ հայց հարուցելու դեպքում իր քաղաքացիաիրավական պահանջները հիմնավորելու համար:



Ինչպես երևում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունից՝ քննարկվող ինստիտուտը Դատարանը մեկնաբանել է՝ հիմք ընդունելով ենթադրյալ հանցանք կատարած անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գաղափարախոսությունը, որը հաճախ վտանգում է տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, հետևաբար պետք է այս ինստիտուտի կիրառումը դիտարկել նաև տուժողի իրավունքների ու օրինական շահերի տեսանկյունից: Ի վերջո, ոչ արդարացնող (ոչ ռեաբիլիտացիոն) հիմքով քրեական գործ չհարուցելու դեպքում, երբ այն չի կայացվում կոնկրետ անձի նկատմամբ, այլ կայացվում է դեպքի առթիվ, տուժողի իրավունքների պաշտպանությունը դառնում է անհնար, կամ առնվազն բարդանում է: Մինչդեռ, տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից այդ որոշումը կարող է կարևոր ապացուցողական նշանակություն ունենալ քաղաքացիական դատավարության կարգով կոնկրետ անձի դեմ հայց հարուցելու դեպքում:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ առանց ենթադրյալ հանցանք կատարած անձին ի հայտ բերելու և նրա դիրքորոշումը ճշտելու չի կարող քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով որոշում կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական գործով վարույթը կարճելու մասին:






Լրացուցիչ մեդիա-նյութերը
նախատեսված են Ձեզ
հետաքրքրող նյութի մասին
հավելյալ գիտելիքներ
ստանալու համար:

1. Մարաբյան Ս., Քրեական դատավարության պարզեցման հիմնախնդիրները (գիտագործնական ձեռնարկ) Հեղ. խումբ: Երևան, 2011 // <http://ghambaryan.am/wp-content/uploads/2016/03/%D5%A1%D6%80%D5%A6%D5%A5%D6%81%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf>
2. ՀՀ վճռաբեկ դատարանի Ա. Բաղդասարովի վերաբերյալ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԱՎԴ4/0028/01/15 որոշումը,
3. ՀՀ վճռաբեկ դատարանի Տ.Առաքելյանի վերաբերյալ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱԶԴ/0217/01/14 որոշումը,
4. ՀՀ վճռաբեկ դատարանի Ա. Սարգսյանի վերաբերյալ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշումը,
5. ՀՀ վճռաբեկ դատարանի Ա.Սաղաթելյանի վերաբերյալ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշումը,
6. ՀՀ վճռաբեկ դատարանի Ա.Բաղդասարյանի վերաբերյալ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԶԴ/0009/11/13 որոշումը,
7. ՀՀ վճռաբեկ դատարանի Ս.Ղամբարյանի և այլոց վերաբերյալ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշումը,

8. ՀՀ վճռաբեկ դատարանի Հ.Սարգսյանի 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ՇԴ/0172/01/12 որոշումը,
9. ՀՀ վճռաբեկ դատարանի Հ.Մազմանյանի վերաբերյալ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14 որոշումը,
10. «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա // <https://rm.coe.int/168046246d>:



Հանցանք կատարած անձի համար հաշտություն

Հանցանքի կատարման մեջ իրեն մեղավոր ճանաչելն է, այդ արարքի համար զղջալը, ափսոսանք հայտնելը, իսկ տուժողի համար՝ հանցանք կատարած անձին ներելը:

Հաշտություն

Տուժողի և ենթադրյալ հանցագործի կամավոր և փոխադարձ համաձայնությունն է միմյանց հետ հաշտվելու վերաբերյալ: Այսինքն՝ հաշտությունը պետք է լինի ինչպես գործողություն, այնպես էլ փոխադարձ գործողությունների արդյունք:

Հաշտության կամավոր բնույթ

Հաշտվելու վերաբերյալ կողմերի ինքնուրույն և ազատ կամահայտնությունն է:

Հաշտության փոխադարձ բնույթ

Նշանակում է, որ կողմերից երկուսն էլ պետք է հայտարարեն հաշտության մասին:

Ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինել

Ենթադրյալ հանցանք կատարած անձի կողմից գոյատևման, բնակվելու, սնվելու, ինչպես նաև



Ուշադրությամբ ծանոթացե՛ք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձե՛ք դրանց:



Մինչև 15 րոպե

կրթությունն ստանալու համար անհրաժեշտ նյութական միջոցների տրամադրման պայմաններում, ենթադրյալ բռնության ենթարկված ընտանիքի անդամի՝ չհաշտվելու պատճառով սպառնալիքների առկայություն:

Անօգնական վիճակ

Այն իրավիճակներն են, որոնց պարագայում ենթադրյալ բռնության ենթարկվածը զրկված է իր իրավաչափ շահերն ինքնուրույն պաշտպանելու հնարավորությունից:

Ընտանիքի անդամներ

ա. Անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեգավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները,

բ. համատեղ բնակվող տատը, պապը, քույրը և եղբայրը (նաև համամայրը կամ համահայրը), ամուսնու քույրը, ամուսնու եղբայրը, ինչպես նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը:

Հարց 1.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված քրեական գործով վարույթը և քրեական հետապնդումը բացառող հիմքի կիրառման համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները՝

- ա. Առկա է մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդում (անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք) և տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ:
- բ. Առկա է մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդում (անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք) և բացակայում է տուժողի բողոքը կասկածյալին կամ մեղադրյալին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին:
- գ. Առկա է մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդում (անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք), տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ և առկա է հարուցված քրեական գործ:
- դ. Բոլոր պատասխանները ճիշտ են:

Հարց 2.

ՀՀ քրեական դատավարության 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված քրեական



Ընտրել ճիշտ տարբերակը:
Ընտրությունը կատարվում
է համապատասխան
հարցերի համար նախա-
տեսված պատասխանների
ճիշտ տարբերակի տառը
սշեղյու միջոցով:



Մինչև 40 րոպե


գործով վարույթը և քրեական հետապնդումը բացառող հիմքի կիրառման համար անհրաժեշտ են հետևյալ պայմանների առկայությունը՝

- ա. Առկա է մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդում (անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք) և տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ:
- բ. Առկա է մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդում (անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք) և բացակայում է տուժողի բողոքը կասկածյալին կամ մեղադրյալին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին:
- գ. Առկա է մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդում (անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք), տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ և առկա է հարուցված քրեական գործ:
- դ. Ե՛վ «բ» և՛ «գ» պատասխաններում նշված դեպքերում:

Հարց 3.

Անչափահաս տուժողի օրինական ներկայացուցիչն իրավունք ունի տուժողի փոխարեն հաշտվել կասկածյալի կամ մեղադրյալի հետ, եթե՝

- ա. Տուժողը մինչև 14 տարեկան երեխա է:
- բ. Տուժողը անգործունակ է:
- գ. Տուժողը սահմանափակ գործունակ է:
- դ. Չունի նման իրավունք:



Հարց 4.

Անգործունակ տուժողի օրինական ներկայացուցիչն իրավունք ունի՝

- ա. իր կողմից ներկայացվող անգործունակ տուժողի փոխարեն հաշտվել կասկածյալի կամ մեղադրյալի հետ:
- բ. իմանալ իր կողմից ներկայացվող անգործունակ տուժողի մտադրության մասին՝ հաշտվելու կասկածյալի կամ մեղադրյալի հետ:
- գ. Հետ վերցնել իր կողմից ներկայացվող անգործունակ տուժողի բողոքը՝ կասկածյալին կամ մեղադրյալին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին:
- դ. Բոլոր պատասխանները սխալ են:


Հարց 5.

Սահմանափակ գործունակ տուժողի օրինական ներկայացուցիչն իրավունք ունի՝

- ա. Հաշտվել կասկածյալի կամ մեղադրյալի հետ:
- բ. իմանալ իր կողմից ներկայացվող սահմանափակ գործունակ տուժողի մտադրության մասին՝ հաշտվելու կասկածյալի կամ մեղադրյալի հետ:
- գ. Համաձայնվել կամ չհամաձայնվել իր կողմից ներկայացվող անձի հաշտվելու կամ չհաշտվելու մասին դիրքորոշմանը:
- դ. «բ» և «գ» տարբերակները:

Հարց 6.

2019 թվականի հոկտեմբերի 10-ին Հ-ն իրեն պատկանող տաքսի ավտոմեքենայով վրաերթի է




ենթարկում 15 տարեկան Մ-ին, որից հետո անհապաղ հասցնում է հիվանդանոց: Նշանակված դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ հաստատվում է, որ երեխայի առողջությանը պատճառված վնասը միջին ծանրության է:

Ոստիկանության տեսուչը բացատրություն է վերցնում երեխայի ծնողից՝ Ա-ից, ով նշել է հետևյալը. *«Հանդիսանալով Մ-ի ծնողը՝ հայտնում եմ, որ բողոքում եմ Մ-ին վրաերթի ենթարկող վարորդի դեմ, ցանկանում եմ, որ վրաերթի ենթարկող վարորդն ենթարկվի քրեական պատասխանատվության, քանի որ չի հատուցել երեխայի բուժման ծախսերը, որևէ նյութական աջակցություն չի ցուցաբերել մեր ընտանիքին»:*

Ոստիկանության տեսուչ Գ-ն որոշում է կայացնում դեպքի առթիվ հարուցել քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով և գործն ուղարկել նախաքննություն կատարելու նպատակով քննիչին, որից հետո նախաքննության մարմինն Ա-ին մեղադրանք է առաջադրում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով և խափանման միջոց ընտրում ստորագրություն չհեռանալու մասին:

Դրանից հետո անչափահաս տուժողի և նրա օրինական ներկայացուցիչ ճանաչված Ա-ի կողմից միջնորդություն է ներկայացվում նախաքննության մարմնին առ այն, որ նրանք այլևս բողոք պահանջ չունեն վարորդ Մ-ի դեմ, քանի որ նա հատուցել է իրենց պատճառված նյութական վնասը, իրենք հաշտվել են և չեն ցանկանում, որպեսզի վարորդն ենթարկվի քրեական պատասխանատվության, ուստի խնդրում են քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել:



Քննիչը մերժում է անչափահաս տուժողի և նրա օրինական ներկայացուցչի միջնորդությունը՝ նշելով հետևյալը. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մ-ն անչափահաս է՝ 15 տարեկան, ինչի հետևանքով չի կարող հայտնել իր կամարտահայտությունը բողոքի վերաբերյալ, ուստի նման իրավիճակում քրեական գործով վարույթը պետք է իրականացվի հանրային մեղադրանքի գործերի համար սահմանված ընդհանուր կարգով, ուստի միջնորդությունն ենթակա է մերժման»:


Իրավաչափ են արդյոք քննիչի պատճառաբանությունները.

ա. Այո, քանի որ տուժողի անչափահաս լինելու դեպքում նա չի կարող հաշտվել մեղադրյալի հետ, իսկ նրա օրինական ներկայացուցիչը չունի նման իրավունք, ուստի քրեական գործով վարույթը պետք է իրականացվի հանրային մեղադրանքի գործերի համար սահմանված ընդհանուր կարգով:

բ. Այո, քանի որ տուժողի անչափահաս լինելու դեպքում քրեական գործերի վարույթն իրականացվում է հանրային մեղադրանքի կարգով՝ անկախ տուժողի տարիքից:

գ. Ոչ, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում մասնավոր մեղադրանքի գործերը հանրային մեղադրանքի փոխակերպումը վերաբերելի է բացառապես ընտանեկան բռնության դեպքերին (հոդված 183-րդ, մաս 4-րդ), մինչդեռ սույն գործը չի վերաբերում ընտանեկան բռնությանը, ուստի անկախ տուժողի տարիքից հաշտությունը պետք է հիմք հանդիսանա քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար:

դ. Ոչ, քանի որ սահմանափակ գործունակ



տուժողն իրավունք ունի հաշտվելու կասկածյալի կամ մեղադրյալի հետ, իսկ նրա օրինական ներկայացուցիչը համաձայնվելու կամ չհամաձայնվելու, իսկ հաշտության հիմքով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումը պետք է կայացնել ելնելով երեխայի լավագույն շահերից և կոնկրետ գործի հանգամանքներից:


Հարց 7.

Ո՞ր դեպքերում է մասնավոր մեղադրանքի կարգով քննության ենթակա հանցագործության վերաբերյալ քրեական գործը քննվում հանրային մեղադրանքի կարգով՝

- ա. երբ տուժողն անչափահաս է և անհրաժեշտություն կա պաշտպանելու նրա իրավաչափ շահերը:
- բ. երբ քրեական գործ հարուցելու մասին որոշումը կայացրել է դատախազը՝ ելնելով երեխայի լավագույն շահերն ապահովելու անհրաժեշտությունից:
- գ. երբ քրեական գործը վերաբերում է ընտանիքում բռնության դեպքերին և անչափահաս տուժողն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:
- դ. «ա» և «գ» կետերում նախատեսված դեպքերում:

Հարց 8.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կանոնի կիրառմամբ մասնավոր մեղադրանքի




գործը ընդհանուր կարգով հարուցելու և քննելու համար անհրաժեշտ են հետևյալ պայմանների առկայությունը՝

- ա. Ընտանիքում բռնության դեպքերում, երբ անձը, ում իրավունքները խախտվել են, իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը:
- բ. Ընտանիքում բռնության դեպքերում, երբ անչափահասի նկատմամբ ենթադրյալ հանցագործությունը կատարել է նրա ծնողներից մեկը, իսկ մյուսը չի բողոքում:
- գ. Ընտանիքում բռնության դեպքերում, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:
- դ. Բոլոր պատասխանները ճիշտ են:

Հարց 9.

Հակոբ Խաչատրյանին (ծնված՝ 01.01.2001թ.-ին) մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա 2017թ.-ի հունվարի 10-ի ժամը 01:00-ից մինչև 2016թ.-ի հունվարի 13-ը՝ ժամը 13:30-ն ընկած ժամանակահատվածում «Ֆեյսբուկ» սոցիալական կայքի «Վիկտորիա Մուրադյան», ապա «Վիկտորիա Սինկևիչ» վերտառությամբ անձնական էջի միջոցով գրագրություն ունենալով Արուսյակ Հովհաննիսյանի (ծնված՝ 20.10.2003թ.-ին) հետ, ստացել է վերջինիս մերկ լուսանկարները, որից հետո շանտաժի միջոցով՝ սպառնալով Ա.Հովհաննիսյանի «Ֆեյսբուկյան»




ընկերների շրջանում տարածել նրա մերկ լուսանկարները, ստիպել է 2016թ.-ի հունվարի 13-ին՝ ժամը 13:30-ին հանդիպել Երևան քաղաքի մետրոյի «Սասունցի Դավիթ» կայարանում՝ լուսանկարները չիրապարակելու դիմաց հարկադրաբար սեռական հարաբերություն ունենալու համար:

Քրեական գործը 2019 թվականի հունվարի 20-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

07.02.2019 թվականի դատական նիստում Պաշտպանը և ամբաստանյալը միջնորդություն են ներկայացնում վաղեմության ժամկետը լրանալու հիմքով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

Առաջին ատյանի դատարանը, նկատի ունենալով, որ Հակոբ Խաչատրյանին մեղսագրվում է միջին ծանրության հանցագործություն և նրան վերագրվող արարքի վաղեմության ժամկետը կրճատվում է կիսով չափ (ՀՀ քր. օր.-ի 95-րդ հոդված), քանի որ անչափահաս տարիքում է կատարել հանցագործությունը, իսկ կատարված հանցագործությունն ավարտված համարելու օրվանից անցել է կեսը՝ 2 տարի 6 ամիս ժամանակ, ինչպես նաև Հակոբ Խաչատրյանը չի առարկում վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով իր վերաբերյալ քրեական գործի կարճման ու քրեական հետապնդման դադարեցման դեմ, ուստի դատարանը գտնում է, որ պետք է քրեական գործի վարույթը կարճել և Հակոբ Խաչատրյանի նկատմամբ




քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Իրավաչափ է արդյոք դատարանի որոշումը՝

ա. Այո, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասը հանդիսանում է միջին ծանրության հանցագործություն, իսկ մինչև տասնուլթ տարին լրանալը հանցանք կատարած անձին վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելիս քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետները համապատասխանաբար կրճատվում են կիսով չափ, որպիսին արդեն լրացել է, ամբաստանյալն էլ չի առարկել, որպես վաղեմություն կիրառվի իր նկատմամբ, ուստի դատարանը կայացրել է իրավաչափ որոշում:

բ. Ոչ, քանի որ անչափահաս տուժողի նկատմամբ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցանք կատարած անձի նկատմամբ վաղեմության ժամկետի հաշվարկը սկսվում է տուժողի տասնուլթ տարին լրանալու պահից:

գ. Այո, քանի որ ՀՀ քր. օր.-ի 75-րդ հոդվածի 7-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ անչափահաս տուժողի նկատմամբ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված




հանցանք կատարած անձի նկատմամբ վաղեմության ժամկետի հաշվարկը սկսվում է տուժողի տասնութ տարին լրանալու պահից, եթե հանցագործության կատարման մեջ կասկածվողը կամ մեղադրվողը անչափահաս չէ:

դ. Ոչ, քանի որ ՀՀ քր. օր.-ի 75-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ անչափահաս տուժողի նկատմամբ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցանք կատարած անձի նկատմամբ վաղեմության ժամկետ կիրառելի չէ:

Հարց 10.

16 ամյա Ա-ի նկատմամբ 2010 թվականի հունվարի 10-ին անհայտ անձի կողմից կատարվում է ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն (Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), որի առթիվ հարուցվում է քրեական գործ և իրականացվում նախաքննություն: 2020 թվականի հունվարի 12-ին նախաքննության մարմինը, հիմք ընդունելով Ա.Սաղաթեյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորած այն դիրքորոշումը, որ «Բոլոր այն դեպքերում, ... երբ քրեական գործը հարուցվել է, սակայն որևէ անձի մեղադրանք չի առաջադրվել, և անցել են վաղեմության ժամկետները, ապա ենթադրյալ իրավախախտում կատարած անձի համաձայնությունն անհրաժեշտ չէ», որոշում է




կայացնում քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի մասով նախատեսված հանցագործությունը միջին ծանրության է, որի համար նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը հինգ տարի է՝ հանցանքն ավարտված համարելու օրվանից, իսկ սույն գործով դեպքից անցել է 10 տարի: Քննիչը նաև նշում է, որ եթե անգամ հիմք ընդունենք այն փաստը, որ վաղեմության ժամկետի ընթացքը կասեցված է եղել անձի քննությունից խուսափելու հիմքով, ապա միևնույն է քրեական գործով վարույթն ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը դադարեցման, քանի որ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է տասը տարի և վաղեմության ժամկետն ընդհատված չի եղել (75-րդ հոդված, մաս 4-րդ):

Իրավաչափ է արդյոք քննիչի որոշումը՝

ա. Այո, քանի որ այն ուղղակիորեն հիմնված է Ա.Սադաթեյանի վերաբերյալ որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորած իրավական դիրքորոշումների վրա:


բ. Այո, քանի որ բոլոր դեպքերում անցել են վաղեմության ժամկետները, իսկ հանցանքի կատարման մեջ կասկածվող անձը հայտնի չէ, որպեսզի նրանից հնարավոր լինի ճշտել առարկելու կամ չառարկելու վերաբերյալ դիրքորոշումը:

գ. Ոչ, քանի որ վաղեմության ժամկետը կիրառվում է անձի նկատմամբ, այլ ոչ թե դեպքի/արարքի,



ուստի առանց անձի հայտնի լինելու վաղեմության
ժամկետը չպետք է կիրառվի:

դ. Ոչ, քանի որ ՀՀ քր. օր.-ի 75-րդ հոդվածի
7-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ
անչափահաս տուժողի դեմ ուղղված հանցանք
կատարած անձի նկատմամբ վաղեմության
ժամկետի հաշվարկը սկսվում է տուժողի տասնութ
տարին լրանալու պահից:



ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈԼՈՒՄ

Այս դասի (մոտիվացնող
ներածական տեսանյութ+դասի
տեքստ+բառարան+ինքնաստուգիչ հարցեր)
յուրացման համար անհրաժեշտ է
240 րոպե / 4 ժամ:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի
կայքի հեռաուսուցման բաժնում):

ՀՀ քր. դատ. օր.-ի կանոնակարգումները ցույց են տալիս, որ քրեական դատավարության ձևի որևէ տարբերակում և վարույթի հատուկ կարգ սահմանված չէ՝ ելնելով տուժողի կամ վկայի անչափահաս լինելու հանգամանքից, բացառությամբ առանձին քննչական և դատավարական գործողությունների կատարմանը մասնավարժի մասնակցության, ինչպես նաև իրենց իրավունքներն ու օրինական շահերն օրինական ներկայացուցչի միջոցով ներկայացնելու կանոնների, որոնց մասին արդեն նշեցինք:

Ընդհանրապես, քրեական դատավարության զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ քրեական դատավարության նպատակներն ավանդաբար ձևավորվել են պետության և հանցագործություն կատարած անձի միջև հարաբերությունների համատեքստում, ինչի պատճառով այդ համակարգի գործունեությունը հաճախ բարդացնում է տուժողի մոտ ծագող խնդիրները, այլ ոչ թե նպաստում է դրանց լուծմանը, մինչդեռ, ինչպես ուղղակիորեն նշված է «Տուժողի դերը քրեական իրավունքի և



Մինչև 10 րոպե

Ուշադրությամբ
կարդացե՛ք
տեքստը (օգտվելով
բառարանից) և
այն յուրացնելուց
հետո միայն անցե՛ք
ինքնաստուգիչ
հարցերին:




Մինչև 175 րոպե

դատավարության շրջանակներում» թիվ R (85) 11 հանձնարարականի նախաբանում, քրեական արդարադատության հիմնական գործառույթը պետք է լինի տուժողի պահանջմունքները բավարարելը և շահերը պաշտպանելը: Ուստի, նախորդ դարի 70-ական թվականներից ի վեր ընդունվել են մի շարք միջազգային իրավական ակտեր՝ տուժողի դերը քրեական դատավարությունում բարձրացնելու ուղղությամբ: Այս առումով ՄԱԿ-ի ուղենիշները հանդիսանում են քրեական արդարադատության համակարգում տուժողի դերը հստակեցնելուն ուղղված գործուն քայլ, որը փաստացի լրացնում է այլ միջազգային իրավական ակտերում ամրագրված չափանիշները՝ հատուկ կանոններ սահմանելով հենց երեխա տուժողների լավագույն շահերն ապահովելու տեսանկյունից:

Չենվելով դատական պրակտիկայի ուսումնասիրությունների վրա և հիմք ընդունելով միջազգային չափանիշներն՝ առանձնացրել ենք երեք հիմնական խնդիր, որոնք արդիական ու հրատապ են անչափահաս տուժողների և վկաների մասնակցությամբ իրականացվող դատական քննության առանձնահատկությունների տեսանկյունից: Դրանք են՝

1. դատական քննության արագացման սկզբունքը,
2. դատական քննությունը դռնփակ անցկացնելը և
3. երեխայի հարցաքննության դատավարական (հոգեբանական մասը արդեն քննարկվել է առանձին դասի շրջանակներում) առանձնահատկությունները դատական քննության փուլում:

1) ՄԱԿ-ի ուղենիշների 30-րդ կետի «գ» ենթակետը սահմանում է, որ պետք է ապահովվի դատական քննության հնարավորինս



վաղ իրականացումը, եթե ձգձգումները չեն բխում երեխայի լավագույն շահերից:

Նման պահանջ է սահմանում նաև «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» 2007թ. հոկտեմբերի 25-ի ԵԽ-ի կոնվենցիայի 30-րդ հոդվածը, որի 3-րդ մասի համաձայն՝ *յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որ հետաքննությունը և քրեական դատավարությունը համարվեն առաջնային և անցկացվեն առանց չարդարացված հետաձգումների:*

Այսինքն, միջազգային չափանիշով ազդարարվում է, որ անչափահաս երեխաների և, մասնավորապես, տուժողի մասնակցությամբ վարույթը պետք է իրականացվի **արագացված կարգով:** Մինչդեռ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործնականում, ելնելով որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից, վարույթի արագացման սկզբունքը չի երաշխավորվում:

Նախ, դրա համար առկա չեն բավարար օրենսդրական հիմքեր, քանի որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը չի սահմանում հատուկ կանոններ անչափահաս տուժողների մասնակցությամբ վարույթն արագացված կարգով իրականացնելու մասին, ի տարբերություն մեղադրյալների, որոնց համար նախատեսված է հատուկ դատավարական կարգ՝ «Դատական քննության արագացված կարգը» վերտառությամբ (գլուխ 451), որը թեև ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի¹

¹Տե՛ս Ա. Առուստամյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՏԴ/0145/01/11 որոշումը:

կիրառելի չէ անչափահաս մեղադրյալների նկատմամբ, սակայն գործնականում այն լայնորեն կիրառվում է, ընդ որում՝ բերվում են նաև հիմնավոր պատճառաբանություններ դրա կիրառման առումով, ինչի հետ մենք լիովին համակարծիք ենք²:

Չանդրադառնալով արագացված կարգի կիրառման հիմքերի և պայմանների հարցերին և մասնավորապես՝ անչափահասների նկատմամբ դրա կիրառման իրավաչափությանը՝ նկատենք, որ արագացված դատական քննության կարգը որոշակիորեն բխում է նաև տուժողի լավագույն շահերից: Մեղադրյալի կամ ամբաստանյալի կողմից մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում անհրաժեշտություն չի առաջանա երեխա տուժողին մասնակից դարձնել վարույթին, հարցաքննել նրան և այլն, որը երաշխավորում է երեխաների պաշտպանությունն ահաբեկումից և երկրորդային վիկտիմիզացիայից (double victimization)³, քանի որ վերջիններս ստիպված չեն լինի այդ ընթացքում «շփվել»

² Տե՛ս ՀՀ վերաքննիչ դատարանի թիվ ԵԴ/0368/01/18 քրեական գործով 2018թ., նոյեմբերի 1-ի որոշումը:


³ ՄԱԿ-ի ուղենիշների հիման վրա ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործությունների գրասենյակը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և երեխաների իրավունքների միջազգային բյուրոյի հետ համատեղ մշակել ու շրջանառության մեջ են դրել «Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխայի մասնակցությամբ արդարադատության վերաբերյալ» մոդելային օրենքը, որի 1-ին գլխում նշված հասկացությունների համաձայն՝ երկրորդային վիկտիմիզացիա նշանակում է վիկտիմիզացիա, որին ենթարկվում է հանցագործությունից տուժած անձը ոչ թե որպես հանցավոր արարքի ուղղակի հետևանքի, այլ պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների արդյունքում: Նույն տեղում նշվում է նաև «նեվիկտիմիզացիա» հասկացության մասին, որի տակ հասկացվում է՝ իրավիճակ, երբ անձը որոշակի տևական ժամանակահատվածի ընթացքում ենթարկվում է մեկից ավելի քրեական միջադեպերի: Երբեմն հնարավոր է իրավիճակ, երբ երկրորդային վիկտիմիզացիան կարող է ավելի լուրջ հետևանքներ ունենալ երեխայի հոգեբանության վրա, քան նեվիկտիմիզացիան // [http://www.unicef.org/ceecis/UNDOC-UNICEF Model Law on CHildren.pdf](http://www.unicef.org/ceecis/UNDOC-UNICEF_Model_Law_on_CHildren.pdf)

իրենց նկատմամբ հանցանք կատարած անձանց հետ. չէ՞ որ նման դատավարությունները համարվում են դաժան փորձություն երեխաների համար: Ավելին, հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ տուժողին պատճառված վնասի հատուցումն ևս հանդես է գալիս որպես արագացված դատական քննության կարգ կիրառելու պայման⁴՝ կապահովվի նաև նրան պատճառված գույքային վնասի արագ հատուցումը և այլն. հետևաբար, այն գործերով, որոնցով տուժողն երեխա է, պետք է խրախուսել արագացված դատական քննության կարգի կիրառումը: Այս կարգի կիրառումը հանդիսանում է նաև վկա երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիք, քանի որ նրանք ևս չեն հարցաքննվի դատարանում:

Երկրորդ, նախաքննական մարմինները և դատարանները քննարկվող գործերին առանձնահատուկ ուշադրություն չեն դարձնում, առավել մեծ ջանքեր չեն գործադրում երեխայի վերաբերյալ քրեական գործի քննությունն արագ անցկացնելու համար:

Օրինակ, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 2015թ. հուլիսի 24-ի գրության հիման վրա ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ.-ի նկատմամբ իրականացվել է ծառայողական քննությունն նրա համար, որ Վ.Ս.-ի կողմից անչափահասին շահագործման ենթարկելու, 14 տարին չըրացած անձի հետ սեռական հարաբերություն ունենալու և անձին ապօրինի ազատությունից զրկելու դեպքերի առթիվ հարուցված քրեական գործով քննիչը քրեական գործ հարուցելու հիմքերի և առիթների ակնհայտ առկայության պայմաններում տևական ժամանակ, առանց իրավաչափ նպատակի, քրեական

⁴Տե՛ս Տ.Զամայանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵՇԴ/0097/01/09 որոշումը:




գործ չի հարուցել, նախապատրաստվող առերևույթ հանցավոր արարքների վերաբերյալ տեղեկությունների պայմաններում դրանք խափանելու և կանխելու, ինչպես նաև՝ կատարված առերևույթ հանցավոր արարքները բացահայտելու ուղղությամբ անհետաձգելի քննչական գործողություններ չի կատարել, իսկ քրեական գործ հարուցելուց հետո առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակ անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ չի կատարել, ինչը ստեղծել է նոր հանցագործության կատարման և ապացույցների կորստի իրական հնարավորություն: Նշված դեպքով «քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշել է, որ նշված դրվագով ՀՀԳ ավագ քննիչ Ա.Մ.-ի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը⁵»:

Մեկ այլ քրեական գործով դեպքը տեղի էր ունեցել 2013թ. օգոստոսին, սակայն 2019թ. օգոստոս ամսվա դրությամբ դեռևս առկա չէր օրինական ուժի մեջ մտած դատավճիռ (գործը գտնվում էր վերաքննիչ դատարանում), իսկ մեկ այլ քրեական գործով քննությունը ձգձգվել էր այնքան, որ լրացել էր քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը և դատարանը որոշում էր կայացրել քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին և այլն:

Այս դեպքում, բացի ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքի ապահովման անհրաժեշտությունից, արագացված քննությունը հանդիսանում է նաև տուժող երեխայի իրավունքների


⁵Ղափարյան Ա., Թումասյան Դ. Երեխաների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները (ձեռնարկ քննիչների համար): Երևան, 2015, էջեր 97-98:



և օրինական շահերի ապահովման լրացուցիչ երաշխիք, ուստի գործնականում պետք է ապահովել նախաքննության և դատական քննության արագ իրականացումը, ինչը նշանակում է, որ առաջնահերթության կարգով պետք է քննության առարկա դառնան հիշյալ գործերը, որը զուտ կազմակերպական խնդիր է:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ դատական քննության արագացման սկզբունքը անչափահաս տուժողի լավագույն շահերի ապահովման միջազգային չափանիշներից է, որի նպատակն է ապահովել, որպեսզի երեխաների մասնակցությամբ վարույթը համարվի առաջնային և անցկացվի որքան հնարավոր է արագ, առանց չարդարացված հետաձգումների և ձգձգումները բացառող պայմաններում:


2) Անդրադառնալով դատական քննությունը դռնփակ անցկացնելու սկզբունքին՝ պետք է նկատել, որ այն երաշխավորված է միջազգային չափանիշներով: Մասնավորապես Եվրոպական խորհրդարանի և Եվրոպայի խորհրդի 2011/92EU «Երեխաների սեռական չարաշահման և սեռական շահագործման, մանկական պոռնոգրաֆիայի և խորհրդի 2004/68/JHA շրջանային որոշումը փոխարինելու վերաբերյալ» հրահանգի (On combating the sexual abuse and replacing Council Framework 2004/68/JHA Decision) 20-րդ հոդվածը (Մինչդատական վարույթում և դատական քննության փուլում երեխա տուժողների պաշտպանությունը) սահմանում է. «(...) 5. Անդամ պետությունները պետք է հավաստիանան, որ 3-ից 7-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների դատական քննության փուլում՝ ա) դատական քննություններն անցկացվեն դռնփակ, (...)»:



«Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» 2007թ. հոկտեմբերի 25-ի ԵԽ-ի կոնվենցիայի 36-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետում նույնպես սահմանված է, որ *յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ ներքին օրենսդրության նորմերի համաձայն ապահովելու համար, որպեսզի դատավորը կարողանա որոշում կայացնել, որ լսումներն անցկացվեն առանց հասարակության ներկայության:*


Նույն կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետում սահմանված է, որ *«Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ պաշտպանելու համար տուժածների իրավունքներն ու շահերը, ներառյալ որպես վկաների՝ նրանց հատուկ կարիքների բավարարումը հետաքննության և քրեական դատավարության բոլոր փուլերում, մասնավորապես հետևյալ միջոցներով՝ (...) ե) պաշտպանելով նրանց անձնական կյանքի, ինքնության և տեսքի գաղտնիությունը և ձեռնարկելով միջոցներ ներքին օրենսդրությանը համապատասխան թույլ չտալու համար ցանկացած տեղեկատվության հրապարակայնացումը, որը կարող է հանգեցնել նրանց ինքնության բացահայտմանը, (...)»:*

Երեխաների մասնակցությամբ վարույթը դռնփակ անցկացնելու մասին պահանջն ուղղակի բխում է նաև ՄԱԿ-ի ուղենիշներից, որոնք սահմանում են, որ անչափահասի մասնավոր (անձնական) կյանքին միջամտությունը պետք է լինի նվազագույն, և այն պետք է տեղի ունենա միայն օրենքով սահմանված կարգով՝ նպատակ ունենալով ապահովելու ապացույցներին ներկայացվող պահանջների կատարումը, ինչպես



նաև արդար դատական քննության իրավունքի իրացումը: Բացի այդ, անչափահաս տուժողի կամ վկայի գաղտնիությունը պետք է պաշտպանվի. մասնավորապես, այն տեղեկությունները, որոնք կարող են բացահայտել վկա կամ տուժող անչափահասին, պետք է հրապարակվեն միայն դատարանի թույլտվությամբ:


Ավանդաբար դռնբաց դատական քննությունը հետապնդում է դատական ողջ գործընթացի նկատմամբ հասարակական վերահսկողության և դաստիարակչական նպատակներ (ինչպես հանցավորի, այնպես էլ նիստերի դահլիճում ներկա անձանց համար): Մինչդեռ, միջազգային չափանիշների տեսանկյունից, անչափահասների գործերով արդարադատության առանցքային պահանջը ոչ թե հասարակական վերահսկողությունն ու դաստիարակությունն են, այլ անչափահասի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը՝ բնականաբար, չանտեսելով առաջինները: Այլ խոսքով ասած, միջազգային իրավունքի տեսանկյունից անչափահասների մասնակցությամբ գործերով դատավարության դաստիարակչական նշանակությունը և հասարակական վերահսկողությունը զիջում են այնպիսի հիմնարար սկզբունքների, ինչպիսիք են արդարադատության երեխայակենտրոն և պաշտպանական լինելը: Այս սկզբունքներն ենթադրում են, որ դատական քննությունը պետք է բարենպաստ լինի երեխայի լավագույն շահերի տեսակետից և իրականացվի փոխըմբռնման մթնոլորտում, ինչն անչափահասին դատաքննությանը մասնակցելու և ազատ արտահայտվելու հնարավորություն կտա: Բացի այդ, անչափահասի անձեռնմխելիության իրավունքը պետք է հարգել բոլոր փուլերում՝ անհարկի հրապարակայնության արդյունքում նրան վնաս



պատճառելուց խուսափելու համար, քանի որ հասարակության և, մասնավորապես, լրատվության միջոցների մասնակցությունը բացասաբար է անդրադառնում անչափահասի հոգեվիճակի վրա, առաջացնում է խիստ հուզական և լարված վիճակ, որի հետևանքով անչափահասը կարող է արդյունավետ մասնակցություն չունենալ իր շահերին վերաբերող դատավարությանը, ինչպես հարկն է չներկայացնել իր սեփական կարծիքը գործի վերաբերյալ: Հակառակ դրան, դատական քննության գաղտնիությունը կարևոր է ինչպես անչափահասի կողմից իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներից օգտվելու իրավունքի ապահովման, այնպես էլ մասնավոր կյանքի հարգման իրավունքի ապահովման տեսանկյունից:

Ասվածն իր ուղղակի ամրագրումն է ստացել ՀՀ քր. դատ. օր.-ի 16-րդ հոդվածում, որի 2-րդ մասը սահմանում է, որ գործի քննությունը դատարանում կարող է իրականացվել դռնփակ՝ ելնելով քրեական դատավարությանը մասնակցող անձանց մասնավոր կյանքի, պատվի և արժանապատվության, անչափահասների կամ արդարադատության շահերի պաշտպանության անհրաժեշտությունից:

Դա նշանակում է, որ դատարանները գործնականում պետք է դռնփակ նիստեր անցկացնեն անչափահաս տուժողների մասնակցությամբ քրեական գործերով: Այս պահանջն առավել կարևոր է այն տեսանկյունից, որ դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունների 1/3-ը սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններն են, իսկ այդ գործերով դռնբաց դատական նիստերը կարող են էական




վնաս պատճառել երեխայի լավագույն շահերին՝ պատվին, արժանապատվությանը, մասնավոր կյանքին և այլն:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները նաև ցույց են տալիս, որ գործնականում դատարանները դատական նիստերը նշանակում են դռնբաց (թեև մինչ այդ լինում են նաև միջնորդություններ դռնփակ նիստ անցկացնելու մասին, որին դատարաններն անդրադառնում են դատական նիստում), որից հետո, դատական նիստում լսելով կողմերի կարծիքը, որոշում են կայացնում գործի քննությունը դռնփակ անցկացնելու կամ չանցկացնելու մասին:

Դատարանը դռնփակ դատական նիստ անցկացնելու մասին որոշումը պետք է կայացնի դատական քննությունը նշանակելու մասին որոշմամբ՝ անկախ նրանից՝ այդ մասին առկա՞ է կողմի միջնորդությունը, թե՞ ոչ: Այլ հարց է, որ դատարանը կաշկանդված չէ դատական քննության մի մասը կամ ամբողջ դատական քննությունը դռնբաց անցկացնելու հարցը քննության փուլում քննարկելու և լուծելու հարցում, որի լուծումը թողնվում է դատարանի հայեցողությանը՝ բնականաբար գնահատելով երեխայի լավագույն շահերին վնասելու կամ չվնասելու հանգամանքի առկայությունը կոնկրետ դեպքում:

Քննարկվող հարցի հետ կապված կարևոր է նաև այն հանգամանքը, որ գործնականում հանդիպում են դեպքեր, երբ ամբաստանյալի հարազատները հանրայնացնում են դեպքը, քանի որ չեն վստահում քննչական և դատական մարմիններին, կարծում են, որ իրենց հարազատի նկատմամբ իրականացվում է անօրինական քրեական



հետապնդում: Կատարված ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գործերից մեկով ամբաստանյալի հարազատները գործի հանգամանքները քննարկման առարկա էին դարձրել «Կիսաբաց լուսամուտներ» հեռուստատեսային շոուի ընթացքում: Այս առումով տուժողի օրինական ներկայացուցիչը դատարանին միջնորդություն էր ներկայացրել պաշտպանական կողմի անօրինականությունները կանխելու և գործի հանգամանքները հրապարակայնորեն քննարկման առարկա դարձնելը կանխելու խնդրանքով, որը քննարկվել էր դատական նիստում և դատարանի միջամտությամբ կանխվել էին նրանց հետագա գործողությունները:


Նախաքննության մարմինները և դատարանները պարտավոր են միջոցներ ձեռնարկել, որպեսզի նման գործերի հանգամանքները չհրապարակայնացվեն, ինչն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ քր. դատ. օր.-ի 16-րդ և 201-րդ հոդվածներում և երաշխավորված ՀՀ քր. օր.-ով:

Գ) Անչափահաս վկաների և տուժողների հարցաքննությունը դատարանում իրականացվում է ՀՀ քր. դատ. օր.-ի 341-րդ հոդվածում սահմանված կարգով, որի համաձայն՝ «1. Անչափահաս վկայի հարցաքննությունը, եթե դա անհրաժեշտ է գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման համար, կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կարող է կատարվել ամբաստանյալի բացակայությամբ: Դատական նիստի դահլիճ վերադառնալուց հետո ամբաստանյալի համար հրապարակվում են անչափահաս վկայի ցուցմունքները, նրան հնարավորություն է ընձեռվում տվյալ վկային տալ հարցեր և ցուցմունքներ՝ վկայի հաղորդած տվյալների վերաբերյալ:

2. Տասնվեց տարին չլրացած վկան պետք է հեռացվի դատական նիստի դահլիճից նրա հարցաքննությունն ավարտվելուց հետո, բացի այն դեպքերից, երբ դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, անհրաժեշտ է համարում այդ վկայի հետագա ներկայությունը»:


Թեև օրենքում սահմանված է որոշակի առանձնահատկություն անչափահաս վկայի կամ տուժողի հարցաքննության դատավարական կարգի հետ կապված, սակայն քրեական գործերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործնականում առաջանում են մի շարք խնդիրներ ինչպես անչափահաս վկաների և տուժողների իրավունքների ու օրինական շահերի ապահովման, այնպես էլ ամբաստանյալի պաշտպանության իրավունքի ապահովման տեսանկյունից: Խնդրի բարդությունը նրանում է, որ բախվում են երկու հիմնարար իրավական սկզբունքներ՝ մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովումը և երեխայի լավագույն շահերը պաշտպանելը, որոնց միջև ընտրություն անելը, որևէ մեկին մյուսի նկատմամբ առավելություն տալը միանշանակ սխալ է, քանի որ պետությունն ունի ինչպես մեղադրյալի պաշտպանության իրավունքն երաշխավորելու, այնպես էլ երեխայի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու պոզիտիվ պարտավորություն:

Ողջ խնդիրը նրանում է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 341-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դրանում սահմանված է այնպիսի դատավարական կարգ, որն առավելապես երաշխավորում է ամբաստանյալի իրավունքը՝ հարցաքննել իր դեմ ցուցմունք տված անչափահասներին և որևէ հատուկ կանոն չի սահմանում հենց անչափահաս



վկայի կամ տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար, իսկ այն կանոնը, որ անչափահասի հարցաքննությունը կարող է իրականացվել ամբաստանյալի բացակայությամբ, նախատեսված է ոչ թե երեխայի լավագույն շահերն ապահովելու համար, այլ արդարադատության շահից ելնելով: Մինչդեռ, միջազգային չափանիշների տեսանկյունից երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ևս առաջնային նշանակություն ունի, և պետությունն ունի պոզիտիվ պարտավորություն պաշտպանելու երեխայի իրավունքներն ու օրինական շահերը, ուստի, որպեսզի չխախտվեն թե՛ մեղադրյալի իրավունքները, և թե՛ անչափահաս տուժողների և վկաների իրավունքներն ու օրինական շահերը, միջազգային չափանիշները սահմանում են տարբեր կառուցակարգեր՝ անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության անցկացման համար:

Մասնավորապես, Եվրոպական խորհրդարանի և Եվրոպայի խորհրդի 2011/92EU «Երեխաների սեռական չարաշահման և սեռական շահագործման, մանկական պոռնոգրաֆիայի և խորհրդի 2004/68/JHA շրջանային որոշումը փոխարինելու վերաբերյալ» հրահանգի (On combating the sexual abuse and replacing Council Framework 2004/68/JHA Decision) 20-րդ հոդվածը (Մինչդատական վարույթում և դատական քննության փուլում երեխա տուժողների պաշտպանությունը) սահմանում է. «(...) 5. Անդամ պետությունները պետք է հավաստիանան, որ 3-ից 7-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների դատական քննության փուլում (...) բ) դատական նիստերի դահլիճում երեխայի հարցաքննությունը հնարավորության դեպքում անցկացվի այնպես, որ երեխան անձամբ ներկա չգտնվի դատական նիստերի




դահլիճում. հարցաքննությունը պետք է անցկացվի, մասնավորապես, համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ (...):»:

«Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» 2007թ. հոկտեմբերի 25-ի ԵԽ-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետի համաձայն՝ «(...) մասնավորապես պետք է ապահովվի, որ տուժողների և հանցագործություն կատարած անձանց միջև շփումը դատարանում ... տեղի չունենա, եթե իրավասու մարմինները այլ բան չեն նախատեսում՝ ելնելով երեխայի շահերից, կամ երբ նման շփում պահանջվում է ... վարույթների նպատակներով»:

Այնուհետև, նույն կոնվենցիան, շարունակելով առաջադրված դրույթը, 36-րդ հոդվածի 2-րդ մասում տրամաբանորեն նախատեսում է, որ «յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական իրավունքով նախատեսված կանոններին համապատասխան, ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ տուժողը կարողանա ցուցմունք տալ դատարանում առանց իր ներկայության, մասնավորապես՝ հաղորդակցության համապատասխան տեխնոլոգիաների օգտագործմամբ»:

Ուշագրավ են նաև Կոնվենցիայի 35-րդ հոդվածի կանոնակարգումները, որոնց համաձայն՝ «1. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ նրա համար, որ ա. երեխայի հետ հարցաքննություններն անցկացվեն առանց անհարկի ձգձգումների,

բ. երեխայի հետ հարցաքննությունները, անհրաժեշտության դեպքում, անցկացվեն այդ նպատակի համար նախատեսված կամ հարմարեցված տարածքներում,



- գ. երեխայի հետ բոլոր հարցաքննությունները, անհրաժեշտության և հնարավորության դեպքում, անցկացվեն միևնույն անձանց կողմից,
- դ. հարցաքննությունների թիվը լինի հնարավորինս քիչ, և անցկացվեն քրեական հետաքննության նպատակների խիստ անհրաժեշտության դեպքում (...):»:

Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների վերաբերյալ ՄԱԿ-ի ուղենիշներում ևս նախատեսված են կանոններ առ այն, որ պետություններն անհրաժեշտության դեպքում պետք է քննարկեն դատարանում երեխայի ցուցմունքների տեսագրումը և տեսագրված ցուցմունքը, ի թիվս այլ միջոցների, որպես պաշտոնական ապացույց ներկայացնելը թույլատրելու հարցը: Ավելին, հիշյալ ուղենիշներում սահմանված են մի շարք սկզբունքներ, որոնք պետք է հաշվի առնել երեխայի մասնակցությամբ հարցաքննությունների անցկացման ընթացքում: Դրանք են, մասնավորապես՝ «25. Մասնագետները պետք է մշակեն և իրականացնեն այնպիսի միջոցառումներ, որոնք ուղղված են վկայություն կամ ցուցմունք տալն երեխաների համար հեշտացնելուն, միջոցառական և դատական փուլերում հաղորդակցությունը և ընկալումը բարելավելուն: Այդ միջոցները կարող են ներառել հետևյալը.

- ա. ներգրավել տուժող և վկա երեխաների հարցերով մասնագետների՝ երեխայի հատուկ կարիքները բարելավելու նպատակով,
- բ. ներգրավել օժանդակող անձանց, այդ թվում՝ մասնագետների և ընտանիքի համապատասխան անդամների, ովքեր ցուցմունք տալու պահին գտնվում են երեխայի հետ,
- գ. անհրաժեշտության դեպքում նշանակել խնամակալ՝

երեխայի իրավական շահերը պաշտպանելու
նպատակով: (...)

30. Մասնագետները պետք է տուժող և վկա
երեխաների հանդեպ զգայուն մոտեցում ցուցաբերեն,
որպեսզի (...)

դ. կիրառվեն երեխայի հանդեպ զգայուն
ընթացակարգեր, այդ թվում՝ երեխաների համար
նախատեսված հարցաքննության սենյակներ,
մեկ վայրում գործող բազմամասնագիտական
ծառայություններ տուժող և վկա երեխաների
համար, վերանայված դատական միջավայր,
որում ուշադրություն կդարձվի վկա երեխաներին,
երեխայի հարցաքննությունների ընդմիջումներ,
լսումների նշանակում այնպիսի ժամերի, որը
համապատասխանում է երեխայի տարիքին և
հասունությանը, ծանուցման պատշաճ համակարգ,
որը կապահովի, որպեսզի երեխան դատարան
գնա միայն անհրաժեշտության դեպքում, ինչպես
նաև երեխայի կողմից ցուցմունք տալու առումով
նպաստավոր համապատասխան այլ միջոցները: (...)

31. Մասնագետները պետք է նաև իրականացնեն
այնպիսի միջոցառումներ, որոնք.


ա. կնվազեցնեն հարցաքննությունների թիվը: Պետք
է սահմանել տուժող և վկա երեխաներից
ցուցմունք ստանալու հատուկ ընթացակարգեր՝
հարցաքննությունների, լսումների, ցուցմունքների, և,
հատկապես՝ արդարադատության գործընթացի հետ
անհարկի շփումների թիվը նվազեցնելու նպատակով,
այդ թվում՝ տեսաձայնագրման կիրառմամբ,

բ. եթե դա նախատեսված է տվյալ իրավական
համակարգով՝ կապահովվեն տուժող և վկա
երեխաների պաշտպանությունը հանցագործության

կատարման մեջ մեղադրվող անձի կողմից հարցաքննվելուց՝ միաժամանակ հարգելով երեխայի՝ պաշտպանության իրավունքը: Անհրաժեշտության դեպքում տուժող և վկա երեխաները պետք է հարցաքննվեն (այդ թվում՝ դատարանում) հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի տեսադաշտից դուրս պայմաններում. պետք է նաև տրամադրվեն առանձին դատական սպասասրահներ և մեկուսի հարցաքննության տարածքներ.

գ. կապահովեն, որ տուժող և վկա երեխաները հարցաքննվեն երեխայի հանդեպ զգայուն եղանակով՝ դատավորների կողմից հսկողության հնարավորությամբ, նպաստելով ցուցմունքներ տալու գործընթացին և կրճատելով ահաբեկման հնարավորությունը, օրինակ՝ ցուցմունք տալիս օգնելու կամ հոգեբան փորձագետներ նշանակելու միջոցով: (...)»:

Նպատակահարմար է ուշադրություն դարձնել նաև որոշակի տեխնիկական հարցերի, որոնք կարող են անմիջական ազդեցություն ունենալ երեխայի վրա: Մասնավորապես, դատարանում երեխայի սպասասրահը պետք է առանձնացված լինի չափահասներից, նիստերի դահլիճը պետք է փորձել կահավորել այնպես, որ անչափահասի մոտ չառաջանա վախի ու անհանգստության զգացում, կամ հեռացվեն պետության խորհրդանիշները, հնարավորինս փոփոխվի կահավորանքը, այդ թվում նաև հաշվի առնել դատավորի կողմից առանց պատմունճանի նիստ անցկացնելու հնարավորության հարցը, ինչպես նաև անչափահասին հնարավորություն տալ նստելու իր ներկայացուցչի կողքին, ինչպես նաև վարույթն իրականացնել դատավարական ձևի ոչ խստիվ պահպանմամբ և մասնագիտական եզրաբանության



հնարավորինս սակավ առկայությամբ⁶:


ՄԻԵԴ-ը ևս իր նախադեպային իրավունքով հնարավոր է համարել որոշակի դատավարական ձև չպահպանելը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանցագործություններից տուժել են երեխաներ: Նման դատավարությունները համարվում են դաժան փորձություն երեխաների համար, քանի որ վերջիններս ստիպված են այդ ընթացքում «շփվել» իրենց նկատմամբ հանցանք կատարած անձանց հետ: Այն դեպքերում, երբ մեղադրյալի պաշտպանը կարողացել է անգամ միջնորդավորված կերպով հարցեր հղել տուժողին, ապա այդ դեպքում դատարանը գտել է, որ արդար դատաքննության իրավունքը չի խախտվել: ՄԻԵԴ-ը հնարավոր է համարում տուժող երեխայի հարցաքննության կատարումը գրավոր եղանակով և հոգեբանի ներկայությամբ, առանց մեղադրյալի կամ նրա պաշտպանի ներկայության, կամ այնպիսի սենյակում, որը պաշտպանության կողմին հնարավորություն կտա ներկա լինելու դատավարությանն անուղղակի կերպով, օրինակ՝ միակողմանի հայելու կամ տեսանկարահանման միջոցով⁷:

Ս.Ն. ընդդեմ Շվեյցարիայի գործով
Եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Չի կարելի պնդել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետը պահանջում է, որպեսզի բոլոր դեպքերում հարցերը տրվեն անմիջականորեն մեղադրյալի և պաշտպանի կողմից»:

⁶Ն.Աղաբաբյան, ԱՆՉԱՓԱՅԱՍ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՅԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԶԵՆԱԴԱՏԱԿԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐ// http://www.yso.am/files/31Nelly_Aghababyan.pdf

⁷ <https://hudoc.echr.coe.int/eng>.

Այս գործում արտահայտված իրավական դիրքորոշումը ճիշտ գնահատելու համար պետք է հաշվի առնել գործի հանգամանքները: Այսպես, դիմողն անչափահաս Մ.-ի դեմ սեռական հանցագործության մեղադրանքով դատապարտվել է 8 ամիս ազատազրկման: Սույն գործով մեղադրական դատավճռի հիմքում ընկած են եղել առավելապես Մ.-ի ցուցմունքները և դրանց տեսաձայնագրությունները: Մ.-ին իրենց տանը հարցաքննել է ոստիկանը: Դիմողի փաստաբանը համաձայնել է չմասնակցել հարցաքննությանը, քանի որ Մ.-ի փաստաբանը նույնպես չէր կարող մասնակցել այդ գործողությանը: Սակայն դիմողի փաստաբանը նախօրոք ձևակերպել է իր հարցերը, որոնք ոստիկանի կողմից ներկայացվել են Մ.-ին: Հետագայում փաստաբանը հարցաքննության ձայնագրությունների հիման վրա հաստատել է, որ հարցաքննության ընթացքում շոշափվել են այն հարցերը, որոնք ինքը կցանկանար ներկայացնել: Մ.-ն դատարանում ցուցմունք չի տվել: Դատական քննության ընթացքում վերարտադրվել են Մ.-ի առաջին հարցաքննության ձայնագրությունները և արձանագրությունները: Դիմողը դատաքննության ընթացքում չի միջնորդել, որպեսզի Մ.-ն անձամբ մասնակցի դատավարությանը: Դատարանը նշել է, որ այս գործով կարելի է ընդունել դիմողի պնդումն այն մասին, որ նա ձեռնպահ է մնացել Մ.-ին դատարան կանչելու և անձամբ նրան հարցաքննելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելուց, քանի որ այդպիսի միջնորդությունը կմերժվեր: Միևնույն ժամանակ, Եվրոպական դատարանը նշել է, որ ոստիկանության աշխատակցի հետ Մ.-ի երկրորդ զրույցը տեղի է ունեցել դիմողի փաստաբանի միջնորդությամբ, ով համաձայնել է չմասնակցել հարցաքննությանը, և այդ կապակցությամբ առարկություն չի ունեցել: Նա չի միջնորդել, որ հարցաքննությունը հետաձգվի կամ էլ տեսագրվի,



մինչդեռ պաշտպանը նման հնարավորություն ունեցել է: Ավելին, փաստաբանը հնարավորություն է ունեցել ոստիկանի միջոցով տուժողին տալու հարցերը և բավարարված է եղել հարցերի պատասխաններով: Սույն գործով Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում չի արձանագրել⁸:

Մեկ այլ՝ «Պ. Ս.-ն ընդդեմ Գերմանիայի» (P.S. Germany) (20.12.2001թ.) գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ անչափահաս տուժողների, մասնավորապես՝ սեռական հանցագործությունների անչափահաս զոհերի մասնակցությամբ իրականացվող քրեական դատավարության ընթացքում պետք է հաշվի առնել նրանց շահերի պաշտպանությունը, սակայն հաստատել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, քանի որ առաջին ատյանի դատարանը մերժել է երեխային հոգեբանական փորձաքննության ենթարկելու միջնորդությունը, իսկ վերաքննիչ դատարանն այդ փորձաքննությունը նշանակել է դեպքից ութ ամիս անց: Բացի այդ, Ս.-ի ցուցմունքները հանդիսացել են դիմողի դատապարտման միակ ուղղակի ապացույցը:

Սույն գործի փաստերը հետևյալն են՝ ութնամյա Ս.-ի հայրը 1993թ. ապրիլի 29-ին հաղորդում է ներկայացրել ոստիկանություն այն մասին, որ երաժշտության ուսուցիչն անհատական դասի ընթացքում երեխայի նկատմամբ իրականացրել է սեռական ոտնձգություն: Ոստիկանները հարցաքննել են անչափահաս Ս-ին և նրա մորը: Ս.-ն հաստատել է հոր հաղորդումը, իսկ մայրը ցուցմունք է տվել այն մասին, որ երաժշտության անհատական դասերից հետո երեխան անհանգիստ է եղել, իսկ


⁸Путеводитель о прецедентной практике Европейского суда по правам человека за 2002 года. Науч. ред.-сост. Ю.Ю. Берестнев, М.В. Виноградов. Перевод с англ. В.А. Власихина. М., 2004, էջ 118:

հետագայում իրեն պատմել է սեռական ոտնձգության մասին: Ներպետական դատարանը, հիմք ընդունելով Ա.-ի մայրիկի և Ա.-ին հարցաքննած ոստիկանի ցուցմունքը, ինչպես նաև վերաքննիչ դատարանի կողմից նշանակված հոգեբանական փորձաքննության՝ Ա.-ի պատմածի արժանահավատության վերաբերյալ հոգեբանի եզրակացությունը, դիմողին մեղավոր է ճանաչել անչափահաս երեխայի նկատմամբ սեռական հանցագործություն կատարելու մեջ: Ա.-ի ծնողները հրաժարվել են երեխային ներկայացնել դատարան, քանի որ երեխան ոտնձգության հետևանքով ձեռք էր բերել ներյոդերմիտ հիվանդություն, և առկա էր նրա առողջական վիճակի վատթարացման վտանգ: Ներպետական դատարանները թեև նշել էին, որ դատարանում Ա.-ի հարցաքննության բացակայությունն էական բացթողում է, սակայն նրան չէին հրավիրել դատարան՝ հիմք ընդունելով երեխայի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկանքը և հոգեբանի եզրակացությունը, ըստ որի՝ դատարան ներկայանալու դեպքում կատարվածը վերհիշելու պատճառով երեխայի հոգեբանական վիճակը կրկին կվատթարանա⁹:

Յ.-ն ընդդեմ Խորվաթիայի [Y. v. Croatia] գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ Ստամբուլի կոնվենցիայով պետություններից պահանջվում է ընդունել օրենսդրական միջոցներ՝ տուժողի իրավունքները պաշտպանելու համար: Դատարանը նշել է, որ այս միջոցառումների թվին են դասվում, *inter alia* (ի թիվս այլնի), ահաբեկումից և երկրորդային վիկտիմիզացիայից պաշտպանությունը, տուժողներին լսելի դարձնելու, նրանց կարծիքները, կարիքներն ու մտահոգությունները ներկայացնելու և պատշաճ ձևով դիտարկելու, գործող

⁹Տե՛ս <https://hudoc.echr.coe.int/eng#%20>


ներպետական օրենսդրությամբ թույլատրված լինելու դեպքում ենթադրյալ բռնություն գործադրած անձի բացակայությամբ ցուցմունք տալու հնարավորության ընձեռումը: Բացի այդ, ԵՄ-ի՝ հանցագործությունից տուժած անձանց իրավունքների, աջակցության և պաշտպանության նվազագույն չափանիշները սահմանող հրահանգով նախատեսվում է, *inter alia*, որ տուժողների հետ հարց ու պատասխանն անցկացվի առանց անհիմն ձգձգումների, իսկ բժշկական զննությունները հասցվեն նվազագույնի: Ընդունելով տուժողի ցուցմունքի՝ գործով միակ ուղղակի ապացույցը լինելու փաստը, հետևաբար՝ պաշտպանության համար խաչաձև հարցաքննության կարևորությունը՝ Դատարանը վճռել է, որ «*անձի՝ իրեն պաշտպանելու իրավունքը չի ենթադրում պաշտպանության ցանկացած փաստարկ օգտագործելու անսահմանափակ իրավունք (տե՛ս, mutatis mutandis (համապատասխան փոփոխություններով))*»: Այսպիսով, այն վճռել է՝ քանի որ «սեռական բռնություն» քրեական իրավախախտման համար մեղադրվող ամբաստանյալների և նրանց ենթադրյալ տուժողների ուղղակի առերեսումն ենթադրում է տուժողներին հոգեբանական ճնշման ենթարկելու վտանգ, Դատարանը գտնում է, որ անմիջապես պատասխանող կողմից արվող խաչաձև հարցաքննությունը պետք է ամենայն զգուշությամբ զնահատվի ներպետական դատարանների կողմից, և այդ զգուշավորությունը դրսևորվի Էլ ավելի խիստ՝ ինտիմ բնույթ ունեցող հարցերի դեպքում: Դատարանն այնուհետև եզրակացրել է, որ խաչաձև հարցաքննությունը չպետք է օգտագործվի որպես տուժողի ահաբեկման կամ նվաստացման միջոց (Յ.-ն ընդդեմ Խորվաթիայի [Y. v. Croatia], Գործ թիվ 41107/10, 2015 թվական, 106-րդ պարբերություն):



Այսպիսով, գործնականում կարելի է կիրառել տարբեր մոտեցումներ անչափահասների հարցաքննության համար, սակայն էականն այն է, որպեսզի երաշխավորվեն և՛ մեղադրյալի իրավունքները, և՛ անչափահաս վկայի կամ տուժողի իրավունքներն ու օրինական շահերը: Դրա համար հնարավոր են տարբեր մոտեցումներ. անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքննությունն իրականացնել առանց մեղադրյալի մասնակցության, իսկ նրա՝ հակընդդեմ հարցման իրավունքն ապահովել միջնորդավորված եղանակով:

Կարելի է հարցաքննությունն իրականացնել հոգեբանի կողմից՝ նախապես մշակված հարցերը ներկայացնելով հոգեբանին և տեսաձայնագրելով հարցաքննության ողջ ընթացքը, այնուհետև անչափահասի ցուցմունքը ներկայացնել մեղադրյալին և պաշտպանին՝ հնարավորություն ընձեռելով տալու այն հարցերը, որոնք անհրաժեշտ են պաշտպանության իրավունքի իրականացման համար: Նշված հարցերը հետագայում կրկին պետք է ներկայացվեն տուժողին, և այդպես շարունակ: Կամ պետք է բացառել ամբաստանյալի մասնակցությունը անչափահասի հարցաքննությանը, իսկ նրա՝ հակընդդեմ հարցման իրավունքն ապահովել միջնորդավորված եղանակով՝ հարցաքննության ժամանակ կիրառելով տեսաձայնագրում: Ցուցմունքի տեսաձայնագրումը հետագայում պետք է ներկայացնել մեղադրյալին և պաշտպանին՝ հնարավորություն ընձեռելով տալու այն հարցերը, որոնք անհրաժեշտ են պաշտպանության իրավունքի իրականացման համար: Նշված հարցերը հետագայում կրկին կներկայացվեն տուժողին¹⁰:

¹⁰ <https://hudoc.echr.coe.int/eng#%20>



Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գործնականում երեխաները դատական քննության փուլում հարցաքննվում են սովորական կարգով, իսկ ամբաստանյալները և նրանց պաշտպանները տալիս են հարցեր: Եզակի են այն դեպքերը, երբ երեխան չի հարցաքննվում դատական քննության փուլում, այլ հրապարակվում և հիմք է ընդունվում նրա նախաքննական ցուցմունքը: Դա հիմնականում արվում է այն գործերով, որոնցով նախաքննության փուլում իրականացվել է առերեսում կամ, երբ երեխայի ցուցմունքը միակ ու վճռորոշ¹¹ ապացույցը


¹¹ «Միակ կամ վճռորոշ ցուցմունքի սկզբունքի» համաձայն՝ այն դեպքում, երբ ամբաստանյալը դատապարտվում է բացառապես կամ հիմնականում այն վկաների տված ցուցմունքների հիման վրա, որոնց մեղադրյալը չի կարող հարցաքննել դատավարության փուլերից որևէ մեկում, նրա պաշտպանության իրավունքներն անհիմն կերպով սահմանափակվում են: Այս համատեքստում «վճռորոշ» բառը պետք է նշանակի միայն այնպիսի նշանակության կամ կարևորության ցուցմունք, որը կարող է որոշել գործի ելքը: Եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հաստատված ապացույցներով, ապա դրա վճռորոշ լինելու հանգամանքը գնահատելը կախված կլինի հիմնավորող ապացույցների նշանակությունից. որքան հավաստի են մեղավորությունը հաստատող մյուս ապացույցները, այնքան քիչ հավանական է, որ չներկայացած վկայի ցուցմունքը կհամարվի վճռորոշ (տե՛ս Ալ-Խավաջայի և Թահերիի գործը, § 131, Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի գործը և այլն): Եվրոպական դատարանը նշում է, որ վկայի չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը չի կարող ինքնին վկայել դատաքննության արդարացի չլինելու մասին, թեև ընդհանուր արդարացիությունը գնահատելիս այն ամեն դեպքում կարևոր գործոն է հավասարակշռությունը որոշելու համար և կարող է որոշիչ դեր ունենալ 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում արձանագրելու հարցում: Ավելին, հաշվի առնելով, որ Դատարանի խնդիրն է պարզել՝ արդյոք դատաքննությունն ընդհանուր առմամբ արդարացի է եղել, այն պետք է ուսումնասիրի ոչ միայն բավարար հակակշռող գործոնների առկայությունն այն գործերում, որոնցում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է հանդիսացել դիմումատուին դատապարտելու համար, ինչպես նաև այն գործերում, որոնցում այն չի կարողացել հստակ պարզել՝ արդյոք խնդրո առարկա ցուցմունքը միակը և վճռորոշն է եղել, սակայն, այնուհանդերձ, համոզվել է, որ այն կարևոր նշանակություն է ունեցել, և այն որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է, սահմանափակել է պաշտպանության կողմի հնարավորությունները: Հակակշռող գործոնների՝ դատաքննությունն արդար համարելու համար անհրաժեշտ շրջանակը կախված է չներկայացած վկայի ցուցմունքի նշանակությունից: Որքան կարևոր նշանակություն ունենա այդ ցուցմունքը, այնքան ավելի կարևոր նշանակություն պետք է ունենան հակակշռող գործոնները, որպեսզի դատաքննությունն ընդհանուր առմամբ համարվի արդարացի (...)» (տե՛ս Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 44-47-րդ կետերը):

չէ մեղադրանքի հիմնավորման համար: Այս առումով պահպանվում են Եվրոպական դատարանի ձևավորած չափանիշները, որոնց համաձայն՝ որպես կանոն, 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով պահանջվում է, որ ամբաստանյալին համարժեք և պատշաճ հնարավորություն տրվի վկայի՝ իր դեմ տված ցուցմունքը վիճարկելու կամ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ հետագա փուլերում (տե՛ս Խոդորկովսկին և Լեբեդևն ընդդեմ Ռուսաստանի [Khodorkovskiy and Lebedev v. Russia], թիվ 11082/06 և 13772/05, § 707, 2013 թվականի հուլիսի 25)¹²: Այիսնքն՝ որևէ փուլում, եթե հնարավորություն է տրվել վիճարկելու վկայի ցուցմունքը, ապա այն, կապված գործի հանգամանքներից, կարող է բավարար լինել ամբաստանյալի իրավունքի ապահովման համար:

Ուսումնասիրած գործերից մեկով անչափահաս երեխայի ծնողը, ով նաև նրա օրինական ներկայացուցիչն էր, հրաժարվել էր ենթարկվել դատարանի որոշմանը և երեխային հարցաքննության նպատակով չէր ներկայացրել դատարան, թեև պաշտպանական կողմը բազմիցս միջնորդություններ էր ներկայացրել դատարանին, իսկ դատարանը մի քանի անգամ ծանուցումներ էր ուղարկել՝

¹²[Վ]կաները պետք է, որպես կանոն, ցուցմունք տան դատական քննության ժամանակ, ... ամբաստանյալը, ըստ էության, քրեական դատավարության ընթացքում պետք է իր դեմ ներկայացված ապացույցները վիճարկելու արդյունավետ հնարավորություն ունենա: Մասնավորապես, նա պետք է կարողանա ստուգել վկայի ներկայացրած ապացույցների ճշմարտացիությունը և հավաստիությունը՝ դրանք վկայի ներկայությամբ բանավոր քննելու միջոցով՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ վարույթի հետագա փուլերում (տե՛ս Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի 2016թ. նոյեմբերի 10-ի վճռի (Գանգատ թիվ 13479/11) 47-րդ կետը):


երեխային հարցաքննության ներկայացնելու համար: Արդյունքում, դատարանը հրապարակել էր երեխայի նախաքննական ցուցմունքը և այն դրել դատավճռի հիմքում՝ վկայակոչելով ՄԻԵԴ նախադեպային իրավունքը: Սակայն, սույն գործով ուշագրավ էր այն հանգամանքը, որ ծնողը դիմել էր տուժող երեխայի դատահոգեբանական փորձաքննությունն իրականացրած փորձագետին և խնդրել էր տրամադրել կարծիք առ այն, թե «կարելի՞ է արդյոք երեխային որպես տուժող հարցաքննել դատարանում, և դրա արդյունքում երեխայի հոգեկան առողջությանը վնաս չի՞ պատճառվի արդյոք», և ստանալով կարծիք առ այն, որ «5-ամյա երեխային նման պարագայում որպես տուժող դատարան հրավիրելն արգելված է ՄԱԿ-ի 20.11.1989թ. «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետով և 12-րդ հոդվածի 2-րդ կետով, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի 25.10.2007թ. «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» կոնվենցիայի 30 հոդվածի 1-ին և 2-րդ կետերով: Որպես փորձագետ-հոգեբան, ձեր 5-ամյա դստեր նկատմամբ նշանակված դատահոգեբանական փորձաքննությունն իրականացնելիս, հաշվի առնելով նրա մոտ բացահայտված ընկճվածությունը, միջադեպի հետ կապված բացասական ապրումների վրա սևեռվելու հակումը և ինքնամփոփությունը, զգուշացնում եմ ձեզ, որ երեխայի ներկայությամբ հարկավոր է ընդհանրապես խուսափել տեղի ունեցածին անդրադառնալուց և իրականացնել միջոցառումներ, որպեսզի երեխան մեկընդմիջտ մոռանա կատարվածը: Որպես մասնագետ հայտարարում եմ, որ եթե վերագրյալը հաշվի չառնելով, այնուհանդերձ դատարանը պահանջի Ձեր դստեր ... ներկայությունը, ապա դրանով երեխային ևս մեկ անգամ կպատճառվի հոգեկան ու բարոյական վնաս՝ դրանից բխող հետևանքներով», ներկայացրել էր



դատարանին և դրանով պայմանավորված՝ հրաժարվել երեխային դատարան ներկայացնելուց:

Սույն գործով առանձնապես կարևոր է նաև այն, որ օրինական ներկայացուցիչը դատարանին ուղղված միջնորդությամբ հայտնել էր, որ. *«Եթե դատարանին չեն բավարարի նախաքննությամբ ձեռք բերված հիմնավոր ապացույցները, տեսաձայնագրությունները և փորձագիտական եզրակացությունները, ապա միանշանակ նպատակահարմար եմ գտնում, որ իմ մանկահասակ երեխայի հարցաքննությունն իրականացվի ոչ թե դատարանի, այլ մեկ այլ շենքում, որը դատարան չի հիշեցնի: Հարցաքննությանը պարտադիր մասնակից դարձնել փորձառու հոգեբանի: Բացառել այդ հարցաքննությանը ամբաստանյալի և նրա պաշտպանների մասնակցությունը: Եթե վերջիններս հարցեր ունենան, ապա կարող են ներկայացնել դատարանին, որոնք երեխային կարող են տրվել հոգեբանի միջոցով»:*


Նույն գործով անչափահաս վկայի ծնողը դատարանին դիմում էր ներկայացրել նաև այն մասին, որ հաջորդ վկան պետք է լինի իր անչափահաս երեխան (տուժողի ավագ քույրը, ով 10 տարեկան էր), ուստի ինքը նրան տեղեկացրել է այդ մասին և հաշվի առել նրա կարծիքն այդ կապակցությամբ: Նաև հայտնել է, որ երեխան մեծ դժվարությամբ է համաձայնել ներկայանալ դատարան, բայց միայն մեկ անգամ: Դատարանին խնդրել էր, որ մեղադրողին և պաշտպանական կողմին տեղեկացնի, որ ցուցմունք տվողն անչափահաս է և չի ուզում բազմիցս ներկայանալ դատարան, ուստի ինքը նախորոք տեղեկացնում է, որ եթե կունենան հարցեր ուղղված երեխային, ապա, որպեսզի այդ հարցերը չմնան անպատասխան, դրանք վկային ուղղեն նույն



օրը՝ վկայություն տալիս: Ուշագրավն այն է, որ երեխայի հարցաքննությունը կիսատ էր մնացել, և դատարանը որոշել էր շարունակել այլ օր, մինչդեռ դրա կապակցությամբ երեխայի հարցաքննությանը մասնակցող մանկավարժը, ով երեխայի դասղեկն էր և մասնակցել էր նաև նախաքննության փուլում հարցաքննությանը, դատարանին գրավոր հայտարարություն էր ներկայացրել առ այն, որ «անչափահասի ներկայությունը հետագայում կայանալիք դատական նիստերին անթույլատրելի է, քանի որ դա ազդում է դեռահասի հոգեբանության վրա: Երեխայի մոտ վերջին ժամանակահատվածում նկատվել է անկումային տրամադրություն: Ապագայում ընկճախտի սինդրոմից խուսափելու համար կտրականապես դեմ եմ երեխայի հետագա մասնակցությանը դատական նիստերին: Ասածս բխում է երեխայի շահերից»:

Վերոգրյալ գործի հանգամանքներին առավել մանրամասն անդրադառնալը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործնականում երեխայի օրինական ներկայացուցիչն ու մանկավարժն արել էին այն, ինչը բխում է միջազգային չափանիշներից, և այդ գործողություններին դիմելը վարույթն իրականացնող մարմնի և, մասնավորապես՝ դատարանի պարտականությունն էր: Այդուհանդերձ, Էականն այն է, որ արդեն իսկ ձևավորվում է միջազգային չափանիշներին համապատասխան իրավակիրառական պրակտիկա, ինչը ողջունելի է:


Պետք է նկատել, որ մեր կողմից վերևում բարձրացված շատ հարցեր իրենց լուծումն են ստացել 2020 թվականի հունիսի 3-ին ընդունված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-300-Ն օրենքով, որը գործելու է 2021 թվականի հունվարի



1-ից: Ըստ այդ օրենքի 8-րդ հոդվածի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 341-րդ հոդվածն առաջարկվում է շարադրել նոր խմբագրությամբ, որում սահմանված են երեխաների հարցաքննության մի շարք առանձնահատկություններ: Մասնավորապես, սահմանված է, որ՝ «1. Անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը դատարանում կարող է հարցաքննվել, եթե նրա հարցաքննությունը չի տեսաձայնագրառվել նախնական քննության ընթացքում: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության տեսաձայնագրառումը վերարտադրվում է դատական նիստերի դահլիճում: Եթե տեսաձայնագրառման վերարտադրումից հետո առաջանում է անչափահասին հարցեր տալու անհրաժեշտություն, ապա անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը ցուցմունք տալու նպատակով հրավիրվում է դատարան:

2. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը, եթե դա անհրաժեշտ է գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման համար, ինչպես նաև սույն օրենսգրքի 207-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում, կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կարող է կատարվել ամբաստանյալի բացակայությամբ: Դատական նիստերի դահլիճ վերադառնալուց հետո ամբաստանյալի համար հրապարակվում են անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի ցուցմունքները, և նրան հնարավորություն է ընձեռնվում տվյալ վկային կամ տուժողին տալ հարցեր կամ տվյալ վկայի կամ տուժողի հաղորդած տվյալների վերաբերյալ տալ ցուցմունք:

3. Դատարանում մինչև 16 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ



կատարվում է որակավորված հոգեբանի, իսկ նրա ներգրավման անհնարինության դեպքում՝ մանկավարժի մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա լինելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը:

4. Տասնվեց տարին չլրացած վկան կամ տուժողը հեռացվում է դատական նիստի դահլիճից նրա հարցաքննությունն ավարտվելուց հետո, բացի այն դեպքերից, երբ դատարանը կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ անհրաժեշտ է համարում այդ վկայի կամ տուժողի հետագա ներկայությունը:

5. Դատարանը կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ իրավունք ունի անչափահաս տուժողին թույլ տալու ժամանակավորապես դուրս գալ դատական նիստերի դահլիճից, եթե ապացույցների հետազոտմանը ներկա լինելը նրա վրա կունենա բացասական ազդեցություն: Դատական նիստերի դահլիճ վերադառնալուց հետո անչափահաս տուժողի համար հակիրճ հրապարակվում են ապացույցների հետազոտման արդյունքները»:


Այսպիսով, կարող ենք փաստել, որ օրենսդիրն ուշացումով, սակայն կատարել է գործուն քայլ անչափահաս տուժողի և վկայի հարցաքննությունը նրանց լավագույն շահերին համապատասխան իրականացնելու, ՀՀ օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, ինչպես նաև մեղադրյալի և անչափահաս վկայի ու տուժողի մրցակցող շահերի հավասարակշռումն ապահովելու ուղղությամբ, ինչը պատշաճ կիրառման պայմաններում կապահովի երեխայակենտրոն արդարադատության համակարգ ունենալու նպատակի իրականացումը:

Առաջարկվող փոփոխությամբ լուծվում է նաև այն կարևոր հարցը, որ երեխաների հետ հարցաքննությունները չպետք է կրկնվեն, որպեսզի բացառվեն նրանց երկրորդային վիկտիմիզացիայի ենթարկելը: Այս առումով Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Սեռական շահագործումից երեխաների պաշտպանության վերաբերյալ» 2001 թվականի N R (2001) 16 հանձնարարականի (On the Protection of Children against Sexual Exploitation)¹³ 33-րդ կետը սահմանում է, որ անդամ պետությունները սեռական շահագործումից տուժած երեխաներից և անչափահաս վկաներից ցուցմունքներ վերցնելիս պետք է ապահովվեն այնպիսի հատուկ պայմաններ, որոնք կնպաստեն ցուցմունքներ տալու քանակի կրճատմանը, ինչն իր հերթին կհանգեցնի տուժողներին, վկաներին, նրանց ընտանիքի անդամներին պատճառված վնասի նվազեցմանը և կբարձրացնի նրանց ցուցմունքների արժանահավատությունը՝ հարգելով վերջիններիս արժանապատվությունը:

Սեռական հանցագործությունների վերաբերյալ գործերով անչափահասների հարցաքննության և վարույթին մասնակցության երաշխիքների տեսանկյունից անհրաժեշտ ենք համարում խոսել «Barnahus»¹⁴ մոդելի մասին, որը բավականին տարածում է ստացել Եվրոպական երկրներում: Մոդելը հիմնադրվել է Իսլանդիայում, հետագայում տարածվել է նաև Շվեդիայում, Դանիայում, Նորվեգիայում, իսկ 2017

¹³http://www.ibcr.org/editor/assets/thematik_report/2/2005_compilation_en_1.pdf

¹⁴«Barnahus» սկանդինավյան տերմին է, որը թարգմանաբար նշանակում է «երեխայի տուն»:




թվականի վերջին՝ նաև Արևելյան Եվրոպայում¹⁵: «Barnahus»-ի մոդելը ոգեշնչված է հետաքրքիր ամերիկյան փորձով: Տարբերությունն այն է, որ ԱՄՆ-ում երեխաների շահերի պաշտպանության կենտրոնները (Children's Advocacy Center(CAC)) իրենցից ներկայացնում են 34-ներ, որոնք համագործակցում են նահանգային իշխանությունների հետ՝ դատարանների, դատախազության հետ, և իրականացնում են համապատասխան ծառայություններ¹⁶: «Barnahus»-ը, որը կառուցված է նույն այս (CAC) մոդելով, պետականացվեց. այն իր բնույթով եզակի, բազմաոլորտային, միջսեկտորալ պետական հաստատություն է, որի շրջանակում համագործակցում են առողջապահության նախարարությունը, դատարանները, դատախազությունը, քննչական մարմինները, ոստիկանությունը, ինչպես նաև սոցիալական հարցերի նախարարությունը՝ որպես երեխայի պաշտպանության խնդիրներով զբաղվող հիմնական կառույցներ: Այս մոդելի հիմնական նպատակը և իմաստը հետևյալն է՝ երեխան, ով ենթարկվել է սեռական բռնության, պետք է հարցաքննվի մեկ անգամ և հնարավորինս քիչ վիկտիմիզացվի: Այս կապակցությամբ Մոդելն առաջարկում է, որ երեխայի հարցաքննությունն իրականացվի ոչ թե ոստիկանությունում կամ դատարանում, այլ բնակարանային պայմաններում՝ երեխաների համար հարմարեցված մանկական հատուկ կենտրոններում, որտեղ աշխատում են հատուկ վերապատրաստված պետական աշխատողներ՝սոցիալական աշխատողներ, մանկական հոգեբաններ, առողջապահության ոլորտի աշխատակիցներ և, ամենակարևորը, հարցաքննություն իրականացնող վերապատրաստված անձինք: «Barnahus» մոդելը տարբեր երկրներում գործում է տարբեր

¹⁵ <https://childhub.org/en/promising-child-protection-practices/what-barnahusand-how-it-works>

¹⁶ <http://www.cac-ottawa.org>

կերպ: Օրինակ՝ Իսլանդիայում սահմանված է, որ հարցաքննությունը պետք է իրականացվի հատուկ արդարադատության ոլորտում հարցաքննություն իրականացնելու համար վերապատրաստված հոգեբանի կողմից: Հարցաքննությունն իրականացվում է հայելային սենյակում, որտեղ հայելու մյուս կողմում ներկա են գտնվում քրեական գործի քննություն իրականացնող մարմինները՝ քննիչը, դատախազը, դատավորը, որի վարույթում գտնվում է քրեական գործը, ինչպես նաև երեխայի շահերը ներկայացնող անձինք՝ փաստաբանը, օրինական ներկայացուցիչը և մեղադրյալի պաշտպանը: Շվեդիայում այն ստացավ հետևյալ կարգավորումը՝ հարցաքննությունն իրականացվում է մանկական հոգեբանության հատուկ կուրս անցած և հմտությունների տիրապետող մասնագիտացված քննիչի կողմից: Կարելի է ասել, որ բոլոր այն երկրներում, որտեղ կիրառվում է վերը նշված մոդելը, հարցաքննությունը ձայնագրվում է, որպեսզի հետագայում այն որպես ապացույց օգտագործվի դատաքննության ժամանակ:

Անկասկած քննարկվող հարցը սերտորեն առնչվում է մրցակցության, ինչպես նաև մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման սկզբունքների հետ, քանի որ նախատեսվող կարգավորումներն ինչ-որ չափով սահմանափակում են մեղադրյալի պաշտպանության իրավունքը: Սակայն Մոդելն այս խնդրի հետ կապված տվել է լուծման իր տարբերակները: Օրինակ՝ Դանիայի օրենսդրությամբ սահմանված է, որ երեխան հարցաքննվում է նույն անձի կողմից, նույն կենտրոնում և նույն պայմաններում՝ առանց ժամանակահատվածի էական տարբերության, ոչ թե մեկ, այլ երկու անգամ: Առաջին հարցաքննության արդյունքներից հետո մեղադրյալի պաշտպանը կազմում է այն հարցերի ցանկը, որոնք պետք է տրվեն երեխային երկրորդ հարցաքննության



ժամանակ: Իսկ դատավորի ներկայությունը հարցաքննությանը հնարավորություն է տալիս անչափահաս տուժողի ցուցմունքները հետազայում օգտագործելու որպես ապացույց: Ինչպես տեսնում ենք, մոդելն այս եղանակով փորձել է լուծել մրցակցության սկզբունքի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման պահպանման խնդիրները¹⁷:


Կանադայի Գերագույն դատարանն անդրադարձել է սեռական հանցագործություններով անչափահաս երեխաների՝ մինչև դատարան տրված ցուցմունքների թույլատրելիությանը: Այսպես՝ «Ռ.-ն ընդդեմ Խանի» ((1990) 2 S.C.R.531) գործով Կանադայի Գերագույն դատարանը նշել է, որ գործը քննող դատավորը թույլ է տվել դատական սխալ՝ արգելելով երեք ու կես տարեկան սեռական բռնության զոհին առանց երդման վկայություն տալ, ինչպես նաև այն, որ դատավորը թույլ չէր տվել մեղադրանքի կողմին ներկայացնել սեռական ոտնձգության ենթարկվելուց 15 րոպե հետո երեխայի՝ իր մայրիկին տված վկայությունը: Եթե առանց երդման տրված վկայությունը չէր կարող օգտագործվել, ապա կստեղծվեր մի վտանգավոր իրավիճակ, որի դեպքում փոքր երեխաների հանդեպ սեռական հանցանքներով հնարավոր չի լինի իրականացնել հետապնդում: Երեխայի մայրիկի ցուցմունքի առնչությամբ Կանադայի Գերագույն դատարանը գտել է, որ կարելի է դրսևորել «ասեկոսե» ապացույցի վերաբերյալ ավելի ճկուն, բայց «սկզբունքային» մոտեցում: Անկախ զգուշության կարիքից՝ «ասեկոսե» ապացույցը

¹⁷Այս հարցերի մասին տե՛ս Ն.Աղաբաբյան, ԱՆՉԱՓԱՅԱՍ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՅԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԶՐԵԱԴԱՏԱԿԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐ// http://www.ysu.am/files/31Nelly_Aghababyan.pdf

կարող էր ընդունվել, եթե բավարարված էին երկու հիմնական պահանջները՝ անհրաժեշտությունը և արժանահավատությունը¹⁸:


Սեռական հանցագործության զոհ անչափահասին դատարանում առերես հարցաքննելու հարցին անդրադարձել է նաև ԱՄՆ Գերագույն դատարանը: Այսպես՝ 1988 թվականին «Coy v. Iowa» գործով Գերագույն դատարանը գտել է, որ խախտվել է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքը, քանի որ սեռական հանցագործության երկու զոհերը հարցաքննվել են միակողմանի տեսակապի միջոցով՝ պաշտպանիչ Էկրանի հետևում, որի պայմաններում երեխաները չեն տեսել մեղադրյալին, իսկ մեղադրյալը ոչ պարզ տեսանելի պայմաններում է հետևել հարցաքննությանը: Մեղադրյալը բողոքարկել է, որ պաշտպանիչ Էկրանի կիրառմամբ երեխաների հարցաքննությամբ խախտվել է դեմ առ դեմ՝ հակընդդեմ հարցման իրավունքը: ԱՄՆ Գերագույն դատարանը նշված գործով հաստատել է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի խախտման փաստը և սահմանել, որ հակընդդեմ հարցումը պետք է իրականացվի դեմ առ դեմ: Սակայն երկու տարի անց ԱՄՆ Գերագույն դատարանը Maryland v. Craig գործով վերը նշված ընդհանուր կանոնից սահմանել է բացառություն: ԱՄՆ Գերագույն Դատարանն ուժի մեջ է թողել Մերիլենդ նահանգի օրենսդրական կարգավորումը, որի համաձայն՝ դատավորը հնարավորություն ունի երեխայի հարցաքննությունն իրականացնելու միակողմանի տեսակապի միջոցով: Այս դեպքում երեխան, դատախազը և մեղադրյալի փաստաբանը գտնվել են առանձին սենյակում, իսկ դատավորը, երդվյալ ատենակալները և մեղադրյալը՝

¹⁸ <https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/642/index.do:>



դատական նիստերի դահլիճում: Երեխան ուղղակի
և առերես հարցաքննության է ենթարկվել
առանձին սենյակում, իսկ դատական նիստերի
դահլիճում գտնվող դատավարության մասնակիցները
հարցաքննությանը հետևել են տեսակապի
միջոցով¹⁹:

¹⁹[https://supreme.justia.com/cases/federal/us/497/836/:](https://supreme.justia.com/cases/federal/us/497/836/)






Լրացուցիչ մեդիա-նյութերը
նախատեսված են Ձեզ
հետաքրքրող նյութի մասին
հավելյալ գիտելիքներ
ստանալու համար:

1. Путеводитель о прецедентной практике Европейского суда по правам человека за 2002 года. Науч. ред.-сост. Ю.Ю. Берестнев, М.В. Виноградов. Перевод с англ. В.А. Власихина. М., 2004 // https://echr.today/catalog/knigi/putevoditel_po_pretsedentnoy_praktike_evropeysko-go_suda_po_pravamcheloveka_tom_1/,
2. Ղամբարյան Ա., Թումասյան Դ. Երեխաների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները (ձեռնարկ քննիչների համար): Երևան, 2015 // http://investigative.am/images/grakanutyun/Dzernark_1.pdf,
3. Աղաբաբյան Ն. ԱՆՉԱՓԱՅԱՍ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՅԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԶՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐ// http://www.ysu.am/files/31Nelly_Aghababyan.pdf
4. «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» 2007թ. հոկտեմբերի 25-ի ԵԽ-ի կոնվենցիայի <https://rm.coe.int/168046e1e4>
5. ԵԽՆԿ «Սեռական շահագործումից երեխաների պաշտպանության վերաբերյալ» (On the Protection of Children against Sexual Exploitation) 2001 թվականի N R (2001) 16 հանձնարարական //
6. «Ռ.-ն ընդդեմ Խանի» ((1990) 2 S.C.R.531) գործով Կանադայի Գերագույն դատարանի որոշումը // <https://>

scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/642/index.do,

7. ԱՄՆ Գերագույն դատարանի Maryland v. Craig գործով որոշումը [//https://supreme.justia.com/cases/federal/us/497/836/](https://supreme.justia.com/cases/federal/us/497/836/):



Երկրորդային վիկտիմիզացիա կամ գոհականացում

Նշանակում է վիկտիմիզացիա, որին ենթարկվում է հանցագործությունից տուժած անձը ոչ թե որպես հանցավոր արարքի ուղղակի հետևանքի, այլ պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների արդյունքում:

Ռեվիկտիմիզացիա

Իրավիճակ է, երբ անձը որոշակի տևական ժամանակահատվածի ընթացքում ենթարկվում է մեկից ավելի քրեական միջադեպերի:

«Barnahus»

Սկանդինավյան եզրույթ է, որը թարգմանաբար նշանակում է «երեխայի տուն»:

Դատական քննության արագացման սկզբունք

Անչափահաս տուժողների լավագույն շահերի ապահովման միջազգային չափանիշ է, որի նպատակն է ապահովել, որպեսզի երեխաների մասնակցությամբ վարույթը համարվի առաջնային և անցկացվի որքան հնարավոր է արագ, առանց չարդարացված հետաձգումների և ձգձգումները բացառող պայմաններում:




Ուշադրությամբ ծանոթացե՛ք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձե՛ք դրանց:



Մինչև 15 րոպե

Դատական քննությունը դռնփակ անցկացնել

Անչափահաս տուժողների լավագույն շահերի ապահովման միջազգային չափանիշ է, որը սահմանում է, որ անչափահասի մասնավոր (անձնական) կյանքին միջամտությունը պետք է լինի նվազագույն, և այն պետք է տեղի ունենա միայն օրենքով սահմանված կարգով՝ նպատակ ունենալով ապահովելու ապացույցներին ներկայացվող պահանջների կատարումը, ինչպես նաև արդար դատական քննության իրավունքի իրացումը: Բացի այդ, անչափահաս տուժողի կամ վկայի գաղտնիությունը պետք է պաշտպանվի. մասնավորապես, այն տեղեկությունները, որոնք կարող են բացահայտել վկա կամ տուժող անչափահասին, պետք է հրապարակվեն միայն դատարանի թույլտվությամբ:



Հարց 1.

Դասի ընթացքում ո՞ր սկզբունքներն են առանձնացվել և քննարկվել՝

- ա. 1)Դատական քննության արագացման սկզբունքը,
2)դատական քննությունը դռնփակ անցկացնելը,
3)երեխայի հարցաքննության դատավարական առանձնահատկությունները:
- բ. 1)Դատական քննությունը ողջամիտ ժամկետում անցկացնելու սկզբունքը,
2)դատական քննությունը դռնփակ անցկացնելը,
3)երեխայի հարցաքննության դատավարական առանձնահատկությունները:
- գ. 1)Դատական քննության արագացման սկզբունքը,
2)դատական քննության հրապարակայնությունը,
3)երեխայի հարցաքննության դատավարական առանձնահատկությունները:
- դ. 1)Դատական քննության արագացման սկզբունքը,
2)դատական քննության հրապարակայնությունը,
3)երեխային հակընդդեմ հարցման ենթարկելու առանձնահատկությունները:

Հարց 2.

Ո՞ր դեպքերում երեխայի մասնակցությամբ դատական քննությունը պետք է իրականացվի հնարավորինս արագ, առաջնահերթության կարգով և առանց ձգձգումների՝

- ա. Եթե վտանգ կա, որ վաղեմության ժամկետները լրանում են:
- բ. Եթե ձգձգումները չեն բխում երեխայի լավագույն



Ընտրել ճիշտ տարբերակը:
Ընտրությունը կատարվում է համապատասխան հարցերի համար նախատեսված պատասխանների ճիշտ տարբերակի տառը նշելու միջոցով:



Մինչև 40 րոպե

շահերից:

գ. Եթե քրեական գործը վերաբերում է սեռական բնույթի հանցագործությանը:

դ. «բ» և «գ» կետերում նշված դեպքերում:

Հարց 3.

Դատական քննության արագացման սկզբունքն անչափահաս տուժողների լավագույն շահերի ապահովման միջազգային չափանիշներից է, որի նպատակն է՝

ա. Ապահովել, որպեսզի երեխաների մասնակցությամբ վարույթը համարվի առաջնային:

բ. Ապահովել, որպեսզի երեխաների մասնակցությամբ վարույթն անցկացվի որքան հնարավոր է արագ:


գ. Ապահովել, որպեսզի երեխաների մասնակցությամբ վարույթն անցկացվի առանց չարդարացված հետաձգումների և ձգձգումները բացառող պայմաններում:

դ. Բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:

Հարց 4.

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսդրության՝ գործի քննությունը դատարանում կարող է իրականացվել դռնփակ՝

ա. Ելնելով քրեական դատավարությանը մասնակցող անձանց մասնավոր կյանքի, պատվի և արժանապատվության, անչափահասների կամ արդարադատության շահերի պաշտպանության անհրաժեշտությունից:



բ. Ելնելով պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության անհրաժեշտությունից:

գ. Ելնելով վարույթի մասնակիցների կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանության անհրաժեշտությունից:


դ. Բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:

Հարց 5.

Պաշտպանական կողմի միջնորդության հիման վրա դատարանը որոշում է կայացրել սեռական բնույթի բռնի գործողությունների վերաբերյալ քրեական գործով 7 տարեկան տուժողին հարցաքննել դատարանում, որպեսզի երաշխավորվի ամբաստանյալի հակընդդեմ հարցման իրավունքը: Երեխայի մայրը, ով նաև նրա օրինական ներկայացուցիչն է, հրաժարվել է կատարել դատարանի որոշման պահանջը և երեխային հարցաքննության նպատակով չի ներկայացրել դատարան՝ պատճառաբանելով, որ երեխան նախաքննության փուլում մի քանի անգամ հարցաքննվել է, այդ թվում՝ ամբաստանյալի հետ առերես, ուստի երեխային լրացուցիչ հոգեբանական տրավմայի ենթարկելու անհրաժեշտությունն չկա պաշտպանական կողմի անհիմն պահանջները բավարարելու համար:

Իրավաչափ են արդյոք օրինական ներկայացուցչի պատճառաբանությունները՝

ա. Ոչ, քանի որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով երաշխավորված հակընդդեմ



հարցման ենթարկելու իրավունքը չի կարող սահմանափակվել, ուստի դատարանը պետք է միջոցներ ձեռնարկեր ապահովելու ամբաստանյալի իրավունքի իրացումը:


բ. Ոչ, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 341-րդ հոդվածում սահմանված է, որ նման դեպքերում դատարանը կարող է անչափահաս տուժողին հարցաքննել ամբաստանյալի բացակայությամբ, ուստի լրացուցիչ տրավմայի խնդիր չի առաջանա, իսկ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքից որևէ նահանջ չի կարող արդարացվել:

գ. Ոչ, քանի որ դատարանի որոշումը ենթակա է պարտադիր կատարման, իսկ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքից որևէ նահանջ չի կարող արդարացվել:

դ. Այո, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 342-343-րդ հոդվածներով սահմանված է, որ երբ տուժողը դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա դատարան ներկայանալու հնարավորությունը, ապա հրապարակվում են նախաքննության ընթացքում տուժողի տված ցուցմունքները, ուստի դատարանը կարող էր հրապարակել և գնահատել տուժողի ցուցմունքները՝ հատկապես, որ նախաքննության փուլում առերեսում տեղի ունեցել է:

Հարց 6.

Սեքսուալ բնույթի բռնի գործողությունների վերաբերյալ քրեական գործով դատարանը բավարարել էր պաշտպանական կողմի միջնորդությունը դատարան




իրավիրել և հարցաքննել 5-ամյա տուժող երեխային, քանի որ անհրաժեշտություն է առաջացել ստուգելու երեխայի ցուցմունքների արժանահավատությունը: Երեխայի օրինական ներկայացուցիչը համաձայնվել էր հարցաքննությանը, սակայն միջնորդություն էր ներկայացրել դատարանին առ այն, որ «իր մանկահասակ երեխայի հարցաքննությունն իրականացվի ոչ թե դատարանի, այլ մեկ այլ շենքում, որը դատարան չի հիշեցնի: Բացառել այդ հարցաքննությանն ամբաստանյալի և նրա պաշտպանների մասնակցությունը: Եթե վերջիններս հարցեր ունենան, ապա կարող են ներկայացնել դատարանին, որոնք երեխային կարող են տրվել հոգեբանի միջոցով»:

Իրավաչափ են արդյոք օրինական ներկայացուցչի պահանջները և ի՞նչ որոշում պետք է կայացնի դատարանը՝

ա. Ոչ, իրավաչափ չեն, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսդրության համաձայն օրինական ներկայացուցիչը նման պահանջներ ներկայացնելու իրավունք չունի, ուստի դատարանը պետք է մերժի նրա միջնորդությունը:

բ. Ոչ, իրավաչափ չեն, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դատարանի իրավասությունը, նրա կողմից քրեական դատավարության իրականացման կարգը չեն կարող կամայականորեն փոփոխվել առանձին գործերի կամ անձանց կամ որոշակի իրավիճակի համար կամ որևէ



ժամանակահատվածով, ուստի դատարանը պետք է մերժի նրա միջնորդությունը:

գ. Այո, իրավաչափ են, քանի որ այդ պահանջները բխում են երեխայի լավագույն շահերից և տուժող երեխայի իրավունքների ու օրինական շահերի ապահովման միջազգային չափանիշներից:

դ. Ոչ, իրավաչափ չեն, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 341-րդ հոդվածում հստակ սահմանված են մինչև 16 տարեկան երեխաների հարցաքննության առանձնահատկությունները, որոնց շարքում օրինական ներկայացուցչի միջնորդությամբ ներկայացված պահանջները ներառված չեն, ուստի դատարանը պետք է մերժի նրա միջնորդությունը:

Հարց 7.

Ըստ Եվրոպական խորհրդարանի և Եվրոպայի խորհրդի 2011/92EU «Երեխաների սեռական չարաշահման և սեռական շահագործման, մանկական պոռնոգրաֆիայի և խորհրդի 2004/68/JHA շրջանային որոշումը փոխարինելու վերաբերյալ» հրահանգի 20-րդ հոդվածի՝ անդամ պետությունները պետք է հավաստիանան, որ սեռական բնույթի հանցագործությունների վերաբերյալ գործերով դատական նիստերի դահլիճում՝

ա. Երեխաները չհարցաքննվեն իրենց նկատմամբ բռնություն կիրառած անձի կողմից, քանի որ այն վնասում է երեխայի լավագույն շահերին:

- բ. Երեխաները չհարցաքննվեն իրենց նկատմամբ բռնություն կիրառած անձանց կողմից, որպեսզի չենթարկվեն երկրորդային վիկտիմիզացիայի:
- գ. Երեխաները հարցաքննվեն բացառապես դատարանի կողմից և առանց մյուս կողմերի մասնակցության:
- դ. Երեխայի հարցաքննությունը հնարավորության դեպքում անցկացվի այնպես, որ երեխան անձամբ ներկա չգտնվի դատական նիստերի դահլիճում, այլ իրականացվի համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ:

Հարց 8.

7 տարեկան տուժողի օրինական ներկայացուցիչը դատարանին ուղղված միջնորդությամբ խնդրել է իր «մանկահասակ երեխայի հարցաքննությունն իրականացնել փորձառու հոգեբանի մասնակցությամբ: Բացառել այդ հարցաքննությանն ամբաստանյալի մասնակցությունը: Եթե վերջինս հարցեր ունենա, ապա կարող է ներկայացնել դատարանին, որոնք երեխային կարող են տրվել հոգեբանի միջոցով»:

Ի՞նչ որոշում պետք է կայացնի դատարանը՝

- ա. Մերժել տուժողի օրինական ներկայացուցչի միջնորդությունը, քանի որ այն չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքից 341-րդ հոդվածից, որում հստակ սահմանված է անչափահաս տուժողի հարցաքննության կարգը և մասնակիցները, իսկ տուժողի օրինական ներկայացուցչի խնդրանքը հակասում է այդ պահանջներին:
- բ. Բավարարել տուժողի օրինական ներկայացուցչի

միջնորդությունը, քանի որ դատարանն իրավունք ունի մասնագետ ներգրավելու դատական գործողության կատարմանը, իսկ ամբաստանյալի բացակայությամբ երեխայի հարցաքննությունն ուղղակիորեն նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 341-րդ հոդվածով:

գ. Մերժել տուժողի օրինական ներկայացուցչի միջնորդությունը, քանի որ տվյալ դեպքում խախտվում է ամբաստանյալի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով երաշխավորված հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքը:

դ. Հոգեբանին մասնակից դարձնելու մասով բավարարել տուժողի օրինական ներկայացուցչի միջնորդությունը, քանի որ դատարանն իրավունք ունի մասնագետ ներգրավելու դատական գործողության կատարմանը, բացի այդ այն բխում է միջազգային չափանիշներից, իսկ հարցաքննությանն ամբաստանյալի մասնակցությունը բացառելու մասով մերժել, քանի որ տվյալ դեպքում խախտվում է ամբաստանյալի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով երաշխավորված հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքը:


Հայր 9.

Անչափահաս վկայի (10 տարեկան) ծնողը դատարանին դիմում է ներկայացրել այն մասին, որ եթե դատարանին չեն բավարարի նախաքննությամբ իր երեխայի կողմից տրված ցուցմունքները, ապա նպատակահարմար է գտնում, որ երեխան հարցաքննվի: Ինքը նրան տեղեկացրել է, որ հրավիրվել է հարցաքննության որպես վկա, որին

Երեխան մեծ դժվարությամբ է համաձայնել, ուստի Դատարանին խնդրել է, որ մեղադրողին և պաշտպանական կողմին տեղեկացնի, որ ցուցմունք տվողն անչափահաս է և չի ուզում բազմիցս ներկայանալ դատարան, ուստի ինքը նախորոք տեղեկացնում է, որ եթե կունենան հարցեր ուղղված երեխային, ապա, որպեսզի այդ հարցերը չմնան անպատասխան, դրանք վկային ուղղվեն նույն օրը՝ վկայությունն տալիս: Դատարանում հարցաքննությունը մնացել էր անավարտ, քանի որ աշխատանքային օրը ավարտվել էր, իսկ հաջորդ դատական նիստին վկայի օրինական ներկայացուցիչը հրաժարվել էր երեխային ներկայացնել դատարան: Օրինական ներկայացուցիչը դատարանին էր տրամադրել երեխայի հարցաքննությանը մասնակցած մանկաբուհի (որը հանդիսացել էր նաև երեխայի դասուցիչը) գրավոր հայտարարությունն առ այն, որ «անչափահասի ներկայությունը հետագայում կայանալիք դատական նիստերին անթույլատրելի է, քանի որ դա ազդում է դեռահասի հոգեբանության վրա: Երեխայի մոտ վերջին ժամանակահատվածում նկատվել է անկումային տրամադրություն: Ապագայում ընկճախտի սինդրոմից խուսափելու համար կտրականապես դեմ եմ երեխայի հետագա մասնակցությանը դատական նիստերին: Ասածս բխում է երեխայի շահերից»:

Ի՞նչ միջոցներ կարող է ձեռնարկել դատարանը՝

ա. Բերման ենթարկել վկային, քանի որ նա պարտավոր է ներկայանալ դատարան և ցուցմունքներ տալ, իսկ երեխային լրացուցիչ ապրումների չենթարկելու համար այն անցկացնել ամբաստանյալի




բացակայությամբ:

- բ. Պարտադիր համարել երեխայի հարցաքննությունը շարունակելը, քանի որ վտանգվում է ամբաստանյալի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով երաշխավորված հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքը, որից որևէ բացառություն նախատեսված չէ:
- գ. Ելնելով երեխայի լավագույն շահերից շարունակել դատաքննությունը և հրապարակել երեխայի նախաքննության ցուցմունքները և դրանք գնահատել այլ ապացույցների հետ համակցության մեջ:
- դ. Պարտադիր համարել երեխայի հարցաքննությունը շարունակելը, քանի որ վկան պարտավոր է ներկայանալ դատարան և ցուցմունքներ տալ, իսկ երեխային լրացուցիչ ապրումների չենթարկելու համար այն իրականացնել փորձառու հոգեբանի մասնակցությամբ՝ բացառելով ամբաստանյալի մասնակցությունը դատական նիստին:

Հարց 10.

Ո՞ր դեպքում է անչափահաս վկայի հարցաքննությունն իրականացվում ամբաստանյալի բացակայությամբ՝

- ա. Մինչև 14 տարեկան երեխաների հարցաքննության դեպքերում, քանի որ այն բխում է երեխայի լավագույն շահերից:
- բ. Չկա նման դեպք, քանի որ այն հակասում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով երաշխավորված հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքին:



գ. Եթե կատարվածը սեռական բնույթի հանցագործություն է, որի կատարման մեջ մեղադրվում է ծնողը կամ մանկավարժը կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակիցը կամ այն անձը, որի վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականությունը:

դ. Եթե դա անհրաժեշտ է գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման համար:

